

**ՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ/THEORY OF STATE AND LAW/
ТЕОРИЯ ГОСУДАРСТВА И ПРАВА**

Արմեն Շուքրոյան
Լեզիստական իրավահասկացություն 3

**ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ/CONSTITUTIONAL LAW/
КОНСТИТУЦИОННОЕ ПРАВО**

Նարեկ Հարությունյան
Բնակչության միգրացիայի էության, տեսակների և դրսևորման ձևերի մասին10
Հերբերտ Հարությունյան
Պետության գլխի սահմանադրական պատասխանատվության հիմնահարցերը
սահմանադրական բարեփոխումների համատեքստում 20

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ/CIVIL LAW/ГРАЖДАНСКОЕ ПРАВО

Մանե Կարապետյան
Աշխատանքային պայմանագրի լուծումն աշխատողի նախաձեռնությամբ 27

**ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ/CIVIL PROCEDURE/ГРАЖДАНСКИЙ
ПРОЦЕСС**

Մարիամ Մանուկյան
ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի հայեցողությունն իր լիազորությունները
կիրառելիս մաս 1. «Ընդհանուր նկարագիր, հայեցողության շրջանակները և դրա
առանձնահատկությունները»..... 35
Մերի Խաչատրյան
Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման հայց հարուցելու հիմքերի
ուսումնասիրությունը հաշտության համաձայնությամբ ավարտելը 47

ՔՐԵԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ/CRIMINAL LAW/УГОЛОВНОЕ ПРАВО

Գևորգ Իսրայելյան
Հանցավորությունը պայմանավորող իրավական բնույթի գործոնները և դրանց
կանխարգելման արդի միջոցները Հայաստանի Հանրապետությունում 62
Արմեն Ասատրյան
Միգրանտի պատասխանատվության քրեաիրավական հիմքերը և
իրավակիրառ պրակտիկան..... 69
Ռոզա Աբրահամյան
Պատիժների կատարման տարբերակման և անհատականացման սկզբունքների
երաշխիքների հիմնահարցը իրավական կարգավորման կառուցակարգի
համատեքստում 84

Ադելինա Սարգսյան

Ախտորոշիչ յատրոգենիաները յատրոգեն հանցագործությունների համակարգում 93

ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ/CRIMINAL PROCEDURE/УГОЛОВНЫЙ ПРОЦЕСС

Օվանես Բայանդուրյան

Право юридического лица хранить молчание: сравнительно-правовой анализ104

Ինգա Ավագյան

Ապացույցների գնահատումը եզրափակիչ դատական ակտ կայացնելիս..... 116

ԿՐԻՄԻՆԱԼԻՍՏԻԿԱ/CRIMINALISTICS/КРИМИНАЛИСТИКА

Տուրեն Բազինյան

Типичные следственные ситуации при расследовании государственной измены.....129

ԴԱՏԱԿԱՆ ՊՐԱԿՏԻԿԱ

Վճռաբեկ դատարանի որոշումներ..... 139

**ՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ/THEORY OF STATE AND LAW/
ТЕОРИЯ ГОСУДАРСТВА И ПРАВА**

<https://doi.org/10.59546/18290744-2024.1-3-3>

ԱՐՄԵՆ ՇՈՒՔՈՒՐՅԱՆ

*ՀՀ միասնական սոցիալական ծառայության պետի տեղակալ,
ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի
ինստիտուտի ավագ գիտաշխատող,
դոկտորանտ, իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ*

ARMEN SHUKURYAN

*Deputy Head of the RA United Social Service,
Senior Researcher at the Institute of Philosophy,
Sociology and Law of the NAS of the RA,
Doctoral Student, Candidate of Law, Associate Professor*

АРМЕН ШУКУРЯН

*Заместитель начальника Единой социальной службы РА,
старший научный сотрудник Института философии,
социологии и права НАН РА,
докторант, кандидат юридических наук, доцент*

ԼԵԳԻՍՏԱԿԱՆ ԻՐԱՎԱՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆ

LEGALISTIC (POSITIVIST) CONCEPT OF LAW

ЛЕГАЛИСТИЧЕСКАЯ (ПОЗИТИВИСТСКАЯ) КОНЦЕПЦИЯ ПРАВА

Ներածություն

Սույն աշխատանքում հանգամանորեն վերլուծության է ենթարկվել լեգիստական իրավահասկացության էությունը և բովանդակային առանձնահատկությունները, ինչպես նաև տարբեր դպրոցների հայեցակարգային մոտեցումները, ինչի շնորհիվ լիովին բացահայտվել է քննարկվող հիմնախնդրի բովանդակությունը: Իրավագիտական իրավահասկացումը ճանաչում է իրավունքի և օրենքի հիմնահարցի լեզվաբանական, տեքստաբանական (հերմենևտիկ), կառուցաբանական, տրամաբանական-վերլուծական, իրավաբանական-դոգմատիկ հետազոտման եղանակների, մեթոդների, ձևերի տեսական-ճանաչողական ու գործնական նշանակությունը: Սակայն իրավունքի հանդեպ՝ իրավաբանական մոտեցման շրջանակում խոսքը ոչ թե իրավունքը օրենքին, իսկ իրավունքի տեսությունը՝ պոզիտիվ իրավունքի դոգմին և օրենքի մասին ուսմունքին հանգեցնելու, այլ այն մասին, որ իրավունքի համակողմանի հետազոտման ու ճանաչման գործընթացում անհրաժեշտ է և կարևոր է օգտագործել իմացա-

բանական բոլոր ձևերը, եղանակներն ու մեթոդները՝ իրավունքի ու օրենքի մասին հավաստի և ճշմարիտ գիտելիք ձեռք բերելու համար:

Հիմնական հետազոտություն

Իրավունքի մասին ցանկացած ուսմունքի համար ելակետային և որոշիչ նշանակություն ունի (միևնույն է, փիլիսոփայության, թե իրավաբանության տեսակետից) դրա հիմքում ընկած հասկացման (ու հասկացության) տիպը: Հենց իրավահասկացման տիպն է բնորոշում իրավաբանական ճանաչման պարադիգմը (իմաստային մոդելը, սկզբունքն ու օրինակը), իրավունքի մասին համապատասխան ուսմունքի գիտաիրավական բուն բովանդակությունը, առարկան և մեթոդը¹:

Դա պայմանավորված է ցանկացած հետևողական, սիստեմատիկորեն հիմնավորված, զարգացած ու կազմակերպված տեսության շրջանակում գտնվող հասկացության գիտաճանաչողական կարգավիճակով ու նշանակությամբ: Ինչպես սերմի մեջ արդեն պարունակվում է ապագա որոշակի բույսը, այնպես էլ իրավունքի հասկացության մեջ՝ գիտական-վերացական տեսքով պարունակվում է որոշակի իրավական տեսություն, իրավունքի մասին ուսմունքի որոշակի հայեցակարգի (և տիպի) տեսական-իրավական իմաստն ու բովանդակությունը: Այսպիսով, եթե իրավունքի հասկացությունն իրավունքի սեղմ տեսություն է, ապա իրավական տեսությունը դա իրավունքի ծավալուն հասկացությունն է: Չէ՞ որ միայն իրավունքի մասին որոշակի ամբողջական ուսմունքն է կարող տալ (իրավունքի փիլիսոփայության կամ իրավագիտության կոնկրետ հայեցակարգի տեսքով) իրավունքի հասկացության սիստեմատիկ և լիակատար բացահայտում՝ համապատասխան գիտական տեսության տեսքով:

Իրավական մտքի և իրավագիտության պատմությունն ու տեսությունը ներթափանցված են իրավահասկացման հակադարձ երկու տիպերի պայքարով իրավունքի հասկացողության մեկնաբանման և իրավունքի հասկացման այս երկու տիպերը պայմանականորեն կարելի է անվանել իրավահասկացության իրավաբանական և լեգիստական տիպեր:

Իրավահասկացման այս երկու տիպերի ներսում գոյություն ունեն իրավունքի հասկացողության տարբեր հայեցակարգեր և մեկնաբանման ուղղություններ: Իրավունքի մասին այս կամ այն ուսմունքների միջտիպաբանական տարբերությունների ներտիպաբանական առանձնահատկությունների հաշվառումը էական նշանակություն ունի դրանց տեսական-իրավական բովանդակության կոնկրետ բնութագրման համար:

Նման մոտեցումը թույլ կտա ավելի առարկայորեն բնութագրել ինչպես իրավունքի հեգեպյան փիլիսոփայությանը բնորոշ իրավահասկացման տիպը, այնպես էլ դրա ներտիպաբանական առանձնահատկությունները՝ իրավահասկացման այլ հայեցակարգերի հետ նրանց հարաբերակցությամբ:

Պոզիտիվիստական (լեգիստական) իրավահասկացության և իրավագիտության լեգիստական հայեցակարգում ընկած է իրավունքի՝ որպես հրամանի, որպես պետության պարտադիր սահմանումների, որպես պաշտոնական իշխանության կողմից հրահանգված պարտադիր կանոնների (նորմերի) ամբողջականության (համակարգի) հասկացությունը²:

Լեգիստական դիրքերից, որոնք ի սկզբանե իրավունքը հանգեցնում է օրենքին, և նույնացնում են դրանք, ըստ էության, փաստորեն անհնար է որևէ բովանդակալից բան ասել օրենքի (պոզիտիվ իրավունքի) մասին, քանի որ այդ տեսանկյունից նշանակություն չունի (և,

¹ Տե՛ս *Нерсесянц В. С.*, Философии права. 2-е изд. М., 2006, с. 20:

² Տե՛ս *Гревцов Ю.И., Козлихин И.Ю.*, Энциклопедия права. СПб., 2008, с. 35-36:

թերևս, անհնար է որոշել, թե կոնկրետ ինչպիսի բովանդակության արտահայտման ձև է օրենքը՝ իրավական, թե՛ կամայական-հակահրավական: Այստեղ օրենքի գոյությունը (նրա հանրային-իշխանային տրվածությունը) իրավունքի դերում նախորդում է այն իրավական էությանը (և այն իրավական բովանդակությանը), որի արտահայտությունը պետք է հանդիսանա այդ օրենքը որպես՝ իրավունքի կրիչ:

Այս իմաստով լեգիզմն ավտորիտար իրավահասկացման նորմատիվային արտահայտություն է: Լեգիզմի պաթոսն ու ձգտումն է բոլորին ենթարկել իշխանա-հրամանային կանոններին սահմանումներին: Այստեղ ամենուր, սկսած Հին Չինաստանի իրավաբաններից և վերջացրած մեր օրերի լեգիստներով, իշխում է մարդու հանդեպ ոչ թե որպես ազատ էակի, այլ որպես իշխանությանը ենթակա օբյեկտի վերաբերմունքը:

Նոր ժամանակի լեգիզմի և իրավաբանական պոզիտիվիզմի ակունքների մոտ կանգնած է Հոբսը՝ ամենակարող պետության և իրավունքի՝ որպես իշխանության հրամանի, իր հայեցակարգով «Օրենքի իրավական ուժը,- գրում է նա,- կայանում է միմիայն նրանում, որ այն հանդիսանում է սուվերենի հրամանը»³: Օրենք ասելով՝ նա նկատի ունի ողջ գործող (այսպես կոչված՝ պոզիտիվ) իրավունքը:

Իրավունքի նման ընկալում հետագայում յուրացրին նաև լեգիզմի տարբեր ուղղությունների ներկայացուցիչները:

Կոնկրետ պատմական առումով «իրավական պոզիտիվիզմի» կայացումն ու զարգացումը կապված է բուրժուական կարգերի հաղթանակի և ամրապնդման, պետության դերի աճի և այդ պայմաններում իրավունքի աղբյուրների համակարգում պետական ակտերի դերի և նշանակության բարձրացման հետ և այլն⁴:

Գաղափարական առումով «իրավաբանական պոզիտիվիզմը» արտահայտեց հաղթող դասակարգի՝ բուրժուազիայի փոփոխված իրավաբանական աշխարհայացքը, որն արդեն հասավ իր իրավական հավակնությունների ճանաչման օրենքով («պոզիտիվացման»), ինչպես նաև արտացոլեց առկա պաշտոնական օրինակարգի պաշտպանության գաղափարախոսությունը քննադատորեն և ընդդիմորեն («ոչ պոզիտիվ») հնչող պահանջներից և իրավունքի՝ որպես «բնականի», «պարտքի», «իդեալականի», «արդարի» մասին պատկերացումներից:

«Իրավաբանական պոզիտիվիզմի» հիմնական գաղափարներից և դրույթներից է իրավունքի՝ որպես իշխանության ստեղծվածքի մեկնումը, իրավունքի իշխանային հարկադրական բնույթի՝ որպես՝ նրա՝ փաստորեն՝ միակ տարբերակիչ հատկանիշի ճանաչումը, իրավունքի ձևական-տրամաբանական և իրավաբանական-դոգմատիկ վերլուծման մեթոդները, իրավունքի պոկումը և «մաքրագրծումը» հասարակական հարաբերություններից, իսկ իրավագիտության մեջ՝ իրավունքի բնույթի, պատճառների, արժեքների, էության մասին «մետաֆիզիկական» դրույթներից: Նման դրույթներ XXI դարում Անգլիայում զարգացնում էին

³ Տե՛ս Գոբե T., Левиафан М., 1936, с. 214:

⁴ Տե՛ս Իրավագիտության մեջ ընդունված է տարբերակել իրավունքի աղբյուրները ձևական իմաստով (իրավունքի ձևական աղբյուր) և նյութական առումով (իրավունքի նյութական աղբյուր): Առաջինի տակ նկատի է առնվում իրավունքի արտահայտման, ձևակերպման այս կամ այն ձևը համապատասխան նորմատիվ իրավական ակտ, նախադեպ, սովորույթային իրավունք և այլն, իսկ երկրորդի՝ այն, ինչը, համաձայն համապատասխան տեսակետի, առաջացնում, ձևավորում է իրավունքը (մարդու բնությունը, բանականությունը, հասարակությունը և այլն): Այս կապակցությամբ հարկ է նշել, որ իրավաբանական պոզիտիվիզմի (և ընդհանրապես լեգիզմի) համար օրենքը (պոզիտիվ իրավունքի բոլոր աղբյուրները), ըստ էության, հանդիսանում են իրավունքի աղբյուր նյութական իմաստով, քանի որ, համաձայն այս տեսակետի, օրենքը ոչ թե արտահայտում ու ձևակերպում է իրավունքը, այլ ծնում և ձևավորում է այն: Այստեղից էլ գալիս են նման մոտեցման համար բնորոշ «իրավաբանական պատրանքները» օրենքի ամենակարողության և ըստ իր հայեցողության ցանկացած իրավունք ստեղծելու անսահմանափակ հնարավորության («ազատ կամքի») վերաբերյալ:

Դ. Օստինը, Շ. Ամուսը և այլք. Գերմանիայում Բ. Վինդշայդը, Կ. Հերբերը, Կ. Բերգբոմը, Պ. Լաբանդը, Ա Ֆիտելմանը, Ֆրանսիայում՝ Կաբանտուն և ուրիշները, Ռուսաստանում Ե. Վ. Վասկովսկին, Ա. Խ. Հոլմսթենը, Լ. Դ. Գրիմմը, Ս. Վ. Պախմանը, Գ. Ֆ. Շերշենևիչը և այլք: XX դարում այս մոտեցումը ներկայացված է այնպիսի ուղղություններով, ինչպիսիք են Վ. Դ. Կատկովի «ընդհանուր լեզվագիտությամբ՝ բարեփոխված իրավագիտությունը», Հ. Կելզենի «իրավունքի մասին մաքուր ուսմունքը», Գ. Հարթի «իրավունքի հայեցակարգը» և այլն⁵:

Այսպես, Դ. Օստինը բնութագրում է իրավունքը որպես «քաղաքական ղեկավարի կամ սուվերենի կողմից սահմանված կանոնների ագրեգատ» (համալիր), և ընդգծում է. «Ամեն իրավունքը հրաման է, հրահանգ»: Շ. Ամուսը նույնպես պնդում է, որ «իրավունքը պետության գերագույն իշխանության հրամանն է տվյալ հասարակության մեջ անձանց գործողությունները վերահսկելու նպատակով»: Նման հայացքներ ունենալու Գ. Ֆ. Շերշենևիչը. «Իրավունքի ցանկացած նորմ՝ հրաման է»⁶: Իրավունքը, նրա գնահատմամբ, «պետության ծնունդ է», իսկ պետական իշխանությունը նա բնութագրում է որպես «այն նախնական փաստը, որից ելնում են, կառչելով մեկը մյուսից, իրավունքի նորմերը»⁷:

Ըստ այդ տեսակետների՝ այն ամենը, ինչ հրամայում է պետությունը, իրավունք է: Դրանով իսկ իրավունքի տարբերությունը կամայականությունից զրկվում է իր օբյեկտիվ և բովանդակային իմաստից և նման մոտեցման կողմնակիցների համար կրում է միմիայն սուբյեկտիվ և ձևական բնույթ, նույնիսկ որոշակի սուբյեկտի (պետության մարմնի) ակներև, սակայն որոշակի ձևով (այս կամ այն ակտի՝ օրենքի, հրամանագրի, հրովարտակի, հրահանգի, շրջաբերականի և այլնի տեսքի) ներկայացված՝ կամայականությունը ճանաչվում է իրավունք: Լեգիտական-պոզիտիվիստական մեկնությամբ պետական իշխանության հրամաններն օժտվում են գրեթե մոգական հատկություններով: Ստացվում է, որ նման հրամանով լուծվում են ոչ միայն սուբյեկտիվ (օրենսդրության նորմերի ձևակերպում), այլև օբյեկտիվ բնույթի (բուն իրավունքի ձևավորում, ստեղծում) և նույնիսկ բուն գիտական պլանի (իրավունքի առանձնահատկությունների, սոցիալական այլ ձևերից նրա տարբերությունների բացահայտում և այլն) խնդիրներ:

Որպես հրաման և հարկադիր կանոն են մեկնում իրավունքը նաև նեոպոզիտիվիստները (Հ. Քելզեն, Հ. Հարթ և այլք)⁸:

Պոզիտիվիստական-պրագմատիկ իր ուղղվածության պատճառով լեգիտական իրավագիտությունը զբաղվում է էմպիրիկ հիմնական երկու փաստերի պարզաբանմամբ: Դրանք են. 1) պաշտոնական իշխանության՝ այդ հրամանների (հարկադրական պարտադիր սահմանումների), այսինքն, գործող իրավունքի (պոզիտիվ իրավունքի, օրենքի), այսպես կոչված, աղբյուրների բուն տեսակների (ձևերի) բացահայտումը, դասակարգումը ու սիստեմավորումը, և 2) օրենսդրի կարծիքի (դիրքի) պարզաբանումը, այսինքն, իշխանության համապատասխան հրամանների, որպես իրավունքի աղբյուրների (ձևերի), նորմատիվ-կարգավորիչ բովանդակության բացահայտումը:

Համաձայն լեգիզմի, իրավունքի մասին ճշմարտությունը տրված է օրենսդրի (սուվերենի, պետության) կամքը, դիրքորոշումը, կարծիքը արտահայտող օրենքի մեջ: Այդ իսկ պատճառով իրավունքի մասին որոնելի գիտելիքը կրում է թեև պաշտոնական-իշխանային, բայց,

⁵ Տե՛ս *Царьков И. И.*, Развитие правовопонимания в европейской традиции права, СПб., 2006, с. 268-291:

⁶ Տե՛ս *Шершеневич Г. Ф.*, Общая теория права, М., 1910, Вып. 1, с. 281:

⁷ Նույն տեղում, էջ 314:

⁸ Տե՛ս *Козликни И.Ю., Полоков А.В., Тимошина Е.В.*, История политических и правовых учений. СПб.2007 г. 378-413:

այնուամենայնիվ, կարծիքի բնույթ: Համաձայն նմանօրինակ իրավաճանաչման տրամաբանության՝ միայն իրավունքը ստեղծող իշխանությունը գիտի, թե ինչ բան է իրավունքը և ինչով է այն տարբերվում ոչ իրավունքից: Գիտությունն էլ լավագույն դեպքում կարող է աղեկվատ կերպով հասնել և արտահայտել օրենքի (գործող իրավունքի) մեջ մարմնավորված իշխանահրամայական կարծիքը:

Լեգիզմի տեսաճանաչողական հետաքրքրությունն ամբողջապես կենտրոնացած է գործող (պոզիտիվ) իրավունքի վրա: Այն ամենը, ինչը դուրս է գալիս էմպիրիկորեն տրված պոզիտիվ իրավունքի սահմաններից, իրավունքի էության, իրավունքի գաղափարի, իրավունքի արժեքի և այլ նման բաների մասին դատողությունները պոզիտիվիստները մերժում են՝ համարելով զուտ մետաֆիզիկական սքոլաստիկ պատրանքային իրավական իմաստ նշանակություն չունեցող ինչ-որ բաներ:

Առավել սուր քննադատության են ենթարկում պոզիտիվիստները բնական-իրավական ուսմունքները, ընդ որում՝ բնական-իրավականների թվին են նրանք դասում իրավունքն ու օրենքը տարբերակող բոլոր հայեցակարգերը, օրենքի դրույթներից տարբերվող իրավունքի մասին տեսական բոլոր դատողությունները:

Այդպիսով՝ պոզիտիվիստական իմացաբանությունը, ըստ էության, մերժում է իրավունքի տեսությունը և ճանաչում է միայն օրենքի մասին ուսմունքը՝ օրինագիտությունը, որի առարկան է պոզիտիվ իրավունքը, իսկ նպատակն ու ուղենիշը՝ իրավունքի դոգմը, այսինքն՝ գործող (պոզիտիվ) իրավունքի, նրա ուսումնասիրման, մեկնման, դասակարգման, սիստեմավորման եղանակների, կանոնների, հնարքների մասին հիմնական անխախտ դրույթների (կայունացված հեղինակավոր կարծիքների, դիրքորոշումների, մոտեցումների) ամբողջականությունը:

Պոզիտիվ իրավունքի աղբյուրների հետազոտումը, մեկնաբանումը, դասակարգումը և հիերարխումը, դրանց նորմատիվային բովանդակության բացահայտումը, այդ նորմերի սիստեմավորումը, իրավաբանական տեխնիկայի հարցերի, իրավաբանական վերլուծման եղանակների ու մեթոդների մշակումը, այսինքն, այն ամենը, ինչը ավանդաբար կոչվում է իրավաբանական՝ դոգմատիկա (իրավունքի դոգմ) և վերաբերվում է իրավաբանի մասնագիտական կոմպետենտության, վարպետության, «արհեստի» ոլորտին, անշուշտ, իրենից ներկայացնում է իրավունքի ճանաչման և գործող իրավունքի մասին գիտության կարևոր բաղադրիչ մասը: Սակայն իրավունքի տեսության պոզիտիվիստական սահմանափակումը իրավունքի դոգմի մշակմամբ ըստ էության նշանակում է իրավունքի բուն գիտական հետազոտման շփոթում նրա ձևական-տեխնիկական նկարագրման հետ, իրավագիտության հանգեցում օրինագիտության:

Եզրակացություն

Օրենքի (գործող իրավունքի) պոզիտիվիստական իմացաբանությունը, դրա հետ մեկտեղ, ուղղված է ոչ թե օրենքի էության ճանաչմանը, ոչ թե գործող իրավունքի մասին (փաստացի տրված իրավունքում բացակայող) իմացության, գիտելիքի ձեռքբերմանը, այլ դրա՝ որպես արդեն ճանաչված և իմացած օբյեկտի աղեկվատ նկարագրությանը իրավաբանական-դոգմատիկ իմաստով: Համաձայն այս իրավահասկացման՝ իրավունքի մասին ողջ իմացությունն արդեն պաշտոնապես տրված է հենց բուն պոզիտիվ իրավունքի, նրա տեքստի մեջ, և իրավունքի մասին պոզիտիվիստական ուսմունքի հիմնական խնդիրն օրենքի տեքստի ճիշտ մեկնման և այդ տեքստում առկա պաշտոնական-իրավական գիտելիքի, օրենսդրի կարծիքի և դիրքորոշման ճիշտ շարադրման մեջ է:

Դրա հետ է կապված հատկապես պոզիտիվիստների (մանավանդ վերլուծական իրավա-

գիտության ներկայացուցիչների) մեծ հետաքրքրությունն օրենքի լեզվաբանական և տեքստաբանական մեկնումների հանդեպ, ընդ որում, ակներևաբար՝ անտեսելով նրա իրավական իմաստն ու բովանդակությունը:

Նման տեսակետներ էր զարգացնում արդեն մոլի պոզիտիվիստ Ի. Բենտամը, որը զգալի դեր է կատարել վերլուծական իրավագիտության (Դ. Օստին և այլք) կայացման գործում: Բնական իրավունքը, ըստ նրա գնահատականի, զուտ բառային ֆիկցիա է, իսկ մարդու անօտարելի իրավունքները՝ երևակայության ցնորք:

Իրավագիտության լեզվի Բենտամի կողմից սկսված «մաքրագերծումը» նման «սուտիկ» բառերից շարունակեցին հետագա պոզիտիվիստները, հատկապես հետևողականորեն դա արվեց կելզենյան «իրավունքի մասին մաքուր ուսմունքում»:

Այս ուղղությամբ առավել հեռու գնաց ռուս նախահեղափոխական իրավագետ Վ.Դ. Կատկովը: «Բարեփոխելով» իրավագիտությունը «ընդհանուր լեզվագիտության» միջոցով, նա նույնիսկ առաջարկեց՝ ընդհանրապես հրաժարվել «իրավունք» բառից և դրա փոխարեն օգտագործել «օրենք» բառը, քանի որ, պնդում էր նա, «չկա այդպիսի երևույթ՝ իրավունք»⁹:

Աքսիոլոգիական արժեքանական առումով՝ ղեզիզմը իրավունքի և օրենքի (պոզիտիվ իրավունքի) նույնացման և իրավունքի օբյեկտիվ, օրենքից և օրենսդրից անկախ հատկությունների և բնութագրերի բացառման պատճառով, ըստ էության, մերժում է բուն իրավական արժեքները և ճանաչում է միայն օրենքի (պոզիտիվ իրավունքի) արժեքը: Ընդ որում՝ պոզիտիվիստների կողմից ճանաչվող օրենքի (պոզիտիվ իրավունքի) «արժեքը» իրականում՝ զուրկ է բուն արժեքային իմաստից: Օրենքի պոզիտիվիստական արժեքը՝ դա նրա պաշտոնական համապարտադիրությունն է, իշխանային իմպերատիվայնությունը, այլ ոչ որևէ օբյեկտիվ (ոչ իշխանա-հրամանային) հիմքով համանշանակությունը:

Այս առումով հատկանշական է Քելզենի, մեր կարծիքով ծայրահեղական-պոզիտիվիստական մոտեցումը, համաձայն որի՝ իրավունքն արժեքավոր է միայն որպես հրաման, որպես նորմ: Այդ իմաստով՝ (որպես հրաման, նորմ) իրավունքը՝ բնութագրվում է Կելզենի կողմից որպես պարտի ձև: «Չի կարելի, ինչպես դա հաճախ արվում է, ասել, որ իրավունքը՝ իրենից ներկայացնում է ոչ միայն նորմ (կամ հրաման), այլև որ այն կազմում կամ արտահայտում է որևէ արժեք (նման պնդումը՝ իմաստ կունենա, եթե միայն բացարձակ աստվածային արժեքի ենթադրման դեպքում),- գրում է Քելզենը: - Չէ՛ որ իրավունքը արժեք է ներկայացնում միայն այն պատճառով, որ հանդիսանում է նորմ...»¹⁰:

Սակայն այդ նորմը Քելզենի մոտ զուտ հրաման-պարտադիրություն է, այլ ոչ թե հավասարության նորմ, ազատության նորմ, արդարության նորմ: Այն իր մեջ ոչինչ չի պարունակում իրավունքի ձևական-իրավական հատկանիշներից: Քելզենյան նորմը (և դրա հետ մեկտեղ իրավունքի ձևը) պարտքի «զուտ» ու դատարկ ձև է, որը պիտանի է ցանկացած կամայական պոզիտիվ-իրավական բովանդակությանը իմպերատիվ-հրամայական կարգավիճակ ու բնույթ տալու համար:

Ամփոփագիր: Հոդվածում հանգամանորեն քննարկել է լեզվատեսական (պոզիտիվիստական) իրավահասկացության էությունը, հասկացությունը և բովանդակային առանձնահատկությունները: Հեղինակը հոդվածում հիմնավորում է, որ լեզվատեսական (պոզիտիվիստական) իրավահասկացության հիմքում ընկած է իրավունքի՝ որպես հրամանի, որպես պետության պարտադիր սահմանումների, կարգադրագրերի համակցություն: Այդ հայեցակար-

⁹ Տե՛ս *Катков В. Д.*, Реформированная общим языковедением логика и юриспруденция, Одесса, 1913, с 391,407:

¹⁰ Տե՛ս Чистое учение о праве Ганс Кельзена. Вып.1. М., ИНИОН АН СССР, 1987, с.93.

գի համաձայն իրավունքը և օրենքը փաստացի նույնական են, քանի որ դրանք արտահայտում են պետության ինքնիշխան կամքը:

Annotation. The article thoroughly discusses the essence, concept and substantive features of the legalistic (positivist) concept of law. In the article, the author argues that the basis of the legalistic (positivist) concept of law is a combination of law as an order, as mandatory definitions of the state, and decrees. According to that concept, right and law are effectively identical because they express the sovereign will of the state. The history and theory of legal thought and jurisprudence are penetrated by the struggle of two opposite types of legal understanding. These two types of interpretation of the understanding of law and understanding of law can be conditionally called juridical and legalistic types of legal understanding. Within these two types of legal understanding, there are different concepts of the understanding of law and directions of interpretation. Accounting for the intra-typological features of the inter-typological differences of one or another teaching about law is essential for the specific characterization of their theoretical-legal content.

Аннотация. В данной статье подробно рассматриваются сущность, понятие и содержательные особенности легалистической (позитивистской) концепции права. В статье автор утверждает, что в основе данной концепции лежит сочетание права как порядка, как обязательных определений государства и декретов. Согласно этой концепции, право и закон фактически идентичны, поскольку они выражают суверенную волю государства. История и теория правовой мысли и правоведения пронизаны борьбой двух противоположных типов правопонимания. Эти два типа толкования правопонимания можно условно назвать юридическим и легалистическим. В рамках этих двух типов правопонимания существуют разные концепции понимания права и его определения. Учет внутритипологических особенностей и межтипологических различий того или иного учения о праве имеет существенное значение для конкретной характеристики, их теоретико-правового содержания.

Բանալի բառեր - իրավունք, օրենք, հրաման, պետության կամք, կարգադրագիր, պոզիտիվ իրավունք, լեգալիստական (պոզիտիվիստական) իրավաբանականություն:

Keywords: right, law, order, will of the state, ordinance, positive law, legalistic (positivist) concept of law.

Ключевые слова: право, закон, порядок, воля государства, постановление, позитивное право, легалистическая (позитивистская) концепция права.

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Нерсесянц В.С., Философии права. 2-е изд. М., 2006, с. 20.
2. Гревцов Ю.И., Козлихин И.Ю., Энциклопедия права. СПб., 2008, с. 35-36.
3. Гоббе Т., Левиафан. М., 1936, с. 214.
4. Царьков И.И., Развитие правопонимания в европейской традиции права. СПб., 2006, с. 268-291.
5. Шершеневич Г.Ф., Общая теория права, М., 1910, Вып. 1, с. 281.
6. Козликни И.Ю., Полоков А. В., Тимошина Е.В., История политических и правовых учений, СПб., 2007 г., с. 378-413.
7. Катков В.Д., Реформированная общим языковедением логика и юриспруденция. Одесса, 1913, с. 391, 407.
8. Чистое учение о праве Ганс Кельзена. Вып.1. М., ИНИОН АНСССР, 1987, с. 93.

Շուրջության Ա. - ՀՀ միասնական սոցիալական ծառայության պետի տեղակալ, ԳԱԱ ավագ գիտաշխատող, դոկտորանտ, իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ, էլիասցե՝ shuqur@mail.ru:

Ներկայացվել է խմբագրություն 27.03.2024 թ., տրվել է գրախոսության 27.03.2024թ., երաշխավորվել է իրավ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Գ. Սաֆարյանի կողմից, ընդունվել է տպագրության 15.04.2024 թ.:

**ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ/CONSTITUTIONAL LAW/
КОНСТИТУЦИОННОЕ ПРАВО**

<https://doi.org/10.59546/18290744-2024.1-3-10>

ՆԱՐԵԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

*ԵՊՀ քրեական իրավունքի ամբիոնի հայցորդ,
ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության
Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների քննչական
ստաջին բաժնի քննիչ, երկրորդ դասի խորհրդական*

NAREK HARUTYUNYAN

*Applicant of YSU Criminal Law Chair,
Investigator of the 1st Investigation Division of Kentron and Nork-Marash
Administrative Districts of the Investigation Department of Yerevan
City of the RA Investigative Committee, 2nd Class Counselor*

НАРЕК АРУТЮНЯН

*соискатель кафедры уголовного права ЕГУ,
следователь 1-го следственного отдела административных районов
Кентрон и Норк-Мараш следственного управления города Еревана
Следственного комитета РА, советник 2-го класса*

**ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՄԻԳՐԱՑԻԱՅԻ ԷՈՒԹՅԱՆ, ՏԵՍԱԿՆԵՐԻ ԵՎ
ԴՐՍԵՎՈՐՄԱՆ ՁԵՎԵՐԻ ՄԱՍԻՆ**

ON THE ESSENCE, TYPES AND FORMS OF POPULATION MIGRATION

**О СУЩНОСТИ, ВИДАХ И ФОРМАХ ПРОЯВЛЕНИЯ МИГРАЦИИ
НАСЕЛЕНИЯ**

Ներածություն

Միավորված ազգերի կազմակերպության (ՄԱԿ) գլխավոր քարտուղար Քոֆի Անանի «2002 թվականի միջազգային միգրացիայի մասին» զեկույցում արդարացիորեն նշվում էր, որ բնակության վայրը փոխելու ճգնուճը մշտապես եղել է մարդու հիմնական բնութագրիչներից մեկը: «Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի» ընդունմամբ մարդու տեղաշարժի ազատության իրավունքը միջազգային ճանաչում է ստացել¹: Մասնավորապես, այդ Հռչա-

¹ Տե՛ս ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարի զեկույցը «2002 թ. միջազգային միգրացիայի մասին»՝ <http://un.org/esa/population/publications/ittmig2002/ittmigrep2002.htm>:

կազմի² 13-րդ հոդվածի համաձայն՝

«1. Յուրաքանչյուր ոք իրավունք ունի ազատորեն տեղից տեղ փոխադրվելու և բնակավայր ընտրելու ամեն մի պետության սահմաններում:

2. Յուրաքանչյուր ոք իրավունք ունի քելու ցանկացած երկիր, ներառյալ նաև սեփականը, և վերադառնալու իր երկիրը»:

Գլոբալացման դարաշրջանում միջազգային միգրացիայի՝ որպես զարգացման նշանակալի գործոնի դերը և կարևորությունն առավել ակնհայտ են դառնում: Տվյալ հանգամանքը հատկապես արտահայտվում է պետությունների միջև մարդկային կապիտալի՝ որակավորված աշխատուժի համար ծավալվող մրցակցային պայքարում: Բնականաբար, այդ մրցակցությունում չպարտվելու համար անհրաժեշտ է ապահովել ժամանակակից պատշաճ միգրացիոն քաղաքականություն³:

Հիմնական հետազոտություն

Բնակչության միգրացիան բավականին բարդ և բազմաբովանդակ գործընթաց է, որը պայմանավորված է տարատեսակ քաղաքական, սոցիալ-տնտեսական, իրավական, կազմակերպական արժեքային, հոգեբանական և այլ գործոններով: Դրա ծավալներն ամբողջ աշխարհում էականորեն ընդլայնվել են հատկապես վերջին տարիներին, ինչը գլխավորապես աշխարհի տարբեր հատվածներում զինված հակամարտությունների արդյունք է:

Յուրաքանչյուր երկրի բնակչության թվաքանակը փոխվում է ոչ միայն բնական (վերարտադրության, սերնդափոխության), այլև մեխանիկական շարժի՝ միգրացիայի (գաղթերի) շնորհիվ: Ընդ որում՝ արտագաղթողների և ներգաղթողների գումարն արտահայտում է միգրացիայի ընդհանուր, իսկ տարբերությունը՝ զուտ մեծությունը: Միգրացիաները կարևոր դեր են կատարել մարդկության պատմության մեջ. նրանց հետ են կապված բնակեցման, հողի տնտեսական յուրացման, արտադրողական ուժերի զարգացման, ռասաների, ժողովուրդների ու լեզուների կազմավորման և աշխարհով մեկ տարածման գործընթացները⁴:

Մասնագիտական գրականության մեջ միգրացիան (լատիներեն՝ migratio, migro, ինչը թարգմանաբար նշանակում է՝ գաղթ, վերաբնակեցում) ընդունված է հասկանալ որպես բնակչության բռնի կամ կամավոր տեղաշարժ մի երկրից մյուսը կամ նույն երկրի ներսում՝ կապված մշտական կամ ժամանակավոր բնակավայրը փոխելու հետ: Ընդ որում՝ որոշակի հանգամանքներով պայմանավորված՝ ընդունված է տարբերել արտաքին (միջմայրցամաքային և միջպետական) և ներքին (ներպետական) միգրացիաներ, այդ թվում՝ միջշրջանային և գյուղական բնակավայրերից բնակչության վերաբնակեցումը քաղաքներում⁵:

2022 թվականի դրությամբ համաշխարհային ցուցանիշներով հաշվարկվել են շուրջ 281 միլիոն միջազգային միգրանտներ, որոնք կազմում են երկրի ընդհանուր բնակչության 3,6 %-ը: Մասնավորապես, խոսքն այն մարդկանց մասին է, որոնք ապրում և աշխատում են այն երկրների սահմաններից դուրս, որտեղ ծնվել են: Վերջիններիս վերաբնակեցման հիմնական

² Ընդունվել և հռչակվել է ՄԱԿ-ի Գլխավոր Ասամբլեայի 1948 թվականի դեկտեմբերի 10-ի 217 Ա (III) բանաձևի համաձայն:

³ Տե՛ս նաև *Денисенко М. Б., Фурса Е. В., Хараева О. А., Чудиновских О. С.,* Миграционная политика в зарубежных странах и Российской Федерации: опыт сравнительного анализа. М.: Институт экономики переходного периода, 2003, էջ 3:

⁴ Տե՛ս <https://www.imdproc.am/p/ashkharhagrutyun/7-dasaran/ashkharhi-bnakchutyuny-17914/bnakchutyun-teghabashkhum-17917/re-98d6adce-cc23-473d-9003-bc40622e3cff>:

⁵ Տե՛ս նաև՝ *Մուրադյան Յու.*, Հասարակական աշխարհագրության հանրագիտակ բառարան, Եր., «ՄՈԱ» հրատ., 2008:

պատճառներից մեկն իրենց և իրենց երեխաների համար ավելի լավ կյանքի ձգտումն է: Ընդ որում, պատմությունը վկայում է, որ միգրանտները, որպես կանոն, էական ներդրում են ունենում ինչպես իրենց ծագման, այնպես էլ ընդունող երկրների զարգացման մեջ⁶:

Միգրացիոն տարբեր գործընթացներ, բնականաբար, առնչվում են նաև Հայաստանի Հանրապետությանը: Մասնավորապես, «Հայաստանի Հանրապետության միգրացիայի պետական կառավարման հայեցակարգը և գործողությունների ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 20.05.2021 թ. թիվ 801-Լ որոշման Հավելված 1-ի 8-րդ կետում նշվում է՝ «Ինչպես ողջ աշխարհում, այնպես էլ Հայաստանի Հանրապետությունում տարեցտարի ակտիվանում են միգրացիոն հոսքերը՝ լինեն դրանք ներգաղթի, թե արտագաղթի, կամավոր, թե հարկադիր, օտարերկրացիների, թե հայրենակիցների: 1990-ականների սկզբին Հայաստանը տարբեր գնահատականներով ունեցավ շուրջ 1.000.000 բնակչի արտահոսք, մի կողմից, և շուրջ 360.000 Ադրբեջանից Հայաստան բռնագաղթածների ներհոսք՝ մյուս կողմից: 1990-ականներից մինչև 2018 թ. (բացառությամբ մի կարճ շրջանի) ՀՀ քաղաքացիների արտահոսքը պահպանվել է: 2020 թվականին, ինչպես և նախորդ երկու տարիներին, արձանագրվել է սահմանահատումների՝ ելքերի և մուտքերի դրական մնացորդ՝ շուրջ 12 հազարի չափով: Ընդ որում՝ եթե նախորդ տարիներին ՀՀ քաղաքացիների դեպքում վերոնշյալ ցուցանիշը բացասական էր, իսկ օտարերկրացիներինը դրական, ապա 2020 թվականին պատկերը տրամադժորեն փոխվել էր՝ ՀՀ քաղաքացիների դեպքում մնացորդը + 42,786 էր, իսկ օտարերկրացիների դեպքում - 30.693, ինչը բացատրվում է COVID-19-ով պայմանավորված սահմանափակումներով: 2017-2018 թթ. Հայաստանի տնային տնտեսությունների 8.9 %-ն ունեցել է արտաքին և ներքին միգրացիոն գործընթացներում ներգրավված անդամներ, որոնք կազմել են տնային տնտեսության անդամների 10.9%-ը: Հայաստանից սկիզբ առնող միգրացիոն հոսքերում տասնամյակներ շարունակ գերակայել է սեզոնային աշխատանքային միգրացիան: Յուրաքանչյուր տարի ՀՀ-ում աճում է նաև օտարերկրացիների թիվը: 2019 թվականին կացության տարբեր կարգավիճակներ են ստացել 7986 օտարերկրացիներ, ինչը շուրջ 40 %-ով ավելին է, քան 2015 թվականի նույն տվյալը: 2003 թվականից ի վեր Հայաստանն ընդունում է նաև օտար երկրներից հարկադիր տեղափոխված հայրենակիցների: Այսպես՝ 2003 թվականին Իրաքի Հանրապետությունում վարվող պատերազմական գործողությունների պատճառով Հայաստան է տեղափոխվել և փախստականի կարգավիճակ է ստացել շուրջ 1000 անձ՝ մեծամասամբ հայկական ծագմամբ: 2012 թվականին Սիրիայի Արաբական Հանրապետությունում սկիզբ առած զինված բախումների հետևանքով Հայաստան է տեղափոխվել շուրջ 20,000 հարկադիր միգրանտ՝ հայկական ծագմամբ: 2014 թվականին Ուկրաինայի հարավում զինված բախումների պատճառով Հայաստանում ապաստան է հայցել շուրջ 200 անձ՝ մեծամասամբ հայկական ծագմամբ: 2020 թվականի սեպտեմբերին Ադրբեջանի Հանրապետության կողմից Արցախի Հանրապետության նկատմամբ սանձազերծված պատերազմի արդյունքում ավելի քան 100.000 հարկադիր տեղահանված մեր հայրենակիցներ ժամանակավորապես տեղափոխվեցին Հայաստանի Հանրապետություն: 2000 թվականից ի վեր դեպի Հայաստան միգրացիոն հոսքերում մեծանում է նաև Հայաստանից մեկնած ՀՀ քաղաքացիների վերադարձի միտումը: 2012-2019 թթ. ընթացքում ԵՄ երկրներից և Ռուսաստանի Դաշնությունից ստացվել են 3380 հետընդունման (ռեադմիսիոն) հայցեր՝ 6581 անձանց մասին, որոնցից 5361 անձանց քաղաքացիությունը հաստատվել է: Միգրացիոն այս ծավալուն և

⁶ Տես նաև՝ В мире насчитывается примерно 281 млн международных мигрантов // Новости ООН / Мир и безопасность. 14. 2022г. // <https://news.un.org/ru/story/2022/02/1418252>:

բազմատեսակ հոսքերի առկայության պայմաններում միգրացիայի կառավարման քաղաքականության ընդունումն անհրաժեշտություն է»:

Այսպիսով՝ կարելի է եզրակացնել, որ մեր երկրին առնչվող միգրացիոն գործընթացների բնութագրման համար կիրառվող հիմնական ցուցանիշը Հայաստանի Հանրապետությունից ելքի և Հայաստանի Հանրապետություն մուտքի տարեկան թվերի դինամիկան է:

Այդ առումով հետաքրքրարժան են պաշտոնական վիճակագրական այն տվյալները, որոնք վերաբերում են սահմանահատումներին՝ ըստ տարեթվերի և միգրանտների քաղաքացիության: Ընդ որում, օտարերկրացիների պարագայում, այդ տեսանկյունից, հարկ է հասկանալ նաև քաղաքացիություն չունեցող անձանց: Մասնավորապես, ՀՀ ՆԳՆ միգրացիայի և քաղաքացիության ծառայության տվյալներով՝ 2015-2023 թթ. ժամանակահատվածում արձանագրվել է՝ ըստ քաղաքացիության ՀՀ պետական սահմանի հատումների հետևյալ շարժընթացը (տե՛ս Աղյուսակ 1-ը):

Աղյուսակ 1.

**Ըստ քաղաքացիության սահմանահատումների դինամիկան ՀՀ-ում՝
 2015-2023 թթ. ժամանակահատվածում**

Վաթս	ՀՀ քաղաքացի			Օտարերկրացի			Ընդամենը		
	մուտք	ելք	սալդո	մուտք	ելք	սալդո	մուտք	ելք	Սալդո
2015	1,562,582	1,610,250	-47,668	1,146,687	1,142,444	4,243	2,709,269	2,752,269	-43,425
2016	1,665,350	1,719,381	-54,031	1,201,650	1,195,789	5,861	2,867,000	2,915,170	-48,170
2017	1,927,273	1,963,474	-36,201	1,470,864	1,461,572	9,292	3,398,137	3,425,046	-26,909
2018	2,146,738	2,151,323	-4,585	1,610,449	1,590,546	19,903	3,757,187	3,741,869	15,318
2019	2,392,893	2,399,422	-6,529	1,926,725	1,909,690	17,035	4,319,618	4,309,112	10,506
2020	497,340	454,554	42,786	415,871	446,564	-30,693	913,211	901,118	12,093
2021	689,221	762,792	-73,571	940,670	910,973	29,697	1,629,891	1,673,765	-43,874
2022	1,479,798	1,507,739	-27,941	1,914,573	1,847,900	66,673	3,394,371	3,355,639	38,732
2023	1,972,135	2,008,647	-36,512	2,792,139	2,785,121	7,018	4,764,274	4,793,768	-29,494

Ներկայացված վիճակագրական ցուցանիշներից կարելի է հետևություն անել, որ Հայաստանի Հանրապետությունում 2015-2019 թվականներին ընդհանուր միգրացիան (բոլոր արտագաղթողների և ներգաղթողների գումարը) անընդհատ աճում է (2015 թ.՝ **5 մլն. 461 հազ. 538**, 2016 թ.՝ **5 մլն. 782 հազ. 170**, 2017 թ.՝ **6 մլն. 823 հազ. 183**, 2018 թ.՝ **7 մլն. 499 հազ. 056** և 2019 թ.՝ **8 մլն. 628 հազ. 730**): Մինչդեռ 2020 թվականին արձանագրվում է տվյալ ցուցանիշի կտրուկ նվազում (**1 մլն. 814 հազ. 329**): Հետագայում, սակայն, ընդհանուր միգրացիան կրկին աճում է (2021թ.՝ **3 մլն. 303 հազ. 656**, 2022թ.՝ **6 մլն. 750 հազ. 010** և 2023թ.՝ **9 մլն. 558 հազ. 042**): Ընդ որում, եթե 2015-2017 թվականներին մեր երկիր ընդհանուր մուտքերի և ելքերի սալդոն բացասական է եղել (ելքերը գերազանցել են մուտքերին), ապա 2018-2020 թվականներին պատկերը փոխվել է: Բայցևայնպես, 2021 թվականին կրկին արձանագրվել է տվյալ ցուցանիշի բացասական արդյունք, մինչդեռ 2022 թվականին՝ դրական: 2023 թվականին, սակայն, Հայաստանի Հանրապետություն ընդհանուր մուտքերի և ելքերի սալդոն դարձյալ արձանագրել է բացասական ցուցանիշներ:

Հետաքրքրարժան է նաև քննարկվող ժամանակահատվածում ՀՀ-ում սահմանահատումների շարժընթացն ըստ քաղաքացիության: Մասնավորապես, ՀՀ քաղաքացիների պարագայում մուտքերի և ելքերի տարբերությունը, որպես կանոն, բացասական է, իսկ օտարերկրացիներինը՝ դրական: Բացառություն է կազմում 2020 թվականը, երբ ՀՀ քաղաքացիների մուտքերի և ելքերի սալդոն կազմել է + **42 հազ. 786**, իսկ օտարերկրացիներինը՝ - **30 հազ. 693**: Տվյալ հանգամանքը, ինչպես արդեն նշվել է, գլխավորապես բացատրվում է COVID-19-ով պայմանավորված սահմանափակումներով:

Միևնույն ժամանակ, Ի. Ա. Ալեշկովսկու և Վ. Ա. Իոնցևի կարծիքով, միգրացիան բավականին ընդարձակ և բազմաբովանդակ երևույթ է, որի բաղադրիչների դասակարգումը հիմնվում է բազմաթիվ բնութագրիչների վրա: Մասնավորապես, ըստ համապատասխան հատկանիշների, հեղինակներն առաջարկում են առանձնացնել դրա հետևյալ տեսակները (տե՛ս աղյուսակ 2-ը).

Աղյուսակ 2.

Միգրացիայի տեսակները⁷

Աշխարհագրական հատկանիշով	Գործառույթային հատկանիշով	Ըստ տնտեսական	Ըստ շարժառիթների	Օրինականության Հատկանիշով
արտաքին	աշխատանքային	ժամանակավոր	սոցիալ – տնտեսական	լեգալ (օրինական)
ներքին	մշակութային – կենցաղային	ճոճանակային (ռեգուլյար)	քաղաքական	ոչ լեգալ (անօրինական)
—	ծառայողական (գործուղումներ)	մշտական	կրոնական	—
—	ուսումնական	սեզոնային	ընտանեկան – կենցաղային	—

Մեր հետազոտության շրջանակում այդ առումով առանձին հետաքրքրություն են ներկայացնում միգրացիայի **արտաքին** և, հատկապես՝ **անօրինական** տեսակները: Բանն այն է, որ ՀՀ քրեական օրենսգրքը պատասխանատվություն է սահմանում, մի դեպքում, օտարերկրյա քաղաքացու կամ քաղաքացիություն չունեցող անձի **մուտքը Հայաստանի Հանրապետություն, Հայաստանի Հանրապետությունում նրա գտնվելը կամ Հայաստանի Հանրապետության տարածքով տարանցումը (տեղափոխումը)** շահադիտական նպատակով **ապօրինի** կազմակերպելու (հոդված 470-ի 1-ին մաս), մյուս դեպքում՝ անձի՝ **Հայաստանի Հանրապետությունից ելքը, օտարերկրյա պետություն մուտքը** կամ օտարերկրյա պետությունում գտնվելը շահադիտական նպատակով **ապօրինի** կազմակերպելու (հոդված 470-ի 2-րդ մաս) համար: Ընդ որում, անօրինական միգրացիայի կազմակերպման համապատասխան դրսևորումների համար քրեական պատասխանատվություն է նախատեսված նաև բազմաթիվ այլ պետություններում: Դրանց հատուկ անդրադարձ կկատարվի սույն աշխատության ենթագլուխ 1.3-ում:

Միևնույն ժամանակ հարկ է նշել, որ անօրինական միգրանտի կարգավիճակում անձը կարող է հայտնվել թե՛ անօրինական ճանապարհով երկիր մուտք գործելու (մուտք առանց

⁷ Տե՛ս *Алешковский И.А., Ионцев В.А.*, Нелегальная миграция в глобальном мире: масштабы, последствия, противодействие // International Journal for Demographic and other social studies. М., 2014. – № 11, էջ 7:

օրենսդրությամբ սահմանված փաստաթղթերի, կեղծ փաստաթղթերի ներկայացում, մուտք երկիր ոչ սահմանային անցակետերով և այլն), և թե՛ օրինական ճանապարհով երկիր մուտք գործելու, սակայն թույլատրելի ժամկետից ավելի մնալու կամ առանց համապատասխան թույլտվության աշխատելու պարագայում⁸:

Մասնագիտական գրականության մեջ արդարացիորեն նշվում է, որ այսօրվա դրությամբ անօրինական միգրացիան հանդիսանում է կայուն և լայնածավալ երևույթ, որը բացասական լուրջ ազդեցություն ունի ժամանակակից աշխարհի բազմաթիվ երկրների սոցիալ-տնտեսական և քաղաքական գործընթացների վրա: Այդ կապակցությամբ իրականացված սոցիոլոգիական համապատասխան հարցումների արդյունքները ցույց են տալիս, որ բացասական մի շարք այլ երևույթների հետ մեկտեղ, ոչ լեգալ միգրացիան արդի զարգացած երկրների մեծամասնության բնակչությանը լրջորեն մտահոգող առավել սուր խնդիրներից է⁹:

Հարկ է նշել նաև, որ քննարկվող երևույթի անօրինական տեսակն անհրաժեշտ է տարբերել հարկադրված միգրացիայից: Մասնավորապես, վերջինի պարագայում, ի տարբերություն անօրինական միգրացիայի, բնակության վայրը փոխելու որոշում կայացրած անձն ապահովում է բոլոր այն պահանջների կատարումը, որոնք նախատեսված են իր պլանավորած ընդունող երկրի օրենսդրությամբ: Մինչդեռ անօրինական միգրացիան բնութագրվում է ծագման երկրից ելքի, ընդունող երկիր մուտքի կամ ընդունող երկրում գտնվելու կամ այդ երկրով տեղափոխման (տարանցման) համար օրենսդրությամբ սահմանված կարգը խախտելով, կամ ելքի, մուտքի, գտնվելու կամ տարանցման համար պատշաճ թույլտվություն ստանալու նպատակով կեղծ փաստաթուղթ կամ կեղծ տեղեկություն ներկայացնելով¹⁰:

Միգրացիոն քաղաքականության զարգացման միջազգային կենտրոնի Արևելյան ներկայացուցչության տնօրեն Մարտայն Պյունն այդ կապակցությամբ արդարացիորեն նշում է, որ թե՛ օրինական և թե՛ անօրինական միգրատները կարող են էական ազդեցություն ունենալ ինչպես ծագման, այնպես էլ նպատակակետ երկրների զարգացման վրա: Այնուամենայնիվ, նրանց անօրինական կարգավիճակն էապես սահմանափակում է տվյալ ազդեցությունը: Մասնավորապես՝

- այն զգալիորեն նվազեցնում է հավանական եկամուտները՝ սահմանափակելով նաև դրամային փոխանցումների ծավալը,
- նման կարգավիճակը նպաստում է բնակվելուն և տեղաշարժվելուն ուղղված նյութական և ոչ նյութական ծախսերի ավելացմանը՝ առավել խոցելի դարձնելով միգրանտներին,
- այն լուրջ բարդություններ է ստեղծում ընտանիքի անդամների հետ վերամիավորվելու տեսանկյունից,
- անօրինական միգրացիան նպաստում է հյուրընկալող հասարակություններում միգրացիոն գործընթացների վերապերյալ խեղաթյուրված պատկերացումների ձևավորմանը,
- այն խաթարում է հանրային անվտանգությունը՝ կազմակերպված հանցավորության, բռնության և կոռուպցիայի հետ կապակցվածության պատճառով,

⁸ Այդ մասին առավել մանրամասն տես՝ Ընդհանուր տեղեկություններ անօրինական միգրացիայի վերաբերյալ / ՀՀ ՆԳՆ միգրացիայի և քաղաքացիության ծառայության պաշտոնական կայքէջ, հղում՝ <https://www.migration.am/illegal-migration>:

⁹ Տես՝ *Алешковский И.А.*, Нелегальная миграция как феномен глобального мира // Век глобализации. 2014. № 2, էջ 130:

¹⁰ Այդ մասին առավել մանրամասն տես նաև՝ *Михлин А.А.*, Нелегальная миграция: вызовы и угрозы безопасности на европейском континенте // Военная мысль / Военно-теоретический журнал Министерства обороны РФ. 2017 // <https://limited-vm.ric.mil.ru/Stat/item/117169/>, *Лянной В.А.*, К вопросу об определении понятия нелегальная миграция // Юридический журнал «Пробелы в российском законодательстве». 2011. № 2, էջեր 64-65:

– դրա անօրինական դրսևորումներն էապես վնասում են բարեխիղճ ճանապարհորդների շահերին, քանզի դրանով պայմանավորված՝ ընդունող երկրներում զգալիորեն խստացվում են հսկողության համապատասխան ընթացակարգերը¹¹:

Միաժամանակ, հասարակական կյանքի տարբեր ոլորտների վրա անօրինական միգրացիայի իրական ազդեցությունը բացահայտելու և դրա հիման վրա միգրացիոն գործընթացների կարգավորմանն ուղղված պետական քաղաքականությունը կատարելագործելու, ինչպես նաև բացասական քննարկվող երևույթին հակազդելու միջոցառումների արդյունավետությունը բարձրացնելու նպատակով անհրաժեշտ է պատշաճ գնահատել անօրինական միգրացիայի ծավալներն ու կառուցվածքը: Մինչդեռ այդ առումով ժամանակակից աշխարհում առկա են մի շարք խոչընդոտներ: Դրանց շարքում մասնագետներն առանձնացնում են, մասնավորապես՝ հասկացության միասնական ապարատի բացակայությունը, անօրինական միգրանտների քանակի հաշվարկման և գնահատման մեթոդների ոչ բավարար մշակվածությունը և այլն¹²:

Եզրակացություն

Ամփոփելով բնակչության միգրացիայի էության, տեսակների և դրսևորման ձևերի հետ կապված հարցերի քննարկումը՝ հարկ ենք համարում առանձնացնել հետևյալ եզրակացությունները.

– Մարդկանց միգրացիաները կարևոր դեր են կատարել մարդկության պատմության մեջ. նրանց հետ են կապված բնակեցման, հողի տնտեսական յուրացման, արտադրողական ուժերի զարգացման, ռասաների, ժողովուրդների ու լեզուների կազմավորման և աշխարհով մեկ տարածման գործընթացները:

– Միգրացիան հասկացվում է որպես բնակչության բռնի կամ կամավոր տեղաշարժ մի երկրից մյուսը կամ նույն երկրի ներսում՝ կապված մշտական կամ ժամանակավոր բնակավայրը փոխելու հետ: Ըստ այդմ, ընդունված է տարբերել արտաքին (միջմայրցամաքային և միջպետական) և ներքին (ներպետական) միգրացիաներ, այդ թվում՝ միջշրջանային և գյուղական բնակավայրերից բնակչության վերաբնակեցումը քաղաքներում:

– 2015-2023 թվականներին ՀՀ-ում ընդհանուր միգրացիան (բոլոր արտագաղթողների և ներգաղթողների գումարը) անընդհատ աճել է: Մինչդեռ 2020 թվականին արձանագրվել է տվյալ ցուցանիշի կտրուկ նվազում, իսկ դրան հաջորդող տարիներին՝ զգալի աճ: 2015-2017 թթ. մեր երկիր ընդհանուր մուտքերի և ելքերի սալդոն բացասական է եղել (ելքերը գերազանցել են մուտքերին): Մինչդեռ 2018-2020 թթ. պատկերը փոխվել է: 2021 թվականին, սակայն, կրկին արձանագրվել է տվյալ ցուցանիշի բացասական արդյունք, որը հաջորդ տարիներին դարձյալ փոխվել է դրականով: ՀՀ քաղաքացիների պարագայում մուտքերի և ելքերի տարբերությունը, որպես կանոն, բացասական է, իսկ օտարերկրացիներինը՝ դրական: Բացառություն է 2020 թվականը, երբ ՀՀ քաղաքացիների մուտքերի և ելքերի սալդոն կազմել է + 42 հազ. 786, իսկ օտարերկրացիներինը՝ - 30 հազ. 693: Տվյալ հանգամանքը գլխավորապես բացատրվում է COVID-19-ով պայմանավորված սահմանափակումներով:

– Աշխարհագրական հատկանիշով ընդունված է տարբերել միգրացիայի արտաքին և ներքին, գործառութայինով՝ աշխատանքային, մշակութային-կենցաղային, ծառայողական (գործուղումներ) և ուսումնական, ըստ տևողության՝ ժամանակավոր, ճոճանակային (ոեզու-

¹¹ Sեն *Плюм М.*, Незаконная миграция: Принудительное применение и международное сотрудничество / Международная конференция «Противодействие незаконной миграции: актуальные вызовы, опыт работы и взаимодействие в современных условиях». Минск, 25-26 апреля, 2013 года.

¹² Sեն, օրինակ՝ *Алешковский И.А.*, Нелегальная миграция как феномен глобального мира, էջեր 130-131:

յար), մշտական և սեզոնային, ըստ շարժառիթների՝ սոցիալ-տնտեսական, քաղաքական, կրոնական և ընտանեկան-կենցաղային, իսկ օրինականության հատկանիշով՝ լեգալ և ոչ լեգալ տեսակները:

– Միգրանտների անօրինական կարգավիճակն ուղեկցվում է բացասական բազմաթիվ երևույթներով. այն զգալիորեն նվազեցնում է եկամուտները՝ սահմանափակելով նաև դրամային փոխանցումների ծավալը, նպաստում է բնակվելուն և տեղաշարժվելուն ուղղված նյութական և ոչ նյութական ծախսերի ավելացմանը՝ առավել խոցելի դարձնելով միգրանտներին, լուրջ բարդություններ է ստեղծում ընտանիքի անդամների հետ վերամիավորվելու տեսանկյունից, նպաստում է հյուրընկալող հասարակություններում միգրացիոն գործընթացների վերապերյալ սխալ պատկերացումների ձևավորմանը, խաթարում է հանրային անվտանգությունը՝ կազմակերպված հանցավորության և կոռուպցիայի հետ կապակցվածության պատճառով:

– Միգրացիայի անօրինական դրսևորումներն էական վնաս են պատճառում բարեխիղճ ճանապարհորդների շահերին, քանզի դրանով պայմանավորված՝ ընդունող երկրներում զգալիորեն խստացվում են հսկողության ընթացակարգերը:

Ամփոփագիր: Հոդվածում քննարկվում են ներկայիս աշխարհում տարածված երևույթներից մեկի՝ միգրացիայի էության, տեսակների և դրսևորման հիմնական ձևերի հետ կապված հարցերը: Նշվում է, որ ընդհանուր առմամբ միգրացիան ընդունված է հասկանալ որպես բնակչության բռնի կամ կամավոր տեղաշարժ մի երկրից մյուսը կամ նույն երկրի ներսում՝ կապված մշտական կամ ժամանակավոր բնակավայրը փոխելու հետ: Այդ առումով պարզաբանվում է, որ միգրացիան լայնածավալ և բազմաբովանդակ երևույթ է, որի բաղադրիչների դասակարգումը հիմնվում է բազմաթիվ բնութագրիչների (օրինակ՝ աշխարհագրական, ֆունկցիոնալ, ժամանակագրական, իրավական և այլն) վրա:

Հետազոտության շրջանակում հատուկ անդրադարձ է կատարվում նաև Հայաստանի Հանրապետությունից ելքի և Հայաստանի Հանրապետություն մուտքի տարեկան թվերի դինամիկային: Այդ կապակցությամբ նշվում է, որ ՀՀ-ում 2015-2019 թվականներին ընդհանուր միգրացիան անընդհատ աճում է: Մինչդեռ 2020 թվականին արձանագրվում է տվյալ ցուցանիշի կտրուկ նվազում: Հետագայում այն կրկին աճում է:

Հեղինակը հատուկ ուշադրություն է հրավիրում նաև այն հանգամանքի վրա, որ ՀՀ քաղաքացիների պարագայում մուտքերի և ելքերի տարբերությունը, որպես կանոն, բացասական է, իսկ օտարերկրացիներինը՝ դրական: Բացառություն է կազմում 2020 թվականը, ինչը գլխավորապես բացատրվում է COVID-19-ով պայմանավորված սահմանափակումներով:

Annotation. The article discusses issues related to the essence, types and main forms of manifestation of one of the common phenomena in the modern world - migration. It is noted that in general, migration is understood as the forced or voluntary movement of the population from one country to another or within one country, due to a change in permanent or temporary place of residence. In this regard, it is explained that migration is a large-scale and multifaceted phenomenon, and the classification of its components is carried out according to various criteria (for example: geographical, functional, temporary, legal, etc.).

Within the framework of the study, special attention is also paid to the dynamics of the annual number of departures from the Republic of Armenia and entries into the Republic of Armenia. In this regard, it is noted that the overall migration to the Republic of Armenia in 2015-2019 is constantly increasing. Meanwhile, in 2020 a sharp decline in this indicator is recorded. Later it grows back.

The author also draws special attention to the fact that for RA citizens the difference between entries and exits is, as a rule, negative, and for foreigners it is positive. The exception is 2020, which is mainly due to restrictions caused by COVID-19.

Аннотация. В статье рассматриваются вопросы, связанные с сущностью, видами и основными формами проявления одного из распространенных в современном мире явлений – миграцией. Отмечается, что в целом под миграцией принято понимать вынужденное или добровольное перемещение населения из одной страны в другую или внутри одной страны, в связи с изменением постоянного или временного места проживания. В данной связи разъясняется, что миграция – это масштабное и многогранное явление, а классификация ее составляющих осуществляется по различным признакам (например, географическому, функциональному, временному, правовому и т.п.).

В рамках исследования особое внимание уделяется также динамике ежегодного числа выездов из Республики Армения и въездов в Республику Армения. В этом плане отмечается, что общий процесс миграции в РА в 2015-2019 гг. постоянно увеличивался. Между тем, в 2020 году фиксируется резкое снижение этого показателя. Позже он снова вырастает.

Мы также обращаем особое внимание на то обстоятельство, что для граждан РА разница между въездами и выездами, как правило, отрицательная, а для иностранцев – положительная. Исключением является 2020 г., что главным образом объясняется ограничениями, вызванными COVID-19.

Բանալի բառեր - բնակչության տեղաշարժ, արտաքին միգրացիա, միգրանտ, օրինական (լեգալ) միգրացիա, անօրինական (ոչ լեգալ) միգրացիա, Հայաստանի Հանրապետությունից ելք, Հայաստանի Հանրապետություն մուտք, ելքերի և մուտքերի տարբերություն (սալդո):

Keywords: population movement, external migration, migrant, legal migration, illegal migration, exit from the Republic of Armenia, entry into the Republic of Armenia, difference (balance) of exits and entries.

Ключевые слова: перемещение населения, внешняя миграция, мигрант, законная (легальная) миграция, незаконная (нелегальная) миграция, выезд из Республики Армения, въезд в Республику Армения, разница (сальдо) выездов и въездов.

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Ընդհանուր տեղեկություններ անօրինական միգրացիայի վերաբերյալ / ՀՀ ՆԳՆ միգրացիայի և քաղաքացիության ծառայության պաշտոնական կայքէջ, հղում՝ <https://www.migration.am/illegal-migration>:
2. ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարի զեկույցը «2002 թ. միջազգային միգրացիայի մասին»՝ <http://un.org/esa/population/publications/ittmig2002/ittmigrep2002.htm>:
3. Մուրադյան Յու., Հասարակական աշխարհագրության հանրագիտակ բառարան, Եր., «ՄՈԱ» հրատ., 2008:
4. Алешковский И. А., Ионцев В. А., Нелегальная миграция в глобальном мире: масштабы, последствия, противодействие // International Journal for Demographic and other social studies. М., 2014. – № 11.
5. Алешковский И. А., Нелегальная миграция как феномен глобального мира // Век глобализации. 2014. № 2.
6. В мире насчитывается примерно 281 млн международных мигрантов // Новости ООН / Мир и безопасность. 14. 2022г. // <https://news.un.org/ru/story/2022/02/1418252>:
7. Денисенко М. Б., Фурса Е. В., Хараева О. А., Чудиновских О. С., Миграционная политика в зарубежных странах и Российской Федерации: опыт сравнительного анализа. М.: Институт экономики переходного периода, 2003.
8. Лянной В. А., К вопросу об определении понятия нелегальная миграция // Юридический журнал «Пробелы в российском законодательстве», 2011, № 2.
9. Михлин А. А., Нелегальная миграция: вызовы и угрозы безопасности на европейском континенте // Военная мысль / Военно-теоретический журнал Министерства обороны РФ. 2017 // <https://limited-vm.ric.mil.ru/>

Stati/item/117169/.

10. Плюм М., Незаконная миграция: Принудительное применение и международное сотрудничество / Международная конференция «Противодействие незаконной миграции: актуальные вызовы, опыт работы и взаимодействие в современных условиях». Минск, 25-26 апреля, 2013 года.

Հարությունյան Ն. - ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների քննչական առաջին բաժնի քննիչ, երրորդ դասի խորհրդական, էլիասցե՝ narek.har.v@gmail.com:

Ներկայացվել է խմբագրություն 19.03.2024 թ., տրվել է գրախոսության 19.03.2024 թ., երաշխավորվել է ՀՀ արդարադատության ակադեմիայի ռեկտոր, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ս. Առաքելյանի կողմից, ընդունվել է տպագրության 15.04.2024 թ.:

<https://doi.org/10.59546/18290744-2024.1-3-20>

ՀԵՐԲԵՐՏ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
ԵՊՀ սահմանադրական իրավունքի ամբիոնի հայցորդ
<https://orcid.org/0000-0003-4878-1080>

HERBERT HARUTYUNYAN
PhD Student at the Chair of Constitutional Law of Yerevan State University

ГЕРБЕРТ АРУТЮНЯН
Соискатель кафедры конституционного права ЕГУ

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԻ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐԸ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

BASIC ISSUES OF CONSTITUTIONAL RESPONSIBILITY OF THE HEAD OF STATE IN THE CONTEXT OF CONSTITUTIONAL REFORMS

ОСНОВНЫЕ ВОПРОСЫ КОНСТИТУЦИОННОЙ ОТВЕТСТВЕННОСТИ ГЛАВЫ ГОСУДАРСТВА В КОНТЕКСТЕ КОНСТИТУЦИОННЫХ РЕФОРМ

Ներածություն

Կիսանախագահական կառավարման ձևից խորհրդարանականի անցնելու անհրաժեշտությունը «Հայաստանի Հանրապետության սահմանադրական բարեփոխումների հայեցակարգ»-ում հիմնավորվում է կիսանախագահական կառավարման համակարգի պայմաններում իշխանությունների բաժանման և հավասարակշռման ոլոր-տում առկա հիմնախնդիրներով¹:

Առանձնացվող խնդիրների մեծամասնությունն ուղղակի կամ միջնորդավորված ձևով առնչվում է հատկապես նախագահի իրավական կարգավիճակին: Հայեցակարգում մասնավորապես նշվում է, որ ՀՀ նախագահի և Ազգային ժողովի ոչ միաժամանակյա ընտրությունների պարագայում առաջնային մանդատ ունեցող երկու ինստիտուտները հայտնվում են հանրային վստահության տարբեր մակարդակներում, և խորհրդարանում ՀՀ նախագահին հարող մեծամասնության բացակայության պայմաններում և իրավամտաձողության ներկա դրսևորումների համատեքստում էապես մեծանում է քաղաքական ճգնաժամի ու առճակատման վտանգը:

¹ Տե՛ս Վ. Սլոնիսկյան, Նախագահի իրավական կարգավիճակը ՀՀ խորհրդարանական կառավարման համակարգում, Բանբեր, 2017, էջ 17:

Հիմնական հետազոտություն

Խորհրդարանական կառավարման համակարգում Հայաստանի Հանրապետության նախագահի սահմանադրական կարգավիճակին առնչվող հիմնախնդիրների քննարկումը տեսական և գործնական առումով խիստ արդիական է: Հանրապետության նախագահի գործառույթների և լիազորությունների միջև ապահովված չէ անհրաժեշտ համամասնականությունը, առկա չէ Հանրապետության նախագահ-Ազգային ժողով, Հանրապետության նախագահ-կառավարություն փոխհարաբերություններում սահմանադրական լիազորությունների հարցով առաջացած վեճերի լուծման հստակ սահմանադրաիրավան կառուցակարգ:

Հանրապետության նախագահի կարգավիճակը և գործառույթները տեսականորեն պետք է ամրագրված լինեին փոփոխված Սահմանադրության՝ «Հանրապետության նախագահի կարգավիճակը և գործառույթները» վերտառությամբ 123 հոդվածում: Սակայն այդ հոդվածում Հանրապետության նախագահի կարգավիճակի վերաբերյալ ամրագրված է միայն մեկ դրույթ, որով նախագահին վերապահված է միայն մեկ գործառույթ: Սահմանադրության 123 հոդվածի 1-ին մասում ամրագրված է, որ «Հանրապետության նախագահը պետության գլուխն է»:

Իրավաբանական գրականության մեջ «կարգավիճակ» եզրույթը բնորոշվում է որպես մարմնի, կազմակերպության, պաշտոնատար անձի, անհատի նորմատիվ իրավական ակտերով սահմանված վիճակ: Կարգավիճակի միջուկն են կազմում տվյալ սուբյեկտի իրավունքները և պարտականությունները (լիազորությունները), ինչպես նաև իրավաբանական պատասխանատվությունը²: Հանրապետության նախագահի կարգավիճակի բնորոշման համար անհրաժեշտ է բացահայտել նախագահի գործառույթները և այդ գործառույթների իրագործման նպատակով նրան վերապահված լիազորությունների համակարգը: Սահմանադրության 123 հոդվածի 2-րդ մասով ամրագրված է Հանրապետության նախագահի միայն մեկ գործառույթ՝ «նախագահը հետևում է Սահմանադրության պահպանմանը»: Սահմանադրության 139 հոդվածի 2-րդ մասում հիշատակվող իրավադրույթներով ամրագրված են նախագահի լիազորությունների իրացման տարբեր ընթացակարգեր: Լիազորությունների մի մասը Հանրապետության նախագահը իրացնում է վարչապետի, կառավարության, Ազգային ժողովի կամ Բարձրագույն դատական խորհրդի առաջարկությամբ: Թերևս ենթադրվում է, որ այս դեպքերում համապատասխան մարմիններն իրենց առաջարկությունները ներկայացնում են նախագահի ակտի (ավելի ճիշտ՝ ակտի նախագծի) ձևով³: Մինչդեռ Սահմանադրության 134 («Քաղաքացիության վերաբերյալ հարցերի լուծումը»), 135 («Ներում շնորհելը») և 136 («Պարգևատրումը և պատվավոր կոչումների շնորհումը») հոդվածներով նախատեսված լիազորությունները նախագահը իրացնում է «օրենքով սահմանված դեպքում և կարգով: Հայաստանի Հանրապետությունում 2015 թ. սահմանադրական փոփոխությունների արդյունքում ամբողջությամբ փոփոխության է ենթարկվել նախագահի ընտրության կարգը: Պետական կառավարման ձևի փոփոխությամբ պայմանավորված՝ Նախագահը իր մանդատն անմիջականորեն չի ստանում ժողովրդից:

2015 թ. փոփոխված Սահմանադրությամբ հանրապետության նախագահին վերապահված լիազորությունների ծավալը, նվազել է պայմանավորված երկրի կառավարման ձևով: Հանրապետության նախագահի իրավական կարգավիճակի հիմունքների և լիազորություն-

² Տե՛ս, օրինակ, «Конституционное право: Энцикл.словарь» (Отв. ред. и рук. авт. кол. Авакьян С. А.), М., 2001, էջ 559, *Варлен М. В.*, Статус парламентария: теоретические проблемы, М., 2011, էջ 28-37:

³ Տե՛ս Վ. Սլոբո՛վսկայան, Նախագահի իրավական կարգավիճակը ՀՀ խորհրդարանական կառավարման համակարգում, Բանբեր 2017 էջ 21:

ների համակարգի վերլուծության արդյունքում առաջ է գալիս այն եզրահանգումը, որ նախագահի լիազորություններն էականորեն սահմանափակված են: Ավելին, Սահմանադրությամբ ամրագրված են նույնիսկ այդ սահմանափակ լիազորությունների իրականացման այնպիսի ընթացակարգեր, որոնք նախագահին փաստորեն զրկում են սահմանված լիազորություններն ինքնուրույն իրականացնելու հնարավորությունից: Ուստի կարելի է համաձայնվել Վենետիկի հանձնաժողովի այն եզրահանգման հետ, որ նախագահն ունի շատ սահմանափակ ինքնավար լիազորություններ և, մասնավորապես, օրենսդրական գործընթացում նախագահի դերակատարությունը զուտ ձևական բնույթ է կրում⁴: Գտնում ենք, որ նախագահին պետք է պատասխանատվության ենթարկել ոչ միայն Սահմանադրության կոպիտ խախտման, այլև այլ նորմատիվ իրավական ակտերի դիտավորյալ խախտման համար: Կարծում ենք, որ Սահմանադրական թերի կարգավորումները հնարավորություն չեն ընձեռում արարքի ամբողջական իրավական որակումը տալու և հետևաբար սահմանափակված ենք Նախագահին իրավական պատասխանատվության ենթարկելու հարցում: Առաջարկում ենք ապագայում սպասվող սահմանադրական բարեփոխումների նախագծում տեղ գտնի այն ամրագրումը, որով Հանրապետության նախագահը կարող է պաշտոնանկ արվել և պատասխանատվության ենթարկվել հանցագործության, Սահմանադրության կոպիտ խախտման կամ օրենքի դիտավորյալ խախտման համար: Նման խնդիր առկա է ոչ միայն ՀՀ, այնպես էլ շատ այլ երկրների մայր օրենքներում: Մեկ նկատառում ևս ունենք: Երբ Ազգային ժողովը Նախագահի պաշտոնանկության հարցով դիմում է սահմանադրական դատարան, ապա վերջինիս լիազորությունները պետք է ժամանակավորապես կասեցվեն. հաշվի առնելով անմեղության կանխավարկածը՝ իրական սպառնալիք գոյություն ունի վերջինիս կողմից ենթադրյալ հանցանքի կամ սահմանադրության խախտման առնչությամբ: Եթե նախագահը պետական դավաճանություն է կատարել և այդ փաստը հիմնավորվելու է սահմանադրական դատարանի որոշմամբ, ապա նման արարքը հնարավոր է տեղի ունենա նաև հենց պաշտոնանկության հարցի քննարկման ընթացքում: Առաջարկում ենք օրենքով անդրադառնալ այս հարցին ևս՝ նախատեսելով նաև նախագահին ժամանակավորապես փոխարինի Ազգային ժողովի նախագահը, ինչպես նախատեսված է գործող Սահմանադրությամբ նախագահի մահվան, հրաժարական կամ առողջական վիճակով պայմանավորված իր հետագա պաշտոնավարման անհնարինության դեպքերում: Ավելին, նախագահի համար որպես իրավական երաշխիք պետք է սահմանել, որ նախագահի լիազորությունները կասեցվում են ոչ թե իմպերատիվ կերպով, այլ Սահմանադրական դատարանի կողմից՝ այդ հարցի քննարկման վերջնարդյունքում: Անհրաժեշտ է նաև օրենսդրորեն ամրագրել, որ նախագահի լիազորությունները դադարեցնելու նախաձեռնությունից հետո, երբ խոսքը վերաբերում է քրեաիրավական արարքների ենթադրյալ կատարմանը, պետք է ստեղծվի Ազգային ժողովի ժամանակավոր քննիչ հանձնաժողով: Միջազգային փորձը վկայում է, որ կան երկրներ, որտեղ ստեղծվում են ժամանակավոր հանձնաժողովներ (Իսրայել, Ռուսաստան, Ուկրաինա⁵), երկրներ, որտեղ այդ հանձնաժողովներն ունեն մշտական հատուկ հանձնաժողովի կարգավիճակ (Լեհաստան): Կարծում ենք, որ նախագահին պաշտոնանկ անելու հարցի հետ կապված Ազգային ժողովում ժամանակավոր հանձնաժողովի ստեղծումը մեր պետությունում անհրաժեշտություն է, քանի որ այդ հանձնաժողովը կապահովի բազմակողմանի, օբյեկտիվ և արժանահավատ քննություն: Հանձնաժողով

⁴ Տե՛ս [http://venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-PI\(2015\)015rev-arm](http://venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-PI(2015)015rev-arm)

⁵ Տե՛ս Конституция Украины (Ведомости Верховной Рады Украины, 1996, N30, ст.141) <http://iportal.rada.gov.ua/uploads/documents/27396.pdf>:

վր պետք է կազմված լինի պատգամավորական խմբակցությունների ներկայացուցիչներից և իրավաբաններից: Հանձնաժողովի որոշումը կարող է ունենալ պարտադիր (իմպերատիվ) կամ խորհրդատվական նշանակություն: Քաղաքական գործոններով պայմանավորված այլ-ևայլություններից զերծ մնալու համար առաջարկում ենք նաև Ազգային ժողովում նախագահին պաշտոնանկ անելու համար սահմանադրական դատարան դիմելու հարցի քննարկմանը ներգրավել անկախ փորձագետ-մասնագետներ, ովքեր կներկայացնեն մասնագիտական եզրակացություններ: Նախագահի պաշտոնանկության հարցում պետք է մասնակցություն ունենան և՛ Սահմանադրական դատարանը և՛ Վճռաբեկ դատարանը: Սահմանադրական դատարանում քննության առարկա պետք է դարձնել նախագահին պաշտոնանկ անելու գործընթացի սահմանադրականությունը, օրինականությունը, նաև պետք է տա Սահմանադրության կոպիտ խախտման փաստի իրավական գնահատականը: Երբ նախագահին մեղսագրվում է քրեաիրավական արարք, ապա հանցակազմի առկայության կամ բացակայության հարցի իրավական գնահատականը պետք է տա վճռաբեկ դատարանը: Կարճ ասած, սահմանադրական դատարանը լուծելու է իրավունքի հարցը, իսկ Վճռաբեկ դատարանը՝ փաստի հարցը: Այսպիսի համակարգ գործում է Վրաստանում⁶, Ուկրաինայում⁷:

Եզրակացություն

2015 թ. խմբագրությամբ Սահմանադրության 141-րդ հոդվածի և 168-րդ հոդվածի 7-րդ կետի վերլուծությունը փաստում է, որ նախ Ազգային ժողովն է դիմում Սահմանադրական դատարան եզրակացություն ստանալու համար, այնուհետև, եզրակացության հիման վրա որոշում կայացնում պաշտոնանկ անել նախագահին: Ստացվում է, որ նախագահին պաշտոնանկ անելու որոշում կայացնող մարմինը ՀՀ Ազգային ժողովն է՝ հիմնված Սահմանադրական դատարանի որոշման վրա: Հարց է առաջանում, թե Ազգային ժողովը կարող է նախագահին պաշտոնանկ չանել, երբ Սահմանադրական դատարանը եզրակացությամբ փաստում է պետական դավաճանության, այլ ծանր հանցագործության կամ Սահմանադրության կոպիտ խախտման փաստը: Կարող է առաջանալ այնպիսի իրավական ճգնաժամ, երբ Ազգային ժողովը Սահմանադրական դատարանի այդպիսի եզրակացությամբ հանդերձ, նախագահին պաշտոնանկ անելու որոշում չկայացնի՝ դրանով իսկ նպաստելով նախագահի պատասխանատվության չենթարկվելուն: Այսպիսի խնդրի լուծման տեսլականը այն է, որ Ազգային ժողովը պետք է դիմի Սահմանադրական դատարան, իսկ Սահմանադրական դատարանը կայացնի որոշում նախագահին պաշտոնանկ անելու կամ չանելու վերաբերյալ: Առաջանում է մեկ հարց ևս. արդյոք Ազգային ժողովի որոշումը վերջնական է և բողոքարկման ենթակա չէ: Նախագահը կարող է չհամաձայնվել այդ որոշման հետ և իրացնել իր պաշտպանական իրավունքը ու բողոքարկել տվյալ որոշումը: Օրենսդրությունը պետք է նախագահին հնարավորություն ընձեռի բողոքարկելու Ազգային ժողովի որոշումը: Պետք է օրենսդրորեն սահմանել, որ պատասխանատվության ենթարկված նախագահին արգելվի զբաղեցնել երկրի նախագահի կամ այլ հանրային պաշտոններ: Պատասխանատվության ենթարկված նախագահը օրենքի ուժով պետք է զրկվի պաշտոնաթող նախագահի համար օրենքով նախատեսված երաշխիքներից և արտոնություններից: Նմանատիպ կարգավորումներ են առկա Լեհաստանում⁸, Սլովակիայում⁹: Պորտուգալիայի Սահմանադրության 130-րդ հոդվածով նախագահը զրկվում է

⁶ Տե՛ս Конституция Грузии.

⁷ Տե՛ս Конституция Украины.

⁸ Տե՛ս Конституция Польши.

⁹ Տե՛ս Конституция Словакии.

պաշտոնից և վերընտրվելու հնարավորությունից¹⁰:

Հավելենք նաև, նախագահին քրեական պատասխանատվության ենթարկելու իրավական ընթացակարգ օրենսդրությամբ հստակ նախատեսված չէ: Այս առումով առաջարկում ենք Ազգային ժողովի կողմից նախագահին պաշտոնանկ անելու դեպքում, երբ դրա հիմքը սահմանադրությամբ նախատեսված հանցագործություններ կատարած լինելն է, Ազգային ժողովի որոշումն ուղարկվի համապատասխան դատարան՝ իրավա-կան գնահատականի արժանանալու համար:

Ամփոփագիր: Աշխատանքը նվիրված է Հայաստանի Հանրապետության նախագահի լիազորություններին և սահմանադրական պատասխանատվության հիմնախնդիրներին 2015 թվականի սահմանադրական փոփոխությունների համատեքստում: Պատմական ու համեմատախրավական վերլուծությամբ ներկայացվում է նախագահի սահմանադրական ինստիտուտի էվոլյուցիան Հայաստանի Հանրապետությունում, ուսումնասիրվում են նախագահի թեկնածուին ներկայացվող պահանջները, պետության գլխի լիազորություններն ու դրանց իրականացման կառուցակարգերը՝ ըստ 1995 թ. ընդունված Սահմանադրության, ապա 2005 և 2015 թթ. սահմանադրական փոփոխությունների: Ուսումնասիրման առարկա են կազմում նաև ՀՀ և այլ պետությունների նախագահների պոզիտիվ ու նեգատիվ սահմանադրական պատասխանատվության խնդիրները, նախագահի պաշտոնանկության հիմքերն ու կարգը: Նշվում է, որ ՀՀ նախագահի համար առաջնային խնդիր է Սահմանադրության պահպանմանը հետևելը, քանի որ այդ պարտականությունը բխում է պետության գլխի սահմանադրական կարգավիճակից: Պետության գլուխը բարձրագույն պաշտոնատար անձ է, որն իրականացնում է պետության բարձրագույն ներկայացուցչությունն ինչպես ներպետական, այնպես էլ՝ միջազգային հարաբերություններում. ապահովում է պետական ինստիտուտների շարունակականությունը, հանդիսանում է սահմանադրական կարգի, պետության ամբողջականության և անկախության երաշխավորը: Միջազգային սահմանադրական պրակտիկայի վերլուծությունը վկայում է, որ պետության գլուխը կարող է տարբեր տեղ գրավել պետական իշխանության համակարգում: Մի շարք երկրներում պետության գլխի ինստիտուտը պետական իշխանության որևէ թեկ մեջ նախատեսված չէ, կամ նախատեսված է օրենսդիր և գործադիր իշխանությունների մեջ միաժամանակ, կամ միայն գործադիր իշխանության մեջ: Հայաստանի Հանրապետությունում պետության գլխի ինստիտուտը գտնվում է զարգացման մեջ՝ պայմանավորված երկրում սահմանադրական փոփոխությունների արդյունքում ձևավորված կառավարման ձևի փոփոխություններով:

Annotation. The work is dedicated to the powers of the President of the Republic of Armenia and issues of constitutional responsibility in the context of the 2015 constitutional amendments. Historical and comparative legal analysis presents the evolution of the constitutional institution of the president in the Republic of Armenia, examines the demands presented to the presidential candidate, the powers of the head of the state and the structures of their implementation according to the Constitution adopted in 1995, then the constitutional amendments of 2005 and 2015. The issues of positive and negative constitutional responsibility of the presidents of RA and other states, the grounds and procedure for the dismissal of the president are also a subject of study. It is noted that it is a primary task for the President of the Republic of Armenia to observe the observance of the Constitution, as this duty derives from the constitutional position of the head of the state. The head of state is the highest official who carries out the highest representation of the state both in domestic and international relations. ensures the continuity of state institutions, acts as the guarantor of the constitutional order, integrity and independence of the state. The analysis of the international constitutional practice proves that the head of the state can occupy a different place in the system of state power. In a number of countries, the institution of the head of state is not provided in any branch of the state power, or it is provided in the legislative and executive powers at the same time, or only in the executive power. In the Republic of Armenia, the institution of the head of the state is under development due to changes in the form of government formed as a result of constitutional changes in the country.

¹⁰ Стѝа Конституция Португалии.

Аннотация: Работа посвящена изучению полномочий Президента Республики Армения и вопросов конституционной ответственности в контексте конституционных изменений 2015 г. Проведенный историко-сравнительно-правовой анализ показывает эволюцию конституционного института президента в Республике Армения, исследует требования, предъявляемые к кандидату в президенты, полномочия главы государства и структуры их реализации согласно принятой в 1995 г., затем конституционные поправки 2005 г. и 2015 г. Предметом исследования также являются вопросы позитивной и негативной конституционной ответственности президентов РА и других государств, основания и порядок отстранения президента от должности. Отмечается, что соблюдение Конституции является первоочередной задачей Президента Республики Армения, поскольку эта обязанность вытекает из конституционной позиции главы государства. Глава государства – высшее должностное лицо, осуществляющее высшее представительство государства как во внутренних, так и в международных отношениях, обеспечивает преемственность государственных институтов, выступает гарантом конституционного строя, целостности и независимости государства. Анализ международной конституционной практики доказывает, что глава государства может занимать различное место в системе государственной власти. В ряде стран институт главы государства не предусмотрен ни в одной ветви государственной власти, или же предусмотрен в законодательной и исполнительной власти одновременно либо только в исполнительной власти. В Республике Армения институт главы государства находится на стадии развития в связи с изменением формы правления, сложившейся в результате конституционных изменений в стране.

Բանալի բառեր - կառավարման ձև, իրավական կարգավիճակ, կիսանախագահական կառավարման համակարգ, նախագահի պաշտոնանկություն, սահմանադրական դատարանի որոշում, վերընտրվելու հնարավորություն, բարձրաստիճան ներկայացուցիչ:

Keywords: management form, legal status, semi-presidential system of government, impeachment of the president, decision of the constitutional court, opportunity for reelection, senior representative.

Ключевые слова: форма управления, легальное положение, полупрезидентская система правления, импичмент президента, решение конституционного суда, возможность переизбрания, старший представитель.

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

Տեսական աղբյուրներ

1. **Դանիելյան Գ., Այվազյան Վ., Մանասյան Ա.,** Սահմանադրական բարեփոխումների հայեցակարգի դրույթները և դրանց իրացման հիմնական ուղղությունները Հայաստանի Հանրապետությունում./գիտագործնական հետազոտություն/Երևան, 2015, 240 էջ:
2. **Ստեփանյան Վ.,** Անցումային ժամանակաշրջանի սահմանադրական զարգացման առանձնահատկությունները ՀՀ-ում // Օրենք և իրականություն, 2003, **Ստեփանյան Վ.,** Կառավարման խորհրդային ձևից դեպի կիսանախագահական հանրապետություն // Օրենք և իրականություն, 2003, N 19-20, էջ 1-3: 15: **Ստեփանյան Վ.,** Հանրապետական կառավարման ժամանակակից ձևերի համեմատական վերլուծություն // Գիտական հոդվածների ժողովածու, Երևան, 2013, էջ 27-33: **Պետություն և իրավունք,** 2012, N 1-2 (55-56), էջ 59-64:
3. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության մեկնաբանություններ, ընդ. խմբ. **Հարությունյան Գ., Վաղարշյան Ա.,** Երևան, 2010, 1086 էջ:
4. **Ներսեսյանց Վ. Ս.,** Իրավունքի և պետության տեսություն, Երևան, 2001:
5. **Պողոսյան Վ.,** Կառավարման կիսանախագահական ձևի առանձնահատկությունները Հայաստանում. ընտրված նյութերի ժողովածու, ԵԱՀԿ, 2004, էջ 41-54:
6. **Պողոսյան Վ., Թովմասյան Հ.,** Հայաստանի Հանրապետության Սահմանադրության փոփոխությունների նախագիծը. համառոտ պարզաբանումներ, Երևան, 2005, 121 էջ:

7. **Ստեփանյան Վ.**, Կառավարման խորհրդային ձևից դեպի կիսանախագահական հանրապետություն // Օրենք և իրավանություն, 2003, N 19-20, էջ 1-3:
8. **Арутюнян Г. Г., Баглай М. В.**, Конституционное право: Энциклопедический словарь. М., 2006, 544 էջ:
9. **Баглай М.В.**, Конституционное право Российской Федерации, М., 2007, 784 էջ:
10. **Ж. Джангирян.** Разделение властей в Республике Армения: конституционная модель и практика. М., 2003,- 240 էջ:
11. **Сахаров Н. А.**, Институт президентства в современном мире, М., 1994, 324 էջ:
12. A New Political System Model // European Journal of Political Research. Vol. 8, issue 2, 1980, էջ 165-187:

Իրավական ակտեր

13. ՀՀ Սահմանադրություն, Երևան, 1995:
14. ՀՀ Սահմանադրություն (2005 թվականի փոփոխություններով), Երևան, 2005:
15. ՀՀ Սահմանադրություն (2015 թվականի փոփոխություններով), Երևան, 2015:
16. ՀՀ օրենք «Հայաստանի Հանրապետության նախագահի մասին» // ՀՀԳԽՏ, 1991/15:
17. «Ժողովրդավարություն՝ իրավունքի միջոցով» եվրոպական հանձնաժողովի (Վենետիկի հանձնաժողով) նախնական կարծիք «Հայաստանի Հանրապետության սահմանադրության փոփոխությունների նախագծի 1-7-րդ և 10-րդ գլուխների վերաբերյալ»:
[http://venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDLPI\(2015\)015rev-arm](http://venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDLPI(2015)015rev-arm)

Հարությունյան Հ. - ԵՊՀ սահմանադրական իրավունքի ամբիոնի հայցորդ, էլիստեթ՝ herbert.harutyunyan@ysu.am:

Ներկայացվել է խմբագրություն 22.02.2024 թ., տրվել է գրախոսության 22.02.2024 թ., երաշխավորվել են ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի սահմանադրական իրավունքի ամբիոնի վարիչ, ի. գ. թ., դոցենտ Վ. Այվազյանի կողմից, ընդունվել է տպագրության 15.04.2024 թ.:

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ/CIVIL LAW/ГРАЖДАНСКОЕ ПРАВО

<https://doi.org/10.59546/18290744-2024.1-3-27>

ՄԱՆԵ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ
*ԵՊՀ քաղաքացիական իրավունքի
ամբիոնի դասախոս, ի.գ.թ.*

MANE KARAPETYAN
*Lecturer at YSU Chair
of Civil Law, PhD*

МАНЕ КАРАПЕТЯН
*Преподаватель кафедры
гражданского права ЕГУ,
кандидат юридических наук*

**ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԼՈՒԾՈՒՄՆ
ԱՇԽԱՏՈՂԻ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅԱՄԲ**

**TERMINATION OF THE EMPLOYMENT CONTRACT
AT THE INITIATIVE OF THE EMPLOYEE**

**ПРЕКРАЩЕНИЕ ТРУДОВОГО ДОГОВОРА
ПО ИНИЦИАТИВЕ РАБОТНИКА**

Ներածություն

Աշխատողի նախաձեռնությամբ աշխատանքային պայմանագրի լուծումը պատմականորեն պայմանագրի լուծման դասական հիմքերից մեկն է, որն ուղղված է ոչ միայն աշխատողի կենսական շահերի պաշտպանությանը, այլև հարկադիր աշխատանքի արգելքի գործնական իրագործմանը:

Մենք համակարծիք ենք իրավաբանական գրականության մեջ արտահայտած այն դիրքորոշմանը, որ իր նախաձեռնությամբ աշխատանքային պայմանագիրը լուծելու իրավունքը, վարձու աշխատողի անօտարելի իրավունքն է, անգամ այն դեպքում, երբ հակասում է գործատուի շահերին, հակառակ պարագայում աշխատողը կկորցնի անձնական ազատությունը և կվերածվի իրավազուրկի¹:

Աշխատանքային պայմանագիրը լուծելու աշխատողի իրավունքը նաև ուղղակիորեն

¹ Տե՛ս *Филипова И.А.*, Расторжение трудового договора по инициативе работника в трудовом законодательстве России и Франции, Вестник Нижегородского университета им. Н. И. Лобачевского, 2013, № 1(1), էջ 291:

բխում է աշխատանքի ազատության հիմնարար սկզբունքից, որն էլ իր հերթին կենսական նշանակություն է ունեցել աշխատանքային իրավունքի՝ որպես իրավունքի ինքնուրույն ճյուղի ձևավորման հարցում: Ինչպես իրավագիտորեն նկատել է Ն. Տ. Մելեշենկոն, աշխատանքի ազատության հիմնական էությունը հարկադիր աշխատանքի արգելքն է՝ աշխատանք կատարելու պարտականությունից ազատ լինելը, և միայն դրանից հետո է այս իրավունքը ենթադրում աշխատելու, մասնագիտության և գործունեության տեսակ ընտրելու ազատությունը²: Ընդ որում, աշխատանքի ազատության սկզբունքը կիրառելի է ոչ միայն աշխատանքային պայմանագրի կնքման փուլում, այլև այն դեպքերում, երբ աշխատողն այլևս չի ցանկանում շարունակել աշխատանքային պայմանագրով ստանձնած աշխատանքի կատարումը: Քննարկելով աշխատանքի իրավունքի, աշխատանքի ազատ ընտրության իրավունքի, ինչպես նաև պայմանագրի ազատության սկզբունքները՝ Լ. Ա. Չիկանովան եկել է այն եզրահանգման, որ ոչ ոք իրավունք չունի հարկադրել անձին կնքել աշխատանքային պայմանագիր կամ արգելել սեփական նախաձեռնությամբ լուծել արդեն իսկ կնքված աշխատանքային պայմանագիրը³:

Համեմատության համար արձանագրենք, որ Ն. Գ. Ալեքսանդրովը 1936 թ. նշել է. «աշխատողը չպետք է դադարեցնի աշխատանքը՝ առանց սպասելու իրեն փոխարինող աշխատողին»⁴: 26.06.1940 թ. ընդունված ԽՍՀՄ գերագույն խորհրդի հրամանով աշխատողներն առհասարակ զրկվեցին իրենց նախաձեռնությամբ աշխատանքից ազատվելու իրավունքից, բացառությամբ առանձին դեպքերի՝ հիվանդություն, հաշմանդամություն և այլն⁵:

Սովետական Միությանը խորթ էր հարկադիր աշխատանքի արգելքի սկզբունքը և ընդունելի էր հետևյալ գաղափարախոսությունը՝ «ԽՍՀՄ-ում աշխատանքը յուրաքանչյուր աշխատելու ունակ քաղաքացու պարտականությունն է և պատվի հարցը՝ այն սկզբունքով, որ «ով չի աշխատում, նա չի ուտում»»⁶: Այս գաղափարախոսությունը մեր օրերում փոխարինվել է աշխատանքի ազատության և հարկադիր աշխատանքի արգելման սկզբունքով:

Հիմնական հետազոտություն

2004 թ. ընդունված և 2005 թ. գործողության մեջ դրված աշխատանքային օրենսգրքի 112-րդ հոդվածը սահմանում էր առանց որևէ խոչընդոտի աշխատանքային պայմանագիրն իր նախաձեռնությամբ լուծելու և ցանկացած պահի աշխատանքը դադարեցնելու աշխատողի իրավունքը: Միակ բացասական հետևանքը, որ կարող էր վրա հասնել աշխատողի կողմից գործատուին նախապես ծանուցելու համար սահմանված ժամկետը խախտելու դեպքում, աշխատողի՝ ծանուցման ժամկետի խախտման յուրքանչյուր օրվա բացակայությունն անհարգելի համարելն էր, ինչի արդյունքում էլ կարող էր գործատուի հայեցողությամբ փոխվել աշխատանքային պայմանագրի լուծման հիմքը և աշխատանքային պայմանագիրը լուծվեր ոչ թե աշխատողի, այլ գործատուի նախաձեռնությամբ:

Այդուհանդերձ ՀՀ աշխատանքային օրենսգրքում 2023 թվականին կատարված փոփո-

² Տե՛ս *Мелешенко Н.Т.*, О Конституционных основах права на труд//Вестник ТвГУ, Серия “Право”, 2012, Выпуск 31, էջ 140:

³ Տե՛ս *Чиканова Л.А.*, Право на труд: конституционный и международный аспект // Журнал российского права, №5, 2018, էջ 14:

⁴ Տե՛ս *Александров Н.Г.*, Вопросы труда в советском законодательстве. М.: Профиздат, 1936, 184 с., էջ 5:

⁵ Տե՛ս *Хохлов Е.Б.*, Правовое регулирование труда в период демократической республики в России // Российский ежегодник трудового права / под ред. Е. Б. Хохлова. СПб.: Ежегодники права, 2005, № 1, с. 35–52:

⁶ Տե՛ս *Анишина В.И., Попонов Ю.Г.*, Свобода труда или право на труд?// Журнал Российского права, №4, 2007, էջ 88: Տե՛ս *Мелешенко Н.Т.*, О Конституционных основах права на труд//Вестник ТвГУ. Серия “Право”. 2012, Выпуск 31, էջ 89:

խությունների⁷ արդյունքում՝ աշխատանքային պայմանագիրը լուծելու կամ աշխատանքն առանց որևէ խոչընդոտի դադարեցնելու աշխատողի իրավունքը ենթարկվեց որոշակի սահմանափակման և, ըստ էության, ներմուծվեց աշխատողին տուգանելու ինստիտուտն այն դեպքում, երբ նա կխախտի աշխատանքային պայմանագրի լուծման համար սահմանված ծանուցման ժամկետը:

Այսպես՝ ՀՀ աշխատանքային օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է. «Աշխատողն իրավունք ունի լուծելու անորոշ ժամկետով կնքված աշխատանքային պայմանագիրը, ինչպես նաև որոշակի ժամկետով կնքված աշխատանքային պայմանագիրը նախքան դրա գործողության ժամկետի լրանալը՝ այդ մասին առնվազն երեսուն օր առաջ գրավոր ձևով ծանուցելով գործատուին»: Նշված հոդվածի 2-րդ մասը հատուկ դեպքերում սահմանում է ծանուցման ավելի կարճ ժամկետ:

ՀՀ աշխատանքային օրենսգրքի 112-րդ հոդվածի 2.2. կետը սահմանում է. «Աշխատողի կողմից սույն հոդվածի 1-ին և 2-րդ մասերով նախատեսված ժամկետները չպահպանվելու և աշխատանքային պայմանագիրը աշխատողի ծանուցման մեջ (աշխատանքից ազատվելու մասին դիմումում) նշված այլ ժամկետում լուծելու վերաբերյալ գործատուի առարկության դեպքում **աշխատողը պարտավոր է գործատուին վճարել տուժանք՝ ծանուցման յուրաքանչյուր ժամկետանց օրվա համար՝ միջին օրական աշխատավարձի չափով, բայց ոչ ավելի, քան միջին ամսական աշխատավարձը**» (ընդգծ. մերն է):

Այս փոփոխությամբ, ըստ էության, հավասարություն է դրվել ծանուցման ժամկետի խախտման հարցում աշխատողի և գործատուի միջև, և դա այն դեպքում, երբ աշխատողը համարվում է աշխատանքային հարաբերությունների խոցելի սուբյեկտը, ինչն իրավունքի դոգմա է⁸, իսկ աշխատանքային օրենսդրությունը, աշխատողի համար հավելյալ երաշխիքներ և արտոնություններ սահմանելով, մեղմում է աշխատողի և գործատուի փաստացի անհավասարությունը:

Այդուհանդերձ, բացի զուտ դոկտրինալ մոտեցմանը հակասելուց, մեր համոզմամբ՝ աշխատողին «չաշխատելու» համար տուգանելն անընդունելի է նաև հարկադիր աշխատանքի արգելքի ինստիտուտի հետ անհամատեղելիության տեսանկյունից:

Մասնավորապես՝ ՀՀ Սահմանադրության 57-րդ հոդվածը սահմանում է. «Պարտադիր կամ հարկադիր աշխատանքն արգելվում է: Պարտադիր կամ հարկադիր աշխատանք չի համարվում՝

1) այն աշխատանքը, որը, օրենքին համապատասխան, կատարում է դատապարտված անձը.

2) զինվորական կամ այլընտրանքային ծառայությունը.

3) յուրաքանչյուր աշխատանք, որը պահանջվում է բնակչության կյանքին կամ բարօրությանն սպառնացող արտակարգ իրավիճակների ժամանակ»:

Հայաստանի Հանրապետության կողմից 2005 թ. վավերացված Հարկադիր աշխատանքի վերացման մասին կոնվենցիայի 1-ին հոդվածը սահմանում է. «Սույն Կոնվենցիան վավերացնող Աշխատանքի միջազգային կազմակերպության յուրաքանչյուր անդամ պարտավորվում է վերացնել հարկադիր կամ պարտադիր աշխատանքը և չդիմել դրա որևէ ձևի՝

ա) որպես քաղաքական ներգործության կամ դաստիարակության միջոցի կամ որպես

⁷ Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենք, ՀՕ-160-Ն, 03.05.2023 թ.:

⁸ Стен Томашевский К.Л., Философия трудового права-Новое направление междисциплинарных философско-правовых исследований // Журнал Трудовое право, №7, 2006, էջ 6:

պատժամիջոցի քաղաքական հայացքների կամ դրանց արտահայտման համար կամ սահմանված քաղաքական, սոցիալական կամ տնտեսական համակարգի գաղափարախոսությանը ընդդիմադիր հայացքների համար,

բ) որպես աշխատուժի մոբիլիզացման և օգտագործման մեթոդի՝ տնտեսական զարգացման նպատակներով,

գ) որպես աշխատանքային կարգապահության միջոցի,

դ) որպես պատժամիջոցի՝ գործադուլներին մասնակցելու համար,

ե) որպես ռասայական, սոցիալական, ազգային կամ կրոնական խտրականության միջոցի»:

Հայաստանի Հանրապետության կողմից 2005 թ. վավերացված Հարկադիր կամ պարտադիր աշխատանքի մասին կոնվենցիայի 2-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է. «Սույն Կոնվենցիայի նպատակների համար «հարկադիր կամ պարտադիր աշխատանք» եզրույթը նշանակում է՝ **որևէ պատժի սպառնալիքի տակ որևէ անձից պահանջվող ցանկացած աշխատանք կամ ծառայություն, որի համար այդ անձը կամավոր չի հայտնել իր համաձայնությունը**» (ընդգծ. մերն է):

Այս սկզբունքն ամրագրված է նաև Հայաստանի Հանրապետության կողմից վավերացված այլ միջազգային փաստաթղթերում:

Իհարկե, հարկադիր աշխատանքի դրսևորումների շուրջ մեկնաբանություններն իրավաբանական գրականության մեջ տարաբնույթ են: Օրինակ՝ Ս. Վ. Մազուրենկոյի կարծիքով՝ հարկադիր աշխատանքի դրսևորում է համարվում այն դեպքը, երբ գործատուի միջոցների հաշվին ուսուցում ստացած աշխատողը պարտավորվում է ուսուցումն ավարտելուց հետո որոշակի ժամանակահատված տվյալ գործատուի մոտ շարունակել աշխատելը⁹:

Ն. Վ. Գլուխովը հարկադիր աշխատանքի դրսևորում է համարում նաև այն ժամանակահատվածը, երբ աշխատողին չի վճարվում կամ պակաս է վճարվում աշխատավարձ¹⁰: Ն. Վ. Գլուխովի մոտեցումը մենք չենք կիսում, քանի որ աշխատավարձ չստանալու և աշխատանքը շարունակելու դեպքում առկա չէ հարկադիր աշխատանքի համար պարտադիր հատկանիշ համարվող աշխատողի կամքի բացակայությունը: Եթե աշխատողը չի ստացել աշխատավարձ և շարունակել է աշխատել, ապա սա չի կարող համարվել հարկադիր աշխատանք, քանի որ աշխատելու հարցում որևէ սպառնալիք կամ պարտադրանք չի եղել և, ըստ էության, աշխատողն իր կամքով է շարունակել կատարել աշխատանք:

Այդուհանդերձ, կարծում ենք, միանշանակ է իրավաբանական գրականության մեջ հանդիպող այն տեսակետը, որ աշխատանքի ազատության սկզբունքը ենթադրում է յուրաքանչյուրի հնարավորությունն իր կամահայտնությամբ հրաժարվել այս կամ այն աշխատանքը կատարելը¹¹:

Ստացվում է մի իրավիճակ, երբ գործող իրավական կարգավորման համատեքստում բոլոր այն դեպքերում, երբ աշխատողն այլևս չի ցանկանում աշխատել, սակայն խախտել է այդ մասին գործատուին սահմանված ժամկետում ծանուցելու իր պարտականությունը, ապա նա

⁹ Տե՛ս *Мазуренко С.В.*, Запрещение принудительного труда-основополагающий принцип Российского трудового права.//Журнал Трудовое право;право социального обеспечения. Право и государство: теория и практика, 2019, №11 (179) // <https://cyberleninka.ru/article/n/zapreschenie-prinuditelnogo-truda-osnovopolagayuschiy-printsip-rossiyskogo-trudovogo-prava> (15.11.2023):

¹⁰ Տե՛ս *Глухова Н.В.*, Запрещение принудительного труда // Правоведение, М., 2005, № 4, էջ 56-65:

¹¹ Տե՛ս *Анишина В.И., Попонов Ю.Г.*, Свобода труда или право на труд? // Журнал Российского права, №4, 2007, էջ 88:

կամ պետք է կատարի աշխատանք՝ հակառակ իր կամքի, կամ վճարի գումար չաշխատելու դիմաց:

Մեր գնահատմամբ՝ սա հարկադիր աշխատանքի դասական դրսևորում է և ուղղակիորեն համընկնում է Հարկադիր կամ պարտադիր աշխատանքի մասին կոնվենցիայի 2-րդ հոդվածի 1-ին մասում սահմանված «հարկադիր կամ պարտադիր աշխատանք» եզրույթի բովանդակությանը, որը սահմանում է, որ հարկադիր կամ պարտադիր աշխատանք է համարվում **որևէ պատժի սպառնալիքի** տակ որևէ անձից պահանջվող ցանկացած աշխատանք կամ ծառայություն, **որի համար այդ անձը կամավոր չի հայտնել** իր համաձայնությունը: Ֆինանսական տուժանք վճարելն ըստ էության պատժի սպառնալիք է:

Իհարկե, այս համատեքստում անհրաժեշտ է անդրադառնալ նաև աշխատողի և գործատուի շահերի հավասարակշռման խնդրին, երբ աշխատողի կողմից ծանուցման ժամկետի խախտումը, ըստ էության, սահմանափակում է գործատուի հնարավորությունը նրան փոխարինող աշխատող գտնելու հարցում, սակայն այդ խնդիրը չի լուծվում նաև աշխատողից գումար գանձելու արդյունքում:

Մենք համակարծիք ենք Ա. Բ. Իվանովի այն դիտարկմանը, որ աշխատողի կողմից իր նախաձեռնությամբ աշխատանքային պայմանագրի լուծման մասին գործատուին ծանուցելու պարտականությունն ունի նպատակային նշանակություն և ուղղված է գործատուի կողմից ազատվող հաստիքում այլ աշխատող գտնելու հնարավորություն ընձեռելուն, ինչպես նաև ազատվող աշխատողին՝ նոր աշխատանք գտնելուն¹²:

Իրավական հետևանքի տեսանկյունից՝ աշխատողը կվճարի «չաշխատած օրերի» դիմաց գործատուին, թե չի վճարի, գործատուն, այնուամենայնիվ, կանգնելու է փոխարինող աշխատող գտնելու խնդրի առաջ, եթե նախապես հետամուտ չի եղել այնպես կազմակերպել իր գործունեությունը, որ ցանկացած աշխատողի բացակայության պայմաններում լինեն նրան փոխարինողներ:

Բացի դրանից՝ աշխատողի կողմից գործատուին ծանուցելու մեկամսյա ժամկետը շատ մոտ է աշխատողի ամենամյա արձակուրդի ժամկետին, իսկ աշխատողի ամենամյա արձակուրդի ընթացքում գործատուի բնականոն աշխատանքը ենթադրաբար չի կարող պարալիզացվել, ուստի նույն տրամաբանությամբ գործատուի աշխատանքը չպետք է պարալիզացվի նաև աշխատողի կողմից ծանուցման ժամկետը խախտելու դեպքում:

Վերջապես հարկադիր աշխատանքի վերացման ամբողջ էությունը կայանում է նրանում, որ աշխատողին, եթե անգամ հնարավոր լինի որոշակի սպառնալիքի ազդեցության տակ ստիպել կատարել աշխատանք, ապա անհնար է ստիպել նրան իր կամքին հակառակ կատարել արդյունավետ և որակյալ աշխատանք: Եթե անգամ մի պահ ենթադրենք, որ խիստ բարձր որակավորում ունեցող աշխատողի կողմից գործատուին նախապես ծանուցելու պարտականությունը խախտելը կարող է հանգեցնել տվյալ կազմակերպության գործունեության խաթարման, ապա նույն կերպ այդ գործունեությունը կխաթարվի, եթե աշխատողն առանց իր կամքի ապահովի իր ֆիզիկական ներկայությունը աշխատավայրում և, օրինակ, հրաժարվի կատարել իր աշխատանքային գործառույթը կամ այն կատարի ծայրահեղ վատ որակով:

Բացի դրանից՝ այս փոփոխությունը ոչ միայն վնասում է աշխատողի շահերին, այլ չի բխում գործատուի շահերից, քանի որ եթե մինչև նման փոփոխությունը աշխատողները հակված էին կատարելու գործատուին ծանուցելու իրենց պարտականությունը առնվազն այնքան

¹² Տե՛ս *Иванов А.Б.*, Расторжение трудового договора по инициативе работника в российской практике: историко-правовой ракурс // Вестник ЯрГУ, Серия Гуманитарные науки, 2022, Том 16, № 3, էջ 461:

օր առաջ, երբ իրենց հայտնի էր լինում, որ այլևս չեն ցանկանում աշխատել, ապա այս փոփոխությունն ընդամենը մոտիվացնում է աշխատողներին առհասարակ գործատուին չճանուցել աշխատանքային պայմանագրի լուծման իրենց ցանկության մասին և ուղղակի դադարեցնել աշխատանքը:

Ակնհայտ է, որ աշխատանքը դադարեցրած աշխատողի հետ գործատուն պարտավոր է ձևակերպել աշխատանքային պայմանագրի լուծումն արդեն իր նախաձեռնությամբ՝ կիրառելով ՀՀ աշխատանքային օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ ենթակետով սահմանված հիմքը, այն է՝ աշխատողի հետ աշխատանքային պայմանագիրը կարող էր լուծվել առանց հարգելի պատճառի մեկ ամբողջ օր աշխատանքի չներկայանալու հիմքով: Ընդ որում, այս հիմքը ենթակա է կիրառման նաև այն դեպքում, երբ աշխատողը խախտում է ծանուցման ժամկետը: Ստացվում է մի իրավիճակ, երբ ֆինանսական առումով աշխատողների համար առավել շահեկան է առհասարակ գործատուին չճանուցել աշխատանքային պայմանագրի լուծման մասին, քանի որ ծանուցման ժամկետ խախտելու դեպքում նրանք վճարելու են գումար, իսկ չճանուցելու դեպքում որևէ գումար վճարելու պարտականություն չեն կրելու:

Եզրակացություն

Ամփոփելով վերոգրյալը՝ եզրահանգում ենք, որ ՀՀ աշխատանքային օրենսգրքի 112-րդ հոդվածով սահմանված ծանուցման ժամկետը խախտած աշխատողին «տուժանք» վճարելուն պարտավորեցնելու մասին իրավական կարգավորումը հակասում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը, Հայաստանի Հանրապետության կողմից վավերացված միջազգային պայմանագրերին, աշխատանքային իրավունքի դոկտրինային, ինչպես նաև չի բխում ո՛չ աշխատողի, ո՛չ գործատուի շահերից, ուստի հետագա օրենսդրական փոփոխությունների կատարման շրջանակում ունի վերանայման կարիք:

Ամփոփագիր: Հոդվածի շրջանակում քննարկվել է աշխատանքային պայմանագրի լուծման դասական հիմքերից մեկի առանձնահատկությունները, որն էլ իր հերթին ուղղակիորեն կապված է հարկադիր աշխատանքի անթույլատրելիության սկզբունքի հետ: Հոդվածում ներկայացվել են գործող իրավական կարգավորման խնդրահարույց ձևակերպումները գիտական և գործնական տեսանկյունից:

Հոդվածում բարձրացվում է գործատուին աշխատանքային պայմանագրի լուծման մասին ծանուցելու իր պարտականությունը չկատարած աշխատողին տուգանելու անթույլատրելիության խնդիրը:

Ներկայացվում է խնդիրը թե՛ ՀՀ Սահմանադրությանը, թե՛ Հայաստանի Հանրապետության կողմից վավերացված միջազգային պայմանագրերին հակասելու համատեքստում: Անդրադարձ է կատարվում նաև այս նոր ինստիտուտի հնարավոր անդրադարձին գործատուների շահերի պաշտպանության վրա: Բարձրաձայնվում է այն հարցը, որ գործատուին ազատման մասին ժամկետների խախտումով ծանուցած աշխատողներին հնարավոր է «տուգանել», սակայն որևէ մեխանիզմ առկա չէ այն դեպքերում, երբ աշխատողն ընդհանրապես չի ծանուցում գործատուին և դադարեցնում է աշխատանքը: Արդյունքում գալիս ենք այն եզրահանգման, որ կատարված փոփոխությունը ոչ թե բխում է գործատուի շահերից, այլ հակառակը՝ խրախուսում է աշխատողներին ընդհանրապես չճանուցել իրենց ազատման մասին, եթե չեն կարողանալու պահպանել ծանուցման համար սահմանված ժամկետը:

Հոդվածի եզրափակիչ մասում ներկայացվում են օրենսդրական փոփոխությունների առաջարկություններ:

Annotation. The article refers to one of the classic grounds for the termination of the employment contract, which is directly related to the principle of inadmissibility of forced labor. Within the framework of the article from a doctrinal and practical point of view were highlighted the problematic formulations of the current legal regulation. The article raised the inadmissibility of fining an employee who did not fulfill the obligation to notify the employer in advance. The problem

is presented in the context of contradicting both the Constitution of the Republic of Armenia and the international treaties ratified by the Republic of Armenia. Reference is also made to the possible impact of this new institution on the protection of employers' interests. The issue is raised that employees who notify the employer about the dismissal in violation of the deadlines can be "fined", but there is no mechanism in place in cases where the employee does not notify the employer at all and stops working. As a result, we come to the conclusion that the change is not in the interest of the employer, but on the contrary, it encourages the employees not to notify about their dismissal at all, if they will not be able to keep the deadline for the notification.

In the final part of the article, a proposal to make a legislative change was presented.

Аннотация. В статье изучаются особенности одного из классических оснований прекращения трудового договора, которое, в свою очередь, напрямую связано с принципом недопустимости принудительного труда. В рамках статьи освещены проблемные формулировки действующего правового регулирования с доктринальной и практической точки зрения. В статье поднимается вопрос о недопустимости штрафования работника, не выполнившего обязанности по предварительному уведомлению работодателя. Проблема представлена в контексте противоречия как Конституции Республики Армения, так и международным договорам, ратифицированным Республикой Армения. Упоминается также о возможном влиянии этого нового института на защиту интересов работодателей. Поднимается вопрос о том, что работники, уведомившие работодателя об увольнении с нарушением сроков, могут быть «штрафованы», однако не существует механизма в случаях, когда работник вообще не уведомляет работодателя и прекращает работу. В результате мы приходим к выводу, что изменение не в интересах работодателя, а наоборот, побуждает работников вообще не уведомлять о своем увольнении, если они не смогут уложиться в срок уведомления.

В заключительной части статьи мы предлагаем внести изменения в Законодательство РА.

Բանալի բառեր – աշխատողի նախաձեռնությամբ, հարկադիր աշխատանք, ծանուցման ժամկետ, փութանքի վճարում, աշխատանքային պայմանագիր, պայմանագրի լուծում, աշխատողի կողմից:

Keywords: *at the initiative of the employee, forced labor, notice period, payment of damages, employment contract, termination of the contract by the employee.*

Ключевые слова: *по инициативе работника, принудительный труд, срок предупреждения, возмещение ущерба, трудовой договор, расторжение договора по инициативе работника.*

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Александров Н.Г., Вопросы труда в советском законодательстве. М.: Профиздат, 1936. 184 с.
2. Анишина В.И., Попонов Ю.Г., Свобода труда или право на труд? // Журнал Российского права, №4, 2007.
3. Анишина В.И., Попонов Ю. Г., Свобода труда или право на труд? // Журнал Российского права, №4, 2007.
4. Глухова Н.В., Запрещение принудительного труда//Правоведение. М., 2005, № 4.
5. Иванов А.Б., Расторжение трудового договора по инициативе работника в российской практике: историко-правовой ракурс. // Вестник ЯрГУ. Серия Гуманитарные науки. 2022, Том 16, № 3.
6. Мазуренко С.В., Запрещение принудительного труда - основополагающий принцип Российского трудового права//Журнал Трудовое право; право социального обеспечения. Право и государство: теория и практика, 2019. №11 (179)// <https://cyberleninka.ru/article/n/zapreschenie-prinuditelnogo-truda-osnovopolagayuschiy-printsip-rossiyskogo-trudovogo-prava> (15.11.2023).
7. Мелешенко Н.Т., О Конституционных основах права на труд // Вестник ТвГУ. Серия "Право", 2012, Выпуск 31.

8. Мелешенко Н.Т., О Конституционных основах права на труд // Вестник ТвГУ. Серия "Право", 2012, Выпуск 31.
9. Томашевский К.Л., Философия трудового права - новое направление междисциплинарных философско-правовых исследований. // Журнал Трудовое право, №7, 2006.
10. Филипова И.А., Расторжение трудового договора по инициативе работника в трудовом законодательстве России и Франции. Вестник Нижегородского университета им. Н.И.Лобачевского, 2013, № 1(1).
11. Хохлов Е. Б., Правовое регулирование труда в период демократической республики в России // Российский ежегодник трудового права / под ред. Е. Б. Хохлова. СПб.: Ежегодники права, 2005, № 1.
12. Чиканова Л.А. Право на труд: конституционный и международный аспект. // Журнал российского права, №5, 2018.

Կարապետյան Մ. - ԵՊՀ քաղաքացիական իրավունքի ամբիոնի դասախոս, ի.գ.թ., էլիասցե՝ mane.karapetyan@advocates.am:

Ներկայացվել է խմբագրություն 01.12.2023 թ., տրվել է գրախոսության 01.12.2023 թ., երաշխավորվել է պրոֆեսոր, իրավ. գիտ. դոկտոր Ա. Հայկյանցի կողմից, ընդունվել է տպագրության 15.04.2024 թ.:

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ/CIVIL PROCEDURE/ГРАЖДАНСКОЕ ПРОЦЕСС

<https://doi.org/10.59546/18290744-2024.1-3-35>

ՄԱՐԻԱՄ ՄԱՆՈՒԿՅԱՆ
*Իրավագիտության մագիստրոս,
«Հատարաբանների պալատի անդամ, փաստաբան»*

MARIAM MANUKYAN
*Master of Law,
Member of the RA Chamber of Advocates, Advocate*

МАРИАМ МАНУКЯН
*Магистр права,
Член палаты адвокатов РА, адвокат*

**ՀՀ ՎԵՐԱՔՆՆԻՉ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՀԱՅԵՑՈՂՈՒԹՅՈՒՆՆ ԻՐ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԻՐԱՌԵԼԻՍ
ՄԱՍ 1. «ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳԻՐ, ՀԱՅԵՑՈՂՈՒԹՅԱՆ
ՇՐՋԱՆԱԿՆԵՐԸ ԵՎ ԴՐԱ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ»**

**JURISDICTION OF THE RA CIVIL COURT OF APPEAL IN THE
EXERCISE OF ITS POWERS PART 1. “GENERAL DESCRIPTION, SCOPE
OF DISCRETION AND ITS CHARACTERISTICS”**

**ЮРИСДИКЦИЯ ГРАЖДАНСКОГО АПЕЛЛЯЦИОННОГО СУДА РА ПРИ
ОСУЩЕСТВЛЕНИИ СВОИХ ПОЛНОМОЧИЙ.
ЧАСТЬ 1. «ОБЩЕЕ ОПИСАНИЕ, РАМКИ УСМОТРЕНИЯ И ЕЕ
ХАРАКТЕРИСТИКИ»**

Ներածություն

Դատական համակարգի յուրաքանչյուր ատյան օժտված է միայն իրեն հատուկ խնդիրների և գործառույթների որոշակի շրջանակով:

Դատական համակարգի յուրաքանչյուր ատյանի անկախության, գործառութային տարբերության սահմանադրական կարգավորումների համատեքստում էական է յուրաքանչյուր դատական ատյանի կողմից իր լիազորությունների ճիշտ կիրառումն այնպես, որ չխաթարվեն

վերոնշյալ սկզբունքները: Նշվածը հատկապես վերաբերում է Վերաքննիչ դատարանի կողմից առաջին ատյանի դատարանի դատական ակտերի վերանայման արդյունքում լիազորությունների կիրառմանը:

Սույն հոդվածի շրջանակում փորձ է արված պատասխանել հետևյալ իրավական հարցադրումներին՝

1. Արդյո՞ք ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի հայեցողությունը բացարձակ է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով (այսուհետ՝ նաև ՔԴՕ) սահմանված վճռի դեմ ներկայացված վերաքննիչ բողոքի քննության արդյունքով կիրառման ենթակա լիազորությունների ընտրության հարցում, այն պարագայում, երբ գործի փաստական հանգամանքների համատեքստում կարող է (առկա է իրավական հնարավորություն) կիրառվել կոնկրետ լիազորություն:

2. Արդյո՞ք ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանը չպետք է ունենա ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված վճռի դեմ ներկայացված վերաքննիչ բողոքի քննության արդյունքով կիրառման ենթակա իր լիազորություններից կոնկրետ մեկի ընտրությունը պատճառաբանելու/հիմնավորելու օրենսդրական պարտականություն և/կամ արդյո՞ք ներկայումս ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանը չունի նման օրենսդրական պարտականություն:

Հոդվածի շրջանակում ներկայացվում են մի շարք դատական նախադեպեր, որոնց լույսի ներքո քննարկման առարկա են դառնում վերոգրյալ հարցադրումները:

Յուրաքանչյուր պետական մարմին իր առջև դրված խնդիրների լիարժեք իրականացման համար օրենսդրորեն օժտված է որոշակի լիազորություններով, որոնք առավելագույնս արտահայտում են այդ մարմնի գործունեության հիմնական ուղղությունները: Վերաքննիչ դատարանի լիազորություններն առաջին հերթին պայմանավորված են վերջինիս առջև դրված խնդիրներով, որոնք դրսևորվում են ինչպես դատական համակարգի ընդհանուր գործառնությունների իրականացմամբ, այնպես էլ՝ միայն վերաքննիչ ատյանի գործունեությանը բնորոշ առանձնահատկություններով¹:

Վերաքննիչ դատարանի լիազորություններն իրավաբանական գրականության մեջ տարբեր կերպ են բնորոշվում: Մի դեպքում վերաքննիչ ատյանի լիազորությունների տակ նկատի են ունենում վերաքննության կարգով դատական ակտի վերանայման արդյունքում իրականացվող՝ վերաքննիչ դատարանի իրավունքների և պարտականությունների ամբողջությունը², մեկ այլ դեպքում դրանք բնորոշվում են որպես գործին մասնակցող անձանց վերաքննիչ բողոքներով առաջին ատյանի դատարանի՝ օրինական ուժի մեջ չմտած դատական ակտերի վերանայման կապակցությամբ օրենքով սահմանված դատավարական գործողություններ կատարելուն ուղղված վերաքննիչ դատարանի իրավունքների համակցություն³:

Հիմնական հետազոտություն

Այսպես՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 380-րդ հոդվածի 1-ին մասի 1-8-րդ կետերում Օրենսգիրքը մատնանշում է ՀՀ վերաքննիչ դատարանի կոնկրետ լիազորու-

¹ Տե՛ս Հովհաննիսյան Վ. Վ., Վերաքննության կարգով դատական ակտերի վերանայման հիմնախնդիրները քաղաքացիական դատավարությունում, Եր., ԵՊՀ հրատ., 2013, էջ 265:

² Տե՛ս Гражданское процессуальное право: Учебник / Под ред. М. С. Шакарян, М., 2004, էջ 395:

³ Տե՛ս Арбитражный процесс: Учебник для юридических вузов и факультетов / Под ред. М. К. Треушниковой, В. М. Шерстюка, М., 2001, էջեր 353-354; Караваева Е. В., Вопросы апелляционного производства в гражданском процессе, Дисс. ... к.ю.н., Саратов, 2005, էջ 140:

թյուններ⁴:

Հարկ ենք համարում անդրադառնալ վերոգրյալ լիազորություններից որոշների բովանդակությանը:

Այսպես՝ վճռի դեմ ներկայացված վերաքննիչ բողոքի քննության արդյունքով Վերաքննիչ դատարանը 1) մերժում է վերաքննիչ բողոքը՝ վճիռը թողնելով անփոփոխ, կամ 2) այն դեպքում, երբ Վերաքննիչ դատարանը մերժում է վերաքննիչ բողոքը, սակայն դատարանի կայացրած վճիռը թերի կամ սխալ է հիմնավորված կամ պատճառաբանված, Վերաքննիչ դատարանը հիմնավորում կամ պատճառաբանում է անփոփոխ թողնված վճիռը:

Վերը նշված իրավանորմի շրջանակում ամրագրված են **Վերաքննիչ դատարանի երկու ինքնուրույն, սակայն փոխկապակցված լիազորություններ**, այն է՝

- վերաքննիչ բողոքն անհիմն լինելու դեպքում՝ Վերաքննիչ դատարանի կողմից բողոքը մերժելու և բողոքարկված դատական ակտն անփոփոխ թողնելու լիազորությունը,

- գործն ըստ էության ճիշտ լուծող դատական ակտը թերի կամ սխալ պատճառաբանված կամ հիմնավորված լինելու դեպքում՝ Վերաքննիչ դատարանի կողմից այն լրացուցիչ պատճառաբանելու կամ հիմնավորելու լիազորությունը⁵:

Պետք է նշել, որ վերաքննիչ բողոքը մերժելու և բողոքարկված դատական ակտն անփոփոխ թողնելու լիազորության կիրառման արդյունքում Վերաքննիչ դատարանի մոտ առաջանում է իր **որոշումը հիմնավորելու պարտականություն**: Իրավաբանական գրականության մեջ տեղ գտած կարծիքների համաձայն՝ բողոքը մերժելու և բողոքարկված դատական ակտն անփոփոխ թողնելու լիազորությունը կիրառելիս վերադաս դատարանը պարտավոր է իր **որոշման մեջ մատնանշել այն հիմնավորումները** և շարժառիթները, որոնց հիման վրա բողոքի փաստարկները ճանաչվում են չհիմնավորված և դատական ակտի բեկանման համար հիմք չհանդիսացող⁶: Այսպիսով՝ վերադաս դատարանը, կիրառելով սույն լիազորությունը, իր որոշմամբ հաստատում է բողոքարկված դատական ակտի օրինականությունն ու հիմնավորվածությունը⁷: Ընդ որում, քննարկվող լիազորության կիրառման դեպքում Վերաքննիչ դատարանի **որոշման հիմնավորումը** ենթադրում է ոչ թե բողոքարկված վճռում պարունակվող փաստարկների կրկնություն և դրա օրինականության և հիմնավորվածության պարզ վերահաստատում, այլ բողոքի բոլոր հիմքերին և հիմնավորումներին կատարված հստակ անդրադարձ և բողոքի փաստարկների հերքում: Ասվածը համահունչ է ՀՀ Վճռաբեկ դատարանի կողմից բազմիցս արտահայտած դիրքորոշմանն առ այն, որ Վերաքննիչ դատարանը բողոքը քննելիս պարտադիր պետք է անդրադառնա վերաքննիչ բողոքի բոլոր հիմքերին և հիմնավորումներին⁸:

Այսինքն, արձանագրում ենք, որ սույն լիազորության պարագայում Վերաքննիչ դա-

⁴ ՀՕ-110-Ն, Ընդունման ամսաթիվը՝ 09.02.2018, Ուժի մեջ մտնելու ամսաթիվը՝ 09.04.2018, ինկորպորացիա՝ ԱԺ, 23.12.2022:

⁵ Սույն լիազորության բուն բովանդակությունն ու էությունը բացահայտել ենք «Ստորադաս դատարանի դատական ակտերի թերի կամ սխալ պատճառաբանված կամ հիմնավորված լինելու գնահատման չափանիշները» վերառությամբ գիտական հոդվածում:

⁶ Տե՛ս, օրինակ, Гражданское процессуальное право России / Под ред. П.В. Алексия, Н.Д. Амаглобели. - 2-е изд., перераб. и доп. - М.: «ЮНИТИ-ДАНА», 2007, էջ 335; Гражданский процесс: Учебник / Под ред. А. Г. Коваленко, А. А. Мохова, П. М. Филиппова, М.: «ИНФРА-М», 2008, էջ 268:

⁷ Տե՛ս Гражданский процесс России: Учебник / Под ред. М.А. Вукот, - М.: «Юристъ», 2005, էջ 218:

⁸ Տե՛ս ՀՀ Վճռաբեկ դատարանի 2010 թ. մայիսի 27-ի որոշումը՝ թիվ ԵԷԴ/0871/02/09 քաղաքացիական գործով, ՀՀ Վճռաբեկ դատարանի 2011 թ. հուլիսի 1-ի որոշումը՝ թիվ ԼԴ/0365/02/09 քաղաքացիական գործով, ՀՀ Վճռաբեկ դատարանի 2012 թ. մարտի 23-ի որոշումը՝ թիվ ԵԱՆԴ/1097/02/10 քաղաքացիական գործով և ՀՀ Վճռաբեկ դատարանի 2012 թ. մարտի 23-ի որոշումը՝ թիվ ԳԴ4/0092/02/11 քաղաքացիական գործով:

տարանն ունի որոշումը հիմնավորելու պարտականություն, բայց ոչ որոշմամբ կիրառված լիազորության ընտրությունը հիմնավորելու պարտականություն: Չնայած, գտնում ենք, որ իրավական դոկտրինի և Վերաքննիչ դատարանի վերոնշյալ պարտականության լայն մեկնաբանման պարագայում կատարվի, որ Վերաքննիչ դատարանը պետք է հիմնավորի ոչ միայն՝ ինչո՞ւ է եկել նման եզրահանգման (որոշման հիմնավորում), այլև ինչո՞ւ է ընտրել հատկապես այդ լիազորությունը (լիազորության ընտրության հիմնավորում), քանի որ Վերաքննիչ դատարանի որոշման մեջ նաև լիազորության ընտրության հարցն է քննարկման ենթակա:

Ըստ էության, կարծում ենք՝ Վերաքննիչ դատարանի այս լիազորության նպատակն է ապահովել գործի ողջամիտ ժամկետում քննությունը, կանխել գործի քննության անհարկի ձգձգումներն ու դատական շրջապտույտը: Վերաքննիչ դատարանի քննարկվող լիազորությունն ուղղակիորեն պայմանավորված է ողջամիտ ժամկետում գործը քննելու պահանջով և ուղղված է գործի շրջապտույտի կանխմանը: Այսինքն՝ այս դրույթը Վերաքննիչ դատարանին լիազորում է իր իրավասության սահմաններում, եթե դա իրավականորեն հնարավոր է, դատական ակտի վերաքննության արդյունքում վերացնել գործն ըստ էության լուծող դատական ակտի թերությունները՝ դրանով իսկ կանխելով գործի քննության անհարկի ձգձգումներն ու շրջապտույտը: **Չնայած վերոգրյալի՝ Վերաքննիչ դատարանը, գործերի գերակշիռ մեծամասնության դեպքում, գործն ուղարկում է ստորադաս դատարան նոր քննության, այսինքն գործի շրջապտույտ է տեղի ունենում: Ընդ որում՝ առանց պատճառաբանելու՝ ինչո՞ւ՝ Վերաքննիչ դատարանը չընտրեց վերոգրյալ լիազորությունը և ընտրեց գործը նոր քննության ուղարկելու լիազորությունը: Հենց սա է խնդիր առաջացնում իրավական պրակտիկայում, քանի որ ոչ բողոքաբերի, ոչ էլ հակառակորդ կողմի մոտ, չկա որևէ ուղենիշ՝ վերաքննիչ բողոքի արդյունքն ինչպիսին կլինի: Ավելին՝ Վերաքննիչ դատարանի որոշման բովանդակությանը ծանոթանալուց հետո, կողմերի մոտ տրամաբանական հարց է առաջանում՝ ինչո՞ւ է կիրառվել հենց այս լիազորությունը, եթե կարելի էր առավել արդյունավետ և կարճ ընթացք ենթադրող լիազորություն կիրառել:**

Հարկ ենք համարում անդրադառնալ նաև Վերաքննիչ դատարանի հետևյալ լիազորությանը նույնպես՝

3) ամբողջությամբ կամ մասնակիորեն **բավարարում է** վերաքննիչ բողոքը, համապատասխանաբար՝ ամբողջությամբ կամ մասնակիորեն **բեկանելով վճիռը**: Բեկանված մասով գործն ուղարկվում է համապատասխան ստորադաս դատարան **նոր քննության՝** սահմանելով նոր քննության ծավալը: Չբեկանված մասով վճիռը մտնում է օրինական ուժի մեջ:

4) ամբողջությամբ կամ մասնակիորեն **բեկանում և փոփոխում է վճիռը՝** առաջին ատյանի դատարանի հետազոտած ապացույցների հիման վրա հաստատելով նոր փաստ կամ չհաստատված համարելով դատարանի հաստատած փաստը, եթե դա բխում է արդարադատության արդյունավետության շահերից:

5) ամբողջությամբ կամ մասնակիորեն **բեկանում և փոփոխում է վճիռը**, եթե Առաջին ատյանի դատարանի հաստատած փաստական հանգամանքները հնարավորություն են տալիս կայացնելու նման ակտ, և եթե դա բխում է արդարադատության արդյունավետության շահերից՝ բողոքարկված և չբեկանված մասով վճիռը թողնելով անփոփոխ: Չբեկանված մասով վճիռը մտնում է օրինական ուժի մեջ:

Այսպես՝ վճռի դեմ ներկայացված վերաքննիչ բողոքի քննության արդյունքով Վերաքննիչ դատարանը վերոգրյալ լիազորությունների պարագայում նախ պետք է կիրառի վերաքննիչ բողոքն ամբողջությամբ կամ մասնակի բավարարելու լիազորությունը, որն անմիջականորեն

կապված է և որից կախված է Վերաքննիչ դատարանի լիազորությունների մյուս բաղադրիչների կիրառությունը, այնուհետև **կամ** համապատասխանաբար ամբողջությամբ կամ մասնակիորեն բեկանի վճիռը **և** բեկանված մասով գործն ուղարկի համապատասխան ստորադաս դատարան **նոր քննության՝** սահմանելով նոր քննության ծավալը, **կամ** բեկանի **և փոփոխի** վճիռը **և առաջին ատյանի դատարանի հետազոտած ապացույցների հիման վրա** հաստատի նոր փաստ կամ չհաստատված համարի դատարանի հաստատած փաստը, **կամ էլ՝** բեկանի **և փոփոխի** վճիռը, եթե Առաջին ատյանի դատարանի հաստատած փաստական հանգամանքները հնարավորություն են տալիս կայացնելու նման ակտ **և** բողոքարկված և չբեկանված մասով վճիռը թողնի անփոփոխ:

Վերաքննիչ դատարանի՝ վճիռը համապատասխան մասով բեկանելու և համապատասխան մասով ստորադաս դատարան նոր քննության ուղարկելու լիազորությունն, ըստ էության, Վերաքննիչ դատարանը կիրառում է այն պարագայում, երբ վերաքննիչ բողոքի հիմքերն ու հիմնավորումները հիմնավոր են և պատճառաբանված, բայց ստորադաս դատարանում բաց է մնացել որոշակի փաստի, հանգամանքի քննությունը, որը պարտադիր է գործով արդարացի դատական ակտ կայացնելու համար:

Հատկանշական է, որ ՀՀ Վճռաբեկ դատարանն այս առթիվ գտել է, որ՝ «... վերադաս ատյանի կողմից գործը նոր քննության ուղարկելու լիազորության էությունից բխում է, որ գործում առկա ապացույցները բավարար չեն որևէ փաստի հաստատման կամ չհաստատման համարելու համար, **հակառակ պարագայում վերադաս ատյանը կկիրառեր ստորադաս դատարանի դատական ակտը բեկանելու և փոփոխելու լիազորությունը:** Ընդ որում, Վճռաբեկ դատարանն ընդգծել է, որ գործի լուծման համար էական նշանակություն ունեցող հանգամանքների առկայությունը կամ բացակայությունը պարզելու համար գործում առկա ապացույցների անբավարարության պարզաբանությամբ գործը նոր քննության ուղարկելը պայմանավորված է ստորադաս դատարանի կողմից թույլ տրված խախտումներով, հակառակ պարագայում, երբ անհրաժեշտ ապացույցների բացակայությունը պայմանավորված է գործին մասնակցող անձանց կողմից իրենց վրա դրված փաստերի ապացուցման պարտականությունը ոչ պարզաճ կատարելու հանգամանքով, ապա նման պայմաններում չի կարող կիրառվել գործը նոր քննության ուղարկելու լիազորությունը, քանի որ այդպիսի իրավիճակներում բացասական հետևանքները կրում է այդ փաստի ապացուցման պարտականությունը կրող անձը:

... Այսպիսով՝ Վճռաբեկ դատարանը փաստել է, որ վերադաս դատարանի կողմից բողոքի բավարարման արդյունքում գործի նոր քննության փուլն ուղղված է գործի նախորդ քննության ընթացքում թույլ տրված նյութաիրավական կամ դատավարական խախտումները վերացնելուն»⁹:

Բայց, եթե ՀՀ ՔԴՕ 380-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ և 5-րդ կետերով սահմանված լիազորություններն ընտրելու ինչ-որ չափանիշներ են առաջադրում (եթե դա բխում է արդարադատության արդյունավետության շահերից, կամ եթե Առաջին ատյանի դատարանի հաստատած փաստական հանգամանքները հնարավորություն են տալիս կայացնելու նման ակտ, կամ եթե Առաջին ատյանի դատարանի հետազոտած ապացույցներն են դա թույլ տալիս), սույն պարագայում (գործը նոր քննության ուղարկելու) նույնիսկ այդ անորոշ չափանիշներն առկա չեն: Չնայած, պետք է արձանագրել, որ վերոգրյալը (լիազորության ընտրության չափանիշների բացակայությունը) առավելապես վերաբերում է գործը նոր քննության ամբողջ ծավալով

⁹ Տե՛ս ՀՀ Վճռաբեկ դատարանի 29.10.2021թ. թիվ ԱՎԴ/2827/02/17 քաղաքացիական գործով կայացված որոշումը:

ուղարկելու դեպքերին, քանի որ հակառակ դեպքում, գործն ուղարկվում է նոր քննության բեկանված մասով, ուստի դա հենց լիազորության ընտրության չափանիշ կարող ենք համարել:

Այսինքն, կարող ենք եզրակացնել, որ գրեթե յուրաքանչյուր գործով, երբ վերաքննիչ բողոքը ենթակա է բավարարման, Վերաքննիչ դատարանը կարող է գործն ուղարկել նոր քննության կոնկրետ փաստի մասով կամ ամբողջ գործի ծավալով՝ խթանելով գործի շրջապտույտը և, հնարավոր է նաև՝ խախտելով գործի ողջամիտ ժամկետում քննության սկզբունքը: **Եվ այս ամբողջի համատեքստում Վերաքննիչ դատարանը չունի ուղղակի պարտականություն մանրամասն պատճառաբանելու՝ ինչու է ընտրել հենց այդ լիազորությունը, նույնիսկ, ըստ էության, պարտականություն չունի հիմնավորելու նոր քննության ուղարկելու ծավալը:** Այսինքն, ինչու է գործն ուղարկվում ամբողջ և ոչ կոնկրետ փաստի ծավալով:

Փաստում ենք նաև, որ Վերաքննիչ դատարանը չունի ուղղակի պարտականություն գոնե հիմնավորելու՝ ինչու է գործն ուղարկում ստորադաս դատարան կոնկրետ ծավալով կամ, հատկապես, ամբողջ ծավալով:

Հետաքրքրական է, որ երբ Վերաքննիչ դատարանը կիրառում է վերոգրյալ լիազորությունը, այն, ընդհանուր առմամբ, բողոքաբերի համար հանդիսանում է բարենպաստ կամ մասամբ բարենպաստ դատական ակտ, քանի որ ներկայացված վերաքննիչ բողոքը ամբողջությամբ կամ մասամբ բավարարվել է, բայց, ըստ մեզ, բովանդակային առումով, կոնկրետ փաստական հանգամանքների համատեքստում, նման որոշումը կարող է հանդիսանալ էական վտանգներ պարունակող դատական ակտ հենց բողոքաբեր կողմի համար և հանդիսանալ անբարենպաստ դատական ակտ: Նշվածի համատեքստում առանցքային նշանակություն են ստանում վերաքննիչ բողոքի պահանջը և Վերաքննիչ դատարանի կողմից ՀՀ ՔԴՕ 379-րդ հոդվածի 3-րդ մասը կիրառված լինել/չլինելու հանգամանքը:

Ընդ որում՝ ցանկանում ենք ուշադրություն հրավիրել նաև այն հանգամանքի վրա, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 360-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանվում է, որ անձը կարող է վերաքննիչ բողոք ներկայացնել դատական ակտի՝ **միայն իր համար անբարենպաստ մասի դեմ**, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի, իսկ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 389-րդ հոդվածի 4-րդ մասը սահմանում է, որ անձը կարող է վճռաբեկ բողոք բերել դատական ակտի՝ միայն իր համար անբարենպաստ մասի դեմ: Նկատենք, որ եթե օրենսդիրը վերաքննիչ բողոքի դեպքում օգտագործել է «բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի» արտահայտությունը, ապա վճռաբեկ բողոք ներկայացնելու դեպքում բացարձակ իմպերատիվ նորմի հետ գործ ունենք: «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 10-րդ մասի գ. կետով սահմանվում է միայն վճռի պատճառաբանական մասի դեմ ներկայացվող բողոքների համար նախատեսված պետական տուրքը՝ դրան համապատասխան նախատեսելով Վերաքննիչ դատարանի հետևյալ լիազորություն՝ «բավարարում է վերաքննիչ բողոքը՝ փոփոխելով վճռի պատճառաբանական մասը՝ առանց անդրադառնալու դրա եզրափակիչ մասին»:

Ստացվում է, որ անձը կարող է բողոքարկել ստորադաս դատարանի դատական ակտը միայն իր համար անբարենպաստ մասով, կամ էլ՝ բողոքարկել դատական ակտի պատճառաբանական մասն՝ առանց անդրադառնալու եզրափակիչ մասին, **մինչդեռ, կարծում ենք, որ գործին մասնակցող անձը, իսկ, օրենքով նախատեսված դեպքերում նաև գործին մասնակից չդարձված անձինք, պետք է ունենան հնարավորություն բողոքարկելու նաև դատարանի կողմից ընտրված լիազորության ընտրության հանգամանքը, որն անմիջականորեն կազդի դատական ակտի եզրափակիչ մասի վրա:**

ՀՀ ՔԴՕ 381-րդ հոդվածի 2-րդ և 5-րդ մասերի և ՀՀ ՔԴՕ 379-րդ հոդվածի համակարգային վերլուծությունից հանգում ենք այն հետևությանը, որ որոշման կայացման համար էական և առանցքային նշանակություն ունեն վերաքննիչ բողոքի հիմքերն ու հիմնավորումները, վկայակոչված փաստերը, ինչպես նաև համապատասխան փաստերը վերաքննիչ բողոքում վիճարկված լինելու հանգամանքը: Տրամաբանական հարց է առաջնում. արդյո՞ք Վերաքննիչ դատարանի հայեցողությունը բացարձակ է լիազորություն ընտրելու հարցում, երբ դատարանը սահմանափակված է վերաքննիչ բողոքի հիմք, հիմնավորումներով: Ավելի մանրամասն՝ արդյո՞ք Վերաքննիչ դատարանը կարող է կիրառել իր ցանկացած լիազորություն, եթե վերաքննիչ բողոքի հիմքերն ու հիմնավորումներն այդ հնարավորությունը չեն տալիս: Պատասխանը միանշանակ և պարզ է, ընդ որում, եթե անգամ Վերաքննիչ դատարանը, ելնելով արդարադատության շահից, կայացնի որոշում, որով կվերանայվեն փաստեր և հանգամանքներ, որոնք վերաքննիչ բողոքում վկայակոչված և/կամ վիճարկված չեն, ապա ռեալ հնարավորություն է ստեղծվում բողոքով պատասխանողի կողմից վճռաբեկության կարգով որոշումը բեկանելու: Ստացվում է, որ, եթե անգամ Վերաքննիչ դատարանը «մեծ ցանկություն» ունենա վճիռը բեկանելու և այն փոփոխելու լիազորություն կիրառել օրինակ, չի ունենա դրա օրենսդրական հնարավորությունը, եթե վերաքննիչ բողոքի հիմքերն ու հիմնավորումները բավարար չլինեն կամ վերաքննիչ բողոքով վիճարկված չլինեն համապատասխան փաստերը:

Ամեն դեպքում, Վերաքննիչ դատարանը սեփական լիազորության ընտրությունը պետք է պատճառաբանի՝ ելնելով նաև վերաքննիչ բողոքի հիմք, հիմնավորումներից: Այսինքն, նշելով համապատասխան հիմքերն ու հիմնավորումները, օրենսդրական դրույթները, դրանց հիման վրա կատարված եզրահանգումները ու վերլուծությունը, պատճառաբանի՝ ինչու՞ է վերաքննիչ դատարանը կիրառել կոնկրետ այդ լիազորությունը:

Հակառակ դեպքում, իրապես վտանգվում, որոշ դեպքերում նաև խախտվում է, անձի՝ գործի ողջամիտ ժամկետում քննության իրավունքը:

Վերոնշյալի վառ օրինակ է թիվ ՍՆԴ/0050/02/20 քաղաքացիական գործի շրջանակում Վերաքննիչ դատարանի 2022 թվականի մարտի 18-ին հրապարակված որոշումը և Թիվ ԵԴ/19766/02/18 քաղաքացիական գործով Վերաքննիչ դատարանի 2022 թվականի հոկտեմբերի 31-ին հրապարակված որոշումը:

Սույն համատեքստում էական է դառնում նաև վերաքննիչ բողոք կազմելու պրոֆեսիոնալ լիզմի անհրաժեշտությունը, որից ելնելով՝ արդեն Վերաքննիչ դատարանը բավարար հայեցողության հնարավորություն կունենա լիազորության ընտրության հարցում: **Անհրաժեշտ է, որ բողոքաբերը նախ Վերաքննիչ դատարանին տա օրենսդրական հնարավորությունը իր համար նպաստավոր, բարենպաստ որոշում կայացնելու, իր համար նպաստավոր լիազորություն կիրառելու, այնուհետև պահանջի Վերաքննիչ դատարանից՝ հիմնավորելու իր լիազորության ընտրությունը:**

Անդրադառնալով Վերաքննիչ դատարանի լիազորության ընտրությունը հիմնավորելու հարցին՝ թվում է՝ ինչ-որ չափանիշներ են առաջադրում ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 381-րդ հոդվածի 5-րդ մասի 2-րդ կետի դ. ենթարկետը, 3-րդ և 4-րդ կետերը (արդարադատության արդյունավետության շահի առկայություն), դրանք են՝

5. Որոշման պատճառաբանական մասը պետք է պարունակի՝

2) եզրահանգում՝ վերաքննիչ բողոքի յուրաքանչյուր հիմքի վերաբերյալ, մասնավորապես պատասխանելով հետևյալ հարցերին.

դ. բողոքը հիմնավոր լինելու դեպքում արդյո՞ք վերաքննիչ բողոքում նշված՝ դատարանի

թույլ տված նյութական կամ դատավարական իրավունքի խախտումը հանդիսանում է դատական ակտի բեկանման հիմք, թե ոչ՝ պատճառաբանելով համապատասխան դիրքորոշումը:

3) բողոքը հիմնավոր լինելու դեպքում արդյոք վերաքննիչ բողոքում նշված՝ դատարանի թույլ տված նյութական կամ դատավար քննության ծավալը կամ նշում այն մասին, որ գործը պետք է քննվի ամբողջ ծավալով:

4) սույն օրենսգրքի 380-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կամ 5-րդ կետով նախատեսված լիազորությունը կիրառելու դեպքում՝ արդարադատության արդյունավետության շահի առկայության վերաբերյալ հիմնավորումները:

Գրեթե նույն իրավիճակն ունենք Վճռաբեկ դատարանի որոշման պարագայում՝ մասնավորապես՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 406-րդ հոդվածի 5-րդ մասի 5-րդ և 8-րդ կետերով սահմանված իրավակարգավորումների հաշվառմամբ:

Երբ Վերաքննիչ դատարանը եզրահանգում է, որ դատական ակտը բեկանելու հիմք առկա է, պետք է արդեն ընտրություն կատարի իր լիազորություններին համապատասխանաբար բեկանման որ լիազորությունն է կիրառելի, քանի որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 380-րդ և 405-րդ հոդվածները (Վերաքննիչ և Վճռաբեկ դատարանների լիազորությունների հոդվածներ) նախատեսում են բեկանել և փոփոխելու, բեկանել և նոր քննության ուղարկելու, բեկանել և կարճելու լիազորություններ, և առանձնահատուկ փաստում ենք, որ օրենսդիրն օգտագործել է «և» համադասական շաղկապը, իսկ «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ 1. Նորմատիվ իրավական ակտում նորմի կիրառման համար թվարկված բոլոր պայմանների առկայությունը պարտադիր է, եթե իրավական ակտում՝

1) նշված նորմի կիրառումը պայմանավորված է միայն «և» կամ «ու» շաղկապով բաժանված պայմաններով:

Եզրակացություն

Ստացվում է, որ Վերաքննիչ դատարանը նախ պետք է հիմնավորի՝ ինչու է դատական ակտը ենթակա բեկանման, ապա ինչու է այն ենթակա, օրինակ, փոփոխման կամ գործը նոր քննության ուղարկման, քանի որ այդ երկու լիազորությունները փոխկապակցված և միմյանցից կախված լիազորություններ են: Նույն կերպ, Վերաքննիչ դատարանը գործը նոր քննության ուղարկելիս, պետք է նշի գործի նոր քննության ծավալը կամ նշում կատարի այն մասին, որ գործը պետք է քննվի ամբողջ ծավալով, իսկ դատական ակտը բեկանելիս և փոփոխելիս կամ բեկանելիս և կարճելիս՝ արդյունավետության շահի առկայության վերաբերյալ հիմնավորումներ ներկայացնի:

Հետևաբար՝ կարող ենք եզրահանգել, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 381-րդ հոդվածի 5-րդ մասի 2-րդ, 3-րդ և 4-րդ կետերը և վերաբերելի այլ նորմեր կարող են մեկնաբանվել առավել լայն և նշանակել, որ Վերաքննիչ դատարանն իր լիազորությունների գերակշիռ մեծամասնությունը կիրառելիս պետք է նշի այն շարժառիթները/հիմքերը/նյութական և դատավարական նորմերի խախտումները, վերաքննիչ բողոքի հիմքերն ու հիմնավորումները, որոնցից ելնելով/որոնցով պայմանավորված չի համաձայնել այդ ակտը կայացրած դատարանի հետևությունների հետ և կիրառում են բեկանման լիազորությունը՝ այդպիսով պատճառաբանելով/հիմնավորելով՝ ինչու՞ է կիրառում հենց այդ լիազորությունը և ինչու կիրառման ենթակա չեն մյուս լիազորությունները: Ի դեպ, կարծում ենք, որ ասվածը լիարժեքորեն տարածվում է դատարանի բոլոր լիազորությունների վրա: Ստացվում է, որ պետք է հիմնավորվի՝ ինչու՞ է (ինչ շարժառիթներով է) Դատարանը ընտրում բեկանման լիա-

զորությունը և ինչու՞ է գործը բեկանելուց հետո ուղարկում նոր քննության և ոչ թե փոփոխում կայացված դատական ակտը, ինչու՞ է նոր քննության ուղարկում ամբողջ ծավալով և ոչ՝ որոշակի ծավալով: Չնայած վերոգրյալի արձանագրում ենք, որ սույն նորմը կարող է մեկնաբանվել նաև այլ կերպ, այն է՝ Վերաքննիչ դատարանը պետք է նշի այն շարժառիթները, որոնցով պայմանավորված համաձայն չէ դատական ակտը կայացրած դատարանի հետևությունների հետ, այսինքն միայն նշվի՝ ինչու է բեկանվում դատական ակտը և ոչ թե՝ ինչու բեկանվում և փոփոխվում կամ բեկանվում և ուղարկվում նոր քննության և այլն, ինչը, կարծում ենք, օրենսդրի տրամաբանությունից և արդարադատության շահից չի ելնում:

Ուստի, առկա են մեկնաբանման լայն և նեղ եղանակներ, հետևաբար կարծում ենք, որ Վերաքննիչ դատարանի որոշման մեջ տեղ գտած վկայակոչված դրույթները պետք է լայն մեկնաբանել և դիտարկել նաև որպես լիազորության ընտրության հիմնավորելու/պատճառաբանելու պարտականություն:

Հիմք ընդունելով ամբողջ վերոգրյալը՝ գտնում ենք, որ Վերաքննիչ դատարանն ունի սահմանված պարտականություն՝ յուրաքանչյուր որոշման մեջ նշելու՝ ինչու է կիրառել հենց այդ լիազորությունը և այդ պարտականությունը սահմանված է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 381-րդ հոդվածի շրջանակում, որը պետք է լայն մեկնաբանել: Այսինքն, հաշվի առնելով, որ Վերաքննիչ դատարանն իր յուրաքանչյուր որոշում կայացնելիս ղեկավարվում է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 381-րդ հոդվածով, գտնում ենք, որ այն պետք է լայն մեկնաբանել և չդիտարկել, որ Վերաքննիչ դատարանը պետք է միայն հիմնավորի՝ ինչու է ելել նման եզրահանգման և ինչու է կայացրել հենց այդ որոշում, այլև պետք է պատճառաբանի/հիմնավորի՝ ինչու է այդ հիմնավորման համատեքստում ընտրում այս լիազորությունը և ոչ՝ մյուսը: Այսպիսով՝ որոշակի զսպվածություն/սահմանափակում կդրսևորվի Վերաքննիչ դատարանի հայեցողության նկատմամբ, ավելին՝ որոշակի պրակտիկայի ձևավորման արդյունքում, Վերաքննիչ դատարանի լիազորության ընտրության հարցն առավել կանխատեսելի կդառնա, որպիսի պայմաններում որոշակիության խնդիր այլևս չի առաջանա կամ, գոնե, հնարավորինս կզսպվի:

Ամփոփագիր: Գիտական հետազոտության շրջանակներում ուսումնասիրվել է ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ նաև՝ Վերաքննիչ դատարան) հայեցողության սահմանները ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով (այսուհետ նաև՝ ՔԴՕ) սահմանված վճռի դեմ ներկայացված վերաքննիչ բողոքի քննության արդյունքով կիրառման ենթակա լիազորությունների ընտրության հարցում, այն պարագայում, երբ գործի փաստական հանգամանքների համատեքստում կարող է (առկա է իրավական հնարավորություն) կիրառվել կոնկրետ լիազորություն, ինչպես նաև՝ Վերաքննիչ դատարանի՝ նշված լիազորությունների ընտրության հիմնավորման/պատճառաբանման օրենսդրական պարտականության առկայության հարցերը:

Հետազոտության արդիականությունը պայմանավորված է զարգացող իրավական պրակտիկայով (թիվ ՍՆԴ/0050/02/20 քաղ. գործի շրջանակներում Վերաքննիչ դատարանի 18.03.22 թ. որոշումը և թիվ ԵԴ/19766/02/18 քաղ. գործով Վերաքննիչ դատարանի 31.10.22 թ. որոշումը), Վերաքննիչ դատարանի լիազորությունների բազմազանությամբ և դրանց բովանդակության խրթինությամբ:

Սույն աշխատության հիմնական նպատակներն են՝

- համակարգային վերլուծության արդյունքում վեր հանել ՀՀ վերաքննիչ դատարանի լիազորությունների ընտրության չափանիշներն ու դրանց առանձնահատկությունները,
- Իրականացնել իրավական վերլուծություն՝ բացահայտելով Վերաքննիչ դատարանի պարտականությունը՝ հիմնավորելու սեփական լիազորության ընտրությունը, որի հիմքով դատական ակտը ենթակա կլինի բողոքարկման:

- ՀՀ օրենսդրության կոնկրետ հոդվածների լայն և նեղ մեկնաբանությունների ներկայացումը, դրանց բացահայտումն ու հիմնավորումը:
- Իրավական անորոշության հաղթահարմանն ուղղված մեկնաբանությունների վերհանումն ու հիմնավորումը,
- Անձի՝ ողջամիտ ժամկետում գործի քննության և արդար դատաքննության իրավունքների ապահովմանն ուղղված առաջարկությունների ներկայացումը:

Գիտական աշխատության խնդիրներ են պատասխանել հետևյալ հարցերին՝

1. Արդյո՞ք ՀՀ վերաքննիչ դատարանի հայեցողությունը բացարձակ է ՀՀ ՔԴՕ սահմանված վճռի դեմ ներկայացված վերաքննիչ բողոքի քննության արդյունքով կիրառման ենթակա լիազորությունների ընտրության հարցում, այն պարագայում, երբ գործի փաստական հանգամանքների համատեքստում կարող է (առկա է իրավական հնարավորություն) կիրառվել կոնկրետ լիազորություն:

2. Արդյո՞ք ՀՀ վերաքննիչ դատարանը չպետք է ունենա ՀՀ ՔԴՕ-ով սահմանված վճռի դեմ ներկայացված վերաքննիչ բողոքի քննության արդյունքով կիրառման ենթակա իր լիազորություններից կոնկրետ մեկի ընտրությունը պատճառաբանելու/հիմնավորելու օրենսդրական պարտականություն և/կամ արդյո՞ք ներկայումս ՀՀ վերաքննիչ դատարանը չունի նման օրենսդրական պարտականություն:

Annotation. Within the framework of scientific research, it was studied whether the discretion of the RA Civil Appellate Court is absolute in the selection of powers, if, taking into account the factual circumstances of the case, it is possible (there is a legal possibility) to choose specific powers, and also the RA Civil Appellate Court should not have a legal obligation to motivate/justify the choice of any of their powers, or does the RA Civil Court of Appeal currently have such a legal obligation?

The relevance of the research is determined by the developing legal practice (the decision of the Court of Appeal dated 18.03.22 within the framework of the civil case No. SND/0050/02/20 and the decision of the Court of Appeal dated 31.10.22 in the civil case No. ED/19766/02/18) and the Court of Appeal with the diversity of powers and the complexity of their content.

The main goals of this work are:

- as a result of the legal analysis, highlight the criteria for the selection of powers of the RA Court of Appeals and their peculiarities,
- Conduct a legal analysis, identifying the duty of the Court of Appeals to justify its choice of authority, on the basis of which the judicial act will be subject to appeal.
- Presentation of broad and narrow interpretations of specific articles of RA Legislation, their identification and justification.
- Raising and justifying comments aimed at overcoming legal uncertainty,
- Submission of recommendations aimed at securing the rights of a person to a case investigation and a fair trial within a reasonable period of time.

Problems of the scientific paper answered the following questions:

1. Is the discretion of the Court of Appeals of the Republic of Armenia absolute in the matter of the selection of powers defined by the Civil Procedure Code of the Republic of Armenia, in the event that a specific power may be applied (there is a legal possibility) in the context of the factual circumstances of the case?

2. Shouldn't the RA Court of Appeals have a legislative duty to justify the choice of its powers to be exercised as a result of the examination of the appeal filed against the judgment defined by the RA Civil Procedure Code and/or does the RA Court of Appeals not currently have such a legislative duty?

Аннотация. В рамках научного исследования были изучены пределы судебного усмотрения, в частности Апелляционного гражданского суда РА (далее также Апелляционный суд), в вопросе выбора установленных Гражданским процессуальным кодексом РА (далее также УПК) полномочий, подлежащих применению по результатам рассмотрения апелляционного протеста, поданного на решение, в том случае, когда в контексте фактических

обстоятельств дела могут (если имеется правовая возможность) быть применены конкретные полномочия, а также вопросы наличия законодательной обязанности Апелляционного суда по аргументации/обоснованию выбора указанных полномочий.

Актуальность исследования обусловлена развитием юридической практики (решение Апелляционного суда № SND/0050/02/20 от 18.03.22 г. и решения в рамках гражданского дела № ED/19766/02/18 Апелляционного суда по гражданским делам от 31.10.22 г.), разнообразием полномочий Апелляционного суда и замысловатостью их содержания.

Основными целями данной работы являются:

- в результате системного анализа выявить критерии отбора полномочий Апелляционного суда РА и их особенности;
- провести правовой анализ, определив обязанность Апелляционного суда обосновать выбор собственных полномочий, на основании которых судебный акт будет подлежать обжалованию;
- представить широкое и узкое толкование конкретных статей Законодательства РА, выявить их и дать обоснование;
- выявить и обосновать комментарии, направленные на преодоление правовой неопределенности;
- представить предложения, направленные на обеспечение прав лица на рассмотрение дела и справедливое судебное разбирательство в разумные сроки.

Проблемы научной работы ответили на следующие вопросы:

1. является ли судебское усмотрение Апелляционного суда РА абсолютным в вопросе выбора установленных УПК РА полномочий, подлежащих применению по результатам рассмотрения апелляционной жалобы, поданной на решение в том случае, когда в контексте фактических обстоятельств дела могут (если имеется правовая возможность) быть применены конкретные полномочия;

2. Должен ли Апелляционный суд РА не иметь законодательной обязанности аргументировать/обосновывать выбор конкретного из своих полномочий, установленных УПК РА, и подлежащих применению по результатам рассмотрения апелляционной жалобы, поданной на решение, и/или не имеет ли в настоящее время Апелляционный суд РА такой законодательной обязанности.

Բանալի բառեր - Վերաքննիչ դատարան, լիազորություն, հայեցողություն, ընկրության հիմնավորում, օրենսդրական պարտականություն:

Keywords: Court of Appeals, authority, discretion, justification of choice, legislative duty.

Ключевые слова: апелляционный суд, полномочия, усмотрение, обоснование выбора, законодательная обязанность.

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

Նորմատիվ-իրավական

1. ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրք,
2. Նորմատիվ իրավական ակտերի մասին ՀՀ օրենք,
3. ՀՀ Վճռաբեկ դատարանի 2010 թ. մայիսի 27-ի որոշումը՝ թիվ ԵԷԴ/0871/02/09 քաղաքացիական գործով, ՀՀ Վճռաբեկ դատարանի 2011 թ. հուլիսի 1-ի որոշումը՝ թիվ ԼԴ/0365/02/09 քաղաքացիական գործով, ՀՀ Վճռաբեկ դատարանի 2012 թ. մարտի 23-ի որոշումը՝ թիվ ԵԱՆԴ/1097/02/10 քաղաքացիական գործով և ՀՀ Վճռաբեկ դատարանի 2012 թ. մարտի 23-ի որոշումը՝ թիվ ԳԴ4/0092/02/11 քաղաքացիական գործով: ՀՀ Վճռաբեկ դատարանի 29.10.2021 թ. թիվ ԱՎԴ/2827/02/17 քաղաքացիական գործով կայացված որոշումը:

Տեսական գրականություն

1. Грязева В. В., Апелляция в арбитражном процессе. Дисс. ... к.ю.н., Москва, 2005, էջ 133:
2. Հովհաննիսյան Վ. Վ., Վերաքննության կարգով դատական ակտերի վերանայման հիմնախնդիրները քաղաքացիական դատավարությունում, Եր., ԵՊՀ հրատ., 2013, էջ 268:
3. Гражданское процессуальное право России / Под ред. П.В. Алексия, Н.Д. Амаглобели. - 2-е изд., перераб. и доп. - М.: «ЮНИТИ-ДАНА», 2007, 335 էջ; Гражданский процесс: Учебник / Под ред. А.Г. Коваленко, А.А. Мохова, П.М. Филиппова. - М.: «ИНФРА-М», 2008, 268 էջ:

Ինտերնետային աղբյուրներ

1. www.arlis.am
2. www.datalex.am

Մանուկյան Մ. - Իրավագիտության մագիստրոս, ՀՀ փաստաբանների պալատի անդամ, փաստաբան, էլիասցե՝ MariamManukyan.Law@gmail.com:

Ներկայացվել է խմբագրություն 15.03.2024 թ., տրվել է գրախոսության 15.03.2024 թ., երաշխավորվել է ՀՀ վերաքննիչ հակակոռուպցիոն դատարանի դատավոր, Հայաստանում ֆրանսիական համալսարանի դասախոս, իրավագիտության թեկնածու Գ. Թորոսյանի կողմից, ընդունվել է տպագրության 15.04.2024 թ.:

<https://doi.org/10.59546/18290744-2024.1-3-47>

ՄԵՐԻ ԽԱՉԱՏՐՅԱՆ
ԵՊՀ քաղաքացիական դատավարության ամբիոնի ասպիրանտ,
դասախոս

MERI KHACHATRYAN
PhD student,
Lecturer at the Chair of Civil Procedure at YSU Faculty of Law

МЕРИ ХАЧАТРЯН
аспирант, лектор кафедры гражданского
процессуального права юридического факультета ЕГУ

**ԱՊՕՐԻՆԻ ԾԱԳՈՒՄ ՈՒՆԵՑՈՂ ԳՈՒՅՔԻ ԲՈՒԱԳԱՆՁՄԱՆ ՀԱՅՑ
ՀԱՐՈՒՅԵԼՈՒ ՀԻՄՔԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՇՏՈՒԹՅԱՆ
ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅԱՄԲ ԱՎԱՐՏԵԼԸ**

**COMPLETION OF THE INVESTIGATION OF THE GROUNDS FOR FILING
A CLAIM FOR CONFISCATION OF PROPERTY OF ILLEGAL ORIGIN
THROUGH A SETTLEMENT AGREEMENT**

**ЗАВЕРШЕНИЕ РАССЛЕДОВАНИЯ ОСНОВАНИЙ ВОЗБУЖДЕНИЯ ИСКА
О ВЗЫСКАНИИ ИМУЩЕСТВА НЕЗАКОННОГО ПРОИСХОЖДЕНИЯ
ПОСРЕДСТВОМ ЗАКЛЮЧЕНИЯ МИРОВОГО СОГЛАШЕНИЯ**

Ներածություն

Թեև ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարույթի հիմնական նպատակն ապօրինի ծագում ունեցող գույքն օրինական շրջանառություն բերելն է, այդուհանդերձ, այդ նպատակին հասնելու միջոցն ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման հայց հարուցելու հիմքերի ուսումնասիրությունն է: Այն որպես քննարկվող վարույթի իրականացման պարտադիր և մինչդատական ընթացակարգ, առաջին հերթին ուղղված է ապօրինի ծագում ունեցող գույքի առկայության և դրա ծավալների բացահայտմանը:

Հատկանշական է, որ ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարույթի նպատակը լիովին իրագործելի է նաև մինչդատական փուլում, մասնավորապես՝ ուսումնասիրության փուլում անձին ապօրինի ծագում ունեցող գույք պատկանելու ենթադրությունները հաստատվելու դեպքում վարույթը կարող է ավարտվել առանց դատարանի հայց ներկայացնելու անհրաժեշտության՝ հաշտության համաձայնություն կնքելու միջոցով, որի շրջանակում հայտ-

նաբերված ապօրինի ծագում ունեցող գույքը կամ դրա մի մասն անհատույց փոխանցվում է Հայաստանի Հանրապետությանը: Նախքան դատարան հայցադիմում ներկայացնելն ապօրինի ծագում ունեցող գույքը պետությանը փոխանցելու կառուցակարգն ունի մի շարք առավելություններ, ուստի այդ կառուցակարգի կատարելագործումը կարող է նպաստել ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարույթների իրականացման արդյունավետությանը:

Սույն գիտական հոդվածի շրջանակում ներկայացվել են հայց հարուցելու հիմքերի ուսումնասիրության փուլում հաշտության համաձայնություն կնքելու համար անհրաժեշտ նախադրյալները և կնքելու կարգը, կնքված հաշտության համաձայնագիրը դատարանի կողմից հաստատելու համար անհրաժեշտ պահանջները: Հոդվածում քննարկվել են ՀՀ գլխավոր դատախազության կողմից հաշտության առաջարկ ներկայացնելու լիազորության իրականացման հարցում վարույթում շահագրգռված անձանց իրավունքների ապահովման երաշխիքներ սահմանելու անհրաժեշտությունը և հայց հարուցելու հիմքերի ուսումնասիրությունը՝ հաշտության համաձայնություն կնքելով՝ մասնակի ավարտելու հնարավորությունը:

Հիմնական հետազոտություն

«Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» ՀՀ օրենքի¹ (այսուհետ՝ Օրենք) նորմերի համակարգային վերլուծությունը ցույց է տալիս, որ հայց հարուցելու հիմքերի ուսումնասիրության փուլում ենթադրյալ ապօրինի ծագում ունեցող գույքի առկայության բավարար հիմքերի հայտնաբերումը ենթադրում է ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարույթի մինչդատական փուլն ավարտելու երկու ձև: Մասնավորապես, առաջին դեպքում ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարույթի մինչդատական փուլն ավարտվում է հայց հարուցելու հիմքերի ուսումնասիրության փուլում հաշտության համաձայնագիր կնքելու միջոցով, որը նաև ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարույթը վերջնական ավարտելու հիմք է: Երկրորդ դեպքում, ուսումնասիրության վերջնական արդյունքներն ամփոփող եզրակացության հիման վրա իրավասու մարմինը կայացնում է ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման հայցադիմում դատարան ներկայացնելու վերաբերյալ որոշում, որի հիման վրա նախաձեռնվում է վարույթի դատական փուլը:

Նշված եզրահանգման համար հիմք է հանդիսանում Օրենքի 18-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ ենթակետը, որով սահմանվում են այն որոշումները, որոնք իրավասու մարմինը կայացնում է ապօրինի ծագում ունեցող գույքի առկայությունը հաստատվելու դեպքում ուսումնասիրության արդյունքները վերջնական ամփոփող եզրակացության հիման վրա, դրանք են՝ ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման հայց դատարան ներկայացնելու կամ հաշտության համաձայնություն կնքելու մասին որոշումները:

Առաջին հայացքից ուսումնասիրությունն ավարտելու երկու ինքնուրույն ձևերն օժտված չեն փոխադարձ կապով, և իրավասու մարմինը, օգտվելով Օրենքով իրեն տրված հայեցողությունից, իրավասու է քննարկել ուսումնասիրությունը հաշտության համաձայնություն կնքելով ավարտելու հնարավորությունը կամ փոխարենը ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման հայց ներկայացնելու դատարան: Մինչդեռ գտնում ենք, որ ուսումնասիրության փուլում հաշտության համաձայնագրի կնքումը պետք է հանդիսանա ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարույթը ավարտելու առաջնային ձևը, որի հնարավորությունը սպառելուց հետո միայն իրավասու մարմինը իրավասու լինի ապօրինի ծագում ունեցող գույքի

¹ Տե՛ս Հայաստանի Հանրապետության օրենքը ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին ընդունվել է 16 ապրիլի 2020 թ., ՀՀՊՏ 2020.05.13/50(1605):

բռնագանձման հայց ներկայացնել դատարան:

Այսպես, Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարույթը կարող է ավարտվել հաշտության համաձայնությամբ, եթե անձը, որին պատկանում է ապօրինի ծագում ունեցող գույքը, ներկայացնում է սույն օրենքով նախատեսված հայտարարագիր:

Վերոնշյալ կարգավորմամբ նախատեսված է հաշտության համաձայնագիր կնքելու՝ Օրենքով նախատեսված հնարավորությունը, սակայն մասնավորեցված չէ իրավասու մարմնի կողմից հաշտության առաջարկ ներկայացնելու կարգը և դեպքերը: Չնայած հաշտության առաջարկի ներկայացումը դիտարկվում է իրավասու մարմնի հայեցողական լիազորությունը, այնուամենայնիվ, այդ հայեցողության իրականացումը սահմանափակված է իրավաչափության պայմաններով, որի ապահովումն ուսումնասիրության արդյունքներով շահագրգիռ անձանց իրավունքների պաշտպանության առանցքային երաշխիքներից է²:

Անդրադառնալով «հայեցողություն» հասկացության բովանդակության բացահայտմանը՝ ՀՀ Վճռաբեկ դատարանը նշել է, որ «հայեցողությունը» թույլատրելի իրավաչափ վարքագծի ընտրության կամ դրսևորման հնարավորությունն է: Որպես ուղենիշ ընդունելով իրավունքի գերակայության սկզբունքը, մարդու և քաղաքացու՝ Սահմանադրությամբ ամրագրված իրավունքների և ազատությունների պաշտպանության գաղափարը՝ ՀՀ Վճռաբեկ դատարանը գտել է, որ «հայեցողություն» եզրույթի ներքո պետք է նկատի ունենալ նպատակահարմարության և օրինականության ողջամիտ հարաբերակցություն³:

Նշված դիրքորոշումը ևս հիմք է տալիս փաստելու, որ պետական մարմիններին վերապահված լիազորությունները բխում են օրենքից և այդ լիազորությունների իրացման իրավաչափ նպատակից: Ուսումնասիրությունը հաշտության համաձայնագիր կնքելով ավարտելով՝ շահագրգիռ անձի իրավունքին պետք է համապատասխանի նաև պետության պոզիտիվ պարտականությունը օրենսդրությամբ սահմանված պահանջներին համապատասխան ապահովել այդ իրավունքի իրացումը: Պետական մարմինները չեն կարող գործել կամայականորեն. նրանց գործունեությունը սահմանված է օրենքով, ինչը նաև նշանակում է, որ պաշտոնատար անձի կողմից համապատասխան վարքագիծ դրսևորելու կարողությունը և այդ վարքագծի շրջանակում կատարվող գործողությունների ծավալը ևս որոշվում են նյութաիրավական և դատավարական համապատասխան նորմերով⁴: Չնայած իրավասու մարմնի կողմից նախաձեռնված ուսումնասիրությանը չի վերագրվում վարչաիրավական բնույթ, այդուհանդերձ ուսումնասիրություն իրականացնելիս՝ իրավասու մարմինը գործում է պետության անունից և Օրենքով իրեն վերապահված լիազորությունների շրջանակում, որոնց իրականացումը ուղեկցվում է վարույթում շահագրգռված անձանց իրավունքների միջամտությամբ: Հետևաբար, կարող ենք արձանագրել, որ իրավասու մարմնի՝ ուսումնասիրության արդյունքներով հաշտության առաջարկ ներկայացնելու իրավունքը պայմանավորված է վարույթով շահագրգռված անձանց իրավունքների ապահովման երաշխիքներով:

Նշվածը, սակայն, չի ենթադրում նաև յուրաքանչյուր գործով հավասար մոտեցման ցուցաբերում, քանի որ վարույթով ձեռք բերված փաստակազմը, այդ թվում՝ գույքի ձեռքբերման

² Տե՛ս Հովհաննիսյան Վ., Թորոյան Գ., Զարգարյան Հ., Շահնազարյան Հ., Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարույթը որպես քաղաքացիական դատավարության տարբերակված ձև, Մաս 1, Զարգացման իրավունքի միջազգային կազմակերպություն, Երևան, 2023, էջ 338:

³ Տե՛ս ՀՀ Վճռաբեկ դատարանի թիվ ԵՇԴ/3780/02/14 քաղաքացիական գործով 27.11.2015 թվականի որոշումը:

⁴ Տե՛ս Վենետիկի հանձնաժողովի՝ 106-րդ լիազումար նիստում (Վենետիկ, 2016 թվականի մարտի 11-12) ընդունված՝ «Իրավունքի գերակայության հսկիչ ցանկը», CDL-AD(2016)007, էջ 11:

և ապօրինի եկամուտների աղբյուրները տարբերվում են, ուստի իրավասու մարմնի կողմից ներկայացված առաջարկը առանձին վարույթներով կարող է տարբերվել՝ որպես ուղենիշ հիմք ընդունելով Օրենքով սահմանված՝ պետությանը փոխանցվելիք ապօրինի ծագում ունեցող գույքի արժեքի նվազագույն շեմը: Մասնավորապես՝ Օրենքի 19-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված է, որ հաշտության համաձայնությամբ չի կարող սահմանվել հոգուտ Հայաստանի Հանրապետության գույքի փոխանցման ավելի ցածր շեմ, քան ուսումնասիրության արդյունքների վերաբերյալ եզրակացության տվյալներով ենթադրյալ ապօրինի ծագում ունեցող գույքի արժեքի 75 տոկոսը:

Ուստի գտնում ենք, որ իրավասու մարմինը Օրենքով իրեն վերապահված հայեցողությունը կարող է իրացնել հաշտության համաձայնագրով պետությանը փոխանցվելիք ապօրինի ծագում ունեցող գույքի՝ Օրենքով սահմանված նվազագույն արժեքի և բռնագանձվող գույքի ամբողջական արժեքի սահմաններում հաշտության առաջարկի պայմանները որոշելով:

Բացի այդ, հարկ ենք համարում ընդգծել, որ իրավասու մարմնի կողմից հաշտության առաջարկ ներկայացնելու լիազորությունը բացարձակ իմաստով պետք չէ ընկալել նաև այն դեպքում, երբ վարույթով շահագրգռված անձինք փաստացի անգործություն են ցուցաբերում և որևէ հետաքրքրություն չեն ցուցաբերում վարույթի նկատմամբ: Նման իրավիճակներ հնարավոր են, երբ պատշաճ ծանուցված վարույթով շահագրգռված անձինք իրենց վերաբերյալ կատարված ուսումնասիրության նյութերին ծանոթանալու համար վարույթ իրականացնող մարմին չեն ներկայանում, այսինքն՝ ցուցաբերելով անգործություն՝ այդ անձինք փաստացի հրաժարվում են վեճը լուծելու արտադատական մեխանիզմից:

Միևնույն ժամանակ, ուշադրության է արժանի նաև այն հանգամանքը, որ ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարույթը ուսումնասիրության փուլում ավարտելը խրախուսելուն է ուղղված նաև Օրենքով նախատեսված այն կարգավորումը, որով ուսումնասիրության փուլում հաշտության համաձայնագիր հնարավոր է կնքել ուսումնասիրությամբ հայտնաբերված ապօրինի ծագում ունեցող գույքի առնվազն 75 տոկոսի չափով:

Այսպես՝ հաշտության համաձայնագիր կնքվելու դեպքում ենթադրյալ ապօրինի ծագում ունեցող գույքի սեփականատերը անհատույց կարգով Հայաստանի Հանրապետությանն է փոխանցում այդ գույքի նկատմամբ սեփականության իրավունքը, ինչը նշանակում է, որ կողմերը իրենց կամահայտնությամբ կարգավորում են վիճելի իրավահարաբերությունը՝ սահմանելով փոխադարձ իրավունքներն ու պարտականությունները: Ավելին, վերանում է դատական կարգով գույքի ապօրինի ծագումն ապացուցելու և դատական ներկայացուցչություն իրականացնելու անհրաժեշտությունը, ինչի շնորհիվ պետությունը խնայում է զգալի ռեսուրսներ: Դրանից զատ՝ հաշտության համաձայնագիր կնքվելով ապօրինի ծագում ունեցող գույքը պատասխանողի կամահայտնությամբ անհատույց փոխանցվում է պետությանը ի սեփականություն, ինչը նշանակում է, որ նշված իրավական ընթացակարգը հետագայում վիճարկելու հնարավորությունը գույքի բռնագանձման վճիռը վիճարկելու համեմատ հասցվում է նվազագույնի:

Անհրաժեշտ է նաև նկատի ունենալ, որ ուսումնասիրության փուլը հաշտության համաձայնության կնքմամբ ավարտելու առաջնահերթ հնարավորությունը հանդիսանում է նաև ուսումնասիրությամբ շահագրգռո անձանց իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների ապահովման երաշխիքը:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» Եվրոպական կոնվենցիայի⁵ 13-րդ հոդվածը սահմանում է անձի՝ պետական մարմինների առջև

⁵ Տե՛ս «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» Եվրոպական կոնվենցիա,

իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունքը: Ներպետական օրենսդրությամբ սահմանված ընթացակարգերի, այդ թվում՝ ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարույթը հաշտության համաձայնության հիման վրա ավարտելու կառուցակարգի կիրառման արդյունավետությունը և կոնվենցիոն պահանջներին համապատասխանությունն ապահովելու պատասխանատվությունը կրում է պետությունը:

Տեսակետ կարող է լինել, որ ինքնին շահագրգիռ անձի՝ հաշտության համաձայնագիր կնքելու իրավունքի իրացվելիությունը ուսումնասիրության փուլում չապահովվելու դեպքում վերջինս զրկված չէ դատական փուլում նույն պայմաններով հաշտության համաձայնագիր կնքելու հնարավորությունից, հետևաբար, իրավասու մարմնի կողմից հաշտության առաջարկ չներկայացնելը չի կարող դիտվել շահագրգիռ անձի իրավունքի խախտում: Այնինչ գտնում ենք, որ այն դեպքում, երբ Օրենքը սահմանում է հայտնաբերված ապօրինի ծագում ունեցող գույքը նախքան դատարան հայց ներկայացնելը հաշտության համաձայնագրով պետությանը փոխանցելու անձի իրավունքը, այդ իրավունքի իրացվելիության ապահովման երաշխիքները ևս պետք է սահմանվեն Օրենքով, իսկ ներկայիս կարգավորումների պարագայում իրավասու մարմինը ոչ միայն կարող է հանդես չգալ հաշտության առաջարկով, այլ նաև մերժել անձի կողմից Օրենքի կանոնների պահպանմամբ ներկայացված հաշտության առաջարկը:

Նշվածը վկայում է ուսումնասիրության փուլում ապօրինի ծագում ունեցող որակված գույքը հաշտության համաձայնագրի հիման վրա պետությանը անհատույց փոխանցելու անձի իրավունքի ապահովման օրենսդրական երաշխիքների բացակայության մասին, հետևաբար, ներպետական օրենսդրությունը չի նախատեսում իրավական պաշտպանության արդյունավետ միջոցներ: Որպես նշվածի հետևանք՝ ուսումնասիրության փուլում անձի՝ հաշտության համաձայնագիր կնքելու իրավունքը չապահովվելու և ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման հայց դատարան ներկայացվելու դեպքում անձը կրելու է գործի դատական քննության արդյունքում առաջացած դատական ծախսերը, որը անձը չէր կրի այն դեպքում, երբ վերջինիս հնարավորություն տրվեր ուսումնասիրության փուլում կնքել հաշտություն:

Ամփոփելով ողջ վերոգրյալը՝ գտնում ենք, որ հայց հարուցելու հիմքերի ուսումնասիրությունը հաշտության համաձայնագիր կնքելով ավարտելը պետք է հանդիսանա ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարույթը ավարտելու առաջնային ճևր, իսկ իրավասու մարմնի կողմից հաշտության առաջարկ ներկայացնելու՝ Օրենքով սահմանված հայեցողական լիազորության իրացումը սահմանափակված է իրավաչափության պայմաններով, որոնց ապահովումն ուսումնասիրության արդյունքներով շահագրգիռ անձանց իրավունքների պաշտպանության առանցքային երաշխիքներից է: Միաժամանակ, իրավասու մարմնի կողմից հաշտության առաջարկ ներկայացնելու՝ Օրենքով սահմանված հայեցողությունը կարող է դրսևորվել ապօրինի ծագում ունեցող գույքի արժեքի՝ Օրենքով սահմանված սահմանաչափ սահմաններում պետությանը փոխանցվելիք գույքի արժեքը որոշելու հարցում:

Հաշվի առնելով ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման իրավահարաբերությունների սուբյեկտային կազմը և հանրային շահը՝ ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման հայց հարուցելու հիմքերի ուսումնասիրության փուլում հաշտության համաձայնագրի բնույթը և կնքման կարգը առանձնահատուկ դրսևորում են ստանում:

Նախքան ուսումնասիրության փուլում կնքվող հաշտության համաձայնագրի առանձնահատկություններին անդրադառնալով՝ անհրաժեշտ ենք համարում քննարկել հաշտության համաձայնագրի բնույթը և տարրերը:

ընդունվել է 04.11.1950 թվականին, ՀՀՊՏ 2002.06.05/17(192), հոդ. 367:

ՀՀ Վճռաբեկ դատարանը, նախկինում կայացրած որոշմամբ անդրադառնալով դատական կարգով կնքված հաշտության համաձայնության բնույթին, ընդգծել է հաշտության համաձայնության միաժամանակ և դատավարական, և նյութաիրավական բնույթը՝ նշելով, որ հաշտության համաձայնություն կնքելը տնօրինչական դատավարական գործողություն է, որի միջոցով կողմերը տնօրինում են ինչպես իրենց նյութական, այնպես էլ՝ դատավարական իրավունքները: ՀՀ Վճռաբեկ դատարանը նշել է նաև, որ հաշտության համաձայնագրի կնքմամբ դատավարական իրավունքների տնօրինման արդյունքում դատավարության հետագա ընթացքը գործի վարույթի կարճմամբ դադարում է, իսկ համաձայնագրի կողմերը, վիճելի իրավահարաբերությունը փոփոխության ենթարկելով, տնօրինում են իրենց նյութական իրավունքները⁶:

Վերոնշյալ դատողության լույսի ներքո ակնհայտ է դառնում հաշտության համաձայնության երկակի բնույթը, քանի որ մի կողմից բովանդակում է վեճի կարգավորմանն ուղղված վեճի կողմերի փոխադարձ պարտավորությունները, իսկ մյուս կողմից՝ վեճը դատական կարգով լուծելու իրավունքից հրաժարումը: Ընդ որում, հաշտության համաձայնությունը այլ գործարքներից տարբերվում է փոխզիջման առկայությամբ:

ՀՀ Վճռաբեկ դատարանը քննարկվող որոշմամբ ընդգծել է նաև, որ հաշտության համաձայնությունը կողմերի միջև փոխզիջման արդյունքում ձեռք բերված պայմանավորվածություն է՝ համաձայնագրի կնքման պարտադիր պայման համարելով փոխզիջումը: Չնայած ՀՀ օրենսդրությամբ սահմանված չեն հաշտության համաձայնագրերի էական պայմանները, սակայն տեսության մեջ ընդունված և տարբեր իրավական համակարգերում ամրագրված մոտեցումներից բխում է, որ հաշտության համաձայնությունը ենթադրում է պահանջի ամբողջությամբ կամ մասնակի ընդունում կամ պարտքի ներում:

Որպես ասվածի օրինակ՝ Ամերիկայի Միացյալ Նահանգների օրենսդրության համաձայն՝ հաշտության համաձայնագրի նախապայման է դիտվում փոխզիջումների և փոխադարձ պահանջների ընդունումը: Այսինքն՝ վեճի մի կողմը մյուս կողմին փոխանցում է կամ պարտավորվում է փոխանցել գույք կամ գույքային իրավունք կամ պարտավորվում է ձեռնպահ մնալ որոշակի գործողությունների կատարումից հայցապահանջից հրաժարվելու դիմաց⁷:

Հարկ ենք համարում հավելել նաև, որ չնայած ՀՀ Վճռաբեկ դատարանն առանձնացրել է միայն փոխզիջման տարրը, սակայն այլ որոշումներով հայտնած դիրքորոշումների վերլուծությունից բխում է, որ հաշտության համաձայնագրի կնքումը կարող է ենթադրել պայմանների ընդունում: Մասնավորապես, ՀՀ Վճռաբեկ դատարանը, անդրադառնալով հայցից հրաժարվելու ինստիտուտին, նշել է, որ հայցից հրաժարումը ենթադրում է հայցվորի կողմից պատասխանողին ուղղված նյութաիրավական պահանջից և իրավունքի պաշտպանության դատավարական միջոցից անվերապահորեն, առանց որևէ պայմանի հրաժարում: Այն դեպքերում, երբ դատավարության մասնակիցը հայցից չի հրաժարվել անվերապահորեն, դատարանը գտել է, որ հայցից հրաժարում չի կարող ընդունվել, քանի որ այն հակասում է հայցից հրաժարվելու ինստիտուտի էությանը⁸:

Ի տարբերություն հայցից հրաժարվելու կամ պահանջն ընդունելու դատավարական գործողությունների, հաշտության համաձայնագիրը հիմնված է կողմերի փոխադարձ կամաարտահայտության վրա⁹: Հետևաբար, կարող ենք եզրահանգել, որ պայմանների ընդունումը և,

⁶ Տե՛ս թիվ ԼԴ/0039/04/14 քաղաքացիական գործով ՀՀ Վճռաբեկ դատարանի 22.07.2016 թ. որոշումը:

⁷ Տե՛ս Cohen v. Sabin, 307 A.2d 845 (Pa. 1973), in: Business Law, էջ 23:

⁸ Տե՛ս թիվ ԵԿԴ/0462/02/08 քաղաքացիական գործով ՀՀ Վճռաբեկ դատարանի՝ 19.10.2012 թ. որոշումը:

⁹ Տե՛ս *Воронков Г. В.*, Определения суда первой инстанции в советском гражданском процессе. Саратов. Саратовский

ըստ այդմ, դատավարական իրավունքների իրականացումից հրաժարումն առանձնահատուկ են հաշտության համաձայնությամբ կարգավորվող հարաբերություններին:

Հաշտության համաձայնագրի քաղաքացիաիրավական բնույթն առավելապես հանգում է նրան, որ քաղաքացիական շրջանառության մասնակիցները համաձայնագրի պայմանները որոշում են փոխադարձ կամարտահայտությամբ, պահպանելով օրենսդրությամբ սահմանված իմպերատիվ կանոնները և այլ անձանց՝ Օրենքով պաշտպանվող իրավունքները¹⁰: Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարույթը, առնչվելով անձի՝ սահմանադրորեն երաշխավորված սեփականության իրավունքին, ենթադրում է Օրենքով հստակ կանոնակարգում: Իրավասու մարմինը, քննարկվող իրավահարաբերություններում հանդես գալով պետության անունից, օգտվում է Օրենքով սահմանված լայն գործիքակազմից, իսկ հանրային և մասնավոր շահերի հավասարակշռման մասին խոսք կարող է լինել միայն վարույթով շահագրգիռ անձանց համարժեք ընթացակարգային երաշխիքներ տրամադրելու դեպքում: Հետևաբար, ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարույթը հաշտության համաձայնություն կնքելով ավարտելու կարգը, այդ թվում՝ հաշտության համաձայնության պայմանները, պետք է հստակ ամրագրվեն Օրենքով:

Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարույթը կարող է ավարտվել հաշտության համաձայնությամբ, եթե անձը, որին պատկանում է ապօրինի ծագում ունեցող գույքը, ներկայացնում է սույն օրենքով նախատեսված հայտարարագիր:

Վերոնշյալ կարգավորումը նախատեսում է հաշտության համաձայնագիր կնքելու հնարավորությունը այն դեպքում, երբ անձի կողմից Օրենքով նախատեսված հայտարարագիր է ներկայացվում, սակայն չի մասնավորեցվում հաշտության առաջարկի նախաձեռնությամբ հանդես գալու կարգը և պայմանները: Օրենքի 18-րդ հոդվածի 3-րդ մասը ՀՀ գլխավոր դատախազին լիազորել է հրամանով կարգավորել հաշտության համաձայնագիր կնքելու կարգը: Վերոնշյալ իրավակարգավորմամբ ղեկավարվելով՝ ՀՀ գլխավոր դատախազի կողմից 07.04.2021 թվականին ընդունվել է «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարույթի շրջանակներում կնքվող հաշտության համաձայնության կնքման կարգը և օրինակելի ձևը սահմանելու մասին» թիվ 40 հրամանը¹¹ (այսուհետ՝ Հրաման): Նշված հրամանով կարգավորվել են որոշ ընթացակարգային հարցեր, ինչպիսիք են հաշտության առաջարկ ներկայացնելու կարգը, հաշտության համաձայնության պարտադիր պայմանները, հաշտության համաձայնագիրը ստորագրելու համար իրավասու անձանց շրջանակը, հաշտության համաձայնագիրը դատարանի հաստատմանը ներկայացնելու կարգը և այլ հարցեր:

Արժանահիշատակ է, որ Հրամանով կարգավորվել են նաև այնպիսի հարցեր, որոնք ոչ թե մասնավորեցնում են հաշտության համաձայնագիր կնքելու կարգը, այլ վերաբերում են հաշտության համաձայնության վավերության պայմաններին, կիրառված հայցի ապահովման միջոցների գործողության ժամկետին, հայցվորի նախաձեռնությամբ կիրառվելիք սահմանափակումներին: Մասնավորապես՝ Հրամանով հաստատված Օրինակելի ձևի 3.5 կետով սահմանվել է, որ եթե համաձայնության որևէ դրույթ ճանաչվում է անվավեր, ապա այդպիսի անվավերությունը չի հանգեցնում համաձայնության որևէ այլ դրույթի վավերության վրա, եթե համաձայնությունը կարող էր կնքվել նաև առանց անվավեր մասը դրա մեջ ներառելու:

юридический институт им. Д.И. Курского, 1967, էջ 51, *Черникова О.С.*, Мировое соглашение как процедура в арбитражном процессе: дисс. ... канд. юрид. наук: 12.00.15 / Черникова Ольга Сергеевна. Саратов. 2006. էջ 57:

¹⁰ Տե՛ս *Покровский И. А.*, Основные проблемы гражданского права. М., Статут, 2016, էջ 243:

¹¹ Հասանելի է հետևյալ հղմամբ՝ https://www.prosecutor.am/storage/orders/orders_458_1685023080.pdf

Մեր գնահատմամբ՝ նշված կարգավորումը ոչ միայն չի բխում ՀՀ գլխավոր դատախազին վերապահված լիազորությունների շրջանակից, այլև Օրենքով հաշտության համաձայնագրի դատական կարգով հաստատման իրավական ռեժիմի տրամաբանությունից:

Օրենքը որդեգրել է արտադատական կարգով կնքված հաշտության համաձայնագրերի դատական կարգով հաստատման կառուցակարգը, ինչը նշանակում է, որ հաշտության համաձայնությունը հաստատող դատարանի վճիռն իր դատավարական նշանակությամբ և հետևանքներով հավասարեցված է գործն ըստ էության լուծող վճռին, որի կամավոր չկատարումը հանգեցնում է դատական ակտի հարկադիր կատարման: Հետևաբար, հաշտության համաձայնագիրը դատարանի կողմից հաստատվելու դեպքում խոսք չի կարող լինել հաշտության համաձայնագրի անվավերության մասին, քանի որ վերջինս ներառված է դատարանի կայացրած վճռի բովանդակության մեջ, իսկ գործող իրավակարգավորումների պարագայում օրինական ուժի մեջ մտնելուց հետո վճռի վերանայումը հնարավոր է բացառապես նոր կամ նոր երևան եկած հանգամանքներով դատական ակտերի վերանայման վարույթի շրջանակներում: Այսինքն՝ դատարանի կողմից հաշտության համաձայնագիրը հաստատելու մասին վճիռը օրինական ուժի մեջ մտնելուց հետո խոսք չի կարող լինել գործարքի անվավերության հետևանքների մասին, իսկ դատարանի վճիռը կարող է վերանայվել բողոք բերած անձին և դատարանին համաձայնագրի անվավերությանը հանգեցնող փաստը հայտնի չլինելու և դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելուց հետո բացահայտվելու դեպքում¹²:

Ակնհայտ է, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով¹³ (այսուհետ՝ Օրենսգրք) կարգավորման ենթակա և արդեն իսկ կարգավորված իրավահարաբերությունը համապատասխան լիազորող նորմի բացակայության պայմաններում ՀՀ գլխավոր դատախազի հրամանով չի կարող կարգավորվել, ուստի հանգում ենք, որ Հրամանով կարգավորման ենթակա իրավահարաբերությունը դուրս է եկել «կարգ» եզրույթի շրջանակից:

Բացի դրանից՝ Օրինակելի ձևի 3.9 կետով սահմանվել է, որ կիրառված հայցի ապահովման միջոցները ենթակա չեն վերացման մինչև վճռի կատարումը: Նախ և առաջ, տվյալ դեպքում անհրաժեշտ էր հստակեցնել, որ նշված պայմանը գործում է գործի դատական քննության փուլում հաշտության համաձայնագրի կնքվելու դեպքում, քանի որ հայցի ապահովման միջոցները կարող են գործել իրավասու մարմնի կողմից դատարան ներկայացված հայցադիմումը վարույթ ընդունելու դեպքում, իսկ ուսումնասիրության փուլում կարող են կիրառված լինել ոչ թե հայցի ապահովման, այլ հայցի նախնական ապահովման միջոցներ: Երկրորդ, ըստ Օրենսգրքի 193-րդ հոդվածի 2-րդ մասի՝ գործի վարույթը հաշտության համաձայնությամբ ավարտելու դեպքում առաջին ատյանի դատարանը վճռով վերացնում է հայցի ապահովման միջոցները և բաշխում է դատական ծախսերը, եթե այլ բան սահմանված չէ հաշտության համաձայնությամբ: Ինչ վերաբերում է հայցի նախնական ապահովման միջոցների առկայությանը, ապա Օրենքի 19-րդ հոդվածի 5-րդ մասը սահմանում է, որ եթե կիրառված հայցի նախնական ապահովման միջոցների գործողության ժամկետն սպառվում է մինչև հաշտության համաձայնությունը դատարանի կողմից հաստատելը, ապա դրանց գործողության ժամկետի ավարտը երկարաձգվում է մինչև դատարանի վճռի կայացման հաջորդ օրը:

Վերոգրյալից հետևում է, որ հայցի (նախնական) ապահովման միջոցների պահպանման հարցը օրենսդրությամբ արդեն իսկ կարգավորված է, ուստի Հրամանով այդ հարցի տարբե-

¹² Տե՛ս *Резуненко А. Н.*, Пересмотр судебных актов, вступивших в законную силу, по вновь открывшимся обстоятельствам как стадия гражданского процесса. Дис. канд. юрид. наук, Волгоград, 2001, էջ 41:

¹³ Տե՛ս Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքը, ընդունվել է 2018թ. փետրվարի 9-ին, ՀՀՊՏ 2018.03.05/16(1374), հոդված 1, 2.1 մաս:

րակված կարգավորումը ևս չի բխում ՀՀ գլխավոր դատախազին վերապահված լիազորությունից: Հատկանշական է, որ ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարույթի դատական փուլում հաշտության համաձայնագրի կնքման հիման վրա վճիռ կայացնելիս դատարանները առաջնորդվում են Օրենսգրքի վկայակոչված դրույթով և վճռով վերացնում են կիրառված հայցի ապահովման միջոցները¹⁴:

Հաշվի առնելով վերոշարադրյալը՝ գտնում ենք, որ հաշտության համաձայնագիրը կնքելու կարգ սահմանելու ՀՀ գլխավոր դատախազի լիազորությունը սահմանափակված է հաշտության համաձայնագրի կնքման ընթացակարգը սահմանելով, իսկ նշված լիազորության իրացումը պետք է հիմնված լինի Օրենքի վրա և չհակասի վերջինիս: Հաշտության համաձայնագրի կնքման ընթացակարգի նախատեսումը ենթադրում է իրավասու մարմնի կողմից հաշտության առաջարկ ներկայացնելու ժամկետների և կարգի, առաջարկ սրացած անձանց կողմից առաջարկի պատասխան ներկայացնելու ժամկետի սահմանումը: Մինչդեռ հաշտության համաձայնագրի՝ ուժի մեջ մտնելու կարգի, վավերության պայմանների սահմանումը դուրս է ՀՀ գլխավոր դատախազի լիազորությունների շրջանակից և պետք է նախատեսվի Օրենքով, ինչպես նաև ուսումնասիրության փուլում կնքված հաշտության համաձայնագիրը հաստատելու հարուկ վարույթ Օրենսգրքով նախատեսելու կարգով:

Ինչպես նշեցինք, հաշտության համաձայնագրով պետությանը փոխանցվելիք ապօրինի ծագում ունեցող գույքի արժեքի որոշման հայեցողությունը սահմանափակված է: Մասնավորապես՝ հաշտության համաձայնություն կարող է կնքվել ուսումնասիրության արդյունքների վերաբերյալ եզրակացության տվյալներով ենթադրյալ ապօրինի ծագում ունեցող գույքի արժեքի առնվազն 75 տոկոսի չափով:

Սույն իմպերատիվ կանոնը գործնականում կարող է խնդրահարույց լինել, քանի որ հաշտության համաձայնություն կարող է կնքվել վարույթի տարբեր փուլերում, իսկ համաձայնագրով փոխանցվող գույքի արժեքի նվազագույն չափը որոշ դեպքերում չի կարող արտացոլվել ուսումնասիրության արդյունքների վերաբերյալ եզրակացության տվյալների հիման վրա:

Առաջին հերթին, Օրենքը չի հստակեցնում հաշտության առաջարկ ներկայացնելու ժամանակը, իսկ ըստ Հրամանի հավելված 1-ի 4-րդ կետի՝ հաշտության համաձայնագիր կնքելու առաջարկ կարող է ներկայացվել ցանկացած պահի, սակայն հաշտության համաձայնություն կարող է կնքվել ուսումնասիրության արդյունքների վերջնական ամփոփումից և եզրակացության կազմումից հետո: Ստացվում է, որ հաշտության առաջարկ կարող է ներկայացվել ավելի վաղ քան ուսումնասիրության արդյունքների վերջնական եզրակացության կազմումը: Նման պարագայում հաշվի չի առնվում այն դեպքը, երբ եզրակացության արդյունքներով հայտնաբերված ապօրինի գույքի ծավալը կարող է նվազել, որը, կախված ապացույցների ներկայացման ժամանակից, կարող է լրացուցիչ ամրագրում չստանալ ուսումնասիրության արդյունքներով կազմված եզրակացությամբ: Ուստի ստացվում է, որ իրավասու մարմինը, սահմանափակված լինելով եզրակացությամբ ամրագրված տվյալներով ենթադրյալ ապօրինի ծագում ունեցող գույքի արժեքի 75 տոկոսը գերազանցող չափով հաշտության համաձայնագիր կնքելու պահանջով, չի կարողանա օրինական եկամուտներով հիմնավորված գույքի արժեքը նվազեցնել հաշտության համաձայնագրով պետությանը փոխանցվելիք գույքի ցանկից, որի պատճառով կողմերի միջև հաշտություն ձեռք չի բերվի¹⁵:

¹⁴ Տես թիվ ՀԿԴ/0066/02/23 հակակոռուպցիոն քաղաքացիական գործով ՀՀ հակակոռուպցիոն դատարանի՝ 18.10.2023 թվականի վճիռը, թիվ ՀԿԴ/0158/02/23 հակակոռուպցիոն քաղաքացիական գործով ՀՀ հակակոռուպցիոն դատարանի՝ 31.08.2023 թվականի վճիռը:

¹⁵ Տես Հովհաննիսյան Վ., Թորոսյան Գ., Զարգարյան Հ., Շահնազարյան Հ., Ապօրինի ծագում ունեցող գույքի

Երկրորդ, համաձայնագրով փոխանցվելիք գույքի արժեքի նվազագույն շեմի օրենսդրական պահանջը գործում է նաև գործի դատական քննության փուլում կնքվող հաշտության համաձայնագրերի դեպքում և դատարանը, հաշտության համաձայնագիրը հաստատելիս, պետք է հավաստիանա, որ ներկայացված հաշտության համաձայնությամբ սահմանված չէ գույքի փոխանցման ավելի ցածր չափ, քան ուսումնասիրության արդյունքների վերաբերյալ եզրակացության տվյալներով ենթադրյալ ապօրինի ծագում ունեցող գույքի արժեքի 75 տոկոսն է: Սակայն բացառված չեն դեպքերը, երբ գործի քննության ընթացքում պատասխանող ներկայացնի ապացույցներ, որոնցով հերքվում է գույքի մի մասի ապօրինի ծագումը և հայցվորը այդ մասով հրաժարվում է հայցապահանջից, իսկ մնացած պահանջների վերաբերյալ կողմերի միջև հաշտություն է կնքվում: Նման պարագայում հաշտության համաձայնագրով փոխանցվելիք գույքի արժեքը ուսումնասիրության արդյունքների վերաբերյալ եզրակացության տվյալներով որոշելը կխախտի պատասխանողի իրավունքը և չի համընկնի ներկայացված հայցապահանջի հետ, իսկ նվազեցված հայցապահանջի հիման վրա հաշտության կնքումը կարող է դիտարկվել Օրենքի պահանջի խախտում և հանգեցնել համաձայնագրի հաստատումը մերժելուն:

Հաշվի առնելով վերոգրյալ հիմնավորումները՝ գտնում ենք, որ հաշտության համաձայնագրով պետությանը փոխանցվելիք ապօրինի ծագում ունեցող գույքի արժեքի նվազագույն շեմը սահմանելիս Օրենքով պետք է հիմք ընդունվի ոչ թե ուսումնասիրության արդյունքների վերաբերյալ եզրակացության տվյալներով սահմանված գույքի արժեքը, այլ հաշտության համաձայնությունը կնքելու պահին անձի օրինական եկամուտներով չհիմնավորվող գույքի արժեքը:

Անդրադառնալով ուսումնասիրության փուլում հաշտության համաձայնագրի իրավական գործողության մեջ մտնելու հարցին՝ հարկ ենք համարում նշել, որ Օրենքով նախատեսված է ուսումնասիրության փուլում կնքվող հաշտության համաձայնագիրը կողմերի համատեղ ստորագրված դիմումով դատարանի հաստատմանը ներկայացնելու ընթացակարգը: Չնայած արտադատական կարգով կնքվող հաշտության համաձայնագրի հիման վրա ևս ապօրինի ծագում ունեցող գույքը կարող է անհատույց փոխանցվել Հայաստանի Հանրապետությանը, այդուհանդերձ, համաձայնագրի դատական կարգով հաստատումը ապահովում է համաձայնագրով սահմանված պարտավորությունների նկատմամբ պետական հարկադրանքի կիրառելիության հնարավորությունը, քանի որ համաձայնագիրը հաստատելու վճիռ կայացնելու դեպքում այն կամավոր չկատարելու դեպքում ենթակա է հարկադիր կատարման:

Մտահոգություն է առաջացնում արտադատական կարգով կնքված համաձայնագիրը դատարանի հաստատմանը ներկայացնելու ընթացակարգը այն առումով, որ Օրենսգրքով սահմանված չէ ուսումնասիրության փուլում կնքված հաշտության համաձայնագրերը հաստատելու վարույթը և, ըստ այդմ, այդ գործերի քննության տարբերակված կանոնները:

Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման հայցի հիման վրա հարուցված գործերից մեկով գործի դատական քննության ընթացքում հաշտության համաձայնությունը հաստատելու վճռով դատարանը նշել է հետևյալը. «ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 151-րդ հոդվածից բացի, ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարույթում կնքված հաշտության համաձայնությունը պետք է համապատասխանի նաև «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» ՀՀ օրենքի պահանջներին, ըստ որոնց.

բռնագանձման վարույթը որպես քաղաքացիական դատավարության տարբերակված ձև, Մաս 1, Չարգացման իրավունքի միջազգային կազմակերպություն, Երևան, 2023, էջ 340:

1) ապօրինի ծագում ունեցող գույքը ենթակա է բռնագանձման, եթե ներկայացված ապացույցների գնահատմամբ դատարանը հանգում է հետևության, որ այդպիսի գույքի շուկայական արժեքը հայցի ներկայացման պահին գերազանցում է 50 միլիոն Հայաստանի Հանրապետության դրամը,

2) հաշտության համաձայնությամբ չի կարող սահմանվել հոգույր Հայաստանի Հանրապետության գույքի փոխանցման ավելի ցածր չափ, քան ուսումնասիրության արդյունքների վերաբերյալ եզրակացության փյալներով ենթադրյալ ապօրինի ծագում ունեցող գույքի արժեքի 75 տոկոսը,

3) հաշտության համաձայնությունը ձևակերպվում է գրավոր և համաձայնության կողմերի համատեղ ստորագրված դիմումով ներկայացվում է առաջին արյանի դատարանի հաստատմանը, դիմումին կցվում է հաշտության համաձայնության բնօրինակը»¹⁶:

Գտնում ենք, որ նշված պահանջները ենթակա են ստուգման ոչ միայն դատական փուլում հաշտության համաձայնություն կնքվելու դեպքում, այլ նաև արտադատական կարգով կնքված համաձայնագրերը դատարանի հաստատմանը ներկայացնելու վարույթում: Ավելին, գործի դատական քննության շրջանակներում հաշտության համաձայնագիրը հաստատվելու դեպքում գործի նյութերը, կողմերի պահանջներն ու առարկությունները դատարանին հասանելի են լինում, մինչդեռ ուսումնասիրության փուլում կնքված հաշտության դեպքում դատարանը հասանելիություն չի ունենում ուսումնասիրության նյութերին, ուստի արտադատական կարգով հաշտություն կնքվելու դեպքում դատարանին միայն հաշտության համաձայնագրի ներկայացումը չի կարող բավարար համարվել: Գտնում ենք, որ դիմումին կից պետք է ներկայացվեն նաև ուսումնասիրության արդյունքների վերջնական եզրակացությունը և հաշտության համաձայնություն կնքելու մասին իրավասու մարմնի որոշումը, որպեսզի դատարանը կարողանա պարզել վերը թվարկված պահանջները պահպանված լինելը:

Գործող օրենսդրությամբ նախատեսված չէ ուսումնասիրությունը հաշտության համաձայնագրի կնքմամբ մասնակի ավարտելու հնարավորությունը, չնայած այն հանգամանքին, որ ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մինչդատական փուլում հաշտության համաձայնագիրը կնքվում է արտադատական կարգով:

Հատկանշական է, որ հաշտության առնելով պայմանագրի ազատության քաղաքացիաիրավական սկզբունքը՝ ներպետական օրենսդրությամբ չի արգելվում արտադատական կարգով կնքված հաշտության համաձայնագրով վեճի մասնակի կարգավորելու հնարավորությունը: Այնուամենայնիվ, իրավասու մարմնին վերապահված լիազորությունների շրջանակի ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ երբ հավաքված նյութերով հնարավոր է ողջամտորեն եզրակացնել, որ առկա է Օրենքով նախատեսված կարգով բռնագանձման ենթակա ապօրինի ծագում ունեցող գույք, իրավասու մարմինը կայացնում է ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման հայց ներկայացնելու կամ հաշտության համաձայնություն կնքելու մասին որոշում: Այսինքն՝ Օրենքը չի նախատեսում ուսումնասիրությունը մասամբ ավարտելու և հաշտություն կնքելու կառուցակարգ:

Ինչ վերաբերում է գործի դատական քննության ընթացքում հաշտության համաձայնագիր կնքելուն, ապա քաղաքացիադատավարական օրենսդրությունը ուղղակիորեն չի նախատեսում գործը մի մասով առանձնացնելու և վարույթը մասամբ հաշտության համաձայնությամբ ավարտելու հնարավորություն: Չնայած Օրենսգրքի 151-րդ հոդվածի 6-րդ մասը սահմանում

¹⁶ Տես թիվ ՀԿԴ/0066/02/23 քաղաքացիական գործով ՀՀ հակակոռուպցիոն դատարանի՝ 18.10.2023 թվականի վճիռը:

է գործին մասնակցող անձանց մի մասի կողմից հաշտության համաձայնություն ձևակերպելու և ներկայացվելու դեպքում գործը տվյալ անձանց մասով առանձնացնելու և հաշտության համաձայնության հաստատմամբ գործը այդ մասով ավարտելու հնարավորություն, սակայն գտնում ենք, որ նշվածը վերաբերելի չէ նույն անձանց միջև առկա վեճը մասամբ հաշտության համաձայնություն կնքելով ավարտելու դեպքերին:

Այդուհանդերձ, ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերից մեկով գործի քննության շրջանակներում հայցապահանջների մի մասի վերաբերյալ հաշտություն ձեռք բերված լինելու և արտադատական կարգով հաշտության համաձայնագիր կնքված լինելու պայմաններում դատարանը քննվող գործից առանձնացրել է այդ մասը և քննել առանձին վարույթում, այնուհետև հաստատել է կողմերի ներկայացրած հաշտության համաձայնությունը¹⁷: Տվյալ որոշմամբ դատարանը որպես գործի վարույթը առանձնացնելու և առանձնացված մասով վճիռ կայացնելու հիմնավորում նշել է այն հանգամանքը, որ ձեռք բերված հաշտությունը վերաբերում է ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման պահանջով հայցի առարկային ոչ ամբողջությամբ, այլ՝ նշված գույքերի մասով: Այսինքն՝ կայացված վճռով ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարույթը մասնակի ավարտվել է կնքված հաշտության համաձայնությունը դատարանի կողմից հաստատելու հիմքով, սակայն տվյալ համաձայնությամբ կարգավորվել է ոչ թե պատասխանողների մի մասին վերաբերող վեճը, այլ հայցադիմումով պահանջվող գույքերի մի մասի վերաբերյալ առկա վեճը, իսկ հաշտություն կնքած պատասխանողների դեմ ներկայացրած մյուս պահանջների մասով գործի քննությունը ընդհանուր կարգով շարունակվել է:

Նշված պրակտիկան ևս վկայում է քննարկվող վարույթներով վեճը մասնակի կարգավորելու կառուցակարգ նախատեսելու անհրաժեշտությունը: Բացի այդ, բացառված չեն նման իրավիճակները ուսումնասիրության փուլում՝ նախքան դատարան հայց ներկայացնելը: Ներկայիս կարգավորումների պարագայում նման կառուցակարգ նախատեսված չէ ուսումնասիրության փուլում:

Կարծում ենք, որ հաշտության համաձայնագրի կնքմամբ ուսումնասիրությունը մասնակի ավարտելու կառուցակարգի ներդրումը կնպաստի դատարանում այդպիսի գործերի արդյունավետ և ողջամիտ ժամկետում քննությանը այն հիմնավորմամբ, որ գույքի որոշ մասի ապօրինի ծագման փաստը անձի կողմից ընդունվելու և դրա հիման վրա հաշտություն կնքվելու արդյունքում իրավասու մարմինը դատարան կներկայացնի ոչ թե հայտնաբերված գույքի ամբողջ ծավալի բռնագանձման հայց, այլ միայն գույքի այն մասի բռնագանձման հայցապահանջ, որի շուրջ համաձայնություն ձեռք չի բերվել, այնինչ նման ընթացակարգի բացակայության պայմաններում ուսումնասիրության փուլում հաշտությունների կնքման հնարավորությունը նվազում է:

Եզրակացություն

Ամփոփելով վերոշարադրյալը՝ եզրահանգում ենք.

1. Հայց հարուցելու հիմքերի ուսումնասիրությունը հաշտության համաձայնագիր կնքելով ավարտելը պետք է հանդիսանա ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարույթը ավարտելու առաջնային ձևը, իսկ իրավասու մարմնի կողմից հաշտության առաջարկ ներկայացնելու՝ Օրենքով սահմանված հայեցողական լիազորության իրացումը սահմանափակված

¹⁷ Տե՛ս թիվ ՀԿԴ/0018/02/22 քաղաքացիական գործով ՀՀ հակակոռուպցիոն դատարանի՝ 30.08.2023 թվականի որոշումը գործից մաս առանձնացնելու և առանձին վարույթում քննելու մասին

է իրավաչափության պայմաններով, որոնց ապահովումը ուսումնասիրության արդյունքներով շահագրգիռ անձանց իրավունքների պաշտպանության առանցքային երաշխիքներից է:

2. Իրավասու մարմնի կողմից հաշտության առաջարկ ներկայացնելու՝ Օրենքով սահմանված հայեցողությունը կարող է դրսևորվել ապօրինի ծագում ունեցող գույքի արժեքի՝ Օրենքով սահմանված սահմանաչափի սահմաններում պետությանը փոխանցվելիք գույքի արժեքը որոշելու հարցում:

3. Հաշտության համաձայնագրով պետությանը փոխանցվելիք ապօրինի ծագում ունեցող գույքի արժեքի նվազագույն շեմը որոշելիս հիմք է ընդունվում ուսումնասիրության արդյունքների վերաբերյալ եզրակացության տվյալներով ենթադրյալ ապօրինի ծագում ունեցող գույքի արժեքի 75 տոկոսը, այնինչ գտնում ենք, որ նվազագույն շեմը սահմանելու համար պետք է հիմք ընդունել ոչ թե ուսումնասիրության արդյունքների վերաբերյալ եզրակացության տվյալներով սահմանված գույքի արժեքը, այլ հաշտության համաձայնությունը կնքելու պահին անձի օրինական եկամուտներով չհիմնավորվող գույքի արժեքը:

4. Օրենքի ուսումնասիրությունից հետևում է, որ հաշտության համաձայնագրի կնքումը և դրա՝ դատական կարգով հաստատումը դիտվում է ուսումնասիրությունը ավարտելու հիմք, ինչից բխում է, որ նախատեսված չէ ուսումնասիրությունը մասնակի ավարտելու հնարավորություն այն դեպքում, երբ վիճելի գույքի մի մասը պետությանը անհատույց փոխանցելու վերաբերյալ կողմերը գալիս են համաձայնության: Վարույթի իրականացման արդյունավետությունից ելնելով՝ առաջարկվում է նախատեսել ուսումնասիրության փուլում հայտնաբերված ենթադրյալ ապօրինի ծագում ունեցող գույքի մի մասի վերաբերյալ հաշտության համաձայնություն կնքելու կառուցակարգը:

5. Հաշտության համաձայնագիր կնքելու կարգ սահմանելու՝ ՀՀ գլխավոր դատախազին Օրենքով վերապահված լիազորությունը ենթադրում է իրավասու մարմնի կողմից հաշտության առաջարկ ներկայացնելու ժամկետների և կարգի, առաջարկ ստացած անձանց կողմից առաջարկի պատասխան ներկայացնելու ժամկետի սահմանում, այնինչ հաշտության համաձայնագրի ուժի մեջ մտնելու կարգի և վավերության պայմանների սահմանումը դուրս է ՀՀ գլխավոր դատախազին վերապահված լիազորության շրջանակից և պետք է կարգավորվի Օրենքով:

Ամփոփագիր: Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարույթը, հանդիսանալով հանցավոր գործունեության արդյունքում ձեռք բերված գույքի բռնագանձման քաղաքացիադատավարական ընթացակարգ, նախատեսում է ոչ միայն դատարանի վճռով գույքի բռնագանձման, այլև հաշտության համաձայնագրի հիման վրա ապօրինի ծագում ունեցող գույքը պետությանը անհատույց փոխանցելու կառուցակարգ: Հոդվածում քննարկվել են իրավասու մարմնի կողմից ներկայացվող հաշտության առաջարկի պահանջները և չափանիշները, վեր են հանվել այն առանձնահատկությունները, որոնցով հաշտության համաձայնագրերը տարբերվում են այլ վարույթների շրջանակում կնքվող համաձայնագրերից՝ հաշվի առնելով իրավահարաբերության բնույթը և պետական շահը: Աշխատանքում կարևորվել է իրավասու մարմնի կողմից հաշտության առաջարկ ներկայացնելու լիազորության իրականացման հարցում վարույթում շահագրգռված անձանց իրավունքների երաշխիքների ապահովումը: Հոդվածում անդրադարձ է կատարվել ՀՀ գլխավոր դատախազի կողմից հաշտության համաձայնագիր կնքելու կարգը սահմանելու հրամանին և այդ կարգով լուծման ենթակա հարցերի շրջանակին: Առաջարկվել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով կարգավորել ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարույթի մինչդատական փուլում կնքված հաշտության համաձայնագիրը դատարանի կողմից հաստատելու հատուկ վարույթը, ինչպես նաև ներդնել ուսումնասիրության փուլը հաշտության համաձայնագիր կնքելով մասնակի ավարտելու հնարավորությունը: Կատարված առաջարկությունները միտված են նպաստելու ուսումնասիրության փուլը

հաշտությամբ ավարտելուն և ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման պահանջի վերաբերյալ հարուցված գործերի արդյունավետ դատական քննությանը:

Annotation: The procedure for the confiscation of property of illegal origin is a civil procedure designed to confiscate property acquired through criminal activity. It encompasses not only the confiscation of property through a court decision but also allows for the voluntary transfer of illegally obtained property to the state through a settlement agreement. This article explores the requirements and criteria for settlement offers, presented by the authorized body. It highlights the unique characteristics that differentiate settlement agreements from agreements reached in other legal proceedings, considering the nature of the legal relationship and the state's interest. The article emphasizes the importance of guaranteeing the rights of individuals involved in the proceedings in the context of submitting an agreement offer by the authorized body. It references the order of the General Prosecutor of RA that establishes the procedure for concluding a settlement agreement and defines the scope of issues to be addressed within this framework. The author suggests regulating a special procedure for court approval of prejudicial settlement agreements through the RA Civil Procedure Code. Additionally, the proposal includes introducing the possibility of partially concluding the investigative phase by reaching a settlement agreement. These suggestions aim to facilitate the amicable completion of the investigation phase and enhance the effectiveness of court proceedings related to the confiscation of property of illegal origin.

Аннотация: Производство по делу о конфискации приобретенного преступным путем имущества незаконного происхождения является гражданско-процессуальной процедурой и включает в себя не только конфискацию имущества по решению суда, но и допускает добровольную передачу незаконно полученного имущества государству посредством мирового соглашения. В данной статье исследуются требования и критерии к мировым предложениям, предъявляемым уполномоченным органом. В ней подчеркиваются особые критерии, которые отличают мировые соглашения от достигнутых в других разбирательствах соглашений, с учетом характера правоотношений и интересов государства. В статье подчеркивается важность обеспечения прав участвующих в деле лиц в контексте внесения предложения о заключении соглашения уполномоченным органом. В исследовании содержится ссылка на устанавливающий порядок заключения мирового соглашения и определяющий круг подлежащих разрешению в его рамках вопросов указ Генерального прокурора РА. Автор предлагает внести особый порядок утверждения судом досудебного мирового соглашения через Гражданский процессуальный кодекс РА. Кроме того, представленные в статье предложения включают также возможность частичного завершения следственной фазы путем достижения мирового соглашения. Предложения направлены на содействие мирному завершению этапа расследования и повышению эффективности судебных разбирательств, связанных с конфискацией имущества незаконного происхождения.

Բանալի բառեր - ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարույթ, հայց հարուցելու հիմքերի ուսումնասիրություն, շահագրգիռ անձ, իրավասու մարմին, առաջարկ, հայեցողություն, հաշտության համաձայնագիր, արտադատական կարգ, ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման հայց, իրավական պաշտպանության արդյունավետ միջոցներ:

Keywords: proceedings for confiscation of property of illegal origin, investigation of the grounds for filing a claim, interested person, authorized body, an offer, discretion, settlement agreement, extrajudicial order, claim for confiscation of property of illegal origin, effective means of legal protection.

Ключевые слова: производство по делу о конфискации имущества незаконного происхождения, расследование оснований для предъявления иска, заинтересованное лицо, уполномоченный орган, предложение, усмотрение, мировое соглашение, внесудебный порядок, иск о конфискации имущества незаконного происхождения, эффективные средства правовой защиты.

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

Իրավական ակտեր

1. Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիա:

2. ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրք:

3. «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» ՀՀ օրենք:

4. Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի՝ «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարույթի շրջանակներում կնքվող հաշտության համաձայնության կնքման կարգը և օրինակելի ձևը սահմանելու մասին» թիվ 40 հրաման:

Տեսական աղբյուրներ

5. **Հովհաննիսյան Վ., Թորոսյան Գ., Զարգարյան Հ., Շահնազարյան Հ.**, Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարույթը որպես քաղաքացիական դատավարության տարբերակված ձև, Մաս 1, Զարգացման իրավունքի միջազգային կազմակերպություն, Երևան, 2023:

6. Վենետիկի հանձնաժողովի՝ 106-րդ լիազույժար նիստում ընդունված՝ «Իրավունքի գերակայության հսկիչ ցանկը», CDL-AD(2016)007, (Վենետիկ, 2016 թվականի մարտի 11-12):

7. **Воронков Г. В.**, Определения суда первой инстанции в советском гражданском процессе. Саратов. Саратовский юридический институт им. Д.И. Курского, 1967:

8. **Покровский И. А.**, Основные проблемы гражданского права. М., Статут, 2016:

9. **Резуненко А. Н.** Пересмотр судебных актов, вступивших в законную силу, по вновь открывшимся обстоятельствам как стадия гражданского процесса. Дис. канд. юрид. наук, Волгоград, 2001:

10. **Черникова О. С.**, Мировое соглашение как процедура в арбитражном процессе: дисс. ... канд. юрид. наук: 12.00.15 / Черникова Ольга Сергеевна. Саратов. 2006:

11. Cohen v. Sabin, 307 A.2d 845 (Pa. 1973), in: Business Law:

Դատական պրակտիկա

12. թիվ ԵՇԴ/3780/02/14 քաղաքացիական գործով ՀՀ Վճռաբեկ դատարանի՝ 27.11.2015 թվականի որոշումը:

13. թիվ ԼԴ/0039/04/14 քաղաքացիական գործով ՀՀ Վճռաբեկ դատարանի՝ 22.07.2016 թ. որոշումը:

14. թիվ ԵԿԴ/0462/02/08 քաղաքացիական գործով ՀՀ Վճռաբեկ դատարանի՝ 19.10.2012 թ. որոշումը:

15. թիվ ՀԿԴ/0066/02/23 հակակոռուպցիոն քաղաքացիական գործով ՀՀ հակակոռուպցիոն դատարանի՝ 18.10.2023 թվականի վճիռը:

16. թիվ ՀԿԴ/0158/02/23 հակակոռուպցիոն քաղաքացիական գործով ՀՀ հակակոռուպցիոն դատարանի՝ 31.08.2023 թվականի վճիռը:

17. թիվ ՀԿԴ/0018/02/22 քաղաքացիական գործով ՀՀ հակակոռուպցիոն դատարանի՝ 30.08.2023 թվականի որոշումը գործից մաս առանձնացնելու և առանձին վարույթում քննելու մասին:

Խաչատրյան Մ. - ԵՊՀ քաղաքացիական դատավարության ամբիոնի ասպիրանտ, դասախոս, էլիասցե՝ merriekhachatryan@gmail.com:

Ներկայացվել է խմբագրություն 18.02.2024 թ., տրվել է գրախոսության 18.02.2024 թ., երաշխավորվել են ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի քաղաքացիական դատավարության ամբիոնի վարիչ, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Վ. Հովհաննիսյանի և ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի քաղաքացիական դատավարության ամբիոնի դոցենտ, ի.գ.թ. Տ. Մարկոսյանի կողմից, ընդունվել է տպագրության 15.04.2024 թ.:

ՔՐԵԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ/CRIMINAL LAW/УГОЛОВНОЕ ПРАВО

<https://doi.org/10.59546/18290744-2024.1-3-62>

ԳԵՎՈՐԳ ԻՍՐԱՅԵԼՅԱՆ

*իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ,
ՀՀ ԳԱԱ փորձաքննությունների ազգային բյուրոյի քրեաբանության
կիրառական հիմնախնդիրների գիտահետազոտական կենտրոնի պետ,
Եվրասիա միջազգային համալսարանի դասախոս*

GEVORG ISRAYELYAN

*Candidate of Law, Associate Professor,
Head of the Scientific Research Center of Applied Problems in Criminology of
National Bureau of Expertises of the National Academy of Sciences of the Republic of Armenia,
Lecturer at the Department of Law at Eurasia International University*

ГЕВОРГ ИСПРАЕЛЯН

*кандидат юридических наук, доцент,
начальник Научно-исследовательского центра прикладных проблем криминологии
Национального бюро экспертиз Национальной академии наук Республики Армения,
преподаватель Международного университета Евразия*

**ՀԱՆՑԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ՊԱՅՄԱՆԱՎՈՐՈՂ ԻՐԱՎԱԿԱՆ ԲՆՈՒՅԹԻ
ԳՈՐԾՈՆՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ԱՐԴԻ ՄԻՋՈՑՆԵՐԸ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ**

**LEGAL FACTORS DETERMINING CRIME AND MODERN MEASURES FOR
THEIR PREVENTION IN THE REPUBLIC OF ARMENIA**

**ПРАВОВЫЕ ФАКТОРЫ, ОБУСЛОВЛИВАЮЩИЕ ПРЕСТУПНОСТЬ
И СОВРЕМЕННЫЕ МЕРЫ ИХ ПРЕДУПРЕЖДЕНИЯ В РЕСПУБЛИКЕ
АРМЕНИЯ**

Ներածություն

Հանցավորությունը պայմանավորում են բնույթով տարբեր գործոններ՝ սոցիալական, տնտեսական, քաղաքական և այլն: Այդ գործոնների շարքում իրենց ուրույն տեղն են զբաղեցնում իրավական բնույթի դետերմինանտները՝ օրենսդրության ժամանակավրեպ լինելը, իրավական ակտերում բացերի և կարգավորման թերությունների, քրեաձին և զոհաձին վտանգներ պարունակող կարգավորումների առկայությունը և այլն: Ավանդական միջոցներից

զատ՝ դրանց կանխարգելման ժամանակակից միջոցների թվին է դասվում նորմատիվ իրավական ակտերի նախագծերի քրեաբանական փորձաքննությունը:

Պետք է նշել, որ հանցավորության իրավական դետերմինանտները և դրանց կանխարգելման միջոցները Հայաստանի Հանրապետությունում գիտական մակարդակով ուսումնասիրված չեն:

Նշվածից ելնելով՝ սույն հետազոտության նպատակն է հանցավորությունը պայմանավորող իրավական բնույթի գործոնների բացահայտումը և դրանց կանխարգելման միջոցների ներկայացումը:

Հիմնական հետազոտություն

Հանցավորությունը պայմանավորող իրավական բնույթի գործոնները

Հանցավորության պատճառական համալիրը ներառում է այն դետերմինավորող գործոնների բարդ ամբողջությունը՝ պատճառները, որոնք անմիջականորեն ծնում են հանցավորությունը, և պայմանները, որոնք հնարավորություն են ստեղծում հանցագործությունների կատարման համար¹:

Հանցավորությունը պայմանավորում են բնույթով տարբեր գործոններ՝ սոցիալական, տնտեսական, քաղաքական և այլն: Այդ գործոնների շարքում իրենց ուրույն տեղն են զբաղեցնում իրավական բնույթի դետերմինանտները՝ օրենսդրության ժամանակավրեպ լինելը, իրավական ակտերում բացերի և կանոնակարգման թերությունների, քրեածին և զոհածին վտանգներ պարունակող կարգավորումների առկայությունը և այլն²:

Թվարկված գործոնները պայմանավորվում են հետևյալ հանգամանքներով.

1) իրավական կարգավորման մեթոդների սոցիալական հարմարվողականության բացակայությունը և հակասականությունը,

2) իրավական հարաբերությունների օբյեկտ-առարկայական, սուբյեկտային կազմերի և դրանց ծագման, փոփոխման ու դադարման հիմքերի անորոշությունը,

3) իրավական հարաբերությունների սուբյեկտների իրավունքների, օրինական շահերի, պարտականությունների, ինչպես նաև դրանց իրագործման կարգի անորոշությունը և անհամաչափությունը,

4) իրավական ակտի իրագործման, ինչպես նաև կատարման նկատմամբ վերահսկողության սոցիալական, տնտեսական և կազմակերպատիրավական կառուցակարգերի բացակայությունը,

5) պատասխանատվության կառուցակարգի, դրա իրագործման կարգավորման բացակայությունը կամ պատասխանատվության, դրա իրագործման ընթացակարգի անհամապատասխանությունն արարքի բնույթին³:

Հայաստանի Հանրապետությունում ևս առկա են իրավական բնույթի գործոններ: Որպես օրինակ կարելի է հիշատակել մեր վերջին հետազոտություններից մեկի արդյունքում ի հայտ բերված օրենսդրական բացերը⁴:

¹ Տե՛ս *Տորубլենկոვა Է. Գ.*, Использование статистических методов в исследовании криминогенных факторов: Учебное пособие. Է. Գ. Տորубլենկոვა, Մ., Московский университет МВД России, 2007, էջեր 26-27:

² Մանրամասն տե՛ս *Իսրայելյան Գ.*, Կիրառական քրեաբանության արդի խնդիրները Հայաստանի Հանրապետությունում, Գիտագործնական ձեռնարկ, Երևան, Հեղ. իրատ., Աստղիկ գրատուն, 2019, էջ 48:

³ Տե՛ս *Շեվչուկ Ի. Կ.*, Криминологическая экспертиза как мера предупреждения правонарушений //Вестник Полоцкого государственного университета, Экономические и юридические науки, 2019, № 6, էջ 184:

⁴ Մանրամասն տե՛ս *Իսրայելյան Գ. Վ.*, Թմրահանցավորության դեմ պայքարի նյութաիրավական և քրեաբանական հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում, Մենագրություն /Գ.Վ. Իսրայելյան, Եր., հեղ. իրատ., 2023, էջեր 80-82:

Հանցավորությունը պայմանավորող իրավական բնույթի գործոնների կանխարգելման միջոցները

Հայտնի է, որ հանցավորության կանխարգելումը դրա պատճառական համալիրի, այդ թվում՝ իրավական բնույթի գործոնների նկատմամբ ներգործությունն է՝ ուղղված դրանց վերացմանը կամ չեզոքացմանը:

Մասնագիտական գրականության մեջ⁵ հանցավորության կանխարգելման իրավական միջոցների թվին դասվում են.

1) Օրենսդրության արդիականացումը

Սա ենթադրում է գործող օրենսդրության առանձին կարգավորումների, դրույթների համապատասխանեցումը ժամանակի պահանջներին, նոր ընդունված օրենքներին համահունչ ենթաօրենսդրական ակտերի թարմացումը⁶: Նշված գործընթացը չպետք է իրականացվի սոցիալական իրականությունից կտրված: Պետք է հաշվի առնվեն ոչ միայն իրավակիրառողի, այլև բնակչության պահանջմունքներն ու շահերը⁷:

2) Հասարակական հարաբերությունների պատշաճ իրավական կարգավորումը

Սա ենթադրում է հասարակական հարաբերությունների կարգավորման համարժեք գործիքակազմի օգտագործում, կարգավորման բարձր որակի ապահովում:

3) Օրենսդրական բացերի վերացումը

Այս խնդրի լուծման համար անհրաժեշտ է՝

ա) իրավական կարգավորման ենթակա կոնկրետ դեպքի կանոնակարգման համար կոնկրետ նորմի սահմանումը,

բ) բացակայող իրավական նորմերի համակցության նախատեսումը,

գ) իրավական կարգավորման ենթակա կոնկրետ հարաբերության իրավական կանոնակարգումը,

դ) կոնկրետ այնպիսի հանգամանքի կարգավորումը, որը նորմի ստեղծման ժամանակ հայտնի էր, սակայն այդ պահին իրավական կարգավորման կարիք չէր զգում և այլն⁸:

4) Նորմատիվ իրավական ակտերի նախագծերի քրեաբանական փորձաքննության իրականացումը

Այս փորձաքննությունը նորմատիվ իրավական ակտերի նախագծերի (նորմատիվ իրավական ակտերի) և հանցավորության դետերմինանտների ու կանխարգելման միջև փոխադարձ կապի բացահայտման նպատակով անցկացվող էմպիրիկ քրեաբանական հետազոտություն է, որը որոշակի մեթոդներով իրականացվում է հատուկ գիտելիքներ և իրավասություն ունեցող մարմինների կողմից՝ այնպիսի նորմատիվ իրավական ակտերի ընդունման կամ գործող ակտերի կատարելագործման համար, որոնք կնպաստեն հանցավորության քանակական ցուցանիշների նվազմանը և ինքնադետերմինացման խոչընդոտմանը⁹:

⁵ Մանրամասն տես *Իսրայելյան Գ. Վ.*, Քրեաբանություն, Ընդհանուր դրույթներ, Ոսումնական ծեռնարկ, Գ. Վ. Իսրայելյան, Երևան, Հեղ. իրատ., 2020, էջ 114:

⁶ Տես *Актуализация нормативных правовых актов* // https://www.consultant.ru/document/cons_doc_LAW_112881/87752b0d505972e7456efc3c7b8b30ce92992839/ (վերջին մուտք՝ 04.01.2024):

⁷ Տես *Осипов Р. А.*, Влияние процесса актуализации законодательства на правовую культуру российских граждан // Юридическая техника, 2023, № 17, էջ 338:

⁸ Տես *Спектор Е. И.*, Пробелы в законодательстве и пути их преодоления, Автореф. дисс. ... к.ю.н., М., 2003, էջ 13:

⁹ Տես *Осипова Е. С.*, Понятие и сущность криминологической экспертизы нормативно-правовых актов // <https://sun.tsu.ru/mminfo/000063105/312/image/312-113.pdf> (վերջին մուտք՝ 04.01.2024):

Մեր կողմից կատարված հետազոտության արդյունքները վկայում են, որ Հայաստանի Հանրապետությունում խնդրո առարկայի կանոնակարգման իրավական հիմքերը բավարար չեն, բացակայում են վերոհիշյալ փորձաքննության կազմակերպման և անցկացման կառուցակարգերը, ինչի արդյունքում գեթ մեկ այդպիսի փորձաքննություն չի իրականացվել: Ըստ այդմ, անհրաժեշտ է համապատասխան կարգավորումների կատարումը, այդ թվում՝ «Նորմատիվ իրավական ակտերի նախագծերի քրեաբանական փորձաքննության մասին» օրենքի ընդունումը: Կարծում ենք, որ այլ հարաբերությունների կարգավորումից բացի՝ նշված օրենքում անհրաժեշտ է նախատեսել նորմատիվ իրավական ակտերի նախագծերի (նորմատիվ իրավական ակտերի) գնահատման չափանիշները, որոնք հիմնարար նշանակություն ունեն հանցավորությունը պայմանավորող իրավական գործոնների կանխարգելման գործում:

Վերը նշված չափանիշների թվին դասվում են.

1. վարչական մարմինների լիազորությունների հայեցողականությունը, որն արտահայտվում է իրավահարաբերությունների սուբյեկտների փաստական կամ իրավական դրության վրա ազդող ակտերի, գործողությունների կամ անգործության միջոցով իրավունքի չարաշահման հնարավորությամբ,

2. իրավական նախադրյալների որոշակիությունը, որն ապահովվում է իրավական կարգավորման ոլորտի և առարկայի, նպատակի ու սկզբունքների, իրավաստեղծ մարմնի լիազորության ու դրա իրագործման սահմանների և կարգավորման մեթոդների համապատասխանությամբ, ինչպես նաև կարգավորման բացերի ու թերությունների բացակայությամբ, որոնք նվազեցնում են իրավական նորմերի իրագործման հնարավորությունը՝ իրավական կարգավորման նպատակներին համահունչ,

3. իրավական կարգավորման ընդհանուր կանոններից բացառությունների սահմանման հիմնավորվածությունը, որն ապահովվում է իրավահարաբերությունների սուբյեկտների շահերի բախման, առանձին սուբյեկտների կողմից իրավունքի իրագործման խոչընդոտների կամ իրավունքի չարաշահման իրավական նախադրյալների բացակայությամբ,

4. իրավահարաբերությունների սուբյեկտների իրավունքների, օրինական շահերի և պարտականությունների, դրանց իրագործման կարգի որոշակիությունը և հավասարակշռվածությունը, որն ապահովվում է իրավահարաբերությունների սուբյեկտների և նրանց ներկայացվող պահանջների նույնացման հնարավորությամբ, նրանց օրինական շահերի ապահովման հավասարակշռության պահպանմամբ, այդ թվում՝ միմյանց հակասող նորմերի, մրցութային ընթացակարգերի հնարավորության բացառմամբ,

5. իրագործման և վերահսկողության կառուցակարգերով իրավունքի նորմերի ապահովվածությունը, որն արտահայտվում է նորմերի իրագործման համար պահանջվող տնտեսական, տեխնիկական և այլ պայմանների, այդ թվում՝ ուժի մեջ մտնելու ժամկետների, հարկադիր կատարման եղանակների և կարգի, խախտված իրավունքի վերականգնման կառուցակարգերի առկայությամբ,

6. պատասխանատվության միջոցների կիրառման հիմքերի, պայմանների և կարգի որոշակիությունը, որն ապահովվում է առաջադրված պահանջների էական խախտումների համար պատասխանատվության սահմանմամբ, պատասխանատվության կիրառման գործուն կառուցակարգի առկայությամբ, դրա տեսակի, չափի և իրավական կարգավորման նպատակների համապատասխանությամբ, իրավախախտումների կանխարգելման արդյունավետ ձևերով, պատասխանատվությունից ազատելու կամ այն մեղմացնելու հիմքերի որոշակիությամբ¹⁰:

¹⁰ Տե՛ս <https://etalonline.by/document/?regnum=p30700244> (վերջին մուտք՝ 04.01.2024):

Եզրակացություն

Մեր կողմից կատարված հետազոտության արդյունքները վկայում են, որ.

1. Հանցավորությունը պայմանավորում են բնույթով տարբեր գործոններ՝ սոցիալական, տնտեսական, քաղաքական և այլն: Այդ գործոնների շարքում իրենց ուրույն տեղն են զբաղեցնում իրավական բնույթի դետերմինանտները՝ օրենսդրության ժամանակավրեպ լինելը, իրավական ակտերում բացերի և կանոնակարգման թերությունների, քրեաձին և զոհաձին վտանգներ պարունակող կարգավորումների առկայությունը և այլն:

2. Հանցավորությունը պայմանավորող իրավական բնույթի գործոնների կանխարգելման համար անհրաժեշտ է արդիականացնել օրենսդրությունը, պատշաճ իրավական կարգավորման ենթարկել հասարակական հարաբերությունները, վերացնել օրենսդրական բացերը, իրականացնել նորմատիվ իրավական ակտերի նախագծերի քրեաբանական փորձաքննություն:

3. Հայաստանի Հանրապետությունում նորմատիվ իրավական ակտերի նախագծերի քրեաբանական փորձաքննության կանոնակարգման իրավական հիմքերը բավարար չեն, բացակայում են այդ փորձաքննության կազմակերպման և անցկացման կառուցակարգերը, ինչի արդյունքում գեթ մեկ այդպիսի փորձաքննություն չի իրականացվել: Ըստ այդմ, անհրաժեշտ է համապատասխան կարգավորումների կատարումը, այդ թվում՝ «Նորմատիվ իրավական ակտերի նախագծերի քրեաբանական փորձաքննության մասին» օրենքի ընդունումը, որը, որպես պարտադիր բաղադրատարր, պետք է բովանդակի նորմատիվ իրավական ակտերի նախագծերի գնահատման չափանիշներ:

Ամփոփագիր: Հանցավորությունը պայմանավորում են բնույթով տարբեր գործոններ՝ սոցիալական, տնտեսական, քաղաքական և այլն: Այդ գործոնների շարքում իրենց ուրույն տեղն են զբաղեցնում իրավական բնույթի դետերմինանտները՝ օրենսդրության ժամանակավրեպ լինելը, իրավական ակտերում բացերի և կարգավորման թերությունների, քրեաձին և զոհաձին վտանգներ պարունակող կարգավորումների առկայությունը և այլն: Թվարկված գործոնները պայմանավորվում են իրավական կարգավորման մեթոդների սոցիալական հարմարվողականության բացակայությամբ և հակասականությամբ, իրավական հարաբերությունների օբյեկտառարկայական, սուբյեկտային կազմերի և դրանց ծագման, փոփոխման ու դադարման հիմքերի անորոշությամբ, սուբյեկտների իրավունքների, օրինական շահերի, պարտականությունների, դրանց իրագործման կարգի անորոշությամբ և անհամաչափությամբ, իրավական ակտի իրագործման, ինչպես նաև կատարման նկատմամբ վերահսկողության սոցիալական, տնտեսական և կազմակերպարավական կառուցակարգերի բացակայությամբ ու այլ հանգամանքներով:

Հանցավորությունը պայմանավորող իրավական բնույթի գործոնների կանխարգելման համար անհրաժեշտ է արդիականացնել օրենսդրությունը, պատշաճ իրավական կարգավորման ենթարկել հասարակական հարաբերությունները, վերացնել օրենսդրական բացերը, իրականացնել նորմատիվ իրավական ակտերի նախագծերի քրեաբանական փորձաքննություն:

Հարկ է նշել, որ Հայաստանի Հանրապետությունում նորմատիվ իրավական ակտերի նախագծերի քրեաբանական փորձաքննության կանոնակարգման իրավական հիմքերը բավարար չեն, բացակայում են այդ փորձաքննության կազմակերպման և անցկացման կառուցակարգերը, ինչի արդյունքում երբևէ այդպիսի փորձաքննություն չի իրականացվել: Ըստ այդմ, անհրաժեշտ է համապատասխան կարգավորումների կատարումը, այդ թվում՝ «Նորմատիվ իրավական ակտերի նախագծերի քրեաբանական փորձաքննության մասին» օրենքի ընդունումը:

Annotation. Crime is caused by social, economic, political and other factors. Among these factors, the legal determinants of crime are highlighted – the irrelevance of legislation, gaps and defects in regulation, regulation, which contain criminogenic and victimogenic risks in legal acts, etc. These factors are due to social maladaptation, haphazardness and inconsistency of methods and forms of legal regulation, uncertainty of the object-subject and subject composition of legal relations, conditions and grounds for their occurrence, modification and termination, uncertainty and imbalance of interests of subjects of legal relations, their rights and obligations, as well as the order of their implementation and execution, lack of social, economic and organizational and legal mechanisms for ensuring the implementation of a legal act, as well as the lack of control over the implementation of its provisions, etc.

In order to prevent legal factors that cause crime, it is necessary to update legislation, ensure proper legal regulation of public relations, eliminate legislative gaps, and conduct a criminological expertise of draft normative legal acts.

It should be noted that in the Republic of Armenia, the legal basis for the criminological expertise of draft normative legal acts is insufficient, there are no mechanisms for organizing and conducting this expertise, as a result of which no such expertise has been conducted. Therefore, it is necessary to ensure appropriate regulations, including the adoption of the Law “On criminological expertise of draft normative legal acts”.

It should be noted that in the Republic of Armenia the legal basis for criminological examination of draft normative legal acts is insufficient, there are no mechanisms for organizing and conducting this examination, as a result of which not a single such examination has been carried out. Therefore, it is necessary to provide appropriate regulations, including the adoption of the Law “On criminological examination of draft normative legal acts.”

Аннотация. Преступность обусловлена социальными, экономическими, политическими и другими по характеру факторами. Среди этих факторов выделяются правовые детерминанты преступности – неактуальность законодательства, пробелы и дефекты регулирования, регламентации, которые содержат криминогенные и виктимогенные риски в правовых актах и т.д. Указанные факторы обусловлены социальной неадаптированностью, бессистемностью и противоречивостью методов и форм правового регулирования, неопределенностью объектно-предметного и субъектного составов правовых отношений, условий и оснований их возникновения, изменения и прекращения, неопределенностью и разбалансированностью интересов субъектов правовых отношений, их прав и обязанностей, а также порядка их реализации и исполнения, отсутствием социальных, экономических и организационно-правовых механизмов обеспечения реализации правового акта, а также отсутствием контроля за исполнением его положений и т.д.

Для предупреждения факторов правового характера, которые обуславливают преступность, необходимо актуализировать законодательство, обеспечить надлежащее правовое регулирование общественных отношений, устранить законодательные пробелы, провести криминологическую экспертизу проектов нормативных правовых актов.

Следует отметить, что в Республике Армения правовые основы криминологической экспертизы проектов нормативных правовых актов недостаточны, отсутствуют механизмы организации и проведения указанной экспертизы, в результате чего ни одна такая экспертиза не проведена. Следовательно, необходимо обеспечить соответствующие регламентации, в том числе принять Закон «О криминологической экспертизе проектов нормативных правовых актов».

Բանալի բառեր - հանցավորություն, իրավական բնույթի գործոններ, նորմատիվ իրավական ակտերի քրեաբանական փորձաքննություն:

Keywords: crime, legal factors, criminological expertise of normative legal acts.

Ключевые слова: преступность, правовые факторы, криминологическая экспертиза нормативных правовых актов.

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. **Իսրայելյան Գ. Վ.**, Թմրահանցավորության դեմ պայքարի նյութաիրավական և քրեաբանական հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում, Մենագրություն, Գ. Վ. Իսրայելյան, Եր., Հեղ. հրատ., 2023, 220 էջ:
2. **Իսրայելյան Գ.Վ.**, Կիրառական քրեաբանության արդի խնդիրները Հայաստանի Հանրապետությունում: Գիտագործնական ձեռնարկ: Երևան, Հեղ. հրատ., Աստղիկ գրատուն, 2019. - 192 էջ:
3. **Իսրայելյան Գ.Վ.**, Քրեաբանություն: Ընդհանուր դրույթներ: Ուսումնական ձեռնարկ /Գ.Վ. Իսրայելյան.- Եր.: Հեղ. հրատ., 2020. - 192 էջ:
4. Актуализация нормативных правовых актов
[//https://www.consultant.ru/document/cons_doc_LAW_112881/87752b0d505972e7456efc3c7b8b30ce92992839/](https://www.consultant.ru/document/cons_doc_LAW_112881/87752b0d505972e7456efc3c7b8b30ce92992839/).
5. **Осипов Р.А.**, Влияние процесса актуализации законодательства на правовую культуру российских граждан //Юридическая техника. 2023. № 17. С. 337-340.
6. **Осипова Е.С.**, Понятие и сущность криминологической экспертизы нормативно-правовых актов // <https://sun.tsu.ru/mminfo/000063105/312/image/312-113.pdf>.
7. **Спектор Е.И.**, Пробелы в законодательстве и пути их преодоления. Автореф. дисс. ... к.ю.н. М., 2003. - 24 с.
8. **Сторубленкова Е.Г.**, Использование статистических методов в исследовании криминогенных факторов: Учебное пособие. Е.Г. Сторубленкова. - М.: Московский университет МВД России, 2007. - 90 с.
9. **Шевчук Н.Н.**, Криминологическая экспертиза как мера предупреждения правонарушений //Вестник Полоцкого государственного университета. Экономические и юридические науки. 2019. № 6. С. 181-188.
10. <https://etalonline.by/document/?regnum=p30700244>:

Իսրայելյան Գ. - ՀՀ ԳԱԱ Փորձաքննությունների ազգային բյուրոյի Քրեաբանության կիրառական հիմնախնդիրների գիտահետազոտական կենտրոնի պետ, Եվրասիա միջազգային համալսարանի դասախոս, իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ, էլիասցե՝ g_i_1979@mail.ru:

Ներկայացվել է խմբագրություն 18.01.2024 թ., տրվել է գրախոսության 18.01.2024 թ., երաշխավորվել է ՀՀ գլխավոր դատախազի օգնական, իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ Ա.Պ. Ղուկասյանի կողմից, ընդունվել է տպագրության 15.04.2024 թ.:

<https://doi.org/10.59546/18290744-2024.1-3-69>

ԱՐՄԵՆ ԱՍԱՏՐՅԱՆ

ՀՀ ազգային անվտանգության ծառայության օպերատիվ գործունեության
աջակցման վարչության պետ, փոխգնդապետ,
ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի քրեական իրավունքի ամբիոնի հայցորդ

ARMEN ASATRYAN

Head of Department of Operative Activity Support of the
National Security Service of the Republic of Armenia, Colonel Lieutenant,
Solicitor of the Chair of Criminal Law of the Faculty of Law of Yerevan State University

АРМЕН АСАТРЯН

Начальник управления поддержки оперативной деятельности Службы
национальной безопасности РА, подполковник,
соискатель кафедры уголовного права юридического факультета ЕГУ

ՄԻԳՐԱՆՏԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ ԵՎ ԻՐԱՎԱԿԻՐԱՌ ՊՐԱԿՏԻԿԱՆ

GROUND S OF THE CRIMINAL-LEGAL RESPONSIBILITY OF THE MIGRANT AND LAW ENFORCEMENT PRACTICE

УГОЛОВНО-ПРАВОВЫЕ ОСНОВЫ ОТВЕТСТВЕННОСТИ МИГРАНТА И ПРАВОПРИМЕНИТЕЛЬНАЯ ПРАКТИКА

Ներածություն

1948 թվականին ընդունված «Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի»
7-րդ հոդվածը¹ սահմանում է. «Օրենքի առաջ բոլոր մարդիկ հավասար են և առանց որևէ
խտրության ունեն օրենքի հավասար պաշտպանության իրավունք: Բոլոր մարդիկ ունեն սույն
Հռչակագիրը խախտող որևէ խտրականությունից և նման խտրականության սադրանքից
պաշտպանվելու հավասար իրավունք»:

ՀՀ Սահմանադրության 28-րդ հոդվածի համաձայն՝

Բոլորը հավասար են օրենքի առջև:

ՀՀ Սահմանադրության 39-րդ հոդվածի համաձայն՝

Մարդն ազատ է անելու այն ամենը, ինչը չի խախտում այլոց իրավունքները և չի հակա-
սում Սահմանադրությանը և օրենքներին: Ոչ ոք չի կարող կրել պարտականություններ, որոնք

¹ Տե՛ս, «Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիր», հոդված 13-րդ, 1948 թ. <https://www.arlis.am/documentview.aspx?docID=1896>:

սահմանված չեն օրենքով²:

ՀՀ քրեական օրենսգրքի 2-րդ հոդվածի համաձայն՝

1. Հայաստանի Հանրապետության քրեական օրենսդրության խնդիրներն են՝ օրենքով նախատեսված շահերի պաշտպանությունը հանցավոր ոտնձգություններից, հանցագործությունների կանխումը, քրեական պատասխանատվության ենթակա իրավաբանական անձի և հանցանք կատարած անձի պատասխանատվության արդարացիությունը, հասարակությունում հանցանք կատարած անձի վերաինտեգրումը, վերասոցիալականացումն ապահովելը:

ՀՀ քրեական օրենսգրքի 4-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝

1. Ոչ ոք չի կարող ենթարկվել քրեական պատասխանատվության այն արարքի համար, որը կատարման պահին հանցանք չի համարվել:

ՀՀ քրեական օրենսգրքի 5-րդ հոդվածի համաձայն՝

1. Յուրաքանչյուր ֆիզիկական անձ ենթակա է քրեական պատասխանատվության միայն իր կատարած հանցանքի համար:

Իրավական պետության առաջնային խնդիրներից է ենթադրյալ հանցանքի հանգամանքների ամբողջական պարզումը, հանցանք կատարած անձանց ողջ շրջանակի մերկացումը, համապատասխան քրեաիրավական ներգործության միջոցների կիրառումը, հանցանքը ծնող պատճառների ու պայմանների վերհանումը՝ այդ ուղղությամբ կանխարգելիչ միջոցների ձեռնարկումը:

Ներկայիս աշխարհաքաղաքական զարգացումների պայմաններում, երբ Հայաստանի Հանրապետության առջև ծառայած են լուրջ անվտանգային մարտահրավերներ, որոնց դեմ պայքարը ենթադրում է առավել համակարգված ու երիտասարդ ուժերի միավորում, առանցքային դեր է հատկացվում արտագաղթի և էմիգրացիոն անկանոն հոսքերի դեմ պայքարին: Ներանվտանգային միջավայրի ապահովման միջոցների շարքում կարևորվում է անօրինական միգրացիայի դեմ պայքարը համակողմանի և արդյունավետ կազմակերպելու հարցը:

Վերոգրյալի համատեքստում անօրինական միգրացիայի դեմ պայքարի առանձին ուղղություն է իրենից ներկայացնում անօրինական միգրացիայի կազմակերպման առերևույթ հանցանքի դեպքերով իրականացված պատշաճ և համակողմանի քննության ընթացքում միգրանտի գործողությունների ամբողջական շղթայի պարզումը, ներառյալ՝ միգրանտի կողմից անօրինական եղանակով ՀՀ-ից մեկնելու, այլ երկիր մուտք գործելու, այնտեղ գտնվելու ուղղությամբ ձեռնարկված գործողությունները, ցուցաբերած նախաձեռնողականությունը, համապատասխան հյուպատոսական մարմին ներկայացվելիք փաթեթի բովանդակությանը ծանոթանալու հանգամանքը և այլն:

Հիմնական հետազոտություն

Միջազգային փաստաթղթերով³ սահմանված են յուրաքանչյուրի ազատ տեղաշարժվելու և բնակավայր ընտրելու, ցանկացած՝ այդ թվում սեփական երկրից մեկնելու և իր երկիրը վերադառնալու իրավունքները, սակայն որոշակի սահմանափակումներով: Մասնավորապես, տեղաշարժի ազատությունը չի ներառում կամայական ընտրությամբ որևէ երկիր մուտք գործելու ընդհանուր, համընդհանուր իրավունք, չնայած դա տեղաշարժի ազատության իրավունքի հենց այն բացակայող բաղադրիչն է, որը մարդիկ շատ հաճախ ցանկանում են ունենալ:

² Տե՛ս, ՀՀ Սահմանադրություն, 2015 թվականի փոփոխություններ, 40-րդ հոդված <https://www.arlis.am/documentview.aspx?docID=102510>:

³ «Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիր» /հոդված 13/, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիա /թիվ 4 արձանագրություն՝ հոդված 2/:

Բացի դրանից՝ ընդունված միջազգային նորմերի համաձայն՝ օտարերկրացուն մուտքի իրավունքի տրամադրումը համարվում է տվյալ երկրի ինքնիշխան իրավունքներից մեկը, և այն օտարերկրացիները, որոնք, տվյալ երկրի օրենսդրությամբ սահմանված կանոնները խախտելով, մուտք են գործում կամ գտնվում (բնակվում են) այնտեղ, համարվում են անօրինական միգրանտներ: Տեղաշարժի ազատության իրավունքը վերապահված է միայն նրանց, ովքեր որևէ պետության տարածքում գտնվում են «օրինական կարգով»: Այդ իրավունքների իրականացման նկատմամբ չպետք է կիրառվի որևէ սահմանափակում, բացառությամբ այն սահմանափակումների, որոնք նախատեսված են օրենքով և անհրաժեշտ են ժողովրդավարական հասարակությունում՝ ի շահ պետական անվտանգության կամ հասարակության ապահովության, հասարակական կարգի պահպանման, հանցագործությունների կանխման, առողջության կամ բարոյականության պաշտպանության կամ այլ անձանց իրավունքների ու ազատությունների պաշտպանության նպատակով:

Ազատ տեղաշարժի իրավունքը սահմանված է նաև ՀՀ Սահմանադրության 40-րդ հոդվածով, համաձայն որի՝

1. Հայաստանի Հանրապետության տարածքում օրինական հիմքերով գտնվող յուրաքանչյուր ոք ունի ազատ տեղաշարժվելու և բնակավայր ընտրելու իրավունք:

2. Յուրաքանչյուր ոք ունի Հայաստանի Հանրապետությունից դուրս գալու իրավունք:

3. Յուրաքանչյուր քաղաքացի և Հայաստանի Հանրապետությունում օրինական հիմքերով բնակվելու իրավունք ունեցող յուրաքանչյուր ոք ունի Հայաստանի Հանրապետություն մուտք գործելու իրավունք:

4. Ազատ տեղաշարժվելու իրավունքը կարող է սահմանափակվել միայն օրենքով՝ պետական անվտանգության, հանցագործությունների կանխման կամ բացահայտման, հասարակական կարգի, առողջության և բարոյականության կամ այլոց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով: Քաղաքացու՝ Հայաստանի Հանրապետություն մուտք գործելու իրավունքը սահմանափակման ենթակա չէ:

Իսկ «Փախստականների և ապաստանի մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածով սահմանված է, որ Հայաստանի Հանրապետությունում ապաստան ստացած փախստականները, ինչպես նաև ապաստան հայցողները և սույն օրենքի 7-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերով սահմանված նրանց ընտանիքի անդամները, ովքեր դիմում են լիազոր մարմին, սույն օրենքի 47-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ իրենց բնակության վայրի ընտրության և պետության տարածքում ազատորեն տեղաշարժվելու իրավունքի առումով օգտվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիների համար սահմանված նույն իրավունքներից:

Հարկ է արձանագրել, որ որևէ երկիր օրինական կարգով մուտք գործելու և գտնվելու համար նախատեսված են հիմնականում հետևյալ հիմքերը՝

- Զբոսաշրջություն /հանգիստ/,
- ընտանիքի վերամիավորում,
- կրթություն,
- աշխատանք,
- ապաստան:

Զբոսաշրջություն՝

մարդկանց ժամանակավոր տեղաշարժն է դեպի այլ երկիր, կամ տվյալ երկրի այլ վարչական տարածք՝ հանգստի, ժամանցի, առողջարանային, գործնական կամ ստեղծագործական նպատակներով՝ առանց վճարվող աշխատանք վարելու:

Ընտանիքի վերամիավորում¹

տվյալ պետությունում օրինական բնակվող անձի ընտանիքի անդամները կարող են ժամանել այդ երկիր՝ իրենց հարազատի հետ բնակվելու նպատակով: Այս դեպքում որպես ընտանիքի անդամներ դիտարկվում են կինը/ամուսինը, անչափահաս երեխաները, խնամքի տակ գտնվող ծնողները:

Կրթությունը¹

տվյալ պետության որևէ ուսումնական հաստատություն ընդունված անձը կարող է մուտք գործել և բնակվել այդ երկրում ուսանելու ժամանակահատվածում: Սակայն նրա մուտքը կթույլատրվի միայն այն պարագայում, եթե լինի հավաստիացում, որ նա կարող է վճարել (ինքը կամ որևէ հիմնադրամ կամ երրորդ անձ) իր ուսման և կեցության հետ կապված բոլոր ծախսերը:

Աշխատանք¹

Այս դեպքում անձի մուտքը թույլատրվում է տվյալ երկրում աշխատելու թույլտվություն և գործատուի հետ աշխատանքային պայմանագիր ունենալու դեպքում: Որպես կանոն՝ նմանօրինակ հնարավորություն է տրամադրվում բարձր որակավորում ունեցող մասնագետներին: Միաժամանակ երկրների մեծամասնությունն անգամ նրանց դեպքում սահմանում են մուտքի բավականին բարձր չափանիշներ՝ համապատասխան կրթություն, բավարար աշխատանքային ստաժ և փորձառություն, օտար լեզվի գերազանց իմացություն, իրենց երկրում կնքված աշխատանքային պայմանագրով սահմանված տարեկան վարձատրության բավականին բարձր չափ և այլն:

Ապաստան հայցողներ¹

Այլ երկրներում ապաստան փնտրելու և ստանալու իրավունքն ամրագրված է ինչպես միջազգային իրավական փաստաթղթերում (*Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիր*, «Փախստականների մասին» 1951 թ. ժնկյան կոնվենցիա), այնպես էլ մի շարք պետությունների սահմանադրություններում և օրենքներում: Ապաստանի տրամադրումը ենթադրում է պաշտպանություն ետ վերադարձվելուց («non-refoulement» սկզբունք) և տվյալ երկրի տարածքում մնալու հնարավորություն այնքան ժամանակ, որքան որ պաշտպանության կարիք կա: Այլ կերպ ասած, մինչև տվյալ երկրի սահմանային կետ հասած և այդ երկրից ապաստան հայցող անձին թույլատրվում է մուտք գործել երկիր և այնտեղ մնալ առնվազն այնքան ժամանակ, քանի դեռ բացասական որոշում չի կայացվել նրա հայցի վերաբերյալ:

Այս մասով հարկ է նկատել, որ օտարերկրացիների՝ Հայաստանի Հանրապետություն մուտք գործելու, Հայաստանի Հանրապետության տարածքում գտնվելու և բնակվելու, Հայաստանի Հանրապետության տարածքով տարանցիկ երթևեկելու, Հայաստանի Հանրապետությունից ելքի, ինչպես նաև օտարերկրացիների հետ կապված այլ հարաբերությունները կարգավորվում են «Օտարերկրացիների մասին» ՀՀ օրենքով⁴: Ընդ որում, բացի ապաստանի հայցից, ՀՀ մուտք գործելու վերը նշված մյուս դեպքերում անձին տրվում է «**այցելության մուտքի վիզա**»՝ մեկանգամյա մուտքի կամ մինչև մեկ տարի վավերականության ժամկետով բազմակի մուտքի համար:

Միգրանտի պատասխանատվության հարցի քննարկման տեսանկյունից առանցքային

⁴ Տես, «Օտարերկրացիների մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդված <https://www.arlis.am/documentview.aspx?docid=183150>:

նշանակություն ունի Միգրացիայի միջազգային կազմակերպության (այսուհետ՝ ՄՄԿ) կողմից անօրինական միգրացիային վերաբերող մի շարք հասկացությունների վերաբերյալ սահմանումները, որոնք, ըստ էության, որոշիչ նշանակություն ունեն միգրանտի գործողություններում հանցանքի առկայության հանգամանքի պարզման առումով: Մասնավորապես, ՄՄԿ-ն տվել է անօրինական միգրացիային վերաբերող հետևյալ հասկացությունների սահմանումները⁵: Դրանք են.

1) *Անկանոն կարգավիճակով միգրանտ (irregular migrant)*: Մուտքի թույլտվություն չունենալու, մուտքի պայմանները խախտելու կամ վիզայի ժամկետը լրանալու հետևանքով տարանցման և հյուրընկալող երկրում իրավական կարգավիճակ չունեցող անձ: Տվյալ սահմանումը տարածվում է նաև այն անձանց վրա, որոնք օրինականորեն մուտք են գործել տարանցման կամ հյուրընկալող երկիր, սակայն մնացել են այնտեղ թույլատրված ժամկետից ավելի երկար կամ հետագայում առանց թույլտվության անցել են աշխատանքի (կոչվում են նաև լատենտային/փաստաթղթային խնդիրներ ունեցող միգրանտ կամ անկանոն կարգավիճակում գտնվող միգրանտ): Ըստ ՄՄԿ-ի, «անօրինական» տերմինի փոխարեն նախընտրելի է օգտագործել «անկանոն» տերմինը, քանի որ առաջինն ունի քրեաիրավական երանգավորում և դիտվում է որպես միգրանտների մարդկային հատկանիշներին հակասող:

2) *Անօրինական մուտք (illegal entry)*: «Սահմանների հատումն առանց ընդունող պետություն օրինական մուտք գործելու համար անհրաժեշտ պահանջների պահպանման»⁶:

3) *Անկանոն միգրացիա (irregular migration)*: Տեղաշարժ, որը տեղի է ունենում ուղարկող, տարանցման և ընդունող երկրների նորմատիվ իրավական դրույթների գործողությունից դուրս: «Անկանոն միգրացիա» տերմինի համար հստակ կամ համընդհանուր ճանաչում գտած որևէ սահմանում չկա: Նպատակակետ երկրների դիտանկյունից՝ դա երկիր մուտք գործելը, մնալը կամ աշխատելն է առանց անհրաժեշտ թույլտվության կամ էմիգրացիոն (ներգաղթային) կանոնակարգերով պահանջվող փաստաթղթերի: Ուղարկող երկրի դիտանկյունից՝ անկանոն բնույթն ակնբեր է այն դեպքերում, երբ, օրինակ, անձը հատում է որևէ միջազգային սահման առանց վավեր անձնագրի կամ ճամփորդական փաստաթղթի կամ չի կատարում երկրից դուրս գալու համար սահմանված վարչական պահանջները: Այնուամենայնիվ, նկատվում է «անօրինական միգրացիա» տերմինի գործածությունը «մաքսանենգ» ճանապարհով միգրանտների տեղափոխման և մարդկանց թրաֆիքինգի դեպքերով սահմանափակելու միտում:

4) *Չթույլատրված (ապօրինի մուտք) ընդունում (unauthorized/unlawful entry/admission)*: «Սահմանների հատումն առանց ընդունող պետություն օրինական մուտքի համար անհրաժեշտ պահանջների պահպանման»:

5) *Անօրինական սահմանափակումներն* ուղղակի կամ անուղղակի ձևով, ֆինանսական կամ այլ նյութական շահ ստանալու նպատակով այլ անձի անօրինական մուտքն է այդ անձի քաղաքացիության կամ մշտական բնակության վայր չհանդիսացող երկիր⁷:

⁵ Միգրացիայի ոլորտի տերմինների բառարան, 2-րդ հրատարակություն, ՄՄԿ, 2013 թ.:

⁶ «Անդրազգային կազմակերպված հանցավորության դեմ» Միավորված ազգերի կազմակերպության կոնվենցիան լրացնող՝ «Ցամաքով, ծովով և օդով միգրանտներին մաքսանենգ ճանապարհով տեղափոխման դեմ» ՄՄԿ-ի 2000 թվականի արձանագրության 3 (բ) հոդված:

⁷ Տես՝ ՄՄԿ-ի 2000 թ. «Անդրազգային կազմակերպված հանցավորության դեմ» Պալերմոյի կոնվենցիային կից «Մարդկանց, հատկապես կանանց և երեխաների առևտրի կանխարգելման, արգելման և պատժի մասին» թիվ 2 կամընտիր արձանագրության հոդված 3 (ա):

Վերոգրյալի կոնտեքստում, անդրադառնալով միգրանտի քրեական պատասխանատվության բուն հիմքերին, պետք է նշել, որ անօրինական միգրացիայի կազմակերպման հանցակազմը նախատեսված է ՀՀ քրեական օրենսգրքի 470-րդ հոդվածով, որի առաջին մասով քրեական պատասխանատվություն է նախատեսված՝ օտարերկրյա քաղաքացու կամ քաղաքացիություն չունեցող անձի մուտքը Հայաստանի Հանրապետություն, Հայաստանի Հանրապետությունում նրա գտնվելը կամ Հայաստանի Հանրապետության տարածքով տարանցումը (տեղափոխումը) շահադիտական նպատակով կազմակերպելու համար, որը կատարվել է մուտքի, գտնվելու կամ տարանցման համար օրենսդրությամբ սահմանված կարգը խախտելով, կամ մուտքի, գտնվելու կամ տարանցման պատշաճ թույլտվություն ստանալու համար կեղծ փաստաթուղթ կամ կեղծ տեղեկություն ներկայացնելով:

Նույն հոդվածի 2-րդ մասով պատասխանատվություն է սահմանված անձի՝ Հայաստանի Հանրապետությունից ելքը, օտարերկրյա պետություն մուտքը կամ օտարերկրյա պետությունում գտնվելը շահադիտական նպատակով կազմակերպելու համար, որը կատարվել է ելքի, մուտքի կամ գտնվելու համար օրենսդրությամբ սահմանված կարգը խախտելով, կամ ելքի, մուտքի կամ գտնվելու պատշաճ թույլտվություն ստանալու համար կեղծ փաստաթուղթ կամ կեղծ տեղեկություն ներկայացնելով:

Հոդվածի վերլուծությունից պարզ է դառնում, որ հանցակազմի օբյեկտիվ կողմը դրսևորում է՝

ա/ մուտքի, գտնվելու կամ տարանցման կամ ելքի, մուտքի կամ գտնվելու համար օրենսդրությամբ սահմանված կարգը խախտելով,

բ/ մուտքի, գտնվելու կամ տարանցման կամ ելքի, մուտքի կամ գտնվելու պատշաճ թույլտվություն ստանալու համար կեղծ փաստաթուղթ կամ կեղծ տեղեկություն ներկայացնելով:

Այսպիսով, շահադիտական նպատակով անձի անօրինական միգրացիան կազմակերպելիս հոդվածի առաջին մասի առկայության համար հանցանք կատարած անձը կա՛մ պետք է օտարերկրացու ՀՀ մուտքի, գտնվելու, տարանցման համար օրենսդրությամբ սահմանված կարգը խախտի, կա՛մ պատշաճ թույլտվություն ստանալու համար կեղծ փաստաթուղթ կամ կեղծ տեղեկություն ներկայացնի համապատասխան մարմին: Իսկ հոդվածի երկրորդ մասի առկայության համար նույն գործողությունները պետք է կատարի, սակայն արդեն անձի ՀՀ-ից ելքի, այլ երկիր մուտքի կամ գտնվելու պատշաճ թույլտվություն ստանալու համար: Այսինքն, կարելի է ասել, որ անօրինական միգրացիայի կազմակերպման հանցակազմն ուղղակիորեն հարաբերակցվում է ՀՀ քրեական օրենսգրքով սահմանված՝ փաստաթղթեր, ձևաթղթեր կեղծելու կամ կեղծ փաստաթղթեր, ձևաթղթեր իրացնելու, պատրաստելու կամ օգտագործելու և ՀՀ պետական սահմանն ապօրինի հատելու՝ համապատասխանաբար՝ ՀՀ քրեական օրենսգրքի 457-րդ և 469-րդ հոդվածներով նախատեսված հանցակազմերի հետ:

Միգրանտի քրեական պատասխանատվության տեսանկյունից էական նշանակություն ունի յուրաքանչյուր դեպքով իրականացվող քրեական վարույթի շրջանակներում միգրանտի գործողությունները մանրագնին քննելը, մասնավորապես՝ այնպիսի հանգամանքների պարզումը, ինչպիսին է հանցանքի կատարմանը վերջինիս դերը, ներգրավվածության աստիճանը, հանցանքի կատարման հարցում նրա նախաձեռնողականությունը, պատկան մարմին ներկայացվելիք փաստաթղթերի փաթեթում իրավունք վերապահող կեղծ փաստաթղթերի առկայության մասին նրա իմացության, այդպիսիք ձեռքբերելու հարցում աջակցության կամ ակտիվ դերակատարության, կեղծ հիմքերի վրա ելքի, մուտքի, գտնվելու, տարանցման պատշաճ թույլտվություն ստանալու, այն օգտագործելու հանգամանքները և այլն:

Ներկայում պրակտիկան ձևավորվել է այնպես, որ հիմնականում անօրինական միգրացայի դեմ պայքարի թիրախ իրավապահ մարմինների կողմից ընկալվում է միայն անօրինական միգրացիայի կազմակերպիչը, իսկ միգրանտը հիմնականում հանդես է գալիս «տուժողի» կարգավիճակում, որը հանցանքի բացահայտման արդյունքում զրկվում է իր ցանկալի երկիր մեկնելու հնարավորությունից և կորցնում է միգրացիայի կազմակերպչին տված գումարը: Հիմնական քննությունն ընթանում է այն ուղղությամբ, թե ինչպես հիմնավորել միգրացիայի կազմակերպչի շահադիտական նպատակը, վերջինիս կողմից օրենսդրությամբ սահմանված կարգը խախտելու կամ կեղծ փաստաթուղթ կամ կեղծ տեղեկություն ներկայացնելու հանգամանքները: Հանցանքի բացահայտման ուղղությամբ իրականացվող օպերատիվ-հետախուզական միջոցառումները նույնպես իրականացվում են նույն տրամաբանության մեջ: Միգրանտի քրեական պատասխանատվության հարցը բարձրացվում է ելնելով՝

- պատկան մարմին ներկայացվելիք փաստաթղթերի ծավալի, դրանց իսկության վերաբերյալ միգրանտի իմացության մասով նրա հայտնած տեղեկություններից,
- կամ նրա մոտ հայտնաբերված փաստաթղթերի զննության, ինչպես նաև հայտնաբերված էլեկտրոնային սարքերում կամ կրիչներում կատարված թվային խուզարկության արդյունքներից:

Պրակտիկայի ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ իրականացված քննության առաջին փուլում հանրային քրեական հետապնդում է նախաձեռնվում միայն անօրինական միգրացիայի կազմակերպչի նկատմամբ, իսկ միգրանտի նկատմամբ հանրային քրեական հետապնդումը հարուցվում է ավելի ուշ: Սակայն անօրինական միգրացիայի կազմակերպման դեմ պայքարի արդյունավետությունն ուղղակիորեն բխում է ինչպես կազմակերպչի, այնպես էլ միգրանտի քրեական պատասխանատվության հարցում իրավապահ մարմինների կողմից համակողմանի, պատշաճ քննություն ապահովելու, իսկ հանցանքի բոլոր կողմերի պատասխանատվությանը հասնելու հարցում անդրդվելի մնալու հանգամանքներից:

Միգրանտի մասով պետք է նշել, որ վերջինիս քրեական պատասխանատվության կարող է կանչվել.

1. ՀՀ քրեական օրենսգրքի 469-րդ հոդվածով նախատեսված հանցանք կատարելու՝ պետական սահմանն ապօրինի հատելու համար: Մասնավորապես, խոսքն այն դեպքերի մասին է, երբ քրեական վարույթով իրականացված նախաքննությամբ հիմնավորվել է, որ ՀՀ-ից մեկնող կամ ՀՀ ժամանած միգրանտը տեղեկացված է եղել մուտքի, գտնվելու կամ տարանցման կամ ելքի, մուտքի կամ գտնվելու պատշաճ թույլտվությունը կեղծ փաստաթղթի կամ կեղծ տեղեկություն ներկայացնելու հիման վրա ստացած լինելու հանգամանքի մասին կամ կեղծ փաստաթղթերը կամ կեղծ տեղեկություններն անձամբ է ներկայացրել պատկան մարմին: Այսինքն՝ գիտակցել է, որ իրականում չունի պետական սահմանը հատելու պատշաճ թույլտվություն, սակայն իրավունք վերապահող կեղծ փաստաթղթի օգտագործմամբ հատում է այն:

Հանցակազմն առկա է նաև այն դեպքերում, երբ անօրինական միգրացիայի կազմակերպիչը ՀՀ-ից ելքը կամ ՀՀ մուտքը կազմակերպում է օրենսդրությամբ սահմանված կարգը խախտելով: Խոսքն այն դեպքերի մասին է, երբ անօրինական միգրացիայի կազմակերպիչը միգրանտի մուտքը կամ նրա ելքը կազմակերպում է պետական սահմանն ապօրինի հատելու եղանակով:

Քննարկվող դեպքերում, միգրանտի արարքը ենթակա է որակման ՀՀ քրեական օրենսգրքի 469-րդ հոդվածի համապատասխան մասով՝ նկատի ունենալով դեպքի հանգամանքները:

2. ՀՀ քրեական օրենսգրքի 457-րդ հոդվածով նախատեսված հանցանք կատարելու՝

փաստաթղթեր կեղծելու կամ կեղծ փաստաթղթեր պատրաստելու կամ օգտագործելու համար: Մասնավորապես, խոսքն այն դեպքերի մասին է, երբ քրեական վարույթով իրականացված նախաքննությամբ հիմնավորվել է, որ.

ա) ՀՀ մուտքի, գտնվելու կամ տարանցման կամ ՀՀ-ից ելքի, այլ երկիր մուտքի կամ գտնվելու պատշաճ թույլտվություն ստանալու համար միգրանտը կեղծ փաստաթուղթ կամ կեղծ տեղեկություն է ներկայացրել պատկան մարմին,

բ) նախորդ կետում նշված նպատակին հասնելու համար անօրինական միգրացիայի կազմակերպչի հանձնարարությամբ անձամբ պատրաստել ու վերջինիս ցուցումով պատկան մարմին ներկայացվելիք փաստաթղթերի փաթեթում ներառել է իրավունք վերապահող կեղծ փաստաթուղթ /օր.՝ *աշխատավայրի, աշխատավարձի չափի վերաբերյալ կեղծ տեղեկանք*:/:

Պրակտիկայում անօրինական միգրացիայի արդյունքում ՀՀ-ից մեկնած անձինք հիմնականում քրեական պատասխանատվության են կանչվում ՀՀ քրեական օրենսգրքի 457-րդ և 469-րդ հոդվածներով նախատեսված հանցանքներ կատարելու համար, սակայն սույն հոդվածի շրջանակում առաջարկվում է միգրանտի պատասխանատվության հարցը քննարկել նաև անօրինական միգրացիայի կազմակերպման դրոշմություն կատարելու տեսանկյունից: Մասնավորապես.

ՀՀ քրեական օրենսգրքի 45-րդ հոդվածի համաձայն՝

1. *Հանցակցություն է համարվում քրեական պատասխանատվության ենթակա երկու կամ ավելի անձանց դիտավորյալ համարելով մասնակցությունը դիտավորյալ հանցագործությանը:*

2. *Համակարարումը բացակայում է, երբ հանցանք կատարողն օգտագործում է այնպիսի անձի, որն օրենքի ուժով ենթակա չէ քրեական պատասխանատվության կամ ենթակա չէ քրեական պատասխանատվության տվյալ հանցագործության համար՝ որպես կատարող:*

ՀՀ քրեական օրենսգրքի 46-րդ հոդվածի համաձայն՝ *հանցակիցներ են համարվում կատարողը, դրդիչը, կազմակերպիչը և օժանդակողը:*

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ *դրդիչ է համարվում այն անձը, որը մեկ ուրիշին դրդել է հանցանք կատարելու՝ համոզելու, նյութապես շահագրգռելու, սպառնալիքի միջոցով կամ այլ եղանակով:* Իսկ հոդվածի 4-րդ մասը սահմանում է՝ *դրդիչ է համարվում նաև այն անձը, որը մեկ ուրիշին դրդել է դրոշմության կամ մեկ ուրիշին դրդել է հանցանք կատարելու՝ դրդելու համար օգտագործելով այնպիսի անձի, որն օրենքի ուժով ենթակա չէ քրեական պատասխանատվության կամ գործել է անզուգուրությամբ:*

Քրեական իրավունքի տեսության համաձայն՝ դրդիչը հանցագործության այն մասնակիցն է, որը կատարողի մոտ առաջացնում է հանցանք կատարելու դիտավորություն և վճռականություն:

Դրդիչի հասկացությունից հետևում է, որ դրոշմության օբյեկտիվ բովանդակությունն է կազմում կատարողի գիտակցության և կամքի վրա ներազդեցությունը, որով նպատակ է հետապնդվում նրան դրդելու հանցանքի կատարմանը: Դրդիչը կոնկրետ անձին (անձանց) դրդում է կոնկրետ հանցագործության: Սակայն դա չի նշանակում, որ դրդիչը քրեական օրենսգրքի համապատասխան հոդվածի դիսպոզիցիայի հատկանիշների ճշտությամբ պետք է բնութագրի այն հանցագործությունը, որի կատարմանը դրդում է (տեղը, ժամանակը, եղանակը, նպատակը և այլն): Բանն այն է, որ դրդիչը կարող է գործել չկոնկրետացված դիտավորությամբ, որպիսի դեպքերում դրդիչը պատասխանատվության պետք է ենթարկվի փաստացի կատարված հանցագործությանը հանցակցելու համար:

Դրոշմություն չեն կարող համարվել այն դեպքերը, երբ տարվում է ընդհանուր քարոզչություն, կամ անձը ցանկություն է արտահայտում հանցանք կատարելու առնչությամբ, ինչպես

նաև ընդհանրապես այս կամ այն հանցագործության նրբությունները սովորեցնելը: Դրոշյություն չէ նաև անձի անբարենպաստ ազդեցությունը մեկ ուրիշի նկատմամբ, թեկուզև վերջինս այդ ազդեցության հետ կապված հանցանք կատարի:

Յուրաքանչյուր դրոշյության դեպք՝ դրոշի կողմից ընտրած եղանակի առումով, կարող է առանձնահատուկ լինել: Դրոշին իր նպատակին հասնելու համար կարող է ընտրել տարբեր եղանակներ՝ կատարողի գիտակցության և կամքի վրա ազդելու համար: Առաջին հերթին դա պայմանավորված է նրանց միջև գոյություն ունեցող հարաբերությունների բնույթով: Եթե դրոշիցը կատարողի պետն է կամ վերադասը, ապա կատարողին հանցանքի կատարմանը դրոշելու համար նա կարող է օգտագործել հրամանը, սպառնալիքը, համոզումը և այլն: Եթե նրանց միջև այլ հարաբերություններ են՝ նյութական շահագրգռումը, սպառնալիքը, բռնությունը և այլն: Ներկայում դրոշյության առավել հաճախ հանդիպող եղանակներն են՝ նյութական շահագրգռումը, խաբեությունը, սպառնալիքը, համոզումը, որոնք էլ հիմնականում նշված են քրեական օրենսգրքի համապատասխան հոդվածում:

Դրոշյության սուբյեկտիվ կողմը բնութագրվում է ուղղակի դիտավորությամբ. հանցավորը գիտակցում է, որ իր գործողություններով մեկ ուրիշին դրոշում է հանցանք կատարելու, նախատեսում է կոնկրետ հանցանքը, որը պետք է կատարի կատարողը և ցանկանում է դրա կատարումը:

Հանցագործության նպատակը և շարժառիթը դրոշի և կատարողի մոտ կարող են չհամընկնել: Օրինակ՝ անօրինական միգրացիայի կազմակերպման դեպքում հնարավոր է, որ դրոշյությունը տեղի ունենա բուժման կամ ընտանիքի վերամիավորման նպատակով այլ երկիր մեկնելու շարժառիթով, սակայն կատարողը գործի շահադիտական շարժառիթով: Այդպիսին է իրադրությունը, օրինակ, այն դեպքերում, երբ դրոշիցը կատարողին հանցանքի կատարման է դրոշում նյութապես շահագրգռելու միջոցով: Այդ նույնը վերաբերում է նպատակին: Դրոշի սեփական նպատակը և շարժառիթը նշանակություն կունենան միայն դրոշի անձի բնութագրման համար:

Հանցակցության հատկանիշների վերաբերյալ Վճռաբեկ դատարանն իրավական դիրքորոշում է արտահայտել Ա. Մաթևոսյանի և Ռ. Հարությունյանի գործով թիվ ՎԲ-48/08 որոշման մեջ: Համաձայն այդ որոշման՝

«(...) հանցակցությանը բնորոշ են 3 հատկանիշ.

1. հանցագործության կատարումը երկու կամ ավելի անձանց կողմից.
2. գործողությունների համատեղությունը.
3. հանցակցության դիտավորյալ բնույթը:

Հանցակցության առաջին օբյեկտիվ հատկանիշը՝ հանցագործության կատարումը երկու կամ ավելի անձանց կողմից, արտահայտվում է այն բանում, որ հանցագործությունը պետք է կատարեն հանցագործության սուբյեկտ հանդիսացող երկու կամ մի քանի անձ: Հանցակիցներ կարող են լինել քրեական պատասխանատվության ենթարկելու տարիքի հասած մեղսունակ ֆիզիկական անձինք: Հանցակցության համար անհրաժեշտ է հանցագործության սուբյեկտի բոլոր հատկանիշներով օժտված ոչ պակաս երկու անձի առկայությունը:

Հանցակցության մյուս օբյեկտիվ հատկանիշը՝ հանցակիցների գործունեության համատեղությունը, նշանակում է, որ հանցագործության մասնակիցներից յուրաքանչյուրի գործողությունները փոխադարձ լրացնում են միմյանց և ուղղված են կոնկրետ հանցանքի կատարմանը: Հանցակիցները, միացնելով իրենց համատեղ ջանքերը, ձգտում են միասնական արդյունքի, և դրա համար յուրաքանչյուրն իր ներդրումն է ունենում ընդհանուր գործում:

Հանցակցության վերջին հատկանիշը գործունեության դիտավորյալ բնույթն է: Հանցակ-

ցության նման բնորոշումը հստակ ընդգծում է, որ անձինք գործում են միայն դիտավորյալ մեղքով և միայն դիտավորյալ հանցագործություններում»:

Մեջբերված դիրքորոշումը Վճռաբեկ դատարանը զարգացրել է *Ա. Միքայելյանի և Ա. Վաղարշակյանի* գործով կայացված որոշման մեջ՝ արձանագրելով, որ «(...) հանցակցի քրեական պատասխանատվության հիմքում ընկած է ոչ միայն նրա և կատարողի արարքի միջև պատճառական կապի առկայությունը, այլ նաև նրա կողմից կատարողի արարքի և դրա հետևանքների նկատմամբ որոշակի գիտակցական-կամային վերաբերմունք դրսևորելը:

Այսպես՝ հանցակցության սուբյեկտիվ կողմը նախատեսում է մեղքի բացառապես դիտավորյալ ձև, ընդ որում, որոշակի հանցանքի կատարմանն այլ անձանց հետ համատեղ մասնակցելու դիտավորությունն արտահայտվում է միայն ուղղակի ձևով, իսկ հանցագործության վտանգավոր հետևանքների նկատմամբ դրսևորվող դիտավորյալ մեղքի տեսակը կարող է լինել և՛ ուղղակի, և՛ անուղղակի:

Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ հանցակցության սուբյեկտիվ կողմին բնորոշ է այն, որ յուրաքանչյուր հանցակից պետք է՝

1) գիտակցի, որ համատեղ գործում է կատարողի կամ այլ հանցակցի հետ.

2) գիտակցի, որ իր արարքն անհրաժեշտ պայման է մյուս հանցակցի կողմից արարք կատարելու համար և ցանկանա համատեղ մասնակցել հանցագործությանը.

3) նյութական հանցակազմի դեպքում նախատեսի հանրորեն վտանգավոր հետևանքը և ցանկանա կամ գիտակցաբար թույլ տա դրա առաջացումը» (տես Արամ Արշավիրի Միքայելյանի և Արայիկ Ժորժիկի Վաղարշակյանի գործով Վճռաբեկ դատարանի 2012 թվականի դեկտեմբերի 5-ի թիվ ԵԱԲԴ/0174/01/11 որոշման 17-րդ կետը):

Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ դրդիչը, ազդելով կատարողի գիտակցության և կամքի վրա, տարբեր եղանակներով (համոզելով, նյութապես շահագրգռելով, սպառնալով և այլն) վերջինիս մոտ առաջացնում է հանցանք կատարելու դիտավորություն և վճռականություն: Դրդչության սուբյեկտիվ կողմը բնութագրվում է ուղղակի դիտավորությամբ, հանցավորը գիտակցում է, որ իր գործողություններով մեկ ուրիշին դրդում է հանցանքի կատարմանը, նախատեսում և ցանկանում է այդ հանցանքի կատարումը:

Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ

ա) դրդչի արարքը ենթակա է որակման կատարողի արարքի համար պատասխանատվություն նախատեսող ՀՀ քրեական օրենսգրքի համապատասխան հոդվածով՝ հղում կատարելով նույն օրենսգրքի համապատասխան հոդվածին: Այն դեպքում, երբ հանցագործությունն ավարտին չի հասցվում կատարողի կամքից անկախ պատճառներով, դրդչի արարքը ենթակա է որակման ՀՀ քրեական օրենսգրքի համապատասխան հոդվածով՝ հղում կատարելով նույն օրենսգրքի հանցակցությունը և հանցագործության կոնկրետ փուլը սահմանող հոդվածներին,

բ) այն դեպքում, երբ դրդչությունը ՀՀ քրեական օրենսգրքում նախատեսված է որպես հանցագործության օբյեկտիվ կողմի հատկանիշ, արարքը որակելիս ՀՀ քրեական օրենսգրքի դրդչությունը սահմանող նորմի վրա հղում չի կատարվում,

գ) դրդչությունը կարող է առանձին հանցագործությունների կատարման միջոց հանդիսանալ (օրինակ՝ *խարդախությունը, որը կատարվում է խաբեության կամ վստահությունը չարաշահելու եղանակով*):

Քննարկվող դեպքում միգրանտը, ցանկություն ունենալով մեկնել ՀՀ-ից և մինևույն ժամանակ համոզված չլինելով օրինական ընթացակարգով ցանկալի երկիր մուտքի և գտնվելու պատշաճ թույլտվություն ստանալու հնարավորության մեջ, կամ արդեն իսկ հյուպատոսա-

կան մարմնից կամ դեսպանատնից ստացած լինելով մերժում, դիմում է անօրինական միգրացիայի կազմակերպչին, ով գումարի դիմաց համաձայնվում է օրենսդրությամբ սահմանված կարգը խախտելով կամ ելքի, մուտքի կամ գտնվելու պատշաճ թույլտվություն ստանալու համար կեղծ փաստաթուղթ կամ կեղծ տեղեկություն ներկայացնելով կազմակերպել իրեն դիմած անձի անօրինական միգրացիան: Շատ դեպքերում, անօրինական միգրացիայի կազմակերպիչը, ելքի, մուտքի կամ գտնվելու պատշաճ թույլտվություն ստանալու հավանականությունը մեծացնելու նպատակով պատկան մարմին ներկայացվելիք փաթեթում ներառելու համար միգրանտին տրամադրելով իրավունք վերապահող կեղծ փաստաթղթերը, վերջինիս նախապես ծանոթացնում է դրանց բովանդակությանը, նախապատրաստում, թե ինչ պետք է հայտնի դեսպանատանը կամ հյուպատոսարանում⁸: Միգրանտն էլ, համաձայնեցված գործելով անօրինական միգրացիայի կազմակերպչի հետ, հետապնդելով նույն նպատակը, ճշտությամբ կատարում է վերջինիս բոլոր հրահանգները:

Այսպիսով, ստացվում է, որ միգրանտը, ցանկանալով մեկնել կոնկրետ երկիր և չունենալով այդ երկիր մուտքի և գտնվելու պատշաճ թույլտվություն, ցանկանում է այդտեղ մեկնել անօրինական միգրացիայի արդյունքում: Իր մտադրության իրականացման նպատակով գտնում է նման գործընթացը կազմակերպողի, խոստանում գումար՝ գործընթացը կազմակերպելու համար, այսինքն՝ նյութապես շահագրգռելու եղանակով ազդում է վերջինիս գիտակցության և կամքի վրա, նրա մոտ առաջացնում է հանցանք կատարելու դիտավորություն և վճռականություն:

Տվյալ դեպքում, երբ միգրանտը գիտակցում է, որ օրինական գործընթացի արդյունքում հնարավոր չէ մեկնել ցանկալի երկիր, ուստի դիմում է անօրինական միգրացիայի կազմակերպչին՝ իր աշխատավայրի, աշխատավարձի չափի, բանկային շարժի կամ շարժական ու անշարժ գույք ունենալու և այլնի մասին իրավունք վերապահող կեղծ փաստաթղթեր, տեղեկություններ ներկայացնելու եղանակով կազմակերպելու ցանկալի երկիր մուտքի և գտնվելու պատշաճ թույլտվության ստացումը, վկայում է այն մասին, որ միգրանտի արարքում առկա է դրդչության սուբյեկտիվ կողմը բնութագրող ուղղակի դիտավորության հատկանիշը: Այսինքն, միգրանտը գիտակցում է, որ իր գործողություններով մեկ ուրիշին դրդում է հանցանքի կատարմանը, նախատեսում և ցանկանում է այդ հանցանքի կատարումը, ուստի այն դեպքերում, երբ քրեական վարույթով իրականացված նախաքննությամբ հիմնավորվել է, որ անձը գիտակցել է օրինական ընթացակարգով ցանկալի երկիր մուտքի և գտնվելու պատշաճ թույլտվություն ստանալու անհնարինությունը և դիմել է անօրինական միգրացիայի կազմակերպչին, խոստացել նյութական օգուտ՝ ցանկացած, ներառյալ իրավունք վերապահող կեղծ փաստաթուղթ կամ կեղծ տեղեկություն ներկայացնելու, օրենսդրությամբ սահմանված կարգը խախտելու անօրինական եղանակներով կազմակերպել իր միգրացիան, ապա վերջինիս արարքը կեղծ փաստաթուղթ օգտագործելու, պետական սահմանն ապօրինի հատելու կամ հատելու փորձ/նախապատրաստություն կատարելուց զատ՝ պետք է որակել որպես անօրինական միգրացիայի կազմակերպման դրդչություն՝ հղում կատարելով ՀՀ քրեական օրենսգրքի 46-րդ հոդվածին:

Ընդ որում, պետք է ընդգծել, որ քննարկվող դեպքերում, եթե նույնիսկ գործընթացի կազմակերպման համար գումարի առաջարկը հնչի անօրինական միգրացիայի կազմակերպչի կողմից, դա ամենևին էլ չի ենթադրում, որ վերջինիս կողմից հանցանք կատարելու դիտա-

⁸ Օրինակ՝ Գերմանիայի Դաշնային Հանրապետության կամ Ֆրանսիայի Հանրապետության դեսպանություններ դիմելու դեպքում քաղաքացին անձամբ է ներկայացնում փաթեթը և մասնակցում հարցազրույցի:

վորությունը և վճռականությունը չի առաջացել միգրանտի գործողությունների արդյունքում: Մասնավորապես, երբ միգրանտը դիմում է կազմակերպչին իր անօրինական միգրացիան կազմակերպելու խնդրով՝ բնականաբար գիտակցելով, որ գործընթացը կատարվելու է նյութական օգուտի դիմաց, նրան դրդում է կատարել հանցանք և այդ դիտավորությունն ամրապնդում է նյութական օգուտի առաջարկ ներկայացնելով: Այսինքն, ներքին բովանդակության առումով հանցանքի կատարման նախաձեռնողականությունը բխում է միգրանտից: Նույնիսկ գրեթե բոլոր դեպքերում միգրանտները նախապես տեղեկացված են լինում տարբեր ուղղություններով անօրինական միգրացիայի կազմակերպման «գործող արժեքներից» և համոզված լինելով իրենց վճարունակության մեջ՝ դիմում են անօրինական միգրացիան կազմակերպչին:

Հարկ է նկատի ունենալ նաև, որ ներկայում դրդչության որակման առումով պրակտիկան զարգանում է հենց այս տրամաբանությամբ: Օրինակ՝ պաշտոնատար անձի կողմից իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունը չարաշահելու կամ լիազորություններն անցնելու դեպքերում իրականացվող վարույթներով, երբ քննությամբ բավարար փաստական տվյալներ են ստացվում առ այն, որ անձը պաշտոնատար անձին համոզելու կամ այլ եղանակով (բացառությամբ՝ նյութական օգուտ առաջարկելու, խոստանալու կամ տալու դեպքերի)⁹ դրդել է գերծ մնալ իր ծառայողական պարտականությունները կատարելուց կամ իր իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործել ի վնաս պետական կամ ծառայողական շահերի: Նման դեպքերում արարքը որակվում է որպես պաշտոնեական լիազորությունները չարաշահելու դրդչություն:

Կարծում ենք, որ վերոգրյալ մոտեցումները, որոնք որդեգրել են իրավակիրառները, ամբողջությամբ իրավաչափ են, բխում են ՀՀ քրեական իրավունքի իրավակարգավորումներից և Վճռաբեկ դատարանի նախադեպային որոշումներում արտահայտած իրավական դիրքորոշումներից:

Եզրակացություն

Ամփոփելով վերը շարադրվածը՝ կարծում ենք, որ միգրանտի քրեական պատասխանատվության մասով պետք է որդեգրել ևս մեկ նոր մոտեցում: Մասնավորապես, այն դեպքերում, երբ միգրանտը, ցանկություն ունենալով մեկնել ՀՀ-ից և միևնույն ժամանակ համոզված չլինելով օրինական ընթացակարգով ցանկալի երկիր մուտքի և գտնվելու պատշաճ թույլտվություն ստանալու հնարավորության մեջ, կամ մուտքի և գտնվելու պատշաճ թույլտվության մերժում ստանալով դիմում է անօրինական միգրացիայի կազմակերպչին՝ զարտուղի եղանակով իր ելքի, մուտքի կամ գտնվելու պատշաճ թույլտվությունը ստանալու խնդրով, իսկ վերջինս էլ գումարի դիմաց համաձայնվում է ապահովել պահանջը, միգրանտի արարքը պետք է որակել նաև անօրինական միգրացիայի կազմակերպման դրդչություն՝ **հղում կապարելով ՀՀ քրեական օրենսգրքի 46-րդ հոդվածին:**

Նման մոտեցումը բխում է «Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրով» և ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված օրենքի առաջ բոլորի հավասարության սկզբունքի իրացման, ՀՀ քրեական օրենսգրքով սահմանված խնդիրների լուծման շահերից: Առաջարկվող կարգավորումը միգրանտի արարքի որակման առումով ամենևին չի հակասում ՀՀ քրեական

⁹ Քննարկվող դեպքում խոսքը վերաբերում է կաշառք ստանալու հանցակազմի առկայությանը, որը պաշտոնեական լիազորությունների չարաշահման հանցակազմի հետ հարաբերակցվում է ընդհանուր և հատուկ նորմերի մրցակցության առումով, որի դեպքում գործում է հատուկ նորմ հանդիսացող կաշառք ստանալը նախատեսող հանցակազմը:

օրենսգրքով սահմանված արդարության և պատասխանատվության անհատականացման սկզբունքի իրացմանը և հանցավորության դեմ պայքարի հաջող արդյունքը պատասխանատվության խստացմամբ ապահովելու միտում և հիմնավորում չի պարունակում: Միգրանտի արդարացի քրեական պատասխանատվությանը հասնելու մասով անզիջում կամքը և դրանից բխող գործողությունների շղթան ոչ պակաս ազդեցություն ունեն անօրինական միգրացիայի կազմակերպման հանցանքի դեմ պայքարում, նույնիսկ շատ դեպքերում ավելի մեծ նշանակություն ունեն հիշյալ հանցանքի դեմ պայքարի արդյունավետությունն ապահովելու գործում:

Ամփոփագիր: Հայաստանի Հանրապետության միգրացիայի պետական կառավարման գործում մշտապես կարևորվել է անկանոն և անօրինական միգրացիայի դեմ պայքարը՝ մեծապես կենտրոնանալով Հայաստանից սկիզբ առնող անկանոն միգրացիայի կրճատման վրա, որպիսի երևույթի ուսումնասիրության և դրա կանխարգելման նպատակով առաջարկությունների ներկայացման հարցի իրականացման պահանջն ընդգրկվել է գերակա խնդիրների ցանկում: Անկանոն միգրացիայի հետ կապված հարցերի ներառումը գերակա խնդիրների շարքում ինքնին վկայում է այս երևույթի դեմ պայքարի կարևորությունը մեր պետության և հասարակության համար:

Այս խնդրի իրագործման նպատակով Հայաստանում իրականացվել են օրինական միգրացիային նպաստող մի շարք միջոցառումներ, իսկ 2014 թվականին քրեականացվել է անօրինական միգրացիայի կազմակերպումը, որը քրեորեն պատժելի արարք է համարվում պետությունների մեծամասնության քրեական օրենսգրքերով, սակայն, դեռևս բավականին մեծ են անելիքները Հայաստանից սկիզբ առնող անկանոն և անօրինական միգրացիայի կանխարգելման ուղղությամբ, հատկապես այն դեպքում, երբ Հայաստանում իմիգրացիոն հոսքերի մեծացման հետ մեկտեղ մեծացել են նաև օտարերկրացիների անօրինական և անկանոն ներհոսքի, կացության և աշխատանքի ոլիսկերը:

Հոդվածում անդրադարձ է կատարվելու այլ երկիր մեկնելու օրինական հիմքերին, այդ կապակցությամբ Հայաստանի Հանրապետությունում առկա օրենսդրական կարգավորումներին, անօրինական միգրացիային վերաբերող մի շարք հասկացություններին Միգրացիայի միջազգային կազմակերպության կողմից տրված սահմանումներին, միգրանտի քրեական պատասխանատվության հիմքերին, իրավակիրառ պրակտիկայում միգրանտի արարքին տվող իրավական գնահատականներին, վերջինիս քրեական պատասխանատվությանը հասնելուն ուղղված առկա գործընթացներին և այլն: **Արդյունքում հեղինակի կողմից միգրանտի արարքին տրվող իրավական գնահատականի մասով ներկայումս կիրարկվողների շարքում առաջարկվել է նոր լուծում:**

Annotation. Combating against irregular and illegal migration in the state management of migration of the Republic of Armenia has always been emphasized, focusing heavily on the reduction of irregular migration originating from Armenia, the requirement to execute the issue to study such phenomenon and make suggestions for its prevention was included in the list of priority issues. The inclusion of the issues regarding irregular migration in the list of priority issues hereby proves the importance of combating against this phenomenon for our State and society.

In order to implement this problem, a number of measures promoting legal migration were implemented in Armenia, and in 2014 the organization of illegal migration was criminalized which is considered a criminal offense under the Criminal Codes of most States, especially when along with the increase in immigration flows in Armenia, the risks of illegal and irregular influx, residence and work of foreigners have also increased.

This article will refer to the legal grounds for traveling to another country, the existing legislative regulations in the Republic of Armenia in this regard, a number of concepts related to illegal migration, the definitions given by the International Organization for Migration, the grounds of the migrant's criminal responsibility, the legal assessments given to the migrant's acts in law enforcement practice, the existing measures aimed at achieving the latter's criminal responsibility and etc. **As a result, the author proposed a new solution among the currently implemented ones regarding the legal assessment of the migrant's act.**

Аннотация. В деле государственного регулирования миграции в Республике Армения всегда уделялось особое значение борьбе с беспорядочной и незаконной миграцией, в основном сосредотачиваясь на сокращении беспорядочной миграции из Армении. Требование по реализации вопроса внесения предложений с целью изучения и предотвращения данного явления было включено в перечень главенствующих проблем. Включение вопросов, связанных с беспорядочной миграцией, в ряд главенствующих проблем, само по себе свидетельствует о важности борьбы против этого явления для нашего государства и общества.

С целью реализации данной задачи в Армении был проведен ряд мероприятий, способствующих законной миграции, а в 2014 г. была криминализована организация незаконной миграции, которая по уголовному кодексу большинства государств считается уголовно наказуемым деянием. Однако пока достаточно велики работы по предотвращению беспорядочной и незаконной миграции из Армении, особенно в том случае, когда с увеличением иммиграционных потоков в Армении увеличились также риски незаконного и беспорядочного въезда иностранцев в страну, пребывания в ней и работы.

В данной статье обращено внимание на законные основания выезда в иную страну, на законодательные регулирования, имеющиеся по решению рассматриваемого вопроса в Республике Армения, на ряд понятий, относящихся к незаконной миграции, на определения, данные Международной организации по миграции, на основания уголовной ответственности мигранта, правовые оценки, дающиеся деяниям мигранта в правоприменительной практике, имеющиеся в наличии процессы, направленные на достижение уголовной ответственности последнего и т.д. **В результате автором была дана правовая оценка деянию мигранта, а также в ряду ныне применяемых решений предлагаются и новые.**

Բանալի բառեր - *տեղաշարժի ազատության իրավունք, փախստական, ապաստան հայցող, ելքի, մուտքի և գտնվելու պատշաճ թույլտվություն, շահադիպական նպատակ, միգրանտ, դրդիչ, անօրինական միգրացիայի կազմակերպիչ:*

Keywords: *right to freedom of movement, refugee, asylum seeker, proper permission for exit, entry and stay, mercenary purpose, migrant, instigator, organizer of illegal migration.*

Ключевые слова: *право на свободу передвижения, беженец, соискатель убежища, надлежащее разрешение на выезд/въезд в страну, пребывание, корыстная цель, мигрант, подстрекатель, организатор незаконной миграции.*

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. ՀՀ Սահմանադրություն, 2015 թվականի փոփոխություններ,
2. «Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիր», 1948 թ.,
3. «Անդրազգային կազմակերպված հանցավորության դեմ» Միավորված ազգերի կազմակերպության կոնվենցիան լրացնող՝ «Ցամաքով, ծովով և օդով միգրանտներին մաքսանենգ ճանապարհով տեղափոխման դեմ» ՄԱԿ-ի 2000 թվականի արձանագրություն,
4. Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրք: (Ընդունվել է 05.05.2021),
5. «Օտարերկրացիների մասին» ՀՀ օրենքը, 25.12.2006 թ.,
6. «Փախստականների և ապաստանի մասին» ՀՀ օրենքը, 27.11.2008 թ.,
7. Հայաստանի Հանրապետության քրեական իրավունք: Հատուկ մաս (վեցերորդ հրատարակություն՝ փոփոխություններով և լրացումներով), Երևանի պետական համալսարան, Երևան: ԵՊՀ հրատ., 2012 թ.,
8. ՀՀ քրեական նոր օրենսգրքում տեղ գտած հայեցակարգային մոտեցումների և նոր ինստիտուտների մեկնաբանման ուղեցույց: /<https://rm.coe.int/new-criminal-code-guideline-arm/1680a72c57/>,
9. «Միգրացիայի ոլորտի տերմինների բառարան» 2-րդ հրատարակություն 2003 թ.,

10. ՀՀ գլխավոր դատախազության ՀՀ ԱԱԾ մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ հսկողության վարչությունում 2017-2022 թվականներն ընդգրկող ժամանակահատվածում ՀՀ քրեական օրենսգրքի 470-րդ /2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 329.1-րդ/ հոդվածով նախատեսված հանցագործությունների հատկանիշներով նախաձեռնված քրեական վարույթներով մինչդատական քրեական վարույթի օրինականության նկատմամբ դատախազական հսկողության և մեղադրանքի պաշտպանության վիճակի վերաբերյալ կատարված ուսումնասիրության և դրա արդյունքներն ամփոփելու մասին աշխատանքային զեկույց, 2022 թ.:

Ասատրյան Ա. - ՀՀ ազգային անվտանգության ծառայության օպերատիվ գործունեությանն աջակցման վարչության պետի տեղակալ, փոխգնդապետ, ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի քրեական իրավունքի ամբիոնի հայցորդ, էլիասցե՝ asatryanarmen91@gmail.com:

Ներկայացվել է խմբագրություն 25.03.2024 թ., տրվել է գրախոսության 25.03.2024թ., երաշխավորվել է ՀՀ գլխավոր դատախազության պետական իշխանության դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչության պետ Վ. Ավետիսյանի կողմից, ընդունվել է տպագրության 15.04.2024 թ.:

<https://doi.org/10.59546/18290744-2024.1-3-84>

ՌՈԶԱ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

ԵՊՀ քրեական իրավունքի ամբիոնի դասախոս, ասպիրանտ

ROZA ABRAHAMYAN

Lecturer at the Chair of Criminal Law of YSU, PhD student

РОЗА АБРААМЯН

Преподаватель кафедры уголовного права ЕГУ, аспирант

**ՊԱՏԻԺՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՏԱՐԲԵՐԱԿՄԱՆ ԵՎ
ԱՆՀԱՏԱԿԱՆԱՑՄԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԻ ԵՐԱՇԽԻՔՆԵՐԻ
ՀԻՄՆԱՀԱՐՑԸ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԿԱՌՈՒՑԱԿԱՐԳԻ
ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ**

**ISSUES OF ENSURING THE PRINCIPLES OF DIFFERENTIATION AND
INDIVIDUALIZATION OF EXECUTION OF PUNISHMENTS IN THE
CONTEXT OF THE STRUCTURE OF LEGAL REGULATION**

**ПРОБЛЕМЫ ОБЕСПЕЧЕНИЯ ПРИНЦИПОВ ДИФФЕРЕНЦИАЦИИ И
ИНДИВИДУАЛИЗАЦИИ ИСПОЛНЕНИЯ НАКАЗАНИЙ В КОНТЕКСТЕ
СТРУКТУРЫ ПРАВОВОГО РЕГУЛИРОВАНИЯ**

Ներածություն

Սույն հոդվածում փորձ է արվել բացահայտել քրեակատարողական սկզբունքների կենսագործման իրավական երաշխիքը՝ որպես պատիժների կատարման տարբերակման և անհատականացման սկզբունքների կենսագործման կարևորագույն իրավական երաշխիք: Նշենք, որ քրեակատարողական իրավունքի սկզբունքների կենսագործման և դրա երաշխիքների հասկացության մասին ճիշտ, իսկ համակարգի մասին հիմնավորված պատկերացում կազմելու համար անհրաժեշտ է ելնել ոչ թե քրեակատարողական իրավունքի տեսության ճյուղային, պոզիտիվիստական մոտեցումների շրջանակից, այլ դիմել իրավունքի տեսության որպես հիմնարար գիտության օգնությանը: Այսպիսի հետազոտություն իրականացնելու համար պետք է ներկայացնել առաջին հերթին՝ իրավական սկզբունքների տեղն ու դերն իրավական կարգավորման համակարգում, և երկրորդ՝ քրեակատարողական իրավական սկզբունք-նորմերը դիտարկել իրավունքի՝ որպես հասարակական հարաբերությունների կարգավորիչի համակարգային դրսևորումների շրջանակներում:

Ուսումնասիրության նման ուղղությունը հնարավորություն է տալիս ամբողջական պատ-

կերացում կազմելու քրեակատարողական իրավունքի սկզբունքների և պատիժների կատարման տարբերակման ու անհատականացման սկզբունքների կենսագործման և դրա երաշխիքների ամբողջական շրջանակի վերաբերյալ:

Հիմնական հետազոտություն

Իրավունքն իրավաբանական կամ լայն իմաստով իրավահասկացողության տեսանկյունից տարբերվում է օրենսդրությունից: Ըստ Վ. Ս. Ներսեսյանցի՝ «Իրավաբանական իրավահասկացողության համար իրավունքը հասարակ կամայական և սուբյեկտիվ իշխանական կարգադրագիր չէ, այլ օբյեկտիվ և ինքնուրույն, իր սեփական բնույթով (օրենսդրի կամքից չկախված), իր էությանմբ և յուրահատկությամբ. մի խոսքով, իր սկզբունքով ինչ որ երևույթ»¹: Իրավունքը, լինելով որպես օբյեկտիվ էություն կամ գաղափար կամ գերակշռություն, իր սոցիալ-իրավական գործառույթներն արդյունավետ իրականացնելու համար կարիք ունի կենսագործման: Այն որպես մարդու և հասարակության բնույթով պայմանավորված սոցիալական կարգավորիչ, անցնում է կենսագործման բարդ և միասնական կառուցակարգով, որի առաջին բաղադրատարրն իրավունքի պահանջների վերածումն է օրենսդրության, այդ պահանջներին իրավաստեղծագործության միջոցով պետապաշտոնական նորմատիվ ձև տալով:

Իրավունքին կամ նրա պահանջներին ձև տալու, դրանք ամրագրում ունեցող իրավական նորմերի վերածելու գործընթացը բավականին բարդ, հետազոտական բնույթ ունեցող գործունեություն է և պատահական չէ, որ որոշ տեսաբաններ այն անվանում են «իրավունքի որոնում»: Օրինակ՝ Վ. Վ. Լազարևի կարծիքով՝ «... իրավունքի որոնումը, կարելի է մեկնաբանել դրականության դիրքերից, իրավունքի նշանակություն տալով իշխանական այն որոշմանը, որը ձևավորվում է օրենսդիր գործունեության սահմանված ընթացակարգերին հետևելու գործընթացում: Սակայն օրենսդրի իրավակենսագործող գործունեության քննարկման համար մեծ հնարավորություններ են բացվում, եթե իրավունքը դիտարկվում է որպես երևույթ, որը գոյություն ունի մինչև օրինաստեղծագործությունը և դրանից դուրս: Օրենսդիրն այդ դեպքում որոնում է իրավունքը, հետևում է դրան՝ ձևակերպելով օրենքի նորմերը»²: Վ. Վ. Լազարևի այս մոտեցման լույսի տակ «հայտնաբերված» իրավունքի առաջին բովանդակային դրսևորումը համարվում են իրավական սկզբունքները՝ ըստ կարգավորման ոլորտների՝ համընդհանուր (համաիրավական), ճյուղային, միջճյուղային, առանձին իրավական ինստիտուտների: Այս մոտեցումն իրավունքի տեսության մեջ անվիճելի հիմնադրույթ է, ինչը հաստատվում է «իրավունքի սկզբունք» հասկացության ընդհանուր տեսական³ և քրեակատարողական ճյուղային բնորոշումներով (սահմանումներով)⁴:

Իրավունքի տեսաբաններից Վ. Ի. Գոյմանն «իրավունքի սկզբունքներ» հասկացությունը բնորոշում է հետևյալ կերպ. «Իրավունքի սկզբունքները համապարտադիր ելակետային նոր-

¹ Օրենքականության համար «ինչ է իրավունքը» հարցը գոյություն չունի, քանի որ «իրավունքն արդեն պաշտոնապես տրված, գործող, պոզիտիվ իրավունքն է: Լեզիզմն այստեղ չունի հիմնախնդիր, նա ունի միայն դժվարություններ բնորոշելու (սահմանելու) այն, ինչն արդեն կա» (տե՛ս Нерсесянц В.С. Философия права. М., Издательская группа ИНФРА.М-Норма, 1997, էջ 32-35):

² Տե՛ս Лазарев В. В., Действие права /Проблемы теории государства и права. /Под. ред. В.С. Нерсесянца, М., 2002, էջ 419-420:

³ Տե՛ս Теория государства и права. Под ред. В. М. Корельского и В. Д. Перевалова. М., Издательская группа ИНФРА. М-НОРМА, 1997, էջ 237; Теория государства и права. Под ред. Р.А. Ромашова. СПб., Издательство Р. Асланова „Юридический центр Пресс“, 2005, էջ 189; Общая теория государства и права. Академический курс в 2-х томах. Под ред. М. Н. Марченко. Том 2. Теория права. М., Издательство „Зерцало“, 1998, էջ 22 և այլն:

⁴ Տե՛ս Чубраков С. В., Проблема принципов в уголовно-исполнительном праве: история и современность /под ред. В.А. Уткина. – Томск: Издательский Дом ТГУ, 2015, էջ 6-26:

մատիվ իրավական դրույթներ են, որոնք աչքի են ընկնում համընդհանրությամբ, ընդհանուր նշանակությամբ, բարձրագույն իմպերատիվությամբ, որոշում են իրավական կարգավորման բովանդակությունը և չափանիշ են իրավունքով կարգավորվող հարաբերությունների մասնակիցների վարքագծի և գործունեության իրավաչափության համար»⁵:

Եթե իրավունքի տեսության այս հիմնադրույթները տեղայնացնենք քրեակատարողական իրավակարգավորման համակարգում, ապա կարող ենք ասել, որ քրեակատարողական իրավունքի սկզբունքներն իրավունքի այդ ճյուղի կարգավորման առարկայի (ոլորտի) տիրույթում հայտնաբերված իրավունքի առաջնային, ելակետային նշանակություն ունեցող իրավական գաղափարներ (դրույթներ) են, որոնք ճյուղային կարգավորման նորմատիվային համակարգում ունեն ընդհանուր նշանակություն, պարտադիրություն, բարձրագույն իմպերատիվություն, իսկ սկզբունք չհամարվող մնացած իրավադրույթները բխում են սկզբունքներից, կոնկրետացնում ու մանրամասնում են դրանք:

Քրեակատարողական իրավունքի և ընդհանրապես բոլոր իրավական սկզբունքները, լինելով ղեկավար և ելակետային գաղափարներ, կարիք ունեն կենսագործման, այսինքն՝ բավական չէ որոնել և հայտնագործել պատիժների կատարման տարբերակման և անհատականացման սկզբունքներն իրենց նորմատիվ բովանդակությամբ հանդերձ, անհրաժեշտ է նաև այդ գաղափարներից բխող պահանջները բոլոր առումներով ու կողմերով արտահայտել, արտացոլել, ներդնել իրավական կարգավորման ինչպես նորմատիվային դրույթների համակցության մեջ, որպեսզի իրավական ղեկավար գաղափարը (սկզբունքը) նախ վերածվի իրավական մանրամասնող նորմերի, այնուհետև՝ դրանց իրականացմամբ՝ դառնա հասարակական պրակտիկա: Քրեակատարողական իրավունքի սկզբունքների այս առումը ենթադրում է հատուկ պետապաշտոնական գործունեություն և կարիք ունի բազում երաշխիքների:

Այժմ փորձենք քրեակատարողական իրավունքի սկզբունքների որպես ղեկավար գաղափարների կենսագործման երաշխիքները դիտարկել իրավունքի համակարգային դրսևորումների տեսական մոտեցումներում:

Իրավունքը կամ իրավական կարգավորումը որպես համակարգային կազմավորում դիտարկվում է բազմաթիվ տեսանկյուններից⁶: Իրավունքի (ներառյալ քրեակատարողական), որպես հասարակական հարաբերությունների կարգավորման յուրահատուկ համակարգի համար սույն հետազոտության խնդիրներով պայմանավորված, կարևոր նշանակություն ունեն իրավունքը որպես ներպետական և միջազգային ենթահամակարգերի ամբողջություն, իրավունքը որպես «իրավական կարգավորման կառուցակարգային համակարգ», «իրավունքի կենսագործման համակարգային կառուցակարգ» հայեցակարգերը:

Իրավունքի ներպետական և վերպետական ենթահամակարգային տարրերի (իրավունքների) միասնական ամբողջության համակարգային կառուցվածքից և, հատկապես այդ երկու տարրերի փոխհարաբերակցության մեջ միջազգային իրավունքի առաջնայնության սկզբունքից բխում է, որ ներպետական նորմերը (ներառյալ ընդհանուր և ճյուղային սկզբունքները) կարող են ունենալ կամ ունեն միջազգային իրավական կարգավորում, ինչն իր հերթին երաշխիք

⁵ Տե՛ս *Гойман В. И.*, Право в системе нормативного регулирования.- В кн. Общая теория права и государства. Под ред д. В.В. Лазарева. М., Юристъ, 2005, էջ 134-135:

⁶ Տե՛ս *Скакун О.Ф.*, Теория государства и права (энциклопедический курс): Учебник. Харьков: Эспада, 2005, էջ 276-278; Теория государства и права. Под ред. В.М. Корельского и В.Д. Перевалова. М., Издательская группа ИНФРА. М-НОРМА, 1997, էջ 217-232; Общая теория права и государства. Под ред. В.В. Лазарева. М., Юристъ, 2005, էջ 133-134; Общая теория государства и права. Академический курс в 2-х томах. Под ред. М.Н. Марченко. Том 2. Теория права. М., Издательство „Зерцало“, 1998, էջ 16:

է, որ համապատասխան իրավական գաղափար-սկզբունքը կկենսագործվի ներպետական իրավական համակարգում՝ դրա նորմատիվային, ինստիտուտային, իրավագիտակցական բաղադրատարրերում: Ասվածից բխում է, որ **քրեակատարողական իրավունքի սկզբունքներին մասնավորապես նաև պատիժների կատարման տարբերակմանն ու անհատականացմանը, բնութագրական են միջազգային իրավական երաշխիքներ:**

Իրավունքի միջոցով հասարակական հարաբերությունների իրավակարգավորիչ գործընթացն իրավունքի տեսության մեջ ամփոփված է «իրավական կարգավորման կառուցակարգ» (մեխանիզմ) հասկացությունում, հետևաբար կարիք կա քրեակատարողական իրավունքի սկզբունքների կենսագործման և դրա երաշխիքների հիմնահարցը դիտարկել իրավական կարգավորման կառուցակարգ համակարգային հայեցակարգում:

Իրավական կարգավորման կառուցակարգի տեսությունը մշակվել է անցյալ դարի կեսերից⁷, իսկ դրա վերաբերյալ պատկերացումները զարգացվում են մինչև մեր օրերը⁸: Իրավական կարգավորման սոցիալական կառուցակարգի տարրերի ու փուլերի վերաբերյալ պատկերացումներից բավականին հետաքրքիր է Վ. Մ. Սիրիխի մոտեցումը՝ որպես առավել ամբողջական և համակարգային, որի դեպքում իրավունքի գործողության ողջ գործընթացում տեղավորված են իրավական գործունեության բոլոր ձևերը, ինչից ելնելով հենց այդ մոտեցումը կօգտագործենք քրեակատարողական իրավունքի սկզբունքների կենսագործման հիմնախնդիրները իմաստավորելու համար: Վ. Մ. Սիրիխի պատկերացմամբ, իրավական կարգավորման սոցիալական համակարգի փուլեր են՝ իրավունքի ձևավորումը, իրավաստեղծագործությունը, իրավունքի իրականացումը, սոցիալ-իրավական վերահսկողությունը, և ամեն մի փուլը որպես ենթակառուցակարգ ունի իրեն բնորոշ տարրեր, իրավաբանական միջոցներ⁹:

Իրավական կարգավորման սոցիալական համակարգի (կառուցակարգի) հայեցակարգը կոնկրետացնելով քրեակատարողական իրավունքի գործողության ոլորտում, գալիս ենք այն եզրակացության, որ քրեակատարողական իրավական կարգավորման կառուցակարգը ևս ներառում է այդ իրավունքի ճյուղի նորմերի կազմավորման, իրավաստեղծագործության, իրավունքի կենսագործման (իրականացման) և սոցիալ-իրավական վերահսկողության փուլերը:

1. Քրեակատարողական իրավական կարգավորման կառուցակարգի առաջին փուլում՝ իրավունքի կազմավորման, քրեակատարողական իրավունքի սկզբունքները, ներառյալ պատիժների կատարման տարբերակման և անհատականացման, անցնում են տեսագաղափարական խմորումների ու իմաստավորման գործընթաց, որի արդյունքում առաջադրվում են որպես ղեկավար և ելակետային նշանակություն ունեցող իրավական գաղափարներ: Գիտականորեն հիմնավորված նման իրավական գաղափարները կարող են լինել բազմաթիվ, սակայն դրանցից քրեակատարողական իրավունքի սկզբունքի են վերաձվում միայն այն ելակետային հիմնարար դրույթները, **որոնք, անցնելով իրավաստեղծագործության (օրինաստեղծագործության) փուլից,** անցնում են իրականացման փուլ:

⁷ Այդ տեսության մշակման գործում էական է Ս. Ս. Ալեքսեևի դերը (Механизм правового регулирования в социалистическом государстве. М., 1966): Հետագայում մշակվեցին այդ տեսության հիմնական հասկացությունները, վեր հանվեցին դրա կառուցվածքային ու գործառնությունային բաղադրիչները, ինչպես նաև իրավական ազդեցության մեխանիզմ հասկացությունը (տե՛ս Теория государства и права. Под ред. С.С. Алексеева. М., Юрид. лит., 1985, էջ 307-309):

⁸ Տե՛ս Теория государства и права. Под ред. Р.А. Ромашова. СПб., Издательство Р. Асланова „Юридический центр Пресс“, 2005, էջ 380-404, Социология права. Под ред. В.М. Сырых. М., Юридический Дом „Юстицинформ“, 2001, էջ 91-100, *Քրեաբանական իրավաբանական իրավահասկացողությունը և օրինականության հիմնախնդիրները*: - Եր.: ԵՊՀ հրատ., 2008, էջ 139:

⁹ Տե՛ս Социология права. Под ред. В.М. Сырых. М., Юридический Дом „Юстицинформ“, 2001, էջ 91-100:

տեղծագործության) փուլով, ձեռք են բերում իրավական ամրագրում:

Հասարակական հարաբերությունների կարգավորման բոլոր ոլորտներում իրավաստեղծագործության արդյունքը տվյալ ոլորտի նորմատիվ (օրենսդրական) իրավական հիմքերի ձևավորումն է ի դեմս տվյալ իրավունքի ճյուղի, իրավունքի աղբյուրների, առաջին հերթին ՔԿՕ-ում, որում ամրագրվում են իրավունքի սկզբունքները, դրանց նորմատիվ բովանդակությունը, այնուհետև այդ բովանդակությունից բխող նորմատիվ պահանջների կենսագործման իրավական կառուցակարգերը: Քրեակատարողական կարգավորման կառուցակարգում իրավաստեղծագործության փուլի հիմնական սուբյեկտը պետությունն է՝ ի դեմս իր իրավասու իրավաստեղծ մարմինների, որը պարտավոր է օրենքում ամրագրել իրավունքի սկզբունքի տեսականորեն ճշգրիտ և հիմնավորված, հստակ ու որոշակի նորմատիվ հասկացությունը, ինչը շատ կարևոր է, քանի որ քրեակատարողական իրավունքի սկզբունքները ճյուղային համակարգի կազմավորման և գործողության ղեկավար ու ելակետային դրույթներն են: Այլ կերպ ասած՝ քրեական պատիժների կատարման տարբերակման և անհատականացման սկզբունքների նորմատիվ բովանդակության ամբողջական, լրիվ, համալիր, ճշգրիտ, ընդգրկուն տառացի իրավական ձևակերպումը (սահմանումը) շատ կարևոր իրավական երաշխիք է բուն այդ սկզբունքի պատշաճ ու արդյունավետ կենսագործման ապահովման համար, քանի որ իրավական կարգավորման բոլոր ճյուղային կառուցակարգերում սկզբունքները համակարգակազմող իրավական հիմնադրույթներ են: Քրեակատարողական իրավական կարգավորման նորմատիվ տարրի՝ սկզբունքի օրենքով ամրագրված բովանդակության՝ հասկացության, իրավական պահանջների բացթողումներն ու թերությունները հանգեցնելու են դրա մանրամասն կարգավորման և արդյունքում կենսագործման դեֆեկտների:

Այսպիսով, ամփոփելով կարող ենք եզրակացնել, որ քրեակատարողական իրավական կարգավորման կառուցակարգի սկզբնական, այն է նորմերի կազմավորման ու իրավաստեղծագործության փուլերում՝ քրեակատարողական իրավունքի սկզբունքների կենսագործման կարևոր երաշխիքը դրա խորը գիտական ու ճշգրիտ տեսամեթոդական հիմնավորումն է, ինչը նախադրյալ է ՔԿՕ-ում այդ սկզբունքի օրենսդրական հասկացության ու նորմատիվ պահանջների պատշաճ ձևակերպումների համար: **Հետևաբար, քրեակատարողական իրավական սկզբունքի հասկացության և նորմատիվ պահանջների (օրենսդրական բնորոշման) տեսական և իրավաբանական ճշգրտությունը և որոշակիությունն այդ իսկ սկզբունքի կենսագործման կարևորագույն երաշխիքներից են:**

Հիմք ընդունելով իրավունքի աղբյուրների համակարգային ստորակարգությունը, իրավաստեղծագործության կառուցակարգում իրավունքի ձևավորման ենթափուլեր են դիտարկվում սահմանադրումը, օրինաստեղծագործությունը, ենթաօրենսդրական իրավաստեղծագործությունը¹⁰: Սահմանադրման ենթափուլում տեղի է ունենում իրավունքի ամրագրում Սահմանադրության մեջ: Օրինաստեղծագործությունը, որպես ենթափուլ, կոնկրետացնում է Սահմանադրության մեջ ամրագրված իրավունքը, իսկ ենթաօրենսդրական իրավաստեղծագործությունը, որպես գործընթաց, կոնկրետացման միջոցով (ձևով) կենսագործում է Սահմանադրությամբ և օրենքներով ամրագրված իրավունքը¹¹:

¹⁰ Տե՛ս *Դավթյան Ն. Գ.*, *Իրավունքի կենսագործում*, - Եր., «Հայրապետ» հրատ., 2017, էջ 69:

¹¹ «Կոնկրետացնող ակտը այն նորմատիվ ակտն է, որն ընդունվում է սկզբնական (հիմնարար) ակտի բովանդակության մանրամասնեցման համար, զարգացնում է հարաբերությունների կարգավորման հիմնական սկզբունքները, իրավունքների և պարտականությունների բովանդակությունը, մանրամասնում է իրավունքների և ազատությունների երաշխիքները, իրավունքի սուբյեկտների իրավունքների պաշտպանության կառուցակարգը» (տե՛ս Правовая система социализма. Функционирование и развитие /Отв. ред. А.М. Васильев, М., 1987, էջ 125):

Իրավաստեղծագործության միջոցով իրավունքի էության պաշտոնական-պետական ձևերում ամրագրման ընդհանուր տեսական պատկերացումները սույն գիտական հոդվածի ուսումնասիրման տեսանկյունից տեղայնացնելով քրեակատարողական իրավունքի ոլորտում, կարող ենք փաստել, որ քրեակատարողական իրավունքի սկզբունքների կենսագործման գործընթացը նորմատիվ կամ իրավաստեղծ մակարդակում անցնում է սահմանադրման փուլը, այնուհետև՝ օրինաստեղծագործության կառուցակարգով: Վերջինիս ընթացքում լուծվող անհրաժեշտ խնդիրն առաջին հերթին սկզբունքի իրավական բովանդակության ամրագրումն է ՔԿՕ-ի ընդհանուր դրույթների շրջանակներում, իսկ այնուհետև՝ դրանց կենսագործման կոնկրետացումը քրեակատարողական նորմատիվ կառուցակարգերի, իրավական ինստիտուտների և այլ իրավական գործիքակազմերի միջոցով: Այդ գործընթացի արդյունքում քրեակատարողական իրավունքի կողիֆիկացված ակտի՝ օրենսգրքի սկզբունքները կունենան կենսագործման իրավական հնարավորություն, եթե դրանք երաշխավորված են սկզբունքի բովանդակությանը համապատասխանող իրավական ընթացակարգերով, ինստիտուտներով, պահանջներով, պատասխանատվության և այլ գործիքակազմային միջոցներով: Այս գործընթացը տեղի է ունենում դեռևս նորմաստեղծ մակարդակում և դրա արդյունքը համապատասխան իրավական ինստիտուտների առկայությունն է, որոնք կոչված են կյանքի կոչել, իրականություն դարձնել քրեակատարողական սկզբունքը մանրամասնող իրավական նորմերը իրավական կարգավորման կառուցակարգի հաջորդ՝ իրավունքի կենսագործման (իրականացման) փուլում՝ կատարման, պահպանման, օգտագործման ու կիրառման միջոցով:

Եզրակացություն

Այսպիսով, արված վերլուծության արդյունքում կարող ենք առաջ քաշել քրեակատարողական սկզբունքների կենսագործման հետևյալ իրավական երաշխիքը. **քրեական պատիժների կատարման տարբերակման և անհատականացման սկզբունքների կենսագործման կարևորագույն իրավական երաշխիքը համապատասխան հստակեցնող, մանրամասնող ու արդյունքում սկզբունքը կյանքի կոչելն ապահովող իրավական ինստիտուցիոնալ կառուցակարգերն են, այսինքն՝ սկզբունքի կենսագործման նորմատիվ իրավական ընթացակարգերն ու կառուցակարգերը՝ ամրագրված ՔԿՕ-ով և ոլորտի այլ նորմատիվ ակտերով:**

2. Իրավական կարգավորման կառուցակարգի տեղեկութավորման փուլում տեղի է ունենում, նախ, ընդունված նորմատիվ իրավական ակտի հրապարակում, սովյալ դեպքում ՔԿՕ-ի և այդ ոլորտի այլ նորմատիվ իրավական ակտերի, որը կատարվում է «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով: Սակայն, բացի պաշտոնական պարտադիր հրապարակումից տեղեկությունների տրամադրման փուլը ենթադրում է նաև սկզբունքից բխող իրավական պահանջների և կարգադրագրերի մասին բոլոր հասցեատեր սուբյեկտների տեղեկութավորումը, սկզբունքի և դրա հիմքով կառուցված կենսագործման նորմատիվ կառուցակարգերի վերաբերյալ իմացությունը, որը որոշակի դեպքերում պարտադիր է: Իրավական կարգավորման կառուցակարգի այս փուլի վերաբերյալ ընդհանուր պատկերացումներից կարող ենք բխեցնել **քրեակատարողական իրավունքի սկզբունքների կենսագործման հաջորդ երաշխիքը՝ սկզբունքից բխող սուբյեկտիվ իրավունքների ու պարտականությունների սուբյեկտների տեղեկացվածությունը բուն սկզբունքի, մասնավորապես՝ պատիժների կատարման տարբերակման ու անհատականացման, և դրանից բխող իրենց իրավունքների ու պարտականությունների մասին:**

3. Իրավական կարգավորման կառուցակարգում իրավական տեղեկութավորմանը հաջորդում են իրավունքի կենսագործման (իրականացման, կիրառման) և իրավական

վերահսկողության փուլերը: Իրավունքի կենսագործման (իրականացման, կիրառման) գործընթացում իրավական նորմերի օգտագործման, կատարման, պահպանման և կիրառման ձևերով իրավունքը կենսագործվում է հասարակական հարաբերություններում և մարդկանց վարքագծում, դառնում իրականություն, իսկ իրավական կարգավորումը հասնում է իր սոցիալապես օգտակար նպատակներին՝ իրավական հիմքերով կարգավորված հասարակական հարաբերություններին (իրավակարգին)»¹²: Քրեակատարողական իրավունքի սկզբունքների կենսագործման այս փուլի հիմնական երաշխիքը՝ քրեական պատիժների կատարման ողջ գործընթացի իրավական օրինականությունն է, իրեն բնորոշ իրավական և ոչ իրավական երաշխիքների ողջ համակցությամբ: *Այսպիսով, կարող ենք եզրակացնել, որ քրեակատարողական սկզբունքի կենսագործման առաջին իրավական երաշխիքը դրա բովանդակության և պահանջների պարզաճ օրենսդրական ամրագրումն է, երկրորդը՝ սկզբունքի կենսագործումը հստակեցնող նորմատիվ իրավական ինստիտուցիոնալ կառուցակարգերում, ապա իրավունքի իրականացման (իրավունքի նորմերի օգտագործում, կատարում, պահպանում, կիրառում) փուլում առաջ է գալիս երրորդ երաշխիքը՝ իրավական օրինականությունը՝ իրեն բնորոշ ընդհանուր և հատուկ իրավական երաշխիքներով, որոնք կոչված են ապահովելու քրեակատարողական իրավունքի սկզբունքներին համահունչ ընդունված և դրա կենսագործումն ապահովող իրավունքի նորմերի իրագործումը՝ օգտագործման, կատարման, պահպանման, կիրառման ձևերով:*

Սոցիալ-իրավական կարգավորման կառուցակարգի իրավական վերահսկողության փուլի ողջ առաքելությունը քրեակատարողական սկզբունքների և դրանց կենսագործման նորմատիվ կառուցակարգի նկատմամբ վերահսկողական գործունեությունն է: Հետևաբար՝ իրավական սկզբունքների կենսագործման կարևոր իրավական երաշխիքներն իրավական վերահսկողության քրեակատարողական ճյուղային և ընդհանուր իրավական կառուցակարգերն են:

Այսպիսով՝ քրեակատարողական ոլորտում պատիժների կատարման տարբերակման և անհատականացման սկզբունքների կենսագործման խնդրի քննարկումն իրավունքի ընդհանուր տեսության մոտեցումների համատեքստում հնարավորություն է տալիս եզրակացնելու, որ այդ սկզբունքների կենսագործման իրավական երաշխիքների շրջանակում ներառվում են միջազգային իրավական երաշխիքները. սկզբունքի օրենսդրորեն ամրագրված բովանդակության իրավաբանական ճշգրտությունը և որոշակիությունը. սկզբունքի որպես ընդհանուր դրույթի կենսագործման նորմատիվ իրավական ընթացակարգերն ու կառուցակարգերը (իրավական ինստիտուտները). քրեակատարողական իրավունքի սուբյեկտների և հատկապես դատապարտյալների իրավական տեղեկացվածությունը. քրեակատարողական իրավունքի սկզբունքի օրինականությանը համապատասխանող իրագործումը (օգտագործում, կատարում, պահպանում, կիրառում) իրեն բնորոշ ընդհանուր և հատուկ իրավական երաշխիքներով, սոցիալ-իրավական վերահսկողության ընդհանուր և քրեակատարողական իրավական կառուցակարգերը:

¹² Стів Леушин В. И., „Реализация, применение и толкование права“ / в. кн. Теория государства и права. Под ред. В.М. Корельского и В.Д. Перевалова. М., 2004, էջ 236-238; Сорокина Ю. В., Государство и право: Философские проблемы. Курс лекций, М., ОАО “Издательский дом городец”, 2004, էջ 165; Рассолов М. М., Актуальные проблемы теории государства и права: М., ЮНИТИ-ДАНА, Закон и право, 2011, էջ 269-270; Лазарев В. В., Липень С. В., Теория государства и права: М., Спорк, 2004, էջ 361; Протасов В. Н., Теория государства и права. Проблемы теории права и государства, М., 2001, էջ 201; Марченко М. Н., Проблемы теории государства и права, М., 2005, էջ 682, *Ս. Վաղարշյան*, «Իրավաբանական իրավահասկացողությունը և «իրավունքի իրականացում» հասկացության հիմնախնդիրները, Իրավագիտության հարցեր, Երևան, 2006, թիվ 2-3, էջ 7-8):

Ամփոփագիր: Հոդվածը նվիրված է քրեակատարողական իրավունքի սկզբունքներից պատիժների կատարման տարբերակմանը և անհատականացմանը: Հոդվածում վերլուծվել է այս հարցի վերաբերյալ քրեակատարողական իրավունքի տեսության մեջ առկա տարբեր տեսակետներ: Ուսումնասիրելով պատժի տարբերակման և անհատականացման միջոցները՝ կարող ենք եզրակացնել, որ կարելի է բարձրացնել դրանց արդյունավետությունը ազատագրկման ձևով պատժի կատարման գործում:

Պատժի կատարման տարբերակումը և անհատականացումը բաղկացած է դատապարտյալի վրա պատժի ծավալի փոփոխումից: Ուսումնասիրելով տարբերակման և անհատականացման միջոցները՝ նշել ենք, որ դրանց արդյունավետությունը ազատագրկման պատիժը կատարելիս դեռևս կատարելագործվելու կարիք ունի: Այս առումով հոդվածում ներկայացված են նաև գործող քրեական օրենսդրության մեջ փոփոխությունների անելու առաջարկներ:

Annotation. The article is devoted to the problem of understanding such a principle of penal law as differentiation and individualization of the execution of punishments. The work analyzes the theories on this issue available in the theory of penal law. By studying the means of differentiation and individualization of punishment, we can conclude that it is possible to increase their effectiveness when executing a sentence of imprisonment.

Differentiation and individualization of the execution of punishment consists in changing the volume of punitive influence on the convicted person. Having examined the means of differentiation and individualization, we argue that their effectiveness in executing a sentence of imprisonment is not at a high enough level. The article also presents proposals for amending the current criminal legislation.

Аннотация. Статья посвящена проблеме понимания такого принципа уголовно-исполнительного права, как дифференциация и индивидуализация исполнения наказаний. В работе проанализированы имеющиеся в теории уголовно-исполнительного права теории по данному вопросу. Изучая средства дифференциации и индивидуализации наказания, можно сделать вывод о возможности повышения их эффективности при исполнении наказания в виде лишения свободы.

Дифференциация и индивидуализация исполнения наказания заключаются в изменении объема карательного воздействия на осужденного. Исследовав средства дифференциации и индивидуализации, в статье утверждаем, что их эффективность при исполнении наказания в виде лишения свободы находится на недостаточно высоком уровне. Также в статье представлены предложения по внесению изменений в действующее уголовное законодательство.

Բանալի բառեր – պատժի կատարում, տարբերակում, քրեակատարողական քաղաքականություն, անհատականացման սկզբունք, դասակարգում:

Keywords: execution of punishment, differentiation, penal policy, principle of individualization, classification.

Ключевые слова: исполнение наказания, дифференциация, уголовно-исполнительная политика, принцип индивидуализации, классификация.

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Нерсесянц В. С., Философия права. М., Издательская группа ИНФРА.М-Норма, 1997, էջ 32-35,
2. Лазарев В. В., Действие права /Проблемы теории государства и права. /Под. ред. В. С. Нерсесянца, М., 2002, էջ 419-420,
3. Теория государства и права. Под ред. В.М. Корельского и В.Д. Первалова. М., Издательская группа ИНФРА . М-НОРМА, 1997, էջ 237;
4. Теория государства и права. Под ред. Р.А. Ромашова. СПб., Издательство Р. Асланова „Юридический центр Пресс“, 2005, էջ 189;

5. Общая теория государства и права. Академический курс в 2-х томах. Под ред. М.Н. Марченко. Том 2. Теория права. М., Издательство „Зерцало“, 1998, էջ 22,
6. Чубраков С.В., Проблема принципов в уголовно-исполнительном праве: история и современность /под ред. В.А. Уткина. – Томск : Издательский Дом ТГУ, 2015. էջ 6-26,
7. Гойман В.И., Право в системе нормативного регулирования. - В кн. Общая теория права и государства. Под ред. В.В. Лазарева. М., Юристъ, 2005, էջ 134-135,
8. Скакун О.Ф., Теория государства и права (энциклопедический курс): Учебник. Харьков: Эспада, 2005, էջ 276-278;
9. Теория государства и права. Под ред. В.М. Корельского и В.Д. Перевалова. М., Издательская группа ИНФРА. М-НОРМА, 1997, էջ 217-232;
10. Общая теория права и государства. Под ред. В.В. Лазарева. М., Юристъ, 2005, էջ 133-134;
11. Общая теория государства и права. Академический курс в 2-х томах. Под ред. М.Н. Марченко. Том 2. Теория права. М., Издательство „Зерцало“, 1998, էջ 16:
12. Теория государства и права. Под ред. С.С. Алексеева. М., Юрид. лит., 1985, էջ 307-309):
13. Теория государства и права. Под ред. Р.А. Ромашова. СПб., Издательство Р. Асланова „Юридический центр Пресс“, 2005, էջ 380-404,
14. Социология права. Под ред. В.М. Сырых. М., Юридический Дом „Юстицинформ“, 2001, էջ 91-100,
15. Социология права. Под ред. В.М. Сырых. М., Юридический Дом „Юстицинформ“, 2001, էջ 91-100:
16. Правовая система социализма. Функционирование и развитие /Отв. ред. А.М. Васильев, М., 1987, էջ 125,
17. Леушин В.И., „Реализация, применение и толкование права“ / в. кн. Теория государства и права. Под ред. В.М. Корельского и В.Д. Перевалова. М., 2004, էջ 236-238;
18. Сорокина Ю.В., Государство и право: Философские проблемы. Курс лекций, М., ОАО “Издательский дом городец”, 2004, էջ 165
19. Рассолов М.М., Актуальные проблемы теории государства и права: М., ЮНИТИ-ДАНА, Закон и право, 2011, էջ 269-270;
20. Лазарев В.В., Липень С.В., Теория государства и права: М., Спорк, 2004, էջ 361;
21. Протасов В.Н., Теория государства и права. Проблемы теории права и государства, М., 2001, էջ 201;
22. Марченко М.Н., Проблемы теории государства и права, М., 2005, էջ 682,
23. Քոչարյան Ս. Ս., Իրավաբանական իրավահասկացողությունը և օրինականության հիմնախնդիրները, Եր., ԵՊՀ հրատ., 2008, էջ 139:
24. Դավթյան Ն. Գ., Իրավունքի կենսագործում, - Եր., «Հայրապետ» հրատ., 2017, էջ 69:
25. Ա. Վաղարշյան, «Իրավաբանական իրավահասկացողությունը և «իրավունքի իրականացում» հասկացության հիմնախնդիրները, Իրավագիտության հարցեր, Երևան, 2006, թիվ 2-3, էջ 7-8:

Աբրահամյան Ռ. - ԵՊՀ քրեական իրավունքի ամբիոնի դասախոս, ասպիրանտ, էլիասցե՝ rozaabrahamyan@gmail.com:

Ներկայացվել է խմբագրություն 21.03.2024 թ., տրվել է գրախոսության 21.03.2024 թ., երաշխավորվել է ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի քրեական իրավունքի ամբիոնի պրոֆեսոր, դեկանի տեղակալ-գրասենյակի ղեկավար Հ. Խաչիկյանի կողմից, ընդունվել է տպագրության 15.04.2024 թ.:

<https://doi.org/10.59546/18290744-2024.1-3-93>

ԱԴԵԼԻՆԱ ՍԱՐԳՍՅԱՆ
իրավաբանական գիտությունների թեկնածու,
Հայ-Ռուսական համալսարանի իրավունքի և
քաղաքականության ինստիտուտի քրեական իրավունքի և
քրեական դատավարության իրավունքի ամբիոնի դասախոս

ADELINA SARGSYAN
*Lecturer of the Department of Criminal Law and
Criminal Procedure Law of the
Institute of Law and Politics of the Russian-Armenian University*

АДЕЛИНА САРГСЯН
кандидат юридических наук,
преподаватель кафедры уголовного права и
уголовно-процессуального права
Института права и политики Российско-Армянского университета

ԱԽՏՈՐՈՇԻՉ ՅԱՏՐՈԳԵՆԻԱՆԵՐԸ ՅԱՏՐՈԳԵՆ ՀԱՆՅԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

IATROGENY OF DIAGNOSTIC PROCEDURES IN THE SYSTEM OF IATROGENIC CRIMES

ЯТРОГЕНИИ ДИАГНОСТИЧЕСКИХ ПРОЦЕДУР В СИСТЕМЕ ЯТРОГЕННЫХ ПРЕСТУПЛЕНИЙ

Հեղափոխությունն իրականացվել է ՀՌՀ երիտասարդ գիտնականների աշխատավարձերի
խթանիչ բնույթի հավելավճարների 2023 թ. մրցույթի ֆինանսավորման շրջանակներում
*Статья выполнена в рамках финансирования конкурса надбавок стимулирующего
характера к окладам молодых ученых РАУ в 2023 г.*

Ներածություն

Հիվանդի առողջությանը վնաս պատճառելու հիմնական գործոններից է սխալ ախտորոշ-
ման կայացումը, իսկ հետագայում՝ բուժման սխալ մարտավարության ընտրությունը:

Ախտորոշումը հատուկ հետազոտությունների անցկացում է՝ հիվանդի առողջական վիճա-
կը պարզելու համար, այսինքն՝ ճշտելու հիվանդությունների առկայության կամ բացակայու-
թյան փաստը: Ախտորոշումը կարող է իրականացվել տարբեր ձևերով. մի շարք բժշկական
միջամտությունների միջոցով, որոնք ուղղված են անամնեզի հաստատմանը, հետազոտու-

թյանը, լաբորատոր, գործիքային և այլ հետազոտություններին, ինչպես նաև ներառում են ավստորոշում և հիվանդի բուժման միջոցառումների ընտրություն¹:

Ախտորոշիչ յատրոգենիայների առանձին ուսումնասիրության արդիականությունն ու կարևորությունը հաստատվում են նաև սոցիոլոգիական հարցումների արդյունքներով: Այսպես՝ 280 հարցվածներից (հարցումն անցկացվել է Երևանում և ՀՀ տարբեր մարզերում) 152-ը (54.3 %) առանձնացրել են ավստորոշիչ յատրոգենիան որպես յատրոգենիայի առավել տարածված տեսակ: Հարցվածների 40.8 % նշել է, որ իրենց ոչ պատշաճ կամ անբարեխիղճ բժշկական օգնություն ցուցաբերելը դրսևորվել է սխալ ավստորոշման մեջ: Հետաքրքրական է, որ հարցվածների 23.6 % նշել է բուժման սխալ տակտիկայի մասին, ինչը ևս մեկ անգամ հիմնավորում է մեր պնդումը, որ ավստորոշիչ յատրոգենիան օժտված է երկակի բնույթով, և հաճախ որպես հետևանք հանգեցնում սխալ բուժման:

Հայտնի կլինիկական բժիշկ Ա. Լ. Վերտկինը կարծում է, որ բժշկական սխալների առաջացման (ծագման) պատճառները կարող են լինել բարեխիղճ մոլորությունները, աստիպիկ հիվանդությունները, բժշկական գիտության անկատարությունը և բժշկի անբավարար վերապատրաստումը: Միևնույն ժամանակ, բժշկական սխալների ամենատարածված օրինակները կապված են սխալ ավստորոշման և հիմնական գիտելիքների պակասի հետ: Նրա խոսքով՝ բնորոշ սխալ է, երբ թերապետը վստահորեն ավստորոշում է թոքաբորբը՝ սրտամկանի ինֆարկտի փոխարեն²:

Նախահիվանդանոցային փուլում իրականացվում է ավստորոշման առաջին փուլը և հիմնականում ամբուլատոր բուժում տարբեր պաթոլոգիաներով հիվանդների համար³: Այս ժամանակահատվածում է, որ բուժաշխատողները պետք է ժամանակին և ճիշտ ավստորոշեն լուրջ պաթոլոգիա, որը պահանջում է պարտադիր հոսպիտալացում⁴:

Ինչ վերաբերում է ավստորոշիչ յատրոգենիաներին, ինչպես նաև դրանց այլ տեսակների, կարևոր է բժշկի մեղավոր վարքի տարանջատումը անմեղից: Մասնավորապես, եթե բժիշկը սուբյեկտիվ տվյալների առկայության դեպքում, օրինակ՝ անամնեզի տվյալները, սխալ ավստորոշում է հաստատել և, համապատասխանաբար, նշանակվել է սխալ բուժում, ինչը, ընդհանուր առմամբ, հանգեցրել է հիվանդի մահվան: Այս դեպքում, իհարկե, բժիշկը պետք է քրեական պատասխանատվության ենթարկվի: Եվ հնարավոր է իրադարձությունների զարգացման երկրորդ տարբերակը, որը պայմանավորված է հենց հեռավոր վայրերում առողջապահության ոլորտի թերություններով, երբ հիվանդանոցի տեխնիկական հագեցվածության բացակայության պատճառով բժիշկը սխալ ավստորոշում է սահմանել, ինչը կրկին հիվանդի մահվան պատճառ է դարձել: Վերջին դեպքում առկա օբյեկտիվ պատճառները բացառում են բժշկի քրեական պատասխանատվությունը: Հնարավոր է նաև իրավիճակ, երբ ավստորոշումը լինում է ուշացած, սակայն դա ունի օբյեկտիվ պատճառներ, որոնց թվում են նաև հիվանդության ընթացքի առանձնահատկությունները:

Հիմնական հետազոտություն

¹ *Огнерубов Н. А.*, Преступления в сфере медицинской деятельности: учебное пособие для вузов / Н. А. Огнерубов, Москва, Издательство Юрайт, 2023, с. 57.

² Электронный ресурс: <https://wiselawyer.ru/poleznoe/2778-dobrosovestnoe-zabluzhdenie> (дата обращения: 25.10.2023).

³ *Khairullayev A., Islamov Sh., Davronov S.*, The structure of thermal injury in forensic material service// Материалы Международной научно-практической конференции «Тенденции и перспективы развития науки и образования в условиях глобализации», Переяслав-Хмельницкий, 2019, с. 541-543.

⁴ *Makhmatmuradova N. N., Safarova M. P.*, Characteristics of chronic obstructive pulmonary disease// Материалы Международной научно-практической конференции «Тенденции и перспективы развития науки и образования в условиях глобализации». Переяслав-Хмельницкий, 2019, с. 510-512.

Ըստ այդմ, առանձին ուշադրություն է պահանջում կրիմինալ և ոչ կրիմինալ յատրոգենիաների սահմանազատման հիմքում ընկած յատրոգենիաների օբյեկտիվ և սուբյեկտիվ գործոնների հարցը: Այսպես՝ բժշկի հնարավորությունները բժշկական օգնություն ցուցաբերելու գործընթացում երբեմն կարող են սահմանափակվել օբյեկտիվ պատճառներով (ներկայիս բժշկության հնարավորությունները գիտական և գործնական ասպեկտների տեսանկյունից, հիվանդի՝ ժամանակին բժշկի դիմելը, պաթոլոգիայի ծանրությունը կամ դրա անբուժելիությունը, բժշկական կազմակերպության նյութատեխնիկական և կադրային անվտանգության մակարդակը և այլն⁵): Յատրոգեն հանցագործությունների սուբյեկտիվ պատճառները ներառում են բժշկական անձնակազմի անփորձությունը կամ անբավարար որակավորումը, հիվանդների անբավարար հետազոտությունը, հիվանդի առողջական վիճակի սխալ գնահատումը և այլն: Այսպիսով՝ քրեաիրավական տեսանկյունից մեզ հետաքրքրում են հենց սուբյեկտիվ ախտորոշիչ սխալները, որոնց աղբյուրները կարող են տարբեր լինել: Ախտորոշման ընթացակարգերի սխալը կարող է առաջանալ բժշկի մասնագիտական հանցավոր տգիտության արդյունքում, երբ բուժաշխատողը չի տիրապետում հիվանդության ճիշտ ախտորոշման և այս կամ այն ախտանիշի մեկնաբանման համար անհրաժեշտ մասնագիտական գիտելիքների, հմտությունների բավարար մակարդակի: Այս դեպքում անհրաժեշտ է անհապաղ դիմել մասնագետի օգնությանը: Բժշկական աշխատողների մասնագիտական գիտելիքների ուսումնասիրությունը կարևոր գործնական նշանակություն ունի, քանի որ այն թույլ է տալիս տարբերակել, հաճախ, հանցավոր արարքը ոչ հանցավոր արարքից, որը բացառում է քրեական պատասխանատվությունը: Անհրաժեշտ է հստակ տարբերակել չիմանալն ու տգիտությունը. բժշկի տգիտությունը պետք է հանգեցնի նրան որակազրկելու, չիմանալը կարող է լինել բարեխիղճ մոլորության արդյունք⁶: Մասնագիտական տգիտությունը և դրա պատշաճ ուսումնասիրությունը կարևոր նշանակություն ունի նաև համապատասխան անձանց պատշաճ կանխարգելիչ ներգործության գործում:

Հանցավոր տգիտությունը «մասնագետի կողմից իր մասնագիտության կանոնների անտեղյակությունն է, որը հանգեցրել է մարդկանց հետ դժբախտ պատահարների կամ այլ ծանր հետևանքների»⁷:

Բժշկական աշխատողների գործունեության մեջ ախտորոշիչ սխալները կարող են լինել նաև բժիշկների հապճեպ գործողությունների արդյունք, կամ իրենց մասնագիտական պարտականությունների կատարման նկատմամբ ձևական, անբարեխիղճ վերաբերմունքի արդյունք, որը դրսևորվում է, մասնավորապես, անամնեզիկ տվյալների հավաքագրման անպատասխանատու մոտեցմամբ: Գիտական և տեխնոլոգիական հեղափոխությունն իր ողջ առաջադիմությամբ ուղեկցվում է ոչ միայն ավելի ճշգրիտ ախտորոշմամբ, այլև սխալներով, որոնք հիմնված են բժիշկների կողմից անամնեզի թերագնահատման, ինչպես նաև լաբորատոր և ապարատային հետազոտությունների վերագնահատման վրա⁸:

Սխալ ախտորոշումը ամենատարածված, ամենաթանկ և ամենավտանգավոր բժշկական սխալն է. այն ընկած է հիվանդների բոլոր դատական հայցերի 34 տոկոսի հիմքում, նշվում է

⁵ Пристансков В.Д., Криминалистическая теория расследования ятрогенных преступлений, совершаемых при оказании медицинской помощи: монография, СПб., 2007, с. 37.

⁶ Основы биоэтики: учеб. пособие / Я.С. Яскевич [и др.]; под ред. Я.С. Яскевич, С. Д. Денисова, Минск, Выш. шк., 2009, с. 217.

⁷ Гринберг М. С., Уголовное право : избр. тр. / науч. ред. М. С. Фокин, Омск, 2012, с. 517.

⁸ Эльштейн Н. В., Диагностические ошибки интернистов: общие аспекты, РМЖ., 1998, 1:6. Электронный ресурс: https://www.rmj.ru/articles/obshchie-stati/DIAGNOSTICHESKIE_OSHIBKI_INTERNISTOV_OBSCHIE_ASPEKTY/#ixzz7zcu3l3rd Under Creative Commons License: Attribution.

Ջոն Հոփկինսի համալսարանի հետազոտության մեջ: Սխալ կամ ուշ ախտորոշումը պարզապես շատ անհարմարություններ չեն: Շատ հիվանդների համար սխալ ախտորոշումը դառնում է առողջական լուրջ խնդիրների պատճառ, հանգեցնում է մեծ ծախսերի, իսկ վատագույն դեպքում՝ մահվան: Ջոնս Հոփկինսի համալսարանի հետազոտողներն ուսումնասիրել են ավելի քան 55,000 դեպք բժշկական սխալների մասին և պարզել, որ առավելագույն Վնաս պատճառող սխալ ախտորոշումների երեք քառորդը կապված է քաղցկեղի (37.8 %), անոթային (22.8 %) և վարակիչ հիվանդությունների (13.5 %) հետ⁹:

Մեր կողմից իրականացվել է յատրոգեն հանցագործությունների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության դատական պրակտիկայի վերլուծություն, մասնավորապես՝ ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 130-րդ հոդվածի (ՀՀ գործող քրեական օրենսգրքի 187-րդ հոդված) հիման վրա հարուցված քրեական գործերի վերլուծություն: Դատական գործերի ուսումնասիրությունը հնարավորություն է տվել նկատել յատրոգենիաների նկատելի կողմնակալությունը դեպի ախտորոշիչ յատրոգենիաներ. սխալներ ինչպես ախտորոշման, այնպես էլ ախտորոշիչ ընթացակարգերի մեջ (սխալ ախտորոշում, ախտորոշիչ ընթացակարգերի թերի իրականացում, ախտորոշիչ ընթացակարգերի չկատարում): Միևնույն ժամանակ, հետաքրքիր է վերլուծված հանցավոր յատրոգենիաների սուբյեկտիվ կողմի ուսումնասիրությունը, մասնագիտական պարտականությունների կատարման ընթացքում բժշկական աշխատողների հանցավոր անփութության և հանցավոր ինքնավստահության դրսևորման առանձնահատկությունների բացահայտումը:

Յատրոգեն հանցագործությունների սուբյեկտիվ կողմի վերլուծության առնչությամբ անհրաժեշտ է մատնանշել Հայաստանի Հանրապետության նոր Քրեական օրենսգրքում կատարված փոփոխությունը, ըստ որի՝ հանցանքը համարվում է հանցավոր ինքնավստահությամբ կատարված, եթե անձը նախատեսում է իր արարքի վտանգավոր հետևանքների առաջացման հնարավորությունը, սակայն առանց բավարար հիմքերի **համոզված է** լինում, որ տվյալ դեպքում դրանք կկանխվեն¹⁰:

ՀՀ ՔՕ 26-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ հանցանքը համարվում է հանցավոր անփութությամբ կատարված, եթե անձը չի նախատեսում իր արարքի վտանգավոր հետևանքների առաջացման հնարավորությունը, թեև տվյալ իրադրությունում պարտավոր էր և կարող էր նախատեսել: Հանցանքը համարվում է անփութությամբ կատարված նաև սույն օրենսգրքի 28-րդ հոդվածի 7-րդ մասով նախատեսված պայմանների առկայության դեպքում¹¹: ՀՀ ՔՕ 28-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ եթե անձը չի գիտակցում իր արարքի փաստական հանգամանքները, սակայն կարող էր գիտակցել, ապա ենթակա է քրեական պատասխանատվության հանցանքն անզգուշությամբ կատարելու համար, եթե դա սույն օրենսգրքով նախատեսված է:

Կարևոր է նաև բուժաշխատողի մեղավոր արարքն առանց մեղքի կատարված արարքից տարանջատելը. մասնավորապես՝ առանց մեղքի վնաս պատճառելն ամրագրված է ՀՀ քրեական օրենսգրքի 30-րդ հոդվածով, համաձայն որի՝ սույն օրենսգրքով նախատեսված, պատժի սպառնալիքով արգելված արարք կատարած անձը ենթակա չէ քրեական պատասխանատվության այն դեպքում, երբ չի գիտակցել իր արարքի հակաիրավականությունը և տվյալ իրադրությունում չէր կարող գիտակցել դա, ինչպես նաև այն դեպքում, երբ չի նախատեսել իր արարքի վտանգավոր հետևանքների առաջացման հնարավորությունը և տվյալ իրադրությու-

⁹ Электронный ресурс: <https://mibsnews.ru/boleee-treti-oshibochnyh-diagnozov-onkologicheskije/>.

¹⁰ ՀՀ Քրեական օրենսգրք, ընդունված է 05.05.2021, ուժի մեջ է՝ 01.07.2022:

¹¹ ՀՀ Քրեական օրենսգրք, ընդունված է 05.05.2021, ուժի մեջ է՝ 01.07.2022 թ.:

նում պարտավոր չէր կամ չէր կարող նախատեսել դա:

Այսպիսով, ախտորոշիչ յատրոգենիա արձանագրվել է ամբաստանյալ *Լիլիթ Վարդանյանի* թիվ ԵԱԿԴ/0016/01/14 գործով որոշման մեջ: Հերթապահ բժիշկ Լիլիթ Վարդանյանը սխալ ախտորոշում է կատարել (սուր շնչառական վարակ), քանի որ հիվանդի անամնեզիկ և օբյեկտիվ տվյալները վկայում են օրգանիզմի արտահայտված ինտոկսիկացիայի մասին, ինչը բնորոշ է եղել ոչ թե ՍՇՎ-ին, այլ թոքաբորբին: Սա, իր հերթին, հանգեցրել է նշանակման սխալ բուժման:

Այս դեպքում հստակ ցույց է տրված մի օրինակ, թե ինչպես են ախտորոշիչ ընթացակարգերի յատրոգենիաները կրկնակի բացասական ազդեցություն ունենում և հանգեցնում այլ յատրոգենիաների (բուժական): Սակայն, ինչպես տեսնում ենք, այս դեպքում բժիշկ Լիլիթ Վարդանյանը, հենվելով միայն անամնեզի տվյալների վրա, անտեսելով իր մասնագիտական պարտականությունները, հիվանդին չի իրականացրել ռենտգեն հետազոտություն՝ իր ախտորոշման մեջ համոզվելու համար: Այս դեպքում անհրաժեշտ է նշել ախտորոշիչ յատրոգենիայի այնպիսի ասպեկտ, ինչպիսին է անամնեզի տվյալների ոչ պատշաճ օգտագործումը: Միևնույն ժամանակ, հաճախ լինում են դեպքեր, երբ անամնեզն ամբողջությամբ անտեսվում է: Պետք է նշել, որ ինքնին անամնեզի տվյալների անտեսումն ախտորոշման մեջ բացասական կողմ է: Ախտորոշիչ սխալների պատճառով ախտորոշիչ յատրոգենիան առաջանում է հիվանդի անամնեզի տվյալների նկատմամբ բժշկական մասնագետների անուշադրության և ախտանիշի սխալ գնահատման պատճառով: Այսպիսով՝ հաճախ տեղի է ունենում բժիշկների կողմից անամնեզի ախտորոշիչ նշանակության թերազնահատում:

Ըստ Վ. Յոնաշի՝ վատ հավաքված պատմության պատճառով սրտի հիվանդությունների ախտորոշման մեջ ավելի շատ սխալներ են առաջանում, քան այն բանի արդյունքում, որ հիվանդին զննելիս որոշ ախտանիշներ չեն նկատվել¹²:

Վերլուծելով Լիլիթ Վարդանյանի կողմից կատարված յատրոգեն հանցագործության սուբյեկտիվ կողմի առանձնահատկությունները՝ պետք է փաստել անփութության տեսքով մեղքի անզգույշ ձևի մասին: Լիլիթ Վարդանյանն ունեցել է բոլոր օբյեկտիվ հնարավորությունները, որպեսզի ժամանակին նշանակի և իրականացնի անհրաժեշտ համալիր հետազոտություններ՝ ճիշտ ախտորոշում հաստատելու հնարավորության համար, ինչը, սակայն, չի արվել ամբաստանյալի կողմից:

Ախտորոշման կարևոր կետերից և փուլերից մեկն անամնեզի՝ հիվանդի հիշողությունների հավաքումն է, այսինքն՝ հիվանդից սուբյեկտիվ տվյալների ստանալը: Անամնեզը պետք է բացահայտի հիվանդության սուբյեկտիվ պատկերը, այսինքն՝ հիվանդի զգացողությունները և այն խանգարումները, որոնք նա ինքն է նկատում իր մեջ¹³:

Անամնեզի և օբյեկտիվ հետազոտության տվյալների անտեսումը նախնական հետազոտության ընթացքում վերջին տարիներին շատ հեղինակներ են նշում: Ըստ նրանց՝ դա արտացոլվում է բացթողումների տեսքով հիվանդությունների պատմությունների և հիվանդների ամբուլատոր քարտերի ձևակերպման ժամանակ¹⁴, ինչը կեղծ տպավորություն է ստեղծում

¹² *Йонаш В.*, Клиническая кардиология, Прага: Госмедиздат ЧССР, 1966, с. 562.

¹³ *Зарецкий М. М., Черникова Н. М.*, Игнорирование анамнеза и данных объективного обследования как отрицательный момент в диагностике заболеваний // «Новости медицины и фармации», 21 (349), 2010.

¹⁴ *Асинова М. И.*, Роль анамнеза в диагностическом процессе у пожилых и старых людей // Журн. практ. врача., 2002, № 1., с. 79-80., *Марков Ю. И.*, Значение анамнеза в диагностическом процессе // Медицина неотложных состояний, 2009, № 5., С. 103-105.; *Скворцов В. В., Скворцова З. С.*, Методика обследования терапевтического больного, Ростов-на-Дону, Феникс, 2008, с.166.

ախտորոշման մեջ այդ կարևոր բաժինների բացակայության մասին: Չգիտես ինչու, նշվում է ախտորոշման մեջ հետազոտության բարդ լաբորատոր և գործիքային մեթոդների արդյունքներին վստահելու միտում¹⁵:

Հակոբ Գրիգորյանի գործով որոշման մեջ հայտնաբերվել են ախտորոշիչ պրոցեդուրաների յատրոգենիաներ՝ ախտորոշման ընթացակարգի (սրտի ԷՍԳ) չիրականացում՝ որպես տարբերակիչ ախտորոշում, ինչպես նաև սխալ ախտորոշում: Այսպես, բժիշկը չի կատարել տվյալ դեպքում անհրաժեշտ էլեկտրասրտագրություն, ինչպես նաև սրտանոթային անբավարարության դրսևորումներն ախտորոշելու նպատակով չի իրականացրել թոքերի աուսկուլտացիա (գործիքային լսում), որի արդյունքում Ջավեն Ղամբարյանի մոտ չի ախտորոշվել սուր կորոնար համախտանիշ (սրտամկանի սուր իշեմիա, սրտամկանի սուր ինֆարկտ և այլն), այլ միայն ստուգել է վերջինիս զարկերակային ճնշումը և նրանից տեղեկանալով, որ գանգատներ չունի, տվել է սխալ ախտորոշում՝ «հիպերտոնիա», արդյունքում՝ Ջավեն Ղամբարյանն անմիջապես ստացիոնար չի տեղափոխվել և ստացիոնար պայմաններում չեն իրականացվել անհրաժեշտ կլինիկական-լաբորատոր և գործիքային հետազոտություններ:

Դիֆերենցիալ ախտորոշումն էական նշանակություն ունի, այսինքն՝ որոշակի հիվանդության և այլ հիվանդությունների միջև տարբերության հաստատումը, որոնք նման են կլինիկական դրսևորումներին, քանի որ ախտորոշելով և չհամոզվելով դրա ճիշտության մեջ, բուժաշխատողը կարող է սխալմամբ վստահ լինել հիվանդի կյանքի համար վտանգի բացակայության մեջ¹⁶:

Արտակ Օհանյանի գործով թիվ ԵԱԴԴ/0015/01/17 որոշման մեջ կարելի է նաև տեսնել բժշկի կողմից անամնեզի տվյալների անբավարար վերլուծությունը և, որպես հետևանք, սխալ ախտորոշման հաստատմանը: Այսպես՝ Արտակ Օհանյանը 2013 թվականի հոկտեմբերի 20-ին վաղաժամկետ դուրս է գրել Գրիշա Հովհաննիսյանին՝ իր իսկ կողմից սխալ ախտորոշված «սուր ալկոհոլային թունավորում» ախտորոշմամբ, ինչի հետևանքով վերջինս, զրկվելով ժամանակին և պատշաճ ստացիոնար բուժում ստանալու հնարավորությունից, 2013 թվականի հոկտեմբերի 21-ին առողջական վիճակի կտրուկ վատթարացմամբ կրկին հոսպիտալացվել է և մահացել:

Հաջորդ դեպքը (Ռաֆիկ Աբոյանի գործով թիվ ԼԴ/0044/01/08 որոշումը) նույնպես զգալի հետաքրքրություն է ներկայացնում բժշկի կողմից թույլ տրված ախտորոշիչ յատրոգենիայի սուբյեկտիվ կողմի քրեաիրավական վերլուծության համատեքստում: Այսպես՝ Վարդան Սիմոնյանն ընկել և գլխի շրջանում վերքի առկայության դեպքում ստացել է ծոծրակի կոտրվածք: Բժիշկ Ռաֆիկ Աբոյանը, բավարարվելով միայն վերքը վիրակապելով, չի կատարել գանգի ոսկորի ռենտգեն հետազոտություն, նյարդաբանի, նյարդավիրաբույժի խորհրդատվություն, չի ախտորոշել գանգուղեղային ծանր վնասվածք, չի նշանակել ստացիոնար բուժում և թույլ է տվել Վարդան Սիմոնյանին գնալ տուն: Այս դեպքում ակնհայտ է կոպիտ ախտորոշիչ յատրոգենիա, քանի որ գլխի վնասվածքների դեպքում (կապտուկներ, բարձրությունից ընկնելու հարվածներ), գանգի ակնաբուժական ռենտգենոգրաֆիան պարտադիր է: Ըստ դատաբժշկական փորձաքննության հանձնաժողովի եզրակացության՝ «Վարդան Սիմոնյանի գլխի շրջանում մեծ սալջարդային վերքի առկայության դեպքում բժիշկը պարտավոր էր կատարել գանգի

¹⁵ *Гогин Е. Е.*, Инструментальные методы в диагностике: успехи и опасности технизации медицины // *Терапевт. Архив*, 1998, № 4, с. 4-9; *Зарецкий М. М., Черникова Н. М.*, Значение анамнеза, клинического и параклинических методов обследования в диагностике внутренних болезней // *Клин. Медицина*, 1991, № 10, с. 102-104.

¹⁶ Электронный ресурс: <https://wiselawyer.ru/poleznoe/101326-neostorozhnost-medicinskogo-rabotnika-prichinenii-vreda-zdorovyu-smerti> (дата обращения 25.10.2023).

ոսկորների ռենտգեն հետազոտություն, նյարդաբանի և նյարդավիրաբույժի խորհրդատվություն (վերջիններիս բացակայության դեպքում պարտավոր էր անձամբ գնահատել հիվանդի նյարդաբանական կարգավիճակը), և պատշաճ բուժում կազմակերպելու դեպքում հիվանդի կյանքը կփրկվեր»¹⁷: Այնուհետև գործով որոշման մեջ նշվում է, որ Ռաֆիկ Աբոյանը վերքը գննել է առանց տեխնիկական միջոցների օգտագործման, ինչն իր հերթին, մեր կարծիքով, վկայում է մասնագիտական անբարեխղճության և իր պարտականությունների կատարման նկատմամբ ձևական մոտեցման մասին: Ռաֆիկ Աբոյանը նյարդաբանների չի ներգրավել հիվանդին պատշաճ հետազոտելու համար, ինչը պարտավոր է անել բժիշկը նման դեպքերում: Մինևույն ժամանակ, գանգուղեղային վնասվածքի ախտորոշումը, դրա ծանրության և բնույթի հստակեցումը պահանջում է տարբեր մեթոդների մի ամբողջ համալիրի օգտագործում: մինևույն ժամանակ, շատ կարևոր դեր է խաղում ոչ միայն գործիքային հետազոտության մեթոդների օգտագործումը, այլև վնասվածքից անմիջապես հետո տուժողի անմիջական կլինիկական հետազոտությունը, նրա դինամիկ դիտարկումը¹⁸:

Գործով որոշման մեջ նշվում է, որ բժիշկը տվյալ դեպքում հանցավոր անփութություն է դրսևորել, ինչն արտահայտվել է գլխի վնասվածք չհայտնաբերելով (այլ կերպ ասած՝ կարող էր և պետք է հայտնաբերել/կանխատեսել հանրորեն վտանգավոր հետևանքներ, բայց չէր կանխատեսել): Սակայն, մեր կարծիքով, ամեն ինչ այնքան էլ միանշանակ չէ: Դատապարտյալը տեղյակ է եղել տուժողի ընկնելու մասին, տեսել է նրա վերքը, որը նա համապատասխանաբար վիրակապել է, ինչն էլ իր հերթին վկայում է այն մասին, որ տվյալ դեպքում Ռաֆիկ Աբոյանը կանխատեսել է հնարավոր բացասական հետևանքները, որոնք կարող են առաջանալ: Կարծում ենք, որ այս դեպքում էլ բժիշկը ձևական և անբարեխղճ մոտեցում է ցուցաբերել մասնագիտական պարտականությունների կատարմանը, դրսևորելով հանցավոր ինքվաստահություն: Այս դեպքում կասկածելի է ենթադրել, որ բժիշկը չի ունեցել տարրական գիտելիքների մակարդակ (ինչպես տեսնում ենք, խոսքը չի գնում, օրինակ, հատուկ, խորը գիտելիքներ պահանջող նեղ – հատուկ հարցի մասին) և չի իմացել, որ նման դեպքերում անհրաժեշտ է ռադիոգրաֆիա անցկացնել: Ճիշտ հակառակը, որոշման մեջ բերված փաստական հանգամանքներից մենք տեսնում ենք անբարեխղճության մասին մեր թեզի հաստատումը: Բժիշկը շտապել է մեկ այլ հիվանդի մոտ զննության, ինչն էլ պայմանավորել է նրա մասնագիտական պարտականությունների ոչ պատշաճ կատարումը: Ուստի, կարծում ենք, որ այս դեպքում կարելի է խոսել հանցավոր ինքնավստահության, այլ ոչ թե անփութության մասին: Կարելի է ենթադրել, որ Ռաֆիկ Աբոյանը կարծել է, որ ընդհանուր առմամբ նման իրավիճակներում հնարավոր է բացասական հետևանքների առաջացում, սակայն վիրակապելով Վարդան Սիմոնյանի վերքը և վիճակը գնահատելով «բավարար», ինքնահավանորեն հույս է դրել, որ դրանք չեն առաջանա տվյալ կոնկրետ դեպքում: Պետք է համաձայնել Ի. Մ. Տյաժկովայի կարծիքի հետ, որ «անլրջության դեպքում մեղավորը տեղյակ է իր գործողությունների կամ անգործության հնարավոր հասարակական վտանգի մասին՝ հավատալով, որ եթե նման պահվածքը կարող է հանգեցնել վտանգավոր հետևանքների, ապա այս կոնկրետ դեպքում դրանք չեն լինի»¹⁹: Այսպիսով՝ բժշկի գործողություններում, որը բավարար ուսումնասիրություններ չի կատարել ախտորոշման համար և բուժում է նշանակել ոչ ամբողջական տվյալներ

¹⁷ Ռաֆիկ Աբոյանի գործով 2008 թ. թիվ ԼԴ/0044/01/08 որոշումը:

¹⁸ *Смычев В.Б., Пономарева Е.Н., Диагностика черепно-мозговых травм // Медицинские новости. 2013. № 4. С. 19.*

¹⁹ *Тяжкова И.М., Неосторожные преступления с использованием источников повышенной опасности / Под ред. В.С. Комиссарова, СПб.: Издательство «Юридический центр Пресс», 2002, с. 22.*

րի և իր ենթադրությունների հիման վրա, կա հանցավոր ինքնավստահություն²⁰:

Հետաքրքիր է նաև *Ալեքսանդր Ֆանյանի* գործով 2011 թ. թիվ ԱՎԴ/0123/01/11 որոշումը: Այս դեպքում տեղի է ունեցել ախտորոշիչ յատրոգենիա սրտաբանության ոլորտում, մասնավորապես, բուժաշխատողը չի հայտնաբերել հիվանդի մոտ առկա ախտանիշներ (մասնավորապես, նրա մոտ սինուսային առիթմիայի առկայությունը); նաև տեղի է ունեցել էլեկտրասրտագրության սխալ մեկնաբանություն: Այստեղ, ի գիտություն, հարկ է նշել, որ հաճախ յատրոգենիան, որը կապված է էլեկտրասրտագրությունների սխալ մեկնաբանության հետ, կապված է տեխնիկական սարքավորումների թերությունների և էՍԳ արտադրության բուն գործընթացի հետ: Այլ կերպ ասած, Ալեքսանդր Ֆանյանը կողմից կատարվել է ոչ լիարժեք ախտորոշում ու նաև սխալ ախտորոշում: Ալեքսանդր Ֆանյանը, չհայտնաբերելով տուժողի մոտ անկանոն սինուսային ռիթմ և այլն ախտանիշներ, չի ախտորոշել սրտամկանի սուր ինֆարկտը, սակայն կարող էր և ուներ դրա իրական հնարավորությունը: Այս դեպքում տեսնում ենք մաքուր անփութություն: Բժշկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ս. Բ. Մայանսկայան միանգամայն իրավացիորեն նշում է, որ մեկնաբանության դժվարության դեպքում անհրաժեշտ է հաշվի առնել կլինիկական պատկերի և ախտորոշման լրացուցիչ մեթոդների տվյալները²¹, ինչը չի արվել Ալեքսանդր Ֆանյանի կողմից:

Չնայած ժամանակակից բժշկության առաջընթացին, ճիշտ ախտորոշում ստանալը երբեմն օբյեկտիվորեն դժվար է: Նմանօրինակ իրավիճակներում բուժաշխատողների կողմից բոլոր համապատասխան հետազոտությունների անցկացումը վկայում է մեղքի բացակայության մասին, նույնիսկ եթե, ի վերջո, ճիշտ ախտորոշում չի հաստատվել, կամ հիվանդին չի հաջողվել փրկել հիվանդության արագ ընթացքի պատճառով: Սակայն, ինչպես ցույց է տալիս դատական պրակտիկայի վերլուծությունը, խնդիրն այն է, որ նրանք չեն կատարում անհրաժեշտ միջոցառումների ամբողջ համալիրը:

Եզրակացություն

Հաշվի առնելով առողջապահության ոլորտի խոցելիությունը՝ Հայաստանի Հանրապետության յատրոգեն հանցագործությունների համակարգում ախտորոշիչ ընթացակարգերի յատրոգենիաների գերակշռող մասնաբաժինը, որպես դիտարկվող ոլորտում պատասխանատվության խստացման հնարավոր տարբերակ կարող է լինել քրեական պատասխանատվություն նախատեսել սխալ ախտորոշման համար նաև այն դեպքում, երբ հնարավոր է եղել խուսափել անբարենպաստ հետևանքներից: Հարկ է նշել, որ իրականացված սոցիոլոգիական հարցման ընթացքում, այն հարցին, թե ինչպես են վերաբերվում բժշկիքրեական պատասխանատվության սահմանմանը այն դեպքում, երբ նա սխալ ախտորոշում է կատարել, եթե հնարավոր է եղել խուսափել բացասական հետևանքներից կամ դրանք չեն առաջացել, բնակչության 82.9 % տվել է դրական պատասխան՝ քվեարկելով «կողմ»: Անշուշտ, այս առաջարկն անվիճելի չէ և կարող է քննարկումներ առաջացնել գիտական միջավայրում: Այսպիսով, օրինակ, տեսականորեն կա կարծիք, որ ախտորոշիչ սխալը, որն ուղղակիորեն չի մասնում առողջությանը, յատրոգենիա չէ²²: Իհարկե, ներկայում ամենատարածվածը յատրոգենիայի ընկալումն է

²⁰ Постановление Электростальского городского суда Московской области от 23 августа 2010 г. об оставлении приговора мирового судьи без изменения // ГАС «Правосудие» URL: http://elektrostal.mo.sudrf.ru/modules.php?name=bsr&op=show_text&srv_num=1&id=50600531008231522322651_000020886 (дата обращения 20.03.2013).

²¹ <https://cyberleninka.ru/article/n/k-voprosu-o-trudnostyah-ekg-diagnostiki-infarakta-miokarda>.

²² Вовк Е.И., Верткий А.Л., Зайратьянц О.В., Фролова Ю.В., Мельникова Т.А., Зарубежный опыта учет и анализа

հենց որպես անբարենպաստ *հետևանքներ*, միևնույն ժամանակ, մենք առաջարկում ենք ելնել վրանգի հայեցակարգից և, համապատասխանաբար, վրանգի տակ դնելուց, ինչպես նաև մասնագիտական իրավասության և բարեխղճության կանխավարկածից:

Այսպիսով՝ պետք է խոսել սխալ ախտորոշման համար քրեական պատասխանատվություն նախատեսելու մասին՝ որպես իրական (կոնկրետ) վտանգի հանցակազմ, որի էությունն այն է օրենքում նշված հետևանքների առաջացման սպառնալիքի ստեղծման մեջ: Այսպիսով, օրինակ, կարելի է խոսել սխալ հաստատված ախտորոշման մասին, եթե դա հիվանդի կյանքին և առողջությանը էական վնաս պատճառելու սպառնալիք է ստեղծել:

Գ. Յ. Պոլուպանը նշում է, որ վտանգի ստեղծումը վնասի հնարավորության վիճակի ձևավորումն է, որը քրեաիրավական արգելքի տակ դրված արարքի կատարման հետևանք է²³: Վտանգը պետք է լինի իրական, այսինքն՝ կապված հետևանքների հնարավոր առաջացման հետ: Ն. Ս. Տազանցը նշում է, որ «վտանգը պետք է գոյություն ունենա առաջին հերթին օբյեկտիվորեն»²⁴: Կոնկրետ վտանգի դեպքում «անձի կողմից կատարված անգործությունը կամ գործողությունը ստեղծել է տվյալ իրավիճակում վնասակար հետևանքների առաջացման հնարավորություն»²⁵: Այսինքն՝ անձին քրեական պատասխանատվության ենթարկելու համար անհրաժեշտ է հաստատել, որ տվյալ կոնկրետ պայմաններում անձի կատարած գործողությունը կամ անգործությունը ստեղծել է վնասակար հետևանքների առաջացման իրական հնարավորություն:

Սխալ ախտորոշման դեպքում քրեական օրենսդրության կատարելագործման մեկ այլ հնարավոր տարբերակ կարող է հանդիսանալ հատուկ հանցակազմի նախատեսումը՝ սխալ ախտորոշման համար, որն անզգուշությամբ հանգեցրել է առողջությանը միջին ծանրության կամ ծանր վնասի կամ տուժողի մահվան:

Ամփոփագիր: Ներկայումս յատրոգենիաների և յատրոգեն հանցագործությունների տեսակների բազմաթիվ դասակարգումների շարքում առանձնահատուկ ուշադրության է արժանի ախտորոշիչ յատրոգենիան, որի բարձր սոցիալական վտանգավորությունը և վնասակարությունը կասկած չի հարուցում: «Ներկայումս չկա ախտորոշիչ յատրոգենների հստակ սահմանում և դասակարգում: Միևնույն ժամանակ, յատրոգեն իրադարձությունները կարող են առաջանալ արդեն հիվանդի կլինիկական հետազոտության ընթացքում (բողոքների և անամնեզի հավաքում, ֆիզիկական հետազոտություն)»²⁶: Սխալ ախտորոշումն առաջացնում է յատրոգենիա, իսկ հետագա նշանակված բուժումը, որը հիմնված է սխալ ախտորոշման վրա, հիվանդի մոտ առաջացնում է յատրոպաթիա: Այսպիսով, այս տեսակի յատրոգենիաների վտանգը կրկնակի ազդեցության մեջ է՝ ախտորոշիչ յատրոգենիայի պատճառով առաջանում են այլ յատրոգենիաներ, մասնավորապես՝ բուժական: Թերապևտիկ յատրոգենիան սխալ բուժում է, որը որոշվում է բժշկի կողմից՝ սխալ ախտորոշման հիման վրա: Ախտորոշիչ յատրոգենիաները բաղկացած են սխալ ախտորոշումից, թերի ախտորոշումից և անժամանակ ախտորոշումից: Նշվածի լույսի ներքո կարևոր նշանակություն է ստանում ախտորոշման սխալներով (թերություններով) արտահայտված բժշկական օգնության ոչ պատշաճ տրամադրման քրեաիրավական վերլուծությունը: Սույն հոդվածում վերլուծվում են ախտորոշիչ յատրոգենիաները՝ Հայաստանի Հանրապետության դատական պրակտիկայի նյութերի հիման վրա, ախտորոշիչ ընթացակարգերի

неблагоприятных последствий лечения. Архив патологии. 2007; 69(1); 16-24.

²³ *Полупан Г.Ю.*, Уголовная ответственность за создание опасности: Автореф. дис. ... канд. юрид. наук. М., 2013, с. 7.

²⁴ *Таганцев Н.С.*, Русское уголовное право: Часть общая. Лекции. Т. 1. СПб., 1902.С. 659.

²⁵ *Нерсесян В.*, Проблемы уголовной ответственности за неосторожные преступления в составах «поставления в опасность» // Уголовное право, 2000, № 4, с. 21.

²⁶ *Дворецкий Л.И.*, Ятрогения в практике интерниста // Терапевтический архив 1, 2019, с. 123.

յատրոգենիաների տարածվածության պայմաններում առաջարկվում են օրենսդրական փոփոխություններ՝ ուղղված յատրոգեն հանցագործությունների դեմ քրեաիրավական պայքարի կատարելագործմանը:

Annotation. Currently, among the numerous classifications of types of iatrogenism and iatrogenic crimes, diagnostic iatrogenism deserves special attention, the increased public danger and social harmfulness of which is beyond doubt. Considering the various types of iatrogenies, special attention should be paid to iatrogenies of diagnostic procedures, which are very common and entail other iatrogenies. An incorrectly established diagnosis leads to iatrogenism, and further prescribed treatment based on an incorrect diagnosis causes iatropathy in the patient. Thus, the danger of this type of iatrogenies lies in their double effect – as a result of diagnostic iatrogenies, other therapeutic ones are generated. Therapeutic iatrogenia is an incorrect treatment determined by a doctor based on an incorrectly diagnosed diagnosis. Iatrogenies of diagnostic procedures consist in incorrect diagnosis, incomplete diagnosis and untimely diagnosis. In the light of the above, the criminal law analysis of improper medical care, expressed in diagnostic errors (shortcomings), is of great importance. This article analyzes diagnostic iatrogenies based on the materials of the judicial practice of the Republic of Armenia; in the context of the prevalence of iatrogenies of diagnostic procedures, legislative changes aimed at improving the criminal legal fight against iatrogenic crimes are proposed.

Аннотация. В настоящее время в числе многочисленных классификаций видов ятрогений и ятрогенных преступлений, особого внимания заслуживает диагностическая ятрогения, повышенная общественная опасность и социальная вредность которой не вызывает сомнений. Рассматривая различные виды ятрогений, следует обратить особое внимание на ятрогении диагностических процедур, имеющие большую распространенность и влекущие за собой иные ятрогении. Неправильно поставленный диагноз влечет ятрогению, а дальнейшее назначенное лечение, основанное на неверном диагнозе, вызывает у пациента ятропатию. Таким образом, опасность данного вида ятрогений заключается в их двойном эффекте – вследствие диагностических ятрогений порождаются иные – лечебные. Лечебные ятрогении представляют собой неверное лечение, определенное врачом на основании неверно поставленного диагноза. Ятрогении диагностических процедур заключаются в неправильном диагнозе, неполном диагнозе и несвоевременном диагнозе. В свете отмеченного важное значение приобретает уголовно-правовой анализ ненадлежащего оказания медицинской помощи, выразившегося в ошибках (недостатках) диагностики. В настоящей статье проанализированы диагностические ятрогении на основе материалов судебной практики Республики Армения; в условиях распространенности ятрогений диагностических процедур предложены законодательные изменения, направленные на совершенствование уголовно-правовой борьбы с ятрогенными преступлениями.

Բանալի բառեր - յալրոգեն հանցվորություն, առողջապահություն, բուժաշխատող, ախտորոշում, անամնեզ:

Keywords: *iatrogenic crime, health care, medical worker, diagnosis, anamnesis.*

Ключевые слова: *ятрогенная преступность, здравоохранение, медицинский работник, диагноз, анамнез.*

СПИСОК ИСПОЛЬЗОВАННОЙ ЛИТЕРАТУРЫ

1. Khairullayev A., Islamov Sh., Davronov S. The structure of thermal injury in forensic material service// Материалы Международной научно-практической конференции «Тенденции и перспективы развития науки и образования в условиях глобализации», Переяслав-Хмельницкий, 2019, с. 541-543.
2. Makhmatmuradova N. N., Safarova M. P., Characteristics of chronic obstructive pulmonary disease// Материалы Международной научно-практической конференции «Тенденции и перспективы развития науки и образования в условиях глобализации», Переяслав-Хмельницкий, 2019, с. 510-512.

3. Пристансков В.Д. Криминалистическая теория расследования ятрогенных преступлений, совершаемых при оказании медицинской помощи: монография, СПб., 2007, с. 37.
4. Основы биоэтики: учеб. пособие / Я.С. Яскевич [и др.]; под ред. Я.С. Яскевич, С. Д. Денисова, Минск: Выш. шк., 2009, с. 217.
5. Гринберг М. С., Уголовное право: избр. тр. / науч. ред. М. С. Фокин. Омск, 2012, с. 517.
6. Эльштейн Н. В., Диагностические ошибки интернистов: общие аспекты. рмж. 1998;1:6. Электронный ресурс: https://www.rmj.ru/articles/obshchie-stati/DIAGNOSTICHESKIE_OShIBKI_INTERNISTOV_OBSchIE_ASPEKTY/#ixzz7zcu3I3rD Under Creative Commons License: Attribution
7. Йонаш В., Клиническая кардиология, Прага: Госмедиздат ЧССР, 1966, с. 562.
8. М. М. Зарецкий, Н. М. Черникова, Игнорирование анамнеза и данных объективного обследования как отрицательный момент в диагностике заболеваний // “Новости медицины и фармации” 21 (349) 2010.
9. Асинова М. И., Роль анамнеза в диагностическом процессе у пожилых и старых людей // Журн. практ. Врача, 2002, № 1, с. 79-80
10. Марков Ю. И., Значение анамнеза в диагностическом процессе // Медицина неотложных состояний, 2009, № 5, с. 103-105.
11. Скворцов В. В., Скворцова З. С., Методика обследования терапевтического больного, Ростов-на-Дону: Феникс, 2008, 166 с.
12. Гогин Е. Е., Инструментальные методы в диагностике: успехи и опасности технизации медицины // Терапевт. Архив, 1998, № 4, с. 4-9.
13. Зарецкий М. М., Черникова Н. М., Значение анамнеза, клинического и параклинических методов обследования в диагностике внутренних болезней // Клини. Медицина, 1991, № 10, с. 102-104.
14. Смычев В. Б., Пономарева Е.Н. Диагностика черепно-мозговых травм // Медицинские новости, 2013, № 4, с. 19.
15. Тяжкова И.М. Неосторожные преступления с использованием источников повышенной опасности / Под ред. В. С. Комиссарова. СПб.: Издательство «Юридический центр Пресс», 2002, с. 22.
16. Вовк Е.И., Верткий А.Л., Зайратьянц О.В., Фролова Ю.В., Мельникова Т.А. Зарубежный опыт учет и анализа неблагоприятных последствий лечения. Архив патологии. 2007; 69(1); 16-24.
17. Полупан Г.Ю., Уголовная ответственность за создание опасности: Автореф. дис. ... канд. юрид. наук. М., 2013, с. 7.
18. Таганцев Н.С., Русское уголовное право: Часть общая. Лекции. Т. 1. СПб., 1902, с. 659.
19. Нерсесян В., Проблемы уголовной ответственности за неосторожные преступления в составах «поставления в опасность» // Уголовное право. 2000. № 4. С. 21.
20. Дворецкий Л. И., Ятрогения в практике интерниста // Терапевтический архив 1, 2019, с. 123.
21. Огнерубов Н. А., Преступления в сфере медицинской деятельности : учебное пособие для вузов / Н. А. Огнерубов, Москва : Издательство Юрайт, 2023, 123 с.

Սարգսյան Ա. - իրավաբանական գիտությունների թեկնածու, Հայ-Ռուսական համալսարանի իրավունքի և քաղաքականության ինստիտուտի քրեական իրավունքի և քրեական դատավարության իրավունքի ամբիոնի դասախոս, էլիասցե՝ adelina-sargsyan@mail.ru:

Ներկայացվել է խմբագրություն 26.12.2023 թ., տրվել է գրախոսության 26.12.2023 թ., երաշխավորվել է ի.գ.դ., պրոֆեսոր, ՀՀ Վճռաբեկ դատարանի քրեական պալատի դատավոր, Հայ-Ռուսական համալսարանի պրոֆեսոր Ս. Ս. Ավետիսյանի կողմից, ընդունվել է տպագրության 15.04.2024 թ.:

ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ/CRIMINAL PROCEDURE/УГОЛОВНЫЙ ПРОЦЕСС

<https://doi.org/10.59546/18290744-2024.1-3-104>

ОВАНЕС БАЯНДУРЯН

*член палаты адвокатов РА,
аспирант кафедры уголовного права и уголовнопроцессуального
права Института права и политики РАУ*

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԲԱՅԱՆԴՈՒՐՅԱՆ

*ՀՀ փաստաբանների պալատի անդամ,
ՀՈՀ իրավունքի և քաղաքականության ինստիտուտի քրեական իրավունքի
և քրեական դատավարության իրավունքի ամբիոնի ասպիրանտ*

HOVHANNES BAYANDURYAN

*Member of the Chamber of Advocates of the RA,
PhD Student at the Chair of Criminal Law and Criminal Procedure
Law of the RAU Institute of Law and Politics*

**ПРАВО ЮРИДИЧЕСКОГО ЛИЦА ХРАНИТЬ МОЛЧАНИЕ:
СРАВНИТЕЛЬНО-ПРАВОВОЙ АНАЛИЗ**

**ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԻ ԼՈՒԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔԸ. ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ
ԻՐԱՎԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ**

**THE RIGHT OF A LEGAL ENTITY TO REMAIN SILENCE: COMPARATIVE
LEGAL ANALYSIS**

Введение

Появление понятия «право обвиняемого хранить молчание, право на защиту самообвинения» проще всего объясняется историческим развитием судопроизводства. Обвиняемый получил это право как ответную реакцию на злоупотребления, имевшие место, когда процедура судебного разбирательства носила явно инквизиционный характер.

Что касается исторического развития, то можно утверждать, что запрет на самообвинение защищает от повторного введения пыток и других форм государственного насилия. Без запрета на самообвинение обвиняемый сталкивается с дилеммой: он может либо оговорить себя, либо, в случае отказа сотрудничать должен быть подвергнут принудительным мерам, что ставит обвиняемого в положение, когда он не может принять решение. Принуждение к самооговору также нарушало свободу воли обвиняемого, что могло быть унижительным и унижающим человеческое достоинство. Компульсивное самообвинение также противоречит

природному инстинкту самосохранения.¹

Европейская конвенция о правах человека напрямую не содержит положения о праве хранить молчание. Тем не менее, Европейский суд по правам человека постановил, что «не может быть никаких сомнений в том, что право хранить молчание во время допроса в полиции и право не свидетельствовать против самого себя являются общепризнанными международными стандартами, которые лежат в основе понятия справедливого судопроизводства».² Смысл *inter alia* заключается в защите обвиняемого от злонамеренного принуждения со стороны властей, что помогает избежать судебных ошибок и добиться целей, поставленных в статье 6 ЕКПЧ (право на справедливое судебное разбирательство) .

Основное исследование

При рассмотрении вопроса о пределах свидетельского иммунитета юридического лица следует отметить, что вопрос остается открытым и по сей день в законодательстве многих стран, что обусловлено, помимо прочего, тем, что антикоррупционные конвенции, являющиеся основой для внедрения института уголовной ответственности юридических лиц, не содержат положения об использовании права на молчание юридическим лицом, в них в целом отсутствуют положения урегулирования вопросов уголовно-процессуального характера. Тот факт, что физические лица имеют право хранить молчание, не означает, что это автоматически распространяется и на юридические лица: не все статьи Европейской конвенции наделяют юридические лица такими правами. Суд придерживается практических принципов в этом вопросе и по каждому отдельному положению оценивает возможность передачи прав корпорациям.³

В силу неопределенности поставленного вопроса о праве юридического лица хранить молчание или о праве на защиту самообвинения в зарубежном правовом пространстве наблюдается дифференцированная практика.

Правоприменительная практика судов ФРГ. Рассуждение вопроса о пределах использования права на молчание (*nemo tenetur*) в немецкой правоприменительной практике остается открытым и по сей день.

В Уголовно-процессуальном кодексе ФРГ нет специального положения в пользу или против права юридического лица хранить молчание. Специального национального прецедентного

¹ В настоящее время часть процессуалистов считает, что этот исторический аргумент больше не имеет значения, поскольку обвиняемый в настоящее время защищен правами человека, особенно статьей 6 ЕКПЧ – «право на справедливое судебное разбирательство». Критики считают, что баланс между обвиняемыми и органами уголовного розыска изменился в пользу обвиняемых, и это за счет повышения эффективности уголовных расследований. Критики считают, что для восстановления эффективности уголовных расследований обвиняемый должен быть лишен права хранить молчание, кроме того, они обосновывают свою точку и тем, что технические и научные разработки привели к тому, что возможности органов уголовного розыска по сбору технических доказательств теперь стали больше и эффективнее, чем когда-либо. Органы уголовного розыска теперь имеют, например, доступ к криминалистическим технологиям, большим базам данных, ДНК, технологиям электронного наблюдения и т.д.

² ЕСПЧ, «Джон Мюррей (John Murray) против Соединенного Королевства», жалоба № 18731/91, решение от 8 февраля 1996 г., п. 45, на сайте <http://hudoc.echr.coe.int> , Быков против Российской Федерации: решение ЕСПЧ от 10 марта 2009 г. //URL: <https://docs.cntd.ru/document/902169805> , Бюллетень Европейского суда по правам человека. –2009. – С. 109–146.

³ Van den Muijsenbergh W./Rezai S. (2012), Corporations and the European Convention on Human Rights, *Global Business & Development Law Journal*, т. 25, стр. 48. – <http://digitalcommons.mcgeorge.edu> (на англ. языке, дата посещения 1 мая 2023 г.).

права не существует. В области антимонопольного административного производства законодательная власть, по-видимому, признает право юридического лица хранить молчание, если существует риск самообвинения в административном производстве. Еще в 1975 г. Федеральный Конституционный суд Германии (нем. Bundesverfassungsgericht, сокращённо BVerfG) предоставил юридическому лицу право отказаться от дачи показаний по делу об административном правонарушении, но только в рамках решения о несогласии и *obiter dictum*, которое могло быть реализовано их уполномоченным представительным органом.⁴ Однако в этом решении отсутствует какое-либо обоснование такого юридического заключения и какого-либо обсуждения прецедентного права или обращения к литературе. Между тем, следует констатировать, что Конституционный суд признает право юридического лица воспользоваться свидетельским иммунитетом.

В рамках уголовного производства немецкая правоприменительная практика пошла по пути закрепления сугубо личностного характера данного института. В 1997 г. первый сенат Федерального Конституционного суда еще раз рассмотрел вопрос о свободе выражения мнений юридического лица и в целом отклонил конституционное право на молчание в свою пользу, принимая во внимание также опасения свидетельствования против самого себя в случае риска санкций. Как подчеркнул Конституционный суд Германии: «Защита от самообвинения служит интересам человеческого достоинства. Обязательство давать самообличающие показания поставило бы человека перед невыносимой личной дилеммой. Юридические лица не будут сталкиваться с подобной дилеммой».⁵ В деле, принятом в этом суде, компетентный государственный орган по средствам массовой информации потребовал от частного вещателя предоставить записи трансляции запрещенной демонстрации под угрозой штрафов. Соответствующий закон штата о СМИ предусматривал обязательство по предоставлению информации.⁶

Однако следует отметить, что сужение института *non tenetur* и своеобразное ограничение права на молчание подвергалось критике со стороны правоведов на доктринальном уровне, в частности, по следующим причинам:

1. Решение Федерального Конституционного суда BvR 2172/96 от 26 февраля 1997 г. должно было оценить как возможное, неcodифицированное право хранить молчание только в случае специальной, установленной законом обязанности предоставлять информацию в соответствии с Законом о государственных средствах массовой информации. Решение не имеет обязательной силы в соответствии со статьей 31 BVerfG⁷. Оно ограничивается предметом спора, на котором основано решение, и ограничивается законодательным положением, представленным на рассмотрение⁸;

⁴ Конституционный суд ФРГ, решение № 2 BvR 820/74 от 26 февраля 1975 г., на сайте <https://dejure.org/dienste/vernetzung/rechtsprechung?Gericht=BVerfG&Datum=05.11.1975&Aktenzeichen=2%20BvR%20193/74> (на нем. языке).

⁵ Конституционный суд ФРГ, решение №1 BvR 2172/96 от 26 февраля 1997 г., на сайте www.servat.unibe.ch (на нем. языке).

⁶ Конституционный суд ФРГ, решение № 95, 220, 241f., на сайте <https://www.servat.unibe.ch/dfr/bv095220.html> (на нем. языке).

⁷ Постановление федерального налогового суда Германии (Bundesfinanzhof) от 11 августа 1999 г. XI R 77/99, BStBl. – <https://dejure.org/dienste/vernetzung/rechtsprechung?Gericht=BFH&Datum=11.08.1999&Aktenzeichen=XI%20R%2077/97>

⁸ Zeitschrift für Wirtschafts- und Steuerstrafrecht (wistra) 2003, Seite 121: «Das Schweigerecht der juristischen Person als Nebenbeteiligte im Strafverfahren». URL: <https://www.miNeggio.de/miNeggio-aufsatz-schweigerecht-juristische-person-nebenbeteiligte/>.

2. Конституционный суд придерживается принципиально разных концепций по одной и той же правовой проблеме. Конституционный суд по существу основывается на принципе *nemo tenetur*, основанном на защите человеческого достоинства, как основе права. Иными словами, Конституционный суд ФРГ в своих решениях рассматривает *nemo tenetur* на уровне верховенства закона и, очевидно, что такая имплементация не предназначена для предоставления исключения для юридических лиц.⁹ На этом основании нужно принять во внимание, что не следует недооценивать значение принципа *nemo tenetur* как процессуальной гарантии, существенных правовых корней принципа *nemo tenetur* и его конституционных ссылок, даже если отдельные гарантийные содержания принципа *nemo tenetur*, частично признанные в Германии, могут быть процессуально не обоснованы.

Более того, границы человеческого достоинства и верховенство закона не должны противоречить друг другу. Скорее наоборот, чем больше затрагиваются основные идеи справедливости, тем больше человеческое достоинство и верховенство закона пересекаются и приводят к одной и той же цели (укрепление прав личности и идентификация государства как правового)¹⁰;

3. Федеральный Конституционный суд BvR (решение № 2172/96 от 26 февраля 1997 г.) скорее всего рассматривал юридическое лицо в качестве «простого второстепенного участника» уголовных производств против физических лиц, в которых юридическое лицо могло использоваться в качестве иждивенца и для простого извлечения выгоды. Немецкое уголовное законодательство тогда рассматривало в качестве субъекта уголовной ответственности только физические лица. Однако, считаем, что если речь идет о наказуемом субъекте права, то на него распространяются все процессуальные гарантии. В таких случаях имеем дело с карательными мерами и отдельным производством, в рамках которого достигается цель: наказание субъекта и восстановление социальной справедливости. Принципы *nemo tenetur* имеют весьма глубокие исторические корни и для уголовно-правовых гарантий весьма характерно, что эти принципы исторически сложились в борьбе за гуманное уголовное право и справедливый уголовный процесс.

4. Федеральный Конституционный суд отрицает применимость принципа *nemo tenetur* для юридических лиц, ссылаясь на человеческое достоинство. Здесь, если даже оспаривать тот факт, что разработка принципа *nemo tenetur* связана с человеческим достоинством и даже признать принцип *nemo tenetur* конституционным принципом, используя призму человеческого достоинства, то способ, которым эти ссылки делаются в контексте вопроса о человеческом достоинстве, вызывает серьезную озабоченность, что проявляются в

⁹ Конституционный суд Германии (BVerfG), решение от 25 августа 2014 г., BvR 2048/13, Rdn.13: Принцип свободы от самообвинения закреплен в верховенстве закона и имеет конституционный статус (см. BVerfGE 38, 105 <113 f.>); BVerfGE 38, 105, 113: «[...] конституционный принцип, согласно которому никто не может быть принужден к даче показаний против самого себя»: BVerfG, решение 02.02.2002, BvR 1249/01, NJW 2002, 1411, 1412: «[...] несовместимо с человеческим достоинством, если он [...]». В результате этого принципа верховенства права [...]»; BVerfG, решение от 27 апреля 2010 г., 2 BvL 13/07, Wistra 2010, 341, 341, Rdn.2: «[...] является одним из признанных принципов конституционного уголовного процесса».

¹⁰ См. Reiß, Besteuerverfahren und Strafverfahren, 1987, стр..... рус..... 166 f., который рассматривает нарушение элементарных принципов верховенства права как нарушение основных прав и принципа верховенства права и говорит о «учете со стороны государства и со стороны человек»; Maunz/Dürig, статья 20 I, Rdn. 14, 16, 18, который особо указывает на двойную и равную основу принципа. То же самое должно относиться и к запрету на произвол. Справедливость этих гарантий для юридических лиц справедливо не подвергается сомнению. Schmidt-Abmann, Maunz/Dürig, Основной закон, том 6, статья 103 II (1992), Rdn 166: «Пересечение двух гарантийных линий».

том, что другие уголовно-процессуальные гарантии, такие как принцип вины, презумпция невиновности, права на справедливое судебное разбирательство, также имеют или др. ссылки на человеческое достоинство, но их применение в отношении юридических лиц не имеет столь жестких границ. Без принципа *nemo tenetur* обвиняемый был бы лишен своей процессуальной коммуникативной автономии. Принцип *nemo tenetur* разрешает этот конфликт ролей в пользу позиции субъекта в судебном процессе и закрепляет распределение бремени доказывания против дезавуирования: государство не может доказывать вину, заставляя обвиняемого свидетельствовать против самого себя.

5. Решение Федерального Конституционного суда BvR 2172/96 от 26 февраля 1997 г. основывается на классификаций принципа *nemo tenetur* как материального основного права с прочными ссылками на защиту человеческого достоинства. Вопрос о действительности принципа *nemo tenetur* для юридических лиц зависит от того, рассматривается ли он как материальное основное право или как процессуальная гарантия. Если говорим о принципе как процессуальном гаранте, то его действительность не подлежит сомнению.

Защитная цель запрета на самообвинение может заключаться в обеспечении справедливого судебного разбирательства в более широком смысле. Этот принцип направлен на ограничение полномочий государства в уголовном судопроизводстве и обеспечение справедливого баланса между обвинением и защитой.

Взгляды Европейских судов. В отличие от вышеупомянутого юридического заключения Федерального Конституционного суда ФРГ, Европейский суд (Суд Европейского союза) в так называемом решении *Orkem* предоставляет юридическому лицу частичное право хранить молчание, если существует риск самообвинения.¹¹

В рамках предварительного расследования по делу о нарушении пункта 1 статьи 85 Договора о ЕЭС Комиссия ЕС под угрозой штрафов запросила информацию у причастного коммерческого предприятия. Заинтересованная компания подала жалобу, аргументируя это тем, что Комиссия вынудила компанию дать показания против себя. Европейский суд заявил, что государства-члены союза предоставляют только физическим лицам право отказаться от дачи «свидетельских показаний против самого себя». С другой стороны, в законодательстве всех государств-членов отсутствует общий принцип, в соответствии с которым юридические лица, как правило, вправе отказаться давать показания против самих себя. Однако компании также могут легко сослаться на статью 6 Европейской конвенции по правам человека.¹²

Конкретно это означает, что Европейская комиссия может обязать отдельные компании в рамках предварительного расследования предоставить информацию, даже если эта информация или документы могут иметь негативный характер для компании. В постановлении Европейского суда, изданном лишь немногим ранее¹³, право на защиту получило принципиальный характер не только в административном производстве с риском применения санкций, но и в производстве предварительного следствия, причем прямо как в пользу физического, так и юридического лица. Европейский суд говорит о необходимости признания прав на защиту пострадавших компаний. Защита юридического лица ставится на тот же уровень, что

¹¹ Решение Европейского суда от 18 октября 1989 г. (*Orkem v Commission of the European Communities*), Дело 374/87 [1989] ECR 3343, URL: <https://eur-lex.europa.eu/legal-content/EN/TXT/?uri=CELEX%3A61987CJ0374>.

¹² Параграф 30 (см. предыдущую сноску).

¹³ Judgment of the Court of 21 September 1989. *Hoechst AG v Commission of the European Communities*. Joined cases 46/87 and 227/88.

и защита физического лица.

Таким образом, после решения по делу Orkem Европейский суд признал частичное право юридических лиц хранить молчание, поскольку правдивые ответы на запросы о предоставлении информации о внутренних фактах (процесс принятия решений их органами) привели бы к самооговору.

Европейский суд общей юрисдикции (EGC) также подтвердил частичное право компаний хранить молчание в картельных разбирательствах.¹⁴ Даже когда запросы на получение информации являются законными, Комиссия должна уважать право компании на защиту и не должна обязывать ее давать ответы, которые привели бы к самопризнанию правонарушения. Основные права ЕСПЧ относятся к общим правовым принципам, соблюдение которых судья Сообщества должен обеспечить.¹⁵ В то же время Суд постановил, что признание абсолютного и всеобъемлющего права на отказ в предоставлении информации привело бы к неоправданным препятствиям для Комиссии в выполнении задачи, возложенной на нее Договором о ЕС, и поэтому должно быть отвергнуто. Предъявление вопросов к компаниям, которые заставили бы их признать свое участие в незаконном соглашении, противоречит правилам конкуренции Сообщества.¹⁶

Таким образом, Европейская комиссия, со своей стороны, прямо признает принципы частичного права на молчание для юридического лица, выработанные в решении Европейского суда по делу Orkem, тем самым установив более широкие права на защиту для компаний.

Правоприменительная практика Европейского Суда по правам человека. Юридические заключения Европейской комиссии по правам человека и Европейского суда по правам человека (ЕСПЧ) идут гораздо дальше. И Комиссия по правам человека, и ЕСПЧ изначально применяют гарантии, вытекающие из статьи 6 ЕКПЧ, в двух постановлениях и предыдущих окончательных отчетах Комиссии (дела Функе и Бенденун)¹⁷, которые были выпущены только после вышеупомянутого решения Европейского суда по Orkem. В деле Функе французские национальные власти первоначально наложили штрафные санкции на заявителя за отказ представить документы.

ЕСПЧ возразил против этих санкций как недопустимых и в своем решении подтвердил нарушение статьи 6 ЕКПЧ. Он закрепил право хранить молчание непосредственно из этого положения.¹⁸ Решение по делу Функе стало первым из решений Европейского суда, в котором

¹⁴ Европейский суд общей юрисдикции (EGC), решение от 14.05.1998 – T.347/94. *Mayr-Melnhof / Kommission*, см. также: Европейский суд общей юрисдикции (EGC), постановление от 20.04.1999 (*Limburgse Vinyl Maatschappij NV*): на сайте www.curia.eu.int/jurisp.

¹⁵ Решение Европейского суда общей юрисдикции (EGC), постановление от 20.04.1999 (*Limburgse Vinyl Maatschappij NV*), параграф 449 (см. предыдущую сноску), со ссылкой на решение Европейского суда по делу Оркем против Комиссии ЕС.

¹⁶ См. там же.

¹⁷ Бенденун против Франции (*Bendenun v. France*): Постановление Европейского суда по правам человека от 24 февраля 1994 года (жалоба N 12547/86), URL: <https://european-court.ru/resheniya-evropejskogo-suda-na-russkom-yazyke/bandenun-protiv-francii-posta-n-vlenie-evropejskogo-suda/>.

Функе против Франции (*Funke v. France*): Постановление Европейского суда по правам человека от 25 февраля 1993 года (жалоба N 10828/84), URL: <https://european-court.ru/resheniya-evropejskogo-suda-na-russkom-yazyke/funke-protiv-francii-posta-n-vlenie-evropejskogo-suda/>.

¹⁸ Суд считает, что таможенные службы спровоцировали предъявление обвинения г-ну Функе с целью получения некоторых документов, о существовании которых они имели предположение, но не были полностью уверены. Не имея возможности или не желая получить их иным способом, они попытались заставить заявителя предоставить доказательства собственного нарушения. Особенности таможенного права (см. п. 30-31) не могут служить оправ-

было установлено право хранить молчание. В другом своем недавнем решении Европейский суд по правам человека прямо закрепляет право хранить молчание и право не способствовать собственному обвинению, как основной принцип справедливого судебного разбирательства, гарантируемый статьей 6 ЕКПЧ.¹⁹ Следует отметить, что как Комиссия по правам человека, так и Европейский суд по правам человека признают право на отказ в предоставлении информации, которое непосредственно устанавливается в статье 6 ЕКПЧ, и которое также может превалировать над установленными законом обязательствами по предоставлению информации, если существует риск самообвинения. Кроме того, в деле Функе Европейский суд по правам человека ликвидирует пробел в толковании статьи 6 ЕКПЧ, обнаруженный Европейским судом в предыдущем решении *Orkem*, и прямо указывает, что право хранить молчание непосредственно следует из этого положения. Как Европейский суд, так и ЕСПЧ применяют гарантии в отношении юридических лиц, содержащиеся в статье 6 ЕКПЧ, которая, по мнению ЕСПЧ, также включает право хранить молчание в ходе уголовного и аналогичного разбирательства в суде и на предварительном следствии.

Суд также не счел необходимым, с учетом вышеприведенной оценки использования опросов в ходе судебного процесса, выносить решение о том, носит ли право не давать показаний против самого себя абсолютный характер либо отступления от него могут в особых обстоятельствах быть оправданы.

По делу Саундерс против Соединенного Королевства ЕСПЧ также постановил: *«Не приемлемы доводы Правительства, что сложность обманов и обходов закона в корпоративном бизнесе и насущный общественный интерес в расследовании таких преступлений и наказаний виновных, могут оправдать столь явный отход в деле от одного из основополагающих принципов справедливого судебного разбирательства, что и случилось в данном деле. Как и Комиссия, он считает, что общие требования справедливости, содержащиеся в статье 6, включая право не давать показания против самого себя, применяются в уголовном процессе в отношении всех уголовно-наказуемых деяний, без какого-либо различия между самыми простыми и самыми сложными. Нельзя ссылаться на общественный интерес в оправдание использования ответов, добытых принудительным путем в ходе внесудебного расследования, для того, чтобы изобличить обвиняемого в ходе судебного разбирательства. Примечательно в этом отношении, что, согласно соответствующему законодательству, показания, полученные принудительно в силу полномочий, которыми наделен по борьбе с корпоративными правонарушениями, по общему правилу не могут быть использованы затем в судебном процессе и не потому, что эти показания были даны заявителем до предъявления ему обвинения».*²⁰

И так можно констатировать, что поскольку право хранить молчание и запрет на самообвинение вытекают из статьи 6 Европейской Конвенции, юридические лица также подпадают под действие права хранить молчание, поскольку они подпадают под действие статьи 6 Европейской Конвенции. Право хранить молчание возникает, когда выполняется автономное

данием нарушения права любого «обвиняемого» (по смыслу статьи 6) хранить молчание или не давать показаний в подтверждение своей вины. Следовательно, имело место нарушение статьи 6 п. 1 Конвенция.

¹⁹ J.V. против Швейцарии (жалоба № 31827/96)..... Постановление Европейского Суда по правам человека от 03.05.2001 г.: Суд отметил, что «право хранить молчание и привилегия не давать самообвиняющих показаний являются общепризнанными международными стандартами и лежат в основе понятия справедливого судебного разбирательства, закреплённого пунктом 1 статьи 6 », URL: <https://hudoc.echr.coe.int/rus?i=001-5202>.

²⁰ Саундерс против Соединенного Королевства (*Saunders v. the United Kingdom*): Постановление Европейского Суда по правам человека от 17 декабря 1996 года (жалоба N 19187/91).

необходимое «обвинение» по смыслу статьи Конвенции. Автономная концепция уголовных обвинений в статье 6 охватывает не только то, что классифицируется как уголовные обвинения в национальном законодательстве, но и широкий спектр других вещей, которые в некоторых правовых системах относятся к дисциплинарным и административным. Европейский суд указал, что он предпочитает «существенную», а не «формальную» концепцию «обвинения», предусмотренного пунктом 1 статьи 6 Конвенции.

При этом для автономного толкования понятия «обвинение» ЕСПЧ устанавливает критерии этого понятия. По делу *Энгель и другие против Нидерландов (Engel and Others v. The Netherlands)*²¹ ЕСПЧ устанавливает три критерия автономного толкования обвинения: 1. Классификация деяния в национальном законодательстве; 2. Характер правонарушения; 3. Характер и суровость наказания (природа и суровость наказания, карательный характер наказания). По другому делу Суд установил, что финансовые санкции, как правило, делают применимой статью 6, фискальные санкции носят карательный характер, например, штрафы, и такие носят уголовный характер²². По делу *Paykar yev haghTanak LTD v. Armenia* Суд установил, что суровость наказания обосновывается даже в том случае, когда наложенный штраф был равен 10 процентам налогового обязательства.^{23,24} Аналогичное решение было принято по делу «J.B. против Швейцарии» (*J.B. v. Switzerland*) (жалоба № 31827/96, ECHR 2001-III).

Вопрос о том, включает ли право хранить молчание также право не разглашать документы, является особым аспектом этого института, и по нему мнения расходятся.

В отличие от дела *Funke v. Франция*, по делу *Саундерс против Великобритании* ЕСПЧ установил, что привилегия от самообвинения не ставит под угрозу право отказаться от передачи компрометирующих документов или от использования документов, полученных в принудительном порядке, в уголовном судопроизводстве. ЕСПЧ заявляет, что всеобщий интерес в установлении истины и привлечении виновных к судебной ответственности должен превалять над защищающей от самообвинения привилегией, устанавливая аналогию с тем, что подозреваемых можно заставить сотрудничать, снимать у них отпечатки пальцев, брать у них кровь на анализ для установления содержания в ней алкоголя, брать кусочки кожного покрова для проведения анализа ДНК, или требовать подуть в пробирку, чтобы установить, не управляют ли они транспортом в состоянии опьянения.

В основе такого рассуждения в пользу ограничительной доктрины по делу *Сандерса* судья Мартинес ссылается на одно из решений Верховного суда США:

«Мы отмечаем далее, что признание привилегии, предоставляемой пятой поправкой,

²¹ *Энгель и другие против Нидерландов (Engel and Others v. the Netherlands)*: Постановление Европейского Суда по правам человека от 8 июня 1976 года (жалоба N 5100/71), URL: <https://european-court.ru/resheniya-evropejskogo-suda-na-russkom-yazyke/engel-i-drugie-protiv-niderlandov-postanovlenie-evropejskogo-suda/>.

²² *Банденун против Франции (Bendenun v. France)*: Постановление Европейского Суда по правам человека от 24 февраля 1994 года (жалоба N 12547/86), URL: <https://hudoc.echr.coe.int/eng?i=001-57863>.

²³ *CASE OF PAYKAR YEV HAGHTANAK LTD v. ARMENIA (Application №. 21638/03)*: URL: <https://hudoc.echr.coe.int/fre?i=001-118554>.

²⁴ При применении второго критерия ЕСПЧ пришел к выводу, что цель всех соответствующих положений состоит не в том, чтобы компенсировать государству затраты или ущерб, возможные в результате действий налогоплательщика, а в том, чтобы оказать давление на налогоплательщиков с целью выполнения своих юридических обязательств, а в случае нарушения этих обязательств наказать. Одного этого вывода было достаточно (разумеется, с учетом вывода по третьему критерию, приведенному выше), чтобы наложенные административные взыскания можно было рассматривать как уголовные обвинения, возбужденные в рамках автономного толкования этого термина.

в интересах хранителя деловых бумаг юридических лиц оказало бы отрицательное воздействие на усилия правительства привлечь к судебной ответственности представителей «беловоротничковой преступности», *которая представляет собой одну из самых серьезных проблем, с которой сталкиваются правоохранительные органы. Большая часть доказательство неправомерной деятельности со стороны организации или ее представителей обычно обнаруживается в официальных бумагах и документах этой организации. Если на все эти безлические бумаги и документы будет наброшен покров данной привилегии, то обеспечить эффективное соблюдение многих федеральных законов и законов штатов станет невозможно*. (...) «Если должное лицо сможет сослаться на привилегию, то государственные органы окажутся в безвыходном положении не только в своих усилиях обеспечить соблюдение законодательства по отношению к физическим лицам, но и в судебном преследовании организаций» (*Braswell v. US 487 US 99*).

Между тем, ЕСПЧ проводит разграничение между материалами, которые «обладают независимой от воли подозреваемого формой существования», и запретом на использование материалов, которые были получены «вопреки его воле». Суд считает, что если орган власти не знает с уверенностью, существует документ или нет, он не должен заставить обвиняемого передать документ, т.к. в этом случае это противоречило бы запрету на самообвинение. Если, с другой стороны, орган власти уже знает о существовании документа, он может заставить обвиняемого передать документ, не противореча при этом статье 6. Этот документ существует независимо от воли подсудимого и что, следовательно, согласно статье 6, обвиняемый должен передать документ, если государство требует его .

С одной стороны, такое рассуждение ЕСПЧ можно критиковать, рассмотрев его как право на защиту от самообвинения, с другой стороны, если рассмотреть такое рассуждение с точки зрения права на молчание, как одной из целей института, а именно как реакцию на имевшее место злоупотребление со стороны властного органа уголовного преследования, то его можно принять . Более того, право защиты от самообвинения (право не предоставлять доказательства против самого себя) обладает более широким иммунитетом, и включает в себя право на молчание (проще говоря, право не отвечать на вопросы), и носит более абсолютный характер.

Между тем следует отметить, что в более поздних решениях *J v. Швейцария*²⁵, *Chambaz v. Швейцария*²⁶ ЕСПЧ усмотрел принудительную передачу существующих документов как нарушение права на молчание.

Исходя из изложенного выше, можно прийти к выводу, что принцип *nemo tenetur* всегда должен соблюдаться, если процедура должна быть квалифицирована как уголовное обвинение согласно прецедентному праву ЕСПЧ. Это может иметь место как в основных уголовных производствах, так и в дополнительных или административных процессах. В прецедентном праве ЕСПЧ нет пробела, который оправдывал бы исключения, сделанные Федеральным Конституционным судом ФРГ.

Заключение

Запрет на самообвинение посредством реализации права на молчание направлен не только на защиту человеческого достоинства. Скорее защитная цель принципа *nemo tenetur*

²⁵ J.V. против Швейцарии (жалоба № 31827/96). Постановление Европейского Суда по правам человека от 03.05.2001 г.: URL: <https://hudoc.echr.coe.int/eng?i=001-59449>.

²⁶ CASE OF CHAMBAZ AGAINST SWITZERLAND, URL: <https://hudoc.echr.coe.int/fre?i=001-110240>.

может заключаться в обеспечении справедливого судебного разбирательства в более широком смысле. Уголовное судопроизводство является справедливым и законным, когда существует надлежащий баланс между обвинением и защитой. Запрет на свидетельское против самого себя является частью этого баланса и защищает, среди прочего, от возможных нападков со стороны властных следственных органов. Принцип *nemo tenetur* тесно связан с другими процессуальными гарантиями, например, презумпцией невиновности. Однако запрет на свидетельское против самого себя является не просто частью существующих основных прав, а независимым основным процессуальным правом.

Безусловно, следует стремиться к сбалансированному и справедливому уголовному процессу независимо от характеристик обвиняемого. Запрет на свидетельское против самого себя полностью применим к юридическим лицам как их конституционное право. Исходя из сказанного, непросто понять, почему общественный интерес к соблюдению процессуальных прав юридических лиц должен увеличивать эффективность уголовного преследования, тем более что существует и публичный интерес в законности уголовного судопроизводства.

Интеллектуальное происхождение не заключалось в осознании того, что обвиняемый является лицом, которое особенно заслуживает защиты и поэтому должно быть наделено процессуальными правами. Скорее, было признано, что властный орган уголовного преследования склонен к злоупотреблениям. Гарантированные обвиняемым права не были самоцелью, а в первую очередь служили реализации реформированного уголовного процесса, который требовал баланса между защитой и обвинением. Осознание того, что уголовное судопроизводство, в котором обвиняемый находится под давлением государственной власти из-за отсутствия эффективной защиты, не может быть законным, оно было ясно сформулировано с самого начала.

Это понимание остается в силе и сегодня: уголовно-процессуальный закон по-прежнему основан на идее реформированного уголовного процесса, который работает через взаимодействие защиты, обвинения и судьи. Даже сегодня необходимо стремиться к сбалансированному уголовно-процессуальному законодательству, чтобы защитить обвиняемого от довлеющей власти стороны обвинения. Следует признать, что запрет на самообвинение является лишь частью этого компенсационного механизма и поэтому не может рассматриваться изолированно. Остальные права обвиняемого, в частности, презумпция невиновности, которая квазисимбиотическим образом дополняет запрет на самообвинение, также служат уравниванию этого процесса. Этот подход не лишает органов расследования компетенции в признании недопустимым любое вмешательство в права обвиняемого. В распоряжении правоохранительных органов имеется целый комплекс принудительных мер, без которых эффективное уголовное преследование, вероятно, было бы иллюзорным. Однако обвиняемый должен починиться правоохранительным органам только в том случае, если соблюдены требования для принятия конкретной меры. Решающим для законной процедуры является то, что обвиняемый не находится во власти властного органа благодаря эффективным вариантам защиты.

Учитывая уголовно-процессуальное положение статьи 441 УПК РА, в силу того, что уголовно-процессуальное положение статьи 441 УПК РА содержит следующее: «В ходе производства по уголовному делу юридическое лицо наделяется правами обвиняемого, предусмотренными статьей 43 настоящего Кодекса, и несет обязанности, предусмотренные этой же статьей, в той мере, в какой они могут быть возложены на юридическое лицо»²⁷, можно прийти к выводу, что

²⁷ Уголовно-процессуального кодекса Республики Армения от 27 июля 2021 года №3Р-306 // URL: <https://www.arlis>.

юридическое лицо в силу приобретения процессуальных гарантий наделяется привилегией от самообвинения, что свидетельствует о правовой зрелости армянского процессуального законодательства. С одной стороны, законодатель устанавливает размытый предел применения таких прав, т.к. использование такого определения, как «в той мере, в какой» не совсем ясно определяет применение пределов таких прав обвиняемым²⁸.

Аннотация. В статье рассматриваются теоретические и практические проблемы реализации одного из важнейших принципов уголовно-процессуального права – принципа запрета на самообвинение посредством реализации права на молчание. Актуальность темы обусловлена реформированием уголовно-процессуального законодательства различных стран, включая Республику Армения, предусматривающего особый порядок производства по уголовным делам в отношении юридических лиц в силу преобразования уголовно-процессуальных правоотношений.

В статье нами выясняются некоторые правовые вопросы о праве на молчание юридического лица, выступающего в качестве или имеющего статус обвиняемого, и проводится сравнительно-правовой анализ законодательства и судебной практики зарубежных стран.

Անփոփազիր: Հոդվածում քննարկվում են քրեադատավարական իրավունքի կարևորագույն սկզբունքներից մեկի՝ լռության իրավունքի իրագործման միջոցով ինքնամեղադրանքի արգելման սկզբունքի իրականացման տեսական և գործնական խնդիրները: Թեմայի արդիականությունը պայմանավորված է տարբեր երկրների, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության քրեադատավարական օրենսդրության բարեփոխմամբ, որը նախատեսում է քրեական գործերի առանձնահատուկ դատավարական ընթացակարգ իրավաբանական անձանց նկատմամբ՝ պայմանավորված քրեադատավարական իրավահարաբերությունների վերակազմակերպմամբ:

Հեղինակը պարզաբանում է իրավաբանական անձի՝ որպես մեղադրյալի լռության իրավունքի վերաբերյալ որոշ իրավական հարցեր, իրականացնում է օտարերկրյա պետությունների տարբեր օրենսդրությունների և դատական պրակտիկայի համեմատական իրավավերլուծություն:

Abstract. The article discusses theoretical and practical problems of implementing one of the most important principles of criminal procedural law - the principle of the prohibition of self-incrimination through the implementation of the right to silence. The relevance of the topic is due to the reform of the criminal procedural legislation of various countries, including the Republic of Armenia, which provides for a special procedure for criminal proceedings against legal entities due to the reorganization of criminal procedural legal relations.

The author clarifies some legal issues about the right to silence of a legal entity as an accused, and conducts a comparative legal analysis of various legislations and judicial practice of foreign countries.

Ключевые слова: юридическое лицо, иммунитет, право на молчание, защита от самообвинения, уголовно-процессуальные правоотношения, субъект ответственности.

Բանալի բառեր - իրավաբանական անձ, անձեռնմխելիություն, լռության իրավունք, ինքնամեղադրանքից արհրոնություն, քրեադատավարական իրավահարաբերություններ, պատասխանատվության սուբյեկտ:

Keywords: legal entity, immunity, right to silence, privilege from self-accusation, criminal procedural legal relations, subject of responsibility.

am/documentview.aspx?docid=154763

²⁸ Более подробно см. Баяндурян Ованес А. Свидетельский иммунитет и пределы его применения в отношении юридических лиц // Регион и мир. 2023. №3 (46). URL: <https://cyberleninka.ru/article/n/svidetelskiy-immunitet-i-predely-ego-primeneniya-v-otnoshenii-yuridicheskikh-lits> (дата обращения: 14.02.2024).

СПИСОК ИСПОЛЬЗОВАННОЙ ЛИТЕРАТУРЫ

1. Банденун против Франции (Bendenoun v. France): Постановление Европейского Суда по правам человека от 24 февраля 1994 г. (жалоба № 12547/86).
2. Быков против Российской Федерации: решение ЕСПЧ от 10 марта 2009 г./, Бюллетень Европейского Суда по правам человека. – 2009. – № 6. – С. 109-146.
3. Европейский суд общей юрисдикции (EGC), решение от 14.05.1998 – T-347/94. Mayr-Melnhof / Kommission.
4. Конституционный суд ФРГ, решение № 2 BvR 820/74 от 26 февраля 1975 г.,
5. Конституционный суд ФРГ, решение № 95, 220, 241f.
6. Конституционный суд ФРГ, решение №1 BvR 2172/96 от 26 февраля 1997 г.
7. Постановление Европейского Суда по правам человека «Джон Мюррей (John Murray) против Соединенного Королевства», жалоба № 18731/91, решение от 8 февраля 1996 г.
8. Постановление Европейского Суда по правам человека от 17 декабря 1996 года (жалоба № 19187/91), Саундерс против Соединенного Королевства (Saunders v. the United Kingdom).
9. Постановление Европейского Суда по правам человека от 25 февраля 1993 года (жалоба № 10828/84), Функе против Франции (Funke v. France).
10. Постановление Европейского Суда по правам человека J.B. против Швейцарии (жалоба № 31827/96).
11. Постановление федерального налогового суда Германии (Bundesfinanzhof) от 11 августа 1999 г. XI R 77/99, BStBl.
12. Решение Европейского суда общей юрисдикции (EGC), постановление от 20.04.1999 (Limburgse Vinyl Maatschappij NV).
13. Решение Европейского суда от 18 октября 1989 г. (Orkem v Commission of the European Communities) Дело 374/87 [1989] ECR 3343.
14. Энгель и другие против Нидерландов (Engel and Others v. the Netherlands): Постановление Европейского Суда по правам человека от 8 июня 1976 года (жалоба N 5100/71).
15. CASE OF CHAMBAZ AGAINST SWITZERLAND.
16. CASE OF PAYKAR YEV HAGHTANAK LTD v. ARMENIA (Application no. 21638/03).
17. Judgment of the Court of 21 September 1989. Hoechst AG v Commission of the European Communities. Joined cases 46/87 and 227/88.
18. Van den Muijsenbergh W./Rezai S. (2012), Corporations and the European Convention on Human Rights, Global Business & Development Law Journal, т. 25, стр. 48, на сайте <http://digitalcommons.mcgeorge.edu> (на англ. языке, дата посещения 1 мая 2023 г.).
19. Zeitschrift für Wirtschafts- und Steuerstrafrecht (wistra) 2003, Seite 121: «Das Schweigerecht der juristischen Person als Nebenbeteiligte im Strafverfahren».
20. Der nemo tenetur-Grundsatz – prozessuale Fundierung und Geltung für juristische Personen C. Dannecker, ZStW 127 (2015), S. 370-409.
21. Баяндурян Ованес А. Свидетельский иммунитет и пределы его применения в отношении юридических лиц // Регион и мир. 2023. №3 (46).

Баяндурян О. – член палаты адвокатов РА, аспирант кафедры уголовного права и уголовнопроцессуального права Института права и политики РАУ, эл.почта: hovhannes.bayanduryan@mail.ru.

Статья представлена в редакцию 12.02.2024 г., отправлена на рецензию 12.02.2024 г., рецензент: судья Уголовной палаты Кассационного суда РА, д.ю.н., профессор; профессор Российско-Армянского университета С. Аветисян. Принята к публикации: 15.04.2024 г..

<https://doi.org/10.59546/18290744-2024.1-3-116>

ԻՆԳԱ ԱՎԱԳՅԱՆ

«Մասնավոր իրավական կենտրոն» փաստաբանական
գրասենյակի հիմնադիր-տնօրեն, փաստաբան,
«Գլաձոր» համալսարանի հայցորդ

INGA AVAGYAN

“Private Legal Center” Law Firm, Founding Director, Advocate,
Claimant at Gladzor University

ИНГА АВАГЯН

Учредитель и директор юридической фирмы
«Частный юридический центр», адвокат,
Соискатель университета «Гладзор»

ԱՊԱՑՈՒՅՑՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ ԵՋՐԱՓԱԿԻՉ ԴԱՏԱԿԱՆ ԱԿՏ ԿԱՅԱՑՆԵԼԻՍ

EVALUATION OF EVIDENCE IN MAKING A FINAL JUDICIAL ACT

ОЦЕНКА ДОКАЗАТЕЛЬСТВ ПРИ ПОСТАНОВЛЕНИИ ИТОГОВОГО СУДЕБНОГО АКТА

Ներածություն

Քրեական արդարադատություն իրականացնելու համատեքստում անհրաժեշտ ապացույցներ ձեռք բերելու, դրանք հետազոտելու, գնահատելու և նմանաբնույթ այլ հարցերի իրավական հիմքերը և գիտագործնական կտրվածքով կատարված հետազոտության արդյունքների վրա հիմնված եզրահանգումներն ունեն առանցքային նշանակություն:

Արդարադատությունը գործունեություն է, որն իրականացվում է խստիվ սահմանված դատավարական ձևով, ուստի դատարանների կողմից եզրափակիչ դատական ակտը հիմնվում է բացառապես այն փաստերի վրա, որոնք ապացուցվել են քրեական դատավարության ընթացքում ձեռք բերված, հետազոտված և գնահատված ապացույցների միջոցով:

Ապացուցման, մասնավորապես՝ ապացույցների ներկայացման և թույլատրելիության հիմնախնդիրներն առավել հաճախ դիտարկվում են արդար դատաքննության իրավունքն ապահովող երաշխիքների լույսի ներքո:

Միաժամանակ անմեղության կանխավարկածի ձևակերպման մեջ առկա «օրենքով սահմանված կարգով» դրույթը ենթադրում է, որ մեղադրական դատավճռի հիմքում կարող են դրվել միայն այն ապացույցները, որոնք ձեռք են բերվել օրենքով նախատեսված պահանջների խստիվ պահպանմամբ:

Հատկանշական է, որ ապացուցման հետ կապված հիմնախնդիրները պարբերաբար դարձել են ինչպես օրենսդրական, այնպես էլ իրավակիրառ պրակտիկայի առարկա:

Այսպես, Հայաստանի Հանրապետության նոր քրեական դատավարության օրենսգրքում ապացուցողական իրավունքին հատկացվել է զգալի տեղ և նշանակություն, մասնավորապես՝ պատշաճ ապացուցումը (Հոդված 22) նախատեսվել է որպես քրեադատավարական ինքնուրույն սկզբունք, հստակեցվել են ապացույցների հավաքման, ստուգման և գնահատման կանոնները, ամրագրվել է փաստերի իրավական կանխավարկածը և այլն:

Ապացույցների և ապացուցման գործընթացի հետ կապված մի շարք առանցքային հիմնախնդիրներին անդրադարձել է նաև ՀՀ Վճռաբեկ դատարանը և տասնյակ գործերով արտահայտել սկզբունքային նշանակություն ունեցող իրավական դիրքորոշումներ:

Հոդվածում հեղինակը նոր քրեական դատավարության օրենսգրքի լույսի ներքո, գիտական աշխատությունների և ՀՀ Վճռաբեկ դատարանի նախադեպային իրավունքի հիման վրա փորձ է արել վերհանել եզրափակիչ դատական ակտ կայացնելիս ապացույցների գնահատմանն առնչվող առանձին հիմնախնդիրները:

Հիմնական հետազոտություն

Չնայած նրան, որ ապացուցումը դատական գործունեության ամենադժվարին մաս է, քանի որ այն բացառապես կապված է արդեն կատարված իրադարձությունների հետ, և այն հնարավորինս ճիշտ վերարտադրելը բավականին բարդ գործընթաց է ենթադրում, սակայն պետք է նկատել, որ դատավարական օրենսդրության և դատական պրակտիկայի զարգացման միտումները համահունչ են ընթանում նշված ինստիտուտի կայացման և ամրապնդման օբյեկտիվ պահանջներին զուգահեռ:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգրք) 101-րդ հոդվածի համաձայն՝ ապացուցումը սույն օրենսգրքով նախատեսված՝ ապացուցման ենթակա փաստական հանգամանքները, ինչպես նաև վարույթի համար նշանակություն ունեցող այլ հանգամանքներ հաստատելու կամ հերքելու նպատակով ապացույցներ հավաքելը, ստուգելը և գնահատելն է:

Օրենսգրքի ապացուցման հասկացությունը սահմանվել է՝ հիմնվելով գործունեության այդ տեսակի հետևյալ երեք բնութագրիչների վրա.

ա) ապացուցումը ճանաչողական գործունեություն է (իրականացվում է ապացուցման ենթակա փաստական հանգամանքները հաստատելու կամ հերքելու նպատակով)¹,

բ) ապացուցումը տրամաբանական գործունեություն է (իրականացվում է ապացույցներ հավաքելով, ստուգելով և գնահատելով),

գ) ապացուցումը վարութային գործունեություն է (իրականացվում է Օրենսգրքով սահմանված կարգով):

Օրենսգրքը հստակեցրել է ապացուցման ենթակա հանգամանքների շրջանակը՝ դրանում ներառելով այնպիսի հանգամանքներ, որոնց հաստատումը կարևոր նշանակություն ունի դատավարական ակտ կայացնելու համար²: Նշված հանգամանքներն իրենց ամբողջության

¹ Մի շարք հեղինակներ նշում են, որ սա է պատճառը, որ ապացուցման ենթակա հանգամանքները սահմանվեցին օրենսգրքի՝ ապացուցմանը վերաբերող գլխում / Տես ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի հայեցակարգային լուծումների նորարական մոտեցումների և հիմնական ինստիտուտների մեկնաբանման գործնական ուղեցույց, հեղինակներ՝ Հ. Ղուկասյան, Դ. Մելիքյան, Ա. Նիկողոսյան, Եվրոպայի խորհուրդ, հուլիս, 2022, էջ 170-171:

² Տես Օրենսգրքի 102-րդ հոդվածը:

մեջ կազմում են ապացուցման առարկան, որը կիրառելի է բոլոր տեսակի հանցագործությունների համար: Դրա հետ մեկտեղ, սակայն, հարկ է ընդգծել, որ ապացուցման առարկայի՝ օրենքում ամրագրված տիպական թվարկումը յուրաքանչյուր գործով ճշգրտվում և լրացվում է հանցագործության քրեաիրավական որակմանը համապատասխան: Սա նշանակում է, որ կատարված իրադարձությունը (ինչպես ամբողջությամբ, այնպես էլ նրա յուրաքանչյուր հանգամանքը առանձին վերցված) յուրաքանչյուր դեպքում պետք է հետազոտել հաշվի առնելով քրեական օրենքով նախատեսված կոնկրետ հանցակազմի հատկանիշները³:

Ավանդաբար ապացուցման առարկան կազմող հանգամանքներից զատ՝ Օրենսգիրքը սահմանել է, որ քրեական վարույթի ընթացքում ապացուցման ենթակա են նաև մեղադրյալի անձը բնութագրող հանգամանքները, ենթադրյալ հանցագործությամբ պատճառված վնասը և գույքային պահանջների հիմնավորումը:

Օրենսգիրքն ապացուցման ենթակա հանգամանքների շարքում ներառել է նաև այն հանգամանքները, որոնք թույլ են տալիս անձին ազատել քրեական պատասխանատվությունից կամ պատժից: Նյութական օրենսդրությամբ նախատեսված՝ քրեական պատասխանատվությունից ազատելու ապացուցված հիմքի առկայությունը, կրացառի նաև անձի նկատմամբ քրեական հետապնդումը⁴:

Օրենսգիրքը վարույթի առանձին տեսակների համար սահմանել է ապացուցման ենթակա հանգամանքների այլ շրջանակ⁵: Օրինակ՝ անչափահասին վերագրվող հանցանքի վերաբերյալ վարույթով ապացուցման ենթակա հանգամանքների շրջանակը ներառում է նաև անչափահասի սոցիալական, ընտանեկան դրությանը, դաստիարակության պայմաններին վերաբերող հանգամանքներ⁶, կամ բժշկական հարկադրանքի վարույթով՝ անձի հոգեկան առողջության վիճակին վերաբերող հանգամանքներ⁷:

Օրենսգրքի 105-րդ հոդվածի համաձայն՝ «1. Յուրաքանչյուր ապացույց ենթակա է գնահատման՝ վերաբերելիության, թույլատրելիության, հավաստիության, իսկ բոլոր ապացույցների համակցությունը՝ հիմնավոր եզրափակիչ դատավարական ակտ կայացնելու համար բավարարության տեսանկյունից:

2. Քննիչը, դատախազը, դատավորը, ղեկավարվելով քրեադատավարական օրենսդրությամբ, ներառյալ ապացուցման չափանիշների մասին վերաբերելի կանոններով, ապացույցները գնահատում են դրանց պատշաճ հետազոտման և վերլուծության վրա հիմնված ներքին համոզմամբ:

3. Ոչ մի տվյալ նախապես հավաստի ապացույցի ուժ չունի: Դատավորը, ինչպես նաև քննիչը և դատախազը չպետք է կանխակալ վերաբերմունք դրսևորեն ապացույցներին, չպետք է դրանց որոշ մասին մյուսների նկատմամբ առավել կամ նվազ նշանակություն տան, քանի դեռ պատշաճ իրավական ընթացակարգի շրջանակներում դրանք չեն գնահատվել»:

Ապացույցներ ձեռք բերելիս էական են քննչական կամ դատավարական գործողությունների կատարման կարգի այն խախտումները, որոնք դրսևորել են քրեական դատավարության մասնակիցների հիմնական իրավունքների և ազատությունների կամ քրեական դատավարության սկզբունքների խախտմամբ:

³ Տե՛ս ՀՀ Վճռաբեկ դատարանի՝ *Սիրակ Սաքանյանի* վերաբերյալ գործով 2011 թվականի դեկտեմբերի 22-ի ԵԷԴ/0058/01/10 որոշումը:

⁴ Տե՛ս Օրենսգրքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետը:

⁵ Տե՛ս Օրենսգրքի 102-րդ հոդվածի 2-րդ մասը:

⁶ Տե՛ս Օրենսգրքի 410-րդ հոդվածի 1-ին մասը:

⁷ Տե՛ս Օրենսգրքի 421-րդ հոդվածի 1-ին մասը:

Ի տարբերություն նախկին օրենսդրության, երբ ապացուցման գործընթացի տարրերից մեկի՝ ապացույցի գնահատման հիմնական կանոնների մի մասը բարձրացվել էր քրեադատավարական սկզբունքի մակարդակի, Օրենսգիրքը ապացույցների գնահատման կանոններն արտացոլել է ապացույցների գնահատման հասկացությունը և ընթացակարգը սահմանող հոդվածում⁸, իսկ պատշաճ ապացուցման սկզբունքի բովանդակությունն են կազմել ապացուցման գործընթացի բոլոր տարրերին բնորոշ առանցքային, ելակետային դրույթները, որոնք նախանշում են ապացուցման էությունն ու դատավարական ձևը: Օրինակ՝ քրեական վարույթի համար նշանակություն ունեցող ցանկացած հանգամանք միայն պատշաճ ապացույցների բավարար համակցությամբ հաստատելու պահանջը⁹ բարձրացվել է սկզբունքի մակարդակի, իսկ ապացույցների՝ մեկը մյուսի նկատմամբ առավելություն չունենալու վերաբերյալ կանոնը¹⁰ ներառվել է ապացույցների գնահատման ընթացակարգը սահմանող հոդվածում:

Ապացույցների գնահատումը, որպես ապացուցման գործընթացի տարր, իրենից ներկայացնում է մտավոր, տրամաբանական գործունեություն, որի արդյունքում եզրահանգում է արվում ապացույցներից յուրաքանչյուրի թույլատրելիության, վերաբերելիության, հավաստիության և ապացուցման առարկայի մեջ մտնող հանգամանքների բացահայտման համար ապացույցների համակցության բավարարության մասին:

Ապացույցների գնահատումը կատարվում է ներքին համոզման հիման վրա: Ներքին համոզումները, որպես ապացույցների գնահատման արդյունք, բնութագրվում է օբյեկտիվ և սուբյեկտիվ գործոնների անխզելի կապով. այն մի կողմից, պետք է բխի հետազոտվող ապացույցների բավարար համակցությունից և հիմնվի դրանց վրա, իսկ մյուս կողմից անկողմնակալ դիտորդի մոտ պետք է առաջացնի այն վստահությունը, որ ապացույցները հետազոտվել են արդարության բոլոր պահանջների պահպանմամբ:

Թեպետ ապացույցների գնահատումը կատարվում է ներքին համոզման հիման վրա, այն չի կարող լինել կամայական: Դրա հիմքում պետք է դրված լինի գործի բոլոր հանգամանքների լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի քննությունը:

Օրենսգրքի 9-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Դատավարական ակտը հիմնավոր է, եթե այն իր բնույթին և առաջացնող հետևանքներին համապատասխան չափով օբյեկտիվորեն համոզիչ է իր հասցեատերերի համար»:

Գնահատման ենթակա են ինչպես ստացված տեղեկությունների բովանդակությունը, այնպես էլ աղբյուրները: Ապացույցների գնահատումը համապատասխան որոշումներում պետք է արտահայտվի պատճառաբանված եզրահանգումների ձևով՝ հիմնավորելով, թե ինչու որոշ ապացույցներ դրվել են որոշման կամ դատական ակտի հիմքում, իսկ մյուսները մերժվել են՝ ճանաչվելով ոչ հավաստի:

Ապացույցների գնահատման քրեադատավարական սկզբունքի բնութագրիչ առանձնահատկությունն այն է, որ օրենքը, որպես կանոն, չի նշում, թե հատկապես որ ապացույցներով պետք է հաստատվի այս կամ այն հանգամանքը, ինչպես նաև չի սահմանում ապացույցի որևէ տեսակի գերակայությունը մյուսի նկատմամբ, հետևաբար դատարանն ազատ է ապացույցների գնահատման գործում:

Ապացուցումը որպես վարույթային գործունեություն նշանակում է, որ ապացույցները գնահատելիս պետք է ղեկավարվել օրենքով: Քրեադատավարական օրենքը քրեական դատա-

⁸ Տե՛ս Օրենսգրքի 105-րդ հոդվածը:

⁹ Տե՛ս Օրենսգրքի 22-րդ հոդվածի 1-ին մասը:

¹⁰ Տե՛ս Օրենսգրքի 105-րդ հոդվածի 3-րդ մասը:

վարության խնդիրների և սկզբունքների միջոցով սահմանում է ապացուցման առարկայի, ապացույցների հատկանիշների, ապացույցների հավաքման, ստուգման կանոնների, դատավարական որոշումներին և դրանց կայացման պայմաններին առաջադրվող պահանջները:

Կոնկրետ հանցանքի կատարման մեջ անձի մեղավորության կամ անմեղության մասին եզրահանգումների հիմնավորվածությունը կախված է նաև բացահայտված փաստերի վերաբերելիության ճիշտ գնահատականից: Հետևաբար, օրենսդիրը քիչ կարևոր չի համարում ապացույցի գնահատականը՝ գործին վերաբերելու կամ չվերաբերելու տեսանկյունից: Վերջին հաշվով, յուրաքանչյուր ապացույցի վերաբերելիության ճիշտ որոշումը պետք է հանգեցնի օրինական և հիմնավոր որոշում կայացնելու համար անհրաժեշտ և բավարար ապացույցների հավաքմանը¹¹:

Ապացույցների ազատ գնահատումն օրենսդիրը հռչակել է որպես քրեադատավարական օրենքի սկզբունք, համաձայն որի՝ ոչ մի ապացույց նախապես հաստատված ապացույցի ուժ չունի:

Համաձայն նշված սկզբունքի՝ ապացույցը գնահատող անձը, մինչև դրանց հետազոտումը, պատշաճ իրավական ընթացակարգի շրջանակներում չպետք է կանխակալ մոտեցում ցուցաբերի ապացույցներին, չպետք է դրանց որոշ մասին մյուսների նկատմամբ առավել կամ նվազ նշանակություն տա: Մինչույն ժամանակ, ներքին համոզմամբ ապացույցների ազատ գնահատումը ենթադրում է, որ ապացույցը գնահատող անձը կաշկանդված չէ տվյալ ապացույցին դատավարության նախորդ փուլերում կամ տվյալ փուլի շրջանակներում այլ անձանց կամ մարմինների տված գնահատականներով:

Նախապես հաստատված ապացույցի ուժ չունենալու օրենսդրական արգելքը բացառում է որևէ ապացույցի նկատմամբ կանխակալ մոտեցում ցուցաբերելը (մյուս ապացույցների նկատմամբ այդ փաստական տվյալի ապացուցողական արժեքին առավելություն վերագրելը կամ այդ արժեքը նվազեցնելը), քանի դեռ այդ ապացույցը քրեադատավարական օրենսգրքով ամրագրված ընթացակարգով օրինականության, մրցակցության և կողմերի իրավահավասարության, մեղադրյալի պաշտպանության իրավունքի ապահովման և այլ սկզբունքների պահպանմամբ չի հետազոտվել պատշաճ իրավական ընթացակարգի շրջանակներում:

Այնուհանդերձ, ապացույցների ազատ գնահատման սկզբունքն ապացույցների նկատմամբ կանխակալ մոտեցման արգելքը պայմանավորում է «մինչև դրանց հետազոտումը» բառակապակցությամբ, ուստի նշված նորմը չի կարող մեկնաբանվել այնպես, որ օրենսդիրն ապացույցների հետազոտումից հետո նույնպես արգելում է ապացույցների գնահատման արդյունքում դրանցից մի մասին մյուսների նկատմամբ առավելություն կամ նվազ կարևորություն վերագրելու հնարավորությունը, հակառակ դեպքում, հակասական ապացույցների առկայության պարագայում հնարավոր չէ հիմնավորված հետևության հանգել անձի մեղավորության կամ անմեղության և այլ հարցերի վերաբերյալ:

Հարկ է նշել նաև, որ անմեղության կանխավարկածն ամրագրող նորմերը, ինչպես նաև նախադեպային իրավունքը սահմանում են ոչ միայն այդ սկզբունքի բուն էությունը, այլև դրա հաղթահարման, նույնն է, թե անձի մեղավորության հաստատման համար անհրաժեշտ դատավարական չափորոշիչները: Այս կապակցությամբ ՀՀ Վճռաբեկ դատարանը Մ. Հակոբյանի գործով որոշման մեջ շեշտել է. «(...) ապացույցների կամայական գնահատման արգելքը դատարաններին պարտավորեցնում է 2003 թվականի ապրիլի 18-ի ՀՀ քրեական դատավարության

¹¹ Տե՛ս ՀՀ Վճռաբեկ դատարանի՝ Մակար Հովհաննիսյանի և Աշոտ Հովհաննիսյանի վերաբերյալ գործով 2010 թվականի փետրվարի 12-ի թիվ ԵՔՐԴ/0632/01/08 որոշումը:

րության օրենսգրքի 107-րդ հոդվածում թվարկված՝ ապացուցման ենթակա հանգամանքների, այդ թվում՝ կոնկրետ հանցանքի հատկանիշների և այդ հանցանքի մեջ անձի մեղավորության վերաբերյալ իր հետևությունները հիմնավորել վերաբերելի, փոխկապակցված, հավաստի ապացույցներով և ոչ թե ենթադրություններով: Այլ խոսքով՝ հանցանքի մեջ մեղադրվող յուրաքանչյուր անձի վերաբերյալ՝ ապացուցման ենթակա յուրաքանչյուր հանգամանքի կապակցությամբ դատարանի հետևությունը պետք է հիմնված լինի ոչ թե գնահատողական դատողությունների, կանխատեսումների կամ կարծիքների, այլ կոնկրետ գործով օրենքով սահմանված կարգով ձեռք բերված փաստական տվյալների վրա: Այս կապակցությամբ Վճռաբեկ դատարանն արձանագրում է նաև, որ մեղսագրվող հանցագործության և դրա հատկանիշների ապացուցման բեռը կրում է մեղադրանքի կողմը, իսկ չփարատված կասկածները պետք է մեկնաբանվեն իրավաբանական մեղադրյալի: Դրանից հետևում է, որ մեղադրանքի կողմը կրում է անձի մեղքը հաստատելու համար բավարար ապացույցներ ներկայացնելու պարտականությունը (...)¹²:

Ներքին համոզմունքի՝ որպես ապացույցների գնահատման արդյունքի օբյեկտիվ հիմքը քրեական գործով ձեռք բերված, բազմակողմանի և օբյեկտիվ հետազոտված ապացույցների բավարար համակցությունն է: Այս առումով անհրաժեշտ է վերլուծել ապացույցների թույլատրելիության, վերաբերելիության և արժանահավատության հատկանիշները, որոնց տեսանկյունից ապացույցները ենթակա են գնահատման:

Ապացույցների թույլատրելիության հատկանիշը վերաբերում է դրանց ձևական կողմին: Դրա էությունը կազմում է ապացույցները ձեռք բերելիս օրենքով նախատեսված դատավարական պահանջների պահպանվածությունը և ենթադրում է.

- աղբյուրի օրինականություն՝ ապացույցը պետք է ձեռք բերվի միայն օրենքով սահմանված աղբյուրներից,

- ձեռքբերման միջոցների օրինականություն՝ պետք է պահպանված լինեն ապացույցների ձեռքբերմանն ուղղված գործողություններ կատարելուն օրենքով առաջադրված պահանջները,

- դատավարական ձևակերպում՝ ապացույցը, դրա ձեռքբերման գործընթացը պետք է օրենքով սահմանված կարգով ենթարկվեն դատավարական ձևակերպման,

- լիազորված սուբյեկտ՝ այն պետք է ստացված լինի ապացույց ձեռք բերելու լիազորությամբ օժտված սուբյեկտի կողմից:

Ապացույցն անթույլատրելի ճանաչելու հիմքերը հստակ սահմանված են Օրենսգրքի 320-րդ հոդվածով:

Վերաբերելիությունն ապացույցի կարողությունն է իր բովանդակությամբ ծառայելու ապացուցման առարկայի մեջ մտնող հանգամանքները, գործի քննության և լուծման համար նշանակություն ունեցող այլ տվյալները բացահայտելուն և հաստատելուն: Այլ խոսքով՝ ապացույցի վերաբերելիության հատկանիշն արտացոլում է ապացույցի և գործի քննության ու լուծման համար նշանակություն ունեցող հանգամանքների միջև կապը: Ապացույցը կհամարվի վերաբերելի, եթե տեղեկություններ պարունակի գործի համար որևէ նշանակություն ունեցող փաստի մասին:

Ապացույցի արժանահավատության հատկանիշը նույնպես վերաբերում է ապացույցի բովանդակային գնահատմանը: Արժանահավատ է այն ապացույցը, որի ճշմարտացիությունը

¹² Տե՛ս ՀՀ Վճռաբեկ դատարանի՝ Մարգար Հակոբյանի վերաբերյալ 2013 թվականի մայիսի 8-ի թիվ ԵԿԴ/0168/01/12 որոշման 13-րդ կետը:

կասկած չի հարուցում: ՀՀ Վճռաբեկ դատարանը փաստել է, որ ապացույցն արժանահավատության տեսանկյունից գնահատելիս դատարանը պետք է հիմք ընդունի հետևյալ հանգամանքները.

ա) ապացույցի աղբյուրի հատկանիշները (օրինակ՝ փորձագետի ձեռնհասությունը, ցուցմունք տվող անձի շահագրգռվածությունը, որոշ դեպքերում հոգեբանական և ֆիզիոլոգիական հատկանիշները, վիճակը, ինչպես նաև անձին վերաբերող այլ հատկանիշներ, որոնք կարող են ազդեցություն ունենալ այդ անձի կողմից գործի համար նշանակություն ունեցող հանգամանքներն ընկալելու, մտապահելու, վերարտադրելու գործընթացի վրա),

բ) ապացույցի ձևավորման հանգամանքները (օրինակ՝ վկայի կողմից կոնկրետ հանգամանքն ընկալելու պայմանները, պաշտպանի, ներկայացուցչի ներկայությունը և այլն),

գ) ապացուցողական տեղեկությունը ձեռք բերելու միջոցը,

դ) ապացույցի բովանդակությունը կազմող տեղեկությունը հաստատող կամ հերքող հանգամանքների առկայությունը,

ե) նույն տեղեկության ստացումն այլ աղբյուրից:

Յուրաքանչյուր ապացույց արժանահավատության տեսանկյունից պետք է գնահատվի ապացույցների համակցության մեջ՝ բազմակողմանի և մանրամասն գնահատելով փաստական տվյալների ստացման աղբյուրները և ապացույցի ձևավորման ամբողջ ընթացքը: Ապացույցի արժանահավատության վերաբերյալ վերջնական որոշում կարող է կայացվել դրա բովանդակությունն այլ աղբյուրներից ստացված տեղեկությունների հետ համադրելու արդյունքում: Որոշակի փաստի վերաբերյալ այս կամ այն աղբյուրից ստացված տեղեկությունների արժանահավատությունը գնահատելու համար անհրաժեշտ է վերլուծել ստացված տեղեկությունների բովանդակությունը, համադրել դրանք այլ ապացույցների հետ, պարզել դրանց համապատասխանությունը կամ հակասությունը, հակասության դեպքում՝ դրա պատճառները¹³:

Ապացույցի արժանահավատության վերաբերյալ դատարանի եզրահանգումները պետք է հիմնվեն գործում առկա փաստական տվյալների վրա:

ՀՀ Վճռաբեկ դատարանն իր առանձին նախադեպային որոշումներով անդրադառնալով ապացույցների և ապացուցման գործընթացի հետ կապված մի շարք առանցքային խնդիրների, *Ա. Ավագյանի* և *Վ. Սահակյանի* վերաբերյալ գործով որոշմամբ ներպետական դատական պրակտիկայում առաջին անգամ ներդրել է «**հիմնավոր կասկածից վեր**» («beyond reasonable doubt») ապացուցողական չափանիշը՝ որպես քրեական դատավարությունում մեղքի հարցը լուծելիս ապացույցների բավարարության շեմ՝ կանխելու համար գործնականում անձի մեղավորության ապացուցման շեմի նվազման միտումները:

Կարող ենք արձանագրել, որ ՀՀ Վճռաբեկ դատարանի նախադեպային նշանակություն ունեցող իրավական դիրքորոշումները էապես նպաստել են արդարացման դատական ակտերի կայացմանը և պարբերաբար օրենսդիր մարմնի կողմից հաշվի են առնում օրենսդրությունը կատարելագործելիս:

Ձոն Հայրապետյանը նշում է, որ Վճռաբեկ դատարանն օգտագործել է անգլո-սաքսոնական իրավունքի, ինչպես նաև ՄԻԵԴ-ի նախադեպային պրակտիկայի կողմից օգտագործվող մեղքի ապացուցման չափանիշ հանդիսացող հիմնավոր կասկածից վեր չափանիշը, որը բացառում է օբյեկտիվ դիտորդի մոտ անձի մեղավորության վերաբերյալ հիմնավոր կասկածի առկայությունը¹⁴:

¹³ Տե՛ս ՀՀ Վճռաբեկ դատարանի՝ *Արարատ Ավագյանի* և *Վահան Սահակյանի* գործի վերաբերյալ 2014 թվականի հոկտեմբերի 31-ի թիվ ԵԿԴ/0252/01/13 որոշումը:

¹⁴ *Հայրապետյան Զ.Հ.*, Դատավճիռ կայացնելու տեսական և գործնական հիմնախնդիրները, Երևան, «Տիգրան Մեծ», 2021, էջ 143:

Համամիտ ենք նաև Ա.Ղամբարյանի այն կարծիքի հետ, որ ՀՀ Վճռաբեկ դատարանի ձևավորված դատական քաղաքականությունը մի շարք ոլորտներում առաջ է բերել արմատական փոփոխություններ, ազդել է գործադիր իշխանության մարմինների գործունեության բովանդակության և առաջնահերթությունների վրա:¹⁵

ՀՀ Վճռաբեկ դատարանն առանձնացրել է «ապացույցների բավարարությունը» որոշելու հետևյալ չափանիշները.

- 1) Անմեղության կանխավարկածը,
- 2) Վարույթն իրականացնող մարմինների ներքին համոզմունքը,
- 3) Դատավարական որոշումների հիմնավորվածությունը և պատճառաբանվածությունը:

Վճռաբեկ դատարանը, զարգացնելով նախկինում արտահայտված իրավական դիրքորոշումները, մասնավորապես արձանագրել է, որ ներքին համոզմունքը սուբյեկտիվ և օբյեկտիվ կատեգորիա է: Այն ապացույցների գնահատումն իրականացնող սուբյեկտի գիտակցված և ողջամիտ համոզվածությունն է իր իսկ կողմից կայացված որոշման հիմնավորվածության մեջ (սուբյեկտիվ բնույթ): Այդպիսի համոզվածությունը պետք է ձևավորված լինի գործի բոլոր հանգամանքների լրիվ, օբյեկտիվ և բազմակողման քննության արդյունքում և հիմնվի թույլատրելի, վերաբերելի և արժանահավատ ապացույցների բավարար համակցությամբ հաստատված փաստերի վրա, որոնք անկողմնակալ դիտորդի մոտ ողջամտորեն կձևավորվեն նույն համոզվածությունը (օբյեկտիվ բնույթ):

Ելնելով այն հանգամանքից, որ ներքին համոզմունքն ունի օբյեկտիվ հիմքեր, անհրաժեշտ է այն տարբերակել ինտուիցիայից, ենթադրություններից և այլ անհաշվետու զգացմունքներից: Ի տարբերություն դրանց՝ ներքին համոզմունքը չի կարող ձևավորվել առանց օբյեկտիվ հիմքի և հիմնվել անթույլատրելի, ոչ վերաբերելի, անարժանահավատ ապացույցների վրա: Այլ խոսքով՝ ներքին համոզմունքը հիմնվում է ողջամիտ կարծիքի, գիտելիքի վրա, այլ ոչ թե ենթադրությունների, երևակայության, համակրանքի, հակակրանքի կամ կանխակալ կարծիքի վրա¹⁶:

Եթե ապացույցն անթույլատրելի ճանաչելու հիմքերը հստակ սահմանված են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 97-րդ հոդվածում, ապա արժանահավատության և վերաբերելիության հատկանիշները նման հստակ օրենսդրական կարգավորում չեն ստացել:

Վերաբերելիությունն ապացույցի կարողությունն է իր բովանդակությամբ ծառայելու ապացուցման առարկայի մեջ մտնող հանգամանքները, գործի քննության և լուծման համար նշանակություն ունեցող այլ տվյալները բացահայտելուն և հաստատելուն: Այլ խոսքով՝ ապացույցի վերաբերելիության հատկանիշն արտացոլում է ապացույցի և գործի քննության ու լուծման համար նշանակություն ունեցող հանգամանքների միջև կապը: Ապացույցը կհամարվի վերաբերելի, եթե տեղեկություններ պարունակի գործի համար որևէ նշանակություն ունեցող փաստի մասին:

Ապացույցի արժանահավատության հատկանիշը նույնպես վերաբերում է ապացույցի բովանդակային գնահատմանը: Արժանահավատ է այն ապացույցը, որի ճշմարտացիությունը կասկած չի հարուցում:

Որոշակի փաստի վերաբերյալ այս կամ այն աղբյուրից ստացված տեղեկությունների արժանահավատությունը գնահատելու համար՝ անհրաժեշտ է վերլուծել ստացված տեղեկու-

¹⁵ Ղամբարյան Ա.Ս., Դատական քաղաքականությունը Հայաստանի Հանրապետությունում (համեմատական և մեթոդաբանական խնդիրները), իրավաբան. գիտ. դոկտորի, ատեն. սեղմագիր, Երևան, 2012, էջ 13:

¹⁶ ՀՀ Վճռաբեկ դատարանի որոշումների գիտագործնական մեկնաբանություններ, Հատոր 3, Երևան, 2016, էջ 315:

թյունների բովանդակությունը, համադրել դրանք այլ ապացույցների հետ, պարզել դրանց համապատասխանությունը կամ հակասությունը, հակասության դեպքում՝ դրա պատճառները: Ապացույցի արժանահավատության վերաբերյալ դատարանի եզրահանգումները պետք է հիմնվեն գործում առկա փաստական տվյալների վրա:

Ապացույցների գնահատման արդյունքում ձևավորված ներքին համոզմունքն իրավական նշանակություն է ստանում և օբյեկտիվացվում ապացույցների բավարարությունը որոշելու մյուս՝ դատավարական որոշումների հիմնավորման և պատճառաբանման չափանիշի միջոցով:

Ապացույցների կամայական գնահատման արգելքը ենթադրում է ապացույցները բարեխիղճ վերլուծության ենթարկելու պարտականություն:

Օրենսգրքում (106-րդ հոդված) առաջին անգամ ամրագրում ստացավ փաստերի իրավական կանխավարկածը: Քրեադատավարական իմաստով կանխավարկածը իրավաբանական փաստի առկայության կամ բացակայության մասին նորմատիվ բնույթի մտահանգում է, որն ունի հավանականության բարձր աստիճան և ենթակա չէ ապացուցման: Օրենսգրքում իրավական կանխավարկածը ձևակերպված է որպես ապացուցման պարտականությունից ազատելու եղանակ, որի արդյունքում տեղի է ունենում նաև ապացուցման բեռի բաշխում: Օրենսգրքով սահմանված հանգամանքները համարվում են հաստատված, եթե քրեական վարույթի ընթացքում հակառակը չի հաստատվում, իսկ հակառակն ապացուցելու պարտականությունը կրում է սահմանված փաստը վիճարկող կողմը:

Ամեն դեպքում, հաշվի առնելով, որ վարույթի մասնավոր մասնակիցներն ի տարբերություն քրեական հետապնդման մարմնի օժտված են ապացուցման գործընթացին մասնակցելու սահմանափակ հնարավորություններով, վարույթն իրականացնող մարմինը պետք է այս ինստիտուտը կիրառի ծայրահեղ զգուշավորությամբ՝ պաշտպանության կողմին ընձեռելով հաստատված կանխավարկածը հերքելու բոլոր հնարավորությունները և ստուգելու առաջ քաշված փաստարկները¹⁷:

Թեև Օրենսգրքը (106-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերը) վերը նշված հանգամանքներն ի սկզբանե ապացուցված է համարում, սակայն վարույթի մասնակիցներին չի զրկում հակառակն ապացուցելու հնարավորությունից:

Այսպիսով, կարող ենք արձանագրել, որ դատարանները եզրափակիչ դատական ակտերում պարտավոր են ամրագրել և թույլատրելիության, վերաբերելիության և արժանահավատության տեսանկյունից գնահատման ենթարկել այն ապացույցները, որոնց վրա հիմնված են դատարանների հետևությունները, ինչպես նաև նշել այս կամ այն ապացույցն անարժանահավատ համարելու փաստարկները: Հակառակ դեպքում ապացույցների գնահատումը, դրա արդյունքում դատարանների համապատասխան ներքին համոզմունքի ձևավորումը կկրեն սուբյեկտիվ բնույթ, կհանգեցնեն կամայականության և անձի արդար դատաքննության իրավունքի խախտման՝ սահմանափակելով նաև դատական ակտի օրինականությունը և հիմնավորվածությունը ստուգելու վերադաս դատարանների հնարավորությունները:

Միջազգային իրավական և ներպետական օրենսդրությամբ հռչակված անմեղության կանխավարկածի սկզբունքից հետևում է, որ անձի մեղքն ապացուցված լինելու վերաբերյալ ամենաբարձր ստանդարտներն իրենց ամրագրումն են ստանում օրինական ուժի մեջ մտած դատավճռում¹⁸: (Չապացուցված մեղավորությունը հավասարազոր է ապացուցված անմեղությանը):

¹⁷ Տես Հ. Ղուկասյան, Դ. Մելիքյան, Ա.Ն իկողոսյան, Նույն աշխ., էջ 180:

¹⁸ *Аветисян С. С.*, Стандарты доказанности обвинения в свете Европейской конвенции о защите прав и основных свобод человека/ В книге: Проблемы разграничения преступного от непроступного поведения, Ереван: Изд- во РАУ, 2011, с. 659.

Եզրակացություն

1. Եզրակալիչ դատական ակտ կայացնելիս ապացույցների պատշաճ գնահատումն ունի հիմնարար նշանակություն, ուստի այն դեպքերում, երբ գործով ձեռք բերված փաստական հանգամանքներն իրենց համակցությամբ չեն բավարարում «Մարդու իրավունքների եվրոպական դատարանի» և ՀՀ Վճռաբեկ դատարանի կողմից սահմանված մեղադրանքի ապացուցվածության վերաբերյալ ստանդարտներին, դատարանը պարտավոր է կայացնել արդարացման դատավճիռ:

2. Ապացույցների գնահատումը՝ որպես ապացուցման գործընթացի տարր, մտավոր, տրամաբանական գործունեություն է, որի արդյունքում դատարանի կողմից եզրահանգում է արվում ապացույցներից յուրաքանչյուրի թույլատրելիության, վերաբերելիության, հավաստիության և ապացուցման առարկայի մեջ մտնող հանգամանքների բացահայտման համար ապացույցների համակցության բավարարության մասին: Վերջնական դատական ակտերում դատարանները պարտավոր են առանձին-առանձին անդրադառնալու քրեական վարույթում առկա, և հիմնական դատախոսների ընթացքում հետազոտված ապացույցներին, դրանց տալով առանձին-առանձին գնահատականներ, ինչպես նաև հետազոտված ապացույցների համակարգային վերլուծության և իրենց ամբողջականության տեսանկյունի հիման վրա հիմնավորված համարել մեղադրյալին ներկայացված մեղադրանքը կամ վերջինիս ճանաչել անպարտ:

Վերջնական դատական ակտերի պատճառաբանական մասում պետք է մանրամասն շարադրվի այս կամ այն ապացույցի արժանահավատությունն ու վերաբերելիությունը, իսկ տվյալ պատճառաբանության բացակայությամբ քրեական արդարադատության տեսանկյունից կարող ենք կանգնել մեկ այլ՝ այն է չհիմնավորված դատական ակտի կայացման խնդրին:

3. Արդարադատությունը, լինելով խստիվ սահմանված դատավարական ձևով իրականացվող գործունեություն, հիմնվում է բացառապես այն փաստերի վրա, որոնք ապացուցվել են դատավարության ընթացքում պատշաճ հետազոտված ապացույցների միջոցով: Միևնույն ժամանակ, անհրաժեշտ է սահմանազատել գործի լուծման համար նշանակություն ունեցող փաստական հանգամանքներն այն հանգամանքներից, որոնք ունեն զուտ ընթացակարգային նշանակություն և գործի՝ ըստ էության լուծման վրա չեն ազդում, սակայն գտնում ենք, որ «ապացուցման սահմաններ» եզրույթի կիրառումը տվյալ դեպքում այնքան էլ արդարացված չէ:

Դատարանը պետք է նաև հաշվի առնի, որ այս կամ այն ապացույցով հաստատվող միևնույն փաստը մի դեպքում կարող է վերաբերել գործի էությանը, իսկ մյուս դեպքում՝ ոչ: Կարծում ենք, այն հանգամանքը, որ օրենսդիրն օրենքով չի սահմանել ապացույցների վերաբերելիության հարցը, այն բացառապես թողնելով ներքին համոզմունքի հիման վրա ձևավորված եզրահանգմանը՝ օրենքի բաց է և լրացման կարիք ունի: Ապացույցների գնահատումը ենթադրում է ապացույցների տրամաբանական և իրավաբանական որակում՝ դրանց վերաբերելիության, թույլատրելիության, արժանահավատության և բավարարության տեսանկյունից:

Ամփոփագիր: Ապացուցումը քրեական դատավարության գիտության և օրենսդրության հիմնարար ինստիտուտներից մեկն է: Ապացուցման գործընթացը՝ որպես իրավապահ մարմինների ճանաչողական և ստեղծագործական գործունեության բարդ տեսակ, բաղկացած է ապացույցների հավաքումից, ամրագրումից, ստուգումից և գնահատումից՝ քրեական գործով հաստատման ենթակա հանգամանքների հաստատման նպատակով:

Ապացուցման ինստիտուտը և ընդհանրապես ապացուցողական իրավունքը իրենց հետագա զարգացումը և

կատարելագործումն են ստացել ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքով (ընդունվել է 30.06.2021 թ., ուժի մեջ է մտել 01.07.2022 թ.): Հոդվածում հեղինակը անդրադառնում է եզրափակիչ դատական ակտ կայացնելիս ապացույցների գնահատման ընթացիկ խնդիրներին:

Ապացույցների գնահատումը՝ որպես ապացուցման գործընթացի տարր, մտավոր, տրամաբանական գործունեություն է, որի արդյունքում դատարանի կողմից եզրահանգում է արվում ապացույցներից յուրաքանչյուրի թույլատրելիության, վերաբերելիության, հավաստիության և ապացուցման առարկայի մեջ մտնող հանգամանքների բացահայտման համար ապացույցների համակցության բավարարության մասին: Վերջնական դատական ակտերում դատարանները պարտավոր են առանձին-առանձին անդրադառնալու քրեական վարույթում առկա, և հիմնական դատախոսների ընթացքում հետազոտված ապացույցներին, դրանց տալով առանձին-առանձին գնահատականներ, ինչպես նաև հետազոտված ապացույցների համակարգային վերլուծության և իրենց ամբողջականության տեսանկյունի հիման վրա հիմնավորված համարել մեղադրյալին ներկայացված մեղադրանքը, կամ վերջինիս ճանաչել անպարտ:

Դատարանները եզրափակիչ դատական ակտ կայացնելիս հիմնվում են բացառապես այն փաստերի վրա, որոնք ապացուցվել են դատավարության ընթացքում պատշաճ հետազոտված ապացույցների միջոցով: Միևնույն ժամանակ, անհրաժեշտ է սահմանազատել գործի լուծման համար նշանակություն ունեցող փաստական հանգամանքներն այն հանգամանքներից, որոնք ունեն զուտ ընթացակարգային նշանակություն և գործի՝ ըստ էության լուծման վրա չեն ազդում, սակայն գտնում ենք, որ «ապացուցման սահմաններ» եզրույթի կիրառումը տվյալ դեպքում այնքան էլ արդարացված չէ:

Դատարանները եզրափակիչ դատական ակտերում պարտավոր են ամրագրել և թույլատրելիության, վերաբերելիության և արժանահավատության տեսանկյունից գնահատման ենթարկել այն ապացույցները, որոնց վրա հիմնված են դատարանների հետևությունները, ինչպես նաև նշել այս կամ այն ապացույցն անարժանահավատ համարելու փաստարկները: Հակառակ դեպքում ապացույցների գնահատումը, դրա արդյունքում դատարանների համապատասխան ներքին համոզմունքի ձևավորումը կկրեն սուբյեկտիվ բնույթ, կհանգեցնեն կամայականության և անձի արդար դատաքննության իրավունքի խախտման՝ սահմանափակելով նաև դատական ակտի օրինակաչությունը և հիմնավորվածությունը ստուգելու վերադաս դատարանների հնարավորությունները:

Annotation. Proving is one of the fundamental institutions of the science of criminal procedure and criminal procedural legislation. The process of proving as a complex type of cognitive and creative activity of law enforcement agencies consists of collecting, securing, checking and evaluating evidence in order to establish the circumstances to be established in a criminal case.

The institution of evidence and the law of evidence in general received further development and improvement in the new Criminal Procedure Code of the Republic of Armenia (adopted on June 30, 2021, came into force on July 1, 2022). In the article, the author examines current issues of assessing evidence in the final judicial act.

Evaluation of evidence, as an element of the process of proof, is a mental, logical activity, as a result of which the court makes a conclusion about the admissibility, relevance, reliability of each of the pieces of evidence, and the sufficiency of the combination of evidence to reveal the circumstances entering into the subject of proof.

In the final judicial acts, the courts are obliged to refer separately to the evidence available in the criminal proceedings and examined during the main proceedings, giving them separate evaluations, and based on the systematic analysis of the examined evidence and the perspective of their integrity, to consider the accusation presented to the accused justified, or to recognize the latter as not guilty. .

Courts in their final judicial acts are obliged to fix and evaluate the evidence on which the court's conclusions are based in terms of admissibility, relevancy and credibility, as well as specify the arguments for considering this or that evidence unreliable. Otherwise, the evaluation of the evidence, as a result of which the formation of the relevant internal conviction of the courts will be subjective in nature, will lead to arbitrariness and the violation of the right of a person to a fair trial, limiting the possibilities of the superior courts to check the legality and justification of the judicial act.

Аннотация. Доказывание является одним из фундаментальных институтов науки уголовного процесса и уголовно-процессуального законодательства. Процесс доказывания как сложный вид познавательной и творческой деятельности правоприменительных органов состоит в собирании, закреплении, проверке и оценке доказательств в целях установления обстоятельств, подлежащих установлению по уголовному делу.

Институт доказывания и в целом доказательственное право получили дальнейшее развитие и совершенствование в новом Уголовно-процессуальном кодексе Республики Армения (принят 30.06.2021 г., вступил в силу с 01.07.2022 г.). В статье автор рассматривает актуальные вопросы оценки доказательств в итоговом судебном акте.

Оценка доказательств как элемент процесса доказывания представляет собой умственную, логическую деятельность, в результате которой суд делает вывод о допустимости, относимости, достоверности каждого из доказательств, а также достаточности совокупности доказательств для выявления обстоятельств, входящих в предмет доказывания. В окончательных судебных актах суды обязаны отдельно сослаться на имеющиеся в уголовном процессе и исследованные в ходе основного производства доказательства, давая им отдельные оценки и на основе систематического анализа исследованных доказательств, и с точки зрения их целостности, считать обвинение, предъявленное обвиняемому, обоснованным либо признать последнего невиновным.

Суды, вынося окончательное решение, опираются исключительно на факты, доказанные в ходе судебного разбирательства надлежащим образом исследованными доказательствами. При этом необходимо разграничить фактические обстоятельства, имеющие значение для разрешения дела, от тех, которые имеют чисто процессуальное значение и не влияют на разрешение дела. Однако мы считаем, что в данном случае недопустимо использование термина «пределы доказывания».

Суды в своих окончательных судебных актах обязаны фиксировать и оценивать доказательства, на которых основаны выводы суда, с точки зрения допустимости, относимости и достоверности, а также указывать доводы в пользу признания того или иного доказательства недостоверным. В противном случае оценка доказательств, в результате которой формирование соответствующего внутреннего убеждения судов будет носить субъективный характер, приведет к произволу и нарушению права человека на справедливое судебное разбирательство, ограничивая возможности вышестоящих судов для проверки законности и обоснованности судебного акта.

Բանալի բառեր - փաստացուցում, փաստացյցներ, վերաբերելի փաստացյց, փաստացյցի արժանահավաստություն, փաստական փյալներ, փաստացյցների գնահատում:

Keywords: *prove, proofs, relevant evidence, credibility of evidence, factual data, evaluation of evidence.*

Ключевые слова: *доказывание, доказательства, относимые доказательства, достоверность доказательств, фактические данные, оценка доказательств.*

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. ՀՀ քրեական դատավարության օրենսգիրք՝ ընդունված 30.06.2021 թ., ուժի մեջ է մտել 01.07.2022 թ.:
2. ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի հայեցակարգային լուծումների նորարական մոտեցումների և հիմնական ինստիտուտների մեկնաբանման գործնական ուղեցույց / Հեղինակներ՝ Հ. Ղուկասյան, Դ. Մելիքյան, Ա. Նիկողոսյան, Եվրոպայի խորհուրդ, հուլիս, 2022, 613 էջ:
3. ՀՀ Վճռաբեկ դատարանի՝ Մակար Հովհաննիսյանի և Աշոտ Հովհաննիսյանի վերաբերյալ գործով 2010 թվականի փետրվարի 12-ի թիվ ԵՔԴ/0632/01/08 որոշումը:
4. ՀՀ Վճռաբեկ դատարանի՝ Սիրակ Սաքանյանի վերաբերյալ գործով 2011 թվականի դեկտեմբերի 22-ի ԵԷԴ/0058/01/10 որոշումը:
5. ՀՀ Վճռաբեկ դատարանի՝ Մարգար Հակոբյանի վերաբերյալ 2013 թվականի մայիսի 8-ի թիվ ԵԿԴ/0168/01/12 որոշումը:

6. ՀՀ Վճռաբեկ դատարանի՝ *Արարատ Ավագյանի* և *Վահան Սահակյանի* գործի վերաբերյալ 2014 թվականի հոկտեմբերի 31-ի թիվ ԵԿԴ/0252/01/13 որոշում:

7. ՀՀ Վճռաբեկ դատարանի որոշումների գիտագործնական մեկնաբանություններ, Հատոր 3, Երևան, 2016, 488 էջ:

8. *Նամբարյան Ա. Ս.*, Դատական քաղաքականությունը Հայաստանի Հանրապետությունում (համեմատական և մեթոդաբանական խնդիրները), իրավաբան. գիտ. դոկտորի, ատեն. սեղմագիր, Երևան, 2012:

9. *Հայրապետյան Զ. Հ.*, Դատավճիռ կայացնելու տեսական և գործնական հիմնախնդիրները, Երևան, «Տիգրան Մեծ», 2021, 280 էջ:

10. *Аветисян С. С.*, Стандарты доказанности обвинения в свете Европейской конвенции о защите прав и основных свобод человека / В книге: Проблемы разграничения преступного от не преступного поведения, - Ереван; Изд- во РАУ, 2011. – 814 с.

Ավագյան Ի. - «Մասնավոր իրավական կենտրոն» փաստաբանական գրասենյակի հիմնադիր-տնօրեն, փաստաբան, «Գլաձոր» համալսարանի հայցորդ, էլիասցե՝ ingaavagyan@gmail.com:

Ներկայացվել է խմբագրություն 15.03.2024 թ., տրվել է գրախոսության 18.03.2024թ., երաշխավորվել է ի.գ.դ. պրոֆեսոր, ՀՀ Վճռաբեկ դատարանի քրեական պալատի դատավոր, Հայ-Ռուսական համալսարանի պրոֆեսոր Ս. Ավետիսյանի կողմից, ընդունվել է տպագրության 15.04.2024 թ.:

ԿՐԻՄԻՆԱԼԻՍՏԻԿԱ/CRIMINALISTICS/КРИМИНАЛИСТИКА

<https://doi.org/10.59546/18290744-2024.1-3-129>

ՏՍՐԵՆ ԲԱԳԻՆՅԱՆ

*Соискатель кафедры уголовного
судопроизводства и криминалистики ЕГУ*

ՍՈՒՐԵՆ ԲԱԴԻՆՅԱՆ

*ԵՊՀ քրեական դատաբանության և կրիմինալիստիկայի
ամբիոնի հայցորդ*

SUREN BAGHINYAN

*PhD student of the Criminal Procedure and Criminalistics
Department of Yerevan State University*

ТИПИЧНЫЕ СЛЕДСТВЕННЫЕ СИТУАЦИИ ПРИ РАССЛЕДОВАНИИ
ГОСУДАРСТВЕННОЙ ИЗМЕНЫ

ՊԵՏԱԿԱՆ ԴՎԱՃԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԵՐՈՎ ՏԻՊԱՅԻՆ ՔՆՆՉԱԿԱՆ
ԻՐԱԴԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

THE MAIN CIRCUMSTANCES TO BE DISCOVERED DURING THE
INVESTIGATION OF THE HIGH TREASON CRIMINAL CASES

Введение

Рассматривая данную проблему, следует остановиться на краткой характеристике понятия «типичная следственная ситуация» через призму криминалистической науки. Термин «следственная ситуация» имеет значительную историю становления и сейчас является одним из наиболее глубоко исследованных, как в теоретическом, так и в практическом аспектах.

Среди ученых продолжают дискуссии по принятию этой категории. Один из подходов обусловлен тем, что выясняется, к какому разделу криминалистической науки следует относить это понятие. Одна группа ученых считает, что учение о следственных ситуациях тесно связано с исследованием проблем криминалистической методики и рассматривает ее как конструктивный элемент отдельных методик расследования. Так, Т.А. Гончарова считает, что следственная ситуация оказывает значительно более непосредственное влияние на методику расследования преступления, чем криминалистическая характеристика. Этот факт следует учитывать в процессе планирования проведения расследования [1, с. 32].

Н.И. Крюкова, Н.В. Косолапова уверены, что следственная ситуация, как и криминалистическая характеристика, является одним из определяющих и главных инструментов следователя,

что позволяет максимально увеличить эффективность расследования преступлений, а владение знаниями о типичных следственных ситуациях позволяет следователю выявить круг приоритетных задач, минимизировать постороннее влияние или избежать нецелевой затраты времени и сил. На основе сравнения типичной следственной ситуации и ситуации, которая произошла при расследовании конкретного преступления, используя взаимосвязи между элементами криминалистической характеристики этой группы преступлений, следователь сможет оптимально спланировать проведение процесса расследования и эффективнее решить задачу установления лица, совершившего преступление [2, с. 46].

Другие исследователи уверены, что следственная ситуация является категорией криминалистической тактики. К примеру, И.В. Александров считает, что следственная ситуация относится к кругу понятий криминалистической тактики и в такой роли реализуется при использовании криминалистической методики. Это утверждение он объясняет тем, что именно следственная ситуация обуславливает тактику конкретных следственных действий [3, с. 39].

Д.Н. Хромых предлагает под понятием «типичная следственная ситуация» понимать совокупность условий, данных и других факторов, прямо или косвенно влияющих на лицо, наделенное правовым статусом, в определенный момент расследования им отдельного вида преступления и диктующих четкую последовательность интеллектуальной деятельности как закономерного и свойственного каждому умственного процесса (иногда на подсознательном уровне), находящего свое отражение в принятии соответствующих процессуально обоснованных решений [4, с. 46].

Н.А. Панасенко «типичными следственными ситуациями» считает те ситуации, с которыми сталкивается следователь на начальном или следующем этапе расследования преступления в зависимости от полноты имеющихся данных. Типичные следственные ситуации существенно отличаются от того, при каких условиях совершено преступление – очевидности или неочевидности. Выделение типичных следственных ситуаций возможно при условии, если в основе типизации заложено отношение подозреваемого к сообщению о подозрении [5, с. 77].

А.А. Топорков утверждает, что типичная следственная ситуация может быть определена как сформулированная на основании анализа результатов практического расследования определенной категории преступлений, отвлеченная искусственная модель, отражающая состояние имеющейся у следователя информации об обстоятельствах преступления и обстоятельствах, сложившихся на определенном этапе расследования [6].

Следует согласиться с его мнением, что типизация следственных ситуаций возможна при условии выделения информации об отдельных наиболее значимых и часто встречающихся элементах. Ученый подразделяет их на две группы. Группа первая объединяет сведения об отдельных обстоятельствах преступной деятельности. Группа вторая – это совокупность информации о важнейших обстоятельствах расследования (состояние доказательной базы, линии поведения подозреваемых и других участников расследования, посторонних лиц, пытающихся вмешаться в процесс расследования, возможности следствия и т.п.) [7, с. 111].

Отметим, что в профессиональной литературе существует мнение, что следственная ситуация в реальной действительности представляет собой сложное, многокомпонентное образование, содержание которого составляют различные условия, обстоятельства, факторы,

имеющие значение для раскрытия и расследования преступлений.¹ [8, с. 189].

В этом контексте мы однозначно согласны с мнениями профессоров А.М. Кустова и В.Г. Енгибаряна о том, что следственная ситуация складывается под воздействием определенных факторов – объективных и субъективных. К числу объективных относятся характер и содержание собранной информации по делу; наличие (или отсутствие) пока не использованных источников информации; наличие в распоряжении следователя сил и средств, требующихся для решения той или иной криминалистической задачи. Субъективные факторы – уровень профессиональной подготовки следователя, его психологическое состояние; противодействие установлению истины со стороны преступников и связанных с ними лиц; ошибочность действий следователя, оперативных работников, экспертов, разглашение тайны следствия и т.п. [9, с. 375].

Заметим, что следственную ситуацию целесообразно отнести к категории, которая принадлежит одновременно и криминалистической тактике, и методике. Однако первостепенное значение придается криминалистической методике, поскольку любая следственная ситуация возникает в начале досудебного расследования, а следственные действия являются лишь средством расследования. Следственные ситуации являются обязательным компонентом процесса расследования различных уголовных правонарушений, а обычная следственная ситуация – их отдельный вид.

Таким образом, подводя итог, отметим, что типичная следственная ситуация имеет фундаментальную информационную и организационно-методическую нагрузку в определении методики расследования государственной измены.

Исследование

При расследовании уголовных дел, связанных с государственной изменой, большое внимание следует уделять начальному этапу расследования, так как именно на этом этапе выполняется большой объем работы, связанный с поиском, обнаружением и закреплением доказательств. Для решения этих задач необходимо проводить следственные (розыскные) и тайные следственные действия, а также другие мероприятия, последовательность которых зависит от сложившейся следственной ситуации. В этой связи, профессора А.М. Кустов и В.Г. Енгибарян утверждают, что следственная ситуация влияет не только на круг и последовательность осуществляемых в данный момент следственных действий, но и на цели этих действий. [9, с. 25]

В зависимости от характера и полноты первичных материалов о преступлении можно выделить следующие типичные следственные ситуации:

Ситуация 1. Подозреваемый задержан во время или сразу после совершения им противоправных действий, подпадающих под признаки государственной измены:

- а) обнаружены материалы, содержащие государственную тайну;
- б) подозреваемый осуществлял действия, связанные с передачей данных материалов другим лицам, не имеющим права доступа к таким материалам;
- в) подозреваемый задержан в момент совершения действий, связанных с переходом на сторону противника;

¹ См.: Чебуренков А.А., Общетеоретические положения и практические аспекты криминалистической тактики. - М., 2008, с. 189.

г) задержанное лицо является членом преступной группировки, занимающейся оказанием финансовой, материально-технической, консультационной или иной помощи иностранному государству, международной или иностранной организации или их представителям в деятельности, направленной против безопасности страны, или осуществляет данные действия самостоятельно;

д) обнаружение у подозреваемого технических устройств шпионского характера.

Для ситуации типичны следующие следственные действия и оперативно-розыскные мероприятия:

- задержание и личный обыск подозреваемого;
- осмотр (обыск) места задержания, местности, где проходили контакты задержанного с другими участниками преступления; помещений, где хранились секретные материалы, носители информации;
- осмотр компьютерной техники, телефона подозреваемого, документов, предметов, одежды задержанного;
- медицинское освидетельствование задержанного с целью установления его состояния, при необходимости взятие для дальнейшего исследования смыва с рук и т.п.;
- назначение экспертиз, в которых возникает потребность;
- обыск или выемка по месту жительства, работы подозреваемого;
- допрос задержанного;
- допрос свидетелей;
- оперативно-розыскные мероприятия, направленные на установление всех преступных связей, мест хранения, каналов передачи секретных материалов, финансов.

Ситуация 2. Уголовное производство инициируется в связи с уведомлением о том, что лицо потенциально находится в контакте с лицами, по поводу которых известно, что их действия подпадают под статью 418 УК РА. Типичны версии, которые выдвигаются по следующим вопросам и обстоятельствам:

- у подозреваемого лица имелся доступ к секретным материалам, к финансовым ресурсам, к путям перехода на сторону противника;
- подозреваемое лицо имело технические навыки для копирования информации, имело в распоряжении необходимые финансовые ресурсы, могло осуществить переход на сторону противника, поскольку владело соответствующими техническими средствами, навыками их использования, могло осуществлять перемещение в пространстве, в результате чего осуществлялся переход.

В таком случае в следственной практике используются негласные методы сбора доказательств – тайные следственные действия, прототипом которых стали оперативно-розыскные мероприятия: контроль почтовых и других не цифровых отправок, контроль цифровых, в том числе телефонных переговоров и др.

В процессе данной ситуации необходимо провести:

- а) тщательный осмотр места происшествия;
- б) допросы работников и служащих, откуда произошла утечка секретной информации;
- в) оперативно-розыскные мероприятия, направленные на проверку заподозренных в государственной измене лиц, а также тех, кто имел какие – либо контакты с иностранными представителями, лицами, ставшими фигурантами уголовных дел, связанных с государственной изменой;

г) оперативно-розыскные мероприятия в организациях и общественных объединениях, которые сотрудничали с подозреваемыми; организация засад в местах возможного совершения преступления;

- д) изучение материалов аналогичных уголовных производств, оперативных материалов;
- и) назначение экспертиз.

Ситуация 3. Уголовное производство иницируется в связи с тем, что лицо подозревается в государственной измене, когда данное деяние осуществляется с использованием Интернета и новых цифровых технологий.

Также имеют место случаи, когда секретная информация попадает в социальные сети, которые становятся средством совершения преступления [10].

Например, в результате масштабных оперативно-розыскных мероприятий, разработанных и предпринятых сотрудниками Департамента военной контрразведки Службы национальной безопасности РА, выяснилось, что гражданин РА, рядовой Э.А., военнослужащий, участвовавший в трехмесячных сборах, объявленных МО РА в августе-ноябре 2021 года, на короткое время имел доступ к сведениям, составляющим государственную и служебную тайну, в октябре 2021 года через социальную сеть «Фейсбук» познакомился с лицом, являющимся сотрудником иностранной спецслужбы, действующим под псевдонимом, и будучи завербованным, исходя из личной заинтересованности, с помощью приложения «Вотсап» своего мобильного телефона, в период того же времени собирал и передавал представителю спецслужбы сведения, составляющие государственную и служебную тайну о порядке несения службы, вверенной ему боевой позиции, ее конкретной дислокации, численности личного состава, несущего дежурства на позиции, вооружения, за что якобы получил обнаженные фотографии своего собеседника. [11]

В процессе расследования преступлений, связанных с использованием криптовалют, часто возникает необходимость решить две тактические задачи.

Первая тактическая задача – это блокировка операций с передачей криптовалюты определенным лицом. Трудность ее решения является именно легкость обращения с криптовалютой.

Считается, что такую блокировку можно осуществить двумя способами:

1) блокировка связи между участниками сети, препятствующая отправке транзакций полным узлам, а также распространению блоков через них;

2) блокировка бирж криптовалют, препятствующая продаже или обмену накопленных средств на фиатные валюты (принятые для расчетов в государствах) [12, с. 117].

Первый метод в криминалистической практике считается наиболее эффективным. Ведь если отключить майнеров от получения информации о сделанных переводах, они не будут включены в блок. Однако без дополнительной технологической системы – Great Firewall, которую имеет только Китай, – реализовать данную процедуру невозможно.

Второй способ технологически гораздо более простой в исполнении – он базируется на использовании модификации DNS (системы доменных имен), блокировке IP-адресов серверов, на которых размещены веб-сайты, или блокировке URL-адресов, и, следовательно, предотвращению доступа пользователей. Такую блокировку могут осуществлять субъекты, предоставляющие услуги доступа в Интернет (операторы и провайдеры). Но здесь возникает ряд организационных и правовых проблем из-за того, что эти субъекты всегда находятся под юрисдикцией другого государства.

На международном уровне механизм противодействия киберпреступлениям, определенный Конвенцией о киберпреступности (Будапештская конвенция).

Отсюда вторая тактическая задача расследования определенного вида преступлений – идентификация личности или группы лиц, совершающих криптовалютные операции в незаконных целях, в частности для финансирования деяний, подпадающих под ст. 418 УК РА. Транзакции в сетях технологии «блокчейн» анонимны по отношению к пользователям как к физическим лицам, но не анонимны по отношению к самим транзакциям. Поэтому сети технологии «блокчейн» с множеством транзакций могут быть подвергнуты целостному и взаимосвязанному анализу, что дает возможность борьбы с уголовными правонарушениями, связанными с финансированием антигосударственной деятельности. Для выявления и отслеживания незаконной деятельности в сетях технологии блокчейн используются специальные знания и соответственно специальное программное обеспечение (например, Crystal Chainalysis, CipherTrace, CryptoFinance, BitcoinAbuseDatabases, Walletexplorer.com, Graphsense.info), которое непосредственно способно:

- выявить преступную деятельность на блокчейне (позволяет определить, связан ли кошелек с системами, активно используемыми в незаконной деятельности, например, в скрытой сети, в системах «маскировки» происхождения средств и т.п.);

- выявить и задокументировать доказательства соглашений подозреваемого (указав все адреса кошельков, связанных с подозреваемым, можно определить любые попытки скрыть источник или место назначения нахождения средств);

- ускорить расследование (автоматизировано, позволяет отследить наиболее подозрительных участников сети, уменьшив время на анализ транзакций вручную и предотвратить неопределенности в постановке задач). Использование ПО, способного проводить комплексный и систематизированный анализ в криптовалютной сети, позволяет эффективно анализировать взаимосвязи между транзакциями, устанавливать схемы потоков криминальных финансов.

Процедура применения технических средств при документировании уголовных правонарушений, совершенных с использованием криптовалюты, должна быть такой, чтобы полученные с ее помощью материалы можно было приобщать к материалам уголовного производства. Полученные при помощи использования специальных программных средств материалы обладают неоспоримыми преимуществами – документальностью и высокой информативностью. Они позволяют доказать факт совершения правонарушения. Это одно из важнейших преимуществ использования специальных программных средств, поскольку получать оперативную информацию о совершении уголовного преступления можно из разных источников. В то же время достоверность полученных материалов можно проверить с помощью экспертизы.

Главный аспект использования таких материалов находится в процессуальной плоскости в области использования негласных следственных действий при расследовании (Таблица. 1).




Таблица 1. Система негласных следственных действий при расследовании государственных измен, совершаемых с помощью информационных технологий (составлено автором).

В этом смысле суть таких действий должна отражать две стороны деятельности их исполнителей: внешнее восприятие информации (визуальное обозрение и описание информации, размещенной на веб-ресурсе) и технологическое, связанное с применением возможностей специального программного обеспечения для фиксации данных соответствующим специалистом.

Материалы, полученные в результате использования специального ПО, могут вовлекаться в процесс доказывания, во-первых, как материалы, сопровождающие (или дополняющие) показания лиц, во-вторых, как документы, не имеющие самостоятельного процессуального значения, но полученные как приложения в протоколы следственных и негласных следственных действий. Истинность материалов, полученных с помощью технических средств, может быть дополнительно подтверждена результатами компьютерно-технической экспертизы.

Таким образом, использование криптовалюты при совершении государственной измены требует от правоохранительных органов такого комбинирования традиционных криминалистических средств расследования преступлений (в том числе тайных следственных действий), которое обеспечит процессуальное закрепление использования специального аналитического программного обеспечения, направленного на комплексный анализ криптовалютных сетей.

Иная ситуация складывается в случае использования социальных сетей как инструмента совершения преступления, предусмотренного ст. 418 УК РА. В данном случае следственная практика использует для раскрытия преступления такой относительно новый инструмент как оперативный мониторинг.

По определению Н. Реймерса, сущность мониторинга заключается в выполнении двух взаимосвязанных функций – в наблюдении (отслеживании) и предотвращении, что, по нашему мнению, имеет достаточно важное значение для решения проблемных вопросов, в том числе по противодействию и предотвращению преступлений.

Кроме того, как отмечает Л.Я. Драпкин, целесообразность дальнейшего изучения проблем криминологического мониторинга обусловлена необходимостью глубокого, всестороннего, теоретического осмысления проблемы и создания фундаментальных, методологически правильных научных основ его организации и осуществления, ведь сегодня имеется целый ряд нерешенных задач, спорных моментов относительно понятий категориального аппарата мониторинга противодействия преступности, его соотношения со смежными системами [13], что, по нашему мнению, обуславливает активные научные исследования в сфере предотвращения и противодействия отдельным видам и направлениям преступности.

По определению В.Н. Исаенко, цель мониторинга состояния преступности состоит, прежде всего, в том, чтобы с помощью информационного потенциала значительно повысить научный уровень и обоснование планирования, прогнозирования и организации противодействия преступности на основании выявления латентных, но имеющих определяющее значение направлений ее развития [14], что мы поддерживаем. Мы также подчеркиваем, что это касается и противодействия преступлениям. При этом наиболее важно выделение наиболее значимых проблем, решения вопросов противодействия в конкретном направлении.

Работы по мониторингу состоит из процессов получения, обработки и анализа требуемой для формулирования конечных выводов информации. Вероятно, это не формальный сбор и сумма статистических или других данных о прошлом и настоящем. Согласно научной позиции ученых, это новая и дополнительная информация, которая расширяет и пополняет наши знания о состоянии изучаемых явлений и процессов [15].

Можно сделать вывод, что мониторинг противодействия преступности – это шаг вперед в оперативно-розыскной деятельности, уголовном процессе и криминологической науке, практике и при противодействии преступлениям, поскольку он впервые связывает информацию о соответствующих явлениях прошлого и явлениях в процессах настоящего. По результатам выводов и на основе их анализа принимаются управленческие решения по использованию необходимых и целесообразных мер противодействия определенным видам преступлений или тенденциям. Мониторинг состояния криминогенной обстановки в обществе на сегодняшний день является активным посредником между научными исследованиями и потребностями практики.

Выводы исследования

Результаты анализа научной литературы и законодательных актов свидетельствуют о том, что задачами, решаемыми оперативными работниками во время оперативно-розыскного мониторинга оперативной обстановки, являются:

- 1) выявление с помощью оперативно-розыскных мероприятий, а также гласных и негласных источников оперативной информации относительно уголовных правонарушений, предусмотренных статье о состоянии оперативной обстановки;
- 2) анализ и прогнозирование тенденций оперативной обстановки с целью решения задач противодействия преступности, направленной против государственной власти;
- 3) принятие организационно-тактических решений по противодействию преступности,

направленной против государственной власти.

Необходимость проведения оперативно-розыскного мониторинга преступности, связанной с совершением государственной измены, обусловлена современной оперативной обстановкой в России, которая определяется возникновением новых проблем преступности, в том числе и возникновением потенциальной опасности государственной измены.

Аннотация. В данной научной статье автор рассматривает криминалистические аспекты расследования дел о государственной измене, в частности типичные следственные ситуации, характерные для такого рода дел. Автор сначала обращается к содержанию понятия «следственная ситуация», представляет и подробно рассматривает точки зрения различных специалистов, затем на этой основе выявляет ситуации, характерные для расследования дел о государственной измене, акцентируя внимание на особенностях их формирования.

Анализируя различные точки зрения, существующие в профессиональной литературе, автор также представляет роль высоких технологий в процессе формирования следственных ситуаций по такого рода делам. Особое внимание уделяется работе органов, осуществляющих оперативно-розыскную деятельность в рамках рассматриваемой темы, обосновывая необходимость организации оперативного мониторинга при расследовании и раскрытии такого рода дел.

В конце работы автор формулирует конечные результаты исследования.

Ամփոփագիր: Գիտական հոդվածում հեղինակն անդրադարձել է պետական դավաճանության գործերով քննության կրիմինալիստիկական ասպեկտներին, մասնավորապես՝ այդ տեսակ գործերին բնորոշ տիպային քննչական իրադրություններին: Հեղինակը նախ անդրադառնում է քննչական իրադրության հասկացության բովանդակությանը, ներկայացնում և վերլուծում է այդ հասկացության վերաբերյալ տարբեր մասնագետների տեսակետները, ապա այդ հենքի վրա բացահայտում է պետական դավաճանության գործերով քննությանը բնորոշ իրադրությունները՝ շեշտադրելով դրանց ձևավորման առանձնահատկությունները:

Հեղինակը, վերլուծելով մասնագիտական գրականության մեջ առկա տարբեր տեսակետները, ներկայացնում է նաև բարձր տեխնոլոգիաների դերակատարությունն այդ տեսակ գործերով քննչական իրադրությունների ձևավորման գործընթացին: Առանձնահատուկ անդրադարձ է կատարվում օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների աշխատանքին խնդրո առարկայի շրջանակում՝ հիմնավորելով օպերատիվ մշտադիտարկման կազմակերպման անհրաժեշտությունն այս տեսակ գործերի քննության ու բացահայտման գործում:

Աշխատանքի վերջում հեղինակը ձևակերպում է հետազոտության վերջնարդյունքները:

Annotation. This scientific article is devoted to the forensic science aspects of the investigation of high treason, particularly - model investigating situations typical to such kind of cases. At first the content of the investigating situation concept is touched by the author, different specialists' approaches to that concept are introduced and analyzed, then-relying on that- the author detects situations typical to the investigation of high treason-emphasizing the characteristics of their formation.

By analyzing different specialists' approaches in professional literature, the author shows the role of high technologies in the process of formation of investigating situations of such type of cases.

The author emphasizes the work of bodies executing operative-search activity - in the scope of this matter- by justifying the importance of organizing operative monitoring in the process of investigation and detection of such type of cases.

At the end of this article, the author's conclusions are presented based on the results of the research.

Ключевые слова: государственная измена, уголовное производство, предварительное следствие, следственная ситуация, информационная модель, оперативно-розыскная деятельность.

Բանալի բառեր - պետական դավաճանություն, քրեական վարույթ, նախաքննություն, քննչական իրադրություն, տեղեկատվական մոդել, օպերատիվ-հետախույզական գործունեություն:

Keywords: high treason, criminal proceeding, prejudicial inquiry, investigating situation, information model, operative-search activity.

СПИСОК ИСПОЛЬЗОВАННОЙ ЛИТЕРАТУРЫ

1. Гончарова Т.А., Первоначальный этап расследования терроризма: дисс. канд. юрид. наук. – Москва, 2006.
2. Крюкова Н.И., Косолапова Н.В. Криминалистика. Учебное пособие. – М: Юстиция, 2019.
3. Александров И.В. Криминалистика. Тактика и методика. Задачник. Учебное пособие. – М: Юрайт, 2017.
4. Хромых Д.Н., Методика расследования актов терроризма с использованием взрывных устройств: дисс. канд. юрид. наук. – СПб., 2020.
5. Панасенко Н.А., Осмотр места происшествия с участием специалиста-взрывотехника по преступлениям, совершенным с использованием взрывных устройств и взрывчатых веществ: дисс. канд. юрид. наук. – Москва, 2023.
6. Топорков А.А., Криминалистика. Учебник. М: Инфра-М, Контракт, 2015.
7. Еремин Д.Н., Методика расследования преступлений, связанных с политическим экстремизмом: на материалах Северо-Кавказского региона: дисс. канд. юрид. наук. – Калининград, 2017.
8. Чебуренков А.А., Общетеоретические положения и практические аспекты криминалистической тактики. – М., 2008.
9. Енгибарян В.Г., Кустов А.М. Криминалистическая наука и практика в Армении и в России. Монография в 2-х томах / под общ. ред. А.М. Кустова. – Ереван: «КОПИ ПРИНТ», 2024.
10. В сеть утекла новая партия секретных документов США по Украине и Китаю. Режим доступа: <https://lenta.ru/news/2023/04/08/utekla/>
11. Официальный сайт Службы национальной безопасности РА: <https://www.sns.am/ru/news/view/761>
12. Перов В.А., Квалификация преступлений, совершаемых с использованием криптовалюты: дисс. канд. юрид. наук. – Москва, 2023.
13. Драпкин Л.Я., Карагодин В.Н., Злоченко Я.М. и др., Криминалистика. Учебник. – М.: Оригинал-макет, 2017.
14. Исаенко В.Н., Использование возможностей криминалистики и судеб. экспертизы в прокурорской деятельности. – М.: Проспект, 2021.
15. Ищенко Е.П., Криминалистика. – М.: Проспект, 2021.

Багинян С. - Соискатель кафедры уголовного судопроизводства и криминалистики ЕГУ, эл. почта: sbaghinyan77@mail.ru.

Статья представлена в редакцию 27.03.2024 г., отправлена на рецензию 27.03.2024 г., рецензент: заслуженный юрист Российской Федерации, академик РАЕН, доктор юридических наук, профессор Кустов А.М., принята к публикации: 15.04.2024. г.

ԱՎԴ/0009/01/18

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ
ՈՐՈՇՈՒՄ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎՃՌԱԲԵԿ
ԴԱՏԱՐԱՆԻ ՔՐԵԱԿԱՆ ՊԱԼԱՏԸ
(ԱՅՍՈՒՀԵՏ՝ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ)

2023 թվականի դեկտեմբերի 22-ին

ք.Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով ամբաստանյալներ Հովհաննես Նեգուսի Մովսիսյանի և Արմեն Ռազմիկի Արսենյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2019 թվականի հուլիսի 4-ի որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Հ.Ասլանյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը.

1. 2004 թվականի ապրիլի 23-ին զենք պահելու կասկածանքով Գրիշա Յաշայի Վիրաբյանը բերման է ենթարկվել Ոստիկանության Արտաշատի բաժին:

Գ.Վիրաբյանի կողմից ոստիկանության ներկայացուցիչների նկատմամբ բռնություն գործադրելու փաստի առթիվ նույն օրը Արարատի մարզի դատախազությունում հարուցվել է թիվ 27203404 քրեական գործը՝ 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի (այսուհետ՝ նաև ՀՀ քրեական օրենսգրք) 316-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցագործության հատկանիշներով:

1.1. 2004 թվականի մայիսի 3-ին Գրիշա Վիրաբյանը ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 316-րդ հոդվածի 3-րդ մասով:

1.2. 2004 թվականի օգոստոսի 11-ին թիվ 27203404 քրեական գործով որոշում է կայացվել Ոստիկանության Արարատի մարզային վարչության Արտաշատի բաժնի աշխատակիցների վերաբերյալ վարույթը՝ հանցակազմի բացակայության և մասնա պատճառած արարքը քրեական օրենքով օրինաչափ համարվելու հիմքով, կարճելու մասին:

1.3. 2004 թվականի օգոստոսի 17-ին Գ.Վիրաբյանին ՀՀ քրեական օրենսգրքի 316-րդ հոդվածի 3-րդ մասով առաջադրված մեղադրանքը փոփոխվել և լրացվել է, և նրան նոր մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 316-րդ հոդվածի 3-րդ մասով:

1.4. 2004 թվականի օգոստոսի 30-ին Երևան քաղաքի Էրեբունի և Նուբարաշեն համայնքների դատախազի կողմից որոշում է կայացվել՝ Գ.Վիրաբյանի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնելու և քրեական գործի վարույթը կարճելու մասին այն հիմքով, որ.

«Կատարած հանցագործության ընթացքում Գ.Վիրաբյանի առողջությանը նույնպես միջին ծանրության վնաս է պատճառվել, նրա ամորձին վնասվել, վիրահատվել և հեռացվել է, որը անբուժելի է, և փաստորեն զրկանքներ կրելով՝ նա քավել է իր մեղքը, իսկ նման պայմաններում նպատակահարմար չէ նրա նկատմամբ քրեական հետապնդում իրականացնել»:

1.5. 2004 թվականի նոյեմբերի 12-ին Երևան քաղաքի Էրեբունի և Նուբարաշեն համայնքների առաջին ատյանի դատարանի որոշմամբ՝ քրեական հետապնդումը դադարեցնելու և քրեական գործի վարույթը կարճելու վերաբերյալ որոշման դեմ Գ.Վիրաբյանի բողոքը մերժվել է՝ անհիմն լինելու պատճառաբանությամբ:

1.6. Երևան քաղաքի Էրեբունի և Նուբարաշեն համայնքների առաջին ատյանի դատարանի որոշման դեմ Գ.Վիրաբյանի վերաքննիչ բողոքը ՀՀ քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանի՝ 2004 թվականի դեկտեմբերի 24-ի որոշմամբ մերժվել է:

1.7. Գ.Վիրաբյանի վճռաբեկ բողոքի հիման վրա ՀՀ Վճռաբեկ դատարանի քրեական և զինվորական գործերով պալատը 2005 թվականի փետրվարի 4-ի որոշմամբ ՀՀ քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանի վերոնշյալ որոշումը բեկանել է և նյութերն ուղարկել նույն դատարան նոր քննության:

1.8. Նոր քննության արդյունքներով ՀՀ քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանի՝ 2005 թվականի մարտի 3-ի որոշմամբ Երևան քաղաքի Էրեբունի և Նուբարաշեն համայնքների առաջին ատյանի դատարանի՝ 2004 թվականի նոյեմբերի 12-ի որոշման դեմ Գ.Վիրաբյանի կողմից բերված վերաքննիչ բողոքը թողնվել է առանց բավարարման:

1.9. ՀՀ Վճռաբեկ դատարանի քրեական և զինվորական գործերով պալատի՝ 2005 թվականի մայիսի 13-ի որոշմամբ ՀՀ քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանի վերոնշյալ որոշման դեմ Գ.Վիրաբյանի վճռաբեկ բողոքը թողնվել է առանց բավարարման, իսկ բողոքարկվող դատական ակտը՝ անփոփոխ:

2. Գ.Վիրաբյանի գանգատի հիման վրա Մարդու իրավունքների եվրոպական դատարանը (այսուհետ՝ նաև Եվրոպական դատարան) 2012 թվականի հոկտեմբերի 2-ին *Վիրաբյանն ընդդեմ Հայաստանի* գործով (գանգատ թիվ 40094/05) վճիռ է կայացրել, որով ճանաչել է Գ.Վիրաբյանի՝ «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ նաև Եվրոպական կոնվենցիա) 3-րդ, 6-րդ և 14-րդ հոդվածներով նախատեսված իրավունքների խախտման փաստը:

3. Որպես նոր հանգամանք վկայակոչելով Եվրոպական դատարանի 2012 թվականի հոկտեմբերի 2-ի՝ *Վիրաբյանն ընդդեմ Հայաստանի* գործով վճիռը, Գ.Վիրաբյանի ներկայացուցիչ Ա.Սիրունյանը ՀՀ Վճռաբեկ դատարանի քրեական և զինվորական գործերով պալատի՝ 2005 թվականի մայիսի 13-ի որոշման վերանայման վարույթ հարուցելու վերաբերյալ բողոք է ներկայացրել, որի հիման վրա ՀՀ Վճռաբեկ դատարանի՝ 2013 թվականի հոկտեմբերի 24-ի որոշմամբ հարուցվել է ՀՀ Վճռաբեկ դատարանի քրեական և զինվորական գործերով պալատի՝ 2005 թվականի մայիսի 13-ի որոշման վերանայման վարույթ: Վճռաբեկ դատարանի՝ 2013 թվականի նոյեմբերի 28-ի որոշմամբ Երևանի Էրեբունի և Նուբարաշեն համայնքների առաջին ատյանի դատարանի՝ 2004 թվականի նոյեմբերի 12-ի և ՀՀ քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանի՝ 2005 թվականի մարտի 3-ի որոշումները բեկանվել են, և գործն ուղարկվել է Երևանի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան՝ նոր քննության:

4. Երևան քաղաքի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2014 թվականի մայիսի 22-ի որոշմամբ քրեական գործի վարույթը կարճելու և քրեական հետապնդում չիրականացնելու մասին Երևան

քաղաքի էրեբունի և Նուբարաշեն համայնքների դատախազի՝ 2004 թվականի օգոստոսի 30-ի որոշումը վերացվել է, և սահմանվել է վարույթն իրականացնող մարմնի պարտականությունը՝ քրեական գործի վարույթը վերսկսելու պայմաններում վերացնել Գ.Վիրաբյանի՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ 2012 թվականի հոկտեմբերի 10-ի վճռում նշված իրավունքների և ազատությունների խախտումները:

4.1. Վերոնշյալ որոշման դեմ դատախազի վերաքննիչ բողոքը ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2014 թվականի հուլիսի 21-ի որոշմամբ բավարարվել է մասնակիորեն, էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին աստիճանի դատարանի՝ 2014 թվականի մայիսի 22-ի որոշումը բեկանվել և փոփոխվել է, ՀՀ դատախազությունը պարտավորեցվել է վերացնել քրեական գործի վարույթը կարճելու և քրեական հետապնդում չիրականացնելու մասին Երևան քաղաքի էրեբունի և Նուբարաշեն համայնքների դատախազի՝ 2004 թվականի օգոստոսի 30-ի որոշմամբ թույլ տրված՝ Գ.Վիրաբյանի իրավունքների և ազատությունների խախտումը:

5. 2014 թվականի օգոստոսի 19-ին Երևան քաղաքի էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների դատախազի պաշտոնակատարի կողմից որոշում է կայացվել թիվ 27203404 քրեական գործով վարույթը կարճելու և քրեական հետապնդումը դադարեցնելու վերաբերյալ էրեբունի և Նուբարաշեն համայնքների դատախազի՝ 2004 թվականի օգոստոսի 30-ի որոշումը վերացնելու մասին:

5.1. 2014 թվականի օգոստոսի 21-ին քրեական գործով կարճված վարույթը վերսկսվել է:

5.2. 2014 թվականի սեպտեմբերի 1-ին դատախազի կողմից որոշում է կայացվել նաև թիվ 27203404 քրեական գործով Ոստիկանության Արարատի մարզային վարչության Արտաշատի բաժնի աշխատակիցների վերաբերյալ վարույթը կարճելու մասին 2004 թվականի օգոստոսի 11-ի որոշումը վերացնելու վերաբերյալ:

5.3. ՀՀ ոստիկանության ծառայողների կողմից 2004 թվականի ապրիլի 23-ին Գ.Վիրաբյանի նկատմամբ բռնություն գործադրելով զուգորդված պաշտոնեական լիազորություններն անցնելու դեպքի առթիվ 2016 թվականի մայիսի 10-ին հարուցվել է թիվ 62212316 քրեական գործը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 309-րդ հոդվածի 2-րդ մասի հատկանիշներով:

5.4. Նախաքննության մարմնի՝ 2016 թվականի մայիսի 13-ի որոշմամբ Գ.Վիրաբյանը ճանաչվել է տուժող:

5.5. Նախաքննության մարմնի՝ 2017 թվականի փետրվարի 17-ի և փետրվարի 20-ի որոշումներով Հովհաննես Նեգուսի Մովսիսյանը և Արմեն Ռազմիկի Արսենյանը ներգրավվել են որպես մեղադրյալներ, և նրանց մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 309-րդ հոդվածի 2-րդ մասով:

5.6. Նախաքննության մարմնի՝ 2017 թվականի մարտի 10-ի որոշմամբ մեղադրյալներ Հ.Մովսիսյանի և Ա.Արսենյանի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցվել է, և քրեական գործով վարույթը կարճվել՝ քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետներն անցած լինելու հիմքով:

5.7. Վերոնշյալ որոշումը ՀՀ գլխավոր դատախազի տեղակալի՝ 2017 թվականի դեկտեմբերի 15-ի որոշմամբ վերացվել է:

6. 2018 թվականի փետրվարի 20-ին քրեական գործը, ըստ մեղադրանքի Հ.Մովսիսյանի և Ա.Արսենյանի, մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Արարատի և Վայոց ձորի մարզերի առաջին աստիճանի ընդհանուր իրավասության դատարան (այսուհետ՝ նաև Առաջին աստիճանի դատարան): Առաջին աստիճանի դատարանի՝ 2019 թվականի փետրվարի 22-ի դատավճռով Հ.Մովսիսյանը և Ա.Արսենյանը մեղավոր են ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի

309-րդ հոդվածի 2-րդ մասով և ազատվել քրեական պատասխանատվությունից՝ վաղեմության ժամկետներն անցնելու հիմքով:

7. Մեղադրողի և պաշտպանի վերաքննիչ բողոքների քննության արդյունքում ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան) 2019 թվականի հուլիսի 4-ի որոշմամբ Առաջին ատյանի դատարանի դատավճիռը թողել է օրինական ուժի մեջ՝ մերժելով բողոքները:

8. Վերաքննիչ դատարանի՝ վերոնշյալ որոշման դեմ վճռաբեկ բողոք է ներկայացրել ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Հ.Ասլանյանը, որը Վճռաբեկ դատարանի՝ 2019 թվականի նոյեմբերի 25-ի որոշմամբ ընդունվել է վարույթ¹:

Վճռաբեկ դատարանի՝ 2021 թվականի հունվարի 13-ի որոշմամբ սահմանվել է վճռաբեկ բողոքի քննության գրավոր ընթացակարգ, որը 2021 թվականի հունվարի 20-ի որոշմամբ փոխվել է բանավոր ընթացակարգի:

8.1. 2021 թվականի հունվարի 27-ին հրավիրված դատական նիստում Վճռաբեկ դատարանը Եվրոպական կոնվենցիային կից թիվ 16 արձանագրության հիման վրա որոշել է խորհրդատվական կարծիք ստանալու համար դիմել Մարդու իրավունքների եվրոպական դատարան՝ հետևյալ հարցով. *խոշտանգման կամ դրան հավասարեցված հանցանքներով միջազգային իրավունքի աղբյուրների վկայակոչմամբ քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետների չկիրառումն արդյո՞ք համահունչ կլինի Եվրոպական կոնվենցիայի 7-րդ հոդվածին, եթե ներպետական օրենսդրությամբ քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետների չկիրառման պահանջ նախատեսված չէ:*

9. Վճռաբեկ դատարանի դիմումի հիման վրա Մարդու իրավունքների եվրոպական դատարանի Մեծ պալատը (այսուհետ՝ նաև Մեծ պալատ) 2022 թվականի ապրիլի 26-ին Վճռաբեկ դատարանին է տրամադրել «Ըստ էության խոշտանգման բնույթի արարք համարվող հանցանքի քրեական հետապնդման, դատապարտման և պատժի նկատմամբ վաղեմության ժամկետի կիրառելիության վերաբերյալ» թիվ P16-2021-001 խորհրդատվական կարծիքը (այսուհետ՝ նաև Խորհրդատվական կարծիք), որի հայերեն թարգմանությունը Վճռաբեկ դատարանում ստացվել է 2022 թվականի հուլիսի 28-ին:

Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

10. Վճռաբեկ բողոքի հեղինակը նշել է, որ ստորադաս դատարանները, ամբաստանյալներին վաղեմության ժամկետն անցած լինելու հիմքով ազատելով քրեական պատասխանատվությունից, խախտել են Եվրոպական դատարանի՝ մի շարք վճիռներով արտահայտած դիրքորոշումները, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կողմից վավերացված միջազգային պայմանագրով ամրագրված՝ խոշտանգման դեպքում վաղեմության ժամկետների կիրառման անթույլատրելիության վերաբերյալ նորմերը:

11. Վերլուծելով «Խոշտանգումների և դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի ու պատժի այլ ձևերի դեմ» Միավորված ազգերի կազմակերպության 1984 թվականի դեկտեմբերի 10-ի կոնվենցիայի դրույթները, ինչպես նաև Եվրոպական դատարանի դիրքորոշումները՝ բողոքաբերը փաստարկել է, որ ստորադաս դատարանների կողմից տրված մեկնաբանությունները հանգեցնում են պետության կողմից

¹ Համաձայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի անցումային դրույթները կարգավորող՝ 483-րդ հոդվածի 8-րդ մասի՝ սույն բողոքը քննվում է մինչև 2022 թվականի հուլիսի 1-ը գործող կարգով:

ստանձնած միջազգային պարտավորությունների խախտման, քանի որ Եվրոպական դատարանի վճիռները Եվրոպական կոնվենցիայի անբաժան մաս են և ենթակա են կիրառման Հայաստանի Հանրապետությունում՝ որպես միջազգային պայմանագրից բխող նորմատիվ ակտեր:

12. Բողոքաբերը նշել է, որ խոշտանգումների արգելքն ամրագրված է մարդու իրավունքներին և մարդասիրական իրավունքին առնչվող մի շարք միջազգային պայմանագրերում և ընկալվում է որպես ընդհանուր միջազգային իրավունքի սկզբունք՝ *jus cogens* նորմ, ինչը նշանակում է, որ այն պարտադիր է բոլոր պետությունների համար, նույնիսկ եթե այդ պետությունները չեն վավերացրել որևէ կոնկրետ պայմանագիր, և որ միջազգային կամ ներպետական որևէ այլ կանոն չի կարող հակասել *jus cogens* սկզբունքին: Բողոքաբերը փաստարկել է, որ խոշտանգումների և դաժան վերաբերմունքի բացարձակ արգելքը, ի թիվս այլնի, ենթադրում է նաև պետության կողմից նման դեպքերի պատշաճ քննության իրականացում, իսկ նման արարքներ կատարողների նկատմամբ համարժեք պատժի կիրառում՝ երաշխավորելով վերջինիս անխուսափելիությունը: Վերոնշյալ արարքներ կատարած պաշտոնատար անձանց քրեական պատասխանատվությունից կամ պատժից վաղեմության ժամկետներն անցնելու հիմքով ազատելը, համաներում, ինչպես նաև անպատժելիության հանգեցնող այլ համարժեք միջոցներ կիրառելը, բողոքաբերի պնդմամբ, ուղղակիորեն հանգեցնում են պետության կողմից ստանձնած միջազգային պարտավորությունների խախտման:

13. Բողոքաբերը նշել է, որ Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքը Եվրոպական կոնվենցիայի օրգանական մասն է կազմում, ինչից էլ հստակ հետևում է, որ խոշտանգումների վերաբերյալ գործերով քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետներ կիրառելու կոնվենցիոն արգելք է սահմանված: Ուստի, բողոքաբերի պնդմամբ, ՀՀ քրեական օրենսգրքի 75-րդ հոդվածի 6-րդ մասի ուժով այդ գործերով վաղեմության ժամկետներ չպետք է կիրառվեն, և դա չի կարող հանգեցնել ամբաստանյալների իրավունքների և օրինական շահերի խախտման, չի կարող առաջացնել իրավական անորոշություն:

14. Վերոգրյալի հիման վրա, բողոք բերած անձը խնդրել է մասնակիորեն բեկանել և փոփոխել Վերաքննիչ դատարանի՝ 2019 թվականի հուլիսի 4-ի որոշումը և ամբաստանյալների նկատմամբ նշանակել կատարած արարքներին համաչափ պատիժ:

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստական և իրավական հանգամանքները.

I. Վիրաբյանն ընդդեմ Հայաստանի գործով Եվրոպական դատարանի վճիռը.

15. Վիրաբյանն ընդդեմ Հայաստանի գործով կայացված վճռում Եվրոպական դատարանը, վերահաստատելով Եվրոպական կոնվենցիայի 3-րդ հոդվածի վերաբերյալ իր նախադեպային իրավունքում բազմիցս արտահայտած իրավական դիրքորոշումները, նշել է. «[Եվրոպական կոնվենցիայի] 3-րդ հոդվածում սահմանվում են ժողովրդավարական հասարակությունների ամենահիմնարար արժեքները: Նույնիսկ ամենաբարդ հանգամանքներում, ինչպես, օրինակ՝ ահաբեկչության և կազմակերպված հանցագործության դեմ պայքարում Կոնվենցիայով բացարձակ իմաստով արգելվում են խոշտանգումները և անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքը կամ պատիժը՝ անկախ զոհի պահվածքից (տես *Labita v. Italy* [GC], թիվ 26772/95, §119, ՄԻԵԿ 2000-IV, և *Chahal v. the United Kingdom*, 1996 թվականի նոյեմբերի 15, §79, Ջեկույցներ 1996-V): 3-րդ հոդվածով որևէ բացառություն չի նախատեսվում, և

Կոնվենցիայի 15-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն չի թույլատրվում որևէ շեղում կատարել այդ պայմանից, նույնիսկ ազգի կյանքին սպառնացող արտակարգ դրության դեպքում (տե՛ս *Selmouni v. France [GC]*, թիվ 25803/94, §95, ՄԻԵԿ 1999-V, և *Assenov and Others v. Bulgaria*, 1998 թվականի հոկտեմբերի 28, §93, Զեկույցներ 1998-VIII)»²:

15.1. Կոնկրետ գործով Եվրոպական դատարանը գտել է, որ. «(...) [Թ]ե՛ Կառավարության և թե՛ ներպետական մարմինների կողմից դիմումատուի վնասվածքների առումով տրված բացատրությունը խիստ կասկածելի է և անհավանական: Միևնույն ժամանակ, այն նշում է, որ հետաքննության բոլոր փուլերում դիմումատուն ներկայացրել է համապատասխան և մանրամասն նկարագրություն այն մասին, թե ով է իր նկատմամբ վատ վերաբերմունք ցուցաբերել և ինչպես է դա տեղի ունեցել: Նրա պնդումները համապատասխանում էին տարբեր բժշկական արձանագրություններում առկա նրա վնասվածքների նկարագրությանը (...):

Վերոնշյալը հաշվի առնելով՝ Դատարանը չի կարող դիմումատուի վնասվածքների վերաբերյալ Կառավարության բացատրությունը համարել բավարար և համոզիչ, և հետևաբար, այն եզրակացնում է, որ նրա վնասվածքները վերաբերելի են վատ վերաբերմունքի այն դրսևորումներին, որոնց մասով մարմինները պատասխանատու էին»³:

15.2. Վերոգրյալի հիման վրա Եվրոպական դատարանը եզրահանգել է, որ. «(...) [Դ] իմումատուն ենթարկվել է առանձնապես դաժան վատ վերաբերմունքի, որը նրան պատճառել է սուր ֆիզիկական և հոգեկան ցավ և տառապանք: Մասնավորապես, նրա ամորձիներին շարունակաբար հասցվել են հարվածներ ոտքերով, ձեռքերով և մտրակական առարկաներով: Այս վնասվածքները երկարատև հետևանքներ թողեցին նրա առողջության վրա, քանի որ նրա ձախ ամորձին այնպես էր պատուվել, որ այն ստիպված հեռացվեց: Այնուհետև նրան, ձեռնաշղթաներով ձեռքերը մեջքին կապած, ծեծի էին ենթարկել, և նա ստացել էր հարվածներ կրծքավանդակին և կողոսկրերին: Այս գործի հանգամանքներից կարելի է լուրջ հետևություններ անել, որ դիմումատուի նկատմամբ մտադրաբար է ցուցաբերվել վատ վերաբերմունք՝ նրան պատժելու կամ ահաբեկելու նպատակով, կամ էլ երկուսը միասին: Հաշվի առնելով վատ վերաբերմունքի բնույթը, աստիճանը և նպատակը՝ Դատարանը գտնում է, որ այն կարելի է բնորոշել որպես խոշտանգումների ենթարկելու գործողություններ (տե՛ս *Selmouni*, վերևում մեջբերված, §§96-105, և *Salman*, վերևում մեջբերված, §115)»⁴:

Արդյունքում Եվրոպական դատարանը վճռել է, որ տեղի է ունեցել Կոնվենցիայի 3-րդ հոդվածի էական խախտում:

15.3. Անդրադառնալով վատ վերաբերմունքի մասին պնդումների շուրջ արդյունավետ քննություն իրականացնելու վերաբերյալ հարցին՝ Եվրոպական դատարանը նշել է. «Դատարանը վերահաստատում է, որ երբ անհապր ենթադրաբար պնդում է այն մասին, որ նրա նկատմամբ 3-րդ հոդվածի խախտմամբ ցուցաբերվել է խիստ վատ վերաբերմունք ոստիկանության կողմից կամ Պետության այլ նման գործակալների կողմից, ապա այդ դրույթով, որը ընթերցվում է Կոնվենցիայի 1-ին հոդվածի համաձայն Պետության հիմնական պարտականության մասին դրույթի հետ հետևյալ կերպ՝ «իրենց իրավազորության ներքո գտնվող յուրաքանչյուրի համար ապահովվում են այն իրավունքներն ու ազատությունները, որոնք սահմանված են Կոնվենցիայի (...)», [ա]նուղղակի կերպով պահանջվում է արդյունավետ

² Տե՛ս Մարդու իրավունքների Եվրոպական դատարանի՝ **Վիրաբյանն ընդդեմ Հայաստանի** գործով 2012 թվականի հոկտեմբերի 2-ի վճիռը, գանգատ թիվ 40094/05, կետ 148:

³ Տե՛ս նույն տեղում, կետեր 154-155:

⁴ Տե՛ս նույն տեղում, կետ 157:

պաշտոնական հետաքննության իրականացում (տե՛ս *Assenov and Others*, վերևում մեջբերված, §102, և *Labita*, վերևում մեջբերված, §131)»⁵:

15.4. Եվրոպական դատարանը, ընդունելով հանդերձ, որ նշված գործով քրեական վարույթը հարուցվել է դիմումատուի նկատմամբ ենթադրյալ վատ վերաբերմունքի դրսևորման հենց նույն օրը, և սկսվել է հետաքննություն, այնուամենայնիվ նշել է, որ. «(...) [Քրեական գործի հանգամանքները բացառապես հիմնվել են իրադարձությունների մասին ոստիկանների կողմից տրամադրված տարբերակի վրա, ներառյալ՝ հանցագործություն կատարած ենթադրյալ անձանց և նրանց այն գործընկերների կողմից տրամադրված տեղեկությունների վրա, ովքեր բոլորը որոշակիորեն ներգրավված էին 2004 թվականի ապրիլի 23-ի իրադարձություններում՝ չլսելով նույնիսկ դիմումատուին կամ որևէ այլ վկայի: Ավելին, հենց սկզբից իրադարձությունների մասին այս տարբերակը համարվել է հաստատված փաստ (տե՛ս, օրինակ՝ վերոնշյալ §34 մեջ նշված դատաբժշկական փորձաքննություն կարգադրելու մասին քննիչի որոշումը) և ամբողջ հետաքննությունը իրականացվել է այդ կանխավարկածով: Անհրաժեշտ է նշել, որ ոստիկանության տարբերակը քննիչի կողմից հենց այդպես ընդունվել է այն ժամանակ, երբ նա նույնիսկ իր տրամադրության տակ չի ունեցել դիմումատուի վնասվածքների բնույթի և հնարավոր պատճառների մասին դատաբժշկական փորձաքննության եզրակացությունները: Արդյունքում, դիմումատուին դարձել է այդ վարույթի միակ մեղադրյալը, մինչդեռ նշված ոստիկանները երբեք չեն համարվել հնարավոր կասկածյալներ և, ավելին, մասնակցել են միայն որպես վկաներ, իսկ ոստիկանության աշխատակից Հ.Մ-ի դեպքում՝ որպես տուժող»⁶:

15.5. Եվրոպական դատարանը, կասկած հայտնելով, որ հետաքննություն իրականացնող մարմնի միակ նպատակն է եղել դիմումատուին քրեական պատասխանատվության ենթարկելը և դրա շուրջ ապացույցներ հավաքելը, նշել է, որ. «Հետաքննություն իրականացնող մարմինները հետաքննության ոչ մի փուլում չեն տրամադրել որևիցե բացառություն այն մասին, թե ինչու են նրանք համարում ոստիկանների կողմից տրված ցուցմունքները հավաստի, իսկ դիմումատուի ցուցմունքները՝ ոչ վստահելի: Վատ վերաբերմունքի մասին իր պնդումների առումով ամբողջական հետաքննություն իրականացնելու և հանցագործություն կատարած անձանց քրեական պատասխանատվության ենթարկելու և պատժելու մասին դիմումատուի բազմաթիվ պահանջները անտեսվել են, կամ դրանց տրվել է մակերեսային պատասխան (տե՛ս, օրինակ՝ վերոնշյալ §54): Այսպիսով, պարզվում է, որ հետաքննություն իրականացնող մարմինները առանց որևէ հիմնավորման նախապատվությունը տրվել են ոստիկանների կողմից տրամադրված վկայությանը և դրանով կարելի է ասել չեն ցուցաբերել անհրաժեշտ օբյեկտիվությունը և անկախությունը»⁷:

15.6. Անդրադառնալով իր նկատմամբ վատ վերաբերմունքի մասին Գ.Վիրաբյանի պնդումների շուրջ քննությանը՝ Եվրոպական դատարանը նշել է, որ քննության ընթացքում առկա են եղել մի շարք էական բացթողումներ և անհամապատասխանություններ, որոնք կարող էին վտանգել դրա վստահելիությունը և արդյունավետությունը⁸:

15.7. Արդյունքում Եվրոպական դատարանը եզրահանգել է, որ «(...) [Վ]ատ վերաբերմունքի մասին դիմումատուի պնդումների առումով մարմինների կողմից ձեռնարկված հետաքննությունը եղել է անարդյունավետ, ոչ պարզաճ և միանգամայն թերի: Դրանով հնարավոր չի եղել տալ հավաստի եզրակացություններ և արձանագրել գործի փաստերը: Իրավասու մարմինները

⁵ Տե՛ս նույն տեղում, կետ 161:

⁶ Տե՛ս նույն տեղում, կետ 165:

⁷ Տե՛ս նույն տեղում, կետ 167:

⁸ Տե՛ս նույն տեղում, կետեր 171-177:

բավականաչափ բարեխիղճ չեն եղել, և չի կարելի ասել, որ մտադրված են եղել բացահայտելու և պատժելու հանցագործներին»⁹:

Վերոգրյալի հիման վրա Եվրոպական դատարանը վճռել է, որ տեղի է ունեցել Եվրոպական կոնվենցիայի 3-րդ հոդվածի դատավարական նորմի խախտում:

15.8. Անդրադառնալով այն հարցին, թե արդյո՞ք Գ.Վիրաբյանի նկատմամբ վատ վերաբերմունքը դրսևորվել է քաղաքական դրդապատճառներով՝ Եվրոպական դատարանը նշել է, որ. «(...) [Դ]իմումատուի պնդումները ստուգելու որևէ օբյեկտիվ եղանակ չկա: Ծճմարիտ է, որ դիմումատուի՝ քաղաքական դրդապատճառներով պայմանավորված ձերբակալումը սուր քննադատությունների և լուրջ մտահոգությունների տեղիք է տալիս: Այդուհանդերձ, դա բավարար չէ եզրակացնելու, որ վատ վերաբերմունքը, որպես այդպիսին, նույնպես պայմանավորված է եղել քաղաքական դրդապատճառներով: Դատելով գործի հանգամանքներից՝ չի կարելի բացառել, որ դիմումատուի նկատմամբ վատ վերաբերմունք է ցուցաբերվել՝ ոստիկանության ծառայող Հ.Մ.-ին պատճառած վնասվածքի համար վրեժ լուծելու նպատակով: Չի կարելի բացառել նաև, որ ոստիկանության ծառայողների բռնի վարքագիծը պայմանավորված է եղել դիմումատուի հետ առերեսման փաստով կամ ոստիկանության բռնի ուժի գործադրման պատճառներով, որոնք հնարավոր չէ բացատրել: Թեև նման գործողությունները պետք է արժանանան անվերապահ դատապարտման և որևէ պարագայում չպետք է արդարացվեն կամ ներվեն, Դատարանը չի կարող հիմնավոր կասկածից վեր եզրակացնել, որ դիմումատուի նկատմամբ դրսևորված վատ վերաբերմունքը պայմանավորված է եղել իր քաղաքական հայացքներով»¹⁰:

Արդյունքում Եվրոպական դատարանը եզրահանգել է, որ Եվրոպական կոնվենցիայի 3-րդ հոդվածի հետ համակցված 14-րդ հոդվածի նյութաիրավական կողմը չի խախտվել:

15.9. Այնուհետև, անդրադառնալով Կոնվենցիայի 14-րդ հոդվածի ընթացակարգային կողմին՝ Եվրոպական դատարանն արձանագրել է, որ. «(...) [Բ]ռնության մուղեկցվող միջադեպեր հետաքննելիս պետական մարմինները լրացուցիչ պարտավորություն են ստանձնում. այն է՝ ձեռնարկել բոլոր անհրաժեշտ քայլերը՝ քաղաքական ցանկացած դրդապատճառ բացահայտելու և պարզելու, թե արդյո՞ք փարբերվող քաղաքական համոզմունքների նկատմամբ անհանդուրժողականությունն իր դերն է ունեցել այդ դեպքերում: Այդ պարտավորությունը չկատարելը և քաղաքական նկատառումներով պայմանավորված բռնությունը որևէ քաղաքական երանգ չունեցող գործերի հետ նույն հիմքով քննելը կնշանակի աչք փակել այն գործողությունների վրա, որոնցով խախտվում են հիմնարար իրավունքները: Էսպես փարբեր իրավիճակները կարգավորելու եղանակների միջև փարբերակում չկատարելը կարող է հանգեցնել չհիմնավորված վերաբերմունքի, որը չի համապատասխանում Կոնվենցիայի 14-րդ հոդվածին (տե՛ս համապատասխան փոփոխություններով (*mutatis mutandis*), *Nachova and Others v. Bulgaria*, թիվ 43577/98 և 43579/98, §158, 2004 թվականի փետրվարի 26, և *Bekos and Koutropoulos*, վերևում մեջբերված, §69):

(...) [Բ]աղաքական դրդապատճառների առկայության փաստի ապացուցումը չափազանց դժվար է գործնականում: Բռնի գործողության քաղաքական հնարավոր երանգները հետաքննելու՝ պարասխանող Պետության պարտականությունը ենթադրում է հնարավոր, սակայն ոչ ծայրահեղ ջանքերի գործադրում: Պետական մարմինները պետք է ձեռնարկեն բոլոր համապատասխան քայլերը վկայություններ հավաքելու ու ապահովելու, ճշմարտությունը

⁹ Տե՛ս նույն տեղում, կետ 178:

¹⁰ Տե՛ս նույն տեղում, կետ 214:

բացահայտելու բոլոր գործնական միջոցներն օգտագործելու և ամբողջովին հիմնավորված, անկողմնակալ և օբյեկտիվ որոշումներ ընդունելու համար՝ բաց չթողնելով որևէ կասկածելի փաստ, որը կարող է մատնանշել քաղաքական նկատառումներով բռնությանը (տես՝ համապատասխան փոփոխություններով (mutatis mutandis), Nachova and Others, վերևում մեջբերված, §159, և Bekos and Koutropoulos, վերևում մեջբերված, §69)»¹¹:

15.10. Վերոգրյալ դրույթները կիրառելով սույն գործի փաստական հանգամանքների նկատմամբ՝ Եվրոպական դատարանն արձանագրել է. «(...) [Դ]իմումատուն բազմաթիվ առիթներով հետաքննության մարմիններին պնդել է, որ իր նկատմամբ դրսևորված վատ վերաբերմունքը կապված է ընդդիմության կողմից կազմակերպված ցույցերին իր մասնակցության հետ, և ունի քաղաքական դրդապատճառներ և պահանջել, որ այս հանգամանքը հետաքննվի, իսկ մեղավորները պատժվեն (...): Երկու այլ վկաներ այս պնդումը հիմնավորող փաստարկներ են ներկայացրել (...): Վերջապես Դատարանը նկատում է, որ Հայաստանի մարդու իրավունքների պաշտպանը նշել է ձերբակալման պատճառների բացակայությունը (...):

Հաշվի առնելով վերոնշյալը՝ Դատարանը համարում է, որ հետաքննության մարմիններն ունեին հավաստի և բավարար տեղեկություններ, որոնց հիման վրա ակնհայտ էր դառնում նախնական ստուգում և, կախված արդյունքից, դիմումատուի նկատմամբ դրսևորված վատ վերաբերմունքի հնարավոր քաղաքական դրդապատճառների հետաքննություն անցկացնելու անհրաժեշտությունը:

Այդուհանդերձ, պետական մարմինները գրեթե ոչինչ չեն արել այս տեղեկությունները ստուգելու համար: Ոստիկանության միայն երկու աշխատակիցներից՝ Ա.Մ-ից և Ռ.Ս-ից էին հարցրել, թե արդյոք իրենք տեղյակ են եղել դիմումատուի քաղաքական պատկանելիության մասին, սակայն սա չի կարող համարվել նման լուրջ պնդումը հետաքննելու իրական փորձ և պարզապես ձևական բնույթ է կրում (...): Այլ հարցեր չեն տրվել, իսկ ոստիկանության մյուս աշխատակիցները, այդ թվում՝ Հ.Մ-ն և Ա.Կ-ն, ում դիմումատուն ուղղակիորեն մատնանշել է որպես իր նկատմամբ բռնի գործողություններ կատարելուց առաջ և հետո քաղաքական տեսանկյունից անհանդուրժողական հայտարարություններ արած անձանց, նույնիսկ չեն հարցաքննվել այդ պնդումների առնչությամբ: Ոչ մի փորձ չի կատարվել՝ պարզելու դիմումատուի ձերբակալման հանգամանքները, այդ թվում՝ բազմաթիվ անձրություններ և ձերբակալման հնարավոր քաղաքական երանգը մատնանշող այլ տարրեր, իսկ ներկայացված նյութերից ոչ մի եզրակացություն չի արվել: Ուստի Դատարանը եզրակացնում է, որ պետական մարմինները չեն կատարել Կոնվենցիայի 3-րդ հոդվածի հետ դիտարկվող 14-րդ հոդվածի համաձայն ստանձնած իրենց պարտավորությունը, այն է՝ ձեռնարկել բոլոր հնարավոր քայլերը՝ պարզելու, թե արդյոք դիմումատուի նկատմամբ դրսևորված վատ վերաբերմունքը ցուցաբերվել է խտրականության հիմքով»¹²:

Վերոգրյալի հիման վրա Եվրոպական դատարանը վճռել է, որ խախտվել է Կոնվենցիայի 3-րդ հոդվածի հետ համակցված 14-րդ հոդվածի ընթացակարգային կողմը:

II. Սույն գործով Հովհաննես Նեգուսի Մովսիսյանին և Արմեն Ռազմիկի Արսենյանին առաջադրված մեղադրանքները.

16. Հ.Մովսիսյանին ՀՀ քրեական օրենսգրքի 309-րդ հոդվածի 2-րդ մասով առաջադրված

¹¹ Տես նույն տեղում, կետեր 218-219:

¹² Տես նույն տեղում, կետեր 222-224:

մեղադրանքի համաձայն՝ «2004թ. ապրիլի 23-ին՝ ժամը 17:40-ին, հրազեն պահելու կասկածանքով ոստիկանության Արտաշատի բաժին է բերման ենթարկվել Արարատի մարզի Շահումյան գյուղի բնակիչ Գրիշա Յաշայի Վիրաբյանը: Բերման ենթարկվելիս ոստիկանության աշխատակիցների օրինական պահանջներին Գրիշա Վիրաբյանի կողմից չենթարկվելու կապակցությամբ նախապարաստվող նյութերի շրջանակներում բաժնի վարչական շենքի երկրորդ հարկում գտնվող քրեական հետախուզության բաժանմունքի հինգերորդ աշխատասենյակում բանավեճ է սկսվել Գրիշա Վիրաբյանի ու ոստիկանության Արտաշատի բաժնի քրեական հետախուզության բաժանմունքի պետ Հովհաննես Մովսիսյանի միջև: Այդ ընթացքում Գրիշա Վիրաբյանը աշխատասենյակի սեղանի վրա դրված բջջային հեռախոսի լիցքավորման սարքով հարվածել ու վնասել է Հովհաննես Մովսիսյանի աջ աչքը:

Գրիշա Վիրաբյանի նշված գործողության համար վերջինիս պատժելու նպատակով ոստիկանության Արտաշատի բաժնի քրեական հետախուզության բաժանմունքի պետ Հովհաննես Մովսիսյանը նույն բաժնի քրեական հետախուզության բաժանմունքի օպեր լիազոր Արմեն Արսենյանի հետ՝ գիտակցելով և լրացնելով մեկը մյուսի գործողությունները, «Ոստիկանության մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածով նախատեսված ֆիզիկական ուժ գործադրելու հիմքերի բացակայության պայմաններում, ակնհայտորեն դուրս գալով իրենց լիազորությունների շրջանակից և, տվյալ դեպքում չունենալով ֆիզիկական ուժ գործադրելու լիազորություն, բռնություն գործադրելով Գրիշա Վիրաբյանի նկատմամբ, բաժնի աշխատասենյակներից մեկում ծեծի են ենթարկել նրան՝ ձեռքերով ու ոտքերով բազմաթիվ հարվածներ հասցնելով ամորձիներին և մարմնի այլ մասերին՝ վերջինիս առողջությանը պատճառելով միջին ծանրության մարմնական վնասվածք՝ փոշտի հետտրավմատիկ հեմատոմայի, ձախակողմյան հեմատոցելեի, ձախ ամորձու պատռվածքի, աջ սրունքի արյունազեղման ձևով:

Հովհաննես Մովսիսյանի վերոհիշյալ գործողությունների հետևանքով Գրիշա Վիրաբյանին պատճառվել է ֆիզիկական վնաս՝ առողջության միջին ծանրության աստիճանի մարմնական վնասվածքի ձևով, էական վնաս է պատճառվել նրա Իրավունքներին ու օրինական շահերին, այն է՝ խախտվել է Սահմանադրությամբ երաշխավորված խոշտանգումների և անմարդկային վերաբերմունքի ենթարկվելու անթույլատրելիության նրա իրավունքը, էական վնաս է պատճառվել նաև պետության օրինական շահերին, քանի որ հեղինակազրկվել է ՀՀ ոստիկանությունը»¹³:

16.1. Ա.Արսենյանին ՀՀ քրեական օրենսգրքի 309-րդ հոդվածի 2-րդ մասով մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա. «2004թ. ապրիլի 23-ին՝ ժամը 17:40-ի սահմաններում, գտնվելով ոստիկանության Արտաշատի բաժնի վարչական շենքում, տեղեկացել է, որ հրազեն պահելու կասկածանքով ոստիկանության Արտաշատի բաժնի բերման ենթարկված Արարատի մարզի Շահումյան գյուղի բնակիչ Գրիշա Վիրաբյանի կողմից ոստիկանության աշխատակիցների օրինական պահանջներին չենթարկվելու կապակցությամբ նախապարաստվող նյութերի շրջանակներում բաժնի վարչական շենքի երկրորդ հարկում գտնվող քրեական հետախուզության բաժանմունքի հինգերորդ աշխատասենյակում բանավեճ է տեղի ունեցել նրա ու ոստիկանության Արտաշատի բաժնի քրեական հետախուզության բաժանմունքի պետ Հովհաննես Մովսիսյանի միջև: Այդ ընթացքում Գրիշա Վիրաբյանը աշխատասենյակի սեղանի վրա դրված բջջային հեռախոսի լիցքավորման սարքով հարվածել ու վնասել է Հովհաննես Մովսիսյանի աջ աչքը:

¹³ Տե՛ս քրեական գործ, հատոր 4, թերթեր 288-289:

Գրիշա Վիրաբյանի նշված գործողության համար վրեժխնդիր լինելու անձնական շարժառիթով և մարմնական վնասվածք պատճառելու դիտարկումներով, ՀՀ քրեական դատարանության օրենսգրքի 56-րդ, 57-րդ հոդվածների համաձայն հետաքննության մարմնի աշխատակից, ոստիկանության Արտաշատի բաժնի քրեական հետախուզության բաժանմունքի օպեր լիազոր Արմեն Արսենյանը նույն բաժնի քրեական հետախուզության բաժանմունքի պետ Հովհաննես Մովսիսյանի հետ՝ գիրակցելով և լրացնելով մեկը մյուսի գործողությունները, «Ոստիկանության մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածով նախատեսված ֆիզիկական ուժ գործադրելու հիմքերի բացակայության պայմաններում, ակնհայտորեն դուրս գալով իրենց լիազորությունների շրջանակից և, տվյալ դեպքում չունենալով ֆիզիկական ուժ գործադրելու լիազորություն, բռնություն գործադրելով Գրիշա Վիրաբյանի նկատմամբ, բաժնի աշխատասենյակներից մեկում ծեծի են ենթարկել նրան՝ ձեռքերով ու ոտքերով բազմաթիվ հարվածներ հասցնելով ամորձիներին և մարմնի այլ մասերին՝ վերջինիս առողջությանը պատճառելով միջին ծանրության մարմնական վնասվածք՝ փոշտի հետտրավմատիկ հեմատոմայի, ձախակողմյան հեմատոցելի, ձախ ամորձու պատռվածքի, աջ սրունքի արյունազեղման ձևով:

Արսեն Արսենյանի վերոհիշյալ գործողությունների հետևանքով Գրիշա Վիրաբյանին պատճառվել է ֆիզիկական վնաս՝ առողջության միջին ծանրության աստիճանի մարմնական վնասվածքի ձևով, էական վնաս է պատճառվել նրա Իրավունքներին ու օրինական շահերին, այն է՝ խախտվել է Սահմանադրությամբ երաշխավորված խոշտանգումների և անմարդկային վերաբերմունքի ենթարկվելու անթույլատրելիության նրա իրավունքը, էական վնաս է պատճառվել նաև պետության օրինական շահերին, քանի որ հեղինակագրվել է ՀՀ ոստիկանությունը¹⁴:

III. Սույն գործով ստորադաս դատարանների դիրքորոշումները.

17. Առաջին ատյանի դատարանը 2019 թվականի փետրվարի 22-ի դատավճռով արձանագրել է, որ. «(...) Դատարանն ապացուցված է համարում, որ Հովհաննես Մովսիսյանի ու Արմեն Արսենյանի վերոհիշյալ գործողությունների հետևանքով Գրիշա Վիրաբյանին պատճառվել է ֆիզիկական վնաս՝ առողջության միջին ծանրության աստիճանի մարմնական վնասվածքի ձևով, էական վնաս է պատճառվել նրա իրավունքներին ու օրինական շահերին, այն է՝ խախտվել է Սահմանադրությամբ երաշխավորված խոշտանգումների և անմարդկային վերաբերմունքի ենթարկվելու անթույլատրելիության նրա իրավունքը, էական վնաս է պատճառվել նաև պետության օրինական շահերին, քանի որ հեղինակագրվել է ՀՀ ոստիկանությունը:

Այսպիսով, դատարանը գտնում է, որ ամբաստանյալ Հովհաննես Նեգուսի Մովսիսյանը որպես պաշտոնատար անձ՝ դիտարկումներով կատարել է բռնությամբ զուգորդված այնպիսի գործողություններ, որոնք ակնհայտորեն դուրս են եկել իր լիազորությունների շրջանակից և էական վնաս պատճառել անձի իրավունքներին ու պետության օրինական շահերին, որպիսի արարքի համար նա պետք է պատասխանատվության ենթարկվի ՀՀ քրեական օրենսգրքի 309-րդ հոդվածի 2-րդ մասով:

Ամբաստանյալ Արմեն Ռազմիկի Արսենյանը որպես պաշտոնատար անձ՝ դիտարկումներով կատարել է բռնությամբ զուգորդված այնպիսի գործողություններ, որոնք ակնհայտորեն դուրս են եկել իր լիազորությունների շրջանակից և էական վնաս պատճառել անձի

¹⁴ Տե՛ս քրեական գործ, հատոր 4, թերթեր 289-290:

իրավունքներին ու պետության օրինական շահերին, որպիսի արարքի համար նա պետք է պատասխանատվության ենթարկվի ՀՀ քրեական օրենսգրքի 309-րդ հոդվածի 2-րդ մասով:
(...)

Դատարանն անդրադառնալով կատարածի համար Հովհաննես Մովսիսյանին և Արմեն Արսենյանին քրեական պատասխանատվության ենթարկելու հարցին, արձանագրում է, որ՝ (...) [այն] [պատճառաբանությունը], որ պետք է (...) ՄԻԵԴ-ի [«Մոկանոն ընդդեմ Ռուսիանիայի» գործով (գանգապնեղ թիվ 10865/09, 45886/07 և 32431/08)] որոշմամբ հայտնված դիրքորոշման հիմքով քրեական գործի վարույթը շարունակել, ինչը և կատարվել է նախաքննական մարմնի կողմից, և այն դրվել է նաև մեղադրական եզրակացության հիմքում, դատարանն անթույլատրելի է համարում, քանի որ ինչպես դատախազի որոշմամբ, այնպես էլ նախաքննական մարմնի կողմից չեն պատճառաբանվել, թե նշված որոշմամբ արտահայտված դիրքորոշումն ինչ չափով և ինչ հիմքերով են կիրառելի Հայաստանի Հանրապետությունում նախաքննություն կատարելու համար և ինչու չպետք է կիրառվի ՀՀ ներպետական օրենքը՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետն ու ՀՀ քրեական օրենսգրքի 75-րդ հոդվածը:

Դատարանը գտնում է, որ նախաքննական մարմնի կողմից չհիմնավորված կերպով է կիրառվել ՄԻԵԴ-ի նշված որոշումը, որի կիրառմամբ անտեսվել են հետևյալ հանգամանքները, այսպես.

ՄԱԿ 1994 դեկտեմբերի 10-ի «խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի ու պատժի դեմ» Կոնվենցիան, որին միացել է նաև Հայաստանի Հանրապետությունը, չի պարունակում որևէ դրույթ այն մասին, որ վաղեմության ժամկետներ կիրառելն արգելվում է և միայն խոշտանգումների դեմ պայքարի կոմիտեն Կոնվենցիայի իր մեկնաբանություններում, որոնք, ըստ էության, կրում են խորհրդավարական բնույթ, մասնավորապես Հայաստանի Հանրապետության համար 2012 թվականին և 2017 թվականին կատարված մոնիթորինգի և դիտարկումների արդյունքով (...) ավստասանք է հայտնում առ այն, որ թեև նախորդ դիտարկումներում, առաջարկություններում արձանագրել էր (տես՝ CAT/C/ARM/CO/3, կետ 10), սակայն դեռևս գործող օրենսդրությունը ամեն դեպքում պահպանում է վաղեմության ժամկետները (...) խոշտանգումների գործերով, և անձինք, ովքեր դատապարտվել են այդ հոդվածներով օգտվում են համաներման կիրառումից: (...): Թերևս 2012 թվականի մոնիթորինգից հետո խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքին վերաբերվող օրենսդրական բացը լրացնելու համար ՀՀ քրեական օրենսգրքում կատարվել է լրացում և սահմանվել է առանձին հոդված խոշտանգման վերաբերյալ՝ 309.1-րդ հոդվածը՝ այսինքն Հայաստանի Հանրապետության օրենսդիր մարմինը, կարևորելով կոմիտեի դիտարկումներն ու առաջարկները, ՀՀ քրեական օրենսգրքի 309-րդ հոդվածից բացի լրացում է կատարել ՀՀ քրեական օրենսգրքում՝ 309.1 խոշտանգում հոդվածով, որն իր դիսպոզիցիայով էապես փոխարկվում է ՀՀ քրեական օրենսգրքի 309-րդ հոդվածից, այսինքն՝ սահմանվել է նոր հանցատեսակ: Ընդ որում, օրենսդիր մարմինը, սահմանելով խոշտանգման մասին հոդվածը, որևէ անդրադարձ չի կատարել ՀՀ քրեական օրենսգրքի 75-րդ հոդվածին և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետին, այսինքն՝ դրանցում որևէ փոփոխություն չի կատարել այն դեպքում, որ ՀՀ քրեական օրենսգրքի 75-րդ հոդվածում սպառնիչ թվարկված են հանցագործության այն տեսակները, որոնց նկատմամբ վաղեմության ժամկետները կիրառելի չեն կամ կիրառելի են սահմանափակումով, ինչը նշանակում է, որ օրենսդրական որևէ սահմանափակում չկա ՀՀ քրեական օրենսգրքի 75-րդ հոդվածում չթվարկված մյուս հանցագործությունների նկատմամբ,

այդ թվում՝ խոշտանգում կատարած անձանց նկատմամբ վաղեմության ժամկետը կիրառելու և այդ հիմքով քրեական հետապնդումը դադարեցնելու, քրեական գործի վարույթը կարճելու կամ վաղեմության ժամկետն անցնելու հիմքով քրեական պատասխանատվությունից ազատելու համար:

Միաժամանակ պետք է նշել, որ Հայաստանի Հանրապետության կողմից ստորագրվել է մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին Կոնվենցիան, որում որևէ սահմանափակում չկա խոշտանգումներ և այլ դաժան, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունք ցուցաբերած անձանց կողմից հանցագործություն կատարելու դեպքում նրանց նկատմամբ վաղեմության ժամկետներ, ներում կամ համաներում չկիրառելու համար և միայն այն, որ ՄԻԵԴ-ն իր որոշմամբ այդ մասին՝ վաղեմության ժամկետն անցնելու հիմքով քրեական հետապնդումը չդադարեցնելու, անձի նկատմամբ ներում կամ համաներում չկիրառելու համար դիրքորոշում է հայտնել, դեռևս բավարար չէ, որ այդ որոշմամբ արտահայտված դիրքորոշումն ենթակա լինի պարտադիր կատարման Հայաստանի Հանրապետությունում, քանի որ ՀՀ իրավական համակարգ ինկորպորացված չէ և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից կայացված որոշումները, ինքնաբերաբար չեն ինկորպորացվում ՀՀ իրավական համակարգ և այդ դիրքորոշումը կիրառելու համար անհրաժեշտ է կամ օրենսդրական միջամտություն՝ ներպետական օրենքում՝ ՀՀ քրեական օրենսգրքում փոփոխության կատարում կամ գոնե բարձրագույն դատական մարմնի կողմից Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային պրակտիկայի լույսի ներքո նախադեպային որոշման կայացմամբ այն համապարտադիր վարքագծի կանոնի ճանաչում: Տվյալ դեպքում առկա չէ ոչ մեկը, ոչ էլ մյուսը, և վաղեմության ժամկետն անցնելու հիմքով պայմանավորված քրեական պատասխանատվությունից ազատելու ներպետական իրավական նորմի՝ ՀՀ քրեական դատավարության և ՀՀ քրեական օրենսգրքերի նշված հոդվածների առկայությունը տվյալ պայմաններում ՀՀ իրավական համակարգին հայտնի միակ կիրառման ենթակա վարքագծի կանոնն է: Ճիշտ է, Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին 1950թ.-ի Եվրոպական կոնվենցիայի դրույթները վավերացման փաստի ուժով պարտադիր են Հայաստանի Հանրապետության համար, սակայն Մարդու իրավունքների եվրոպական դատարանի որոշումները որևէ իրավադրույթով չեն կարող հավասարեցվել այդ միջազգային փաստաթղթերի մեջ ամրագրված հոդվածներին և ճանաչվել դրանց ուղղակի կիրառելիությունը: Դատարանը չի կարող նաև առաջնորդվել Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին 1950թ.-ի Եվրոպական կոնվենցիայի 46-րդ հոդվածով և առաջնայնությունը տալ նախադեպին, քանի որ *MOCANU AND OTHERS v. ROMANIA* (Applications nos. 10865/09, 45886/07 and 32431/08) գործի կողմ Հայաստանի Հանրապետությունը չի հանդիսացել:

Պետք է նշել, որ ըստ ՀՀ սահմանադրության 5-րդ հոդվածի 3-րդ մասի՝ «ՀՀ վավերացված պայմանագրերի և օրենքների նորմերի միջև հակասության դեպքում կիրառվում են միջազգային պայմանագրերի նորմերը»: Տվյալ դեպքում ՀՀ քրեական օրենսգրքի 75-րդ հոդվածի և մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին Կոնվենցիայի նորմերի միջև ուղղակի հակասությունը բացակայում է:

Դատարանը նաև արձանագրում է, որ եվրոպական դատարանի վերը նշված որոշումն անվերապահ կիրառելով՝ անտեսվել է՝ ինչպես ՀՀ սահմանադրությամբ սահմանված անձի իրավիճակը վարթարացնող օրենքների ու իրավական ակտերի հետադարձ ուժ չունենալու մասին դրույթը, այնպես էլ ՀՀ քրեական օրենսգրքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջները, այդ թվում նաև մարդու իրավունքների ու հիմնարար ազատությունների պաշտպանության

մասին Կոնվենցիայով սահմանված անձի իրավունքների ու հիմնարար ազատությունների պաշտպանության մասին Կոնվենցիայի պահանջները:

(...)

Այս պարագայում եթե նույնիսկ ընդունենք, որ եվրոպական դատարանի որոշումն կիրառելի է Հայաստանի Հանրապետությունում, ապա նախաքննական մարմինը քննության առարկա չի դարձրել այն հանգամանքը, թե այդ որոշմամբ արտահայտված դիրքորոշման կիրառման դեպքում արդյոք չեն խախտվում մեղադրյալներ Հովհաննես Նեգուսի Մովսիսյանի և Արմեն Ռազմիկի Արսենյանի իրավունքներն ու հիմնարար ազատությունները և օրինական շահերը, քանի որ նրանց կողմից հանցագործությունը կատարվել է դեռևս 2004 թվականի ապրիլ ամսին, իսկ ՄԻԵԴ-ի որոշումը կայացվել է 2014 թվականի սեպտեմբերի 17-ին և եթե նշված որոշմանը, որը անձի վիճակը վարթարացնող իրավական ակտ է, հետադարձ ուժ է տրվում, արդյոք այդ դեպքում չեն խախտվում ՀՀ քրեական օրենսգրքի 13-րդ հոդվածի 2-րդ մասը և Կոնվենցիայով սահմանված անձի իրավունքներն ու հիմնարար ազատությունները: Դատարանը գտնում է, որ նախաքննական մարմնի կողմից ՄԻԵԴ-ի որոշումը կիրառելով վերը նշված հիմքով նույնպես խախտվել են ամբաստանյալներ Հովհաննես Նեգուսի Մովսիսյանի և Արմեն Ռազմիկի Արսենյանի իրավունքներն ու հիմնարար ազատությունները, այսինքն ՄԻԵԴ-ի որոշմամբ արտահայտված դիրքորոշումը սույն քրեական գործին վերաբերելի չէ»¹⁵:

18. Վերաքննիչ դատարանը, 2019 թվականի հուլիսի 4-ի որոշմամբ Առաջին աստիճանի դատարանի՝ 2019 թվականի փետրվարի 22-ի դատավճիռը թողնելով օրինական ուժի մեջ, գտել է, որ. «(...) [Ա]մբաստանյալներ Հովհաննես Մովսիսյանին և Արմեն Արսենյանին ՀՀ քրեական օրենսգրքի 75-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի հիման վրա վաղեմության ժամկետներն անցնելու հիմքով ՀՀ քրեական օրենսգրքի 309-րդ հոդվածի 2-րդ մասով կատարված արարքների համար քրեական պատասխանատվությունից ազատելու վերաբերյալ Արարարի և Վայոց Ձորի մարզերի ընդհանուր իրավասության դատարանի պարճառաբանությունները օրինական և հիմնավորված են, իսկ ՀՀ օրենսդրության վերոնշյալ պահանջների անտեսմամբ ամբաստանյալների նկատմամբ վաղեմության ժամկետների չկիրառումը կհանգեցնի նրանց իրավունքների և օրինական շահերի խախտման և կարող է առաջացնել իրավական անորոշություն ու որակվել որպես կամայականություն»¹⁶:

IV. Սույն գործով Վճռաբեկ դատարանի դատական նիստում կողմերի հայտնած դիրքորոշումները.

19. Վճռաբեկ դատարանի՝ 2021 թվականի հունվարի 27-ի դատական նիստի ընթացքում պատասխանելով դատարանի հարցերին, ՀՀ գլխավոր դատախազության՝ մարդու դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչության ավագ դատախազ Ա.Շահբազյանը հայտնել է, որ արարքը կատարելու պահին խոշտանգման հանցակազմը ՀՀ քրեական օրենսգրքով նախատեսված չի եղել, ուստի Հ.Մովսիսյանին և Ա.Արսենյանին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 309-րդ հոդվածով, այն է՝ պաշտոնական լիազորություններն անցնելը, որի հատկանիշները նույնականացվում են խոշտանգման հետ: Պատասխանելով դատարանի այն հարցերին, թե արդյոք ներպետական օրենսդրությունը նախատեսում է կոնկրետ արարքի նկատմամբ վաղեմության ժամկետ կիրառելու արգելք, և թե արդյոք վաղեմության ժամկետի կիրառումը չի հանգեցնի Հ.Մովսիսյանի և Ա.Արսենյանի

¹⁵ Տե՛ս քրեական գործ, հատոր 5, թերթեր 236-257:

¹⁶ Տե՛ս քրեական գործ, հատոր 6, թերթեր 89-168:

իրավունքների խախտման՝ դատախազը վկայակոչել է *Արդուլսամետր Յամանն ընդդեմ Թուրքիայի և Օկկային ընդդեմ Թուրքիայի* գործերով Եվրոպական դատարանի արտահայտած դիրքորոշումները և նշել, որ առկա են միջազգային իրավունքի նորմեր, որոնք արգելք են սահմանել վաղեմության ժամկետների կիրառման համար կոնկրետ ժամանակահատվածում:

19.1. Նույն նիստում, ամբաստանյալների շահերի պաշտպան Հ.Սուքիասյանը, դատարանի հարցերին պատասխանելով, նշել է, որ դատախազը վկայակոչում է միջազգային պայմանագրեր, բայց Հայաստանի Հանրապետությունը չունի կնքած միջազգային պայմանագիր, որի դրույթները գործում են մեր ներպետական օրենսդրության փոխարեն: Պաշտպանը հավելել է, որ առկա է Եվրոպական դատարանի դիրքորոշում, որը խորհրդատվական բնույթ ունի: Վկայակոչելով օրինականության սկզբունքը՝ պաշտպանը նշել է, որ 2004 թվականի դրությամբ Հայաստանի Հանրապետությունում խոշտանգումը հանցագործություն չի եղել, և խոշտանգման դեպքերով վաղեմության կիրառման արգելք չի եղել: Պաշտպանը նշել է, որ 2014 թվականի Եվրոպական դատարանի վճռի գործողությունը չպետք է տարածվի դրանից 10 տարի առաջ տեղի ունեցած դեպքի վրա:

19.2. Ամբաստանյալները դատական նիստի ընթացքում դիրքորոշում չեն արտահայտել:

19.3. Վճռաբեկ դատարանի՝ 2023 թվականի դեկտեմբերի 22-ի դատական նիստի ընթացքում տուժող Գ.Վիրաբյանը, անդրադառնալով դատարանի այն հարցին, թե ինչ դիրքորոշում ունի բողոքարկվող դատական ակտերը բեկանելու և ամբաստանյալների նկատմամբ պատիժ նշանակելու պահանջի առնչությամբ, պատասխանել է, որ ներել է ամբաստանյալներին, վերջիններիս նկատմամբ որևէ բողոք և պահանջ չունի, թողնում է դատարանի հայեցողությանը:

V. Մարդու իրավունքների եվրոպական դատարանի Մեծ պալատի խորհրդատվական կարծիքը.

20. Վճռաբեկ դատարանի դիմումի հիման վրա ստացված՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի Մեծ պալատի Խորհրդատվական կարծիքի ուղենիշային նշանակության հաշվառմամբ, Վճռաբեկ դատարանը հարկ է համարում անդրադարձ կատարել Խորհրդատվական կարծիքում ներկայացված եզրահանգմանն ու դրա հիմքում ընկած փաստարկումներին:

20.1. Մեծ պալատն իր խորհրդատվական կարծիքում հիմնվել է ինչպես խոշտանգման արգելքի համընդհանուր պարտադիր նորմի և պետությունների համապատասխան պարտավորությունների միջազգային իրավական բովանդակության բացահայտման, այնպես էլ «*չկա հանցագործություն և պատիժ, եթե այն սահմանված չէ օրենքով*» սկզբունքի համատեքստում քրեական օրենքի կանխատեսելիության պահանջի վերլուծության վրա:

20.2. Մասնավորապես, նկատի ունենալով այն հանգամանքը, որ Եվրոպական դատարանին ուղղված դիմումը ձևակերպելիս Վճռաբեկ դատարանը հիմնվել է Եվրոպական կոնվենցիայի 3-րդ հոդվածի վրա, նախքան նույն կոնվենցիայի 7-րդ հոդվածին հղումով տրված կոնկրետ հարցին անդրադառնալը, Եվրոպական դատարանը նպատակահարմար է համարել վերահաստատել իր նախադեպային իրավունքը 3-րդ հոդվածի ներքո՝ վաղեմության ժամկետների մասով՝ այնքանով, որքանով դա առնչվում է Խորհրդատվական կարծիքին՝ արձանագրելով հետևյալը. «*Դատարանն ի սկզբանե նշում է, որ այն ընդունել է, որ միջազգային իրավունքում խոշտանգման արգելքը ստացել է jus cogens կամ համընդհանուր պարտադիր նորմի կարգավիճակ (տես՝ Ալ-Ադսանին ընդդեմ Միացյալ Թագավորության [ՄՊ] [Al-Adsani v. the United Kingdom [GC]], թիվ 35763/97, §§ 60-61, ՄԻԵԴ 2001-XI): Բացի այդ, կարելի է*

հիշեցնել, որ Մոկանուն և այլք *[Mocanu and Others v. Romania]* (...) *[GC]* *[ՄՊ]*, թիվ 10865/09 և ևս 2-ը՝ գլխավոր գործով (...) վճռում (...) Դատարանը վճռել է հետևյալը.

«(...) *[Պ]* երական պաշտոնատար անձի կողմից կատարված խոշտանգմանը կամ վատ վերաբերմունքին վերաբերող գործերով քրեական վարույթը չպետք է դադարեցվի վաղեմության ժամկետի հիմքով, և նաև, որ այդ գործերով չպետք է թույլատրվեն համաներումների ու ներումների կիրառումը (տես Աբդուլսամետ Յամանն ընդդեմ Թուրքիայի *[Abdulsamet Yaman v. Turkey]*, թիվ 32446/96, § 55, 2004 թվականի նոյեմբերի 2), (...) *[Մոկանուն և այլք ընդդեմ Ռումինիայի]* *[Mocanu and Others v. Romania]* գործը *[GC]* *[ՄՊ]*, թիվ 10865/09 և ևս 2-ը, § 70], և *[«1989թ. դեկտեմբերի 21» ասոցիացիան և այլք ընդդեմ Ռումինիայի]* *[Association «21 December 1989» and Others v. Romania]*, թիվ 33810/07 և 18817/08, § 144, 2011 թվականի մայիսի 24]): Ավելին, վաղեմության ժամկետը կիրառելու կարգը պետք է համապետելի լինի Կոնվենցիայի պահանջներին: Հետևաբար դժվար է ընդունել ոչ ճկուն վաղեմության ժամկետներ՝ առանց բացառությունների ընդունման (տես *mutatis mutandis* (համապատասխան փոփոխություններով) Ռոմանն ընդդեմ Ֆինլանդիայի *[Roman v. Finland]*, թիվ 13072/05, § 50, 2013 թվականի հունվարի 29)»:

Փաստերի հիման վրա գտնելով, որ համապատասխան քննությունը հիմնականում կարճվել է քրեական պատասխանատվության վաղեմության ժամկետն անցնելու հետևանքով՝ Դատարանը վճռել է, որ դժվար է համարել, որ (2-րդ հոդվածից և) 3-րդ հոդվածից բխող ընթացակարգային պարտավորությունները կատարվել են այն դեպքում, երբ քննությունը կարճվել է իշխանությունների անգործության հետևանքով առաջացող՝ քրեական պատասխանատվության վաղեմության ժամկետը լրանալու հիմքով (տես վերևում հիշատակված՝ Մոկանուն և այլք գործը, §346):

Հետևաբար Դատարանը գտել է, որ 3-րդ հոդվածով նախատեսված ընթացակարգային երաշխիքները խախտվել են այն դեպքերում, երբ վաղեմության ժամկետները կիրառվել են իշխանությունների կողմից արագ և պարզաճ ջանասիրությամբ չգործելու արդյունքում (տես, ի թիվս այլ վճիռների, Բատին և այլք ընդդեմ Թուրքիայի *[Bati and Others v. Turkey]*, թիվ 33097/96 և 57834/00, §§ 97 և 145-147, ՄԻԵԴ 2004-IV (քաղվածքներ). վերևում հիշատակված՝ Աբդուլսամետ Յամանի գործը § 59, Եսիլը և Սեվիմն ընդդեմ Թուրքիայի *[Yesil and Sevim v. Turkey]*, թիվ 34738/04, §§ 38-42, 2007 թվականի հունիսի 5, Էրդողան Յիլմազը և այլք ընդդեմ Թուրքիայի *[Erdogan Yilmaz and Others v. Turkey]*, թիվ 19374/03, § 57, 2008 թվականի հոկտեմբերի 14, Էրդալ Ասլանն ընդդեմ Թուրքիայի *[Erdal Aslan v. Turkey]*, թիվ 25060/02 և 1705/03, §§ 75-79, 2008 թվականի դեկտեմբերի 2, Պադուրեթը ընդդեմ Մոլդովայի *[Padureț v. Moldova]*, թիվ 33134/03, § 75, 2010 թվականի հունվարի 5, Կառազյոզը և այլք ընդդեմ Թուրքիայի *[Karagoz and Others v. Turkey]*, թիվ 14352/05 և ևս 2-ը, §§ 53-55, 2010 թվականի հուլիսի 13, Սավինն ընդդեմ Ուկրաինայի *[Savin v. Ukraine]*, թիվ 34725/08, §§ 70-71, 2012 թվականի փետրվարի 16, Ուգյուրն ընդդեմ Թուրքիայի *[Ugur v. Turkey]*, թիվ 37308/05, § 105, 2015 թվականի հունվարի 13 և Բարովոլձն ընդդեմ Ռուսաստանի, թիվ 9183/09, § 42, 2021 թվականի հունիսի 15):

Հարկ է նաև հիշեցնել, որ Դատարանը գտել է, որ տեղի է ունեցել 3-րդ հոդվածի խախտում այն դեպքում, երբ քրեական հետապնդման համար վաղեմության ժամկետը լրացել է խոշտանգման բնույթի արարքները կամ վատ վերաբերմունքի այլ ձևեր ներպետական իշխանությունների կողմից անհամարժեքորեն պակաս ծանր հանցանք որակելու հետևանքով, ինչը հանգեցրել է ավելի կարճ վաղեմության ժամկետների կիրառման և հանցանքը կատարող անձին թույլ է տրվել խուսափել քրեական պատասխանատվությունից (տես, ի թիվս այլ

վճիռների, վերևում հիշատակված՝ Պաղարեպի գործը, § 75, Վելեվն ընդդեմ Բուլղարիայի [Velev v. Bulgaria], թիվ 43531/08, § 61, 2013 թվականի ապրիլի 16, Օ.Ռ.-ն և Լ.Ռ.-ն ընդդեմ Մոլդովայի Հանրապետության [O.R. and L.R. v. the Republic of Moldova], թիվ 24129/11, §§ 73-74, 2018 թվականի հոկտեմբերի 30):

Ավելին, մի քանի առիթներով Դատարանը գրել է, որ 3-րդ հոդվածով նախատեսված երաշխիքները չեն ապահովվել հիմնականում ներպետական իրավունքում խոշտանգում համարվող արարքների պարզաճ պարիժ ապահովող համապատասխան դրույթների բացակայության պարճառով (տես Չեստարոն ընդդեմ Իտալիայի [Cestaro v. Italy], թիվ 6884/11, § §§ 218-226, 2015 թվականի ապրիլի 7, Աջոլինան և այլք ընդդեմ Իտալիայի [Azzolina and Others v. Italy], թիվ 28923/09 և 67599/10, § 149-165, 2017 թվականի հոկտեմբերի 26, Չիրինոն և Ռեննեն ընդդեմ Իտալիայի [Cirino and Renne v. Italy], թիվ 2539/13 և 4705/13, §§ 106-112, 2017 թվականի հոկտեմբերի 26, և Բլեյրը և այլք ընդդեմ Իտալիայի [Blair and Others v. Italy], թիվ 1442/14 և ևս 2-ը, § 118-134, 2017 թվականի հոկտեմբերի 26): Այդ առնչությամբ Դատարանը նաև նշել է, որ տվյալ հանցանքների նկատմամբ կիրառվել է վաղեմության ժամկետների մասին դրույթը, «մի հանգամանք, որն ինքնին [հակասում է] խոշտանգումներին կամ վատ վերաբերմունքի այլ ձևերին վերաբերող նախադեպային իրավունքին» (տես վերևում հիշատակված՝ Աբդուլսամեթ Յամանի գործը, § 55, վերևում հիշատակված՝ Չեստարոյի գործը, § 208, վերևում հիշատակված՝ Չիրինոյի և Ռեննեի գործը, § 110, և վերևում հիշատակված՝ Բլեյրը և այլք գործը, § 118-134):

Դատարանը հաշվի է առնում այն դժվարությունները, որոնք կարող են առաջանալ խոշտանգումների կամ վատ վերաբերմունքի այլ ձևերի գործերով վճիռները կատարելու ընթացքում՝ անդամ պետությունների ներպետական համակարգերում վաղեմության ժամկետի վերաբերյալ դրույթի առկայության պարճառով: Այնուամենայնիվ, այն նշում է, որ մի շարք անդամ պետություններ ձեռնարկել են փոփոխություններ՝ այս խնդիրը լուծելու և այդպիսով նման արարքներ գործող պետական պաշտոնատար անձանց անպարճելիությունը կանխելու համար: Այսպես՝ մի քանի անդամ պետություններ, այդ թվում՝ Թուրքիան, Մոլդովայի Հանրապետությունը, Ռումինիան և այժմ Հայաստանը փոփոխություններ են կատարել իրենց օրենսդրության մեջ՝ չեղարկելով վաղեմության ժամկետի կիրառումը խոշտանգման բնույթի արարքների նկատմամբ: Այլ երկրներում, ինչպես օրինակ՝ Իտալիայում, որպեսզի քրեական վարույթների իրականացումն անհնար չդառնա վաղեմության ժամկետները լրանալու հիմքով, 2020 թվականին օրենքում կատարվել է փոփոխություն, որով նախատեսվում է, որ առաջին արյանի դատարանի վճիռը հետո վաղեմության ժամկետը կասեցվում է քրեական վարույթի մնացած ամբողջ ժամանակահատվածում:

Դատարանը նշում է, որ Վիրաբյանի գործով (վերևում հիշատակված) այն գրել է, որ տեղի է ունեցել 3-րդ հոդվածի խախտում այն հիմքով, որ դիմումատու ենթարկվել է խոշտանգման, և որ իշխանությունները չեն իրականացրել ենթադրյալ վատ վերաբերմունքի արդյունավետ քննություն: Այդուհանդերձ, Դատարանի կարծիքով՝ անընդունելի կլինի, եթե ազգային իշխանությունները Կոնվենցիայի 3-րդ հոդվածով նախատեսված իրենց դրական պարտավորությունները չկատարելու համար հատուցեն Կոնվենցիայի 7-րդ հոդվածի երաշխիքների հաշվին, որոնցից մեկն այն է, որ քրեական իրավունքը չպետք է մեկնաբանվի լայնորեն՝ ի վնաս մեղադրյալի (տես Մյոմյուն ընդդեմ Բուլղարիայի [Myumyuan v. Bulgaria], թիվ 67258/13, § 76, 2015 թվականի նոյեմբերի 3, վերջին պահանջի մասով հղումներ կատարելով Բաշկայան և Օկսուողլուն ընդդեմ Թուրքիայի [ՄԴ] [Başkaya and Okşuoğlu v. Turkey [GC]] գործին, թիվ 23536/94 և 24408/94, § 36, ՄԻԵԴ 1999 IV. (...)) [Կոնունովն ընդդեմ Լատվիայի

[ՄՊ] [Kononov v. Latvia [GC]], թիվ 36376/04, ՄԻԵԴ 2010] գործը, § 185 և Դել Ռիո Պրադան ընդդեմ Իսպանիայի [ՄՊ] [Del Rio Prada v. Spain [GC]], թիվ 42750/09, § 78, ՄԻԵԴ 2013):

Մասնավորապես և սույն խորհրդարարական կարծիքի նպատակներով հարկ է նշել, որ Դատարանի նախադեպային իրավունքի ներկա վիճակից չի բխում, որ Կոնվենցիայի համաձայն Պայմանավորվող կողմից պահանջվում է չկիրառել կիրառելի վաղեմության ժամկետը և այդպիսով արդյունավետորեն վերականգնել լրացած վաղեմության ժամկետը: Վարույթը վերսկսելու համարեքստում Դատարանը ճանաչել է, որ կարող են լինել իրավիճակներ, երբ դե յուրե կամ դե ֆակտո հնարավոր չէ վերսկսել այն միջադեպերի քրեական գործով քննությունները, որոնք կապված են Դատարանի կողմից քննվող գանգապների հետ: Նման իրավիճակներ կարող են առաջանալ, օրինակ, այն գործերի դեպքում, երբ հանցանքը կատարող անձինք արդարացվել են, և նրանց նկատմամբ չի կարող իրականացվել դատական քննություն նույն հանցանքի համար, կամ այն գործերի դեպքում, երբ քրեական վարույթը չի կարող իրականացվել՝ ազգային օրենսդրությամբ նախատեսված վաղեմության ժամկետը լրանալու հիմքով: Իսկապես, վաղեմության ժամկետն անցնելու հետևանքով կարճված քրեական վարույթները վերսկսելը կարող է առաջացնել խնդիրներ իրավական որոշակիության իմաստով և հետևաբար կարող է ազդել մեղադրյալի՝ Կոնվենցիայի 7-րդ հոդվածով նախատեսված իրավունքների վրա (տես *Տաշդեմիրն ընդդեմ Թուրքիայի (որոշում) [Taşdemir v. Turkey (dec.)]*, թիվ 52538/09, § 14, 2019 թվականի մարտի 12)»¹⁷:

20.3. Անդրադառնալով Եվրոպական կոնվենցիայի 7-րդ հոդվածին՝ Եվրոպական դատարանը վերահաստատել է իր նախադեպային իրավունքի վերաբերելի ընդհանուր սկզբունքները՝ այդ հոդվածի շրջանակներում իրավական որոշակիության և կանխատեսելիության պահանջների մասով: Մասնավորապես, Եվրոպական դատարանն ընդգծել է, որ. «(...) [Կ]անխատեսելիության հասկացության շրջանակը զգալիորեն կախված է խնդրո առարկա օրենքի բովանդակությունից, այն ոլորտից, որն այն պետք է ընդգրկի, և այն անձանց թվից և կարգավիճակից, որոնց այն ուղղված է: Օրենքը, սակայն, կարող է համարվել որպես կանխատեսելիության պահանջը բավարարող, նույնիսկ եթե տվյալ անձը ստիպված է համապատասխան իրավաբանական խորհրդարարություն ստանալ՝ գնահատելու համար (այնքանով, որքանով ողջամտորեն հնարավոր է տվյալ հանգամանքներում) այն հետևանքները, որոնց կարող է հանգեցնել տվյալ գործողությունը: Սա հարկապես վերաբերում է մասնագիտական գործունեություն իրականացնող անձանց, որոնք սովոր են մեծ զգուշավորություն ցուցաբերել իրենց աշխատանքը կատարելիս: Այս առումով ակնկալվում է, որ վերջիններս հատուկ ուշադրությամբ պետք է գնահատեն այն ռիսկերը, որոնք ի հայտ են գալիս նմանատիպ գործողությունների արդյունքում (տես Վասիլիաուսկասն ընդդեմ Լիտվայի [ՄՊ] [Vasiliauskas v. Lithuania [GC]], թիվ 35343/05, § 157, ՄԻԵԴ 2015, և թիվ P16-2019-001 խորհրդարարական կարծիքը, § 61):

(...)

Դատարանը նաև վերահաստատում է, որ մի քանի առիթներով այն վճռել է, որ վաղեմությունը կարող է սահմանվել որպես հանցանքը կատարած անձի՝ հանցանքի կատարման օրվանից որոշակի ժամկետը լրանալուց հետո քրեական հետապնդման չենթարկվելու կամ չդատապարտվելու՝ օրենքով սահմանված իրավունք: Վաղեմության ժամկետները, որոնք Պայմանավորվող պետությունների ներպետական իրավական համակարգերին բնորոշ հատկանիշ են, ծառայում են մի քանի նպատակների, այդ թվում՝

¹⁷ Տես Մարդու իրավունքների Եվրոպական դատարանի Մեծ պալատի խորհրդատվական կարծիքը, կետեր 59-66:

իրավական որոշակիության և վերջնականության ապահովմանը, մեղադրյալի իրավունքների խախտումների կանխարգելմանը, ինչը կարող է խաթարվել, եթե դատարաններից պահանջվի որոշումներ կայացնել այնպիսի ապացույցների հիման վրա, որոնք ժամանակի ընթացքում կարող են դառնալ ոչ ամբողջական (տես (...) [Քոյեմին և այլք ընդդեմ Բելգիայի [Coume and Others v. Belgium], թիվ 32492/96, 32547/96, 32548/96, 33209/96 և 33210/96, ՄԻԵԴ 2000-VII.], § 146):

Վերոնշյալ գործում Դատարանը կոչված է եղել որոշել, թե արդյոք դեռևս չլրացած վաղեմության ժամկետները երկարաձգելու մասով օրենսդրական փոփոխություններն առաջացրել են խնդիրներ 7-րդ հոդվածի մասով: Դատարանն ընդունում է, որ վաղեմության ժամկետի երկարաձգումն իրապես երկարաձգել է այն ժամանակահատվածը, որի ընթացքում տվյալ հանցանքների մասով կարող են հարուցվել քրեական հետապնդումներ, և հետևաբար բացասաբար է ազդել դիմումատուների վիճակի վրա՝ մասնավորապես խաթարելով նրանց ակնկալիքները: Այդուհանդերձ, սա չի հանգեցնում 7-րդ հոդվածով երաշխավորված իրավունքների խախտման, քանի որ այդ դրույթը չի կարող մեկնաբանվել որպես դատավարական իրավունքի անմիջապես կիրառման միջոցով վաղեմության ժամկետների երկարաձգումն արգելող դրույթ, որի դեպքում համապատասխան հանցանքների նկատմամբ երբեք չի կիրառվում վաղեմության ժամկետի սկզբունքը (նույն տեղում՝ § 149): Այդ եզրակացությանը հանգելիս Դատարանը կարևորել է այն փաստը, որ ներպետական դատարանը հետևել է համընդհանուր ընդունված այն սկզբունքին, որ դատավարական նորմերն անմիջապես կիրառվում են ընթացքի մեջ գտնվող վարույթների նկատմամբ՝ բացառությամբ այն դեպքերի, երբ հստակորեն նախատեսված է հակառակը (*tempus regit actum* սկզբունք) (նույն տեղում, § 148):

Դատարանն այնուհետև հիմնվել է այս եզրահանգումների վրա և եզրակացրել, որ վաղեմության ժամկետների վերաբերյալ նորմերը չեն սահմանել հանցանքները և դրանց համար նախատեսված պարիժները և կարող են ընկալվել որպես գործի գնահատման համար սահմանված պարզ նախապայման՝ 7-րդ հոդվածի համաձայն ներկայացված բողոքը ճանաչելով որպես ակնհայտ անհիմն (տես Պրևիտի ընդդեմ Իտալիայի (որոշում) [Previt v. Italy (dec.)], թիվ 1845/08, § 80, 2013 թվականի փետրվարի 12, որի դեպքում դիմումատուն բողոքել է, որ չի կարողացել օգտվել ավելի բարենպաստ վաղեմության ժամկետներից, որոնք ներդրվել են, երբ իր քրեական գործը եղել է ընթացքի մեջ Գերագույն դատարանում): Այս եզրահանգումը հետազայում հաստատվել է մի շարք նմանատիպ գործերում, այդ թվում՝ Բիագիոլի ընդդեմ Սան Մարինոյի (որոշում) [Biagioli v. San Marino (dec.)] (թիվ 8162/13, § 90, 2014 թվականի հուլիսի 8, որի դեպքում ընդունվել է օրենք, որը, ի տարբերություն դիմումատուի կողմից հանցանքը կատարելու ժամանակահատվածի, պահանջել է որոշակի հանգամանքներում կասեցնել վաղեմության ժամկետը, և որը տարածվել է դիմումատուի գործի նկատմամբ) և Բորչեան ընդդեմ Ռումինիայի (որոշում) [Borcea v. Romania (dec.)] (թիվ 55959/14, § 64, 2015 թվականի սեպտեմբերի 22, որի դեպքում դիմումատուն՝ քրեական վարույթով մեղադրյալը, չի կարողացել օգտվել իրեն վերագրվող հանցանքի մասով ավելի նպաստավոր վաղեմության ժամկետներ սահմանող օրենսդրական փոփոխություններից):

Այսպիսով, ինչպես երևում է վերևում ամփոփ ներկայացված որոշումներից, դեռևս չլրացած վաղեմության ժամկետը երկարաձգող օրենսդրական փոփոխությունները չեն համարվել Կոնվենցիայի 7-րդ հոդվածի խախտում:

Այդուհանդերձ, ի տարբերություն այդ գործերի, Դատարանը գտել է, որ վերջին գործում, որի դեպքում դիմումատուները դատապարտվել են վաղեմության ժամկետը լրացած

հանցանքի համար, Կոնցի Է ունեցել 7-րդ հոդվածի խախտում (Կոնցի Անտիան և Խուպենիան ընդդեմ Վրաստանի [Antia and Khupenia v. Georgia], թիվ 7523/10, §§ 38-43, 2020 թվականի հունիսի 18) (...):

(...) [Ի]նչպես կարելի է տրամաբանորեն եզրակացնել Դատարանի վերոնշյալ եզրահանգումներից, այն դեպքում, երբ քրեական պատասխանատվությունը վերականգնվել է վաղեմության ժամկետն անցնելուց հետո, այն կհամարվի անհամարելի 7-րդ հոդվածով ամրագրված՝ օրինականության (Nullum crimen, nulla poena sine lege (չկա հանցագործություն և պատիժ, եթե այն սահմանված չէ օրենքով)) և կանխատեսելիության հիմնական սկզբունքների հետ (...): Դրանից հետևում է, որ այն դեպքում, երբ ներպետական իրավունքով սահմանված հանցանքի համար կարող է կիրառվել վաղեմության ժամկետների մասին դրույթը, և վաղեմության ժամկետը լրանալու հիմքով կարող է բացառվել քրեական պատասխանատվությունը, 7-րդ հոդվածի համաձայն՝ օրինական իրավական հիմքերի բացակայության պատճառով քրեական հետապնդումն այդ հանցանքի մասով բացառվում է: Այլ վճիռ կայացնելը հավասարազոր կլինի «քրեական իրավունքն ի վնաս մեղադրյալի հետադարձ ուժով կիրառելը» ընդունելուն (շեշտադրումն ավելացված է) (Կոնցի (...) [Դել Ռիո Պրադան ընդդեմ Իսպանիայի [ՄԴ] [Del Rio Prada v. Spain [GC]], թիվ 42750/09, ՄԻԵԴ 2013], § 78)»¹⁸:

20.4. Վերոգրյալի համատեքստում, ի վերջո, Եվրոպական դատարանն արձանագրել է, որ. «(...) Դատարանին չի ներկայացվում նախքան քննվող գործով վաղեմության ժամկետն անցնելը վաղեմության ժամկետի՝ օրենսդրությամբ սահմանված երկարաձգման հարցը, այլ ներկայացվում է իրավիճակ, երբ հայցող դատարանը պետք է որոշի, թե արդյոք ՔՕ-ի 75-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի և ՔԴՕ-ի 35-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն կիրառի տասը տարի վաղեմության ժամկետը, թե ՔՕ-ի 75-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված՝ արդեն գոյություն ունեցող դրույթը, որը նախատեսում է այդ դրույթում սահմանված հանգամանքներում վաղեմության ժամկետ չկիրառելու բացառությունները: Հաշվի առնելով վերևում՝ 70-րդ և 71-րդ պարբերություններում շարադրված ընդհանուր նկատառումները՝ առաջին հերթին և առավելապես հենց ազգային դատարանը պետք է իր ներպետական սահմանադրական և քրեական իրավունքով նախատեսված նորմերի համարեքստում որոշի, թե արդյոք ազգային իրավական համակարգում իրավաբանական ուժ ունեցող միջազգային իրավունքի կանոնները, փյալ դեպքում՝ Սահմանադրության 5-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն (Կոնցի վերևում՝ 34-րդ պարբերությունը), կարող են նախատեսել Կոնվենցիայի 7-րդ հոդվածի իմաստով բավականաչափ հստակ և կանխատեսելի իրավական հիմքեր՝ եզրակացնելու, որ փյալ հանցանքի նկատմամբ վաղեմության ժամկետների մասին դրույթը չի կիրառվում»¹⁹:

20.5. Մեծ պալատի խորհրդատական կարծիքին կից ներկայացված համընկնող առանձին կարծիքում Եվրոպական դատարանում Հայաստանի Հանրապետության դատավոր Ա.Հարությունյանը Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով սահմանված խոշտանգման արգելքի, դրանց հիման վրա գործող պայմանագրային մարմինների՝ Խոշտանգումների դեմ կոմիտեի և Եվրոպական դատարանի՝ խոշտանգման նկատմամբ վաղեմության ժամկետների կիրառման արգելքի վերաբերյալ որոշումների, 1995 թվականի հուլիսի 5-ին ընդունված ՀՀ Սահմանադրության 5-րդ հոդվածի և ՀՀ քրեական

¹⁸ Տես Մարդու իրավունքների եվրոպական դատարանի Մեծ պալատի խորհրդատվական կարծիքը, կետեր 68 և 72-77:

¹⁹ Տես նույն տեղում, կետ 78:

օրենսգրքի 75-րդ հոդվածի վերլուծության հիման վրա եզրակացրել է, որ. «(...) ՄԱԿԽԴԿ-ի 4-րդ հոդվածով պետությունից պահանջվում է ապահովել, որ խոշորանգաման բնույթի բոլոր արարքներն իր քրեական իրավունքով համարվեն հանցանքներ: 1993 թվականի սեպտեմբերին Հայաստանը վավերացրել և միացել է ՄԱԿԽԴԿ-ին, մինչդեռ ԽԴԿ-ի կողմից ներկայացված նկատառումներում նշվում է, որ մինչև 2004 թվականն այն չի կատարել 4-րդ հոդվածով նախատեսված պարտավորությունը:

Քրեական օրենսգրքի 75-րդ հոդվածի 6-րդ մասով նախատեսվում է. «Վաղեմության ժամկետներ չեն կիրառվում նաև Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով նախատեսված քրեական հանցանքներ կատարած անձանց նկատմամբ, եթե այդ պայմանագրերով սահմանված է վաղեմության ժամկետների կիրառման արգելք»:

ՄԱԿԽԴԿ-ի 4-րդ հոդվածով պահանջվում է քրեականացնել խոշորանգաման՝ Քրեական օրենսգրքի 75-րդ հոդվածի 6-րդ մասի իմաստով: Հայաստանի կողմից այս պարտավորությունը չկատարելը չի կարող լինել 75-րդ հոդվածի 6-րդ մասը չկիրառելու պարճառ: Ի վերջո «Միջազգային պայմանագրերի իրավունքի մասին» Վիեննայի կոնվենցիայի 26-րդ և 27-րդ հոդվածներով նախատեսվում է, որ ՄԱԿԽԴԿ-ի նման պայմանագրերը պետք է բարեխղճորեն կատարվեն, և որ «պետությունը չի կարող վկայակոչել իր ներքին իրավունքի դրույթները որպես պայմանագիրը չկատարելու արդարացում»: Միջազգային արդարադատության մշտական պալատը (ՄԱՄԴ) ևս ընդունել է դա «Լեհաստանի քաղաքացիների նկատմամբ վերաբերմունքը» փաստաթղթում, որով այն վճռել է, որ «որևէ պետություն չի կարող իր սեփական Սահմանադրությանը հղում կատարել ի վնաս այլ պետության՝ միջազգային իրավունքով կամ գործող պայմանագրերով սրանձնած իր պարտավորությունները կատարելուց խուսափելու նպատակով»:

Թեև սույն գործով դրան հակասող որևէ ներպետական դրույթ նույնիսկ գոյություն չունի, այդպիսի դրույթի բացակայությունը ևս չի կարող համարվել պետության կողմից իր պարտավորությունները չկատարելու արդարացում:

Ինչ վերաբերում է 75-րդ հոդվածի 6-րդ մասի երկրորդ չափանիշին, մասնավորապես, որ վաղեմության ժամկետը պետք է սահմանվի համապատասխան պայմանագրում, ապա ճիշտ է, որ ՄԱԿԽԴԿ-ն հստակ չի անդրադառնում այս հարցին: Այդուհանդերձ, ԽԴԿ-ն վերահաստատել է, որ խոշորանգաման նկատմամբ չպետք է կիրառվեն ժամանակային սահմանափակումներ, ինչպես նշվել է Հայաստանի վերաբերյալ 2012 թվականի իր եզրափակիչ դիտարկումներում:

(...)

Խոշորանգաման արգելքի *jus cogens* նորմը գերակայում է վաղեմության ժամկետների մասին ազգային դրույթների նկատմամբ: Հետևաբար, որպես արգելքի *jus cogens* բնույթի բացասական ազդեցության հետևանք, վաղեմության ժամկետ նախատեսող ցանկացած օրենք ի սկզբանե հակասում է միջազգային իրավունքի նորմերին և երբեք չի կարող օրինականորեն կիրառվել:

Այդպիսով, չի առաջանում Կոնվենցիայի 7-րդ հոդվածի կիրառելիության հարց, քանի որ երբեք չի եղել վաղեմության ժամկետներ նախատեսող որևէ գործող օրենք. վաղեմության ժամկետներ չկիրառելը, ի սկզբանե, խոշորանգամանների արգելքի և դրանց առնչվող ժամկետների *jus cogens* նորմի համաձայն եղել է օրինական և կանխատեսելի՝ որպես ազգային օրենսդրության մաս:

Նույնիսկ եթե ազգային իրավունքի համաձայն քրեական հետապնդումը հնարավոր չի եղել վաղեմության ժամկետը լրանալու հիմքով, դա նշանակություն չունի, քանի որ այդ օրենքը

երբևէ իրավական ուժ չէր կարող ունենալ»²⁰:

Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

21. Վճռաբեկ դատարանը գտնում է, որ խոշտանգում կամ դրան հավասարեցված այլ արարքներ կատարած անձանց նկատմամբ քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետներ կիրառելու իրավաչափության կապակցությամբ առկա է օրենքի միատեսակ կիրառության ապահովման խնդիր: Ուստի Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում սույն գործով արտահայտել իրավական դիրքորոշումներ, որոնք կարող են ուղղորդող նշանակություն ունենալ նման գործերով դատական պրակտիկայի ճիշտ ձևավորման համար:

22. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված *առաջին* իրավական խնդիրը հետևյալն է. արդյո՞ք ներպետական կանոնակարգումները, մասնավորապես՝ ՀՀ քրեական օրենսգրքի 75-րդ հոդվածի 6-րդ մասով նախատեսված՝ միջազգային պայմանագրերով սահմանված դեպքերում և այդ պայմանագրերով նախատեսված հանցանքներ կատարած անձանց նկատմամբ վաղեմության ժամկետներ չկիրառելու վերաբերյալ դրույթը Եվրոպական կոնվենցիայի 7-րդ հոդվածի իմաստով բավարար իրավական հիմքեր է նախատեսում խոշտանգում կամ դրան հավասարեցված այլ հանցանքներ կատարած անձանց նկատմամբ քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետներ չկիրառելու համար:

I. Հայաստանի Հանրապետության ներպետական օրենսդրությունը.

23. 1995 թվականի հուլիսի 5-ին ընդունված ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի համաձայն՝ «(...) Վավերացված միջազգային պայմանագրերը Հանրապետության իրավական համակարգի բաղկացուցիչ մասն են: Եթե նրանցում սահմանված են այլ նորմեր, քան նախատեսված են օրենքներով, ապա կիրառվում են պայմանագրի նորմերը (...):»:

2005 թվականի նոյեմբերի 27-ի փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի համաձայն՝ «(...) Միջազգային պայմանագրերը Հայաստանի Հանրապետության իրավական համակարգի բաղկացուցիչ մասն են: Եթե վավերացված միջազգային պայմանագրում սահմանվում են այլ նորմեր, քան նախատեսված են օրենքներով, ապա կիրառվում են այդ նորմերը: Սահմանադրությանը հակասող միջազգային պայմանագրերը չեն կարող վավերացվել (...):»:

2015 թվականի դեկտեմբերի 6-ի փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 5-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Հայաստանի Հանրապետության վավերացրած միջազգային պայմանագրերի և օրենքների նորմերի միջև հակասության դեպքում կիրառվում են միջազգային պայմանագրերի նորմերը»:

ՀՀ Սահմանադրության 81-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Հիմնական իրավունքների և ազատությունների վերաբերյալ Սահմանադրությունում ամրագրված դրույթները մեկնաբանելիս հաշվի է առնվում Հայաստանի Հանրապետության վավերացրած՝ մարդու իրավունքների վերաբերյալ միջազգային պայմանագրերի հիման վրա գործող մարմինների պրակտիկան»:

24. ՀՀ քրեական օրենսգրքի 1-ին հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգիրքը հիմնվում է Հայաստանի Հանրապետության

²⁰ Տե՛ս Մարդու իրավունքների Եվրոպական դատարանի Մեծ պալատի խորհրդատվական կարծիքը, դատավոր Ա.Հարությունյանի համընկնող առանձին կարծիքը, Ե բաժին:

Սահմանադրության և միջազգային իրավունքի սկզբունքների ու նորմերի վրա»:

ՀՀ քրեական օրենսգրքի 75-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ «Խաղաղության և մարդկության անվտանգության դեմ ուղղված՝ սույն օրենսգրքի 384-րդ, 386-391-րդ, 393-397-րդ հոդվածներով նախատեսված հանցանքներ կատարած անձանց նկատմամբ վաղեմության ժամկետներ չեն կիրառվում: Վաղեմության ժամկետներ չեն կիրառվում նաև Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով նախատեսված հանցանքներ կատարած անձանց նկատմամբ, եթե այդ պայմանագրերով վաղեմության ժամկետների կիրառման արգելք է սահմանված»:

2021 թվականի մայիսի 5-ին ընդունված և 2022 թվականի հուլիսի 1-ից ուժի մեջ մտած ՀՀ քրեական օրենսգրքի 83-րդ հոդվածի 9-րդ մասի համաձայն՝ «Սույն օրենսգրքի 133-154-րդ հոդվածներով, 308-րդ հոդվածով, 441-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով կամ 450-րդ հոդվածով [խոշտանգումը] նախատեսված հանցանք կատարած անձանց նկատմամբ վաղեմության ժամկետներ չեն կիրառվում՝ անկախ հանցանքի կատարման պահից»:

2001 թվականի ապրիլի 16-ին ընդունված, 2001 թվականի հունիսի 10-ից ուժի մեջ մտած և 2004 թվականի ապրիլ ամսվա դրությամբ գործող խմբագրությամբ «Ոստիկանության մասին» ՀՀ օրենքի՝ ոստիկանության գործունեության սկզբունքներն ամրագրող 3-րդ հոդվածի համաձայն՝ «Ոստիկանության գործունեությունը հիմնվում է օրինականության, անձի իրավունքներն ու ազատությունները, պատիվն ու արժանապատվությունը հարգելու, մարդասիրության և հրապարակայնության սկզբունքների վրա (...)»:

Նույն օրենքի 5-րդ հոդվածի համաձայն՝ «(...) Ոստիկանության աշխատակցի կողմից մարդուն խոշտանգումների, դաժան կամ նրա արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի ենթարկելը կամ նրա նկատմամբ բռնություն կիրառելն արգելվում է և առաջացնում է պատասխանատվություն՝ օրենքով սահմանված կարգով»:

25. Վերոնշյալ նորմերի վերլուծությունից բխում է, որ նախ՝ Հայաստանի Հանրապետության հիմնական օրենքը՝ ՀՀ Սահմանադրությունը, սահմանադրական փոփոխությունների տեքստով պայմանավորված որոշակի առանձնահատկություններով հանդերձ, ներպետական իրավական համակարգի բաղկացուցիչ մաս է դիտարկում Հայաստանի Հանրապետության վավերացրած միջազգային պայմանագրերը: Դեռ ավելին, ՀՀ միջազգային պայմանագրերի և օրենքների նորմերի միջև հակասության դեպքում ՀՀ Սահմանադրությունը կոլիզիան լուծում է հօգուտ միջազգային պայմանագրերի կարգավորումների:

2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 1-ին հոդվածն իր հերթին ուղղակի կարգավորում էր նախատեսում առ այն, որ օրենսգիրքը հիմնվում է ինչպես Հայաստանի Հանրապետության Սահմանադրության, այնպես էլ միջազգային իրավունքի սկզբունքների ու նորմերի վրա:

25.1. Ինչ վերաբերում է վաղեմության ժամկետների կիրառման արգելք սահմանող քրեաիրավական նորմին, ապա օրենսդիրը, ելնելով այն հանգամանքից, որ ՀՀ միջազգային պայմանագրերը կազմում են ներպետական իրավական համակարգի անբաժան մասը, իրավաչափորեն նախատեսել է, որ նորմում թվարկված կոնկրետ հանցակազմերից բացի, վաղեմության ժամկետները չեն կիրառվում նաև միջազգային պայմանագրերով նախատեսված հանցանքներ կատարած անձանց նկատմամբ, եթե այդ պայմանագրերով վաղեմության ժամկետների կիրառման արգելք է սահմանված: ՀՀ քրեական օրենսգրքի վերոնշյալ նորմը օրենսգրքի ընդունումից ի վեր որևէ օրենսդրական փոփոխության և լրացման չի ենթարկվել: Այսինքն՝ օրենսդիրն ի սկզբանե՝ ՀՀ քրեական օրենսգրքի ընդունման օրվանից՝ 2003 թվականի ապրիլի 18-ից ի վեր, հստակ իրավական հիմք է նախատեսել այդ պահին վավերացված կամ

հետագայում վավերացվելիք միջազգային պայմանագրերով նախատեսված դեպքերում առանձին հանցանքների նկատմամբ վաղեմության ժամկետներ չկիրառելու համար: Այսպիսով, թեև ՀՀ քրեական օրենսգրքի 75-րդ հոդվածի 6-րդ մասում թվարկված հանցակազմերի ցանկում խոշտանգումը կամ դրան հավասարեցված այլ արարքներ նախատեսված չեն, սակայն նորմի գործողության շրջանակը չի սահմանափակվում նշված հանցակազմերով, քանի որ այն ուղղակիորեն **նախատեսում է միջազգային պայմանագրերով սահմանված դեպքերում և դրանցով նախատեսված հանցանքներ կատարած անձանց** նկատմամբ վաղեմության ժամկետներ չկիրառելու օրենսդրական հնարավորությունը: Ընդ որում, հարկ է ընդգծել, որ «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» 2015 հունիսի 9-ին ընդունված ՀՀ օրենքով 309.1-րդ հոդվածով խոշտանգման համար քրեական պատասխանատվություն նախատեսող հատուկ նորմը ևս ՀՀ քրեական օրենսգրքի 75-րդ հոդվածի 6-րդ մասում թվարկված հանցակազմերի ցանկում չի ընդգրկվել:

II. Խոշտանգման արգելքը՝ որպես *jus cogens* նորմ՝ Հայաստանի Հանրապետության կողմից վավերացված միջազգային պայմանագրերում.

26. 1969 թվականի մայիսի 23-ին ընդունված և Հայաստանի Հանրապետության կողմից 2005 թվականի մայիսի 17-ին վավերացված՝ «Միջազգային պայմանագրերի իրավունքի մասին» կոնվենցիայի՝ «Ընդհանուր միջազգային իրավունքի համընդհանուր պարտադիր (*jus cogens*) նորմին հակասող պայմանագրերը» վերտառությամբ 53-րդ հոդվածի համաձայն՝ «Պայմանագիրն առոչինչ է, եթե կնքման պահին հակասում է ընդհանուր միջազգային իրավունքի պարտադիր նորմին: Սույն Կոնվենցիայի նպատակների համար ընդհանուր միջազգային պարտադիր նորմն այն նորմն է, որը պետությունների միջազգային հանրության կողմից ամբողջությամբ ընդունվում ու ճանաչվում է որպես նորմ, որից շեղումն անթույլատրելի է, և որը կարող է փոփոխվել միայն ընդհանուր միջազգային իրավունքի հաջորդ նորմով»:

Նույն կոնվենցիայի՝ «Ընդհանուր միջազգային իրավունքի համընդհանուր պարտադիր նոր նորմի (*jus cogens*) առաջացումը» վերտառությամբ 64-րդ հոդվածի համաձայն՝ «Եթե առաջանում է ընդհանուր միջազգային իրավունքի պարտադիր նոր նորմ, ապա ցանկացած պայմանագիր, որը հակասում է այդ նորմին, անվավեր է և դադարում է»:

26.1. «Միջազգային պայմանագրերի իրավունքի մասին» կոնվենցիայի վերոնշյալ դրույթներից բխում է, որ միջազգային իրավունքի համապարտադիր կամ *jus cogens* նորմը հիմնարար իրավական նորմ է, որից որևէ շեղում չի թույլատրում: *Jus cogens* նորմը միջազգային իրավական համակարգում ունի այն նույն դերակատարումը, ինչ իրավունքների սահմանադրական երաշխիքներն ազգային իրավական համակարգում:

27. Համամարդկային արժեքների պաշտպանության՝ որպես Հայաստանի Հանրապետության համար *jus cogens* պարտավորության գաղափարը հստակ ամրագրված է նաև 1995 թվականի հուլիսի 5-ին ընդունված ՀՀ Սահմանադրության նախաբանում, համաձայն որի՝ Հայ ժողովուրդը, ի շարս այլ նպատակների և սկզբունքների, ՀՀ Սահմանադրությունն ընդունել է նաև՝ «*հավաստելով հավատարմությունը համամարդկային արժեքներին*»: Ինչպես փաստել է ՀՀ Սահմանադրական դատարանն իր՝ 2023 թվականի մարտի 24-ի թիվ ՍԴՌ-1680 որոշմամբ, 2015 թվականի դեկտեմբերի 6-ի փոփոխություններով Սահմանադրության նախաբանում ևս այս հավաստիքի արձանագրումը «համամարդկային արժեքներ» սահմանադրական եզրը Սահմանադրության նորմերի նպատակային մեկնաբանման համար կիրառելի առաջնային ուղենիշ է: Նույն որոշմամբ ՀՀ Սահմանադրական դատարանն

արձանագրել է, որ ՀՀ Սահմանադրության նախաբանում Հայ ժողովրդի՝ համամարդկային արժեքներին հավատարմության հավաստիքը պահանջում է նաև համամարդկային արժեքների պաշտպանությանը և պահպանությանն ուղղված Հայաստանի Հանրապետության հանձնառությունը, և որ ՀՀ Սահմանադրությամբ հիմնված և երաշխավորված՝ Հայաստանի Հանրապետության քրեական իրավազորության համակարգը կոչված է ապահովելու, ի թիվս Սահմանադրությամբ ամրագրված այլ արժեքների, նաև Սահմանադրության նախաբանի իմաստով «համամարդկային արժեքների» պաշտպանությունը, որն առաջնահերթությամբ սահմանադրական հրամայական լինելուց բացի՝ նաև *jus cogens* նորմերով պարտավորություն է ցանկացած պետության համար²¹:

28. 1966 թվականի դեկտեմբերի 16-ին ընդունված և Հայաստանի Հանրապետության կողմից 1993 թվականի հունիսի 23-ին վավերացված՝ «Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին» ՄԱԿ-ի միջազգային դաշնագրի 7-րդ հոդվածի համաձայն՝ «*Ոչ որչպեպք է ենթարկվի խոշտանգումների կամ էլ դաժան, անմարդկային կամ իր արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի*»:

29. 1984 թվականի դեկտեմբերի 10-ին ստորագրված և Հայաստանի Հանրապետության կողմից 1993 թվականի սեպտեմբերի 13-ին վավերացված՝ «Խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի ու պատժի դեմ» ՄԱԿ-ի կոնվենցիայի 2-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «*Յուրաքանչյուր մասնակից պետություն ձեռնարկում է օրենսդրական, վարչական, դատական կամ այլ արդյունավետ միջոցներ՝ իր իրավազորության ներքո գտնվող ցանկացած փարածքում խոշտանգումների դեպքերը կանխելու համար*»:

Նույն կոնվենցիայի 12-րդ հոդվածի համաձայն՝ «*Յուրաքանչյուր մասնակից պետություն ապահովում է, որպեսզի իր իրավասու մարմիններն անհապաղ և անաչառ հետաքննություն անցկացնեն, երբ առկա է բավարար հիմք ենթադրելու, որ խոշտանգումը կիրառվել է իր իրավազորության ներքո գտնվող ցանկացած փարածքում*»:

29.1. «Խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի ու պատժի դեմ» ՄԱԿ-ի կոնվենցիայի կիրառման նկատմամբ մշտադիտարկում իրականացնող՝ Խոշտանգումների դեմ կոմիտեն, կոնվենցիայի 19-րդ հոդվածով սահմանված կարգով անդամ պետությունների կողմից ստանձնած պարտավորությունները կյանքի կոչելու համար ձեռնարկված միջոցառումների վերաբերյալ ներկայացված զեկույցների առնչությամբ իր՝ 2003 թվականի մայիսի 27-ի թիվ CAT/C/CR/30/5 և թիվ CAT/C/CR/30/4 եզրափակիչ դիտարկումներում անդամ պետություններին պարտավորեցրել է **բացառել վաղեմության ժամկետների մասին դրույթի կիրառումը խոշտանգմանն առնչվող հանցագործությունների նկատմամբ**²²: Խոշտանգումների դեմ կոմիտեն իր այս դիրքորոշումը հետևողականորեն զարգացրել է նաև անդամ պետությունների ներկայացրած զեկույցների վերաբերյալ իր հետագա եզրափակիչ դիտարկումներում²³:

30. Հայաստանի Հանրապետությունը 1993 թվականի սեպտեմբերի 13-ին վավերացրել

²¹ Տե՛ս ՀՀ Սահմանադրական դատարանի՝ «1998 թվականի հուլիսի 17-ին ստորագրված՝ Միջազգային քրեական դատարանի Հռոմի կանոնադրությունում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործով 2023 թվականի մարտի 24-ի թիվ ՍԴՈ-1680 որոշումը:

²² Տե՛ս, Խոշտանգումների դեմ կոմիտեի՝ Թուրքիայի վերաբերյալ եզրափակիչ դիտարկումներ, ՄԱԿ-ի փաստաթուղթ թիվ CAT/C/CR/30/5, 2003 թվականի մայիսի 27, կետ 7-րդ, ենթակետ (գ), Սլովենիայի վերաբերյալ եզրափակիչ դիտարկումներ, ՄԱԿ-ի փաստաթուղթ թիվ CAT/C/CR/30/4, 2003 թվականի մայիսի 27, կետ 6:

²³ Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի Մեծ պալատի խորհրդատվական կարծիքը, դատավոր Ա.Հարությունյանի համընկնող առանձին կարծիքը, բաժին Ա, կետ 3:

է նաև 1989 թվականի փետրվարի 1-ին ուժի մեջ մտած՝ «Խոշտանգումների և անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի կանխարգելման մասին» Եվրոպական կոնվենցիան, որի 1-ին հոդվածի համաձայն՝ «*Խոշտանգումների կամ անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի կանխման նպատակով ստեղծվում է Եվրոպական կոմիտե (այսուհետ՝ Կոմիտե) (...)*»:

31. Նախկին Հարավսլավիայի հարցերով միջազգային քրեական տրիբունալն (այսուհետ՝ նաև Տրիբունալ) իր՝ դեռևս 1998 թվականի դեկտեմբերի 10-ին կայացրած որոշմամբ արձանագրել է, որ խոշտանգման արգելքը ձեռք է բերել *jus cogens* նորմի կարգավիճակ՝ բնորոշելով այն որպես միջազգային իրավունքի համապարտադիր նորմ, որից որևէ շեղում չի թույլատրվում: Մասնավորապես, վերոնշյալ որոշման համաձայն՝ այն, որ խոշտանգումն արգելված է միջազգային իրավունքի համապարտադիր նորմով, իր ազդեցությունն ունի միջպետական և անհատական մակարդակներում: Տրիբունալի գնահատմամբ՝ միջպետական մակարդակում այն ծառայում է խոշտանգումը թույլատրող ցանկացած օրենսդրական, վարչական կամ դատական ակտի միջազգայնորեն ապալեգիտիմացմանը: Նշված որոշման համաձայն՝ մի կողմից՝ խոշտանգումների դեմ արգելքի *jus cogens* բնույթով պայմանավորված, խոշտանգումներ նախատեսող պայմանագրերը կամ սովորույթային կանոններն առոչինչ և անվավեր են լինելու ի սկզբանե (*ab initio*), մյուս կողմից՝ անընդունելի են լինելու պետության ձեռնարկած քայլերը՝ ուղղված խոշտանգումները թույլատրելուն կամ դրանց համար ներում շնորհելուն կամ ենթադրյալ մեղավորներին համաներման մասին օրենքներ ընդունելու միջոցով պատասխանատվությունից ազատելուն: Նույն վճռում Տրիբունալն արձանագրել է, որ եթե անգամ ստեղծվի նման իրավիճակ, ազգային կարգավորումները, որոնք կխախտեն ընդհանուր սկզբունքը և ցանկացած այլ վերաբերելի պայմանագրային դրույթ, միջազգայնորեն իրավական ճանաչում չեն ստանա: Վերոնշյալ վճռում արված կարևոր արձանագրում է այն, որ խոշտանգման համար ենթադրյալ մեղավորները, ովքեր օգտվում են այդ ազգային կարգավորումներից, այնուամենայնիվ, ենթակա են պատասխանատվության, քանի որ անկախ ներպետական օրենսդիր կամ դատական իշխանության մարմինների կողմից խոշտանգումների արգելքի սկզբունքի խախտում թույլ տալուն, անհատները շարունակում են կրել այդ սկզբունքը պահպանելու պարտականությունը: Քննարկվող վճռում նշվել է նաև, որ անհատական, այսինքն՝ քրեական պատասխանատվության մակարդակում, խոշտանգումների արգելքի՝ միջազգային հանրության շրջանում ստացած *jus cogens* բնույթի հետևանքներից մեկն այն է, որ յուրաքանչյուր պետություն իրավազոր է քննելու խոշտանգման դեպքերը, հետապնդել և պատժել կամ արտահանձնել խոշտանգումների մեջ մեղադրվող անձանց, ովքեր իր իրավազորության տակ գտնվող տարածքում են: Նույն վճռում, իբրև այլ հետևանք, նաև փաստվել է, որ խոշտանգումների վրա չեն կարող տարածվել վաղեմության ժամկետները²⁴:

32. 1950 թվականի նոյեմբերի 4-ին ընդունված և Հայաստանի Հանրապետության կողմից 2002 թվականի ապրիլի 26-ին վավերացված՝ «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» Եվրոպական կոնվենցիայի 3-րդ հոդվածի համաձայն՝ «*Ոչ ոք չպետք է ենթարկվի խոշտանգումների կամ անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի*»:

32.1. Այն, որ խոշտանգումների, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ

²⁴ Տե՛ս նախկին Հարավսլավիայի հարցերով միջազգային քրեական տրիբունալի՝ *the Prosecutor v. Anto Furundzija* գործով 1998 թվականի դեկտեմբերի 10-ի թիվ JL/PIU/372-E վճիռը, կետեր 155-157:

պատժի արգելքը բացարձակ բնույթ է կրում, բազմիցս շեշտադրվել է Եվրոպական դատարանի կողմից Եվրոպական կոնվենցիայի 3-րդ հոդվածի վերաբերյալ ձևավորած նախադեպային իրավունքում: Մասնավորապես, *Ջելիլոֆն ընդդեմ Հունաստանի* գործով վճռում դատարանն արձանագրել է, որ 3-րդ հոդվածը պաշտպանում է ժողովրդավարական հասարակության ամենահիմնարար արժեքներից մեկը: Անգամ այնպիսի բարդ իրավիճակներում, ինչպիսիք են ահաբեկչության և կազմակերպված հանցավորության դեմ պայքարը, Կոնվենցիան բացարձակ արտահայտություններով արգելում է խոշտանգումը և անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքը կամ պատիժը: Ի տարբերություն Կոնվենցիայի և դրան կից 1-ին և 4-րդ արձանագրությունների շատ նյութաիրավական դրույթների, 3-րդ հոդվածը չի նախատեսում բացառության վերաբերյալ որևէ կանոն, դրանից շեղում թույլատրելի չէ նաև 15-րդ հոդվածի 2-րդ մասով՝ անգամ ազգի գոյությանը վտանգ սպառնացող արտակարգ դրության դեպքում²⁵:

32.2. Խոշտանգումների արգելքի բացարձակ բնույթը ենթադրում է ոչ միայն խոշտանգումների, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի կիրառումից ձեռնպահ մնալու, այլ նաև որոշակի պոզիտիվ գործողություններ կատարելու պետության պարտականությունը: Եվրոպական դատարանը կայուն նախադեպային իրավունք է ձևավորել առ այն, որ եթե անձը վստահելի հայտարարություն է անում այն մասին, որ ի խախտումն 3-րդ հոդվածի ենթարկվել է խոշտանգման ոստիկանի կամ այլ պաշտոնատար անձի կողմից, ապա այդ դրույթը Եվրոպական կոնվենցիայի 1-ին հոդվածով ամրագրված՝ «իրենց իրավագործության ներքո գտնվող յուրաքանչյուրի համար Կոնվենցիայով սահմանված իրավունքների և ազատությունների ապահովման» պետությունների ընդհանուր պարտականության հետ միասին ենթադրում է արդյունավետ պաշտոնական քննության պարտականություն: Նման քննությունը պետք է ունակ լինի բացահայտելու և պատասխանատվության ենթարկելու մեղավոր անձանց: Հակառակ պարագայում, խոշտանգումների, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի ընդհանուր իրավական արգելքը, չնայած իր հիմնարար կարևորության, գործնականում կլինի ոչ արդյունավետ և որոշ դեպքերում հնարավոր կլինի պետական մարմինների կողմից խախտել իրենց տրամադրության տակ գտնվող անձանց իրավունքները և փաստացի մնալ անպատիժ²⁶:

32.3. Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի ուսումնասիրության հիման վրա Վճռաբեկ դատարանը կրկնում է, որ Եվրոպական կոնվենցիայի 3-րդ հոդվածով նախատեսված՝ խոշտանգումների վերաբերյալ գործերով արդյունավետ քննություն կատարելու չափանիշներն են՝

- ա) քննություն իրականացնող մարմինները պետք է լինեն անկախ և անաչառ²⁷,
- բ) իրավասու մարմինները պետք է գործեն պատշաճ արագությամբ²⁸, քննությունը պետք

²⁵ Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Zelilof v. Greece* գործով 2004 թվականի մայիսի 24-ի վճիռը, գանգատ թիվ 17060/03, կետ 42:

²⁶ Տե՛ս, ի թիվս այլնի, Մարդու իրավունքների Եվրոպական դատարանի՝ *Assenov and Others v. Bulgaria* գործով 1998 թվականի հոկտեմբերի 28-ի վճիռը, գանգատ թիվ 24760/94, կետ 102, *Labita v. Italy* գործով Մեծ պալատի 2000 թվականի ապրիլի 6-ի վճիռը, գանգատ թիվ 26772/95, կետ 131, *Bekos and Koutropoulos v. Greece* գործով 2005 թվականի դեկտեմբերի 13-ի վճիռը, գանգատ թիվ 15250/02, կետ 53, *Okkali v. Turkey* գործով 2006 թվականի հոկտեմբերի 17-ի վճիռը, գանգատ թիվ 52067/99, կետ 65:

²⁷ Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Ogur v. Turkey* գործով Մեծ պալատի՝ 1999 թվականի մայիսի 20-ի վճիռը, գանգատ թիվ 21594/93, կետեր 91-92, *Mehmet Emin Yuksel v. Turkey* գործով 2004 թվականի հուլիսի 20-ի վճիռը, գանգատ թիվ 40154/98, կետ 37, *Ergi v. Turkey* գործով 1998 թվականի հուլիսի 28-ի վճիռը, կետեր 83-84:

²⁸ Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Mikheev v. Russia* գործով 2006 թվականի հունվարի 26-ի

է լինի արագ և մանրամասն, այսինքն՝ տեղի ունեցածը բացահայտելու նպատակով իրավասու մարմինները պետք է գործադրեն լուրջ ջանքեր և քննությունն ավարտելիս կամ իրենց որոշումները պատճառաբանելիս չհենվեն շտապողական կամ թույլ պատճառաբանված եզրահանգումների վրա²⁹,

գ) քննություն իրականացնող մարմինները պետք է օժտված լինեն համապատասխան փաստերը հաստատելու, մեղավոր անձանց բացահայտելու և պատասխանատվության ենթարկելու լիարժեք իրավասությամբ³⁰, նրանք պետք է կատարեն իրենց համար հասու բոլոր ողջամիտ քայլերը, որպեսզի ապահովեն դեպքի հետ կապված ապացույցները, ներառյալ, ի թիվս այլնի՝ ակնատեսների հարցաքննությունը և բժշկական ապացույցները³¹,

դ) պետք է կատարվի մանրամասն քննություն, որն անհրաժեշտ է գործով ապացույցներն ապահովելու համար³²,

ե) պետք է ապահովվի քննության նկատմամբ հասարակական հսկողությունը և տուժողի արդյունավետ ներգրավվածությունը քննությանը³³, քննության ցանկացած թերություն, որը հարցականի տակ է դնում վստածքների պատճառները կամ պատասխանատու անձանց պարզելու կարողությունը, վտանգում է այս չափանիշի իրագործումը³⁴:

32.4. Այսպիսով, Մարդու իրավունքների եվրոպական դատարանն իր նախադեպային իրավունքում ընդունել է, որ միջազգային իրավունքում խոշտանգման արգելքը ստացել է *jus cogens* կամ համընդհանուր պարտադիր նորմի կարգավիճակ: Ընդ որում, խոշտանգումների վերաբերյալ գործերով արդյունավետ քննություն կատարելու պետության պոզիտիվ պարտականության համատեքստում, Եվրոպական դատարանը, մասնավորապես արձանագրել է, որ պետական պաշտոնատար անձի կողմից կատարված խոշտանգմանը կամ վատ վերաբերմունքին վերաբերող գործերով քրեական վարույթը չպետք է դադարեցվի վաղեմության ժամկետի հիմքով, և նաև, որ այդ գործերով չպետք է թույլատրվի համաներումների ու ներումների կիրառումը³⁵: Այսպես, Եվրոպական դատարանը, հղում կատարելով *Լորենս Դյուարդին ընդդեմ Ֆրանսիայի գործով* 1991 թվականի սեպտեմբերի 2-ի և *Աբդուլսամեթ Զամանն ընդդեմ Թուրքիայի գործով* 2004 թվականի նոյեմբերի 2-ի վճռին, *Օկկալին ընդդեմ*

վճիռը, գանգատ թիվ 77617/01, կետ 109:

²⁹ Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Assenov and Others v. Bulgaria* գործով 1998 թվականի հոկտեմբերի 28-ի վճիռը, գանգատ թիվ 24760/94, կետ 103, *Bati and Others v. Turkey* գործով 2004 թվականի հունիսի 3-ի վճիռը, գանգատ թիվ 33097/96 և 57834/00, կետ 136:

³⁰ Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Hugh Jordan v. the UK* գործով 2001 թվականի մայիսի 4-ի վճիռը, գանգատ թիվ 24746/94, կետեր 125-130, *Bati and Others v. Turkey* գործով 2004 թվականի հունիսի 3-ի վճիռը, գանգատ թիվ 33097/96 և 57834/00, կետ 136, *Amine Guzel v. Turkey* գործով 2013 թվականի սեպտեմբերի 17-ի վճիռը, գանգատ թիվ 41844/09, կետ 39:

³¹ Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Tanraku v. Turkey* գործով Մեծ պալատի՝ 1999 թվականի հուլիսի 8-ի վճիռը, գանգատ թիվ 23763/94, կետ 104, *Gul v. Turkey* գործով 2000 թվականի դեկտեմբերի 14-ի վճիռը, գանգատ թիվ 22676/93, կետ 89:

³² Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Bati and Others v. Turkey* գործով 2004 թվականի հունիսի 3-ի վճիռը, գանգատ թիվ 33097/96 և 57834/00, կետ 134:

³³ Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Bati and Others v. Turkey* գործով 2004 թվականի հունիսի 3-ի վճիռը, գանգատ թիվ 33097/96 և 57834/00, կետ 137, *mutatis mutandis*, *Ogur v. Turkey* գործով Մեծ պալատի՝ 1999 թվականի մայիսի 20-ի վճիռը, գանգատ թիվ 21594/93, կետ 92, *Ognyanova and Choban v. Bulgaria* գործով 2006 թվականի փետրվարի 23-ի վճիռը, գանգատ թիվ 46317/99, կետ 107, *Khadzhaliyev and Others v. Russia* գործով 2008 թվականի նոյեմբերի 6-ի վճիռը, գանգատ թիվ 3013/04, կետ 106:

³⁴ Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Boicenco v. Moldova* գործով 2006 թվականի հուլիսի 11-ի վճիռը, գանգատ թիվ 41088/05, կետ 123:

³⁵ Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի Մեծ պալատի խորհրդատվական կարծիքը, կետ 59:

Թուրքիայի գործով 2006 թվականի հոկտեմբերի 17-ի վճռում վերահաստատել է, որ երբ պետության ներկայացուցիչը մեղադրվում է հանցագործությունների մեջ, որոնք խախտում են Եվրոպական կոնվենցիայի 3-րդ հոդվածը, քրեական գործի վարույթը և պատժի նշանակումը չպետք է սահմանափակված լինեն ժամկետով³⁶:

III. Խոշտանգման կամ վատ վերաբերմունքի այլ դրսևորումների արգելքի վերաբերյալ ներպետական օրենսդրության՝ միջազգային իրավունքի նորմերին համապատասխանեցմանն ուղղված գործընթացը և դատական պրակտիկան.

33. Խոշտանգման կամ վատ վերաբերմունքի այլ դրսևորումների արգելքի վերաբերյալ ներպետական օրենսդրության՝ միջազգային իրավունքի նորմերին համապատասխանեցմանն ուղղված դատական պրակտիկայի մեկնարկը տրվել է ՀՀ Վճռաբեկ դատարանի՝ *Արայիկ Գզոյանի* գործով 2010 թվականի փետրվարի 12-ի որոշմամբ, որում, անդրադառնալով Ա.Գզոյանի՝ Եվրոպական կոնվենցիայի 3-րդ հոդվածով երաշխավորված իրավունքների խախտմանը, Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի լույսի ներքո Վճռաբեկ դատարանն արձանագրել է խոշտանգման բացարձակ արգելքի գաղափարը և ենթադրյալ խոշտանգման դեպքի առթիվ պետության կողմից արդյունավետ քննություն իրականացնելու պոզիտիվ պարտականությունը³⁷: *Սվետլանա Գրիգորյանի* գործով 2011 թվականի մայիսի 11-ի որոշմամբ Վճռաբեկ դատարանն ամրագրել է վատ վերաբերմունքի վերաբերյալ վստահելի հայտարարության առնչությամբ քննություն իրականացնելու իրավասու մարմինների պարտականությունը³⁸: Վճռաբեկ դատարանն իր հետագա որոշումներում ևս հետևողականորեն կիրառել է Եվրոպական դատարանի մշակված չափանիշները³⁹:

34. Քննարկվող ոլորտում օրենսդրական բարեփոխումների անհրաժեշտությունը, ի թիվս այլնի, պայմանավորված էր ոչ միայն ՄԱԿ-ի «Խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի ու պատժի դեմ» կոնվենցիայի, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» Եվրոպական կոնվենցիայի և ներպետական օրենսդրությամբ խոշտանգման համար քրեական պատասխանատվության ոլորտում գործող իրավակարգավորումների միջև ներդաշնակեցումն ապահովելու կարևորությամբ, այլևս Եվրոպական դատարանի վճիռների կատարման պահանջով: Այսպես, Հայաստանի վերաբերյալ մի շարք վճիռներում (օրինակ՝ *Վիրաբյանն ընդդեմ Հայաստանի*, *Նալբանդյանն ընդդեմ Հայաստանի*, *Ջալյանը և այլք ընդդեմ Հայաստանի* և *Հովհաննիսյանն ընդդեմ Հայաստանի* գործերով) Եվրոպական դատարանը ճանաչել է Կոնվենցիայի 3-րդ հոդվածի խախտում՝ ըստ այդմ պարտավորեցնելով ՀՀ իշխանություններին գործուն քայլեր ձեռնարկել խոշտանգումների դեմ պայքարի արդյունավետությունը բարձրացնելու ուղղությամբ: Նշված վճիռների կայացմանը հաջորդել է ՀՀ Վճռաբեկ դատարանի կողմից

³⁶ Տե՛ս Մարդու իրավունքների Եվրոպական դատարանի *Okkali v. Turkey* գործով 2006 թվականի հոկտեմբերի 17-ի վճիռը, գանգատ թիվ 52067/99, կետ 76:

³⁷ Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ *Արայիկ Գզոյանի* գործով 2010 թվականի փետրվարի 12-ի թիվ ԵԱԲԴ/0049/01/09 որոշումը:

³⁸ Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ *Սվետլանա Գրիգորյանի* գործով 2011 թվականի մայիսի 11-ի թիվ ԵԿԴ/0281/01/10 որոշումը:

³⁹ Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ *Վարդգեզ Գասպարիի* գործով 2017 թվականի օգոստոսի 30-ի թիվ ԵԱԲԴ/0190/11/16, *Արթուր Հակոբյանի* գործով 2018 թվականի հուլիսի 20-ի թիվ ՍԴ2/0006/11/16, *Ալբերտ Հակոբջանյանի և Գագիկ Կարապետյանի* գործով 2019 թվականի սեպտեմբերի 18-ի թիվ ԵԱԲԴ/0172/11/17, *Էրիկ Եղինյանի* գործով 2021 թվականի սեպտեմբերի 3-ի թիվ ԼԴ1/0030/11/16, *Արմեն Հովհաննիսյանի* գործով 2021 թվականի հոկտեմբերի 15-ի թիվ ԵԴ/0558/01/18 որոշումները:

Եվրոպական դատարանի վճիռների հետևողական կատարման ապահովման նպատակով ներպետական դատական ատյանների կողմից կայացված դատական ակտերի վերանայումն ու գործերի վերաբացումը⁴⁰:

35. Խոշտանգումների դեմ Կոմիտեն իր՝ 2012 թվականի զեկույցում նախ *ողջունել է* Հայաստանի Հանրապետության կողմից 2006-2011 թվականների ընթացքում խոշտանգման և խտրական բնույթի արարքներն արգելող միջազգային և տարածաշրջանային կարևորագույն փաստաթղթերի վավերացումը, *կարևորել է* ներպետական համապատասխան օրենսդրության ընդունման և միջազգային չափանիշների ներդաշնակեցման հարցը, միևնույն ժամանակ *կոչ է արել* քրեականացնել խոշտանգման հանցակազմը, օրենսդրական երաշխիքներ ստեղծել ձերբակալված և կալանավորված անձանց նվազագույն իրավունքների պահպանման համար, նախատեսել խոշտանգումների զոհերին խոշտանգման հետևանքով պատճառված վնասի արդար և համաչափ փոխհատուցման, այդ թվում՝ ռեաբիլիտացիայի ինստիտուտը, ուժը կորցրած ճանաչել խոշտանգման հանցագործության կամ դրան հավասարեցված արարքների համար քրեական օրենսգրքով սահմանված վաղեմության ժամկետի, ներման, համաներման կիրառումը⁴¹:

36. Օրենսդրության՝ միջազգային իրավունքի սկզբունքներին համապատասխանեցման գործընթացի մեկնարկը, ըստ էության, տրվեց 2015 հունիսի 9-ին «ՀՀ քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» ՀՕ-69-Ն և «ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին» ՀՕ-70-Ն օրենքների ընդունմամբ, որոնցով համապատասխանաբար նախատեսվեց խոշտանգման հանցակազմը և նախատեսվեց խոշտանգման դեպքերի համար հանրային մեղադրանքի ռեժիմ:

37. Խոշտանգման ենթադրյալ դեպքերով արդյունավետ քննության ապահովմանն ուղղված միջոցառումներից կարելի է առանձնացնել նաև ձերբակալված և կալանավորված անձանց իրավաբանական օգնություն ցուցաբերելու գործող մեխանիզմի համապատասխանեցումը միջազգային չափանիշներին: Այսպես, 2015 թվականի դեկտեմբերին 21-ին ընդունվեց ««Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՕ-191 օրենքը, որով ձերբակալված կամ կալանավորված անձին պաշտպանի և պաշտպանությունը ստանձնելու նպատակով փաստաբանի հետ տեսակցության հնարավորություն ընձեռվեց նաև ոչ աշխատանքային օրերին կամ ժամերին: Բացի այդ, կատարված փոփոխությունների և լրացումների արդյունքում կալանավորված անձանց հնարավորություն ընձեռվեց սեփական միջնորդության հիման վրա, վարույթն իրականացնող մարմնի որոշմամբ, աշխատանքային օրերին և ժամերին առանձին, անարգել տեսակցել տվյալ քրեական գործով որպես պաշտպան չներգրավված այլ փաստաբանի հետ՝ իրավական այլ ոլորտներում իրավաբանական օգնություն ստանալու նպատակով:

38. «ՀՀ քաղաքացիական օրենսգրքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին» 2016 թվականի դեկտեմբերի 16-ին ընդունված ՀՕ-214-Ն օրենքով նախատեսվեց խոշտանգումների զոհերին խոշտանգման հետևանքով պատճառված վնասի

⁴⁰ Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ **Բագրատ և Նարինե Նալբանդյանների** գործով 2016 թվականի հունիսի 24-ի թիվ ՎԲ-04/15, **Բագրատ և Արևիկ Նալբանդյանների** գործով 2016 թվականի հունիսի 24-ի թիվ ՎԲ-06/15, **Արայիկ Զալյանի** գործով 2017 թվականի ապրիլի 12-ի թիվ ՎԲ-02/16, **Աիդա Հովհաննիսյանի** գործով 2019 թվականի նոյեմբերի 7-ի թիվ ԵԿԳ/0062/11/12 որոշումները:

⁴¹ Տե՛ս, Խոշտանգումների դեմ կոմիտեի՝ Հայաստանի վերաբերյալ եզրափակիչ դիտարկումներ, ՄԱԿ-ի փաստաթուղթ թիվ CAT/C/ARM/CO/3, 2012 թվականի հուլիսի 6, կետ 10:

արդար և համաչափ փոխհատուցման, այդ թվում՝ ռեաբիլիտացիայի ինստիտուտը⁴²:

39. 2018 թվականի հունվարի 16-ին ընդունված՝ «Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՕ-69-Ն օրենքով հավելյալ դատավարական երաշխիքներ նախատեսվեցին *de facto* ազատությունից զրկված անձանց համար, այդ թվում՝ հրավիրելու փաստաբան, իր պահանջով ենթարկվելու բժշկական հետազոտման: Վերոնշյալ կարգավորումները պահպանվել են նաև 2021 թվականի հունիսի 30-ին ընդունված ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում:

40. 2018 թվականի մարտի 7-ին ընդունվեց «Ներման մասին» ՀՀ օրենքը, որով սահմանվեց, որ ներում չի շնորհվում խոշտանգման համար դատապարտված անձին:

41. 2021 թվականի մայիսի 5-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքով ամրագրվեց խոշտանգում կատարած անձանց քրեական պատասխանատվությունից կամ պատժից վաղեմության ժամկետներն անցնելու հիմքով ազատելու, այդ անձանց նկատմամբ ներում, համաներում կիրառելու արգելքը:

42. Վերոշարադրյալի հաշվառմամբ՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ.

- խոշտանգման արգելքը միջազգային իրավունքի համապարտադիր՝ *jus cogens* նորմ է, որն ամրագրված է Հայաստանի Հանրապետության կողմից վավերացված և վերջինիս իրավական համակարգի բաղկացուցիչ մասը կազմող միջազգային պայմանագրերում՝ «խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի ու պատժի դեմ» ՄԱԿ-ի կոնվենցիայում, «Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին» ՄԱԿ-ի միջազգային դաշնագրում, «խոշտանգումների և անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի կանխարգելման մասին» Եվրոպական կոնվենցիայում, Եվրոպական կոնվենցիայում, որոնք 2002 թվականի դրությամբ Հայաստանի Հանրապետության կողմից եղել են վավերացված,

- խոշտանգման նկատմամբ վաղեմության ժամկետի կիրառման արգելք նախատեսելու պահանջ ուղղակիորեն նախատեսված է վերոնշյալ կոնվենցիաների հիման վրա գործող մարմինների կողմից ընդունված փաստաթղթերում: Այսպես, «խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի ու պատժի դեմ» ՄԱԿ-ի կոնվենցիայի նկատմամբ մշտադիտարկում իրականացնող խոշտանգումների դեմ կոմիտեն դեռևս 2003 թվականի իր եզրափակիչ դիտարկումներում արձանագրել է խոշտանգմանն առնչվող հանցագործությունների նկատմամբ վաղեմության ժամկետների մասին դրույթը կիրառելու արգելքը: Պետական պաշտոնատար անձի կողմից կատարված խոշտանգմանը կամ վատ վերաբերմունքին վերաբերող գործերով քրեական վարույթը վաղեմության ժամկետի հիմքով դադարեցնելու ոչ իրավաչափությունն արձանագրել է նաև Եվրոպական դատարանը Մեծ պալատի խորհրդատավական կարծիքում վկայակոչված՝ *Աբդուլսամետր Յամանն ընդդեմ Թուրքիայի* գործով դեռևս 2004 թվականի նոյեմբերի 2-ին կայացրած վճռում, որտեղ դատարանը հղում է կատարել խոշտանգումների դեմ կոմիտեի 2003 թվականի եզրափակիչ դիտարկումներին,

- միջազգային պայմանագրային մարմինների դիրքորոշման՝ այդ պայմանագրերի բաղկացուցիչ մասը լինելու առնչությամբ Եվրոպական դատարանը նշել է, որ կոնվենցիոնալ համակարգի ամենակարևոր առանձնահատկություններից մեկն այն է, որ Եվրոպական կոնվենցիան ոչ միայն պահանջում է մասնակից պետություններից պահպանել դրանից բխող

⁴² Տես ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.3-րդ հոդվածը:

իրավունքներն ու պարտականությունները, այլ նաև ստեղծում է դատական մարմին, որը Եվրոպական կոնվենցիայի 19-րդ հոդվածի և 46-րդ հոդվածի 1-ին մասի ուժով իրավասու է վեր հանել Եվրոպական կոնվենցիայի խախտումները վերջնական վճիռներում, որոնց պետությունները պարտավորվել են հետևել: Բացի այդ, այն ստեղծում է վճիռների կատարման նկատմամբ վերահսկողական մեխանիզմ Նախարարների կոմիտեի պատասխանատվության ներքո (Եվրոպական կոնվենցիայի 46-րդ հոդվածի 2-րդ կետ): Նման մոտեցումը, Եվրոպական դատարանի գնահատմամբ, ընդգծում է վճիռների արդյունավետ կատարման կարևորությունը⁴³: Ընդ որում, Եվրոպական կոնվենցիայի 32-րդ հոդվածի համաձայն՝ Եվրոպական դատարանի իրավագործությունը տարածվում է այն բոլոր հարցերի վրա, որոնք վերաբերում են Եվրոպական կոնվենցիայի և դրան կից Արձանագրությունների դրույթների մեկնաբանմանն ու կիրառմանը: Այս առումով հարկ է նշել, որ հենց ինքը՝ Եվրոպական դատարանը շեշտել է, որ իր վճիռները, ըստ էության, ծառայում են ոչ միայն Եվրոպական դատարանին հասցեագրված վեճերի լուծմանը, այլև ընդհանուր առմամբ կոչված են **«պարզաբանելու, պաշտպանելու և զարգացնելու»** Եվրոպական կոնվենցիայով սահմանված կանոնները՝ դրանով իսկ նպաստելով պետությունների՝ որպես պայմանավորվող կողմերի ստանձնած պարտավորությունները կատարելուն: Եվրոպական դատարանն ընդգծել է, որ թեև կոնվենցիոնալ համակարգի առաջնային նպատակը անհատական օգնություն տրամադրելն է, վերջինիս առաքելությունը, նաև ընդհանուր շահերից ելնելով, հանրային քաղաքականության հարցեր որոշելն է՝ դրանով իսկ բարձրացնելով մարդու իրավունքների պաշտպանության ընդհանուր չափանիշները և ընդլայնելով մարդու իրավունքների իրավաբանական պրակտիկան անդամ-պետությունների համայնքում⁴⁴,

- միջազգային պայմանագրային մարմինների դիրքորոշման՝ անդամ պետությունների համար ունեցած իրավաբանական ուժի առնչությամբ Վճռաբեկ դատարանը տեղին է համարում հիշատակել «Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին» ՄԱԿ-ի դաշնագրի կիրառման ապահովման նպատակով ստեղծված՝ Մարդու իրավունքների կոմիտեի առնչությամբ Արդարադատության միջազգային դատարանի այն դիրքորոշումը, որ դատարան դիմելիս անհրաժեշտ է կարևորել և պատշաճորեն հաշվի առնել միջազգային պայմանագրի ողջամիտ կիրառումը մշտադիտարկելու նպատակով հատուկ ստեղծված անկախ մարմինների կողմից ընդունված մեկնաբանությունը, եթե այդպիսիք ստեղծվել են⁴⁵:

Նմանատիպ իրավական դիրքորոշում է արտահայտել նաև Ժողովրդավարություն իրավունքի միջոցով Եվրոպական հանձնաժողովը (Վենետիկի հանձնաժողով), նշելով, որ. *«(...) [Այն իրավական նորմերը, որոնց վերաբերյալ իրենց պաշտոնական դիրքորոշումն են հայտնում պայմանագրային մարմինները, Կողմ պետությունների համար պարտադիր իրավաբանական ուժ ունեցող պարտավորություններ են, և հետևաբար պայմանագրային մարմինների կողմից իրենց պաշտոնական դիրքորոշումը հայտնելն ավելին է, քան զուտ առաջարկությունները, որոնք կարող են հեշտությամբ անտեսվել, քանի որ Կողմ պետությունը համաձայն չի եղել ԽԴԿ-ի կողմից ընդունված մեկնաբանության կամ փաստերի նկատմամբ դրա կիրառման հետ: Ավելին, Կողմ պետությունները չեն կարող ուղղակի անտեսել դրանք,*

⁴³ Տե՛ս Մարդու իրավունքների Եվրոպական դատարանի՝ **Verein Gegen Tierfabriken Schweiz (vgt) v. Switzerland (No. 2)** գործով 2009 թվականի հունիսի 30-ի վճիռը, գանգատ թիվ 32772/02, կետ 84:

⁴⁴ Տե՛ս Մարդու իրավունքների Եվրոպական դատարանի՝ **Karner v. Austria** գործով 2003 թվականի հուլիսի 24-ի վճիռը, գանգատ թիվ 40016/98, կետ 26:

⁴⁵ Տե՛ս Մարդու իրավունքների Եվրոպական դատարանի Մեծ պալատի խորհրդատվական կարծիքը, դատավոր Ա.Հարությունյանի համընկնող առանձին կարծիքը, բաժին Ե, կետ 1:

այլ պետք է բարեխղճորեն (*bona fide*) հաշվի առնեն դրանք: Մյուս կողմից, նրանք զրկված չեն մանրամասն ուսումնասիրելուց հետո համապատասխան գործի վերաբերյալ ճիշտ իրավական դիրքորոշումը չարտահայտելու հիմքով դրանք մերժելու իրավունքից: Այնուամենայնիվ, ՄԻԿ-ի եզրահանգումներին ընդհանրապես չարձագանքելը կարող էր համարվել ՔՔԻՄԴ-ով սրանձնած պարտավորությունների խախտում: Իրավական հետևանքն այն է, որ անդամ պետություններն սրանձնում են ՄԻԿ-ի վերջնական կարծիքները բարեխղճորեն հաշվի առնելու պարտավորություն»⁴⁶,

- 1995 թվականի հուլիսի 5-ին ընդունված, ինչպես նաև 2005 թվականի նոյեմբերի 27-ի փոփոխություններով ՀՀ Սահմանադրությունը պետության կողմից վավերացրած միջազգային պայմանագրերն ուղղակիորեն դիտարկում էր որպես ներպետական իրավական համակարգի՝ գերակայությամբ օժտված բաղկացուցիչ մաս,

- 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքը 75-րդ հոդվածի 6-րդ մասի ուժով ուղղակիորեն նախատեսում էր Հայաստանի Հանրապետության կողմից վավերացված և վավերացվելիք պայմանագրերով սահմանված դեպքերում և դրանցով նախատեսված հանցանքներ կատարած անձանց նկատմամբ վաղեմության ժամկետներ չկիրառելու իրավական հիմք:

43. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ.

- Հ.Մովսիսյանին և Ա.Արսենյանին մեղսագրվող՝ Գ.Վիրաբյանի նկատմամբ բռնություն գործադրելով զուգորդված պաշտոնեական լիազորություններն անցնելու դեպքը տեղի է ունեցել 2004 թվականի ապրիլի 23-ին⁴⁷,

- վերոնշյալ դեպքի առնչությամբ Եվրոպական դատարանը 2012 թվականի հոկտեմբերի 2-ին *Վիրաբյանն ընդդեմ Հայաստանի* գործով ճանաչել է Գ.Վիրաբյանի՝ Եվրոպական կոնվենցիայի 3-րդ հոդվածով երաշխավորված նյութական և ընթացակարգային իրավունքների խախտման փաստը⁴⁸,

- Առաջին ատյանի դատարանը Հ.Մովսիսյանին և Ա.Արսենյանին մեղավոր է ճանաչել իրենց մեծագրվող արարքները կատարելու մեջ: Ապա անդրադառնալով վերջիններիս քրեական պատասխանատվության ենթարկելու հարցին՝ փաստել է, որ ՄԱԿ-ի՝ «Խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի ու պատժի դեմ» կոնվենցիան վաղեմության ժամկետի կիրառման արգելք չի նախատեսում, և որ միայն խոշտանգումների դեմ պայքարի կոմիտեն է կոնվենցիայի իր մեկնաբանություններում, որոնք, դատարանի գնահատմամբ խորհրդատվական բնույթ են կրում, ավստոսանք հայտնել, որ թեև նախորդ դիտարկումներում, առաջարկություններում արձանագրել էր, սակայն դեռևս գործող օրենսդրությունն ամեն դեպքում պահպանում է վաղեմության ժամկետները խոշտանգումների գործերով: Առաջին ատյանի դատարանը նաև եզրահանգել է, որ խոշտանգումների նկատմամբ վաղեմության ժամկետ կիրառելու արգելքը նախատեսված չէ նաև Եվրոպական կոնվենցիայում և միայն այն, որ Եվրոպական դատարանն իր՝ *Մոկանոն ընդդեմ Ռումինիայի* գործով որոշմամբ վաղեմության ժամկետն անցնելու հիմքով քրեական հետապնդումը չդադարեցնելու, անձի նկատմամբ ներում կամ համաներում չկիրառելու համար դիրքորոշում է հայտնել, դեռևս բավարար չէ, որ այդ որոշմամբ արտահայտված դիրքորոշումն ենթակա լինի պարտադիր կատարման Հայաստանի Հանրապետությունում, քանի որ Եվրոպական

⁴⁶ Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի Մեծ պալատի խորհրդատվական կարծիքը, դատավոր Ա.Հարությունյանի համընկնող առանձին կարծիքը, նույն տեղում:

⁴⁷ Տե՛ս սույն որոշման 16-16.1-րդ կետերը:

⁴⁸ Տե՛ս սույն որոշման 15-15.10-րդ կետերը:

դատարանի կողմից կայացված որոշումներն ինքնաբերաբար չեն ինկորպորացվում ՀՀ իրավական համակարգ և այդ դիրքորոշումը կիրառելու համար անհրաժեշտ է կամ ՀՀ քրեական օրենսգրքում փոփոխության կատարում կամ գոնե բարձրագույն դատական մարմնի կողմից Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային պրակտիկայի լույսի ներքո նախադեպային որոշման կայացմամբ այն որպես համապարտադիր վարքագծի կանոնի ճանաչում: Առաջին ատյանի դատարանը նշել է, որ Եվրոպական կոնվենցիայի դրույթները վավերացման փաստի ուժով պարտադիր են Հայաստանի Հանրապետության համար, սակայն Եվրոպական դատարանի որոշումները որևէ իրավադրույթով չեն կարող հավասարեցվել այդ միջազգային փաստաթղթերի մեջ ամրագրված հոդվածներին և ուղղակիորեն կիրառվել: Առաջին ատյանի դատարանի գնահատմամբ՝ վերը նշված որոշման կիրառմամբ անտեսվել է անձի վիճակը վատթարացնող օրենքների ու իրավական ակտերի հետադարձ ուժի արգելքը: Եթե անգամ Եվրոպական դատարանի որոշումն կիրառելի լիներ Հայաստանի Հանրապետությունում, ապա նախաքննական մարմինը քննության առարկա չի դարձրել այն հանգամանքը, թե այդ որոշմամբ արտահայտված դիրքորոշման կիրառման դեպքում արդյոք չեն խախտվում Հ.Մովսիսյանի և Ա.Արսենյանի իրավունքներն ու հիմնարար ազատությունները և օրինական շահերը, քանի որ նրանց մեղսագրվող արարքը կատարվել է դեռևս 2004 թվականի ապրիլ ամսին, իսկ Եվրոպական դատարանի որոշումը կայացվել է 2014 թվականի սեպտեմբերի 17-ին⁴⁹,

- Վերաքննիչ դատարանը անփոփոխ է թողել Առաջին ատյանի դատարանի որոշումը՝ համաձայնվելով արտահայտված դիրքորոշումների հետ⁵⁰:

44. Սույն գործի փաստերի հաշվառմամբ՝ Վճռաբեկ դատարանը, անդրադառնալով Հ.Մովսիսյանին և Ա.Արսենյանին մեղսագրվող արարքը կատարելու համար քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետներ չկիրառելու բավարար իրավական հիմքի առկայությանը, արձանագրում է, որ Հ.Մովսիսյանին և Ա.Արսենյանին մեղսագրվող արարքը կատարելու օրվա՝ 2004 թվականի ապրիլի 23-ի դրությամբ ՀՀ քրեական օրենսգրքի 75-րդ հոդվածի 6-րդ մասն ուղղակիորեն նախատեսել է միջազգային պայմանագրերով սահմանված դեպքերում և նախատեսված հանցանքներ կատարած անձանց նկատմամբ վաղեմության ժամկետներ կիրառելու արգելք: Ինչ վերաբերում է Հայաստանի Հանրապետության կողմից այդ պահի դրությամբ վավերացված միջազգային պայմանագրերով նման արգելքի առկայությանը, ապա պետք է փաստել, որ դեպքից առաջ՝ դեռևս 1993 թվականին, Հայաստանի Հանրապետության կողմից արդեն իսկ վավերացված են եղել խոշտանգման արգելքը նախատեսող՝ «Խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի ու պատժի դեմ» ՄԱԿ-ի կոնվենցիան և Եվրոպական կոնվենցիան, որոնցով խոշտանգման դեպքերի համար վաղեմության ժամկետներ նախատեսված չեն եղել: Դեռևս 1998 թվականի դեկտեմբերի 10-ին նախկին Հարավսլավիայի հարցերով միջազգային քրեական տրիբունալը՝ *the Prosecutor v. Anto Furundzija* գործով որոշմամբ արձանագրել է, որ խոշտանգման դեպքերի վրա չեն կարող տարածվել վաղեմության ժամկետները: Իսկ արդեն 2003 թվականին, խոշտանգման դեպքերի նկատմամբ վաղեմության ժամկետների կիրառումը բացառելու պահանջը հստակեցվել էր Խոշտանգման դեմ կոմիտեի փաստաթղթերում, որոնց վկայակոչմամբ դեռևս 2004 թվականին համանուն դիրքորոշում էր ձևավորել նաև Եվրոպական դատարանը: Այլ կերպ՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է,

⁴⁹ Տե՛ս սույն որոշման 17-րդ կետը:

⁵⁰ Տե՛ս սույն որոշման 18-րդ կետը:

որ 2004 թվականի ապրիլի 23-ի դրությամբ, 1995 թվականի հուլիսի 5-ին ընդունված ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի ուժով, ՀՀ քրեական օրենսգրքի 75-րդ հոդվածի 6-րդ մասում առկա է եղել խոշտանգման դեպքերի նկատմամբ վաղեմության ժամկետների կիրառման՝ ՀՀ միջազգային պայմանագրերով նախատեսված իրավական արգելք:

45. Միջազգային իրավունքի նորմերի անմիջական կիրառության առնչությամբ, Վճռաբեկ դատարանը տեղին է համարում հիշատակել Եվրոպական դատարանի՝ *Կոնոնովն ընդդեմ Լատվիայի գործով* արտահայտած իրավական դիրքորոշումը, որում Եվրոպական դատարանի Մեծ պալատը, վերանայելով Եվրոպական կոնվենցիայի 7-րդ հոդվածի խախտում արձանագրելու մասին Եվրոպական դատարանի՝ 2008 թվականի հուլիսի 24-ի որոշումը, դատապարտելու համար բավականաչափ հստակ իրավական հիմքերի առկայության տեսանկյունից Եվրոպական կոնվենցիայի 7-րդ հոդվածի 1-ին կետի հետ անհամատեղելի չի համարել 1993 թվականին ներպետական օրենսդրությամբ քրեականացված՝ 1944 թվականին կատարված պատերազմական հանցագործության համար 2000 թվականին դիմումատուի դատապարտումը պատերազմական հանցագործությունների համար պատասխանատվություն նախատեսող միջազգային իրավունքի նորմերի հիման վրա⁵¹: Անդրադառնալով վաղեմության ժամկետների կիրառման խնդրին, Եվրոպական դատարանը կարևոր է համարել այն հարցի քննարկումը, թե **արդյո՞ք նախքան դիմումատուի դատապարտումը որևէ պահի միջազգային իրավունքով նման արարքի համար վաղեմության ժամկետներ սահմանված եղել են, թե ոչ: Արդյունքում, հաշվի առնելով այն, որ միջազգային իրավունքում ոչ 1944 թվականին և ոչ էլ դրանից հետո վաղեմության ժամկետներ նախատեսված չեն եղել, և որ այդպիսիք նախատեսված չեն եղել ներպետական օրենքով, Եվրոպական դատարանը գտել է, որ դիմումատուի դատապարտումը ժամկետանց չի եղել**⁵²:

45.1. Վճռաբեկ դատարանը հարկ է համարում նշել, որ վերը հիշատակված՝ *Կոնոնովն ընդդեմ Լատվիայի գործով* Եվրոպական դատարանն անդրադարձել է այն հարցին, թե արդյո՞ք դիմումատուի համար կարող էր կանխատեսելի լինել, որ համապատասխան արարքները պատերազմական հանցագործություններ են, և արդյո՞ք վերջինս դրանց համար կարող էր դատապարտվել: Այս հարցի առնչությամբ Եվրոպական դատարանն արձանագրել է, որ կանխատեսելիության գաղափարի շրջանակը մեծապես կախված է խնդրո առարկայի բովանդակությունից, ոլորտից, որի վրա այն տարածվում է, և այն անձանց շրջանակից և կարգավիճակից, ում այն ուղղված է: Եվրոպական դատարանն ընդգծել է, որ մասնագիտական գործունեություն իրականացնող անձինք պետք է առավել բարձր աստիճանի զգուշավորություն ցուցաբերեն իրենց աշխատանքն իրականացնելիս, և վերջիններից կարելի է ակնկալել, որ հատուկ ուշադիր կլինեն իրենց գործունեությունից բխող հնարավոր ռիսկերը գնահատելիս: Արդյունքում Եվրոպական դատարանը եզրահանգել է, որ համապատասխան արարքների՝ պատերազմական հանցագործություն լինելու հանգամանքը՝ հիմնված միջազգային իրավունքի վրա, 1944 թվականին կարող էր դիմումատուի՝ որպես մարտական իրավիճակում հայտնված երիտասարդ զինծառայողի համար բավականաչափ կանխատեսելի լինել՝ մարդու միջազգային հիմնարար իրավունքներին հետևելու պահանջի ուժով, չնայած այն հանգամանքին, որ 1926 թվականի քրեական օրենսգրքը որևէ հղում չէր պարունակում միջազգային իրավունքին և պատերազմի կանոններին և որ այդպիսիք պաշտոնապես հրապարակված չէին ԽՍՀՄ-ում

⁵¹ Տես Մարդու իրավունքների եվրոպական դատարանի Մեծ պալատի՝ *Kononov v. Latvia* գործով 2010 թվականի մայիսի 17-ի վճիռը, գանգատ թիվ 36376/04, կետեր 196-199:

⁵² Տես նույն տեղում, կետեր 232-233:

կամ Լատվիայի Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունում⁵³:

Վերոշարադրյալի հաշվառմամբ՝ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում արձանագրել, որ սույն գործով ամբաստանյալները ոստիկանության աշխատակիցներ են եղել, իսկ 2001 թվականի ապրիլի 16-ին ընդունված՝ «Ոստիկանության մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածն ուղղակիորեն սահմանում էր, որ **ոստիկանության աշխատակցի կողմից մարդուն խոշտանգումների, դաժան կամ նրա արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի ենթարկելը կամ նրա նկատմամբ բռնություն կիրառելն արգելվում է և առաջացնում է պատասխանատվություն՝ օրենքով սահմանված կարգով**: Հետևաբար, սույն գործով ամբաստանյալների՝ որպես ոստիկանների համար բավականաչափ հստակ է եղել խոշտանգումների, դաժան կամ անձի արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի արգելքը, քանի որ այն ուղղակիորեն նախատեսված է եղել իրենց մասնագիտական գործունեությանն առնչվող հիմնական նորմատիվ իրավական ակտում:

46. Ամփոփելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Հայաստանի Հանրապետությունը, 1995 թվականին ընդունված ՀՀ Սահմանադրությամբ Հայաստանի Հանրապետության կողմից վավերացված միջազգային պայմանագրերը նախատեսելով որպես ՀՀ իրավական համակարգի բաղկացուցիչ մաս և վավերացնելով խոշտանգումների դեմ պայքարի հիմնական միջազգային փաստաթղթերը, հստակ հանձնառություն է ստանձնել օրենսդրորեն և գործնականում արդյունավետ մեխանիզմներ նախատեսել խոշտանգումների և դրանց հավասարեցված արարքների քրեականացման, դրանց վերաբերյալ դեպքերով արդյունավետ քննություն իրականացնելու և մեղավորներին քրեական պատասխանատվության ենթարկելու համար: Այս հանձնառությունը ստանձնելու և այն հետևողականորեն իրականացնելու ապացույցը Հայաստանի Հանրապետության կողմից խոշտանգումների դեմ պայքարի ոլորտի հիմնական միջազգային կոնվենցիաների վավերացումն է, ներպետական օրենսդրության զարգացումներն ու համապատասխան դատական պրակտիկայի ձևավորումը:

Այնքանով, որքանով 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգիրքն ուղղակիորեն ամրագրում էր միջազգային պայմանագրերով սահմանված դեպքերում և դրանցով նախատեսված հանցանքներ կատարած անձանց նկատմամբ վաղեմության ժամկետներ կիրառելու արգելք, իսկ Հայաստանի Հանրապետությունը խոշտանգումների դեմ պայքարի հիմնական միջազգային պայմանագրերի վավերացմամբ պարտավորվել է հետևել նաև այդ պայմանագրերի դրույթների մեկնաբանությանն ու կիրառությանն ուղղված՝ կոնվենցիոնալ մարմինների կողմից ընդունված փաստաթղթերում ամրագրված պահանջներին, հետևաբար Հայաստանի Հանրապետության իրավական համակարգի բաղկացուցիչ մասը կազմող միջազգային իրավունքի նորմերի հիման վրա կարելի է փաստել, որ առնվազն ՀՀ քրեական օրենսգիրքն ուժի մեջ մտնելու օրվա՝ 2003 թվականի օգոստոսի 1-ի դրությամբ, առկա էր խոշտանգման կամ դրան հավասարեցված վերաբերմունքի դեպքում վաղեմության ժամկետներ կիրառելու օրենսդրական արգելք, որը կարող էր սույն գործով ամբաստանյալների համար կանխատեսելի լինել իրենց մեղսագրվող արարքը կատարելու օրվա՝ 2004 թվականի ապրիլի 23-ի դրությամբ:

Սույն որոշման 43-րդ կետում վկայակոչված՝ Եվրոպական դատարանի վճիռների նշանակության վերաբերյալ վերլուծության լույսի ներքո Վճռաբեկ դատարանն իր անհամաձայնությունն է արտահայտում Առաջին ատյանի դատարանի այն դիրքորոշմանը,

⁵³ Տե՛ս նույն տեղում, կետեր 235-239:

որ Եվրոպական դատարանի որոշումներով արտահայտված դիրքորոշումները ենթակա չեն պարտադիր կատարման Հայաստանի Հանրապետությունում, քանի որ դրանք ինքնաբերաբար չեն ինկորպորացվում ՀՀ իրավական համակարգ: Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Եվրոպական կոնվենցիայի 1-ին հոդվածով ամրագրված՝ անդամ-պետությունների պարտականությունը՝ իր իրավագործության ներքո գտնվող յուրաքանչյուրի համար ապահովել այն իրավունքներն ու ազատությունները, որոնք սահմանված են Եվրոպական կոնվենցիայով, ենթադրում է անդամ-պետությունների պարտականությունը՝ երաշխավորել այդ իրավունքներն ու ազատություններն այն մեկնաբանությամբ, որ դրանց տվել է Եվրոպական դատարանը՝ որպես կոնվենցիանալ դրույթների մեկնաբանության իրավագործությամբ օժտված մարմին: Ընդ որում, վերոշարադրյալից բխում է, որ Եվրոպական կոնվենցիայի 1-ին հոդվածի ուժով Եվրոպական դատարանի վճիռը պարտադիր է ոչ միայն կոնկրետ գործով պատասխանող պետության, այլ առհասարակ Եվրոպական կոնվենցիայի անդամ յուրաքանչյուր պետության համար արձանագրված խախտման ուժով անդամ-պետությունների համար առաջացնում է *erga omnes* պարտավորություն՝ հետևել Եվրոպական դատարանի ընդհանուր նախադեպային իրավունքին: Հետևաբար, Առաջին աստիճանի դատարանի այս դիրքորոշումը հակասում է կոնվենցիոնալ համակարգի և այդ համակարգի ներսում Եվրոպական դատարանի որոշումների դերի ու նշանակության վերաբերյալ Եվրոպական դատարանի արտահայտած՝ սույն որոշման 43-րդ կետում մեջբերված իրավական դիրքորոշումներին:

47. Այսպիսով, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ներպետական կանոնակարգումները, մասնավորապես՝ ՀՀ քրեական օրենսգրքի 75-րդ հոդվածի 6-րդ մասով նախատեսված՝ միջազգային պայմանագրերով սահմանված դեպքերում և այդ պայմանագրերով նախատեսված հանցանքներ կատարած անձանց նկատմամբ վաղեմության ժամկետներ չկիրառելու վերաբերյալ դրույթը Եվրոպական կոնվենցիայի 7-րդ հոդվածի իմաստով բավարար իրավական հիմքեր է նախատեսում խոշտանգման կամ դրան հավասարեցված այլ հանցանքներ կատարած անձանց նկատմամբ քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետներ չկիրառելու համար:

Վերոգրյալի հաշվառմամբ՝ Վճռաբեկ դատարանը եզրահանգում է, որ սույն գործով ամբաստանյալներ Հ.Մովսիսյանը և Ա.Արսենյանն իրենց մեղսագրվող արարքի համար ենթակա են քրեական պատասխանատվության:

Հովհաննես Նեգուսի Մովսիսյանի և Արմեն Ռազմիկի Արսենյանի նկատմամբ պատիժ նշանակելու նպատակահարմարությունը.

48. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված *երկրորդ* իրավական հարցը հետևյալն է. արդյո՞ք ամբաստանյալներ Հովհաննես Մովսիսյանը և Արմեն Արսենյանը ենթակա են պատժի:

49. ՀՀ քրեական օրենսգրքի 48-րդ հոդվածի համաձայն՝ «1. Պատիժը պետական հարկադրանքի միջոց է, որը դատարանի դատավճռով պետության անունից նշանակվում է հանցագործության համար մեղավոր ճանաչված անձի նկատմամբ և արտահայտվում է այդ անձին իրավունքներից ու ազատություններից օրենքով նախատեսված զրկմամբ կամ դրանց սահմանափակմամբ:

2. Պատժի նպատակն է վերականգնել սոցիալական արդարությունը, ուղղել պատժի ենթարկված անձին, ինչպես նաև կանխել հանցագործությունները»:

50. Վերահաստատելով խոշտանգման համար ինչպես քրեական պատասխանատվության, այնպես էլ պատժի անխուսափելիության կարևորությունը խոշտանգման դեպքերի

արդյունավետ քննության՝ պետության պոզիտիվ պարտականության համատեքստում, այդուհանդերձ, Վճռաբեկ դատարանը հարկ է համարում անդրադառնալ սույն գործի առանձնահատկություններին:

50.1. Նախ՝ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում հատուկ ընդգծել, որ օրենքի միատեսակ կիրառության ապահովման գործառույթի իրացման շրջանակում դատական պրակտիկայում առաջին անգամ ուղենիշային նշանակություն ունեցող դիրքորոշում է արտահայտում խոշտանգում և դրանց հավասարեցված այլ արարքներ կատարած անձանց նկատմամբ քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետներ չկիրառելու վերաբերյալ:

50.2. Երկրորդ, սույն գործի նյութերի ուսումնասիրությունից հետևում է, որ ամբաստանյալների կողմից Գ.Վիրաբյանի նկատմամբ բռնություն գործադրելով զուգորդված պաշտոնեական լիազորություններն անցնելու վերաբերյալ վարույթը՝ 2004 թվականի օգոստոսի 11-ին կարճվելուց հետո մոտ մեկ տարի անց, սպառելով ներպետական պաշտպանության իրավական միջոցները, Գ.Վիրաբյանը 2005 թվականի մայիսի 11-ին դիմել է Եվրոպական դատարան: Գ.Վիրաբյանի՝ Եվրոպական կոնվենցիայի 3-րդ, 6-րդ և 14-րդ հոդվածներով երաշխավորված իրավունքների խախտման փաստն արձանագրող Եվրոպական դատարանի վճիռը կայացվել է յոթ տարի անց՝ 2012 թվականի հոկտեմբերի 2-ին: Ներպետական դատավարական ընթացակարգերի կիրառմամբ Եվրոպական դատարանի վերոնշյալ վճիռ՝ որպես նոր հանգամանքի հիմքով գործի վերաբացման արդյունքում միայն երկու տարից անց՝ 2014 թվականի սեպտեմբերի 1-ին, դատախազի կողմից որոշում է կայացվել 2004 թվականի օգոստոսի 11-ի վերոնշյալ որոշումը վերացնելու մասին: Եվ մոտ ևս երկու տարի անց՝ 2016 թվականի մայիսի 10-ին հարուցվել է քրեական գործ՝ 2004 թվականի ապրիլի 23-ին Գ.Վիրաբյանի նկատմամբ բռնություն գործադրելով զուգորդված պաշտոնեական լիազորություններն անցնելու դեպքի առթիվ: Նախաքննության ընթացքում Հ.Մովսիսյանը և Ա.Արսենյանը ներգրավվել են որպես մեղադրյալներ, և նրանց մեղադրանքներ են առաջադրվել, ապա որոշում է կայացվել նրանց նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնելու, և քրեական գործով վարույթը կարճելու մասին՝ քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետներն անցած լինելու հիմքով, որից հետո այդ որոշումը վերացվել է ՀՀ գլխավոր դատախազի տեղակալի կողմից: Միայն երկու տարի անց՝ 2018 թվականի փետրվարի 20-ին, քրեական գործը՝ ըստ մեղադրանքի Հ.Մովսիսյանի և Ա.Արսենյանի, մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Առաջին աստիճանի դատարան: Առաջին աստիճանի և Վերաքննիչ դատարաններում գործը քննվել է շուրջ երկու տարի: Վերաքննիչ դատարանի որոշման դեմ բերված վճռաբեկ բողոքը Վճռաբեկ դատարանի՝ 2019 թվականի նոյեմբերի 25-ի որոշմամբ ընդունվել է վարույթ: 2021 թվականի հունվարի 27-ին հրավիրված դատական նիստում Վճռաբեկ դատարանը որոշել է ամբաստանյալներ Հ.Մովսիսյանի և Ա.Արսենյանի գործով խորհրդատվական կարծիք ստանալու համար դիմել Եվրոպական դատարան: Եվրոպական դատարանի Մեծ պալատը 2022 թվականի ապրիլի 26-ին խորհրդատվական կարծիք է տրամադրել Վճռաբեկ դատարանին, որի հայերեն թարգմանությունը Վճռաբեկ դատարանում ստացվել է 2022 թվականի հուլիսի 28-ին:

Վերոգրյալից հետևում է, որ սույն որոշումը կայացնելու օրվա դրությամբ Հ.Մովսիսյանին և Ա.Արսենյանին մեղսագրվող դեպքից անցել է գրեթե 20 տարի: Այս առնչությամբ Վճռաբեկ դատարանը կարևոր է համարում արձանագրել, որ քրեական վարույթի տևական ժամանակը պայմանավորված է եղել ոչ թե ամբաստանյալների վարքագծով, այլ սույն գործի քննության առանձնահատկություններով, այդ թվում՝ տուժողի կողմից Եվրոպական դատարան դիմելուց

և Եվրոպական դատարանի վճիռը ստանալուց հետո գործի վերաբացման երկարատև դատավարական ընթացակարգերը կիրառելով, գործի վերաբացումից հետո Հ.Մովսիսյանին և Ա.Արսենյանին որպես մեղադրյալ ներգրավելուց հետո կրկին քրեական հետապնդումը դադարեցնելով, ապա այն նորոգելով, իրավական խնդրի կարևորությամբ և բարդությամբ պայմանավորված՝ վճռաբեկ վարույթի տևողությամբ, որը ներառել է խորհրդատավական կարծիք ստանալու նպատակով Եվրոպական դատարան դիմելն ու դրան հաջորդող իրավական գործընթացը: Գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ այս ողջ ժամանակահատվածում ամբաստանյալների կողմից գործի ձգձգմանն ուղղված որևէ վարքագիծ չի դրսևորվել:

Այս առնչությամբ հարկ է նշել, որ Եվրոպական դատարանը, Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետով երաշխավորված ողջամիտ ժամկետում գործի քննության իրավունքի խախտման համար հնարավոր փոխհատուցում է դիտարկել պետության կողմից պատժի հստակ և չափելի մեղմացումը⁵⁴:

51. Ուստի, վերոշարադրյալի հետ մեկտեղ հաշվի առնելով այն, որ Հ.Մովսիսյանը և Ա.Արսենյանն այլևս ոստիկանության համակարգում չեն աշխատում, ինչպես նաև, որ Վճռաբեկ դատարանում դռնբաց դատական նիստի ընթացքում տուժող Գ.Վիրաբյանը դիրքորոշում է հայտնել այն մասին, որ ամբաստանյալների նկատմամբ որևէ բողոք և պահանջ չունի, պատժի նշանակման ընդհանուր սկզբունքների համատեքստում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ կոնկրետ դեպքում ամբաստանյալների նկատմամբ պատժի նշանակումն այլևս չի կարող ծառայել իր նպատակներին⁵⁵: Այս առնչությամբ Վճռաբեկ դատարանը կարևորում է նաև այն հանգամանքը, որ Հ.Մովսիսյանին և Ա.Արսենյանին ներկայացված մեղադրանքը պատշաճ հետազոտվել է ստորադաս դատարաններում, ինչի արդյունքում վերջինները մեղավոր են ճանաչվել իրենց մեղսագրվող արարքը կատարելու մեջ և նրանց նկատմամբ կայացվել է մեղադրական դատավճիռ: Ուստի, *Վիրաբյանն ընդդեմ Հայաստանի* գործով Եվրոպական դատարանի վճռով ոչ նյութական վնասի համար սահմանված փոխհատուցման հետ մեկտեղ սույն գործով տուժող Գ.Վիրաբյանը ձեռք է բերել նաև իրեն պատճառված նյութական վնասի՝ ՀՀ քաղաքացիական դատավարության կարգով հատուցում պահանջելու իրավունք:

52. Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ամբաստանյալներ Հովհաննես Մովսիսյանը և Արմեն Արսենյանը ենթակա չեն պատժի:

53. Ամփոփելով վերոշարադրյալը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով Առաջին ատյանի դատարանը, 2019 թվականի փետրվարի 22-ի դատավճռով Հ.Մովսիսյանին և Ա.Արսենյանին վաղեմության ժամկետներն անցնելու հիմքով քրեական պատասխանատվությունից ազատելով, իսկ Վերաքննիչ դատարանը, 2019 թվականի հուլիսի 4-ի որոշմամբ Առաջին ատյանի դատարանի դատավճիռը օրինական ուժի մեջ թողնելով, թույլ են տվել դատական սխալ՝ 1998 թվականի հուլիսի 1-ին ընդունված ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 397-րդ հոդվածով նախատեսված՝ միջազգային պայմանագրի և քրեական օրենքի ոչ ճիշտ կիրառում, ինչը հիմք է նույն օրենսգրքի 419-րդ հոդվածի հիման վրա ստորադաս դատարանների դատական ակտերը՝ վաղեմության ժամկետն անցնելու հիմքով ամբաստանյալներին քրեական պատասխանատվությունից ազատելու մասով:

⁵⁴ Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Beck v. Norway* գործով 2001 թվականի հունիսի 26-ի վճիռը, գանգատ թիվ 26390/95, կետ 27, *Ohlen v. Denmark* գործով 2005 թվականի փետրվարի 24-ի վճիռը, գանգատ թիվ 63214/00, կետ 27:

⁵⁵ Տե՛ս, *mutatis mutandis*, Վճռաբեկ դատարանի՝ *Արփինե Մայսուրյանի* գործով 2020 թվականի մայիսի 25-ի թիվ ԵԿԴ/0207/01/14 որոշումը:

բեկանելու և փոփոխելու համար: Միևնույն ժամանակ, սույն որոշման 50-52-րդ կետերում կատարված վերլուծության հաշվառմամբ՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ստորադաս դատարանների դատական ակտերը՝ Հ.Մովսիսյանին և Ա.Արսենյանին մեղավոր ճանաչելու մասով, պետք է թողնել անփոփոխ՝ առանց վերջիններիս նկատմամբ պատիժ նշանակելու:

53. Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 5-րդ, 81-րդ, 162-րդ, 163-րդ, 171-րդ հոդվածներով, «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 11-րդ հոդվածով և Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 39-րդ, 43-րդ, 361¹-րդ, 406-րդ, 419-րդ, 422-423-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Հովհաննես Նեգուսի Մովսիսյանի և Արմեն Ռազմիկի Արսենյանի վերաբերյալ Արարատի և Վայոց ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2019 թվականի փետրվարի 22-ի դատավճիռը և այն անփոփոխ թողնելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2019 թվականի հուլիսի 4-ի որոշումը մասնակիորեն բեկանել և փոփոխել՝ Արարատի և Վայոց ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2019 թվականի փետրվարի 22-ի դատավճիռի եզրափակիչ մասի 1-ին և 3-րդ պարբերություններում «և ՀՀ քրեական օրենսգրքի 75-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի կիրառմամբ՝ վաղեմության ժամկետն անցնելու հիմքով, նրան ազատել քրեական պատասխանատվությունից» բառերը փոխարինել «առանց պատիժ նշանակելու» բառերով:

2. Ստորադաս դատարանների դատական ակտերը մնացած մասով թողնել անփոփոխ:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

ՎԴ/5889/05/20

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ
ՈՐՈՇՈՒՄ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎՃՌԱԲԵԿ
ԴԱՏԱՐԱՆԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՊԱԼԱՏԸ
(ԱՅՍՈՒՀԵՏ՝ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ)

2024 թվականի հունվարի 09-ին

գրավոր ընթացակարգով քննելով Սվետլանա Ասադյանի վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի 05.08.2022 թվականի որոշման դեմ՝ վարչական գործով ըստ հայցի Սվետլանա Ասադյանի ընդդեմ ՀՀ կադաստրի կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե), երրորդ անձ «Ամերիաբանկ» ՓԲ ընկերություն (այսուհետ՝ Բանկ)՝ 04.06.2020 թվականի իրավունքի պետական գրանցումն անվավեր ճանաչելու պահանջի մասին,

ՊԱՐՉԵՑ

1. Գործի դատավարական նախապատմությունը.

Դիմելով դատարան՝ Սվետլանա Ասադյանը պահանջել է անվավեր ճանաչել ք. Երևան, Թաիրովի փողոց 47/1 տուն հասցեում գտնվող անշարժ գույքի նկատմամբ Բանկի անվամբ կատարված սեփականության իրավունքի պետական գրանցումը:

ՀՀ վարչական դատարանի (դատավոր Լ. Հակոբյան) (այսուհետ՝ Դատարան) 23.03.2021 թվականի վճռով հայցը մերժվել է:

ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 05.08.2022 թվականի որոշմամբ Սվետլանա Ասադյանի վերաքննիչ բողոքը մերժվել է, և Դատարանի 23.03.2021 թվականի վճիռը թողնվել է անփոփոխ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Սվետլանա Ասադյանը (ներկայացուցիչ Սյուզաննա Սարգսյան):

Վճռաբեկ բողոքի պատասխան է ներկայացրել Բանկը (ներկայացուցիչ Դավիթ Սարգսյան):

2. Սվետլանա Ասադյանի վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 27-րդ, 28-րդ, 29-րդ և 124-րդ հոդվածները, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 249-րդ և 250-րդ հոդվածները:

Բողոք բերած անձը նշված պնդումը պարզառարանել է հետևյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանն անտեսել է այն հանգամանքը, որ ք. Երևան, Թաիրովի փ. 47/1 տուն հասցեում գտնվող անշարժ գույքի օրինական սեփականատերը դեռ որոշված չէ, և, քանի որ 11.07.2014 թվականին Արման Նազարյանի և Բանկի միջև կնքված ք. Երևան, Թաիրովի փ. 47/1 տունը Արման Նազարյանի պարտավորությունների ապահովման դիմաց գրավ դնելու մասին գործարքը վիճարկվում է թիվ ԵԿԴ/5175/02/16 քաղաքացիական գործի շրջանակներում՝ որպես առոչինչ գործարք, որը, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 303-րդ և 304-րդ հոդվածների համաձայն, անվավեր է անկախ դատարանի կողմից այն այդպիսին ճանաչվելուց և չի կարող հանգեցնել իրավաբանական հետևանքների:

Բացի այդ, Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ տվյալ դեպքում Կոմիտեն, որպես վարչական մարմին, չի կատարել օրենքի պահպանմանը հետևելու իր պարտականությունը, մասնավորապես, թիվ ԵԿԴ/5175/02/16 քաղաքացիական գործով դատարանի կողմից 21.03.2017 թվականին հայցի ապահովման միջոցի՝ ք. Երևան, Թաիրովի փ. 47/1 տուն հասցեում գտնվող անշարժ գույքի վրա դրված արգելանքի կիրառված լինելու պայմաններում, կատարել է նշված անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցում:

Վերոգրյալի հիման վրա՝ բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 05.08.2022 թվականի որոշումը և այն փոփոխել՝ հայցն ամբողջությամբ բավարարել կամ գործն ուղարկել ստորադաս դատարան՝ նոր քննության՝ սահմանելով նոր քննության ծավալը:

2.1. Վճռաբեկ բողոքի վերաբերյալ Բանկի կողմից ներկայացված պատասխանի հիմնավորումները.

Թիվ ԵԿԴ/5175/02/16 քաղաքացիական գործի շրջանակներում 25.02.2020 թվականին ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից նոր կամ նոր երևան եկած հանգամանքների հիմքով հայցվորների կողմից ներկայացված վճռաբեկ բողոքը վարույթ ընդունված լինելն ինքնին չի վերացնում տվյալ գործով Երևան քաղաքի ընդհանուր իրավասության առաջին աստիճանի դատարանի 02.11.2018 թվականին կայացված վճիռն օրինական ուժի մեջ գտնվելու հանգամանքը, ուստի հայցվորի կողմից հայցի հիմքում վկայակոչված պնդումները, ինչպես նաև վճռաբեկ բողոքում ներկայացված հիմքերն անհիմն են:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը.

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1) Բանկի («Բանկ-Գրավառու»), Սվետլանա Ասադյանի և Լևոն Ասադյանի («Վաճառող») և Արման Նազարյանի («Գնորդ-Գրավատու») միջև 11.07.2014 թվականին կնքված անշարժ գույքի առուվաճառքի և գրավի (հիփոթեքի) պայմանագրով Վաճառողը Գնորդ-Գրավատուին վաճառել է ք. Երևան, Թաիրովի փ. 47/1 տուն հասցեում գտնվող անշարժ գույքը: Ի ապահովումն նշված պայմանագրով Բանկ-Գրավառուի հանդեպ Գնորդ-Գրավատուի ստանձնած պարտավորությունների պատշաճ կատարման՝ Գնորդ-Գրավատուն, ընդունելով անշարժ գույքն ի սեփականություն, թիվ 241443 պայմանագրի ուժով նշված անշարժ գույքը գրավադրել է հոգուտ Բանկ-Գրավառուի (**հատոր 1-ին, գ.թ. 50-55**):

2) 15.07.2014 թվականին ք. Երևան, Թաիրովի փ. 47/1 տուն հասցեում գտնվող անշարժ գույքի նկատմամբ գրանցվել է Արման Նազարյանի սեփականության իրավունքը: Միաժամանակ, նույն օրը ք. Երևան, Թաիրովի փողոցի թիվ 47/1 հասցեում գտնվող անշարժ գույքի նկատմամբ գրանցվել է Բանկի գրավի իրավունքը (**հատոր 1-ին, գ.թ. 56-59**):

3) Թիվ ԵԿԴ/5175/02/16 քաղաքացիական գործով՝ ըստ հայցի Սվետլանա Ասադյանի և

Լևոն Ասադյանի ընդդեմ Բանկի և Արման Նազարյանի՝ առ ոչինչ գործարքի անվավերության հետևանքներ կիրառելու պահանջի մասին, Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 21.03.2017 թվականի որոշմամբ կիրառվել է հայցի ապահովման միջոց և արգելվել է պատասխանողներ Բանկին և Արման Նազարյանին օտարել ք. Երևան, Թախիրովի փ. 47/1 տուն հասցեում գտնվող գրավի առարկա անշարժ գույքը (Հիմք՝ ԵԿԴ/5175/02/16 քաղաքացիական գործով Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 21.03.2017 թվականի կատարողական թերթ, **հատոր 1-ին, գ.թ. 18**):

4) ՀՀ ԱՆ Հարկադիր կատարումն ապահովող ծառայության Արագածոտնի մարզային բաժնի հարկադիր կատարող Բ. Մանուկյանի 04.04.2017 թվականի որոշմամբ՝ արգելանք է դրվել ք. Երևան, Թախիրովի փ. 47/1 տուն հասցեում գտնվող վիճահարույց անշարժ գույքի վրա (**հատոր 1-ին, գ.թ. 71**):

5) Թիվ ԵԿԴ/5175/02/16 քաղաքացիական գործով 02.11.2018 թվականին կայացված վճռով Սվետլանա Ասադյանի և Լևոն Ասադյանի հայցը մերժվել է: Նշված վճռի դեմ տվյալ գործով հայցվորներ Սվետլանա Ասադյանի և Լևոն Ասադյանի կողմից 17.12.2018 թվականին ներկայացվել է վերաքննիչ բողոք, որը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 15.01.2019 թվականի որոշմամբ վերադարձվել է: Այնուհետև, 04.02.2019 թվականին Սվետլանա Ասադյանի և Լևոն Ասադյանի կողմից կրկին ներկայացված վերաքննիչ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 12.02.2019 թվականի որոշմամբ վերադարձվել է: Նշված որոշման դեմ հայցվորների կողմից ներկայացված վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը ՀՀ վճռաբեկ դատարանի 03.07.2019 թվականի որոշմամբ մերժվել է (**Հիմք, «Դատալեքս» դատական ակտերի տեղեկատվական համակարգ, հատոր 1-ին, գ.թ. 19-23**):

6) Թիվ ԵԿԴ/5175/02/16 քաղաքացիական գործով Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 02.11.2018 թվականի վճռի դեմ հայցվորների կողմից կրկին ներկայացվել է վերաքննիչ բողոք, որը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 14.10.2019 թվականի որոշմամբ մերժվել է: Նշված որոշման դեմ 07.11.2019 թվականին հայցվորների կողմից ներկայացված վճռաբեկ բողոքը ՀՀ վճռաբեկ դատարանի 25.02.2020 թվականի որոշմամբ ընդունվել է վարույթ (**Հիմք, «Դատալեքս» դատական ակտերի տեղեկատվական համակարգ, հատոր 1-ին, գ.թ. 24**):

7) Թիվ ԵԿԴ/5175/02/16 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 24.06.2022 թվականի որոշմամբ ՀՀ վճռաբեկ դատարանի 03.07.2019 թվականի «Վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժելու մասին» որոշման դեմ Սվետլանա և Լևոն Ասադյանների ներկայացրած վճռաբեկ բողոքը բավարարվել է. վերանայվել է ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի 03.07.2019 թվականի «Վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժելու մասին» որոշումը և վերացվել է ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 12.02.2019 թվականի «Վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին» որոշումը (**հիմք՝ Datalex.am դատական տեղեկատվական համակարգ**):

8) Թիվ ԵԿԴ/5175/02/16 քաղաքացիական գործով ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 14.12.2022 թվականի որոշմամբ Սվետլանա և Լևոն Ասադյանների վերաքննիչ բողոքը մերժվել է, և Դատարանի 02.11.2018 թվականի վճիռը թողնվել է անփոփոխ: Նշված որոշման դեմ Սվետլանա և Լևոն Ասադյանների ներկայացրած վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը ՀՀ վճռաբեկ դատարանի 17.05.2023 թվականի որոշմամբ մերժվել է (**հիմք՝ Datalex.am դատական տեղեկատվական համակարգ**):

9) 25.05.2020 թվականին «Բի Էս Թի» ՍՊԸ-ի և Բանկի միջև կնքվել է «Գույքը հանձնելու

մասին» թիվ 2194 պայմանագիրը, որով չկայացած աճուրդի արդյունքում Բանկին է հանձնվել գրավի առարկա անշարժ գույքը (**հատոր 1-ին, գ.թ. 74-76**):

10) 04.06.2020 թվականին ք. Երևան, Թախիրովի փ. 47/1 տուն հասցեում գտնվող անշարժ գույքի նկատմամբ վիճարկվող պետական գրանցմամբ գրանցվել է Բանկի սեփականության իրավունքը (հատոր 1-ին, գ.թ. 85-86**):**

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները.

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 161-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված հիմքի առկայությամբ՝ նույն հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետի իմաստով, այն է՝ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար, քանի որ «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի կապակցությամբ առկա է իրավունքի զարգացման խնդիր, ինչպես նաև ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 161-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված հիմքի առկայությամբ՝ նույն հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի իմաստով, այն է՝ Վերաքննիչ դատարանի կողմից ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 249-րդ և 250-րդ հոդվածների խախտման հետևանքով առերևույթ առկա է մարդու իրավունքների և ազատությունների հիմնարար խախտում, որը խաթարել է արդարադատության բուն էությունը, և որի առկայությունը հիմնավորվում է ստորև ներկայացված պատճառաբանություններով.

Սույն բողոքի քննության շրջանակներում Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ հետևյալ իրավական հարցադրմանը.

- արդյո՞ք գրավի առարկա գույքի նկատմամբ կարող է կատարվել գրավառուի սեփականության իրավունքի պետական գրանցում, եթե խնդրո առարկա գույքի նկատմամբ կիրառվել է հայցի ապահովման միջոց, որով արգելվել է գույքի օտարումը:

ՀՀ Սահմանադրության 10-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում ճանաչվում և հավասարապես պաշտպանվում են սեփականության բոլոր ձևերը:

ՀՀ Սահմանադրության 60-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի օրինական հիմքով ձեռք բերած սեփականությունն իր հայեցողությամբ տիրապետելու, օգտագործելու և տնօրինելու իրավունք:

Նույն հոդվածի 3-րդ և 4-րդ մասերի համաձայն՝ սեփականության իրավունքը կարող է սահմանափակվել միայն օրենքով՝ հանրության շահերի կամ այլոց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով: Ոչ ոք չի կարող զրկվել սեփականությունից, բացառությամբ դատական կարգով՝ օրենքով սահմանված դեպքերի:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 163-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ սեփականության իրավունքը սուբյեկտի՝ օրենքով և այլ իրավական ակտերով ճանաչված ու պահպանվող իրավունքն է՝ իր հայեցողությամբ տիրապետելու, օգտագործելու և տնօրինելու իրեն պատկանող գույքը: Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ սեփականատերն իրավունք ունի իրեն պատկանող գույքի նկատմամբ, իր հայեցողությամբ, կատարել օրենքին չհակասող և այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահպանվող շահերը չխախտող ցանկացած գործողություն, այդ թվում՝ իր գույքը որպես սեփականություն օտարել այլ անձանց, նրանց

փոխանցել այդ գույքի օգտագործման, տիրապետման և տնօրինման իրավունքները, գույքը գրավ դնել կամ տնօրինել այլ եղանակով:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 172-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ սեփականատեր ունեցող գույքի նկատմամբ դրա առուվաճառքի, փոխանակության, նվիրատվության պայմանագրի կամ գույքի օտարման այլ գործարքի հիման վրա սեփականության իրավունք կարող է ձեռք բերել այլ անձը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 226-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ գրավի իրավունքը (այսուհետ՝ գրավը) գրավատուի գույքի նկատմամբ գրավառուի գույքային իրավունքն է, որը միաժամանակ միջոց է գրավառուի հանդեպ պարտապանի ունեցած դրամական կամ այլ պարտավորության կատարման ապահովման համար:

Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ գրավը լրացուցիչ (ակցեսոր) պարտավորություն է գրավառուի (պարտատիրոջ) հանդեպ գրավատուի (պարտապանի) հիմնական պարտավորության կատարման ապահովման համար:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 248-րդ հոդվածի համաձայն՝ գրավառուի (պարտատիրոջ) պահանջները բավարարելու համար գրավ դրված գույքի վրա կարող է բռնագանձում տարածվել պարտապանի կողմից գրավով ապահովված պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու այնպիսի հանգամանքներում, որոնց համար վերջինս պատասխանատվություն է կրում:

ՀՀ վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած որոշմամբ անդրադարձել է վերը նշված հոդվածի իրավական վերլուծությանը և նշել, որ գրավի իրավունքը կամ գրավը պարտավորությունների՝ իրային-իրավական ապահովման միջոց է, որը գրավառուին իրավունք է վերապահում հիմնական պարտավորության չկատարման դեպքում գրավատուի այլ պարտատերերի հանդեպ նախապատվության իրավունքով բավարարում ստանալու գրավի առարկայի արժեքից: Միաժամանակ, ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ գրավի իրավունքն առանձնահատուկ տեղ է զբաղեցնում իրային իրավունքների շարքում: Ի տարբերություն այլ իրային իրավունքների՝ գրավն առաջանում և իրավական արժևորում է ստանում այնքանով, որքանով այն անհրաժեշտ է օգտագործել հիմնական պարտավորության կատարումն ապահովելու համար: Այդ իսկ պատճառով գրավը, որպես այդպիսին, ունի երկակի բնույթ. այն բնութագրվում է որպես պարտավորաիրավական բնույթի իրային-իրավական ապահովման միջոց (*տես, «Սեյվր» ՍՊԸ-ն ընդդեմ Նշան Ալեքսանյանի թիվ ԵԿԴ/0169/02/15 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 26.12.2016 թվականի որոշումը*):

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 228-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ գույքի գրավատու կարող է լինել միայն դրա սեփականատերը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 249-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ գրավառուն իր պահանջի բավարարման նպատակով իրավունք ունի առանց դատարան դիմելու գրավի առարկայի վրա բռնագանձում տարածելու և իրացնելու այն, այդ թվում՝ գրավ դրված գույքը հիմնական պարտավորության համապատասխան չափի դիմաց գրավառուին կամ գրավառուի նշած երրորդ անձին ի սեփականություն հանձնելու, եթե՝ դա նախատեսված է գրավի պայմանագրով, կամ՝ առկա է գրավառուի և գրավատուի միջև կնքված գրավոր համաձայնություն, իսկ եթե գրավի պայմանագիր կնքելու համար պահանջվել է երրորդ անձի համաձայնություն կամ թույլտվություն, ապա նաև վերջինիս գրավոր համաձայնությունը՝ առանց դատարանի վճռի գրավ դրված գույքի իրացման մասին:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 250-րդ հոդվածի 1-ին կետի՝ իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրության համաձայն՝ գրավ դրված գույքն իրացվում

(վաճառվում) է հրապարակային սակարկություններով՝ հրապարակային սակարկությունների մասին օրենքով սահմանված կարգով (...):

Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ գրավ դրված գույքի՝ օրենքով սահմանված կարգով իրացման (վաճառքի) ընթացքում, եթե աճուրդը չկայացած է համարվել աճուրդի ընթացքում որևէ մասնակցի կողմից գույքի մեկնարկային գնի ավելացում չկատարվելու պատճառով, գրավառուն յոթ օրվա ընթացքում իրավունք ունի պահանջել գրավ դրված գույքը գրավով ապահովված պարտավորության և իրացման (վաճառքի) փաստացի ծախսերի դիմաց հանձնել իրեն՝ վճարելով գրավ դրված գույքի իրացման (վաճառքի) ծախսերը: Եթե գրավ դրված գույքի՝ տվյալ պահին ձևավորված գինն ավելի է գրավով ապահովված պահանջի և գրավ դրված գույքի իրացման (վաճառքի) ծախսերի հանրագումարից, ապա գրավառուն պարտավոր է գրավատուին փոխհատուցել տարբերությունը, հակառակ դեպքում գրավառուն իրավունք ունի պակաս գումարն ստանալ պարտապանի այլ գույքից, եթե պայմանագրով այլ բան նախատեսված չէ:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 281-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ գույքի նկատմամբ, որի վրա բռնագանձում է տարածվել, սեփականատիրոջ իրավունքը դադարում է այդ գույքի նկատմամբ այն անձի սեփականության իրավունքի ծագման պահից, ում անցնում է տվյալ գույքը:

ՀՀ սահմանադրական դատարանը, Մարետա Առաքելյանի դիմումի հիման վրա 19.07.2016 թվականի թիվ ՍԴՈ-1294 որոշմամբ գնահատելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 249-րդ հոդվածի սահմանադրականությունը գրավադրված գույքի վրա արտադատական կարգով բռնագանձում տարածելու իրավահարաբերություններում գույքի սեփականատիրոջ կամքի և համաձայնության արտահայտման վերաբերյալ հարկ է համարել արձանագրել հետևյալը.

նախ՝ կնքելով գրավի պայմանագիրը՝ գրավատուն տալիս է իր համաձայնությունը գրավով ապահովված պարտավորությունը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում իրեն պատկանող գրավադրված գույքի նկատմամբ սեփականության իրավունքի հնարավոր դադարման վերաբերյալ,

երկրորդ՝ գրավատուն տալիս է իր համաձայնությունը գրավով ապահովված պարտավորությունը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում արտադատական կարգով գույքի վրա բռնագանձում տարածելու և իրացնելու հնարավորության վերաբերյալ: Ընդ որում, համաձայն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 249-րդ հոդվածի՝ նման համաձայնությունը կարող է տրվել ինչպես գրավի պայմանագրով, այնպես էլ գրավատուի և գրավառուի միջև կնքված առանձին համաձայնությամբ,

երրորդ՝ գրավադրված գույքի վրա գրավառուի կողմից արտադատական կարգով բռնագանձում տարածելուց առաջ գրավատուն հնարավորություն ունի կամ միջոցներ ձեռնարկել գրավով ապահովված պարտավորությունը կատարելու համար և դրանով կանխել գրավադրված գույքի նկատմամբ սեփականության իրավունքի կորուստը, կամ դատական կարգով վիճարկել արտադատական կարգով բռնագանձման օրինականությունը: Վերոհիշյալ երեք հնարավոր իրավիճակներից առաջին երկուսում (որոնք կարող են համընկնել գրավի պայմանագրում արտադատական կարգով բռնագանձման պայման նախատեսվելու դեպքում) գրավադրվող գույքի սեփականատիրոջ կամարտահայտությունը դրսևորվում է ակտիվ գործողություններով՝ համապատասխան պայմանագիր կամ համաձայնագիր կնքելու միջոցով, և այդպիսի ակտիվ գործողությունների կատարումը պարտադիր պայման է: Երրորդում սեփականատիրոջ կամքը կարող է արտահայտվել պասիվ գործողությամբ, երբ տեղեկանալով գրավադրված գույքի արտադատական կարգով բռնագանձման մասին՝ նա

չի ձեռնարկում արտադատական կարգով բռնագանձումը կասեցնելուն ուղղված՝ օրենքով սահմանված որևէ գործողություն:

ՀՀ վճռաբեկ դատարանը, նախկինում կայացրած որոշմամբ անդրադառնալով գրավի առարկայի վրա բռնագանձում տարածելու և իրացնելու վերաբերյալ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 249-րդ հոդվածի 1-ին կետի կարգավորումներին, նշել է, որ գրավադրված գույքի վրա բռնագանձում տարածելը և իրացնելն իր մեջ ներառում է նաև գրավ դրված գույքը հիմնական պարտավորության համապատասխան չափի դիմաց գրավառուին ի սեփականություն հանձնելը: ՀՀ վճռաբեկ դատարանն ընդգծել է, որ գրավի իրավունքը, ըստ էության, այլ անձի գույքի նկատմամբ ունեցած այնպիսի իրավունք է, որի շնորհիվ գրավառուն հնարավորություն ունի պարտապանի կողմից պարտավորությունը չկատարելու դեպքում գրավադրված գույքի արժեքից բավարարելու իր պահանջները: Այսինքն՝ ի վերջո գրավի նպատակը գրավառուի՝ գրավով ապահովված պարտավորությունը չկատարելու դեպքում գրավ դրված գույքի արժեքից բավարարում ստանալն է, հետևաբար, գրավառուի կողմից ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 249-րդ հոդվածի 1-ին կետին համապատասխան՝ գրավի առարկան ի սեփականություն ընդունելը, ըստ էության, նշանակում է գրավի առարկայի բռնագանձման ավարտ (տես, Ամալյա Վարդանյանն ընդդեմ «ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ-ի թիվ ԵԿԴ/0384/02/13 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 30.04.2015 թվականի որոշումը):

ՀՀ վճռաբեկ դատարանը, նախկինում կայացրած մեկ այլ որոշմամբ անդրադառնալով վերը նշված բոլոր իրավական կարգավորումներին, նշել է, որ անկախ այն հանգամանքից՝ ով է ֆիզիկապես կազմակերպում կամ իրականացնում գույքի օտարումը (անմիջականորեն սեփականատերը, նրա լիազորված անձը, գրավառուն և այլն), այնուամենայնիվ, դրա արդյունքում տեղի է ունենում սեփականության իրավունքի ձեռքբերում գնորդի և **համապատասխանաբար սեփականության իրավունքի դադարում գույքի սեփականատիրոջ մոտ**: Ավելին, սեփականատերը գույքի գրավադրման պարագայում սեփական կամքով և հայեցողությամբ արդեն իսկ նախատեսում և թույլատրում է գույքի իրացումը՝ դրանով ապահովված պարտավորության չկատարման դեպքում, որպիսի պարագայում ևս բացակայում են հիմնավորումներ առ այն, որ գույքը տնօրինվում է այլ անձի կողմից: Այս դեպքում ուշադրության է արժանի ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 163-րդ հոդվածի 2-րդ կետի ձևակերպումը, որ գրավը սահմանում է որպես գույքի տնօրինման եղանակ, ինչը տրամաբանական է՝ հաշվի առնելով դրա իրացման դեպքում գույքի օտարման անխուսափելիությունը:

Փաստորեն, անկախ այն հանգամանքից՝ ով է ֆիզիկապես կազմակերպում կամ իրականացնում գույքի օտարումը (անմիջականորեն սեփականատերը, նրա լիազորված անձը, գրավառուն և այլն), այնուամենայնիվ դրա արդյունքում տեղի է ունենում սեփականության իրավունքի ձեռքբերում գնորդի և **համապատասխանաբար սեփականության իրավունքի դադարում գույքի սեփականատիրոջ մոտ**: Ավելին, սեփականատերը գույքի գրավադրման պարագայում սեփական կամքով և հայեցողությամբ արդեն իսկ նախատեսում և թույլատրում է գույքի իրացումը՝ դրանով ապահովված պարտավորության չկատարման դեպքում, որպիսի պարագայում ևս բացակայում են հիմնավորումներ առ այն, որ գույքը տնօրինվում է այլ անձի կողմից:

Այսպիսով, գրավի ինստիտուտը կայանում է նրանում, որ պարտավորության չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում պարտավորությունը կատարվում է գրավատուի սեփականությունը հանդիսացող գույքի հաշվին: Այսինքն՝ գրավադրված գույքի իրացումից

ստացված միջոցները ուղղվում են գրավով ապահովված պարտավորությանը (տես, «Արմօյլ» փակ բաժնետիրական ընկերությունն ընդդեմ Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի թիվ ՎԴ/1945/05/18 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 26.11.2021 թվականի որոշումը):

«Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ պետական գրանցման հիմնական սկզբունքներն ու խնդիրներն են՝ պետության կողմից գույքի նկատմամբ գրանցված իրավունքների (...) ճանաչումը, երաշխավորումը և պաշտպանությունը (...):

«Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ պետական գրանցումն իրականացնող լիազոր մարմինը պարտավոր է մերժել իրավունքի պետական գրանցումը, եթե՝ անշարժ գույքի միավորի կամ դրա որևէ մասի նկատմամբ առկա է գրանցված իրավունք կամ սահմանափակում կամ նախնական նշում, որը բացառում է ներկայացված իրավունքի կամ սահմանափակման գրանցումը:

«Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գույքի կամ դրա որևէ մասի նկատմամբ սեփականության իրավունքի պետական գրանցումը համարվում է ուժը կորցրած ճանաչված՝ այդ գույքի կամ դրա համապատասխան մասի նկատմամբ օրենքով սահմանված հիմքով սեփականության իրավունքի նոր պետական գրանցում իրականացվելու պահից:

Վերոնշյալ հոդվածների վերլուծությունից բխում է, որ պետական մարմինները պարտավոր են հետևել օրենքների պահպանմանը, այդ թվում նաև՝ անձի սեփականության հիմնարար իրավունքի պաշտպանության ու երաշխավորման բնագավառում:

ՀՀ վճռաբեկ դատարանը նախկինում կայացված որոշմամբ փաստել է, որ օրենսդիրը իրավունքի, այդ թվում՝ սեփականության իրավունքի գրանցումն իրականացնող լիազոր մարմնի վրա պարտականություն է դրել մերժելու գույքի նկատմամբ սեփականության իրավունքի պետական գրանցում կատարելը, եթե տվյալ գույքի կամ նրա միավորի կամ մասի նկատմամբ արդեն առկա է այլ անձի գրանցված իրավունք, որը բացառում է ներկայացված իրավունքի գրանցումը: Այսինքն՝ վկայակոչված՝ «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով իմպերատիվ կերպով սահմանված է արգելք՝ նույն գույքի նկատմամբ այլ անձի սեփականության իրավունքը գրանցելու հարցում, որի նպատակն է երաշխավորել և պաշտպանել անձի գրանցված սեփականության իրավունքը և բացառել անշարժ գույքի նկատմամբ արդեն իսկ գրանցված իրավունքի դեպքում այլ անձի կողմից ներկայացված իրավունքի գրանցումը: ՀՀ վճռաբեկ դատարանի վերոհիշյալ եզրահանգումը բխել է այն հանգամանքից, որ գույքի նկատմամբ որևէ հիմքով սեփականության իրավունքի նոր պետական գրանցում իրականացվելու պահից այդ գույքի նկատմամբ նախկին սեփականության իրավունքի պետական գրանցումը համարվում է չեղարկված (ուժը կորցրած), այսինքն՝ գույքի նկատմամբ նոր սեփականության իրավունքի գրանցումը հանգեցնում է այդ գույքի նկատմամբ ավելի վաղ գրանցված սեփականության իրավունքի դադարման: Երբ գրանցում իրականացնող մարմինը գույքի նկատմամբ այլ անձի արդեն իսկ գրանցված սեփականության իրավունքի առկայության պայմաններում այդ նույն գույքի նկատմամբ կատարում է սեփականության իրավունքի նոր գրանցում, ընդ որում՝ որպես նոր սեփականատիրոջ սեփականության իրավունքի ծագման հիմք ընդունելով այնպիսի իրավաբանական փաստեր և դրանք հիմնավորող գրավոր փաստաթղթեր, **որոնք չեն բխում արդեն իսկ գրանցված սեփականատիրոջ կամքից և գործողություններից** (օրինակ՝ երբ

գրանցված սեփականատերին իր գույքն օտարել է առուվաճառքի կամ նվիրատվության ձևով կամ կտակել է այլ անձի կամ հրաժարվել իր սեփականությունից), ՀՀ վճռաբեկ դատարանի գնահատմամբ, **նման պայմաններում սեփականության իրավունքի նոր գրանցումը խախտում է արդեն իսկ գրանցված սեփականատիրոջ իրավունքները** (տես, «Արսեն Չիչյանն ընդդեմ Սերոփ-Գորիոն Դեր-Բողոսայանի իրավահաջորդ Վանիս Կորյունի Դեր-Բողոսայանի թիվ ԵԿԴ/0479/02/14 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 07.10.2022 թվականի որոշումը):

Անձի դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրացումն ապահովելու գործուն կառուցակարգերից է դատավարական օրենսգրքերով սահմանված հայցի ապահովման ինստիտուտը: Վերջինիս կարևորությունը պայմանավորված է նրանով, որ այս ինստիտուտի միջոցով ապահովվում է արդար դատաքննության իրավունքի բաղադրիչ հանդիսացող՝ վերջնական դատական ակտերի կատարելիության սկզբունքի արդյունավետ իրացումը:

Այս ինստիտուտի գործառույթն ու բովանդակությունը բացահայտված են ՀՀ սահմանադրական դատարանի և ՀՀ վճռաբեկ դատարանի մի շարք իրավական դիրքորոշումներում:

ՀՀ սահմանադրական դատարանը 24.11.2020 թվականի թիվ ՍԴՈ-1561 որոշմամբ արձանագրել է, որ հայցի ապահովման միջոց կիրառելու օրենսդրական հնարավորություն նախատեսվել է այն անձանց իրավունքների պաշտպանությունն ապահովելու և երաշխավորելու համար, որոնք տարբեր պահանջներով դիմել են դատարան՝ ակնկալելով իրենց խնդիրների լուծում, սակայն, կախված հանգամանքներից՝ կան ռիսկեր, որոնք կարող են դժվարացնել կամ անհնարին դարձնել դատական ակտի կատարումը, այդ իսկ պատճառով անհրաժեշտություն է առաջանում ձեռնարկել լրացուցիչ քայլեր, որոնք կապահովեն հետագայում կայացված դատական ակտի պատշաճ կատարումը: Ուստի նման ինստիտուտի նախատեսումն ինքնին իրավաչափ և ընդունելի է պայմանով, որ առկա են համարժեք և բավարար հիմքեր՝ մյուս կողմի իրավունքները և ազատությունները մինչև դատական ակտի կայացումը սահմանափակելու համար:

Որպեսզի դատարանը բավարարի հայցի ապահովման միջոց կիրառելու մասին միջնորդությունը, պետք է միջնորդությամբ ներկայացված հանգամանքների լույսի ներքո համոզվի, որ նման միջոցներ չձեռնարկելը կարող է անհնարին դարձնել կամ դժվարացնել համապատասխան դատական ակտի պատշաճ կատարումը՝ հայցվորի պահանջը բավարարելու դեպքում:

Միևնույն ժամանակ, ՀՀ սահմանադրական դատարանն արձանագրել է, որ գործին մասնակցող անձի ներկայացրած պահանջը դատարանի կողմից բավարարվելու դեպքում դատական ակտի կատարման անհնարինությունը կամ ցածր հավանականությունը իմաստազրկում են անձի դատական պաշտպանության և արդար դատաքննության իրավունքի իրականացումը, քանի որ այդ իրավունքների իրականացման արդյունքում ակնկալվող նպատակին անձն այդպես էլ չի հասնում:

ՀՀ վճռաբեկ դատարանի բնորոշմամբ՝ հայցի ապահովման ինստիտուտը հանդես է գալիս որպես օրենսդրությամբ նախատեսված՝ անձանց իրավունքների պաշտպանության երաշխիքներից մեկը, որով պաշտպանվում են հայցվորի օրինական շահերն այն դեպքերից, երբ պատասխանողը կարող է գործել անբարեխիղճ, կամ երբ այդպիսի միջոցները չկիրառելն անհնարին կարող է դարձնել դատական ակտի կատարումը: Քննարկվող դատավարական ինստիտուտը կոչված է դատարանի կողմից նախապես ձեռնարկվող որոշակի միջոցներով

հնարավոր բացասական հետևանքներից պաշտպանել հայցվորի (ապագա հնարավոր պահանջատիրոջ) իրավունքները և օրինական շահերը: Դրանով իսկ այն ուղղված է անձանց խախտված իրավունքների իրական ու ամբողջ ծավալով վերականգնելուն (տե՛ս, Մհեր Ավետիսյանը և այլոք ընդդեմ «ԲՏԱ Բանկ» ՓԲԸ-ի ՀՀ վճռաբեկ դատարանի թիվ ԵԿԴ/1807/02/13 քաղաքացիական գործով 27.11.2015 թվականի որոշումը):

Այլ որոշման շրջանակներում ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ հայցի ապահովման ինստիտուտը հետապնդում է կայացվելիք վերջնական դատական ակտի կատարման համար անհրաժեշտ երաշխիքներ ապահովելու նպատակ: Այլ կերպ՝ հայցի ապահովման միջոցի կիրառման նպատակն անձանց ենթադրյալ խախտված իրավունքների իրական և ամբողջ ծավալով վերականգնումը երաշխավորելն է: Ըստ այդմ, հայցի ապահովման միջոց ձեռնարկելով՝ դատարանն ըստ էության կանխում է հայցվորի ենթադրյալ խախտված իրավունքի անվերականգնելի դառնալու հավանականությունը (տե՛ս, «Ուստր Մամիկոն» ՍՊԸ-ի սնանկության գործով կառավարիչ Հովհաննես Եղյանն ընդդեմ ՀՀ կադաստրի կոմիտեի ՀՀ վճռաբեկ դատարանի թիվ ՎԴ/3731/05/20 վարչական գործով 27.12.2022 թվականի որոշումը):

ՀՀ վճռաբեկ դատարանը նաև նշել է, որ հաշվի առնելով հայցի ապահովման դատավարական ինստիտուտի նպատակը՝ օրենսդիրը սահմանել է, որ հայցը բավարարելու մասին վճիռ կայացվելու դեպքում հայցի ապահովման միջոցները պահպանվում են **մինչև վճռի կատարումը**, ինչը դատական ակտի կատարման կարևորագույն երաշխիք է, իսկ հայցը մերժելու մասին վճիռ կայացվելու դեպքում՝ **մինչև վճռի օրինական ուժի մեջ մտնելը** (տե՛ս, Հովհաննես Չոբանյանն ընդդեմ Լիանա Տիգրանյանի թիվ ԵՄԴ/3747/02/17 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 19.11.2021 թվականի որոշումը):

Վերոգրյալ իրավական կարգավորումների և արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ այն պարագայում, երբ անձը գույքի նկատմամբ սեփականության իրավունքի ենթադրյալ խախտումները վերացնելու նպատակով դիմել է դատական պաշտպանության, որի շրջանակներում կայացվելիք վերջնական դատական ակտի կատարման համար անհրաժեշտ երաշխիքներ ապահովելու անհրաժեշտությամբ պայմանավորված խնդրո առարկա գույքի նկատմամբ կիրառվել է հայցի ապահովման միջոց, որով արգելվել է այդպիսի գույքի տնօրինումը, ապա կիրառված հայցի ապահովման միջոցի գործողության ընթացքում արգելվում է խնդրո առարկա գույքի նկատմամբ այնպիսի գործողությունների ձեռնարկումը, որի արդյունքում տեղի կունենա սեփականատիրոջ սեփականության իրավունքի դադարում՝ անկախ այն հանգամանքից՝ ով է ֆիզիկապես ձեռնարկում այդ գործողությունները: Ընդ որում, հաշվի առնելով գրավի՝ գույքի տնօրինման եղանակ հանդիսանալու հանգամանքը՝ նման դեպքերում կիրառված հայցի ապահովման միջոցի հիմքով խնդրո առարկա գույքի վրա արգելանք դնելիս գրավառուի կամ գրավառուի նշած երրորդ անձի կողմից ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 249-րդ հոդվածի 1-ին կետին համապատասխան՝ գրավադրված գույքի վրա բռնագանձում տարածելը և իրացնելը, և նույն օրենսգրքի 250-րդ հոդվածին համապատասխան՝ գրավ դրված գույքն իրացնելը (վաճառելը) նույնպես դիտարկվում են որպես գույքի օտարում: Հետևաբար, կիրառված հայցի ապահովման միջոցի շրջանակներում գույքի տնօրինման արգելումը տարածվում է նաև նշված իրավահարաբերությունների նկատմամբ:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված իրավունքի պետական գրանցումը մերժելու հիմք է անշարժ գույքի միավորի կամ դրա որևէ

մասի նկատմամբ առկա սահմանափակումը, որը նույն օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի ուժով ներառում է նաև դատական ակտերը, դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող մարմինների կայացրած որոշումները:

Վերոգրյալի հաշվառմամբ, անդրադառնալով «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի կարգավորումներին՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ իրավակիրառ պրակտիկան պետք է զարգանա այն ուղղությամբ, որ գրավի առարկա գույքի նկատմամբ իրավասու պետական մարմինը չի կարող կատարել սեփականության իրավունքի պետական գրանցում, եթե այդ գույքի նկատմամբ առկա է վեճ, որի շրջանակներում կայացվել է դատական ակտ կիրառվել է հայցի ապահովման միջոց, ինչի արդյունքում խնդրո առարկա գույքը գտնվում է արգելանքի տակ:

Վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշումների կիրառումը սույն գործի փաստերի նկատմամբ.

Սույն վարչական գործը հարուցվել է Սվետլանա Ասադյանի կողմից ներկայացված հայցի հիման վրա, որով վերջինս պահանջել է անվավեր ճանաչել ք. Երևան, Թաիրովի փողոց 47/1 տուն հասցեում գտնվող անշարժ գույքի նկատմամբ Բանկի անվամբ կատարված սեփականության իրավունքի պետական գրանցումը:

Դատարանը 23.03.2021 թվականի վճռով հայցը մերժել է այն պատճառաբանությամբ, որ. «(...) սույն դեպքում տեղի է ունեցել գրավադրված գույքի հանձնում գրավառու պարտավորությունը ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 249-րդ և 250-րդ հոդվածների իրավակարգավորումներին համապատասխան՝ առանց դատարան դիմելու գրավի առարկայի վրա բռնագանձում տարածելու գործընթացի շրջանակներում, գրավի առարկա գույքի չկայացած աճուրդի արդյունքում գրավառուի՝ գրավի առարկան իրեն հանձնելու պահանջի իրավունքի իրացման արդյունքում, ինչը չի կարող որակվել որպես գույքի սեփականատիրոջ տնօրինման իրավազորության իրականացում, դրսևորում: Ըստ այդմ՝ դատարանի գնահատմամբ սույն դեպքում տեղի չի ունեցել «Ամերիաբանկ» ՓԲԸ-ի կամ Արման Նազարյանի կողմից գույքի օտարում, իրավունքի վիճարկվող գրանցումը կատարված չէ նրանց կողմից կնքված՝ գրավի առարկայի օտարման այս կամ այն գործարքի հիման վրա, հետևաբար նաև՝ չի խախտվել նրանց կողմից գույքը տնօրինելու, օտարելու արգելքը: Այլ կերպ, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 250-րդ հոդվածով նախատեսված՝ գրավի առարկա գույքի չկայացած աճուրդի արդյունքում գրավառուի՝ գրավի առարկան իրեն հանձնելու պահանջի իրավունքի իրացումը գույքի սեփականատիրոջ կողմից իր գույքը տնօրինելու իրավազորության իրականացման արդյունք, դրսևորում չէ:

(...) ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 136-րդ հոդվածի 2-րդ մասին, ինչպես նաև «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 7-րդ մասին համապատասխան՝ դատարանն արձանագրում է, որ 04.12.2018թ. Վճռի օրինական ուժի մեջ մտնելու փաստով պայմանավորված վերացել է Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի կողմից կիրառված հայցի ապահովման միջոցը, այն է՝ խնդրո առարկա գույքը պատասխանողների կողմից օտարելու արգելքը, և դադարել է կիրառված սահմանափակման գործողությունը: Հետևաբար, դատարանը եզրահանգում է, որ վիճարկվող իրավունքը գրանցելու պահի դրությամբ դադարած է եղել այն սահմանափակման գործողությունը, որը հայցվոր կողմը վկայակոչում է որպես կատարված իրավունքի պետական գրանցման խոչընդոտ: Ըստ այդմ՝ դատարանը գտնում է, որ այս հիմնավորմամբ ևս առկա չի եղել իրավունքի պետական գրանցումը մերժելու՝ «Գույքի նկատմամբ իրավունքների պետական

գրանցման մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված հիմքը:

Վերոհիշյալի հիման վրա դատարանը եզրահանգում է, որ առկա չեն վիճարկվող սեփականության իրավունքի պետական գրանցումն անվավեր ճանաչելու հիմքեր»:

Վերաքննիչ դատարանը 05.08.2022 թվականի որոշմամբ Սվետլանա Ասադյանի ներկայացրած վերաքննիչ բողոքը մերժել է, և Դատարանի վճիռը թողել է անփոփոխ՝ հիմնավորված համարելով Դատարանի պատճառաբանությունները:

Վերը նշված իրավական դիրքորոշումների լույսի ներքո համադրելով սույն գործի փաստերը և գնահատելով Վերաքննիչ դատարանի եզրահանգումների հիմնավորվածությունը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է հետևյալը.

Ըստ գործի փաստերի՝ Բանկի («Բանկ-Գրավառու»), Սվետլանա Ասադյանի և Լևոն Ասադյանի («Վաճառող») և Արման Նազարյանի («Գնորդ-Գրավատու») միջև 11.07.2014 թվականին կնքված անշարժ գույքի առուվաճառքի և գրավի (հիփոթեքի) պայմանագրով Վաճառողը Գնորդ-Գրավատուին վաճառել է ք. Երևան, Թաիրովի փ. 47/1 տուն հասցեում գտնվող անշարժ գույքը: Ի ապահովումն նշված պայմանագրով Բանկ-Գրավառուի հանդեպ Գնորդ-Գրավատուի ստանձնած պարտավորությունների պատշաճ կատարման՝ Գնորդ-Գրավատուն, ընդունելով անշարժ գույքն ի սեփականություն, թիվ 241443 պայմանագրի ուժով նշված անշարժ գույքը գրավադրել է հոգուտ Բանկ-Գրավառուի:

15.07.2014 թվականին ք. Երևան, Թաիրովի փ. 47/1 տուն հասցեում գտնվող անշարժ գույքի նկատմամբ գրանցվել է Արման Նազարյանի սեփականության իրավունքը: Միաժամանակ, նույն օրը ք. Երևան, Թաիրովի փողոցի թիվ 47/1 հասցեում գտնվող անշարժ գույքի նկատմամբ գրանցվել է Բանկի գրավի իրավունքը:

Սվետլանա Ասադյանի և Լևոն Ասադյանի ներկայացրած հայցադիմումն ընդդեմ Բանկի և Արման Նազարյանի՝ առ ոչինչ գործարքի անվավերության հետևանքներ կիրառելու պահանջի մասին, Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 30.12.2016 թվականի որոշմամբ ընդունվել է վարույթ (քաղաքացիական գործ թիվ ԵԿԴ/5175/02/16), իսկ 21.03.2017 թվականի որոշմամբ կիրառվել է հայցի ապահովման միջոց և արգելվել է պատասխանողներ Բանկին և Արման Նազարյանին օտարել ք. Երևան, Թաիրովի փ. 47/1 տուն հասցեում գտնվող գրավի առարկա անշարժ գույքը: Նշված որոշման հիման վրա տրված կատարողական թերթերի հիման վրա ՀՀ ԱՆ Հարկադիր կատարումն ապահովող ծառայությունը հարուցել է կատարողական վարույթներ, որոնց շրջանակներում հարկադիր կատարողը 03.04.2017 թվականին կայացրել է «Արգելանք դնելու մասին» որոշում՝ արգելանք դնելով ք. Երևան, Թաիրովի փ. 47/1 տուն հասցեում գտնվող վիճահարույց անշարժ գույքի վրա:

Թիվ ԵԿԴ/5175/02/16 քաղաքացիական գործով 02.11.2018 թվականին կայացված վճռով Սվետլանա Ասադյանի և Լևոն Ասադյանի հայցը մերժվել է: Նշված վճռի դեմ տվյալ գործով հայցվորներ Սվետլանա Ասադյանի և Լևոն Ասադյանի կողմից 17.12.2018 թվականին ներկայացվել է վերաքննիչ բողոք, որը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 15.01.2019 թվականի որոշմամբ վերադարձվել է: Այնուհետև, 04.02.2019 թվականին Սվետլանա Ասադյանի և Լևոն Ասադյանի կողմից կրկին ներկայացված վերաքննիչ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 12.02.2019 թվականի որոշմամբ վերադարձվել է: Նշված որոշման դեմ հայցվորների կողմից ներկայացված վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը ՀՀ վճռաբեկ դատարանի 03.07.2019 թվականի որոշմամբ մերժվել է:

Թիվ ԵԿԴ/5175/02/16 քաղաքացիական գործով Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 02.11.2018 թվականի

վճռի դեմ հայցվորների կողմից կրկին ներկայացվել է վերաքննիչ բողոք, որը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 14.10.2019 թվականի որոշմամբ մերժվել է: Նշված որոշման դեմ 07.11.2019 թվականին հայցվորների կողմից ներկայացված վճռաբեկ բողոքը ՀՀ վճռաբեկ դատարանի 25.02.2020 թվականի որոշմամբ ընդունվել է վարույթ:

Թիվ ԵԿԴ/5175/02/16 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 24.06.2022 թվականի որոշմամբ ՀՀ վճռաբեկ դատարանի 03.07.2019 թվականի «Վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժելու մասին» որոշման դեմ Սվետլանա և Լևոն Ասադյանների ներկայացրած վճռաբեկ բողոքը բավարարվել է. վերանայվել է ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի 03.07.2019 թվականի «Վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժելու մասին» որոշումը և վերացվել է ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 12.02.2019 թվականի «Վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին» որոշումը:

Թիվ ԵԿԴ/5175/02/16 քաղաքացիական գործով ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 14.12.2022 թվականի որոշմամբ Սվետլանա և Լևոն Ասադյանների վերաքննիչ բողոքը մերժվել է, և Դատարանի 02.11.2018 թվականի վճիռը թողնվել է անփոփոխ: Նշված որոշման դեմ Սվետլանա և Լևոն Ասադյանների ներկայացրած վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը ՀՀ վճռաբեկ դատարանի 17.05.2023 թվականի որոշմամբ մերժվել է:

25.05.2020 թվականին «Բի Էս Թի» ՍՊԸ-ի և Բանկի միջև կնքվել է «Գույքը հանձնելու մասին» թիվ 2194 պայմանագիրը, որով չկայացած աճուրդի արդյունքում Բանկին է հանձնվել գրավի առարկա վիճահարույց անշարժ գույքը: 04.06.2020 թվականին ք. Երևան, Թաիրովի փ. 47/1 տուն հասցեում գտնվող անշարժ գույքի նկատմամբ վիճարկվող պետական գրանցմամբ գրանցվել է Բանկի սեփականության իրավունքը:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ թիվ ԵԿԴ/5175/02/16 քաղաքացիական գործի շրջանակներում հայցվորներ Սվետլանա և Լևոն Ասադյանները ներկայացրել են պահանջ՝ որպես առաջին (կեղծ) գործարքի անվավերության հետևանքներ կիրառել իրենց և Արման Նազարյանի միջև կնքված անշարժ գույքի առուվաճառքի նկատմամբ, այն է՝ ճանաչել Սվետլանա և Լևոն Ասադյանների սեփականության իրավունքը Երևանի Թաիրով փողոցի թիվ 47/1 տան նկատմամբ և անվավեր ճանաչել 11.07.2014 թվականի Արման Նազարյանի և Բանկի միջև կնքված Երևանի Թաիրով փողոցի թիվ 47/1 տունը Արման Նազարյանի պարտավորությունների ապահովման դիմաց գրավ դնելու մասին գործարքը: 21.03.2017 թվականի որոշմամբ կիրառվել է հայցի ապահովման միջոց, որի արդյունքում տրված կատարողական թերթերի հիման վրա հարկադիր կատարողը 03.04.2017 թվականին կայացրել է «Արգելանք դնելու մասին» որոշում, որտեղ, մասնավորապես, նշված է. «Որպես հայցի ապահովման միջոց՝ արգելել պատասխանողներ «Ամերիաբանկ» ՓԲ ընկերությանը, Արման Նազարյանին ՀՀ, ք. Երևան, Թաիրով 47/1 տուն հասցեում գտնվող անշարժ գույքը օտարելը»: Այսինքն, նշված որոշման հասցեատերեր են հանդիսացել Արման Նազարյանը և Բանկը:

Վճռաբեկ դատարանը գործում առկա նյութերի և Datalex.am դատական տեղեկատվական համակարգում առկա տվյալների ուսումնասիրության արդյունքում հաստատված է համարում, որ հայցվորներ Սվետլանա և Լևոն Ասադյանների հայցը մերժվել է, և ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 387-րդ հոդվածի 6-րդ մասի 1-ին կետի ուժով, այն է՝ Վերաքննիչ դատարանի՝ եզրափակիչ դատական ակտի բողոքարկման արդյունքով կայացված որոշումն ուժի մեջ է մտնում Վճռաբեկ դատարանի որոշման կայացման պահից, եթե՝ ներկայացված վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժվել է. թիվ ԵԿԴ/5175/02/16 քաղաքացիական գործով վեճն ըստ էության լուծող դատական ակտի ուժի մեջ մտնելու ամսաթիվն է 17.05.2023

թվականը: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ հայցը մերժելու մասին վճիռ կայացվելու դեպքում հայցի ապահովման միջոցը պահպանվում է մինչև վճռի օրինական ուժի մեջ մտնելը, սովյալ դեպքում 21.03.2017 թվականի որոշմամբ կիրառված հայցի ապահովման միջոցը պահպանվել է մինչև 17.05.2023 թվականը:

Հաշվի առնելով, որ հարկադիր կատարողի 03.04.2017 թվականին կայացրած «Արգելանք դնելու մասին» որոշման հիման վրա Արման Նազարյանին և Բանկին արգելված է եղել տնօրինել խնդրո առարկա ՀՀ, ք. Երևան, Թաիրովի փողոց 47/1 տուն հասցեում գտնվող անշարժ գույքը, սովյալ դեպքում այդ արգելքը տարածվել է նաև ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 249-րդ, 250-րդ հոդվածներում ամրագրված իրավահարաբերությունների նկատմամբ: Այսինքն, չկայացած աճուրդի արդյունքում Բանկ-գրավառուի կողմից գրավ դրված գույքը գրավով ապահովված պարտավորության և իրացման (վաճառքի) փաստացի ծախսերի դիմաց իրեն հանձնելու մասին պահանջ ներկայացնելն ըստ էության հանգեցրել է սեփականատիրոջ՝ Արման Նազարյանի սեփականության իրավունքի դադարման, այն է՝ տեղի է ունեցել գույքի օտարում, ինչը թիվ ԵԿԴ/5175/02/16 քաղաքացիական գործի շրջանակներում կիրառված հայցի ապահովման միջոցի ուժով արգելված է եղել:

Մինչդեռ, սովյալ պարագայում, 25.05.2020 թվականին «Բի Էս Թի» ՍՊԸ-ի և Բանկի միջև կնքվել էր «Գույքը հանձնելու մասին» թիվ 2194 պայմանագիրը, իսկ Կոմիտեն, անտեսելով «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածով նախատեսված՝ սահմանափակման հիմքի առկայության պայմաններում իրավունքի պետական գրանցումը մերժելու պահանջը, ՀՀ, ք. Երևան, Թաիրովի փողոց 47/1 տուն հասցեում գտնվող անշարժ գույքի նկատմամբ 04.06.2020 թվականին կատարել է Բանկի սեփականության իրավունքի պետական գրանցում, որպիսի հանգամանքն անտեսվել է ստորադաս ատյանների կողմից:

Ամփոփելով վերոշարադրյալը, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանը կատարել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 249-րդ, 250-րդ հոդվածների նեղ մեկնաբանություն, որի արդյունքում թույլ է տվել նաև «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի խախտում՝ խաթարելով արդարադատության բուն էությունը, քանի որ այն հանգեցրել է Սվետլանա Ասադյանի իրավունքների խախտմանը:

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքի հիմքերի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 150-րդ, 151-րդ և 163-րդ հոդվածների ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

Միաժամանակ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով անհրաժեշտ է կիրառել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 169-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով սահմանված՝ վերաքննիչ դատարանի դատական ակտը բեկանելու և փոփոխելու՝ Վճռաբեկ դատարանի լիազորությունները հետևյալ հիմնավորմամբ.

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Սույն գործով վեճի լուծումն էական նշանակություն ունի գործին մասնակցող անձանց համար: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է Կոնվենցիայի վերոգրյալ հոդվածով ամրագրված՝ անձի արդար դատաքննության իրավունքի տարր, հետևաբար գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից:

Տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանի կողմից ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելը բխում է արդարադատության արդյունավետության շահերից, քանի որ սույն գործով վերջնական դատական ակտ կայացնելու համար նոր հանգամանք հաստատելու անհրաժեշտությունը բացակայում է: Դատական ակտը փոփոխելիս Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում սույն որոշման պատճառաբանությունները, ինչպես նաև գործի նոր քննության անհրաժեշտության բացակայությունը:

5. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները դատական ծախսերի բաշխման վերաբերյալ.

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 56-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կողմը, որի դեմ կայացվել է վճիռ, կամ որի բողոքը մերժվել է, կրում է Հայաստանի Հանրապետության դատական դեպարտամենտի՝ վկաներին և փորձագետներին վճարած գումարների հատուցման պարտականությունը, ինչպես նաև մյուս կողմի կրած դատական ծախսերի հատուցման պարտականությունը այն ծավալով, ինչ ծավալով դրանք անհրաժեշտ են եղել դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրականացման համար: Դատական պաշտպանության այն միջոցի հետ կապված ծախսերը, որ իր նպատակին չի ծառայել, դրվում են այդ միջոցն օգտագործած կողմի վրա, անգամ եթե վճիռը կայացվել է այդ կողմի օգտին:

Նկատի ունենալով այն, որ Սվետլանա Ասադյանի կողմից հայցադիմումի, վերաքննիչ բողոքի և վճռաբեկ բողոքի համար արդեն վճարվել է համապատասխանաբար 4.000 ՀՀ դրամ, 10.000 ՀՀ դրամ, 20.000 ՀՀ դրամ, և քանի որ վճռաբեկ բողոքը ենթակա է բավարարման, այսինքն՝ այդ ծավալով վճարված պետական տուրքն անհրաժեշտ է եղել վճռաբեկ բողոք բերած անձի դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրականացման համար, ուստի, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Սվետլանա Ասադյանի կողմից նախապես վճարված պետական տուրքի գումարը ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածի հիմքով ենթակա է հատուցման Կոմիտեի կողմից:

Միաժամանակ, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով Սվետլանա Ասադյանի կողմից վճռաբեկ բողոքի համար նախապես վճարվել է 30.000 ՀՀ դրամ, մինչդեռ, վճարման էր ենթակա 20.000 ՀՀ դրամ՝ որպես մեկ ոչ դրամական պահանջի գործով վճռաբեկ բողոքի համար օրենքով սահմանված պետական տուրքի գումար: Ուստի, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետի հիմքով ավելի վճարված պետական տուրքը՝ 10.000 ՀՀ դրամը, ենթակա է վերադարձման Սվետլանա Ասադյանին:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 169-171-րդ հոդվածներով, 172-րդ հոդվածի 1-ին մասով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի 05.08.2022 թվականի որոշումը և այն փոփոխել. Սվետլանա Ասադյանի հայցն ընդդեմ ՀՀ կադաստրի կոմիտեի, երրորդ անձ «Ամերիաբանկ» ՓԲ ընկերություն՝ 04.06.2020 թվականին

կատարված իրավունքի պետական գրանցումն անվավեր ճանաչելու պահանջի մասին, բավարարել՝ անվավեր ճանաչել ք. Երևան, Թաիրովի փողոց 47/1 տուն հասցեում գտնվող անշարժ գույքի նկատմամբ «Ամերիաբանկ» ՓԲ ընկերության անվամբ 04.06.2020 թվականին կատարված իրավունքի պետական գրանցումը:

2. ՀՀ կադաստրի կոմիտեից հոգուտ Սվետլանա Ասադյանի բռնագանձել 4.000 ՀՀ դրամ՝ որպես հայցադիմումի համար նախապես վճարված պետական տուրքի գումար, 10.000 ՀՀ դրամ՝ որպես վերաքննիչ բողոքի համար նախապես վճարված պետական տուրքի գումար, 20.000 ՀՀ դրամ՝ որպես վճարվել բողոքի համար նախապես վճարված պետական տուրքի գումար:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և բողոքարկման ենթակա չէ:

ԿԴ/3359/02/21

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ
ՈՐՈՇՈՒՄ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆԻՑ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՀԱԿԱԿՈՌՈՒԴՑԻՈՆ ՊԱԼԱՏԸ
(ԱՅՍՈՒՀԵՏ՝ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ)

«01» մարտի 2024թ.

քաղաք Երևան

գրավոր ընթացակարգով քննելով ըստ ՀՀ գլխավոր դատախազության հայցի ընդդեմ ՀՀ Կոտայքի մարզպետարանի, Ջարիկ Գարուշի Գևորգյանի, երրորդ անձ ՀՀ կադաստրի կոմիտեի՝ աճուրդն անվավեր ճանաչելու և անվավերության հետևանքներ կիրառելու պահանջի մասին, քաղաքացիական գործով ՀՀ վերաքննիչ հակակոռուպցիոն դատարանի (այսուհետ նաև՝ Վերաքննիչ դատարան) 23.11.2023 թվականի «Վերաքննիչ բողոքի ընդունումը մերժելու մասին» որոշման դեմ Արամ Ռազմիկի Դանիելյանի կողմից բերված վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Ձ Ե Ց

1. Գործի դատավարական նախապատմությունը.

1.1. 04.02.2020 թվականին դիմելով դատարան՝ ՀՀ գլխավոր դատախազությունը պահանջել է անվավեր ճանաչել 26.05.2007 թվականի լոտ 26 հողամասի աճուրդը, որպես հետևանք անվավեր ճանաչել 31.05.2007 թվականի ՀՀ Կոտայքի մարզպետի և Ջարիկ Գարուշի Գևորգյանի միջև կնքված հողամասի առուվաճառքի թիվ 2587 պայմանագիրը, դրա հիման վրա իրավունքների պետական գրանցման միասնական 4-1-07 մատյանի 020 համարի տակ գրանցված 0,55 հա հողամասի նկատմամբ Ջարիկ Գարուշի Գևորգյանի սեփականության իրավունքի պետական գրանցումը:

1.2. 07.04.2022 թվականին ՀՀ Կոտայքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը (դատավոր՝ Հ. Ջալալյան) (այսուհետ՝ Դատարան) վճիռ է կայացրել, որով հայցը բավարարել է:

1.3. 07.06.2022 թվականին վերաքննիչ բողոք է ներկայացրել Ջարիկ Գարուշի Գևորգյանը (ներկայացուցիչ՝ Ալեքսանդր Սիրունյան):

1.4. 06.10.2022 թվականին ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանը որոշել է Ջարիկ Գարուշի Գևորգյանի վերաքննիչ բողոքը մերժել և Դատարանի 07.04.2022 թվականի վճիռը թողնել անփոփոխ:

1.5. 11.11.2022 թվականին Ջարիկ Գարուշի Գևորգյանը ներկայացրել է վճռաբեկ բողոք:

1.6. 30.11.2022 թվականին ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատը որոշել է

վճռաբեկ բողոքը վերադարձնել:

1.7. 27.12.2022 թվականին Ջարիկ Գարուշի Գևորգյանը կրկին ներկայացրել է վճռաբեկ բողոք:

1.8. 02.02.2023 թվականին գործը վերամակագրվել և հանձնվել է Վճռաբեկ դատարանի հակակոռուպցիոն պալատի քաղաքացիական գործերի քննության դատական կազմին:

1.9. 09.03.2023 թվականի որոշմամբ Վճռաբեկ դատարանը վճռաբեկ բողոքն ընդունել է վարույթ:

1.10. 03.08.2023 թվականին Վճռաբեկ դատարանը որոշել է. «Վճռաբեկ բողոքը մերժել: ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 06.10.2022 թվականի որոշումը թողնել օրինական ուժի մեջ՝ սույն որոշման հիմնավորումներով»:

1.11. 07.09.2023 թվականին, փոստային ծառայության միջոցով, որպես գործին մասնակից չդարձած անձ, Արամ Ռազմիկի Դանիելյանը, Դատարանի 07.04.2022 թվականի վճռի դեմ ներկայացրել է վերաքննիչ բողոք:

1.12. 23.11.2023 թվականին Վերաքննիչ դատարանը որոշել է. «Թիվ ԿԴ/3359/02/21 հակակոռուպցիոն քաղաքացիական գործով Դատարանի 07.04.2022 թվականի վճռի դեմ գործին մասնակից չդարձած անձ Արամ Ռազմիկի Դանիելյանի վերաքննիչ բողոքի ընդունումը մերժել»:

1.13. 21.12.2023 թվականին, փոստային ծառայության միջոցով, սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել գործին մասնակից չդարձած անձ Արամ Ռազմիկի Դանիելյանը և միջնորդել է վերականգնել վճռաբեկ բողոք բերելու բաց թողնված ժամկետը:

1.14. 19.01.2024 թվականին Վճռաբեկ դատարանը կայացրել է «Վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին» որոշում, որով որոշել է Արամ Ռազմիկի Դանիելյանի միջնորդությունը բավարարել՝ վճռաբեկ բողոք բերելու բաց թողնված ժամկետը վերականգնել, իսկ վճռաբեկ բողոքը՝ վերադարձնել:

1.15. 01.02.2024 թվականին Արամ Ռազմիկի Դանիելյանը (այսուհետ նաև՝ Բողոքաբեր) կրկին ներկայացրել է վճռաբեկ բողոք:

1.16. 02.02.2024 թվականի որոշմամբ Վճռաբեկ դատարանը վճռաբեկ բողոքն ընդունել է վարույթ:

1.17. ՀՀ գլխավոր դատախազությունը վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացրել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

2.1. Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանի կողմից թույլ է տրվել դատավարական նորմերի խախտումներ, որոնք հանգեցրել են գործի սխալ լուծման:

Բողոքաբերը բողոքում ներկայացրել է հետևյալ փաստարկները.

2.2. Վերաքննիչ դատարանն առանց հստակ ու չմեկնաբանվող իրավանորմի վկայակոչման և կիրառման խախտել է ՀՀ Սահմանադրության 61-րդ հոդվածով, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» Եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածով նախատեսված արդար դատաքննության, իրավունքների արդյունավետ դատական պաշտպանության, ինչպես նաև ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի (այսուհետ՝ նաև Օրենսգրք) 360-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով նախատեսված բողոքարկման իրավունքը:

2.3. Վերաքննիչ դատարանը, վերաքննիչ բողոքը վարույթ չընդունելով, խախտել է իր

արդար դատաքննության իրավունքը, դատական ակտի բողոքարկման իրավունքը և ստեղծել է խոչընդոտներ սեփականության իրավունքի պաշտպանության հարցում: Վերաքննիչ դատարանը, մասնավորապես՝ անհիմն գտել է, որ բողոքը պետք է բերվեր ոչ թե Վերաքննիչ դատարան, այլ՝ Վճռաբեկ դատարան:

2.4. Բողոքաբերը նշել է, որ բողոքը պետք է բերվեր Վերաքննիչ դատարան, քանի որ վեճն ըստ էության լուծել է առաջին ատյանի դատարանը, իսկ վերադաս դատարաններն այդ վճիռը չեն փոփոխել և թողել են օրինական ուժի մեջ (վերստուգել են), ուստի առկա իրավիճակում չի կարող փոփոխվել առաջին ատյանի դատարանի կողմից կայացված վճիռը, քանի որ խոսքը գնում է գործին մասնակից չդարձած առանցքային անձի՝ գույքի սեփականատիրոջ մասին, որը գործին մասնակից չի դարձել և այդ պատճառով էլ գործի քննությունը պետք է իրականացվի սկզբից:

2.5. Բացի այդ, բողոքաբերը նշել է, որ հիմք ընդունելով Օրենսգրքի 389-րդ հոդվածի 1-ին մասը, գործին մասնակից չդարձած անձը Վերաքննիչ դատարանի կողմից վկայակոչված ու հիշատակված վճռաբեկ բողոքը բերելու իրավունք չունի:

2.6. Վերոգրյալի հիման վրա՝ Բողոքաբերը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 23.11.2023 թվականի «Վերաքննիչ բողոքի ընդունումը մերժելու մասին» որոշումը և գործն ուղարկել նոր քննության:

3. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները.

3.1. Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է Օրենսգրքի 394-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված հիմքերի առկայությամբ, նույն հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի իմաստով, այն է՝ առերևույթ առկա է մարդու իրավունքների և ազատությունների հիմնարար խախտում, քանի որ Վերաքննիչ դատարանը խախտել է անձի ՀՀ օրենսդրությամբ և Կոնվենցիայով երաշխավորված արդար դատաքննության և արդյունավետ դատական պաշտպանության իրավունքները:

3.2. *Սույն բողոքի քննության շրջանակներում Վճռաբեկ դատարանը հարկ է համարում անդրադառնալ այն իրավական հարցին, թե ինչ կարգով գործին մասնակից չդարձած անձը կարող է իրացնել իր իրավունքներին և պարտականություններին առնչվող դատական ակտեր բողոքարկելու իրավունքը՝ միաժամանակ վերահաստատելով նախկինում արտահայտած իրավական դիրքորոշումները:*

3.3. ՀՀ Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների արդյունավետ դատական պաշտպանության իրավունք:

3.4. ՀՀ Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք:

3.5. Կոնվենցիայի 6-րդ հոդվածով անձին երաշխավորվում է հավասարության պայմաններում, արդարության բոլոր պահանջների պահպանմամբ, անկախ և անկողմնակալ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում իր գործի հրապարակային քննության իրավունքը:

3.6. Օրենսգրքի 10-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ գործին մասնակից չդարձած, ինչպես նաև դատավարության մասնակից չհանդիսացող անձը դատական ակտը կարող է բողոքարկել նույն օրենսգրքով նախատեսված դեպքերում և կարգով:

3.7. Օրենսգրքի 360-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի համաձայն՝ առաջին ատյանի

դատարանի վճիռների և նույն օրենսգրքի 361-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված որոշումների դեմ վերաքննիչ բողոք բերելու իրավունք ունեն՝ գործին մասնակից չդարձած անձինք, որոնց իրավունքների և պարտականությունների վերաբերյալ կայացվել է դատական ակտ:

3.8. Օրենսգրքի 389-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ գործին մասնակից չդարձած անձինք վճռաբեկ բողոք բերելու իրավունք ունեն իրենց ներկայացրած վերաքննիչ բողոքի քննության արդյունքով կայացված որոշման, իրենց ներկայացրած վերաքննիչ բողոքը վերադարձնելու, վերաքննիչ բողոքը վարույթ ընդունելը մերժելու, իրենց ներկայացրած վերաքննիչ բողոքի հիման վրա հարուցված վերաքննիչ վարույթը կարճելու կամ գործի վարույթը կասեցնելու մասին որոշումների, ինչպես նաև նույն օրենսգրքի 383-րդ (վերաքննիչ դատարանի լրացուցիչ որոշումը) և 384-րդ (վերաքննիչ դատարանի որոշման մեջ առկա վրիպակների, գրասխալների և թվաբանական սխալների ուղղումը) հոդվածներով նախատեսված հարցերով վերաքննիչ դատարանի կայացրած որոշումների դեմ:

3.9. Օրենսգրքի 390-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ վերաքննության կարգով բողոքարկման ենթակա եզրափակիչ դատական ակտն անձը չի կարող բողոքարկել վճռաբեկ դատարանում, եթե նա նույն հիմքերով չի բողոքարկել դատական ակտը վերաքննիչ դատարանում:

3.10. ՀՀ վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած որոշումներում իրավական դիրքորոշում է արտահայտել առ այն, որ ՀՀ Սահմանադրության և Կոնվենցիայի համապատասխան հոդվածներով ամրագրված անձի դատական պաշտպանության իրավունքի կարևոր բաղադրիչներից մեկը դատական ակտերի բողոքարկման իրավունքն է: Բողոքարկման ինստիտուտն իրավական միջոց է, որը հնարավորություն է տալիս որոշակի ընթացակարգի միջոցով գործնականում ապահովել դատական սխալների բացահայտումը և ուղղումը՝ դրանով իսկ նպաստելով արդարադատության նպատակների գործնականում իրականացմանը (*տես, ի թիվս այլնի, Սուսաննա Արարադի Միրզոյանն ընդդեմ Սուսաննա Միրհանի Միրզոյանի թիվ ԱՐԱԴ/0170/02/14 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 27.11.2015 թվականի որոշումը, Վարդան Աբրահամյանն ընդդեմ «Արդշինբանկ» ՓԲԸ-ի թիվ ԵԴ/17609/02/18 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 19.04.2019 թվականի որոշումը*):

3.11. Օրենսգրքով նախատեսված դեպքերում և կարգով վերաքննիչ բողոք բերելու իրավունք ունեն գործին մասնակից չդարձած անձինք, որոնց իրավունքների և պարտականությունների վերաբերյալ կայացվել է դատական ակտ:

3.12. ՀՀ վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած որոշումներով բազմիցս անդրադարձել է գործին մասնակից չդարձած անձանց դատական պաշտպանության իրավունքի իրացման առանձնահատկություններին: Մասնավորապես՝ ՀՀ վճռաբեկ դատարանը նշել է, որ օրենսդիրը գործին մասնակից չդարձված անձանց վերապահում է գործին մասնակցող անձանց իրավունքներ և նրանց համար սահմանում պարտականություններ միայն այն դեպքում, երբ գործն ըստ էության լուծող դատական ակտը կայացվել է նրանց իրավունքների և պարտականությունների վերաբերյալ (*տես, ՀՀ Արագածոտնի մարզի Քուչակի գյուղապետարանն ընդդեմ Լարիսա Եղիազարյանի, Գագիկ Մալխասյանի թիվ ԱՐԱԴ/0242/02/10 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 29.07.2011 թվականի որոշումը*):

3.13. Միաժամանակ ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ այդ իրավունքների իրացումը չի կարող կրել բացարձակ բնույթ: Մասնավորապես՝ գործին մասնակից չդարձած

անձանց կողմից իրենց իրավունքներին վերաբերող՝ օրինական ուժի մեջ մտած դատական ակտը բողոքարկելու դեպքում դրա վերանայման վարույթում հարկ է պահպանել անհրաժեշտ հավասարակշռություն մի կողմից գործին մասնակցող անձանց սահմանադրական իրավունքների և պարտականությունների, մյուս կողմից՝ գործին մասնակից չդարձած այն անձանց իրավունքների և պարտականությունների միջև, որոնց իրավունքներին և պարտականություններին առնչվում է դատական ակտը (տես, «Հայր և որդի Ադամյաններ» ՍՊԸ-ն ընդդեմ «Հինգերորդ Աստղ» ՍՊԸ-ի, երրորդ անձինք «Անելիք բանկ» ՓԲԸ-ի և «Երդիկ» ՍՊԸ-ի թիվ ԵԱԴԴ/0199/02/11 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 17.07.2015 թվականի որոշումը):

3.14. ՀՀ վճռաբեկ դատարանը մեկ այլ որոշմամբ ընդգծել է, որ դատական ակտով ոչ միայն պետք է անմիջականորեն շոշափվեն այդ անձանց իրավունքներն ու պարտականությունները, այլև՝ խոչընդոտներ ստեղծվեն նրանց սուբյեկտիվ իրավունքների իրացման կամ պարտականության պատշաճ կատարման համար (տես, *Աննա և Գալինա Խաչատրյաններն ընդդեմ Ռոստոմ Բուռնազյանի, երրորդ անձ Երևանի քաղաքապետարանի, և Ռոստոմ Բուռնազյանի հակընդդեմ հայցն ընդդեմ Աննա և Գալինա Խաչատրյանների, երրորդ անձ Երևանի քաղաքապետարանի թիվ ԵԿԴ/0408/02/09 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 27.05.2022 թվականի որոշումը*):

3.15. ՀՀ վճռաբեկ դատարանը մեկ այլ նախադեպային որոշմամբ վերաքննության սահմանների վերաբերյալ ընդհանուր կանոններին զուգահեռ անդրադառնալով Օրենսգրքով նախատեսված բացառություններին արձանագրել է, որ այն դեպքում, երբ վերաքննիչ բողոքում առկա է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 365-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված հիմքերից որևէ մեկը, որի հիման վրա վերաքննիչ դատարանը բեկանում է բողոքարկվող դատական ակտը (բացառությամբ նույն հոդվածի 3-րդ մասով սահմանված հիմքերի), **վերաքննիչ դատարանը չի առաջնորդվում ընդհանուր կանոնով և վերաքննիչ բողոքի բոլոր հիմքերը չի քննում, այլ անդրադառնում է միայն վերաքննիչ բողոքում տեղ գտած՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 365-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված համապատասխան հիմքին, որի հիման վրա բեկանել է դատական ակտը**: Նման դեպքերում վերաքննիչ դատարանի կողմից վերաքննիչ բողոքի բոլոր հիմքերին անդրադառնալու ընդհանուր կանոնն այլևս չի գործում (տես՝ *«ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ-ն ընդդեմ Մարտին Դիլանյանի, Ռիչարդ Ադայանի, Անի Գյուլբուդաղյանի թիվ ՇԴ/5144/02/19 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 29.06.2022 թվականի որոշումը*):

3.16. Օրենսդիրը սահմանելով դատական ակտի անվերապահ բեկանման հիմքերը, ըստ էության, առանձնացրել է այնպիսի դատավարական սխալներ, որոնք անմիջականորեն կապված են արդարադատության սկզբունքների և դատական պաշտպանության սահմանադրական իրավունքի խախտումների հետ: Հենց դրանով է պայմանավորված այն հանգամանքը, որ նման խախտումների առկայության պայմաններում դատական ակտը բոլոր դեպքերում ենթակա է բեկանման, և բողոք բերող անձը պարտավոր չէ ապացուցել, որ այդ դատավարական խախտումները հանգեցրել են կամ կարող էին հանգեցնել գործի սխալ լուծման:

3.17. Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Օրենսգրքով հստակ սահմանվել է ՀՀ վճռաբեկ դատարանում քաղաքացիական գործերով դատավարության իրականացման համապատասխան կարգը, ըստ որի՝ ՀՀ վճռաբեկ դատարանին իրավունք է վերապահվել ՀՀ վերաքննիչ դատարանի եզրափակիչ և միջանկյալ դատական ակտերի դեմ բերված վճռաբեկ բողոքները քննելու բացառապես նույն օրենսգրքով նախատեսված դեպքերում և կարգով: Այդ

կարգի համաձայն՝ վերաքննիչ դատարանի եզրափակիչ դատական ակտերի դեմ վճռաբեկ բողոք բերելու իրավունք է վերապահվել, ի թիվս այլնի, նաև **գործին մասնակից չդարձած անձանց**: Մասնավորապես՝ գործին մասնակից չդարձած անձինք բոլոր դեպքերում վճռաբեկ բողոք բերելու իրավունք ունեն միայն **իրենց ներկայացրած վերաքննիչ բողոքի քննության արդյունքով կայացված** որոշումների դեմ (տե՛ս վերը 3.8.-րդ կետը): Ավելին՝ օրենսդիրը սահմանել է նաև, որ բողոքարկման ենթակա եզրափակիչ դատական ակտն անձը չի կարող բողոքարկել Վճռաբեկ դատարանում, եթե նա նույն հիմքերով չի բողոքարկել դատական ակտը վերաքննիչ դատարանում (տե՛ս վերը 3.9.-րդ կետը):

3.18. Գործին մասնակից չդարձած անձը բողոքում պետք է հիմնավորի դատական ակտի՝ իր իրավունքներին և պարտականություններին առնչվելու, վերաքննիչ բողոքը սահմանված ժամկետում բերված լինելու հանգամանքները: Իր հերթին ՀՀ վերաքննիչ դատարանը վերաքննիչ բողոքը վարույթ ընդունելու հարցը լուծելիս պետք է պարզի բողոքին կից ներկայացված ապացույցներով վիճարկվող դատական ակտը վերջինիս իրավունքներին և պարտականություններին առերևույթ վերաբերելության հիմնավորվածությունը, բողոքը սահմանված ժամկետում բերված լինելու հարցը, այնուհետև գործի քննության փուլում, ի թիվս այլնի, գնահատման առարկա դարձնի և պարզի անձի իրավունքներին և պարտականություններին, նրանց սուբյեկտիվ իրավունքների իրացման կամ պարտականության պատշաճ կատարման համար խոչընդոտների վերաբերյալ դատական ակտ կայացված լինել կամ չլինելու հարցը: Եթե այդ հանգամանքը հիմնավորված է, ապա վերադաս դատական ատյանը պետք է բեկանի նման դատական ակտը՝ գործի քննությանը բողոք բերած անձի մասնակցությունն ապահովելու համար:

3.19. Գործին մասնակից չդարձած անձանց կողմից դատական ակտի բողոքարկման ինստիտուտի վերաբերյալ արտահայտած իրավական դիրքորոշումների լույսի ներքո անդրադառնալով Արամ Ռազմիկի Դանիելյանի՝ որպես գործին մասնակից չդարձած անձի վճռաբեկ բողոքում բերված փաստարկներին, ինչպես նաև սույն գործի փաստերին՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է հետևյալը.

3.20. 04.02.2020 թվականին դիմելով դատարան՝ ՀՀ գլխավոր դատախազությունը պահանջել է անվավեր ճանաչել 26.05.2007 թվականի լուտ 26 հողամասի աճուրդը, որպես հետևանք անվավեր ճանաչել 31.05.2007 թվականի ՀՀ Կոտայքի մարզպետի և Զարիկ Գարուշի Գևորգյանի միջև կնքված հողամասի առուվաճառքի թիվ 2587 պայմանագիրը, դրա հիման վրա իրավունքների պետական գրանցման միասնական 4-1-07 մատյանի 020 համարի տակ գրանցված 0,55 հա հողամասի նկատմամբ Զարիկ Գարուշի Գևորգյանի սեփականության իրավունքի պետական գրանցումը: 07.04.2022 թվականին Դատարանը վճիռ է կայացրել հայցը բավարարելու մասին (**հատոր 12, գ.թ. 28-60**):

3.21. 07.06.2022 թվականին Զարիկ Գարուշի Գևորգյանը ներկայացրել է վերաքննիչ բողոք, որը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանը 06.10.2022 թվականի որոշմամբ մերժել է և Դատարանի 07.04.2022 թվականի վճիռը թողել է անփոփոխ (**հատոր 12, գ.թ. 147-169**):

3.22. 11.11.2022 թվականին Զարիկ Գարուշի Գևորգյանը ներկայացրել է վճռաբեկ բողոք, որը Վճռաբեկ դատարանը 03.08.2023 թվականի որոշմամբ մերժել է և ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 06.10.2022 թվականի որոշումը թողել է օրինական ուժի մեջ՝ նույն որոշման հիմնավորումներով (**հատոր 13, գ.թ. 130-149**):

3.23. 07.09.2023 թվականին, փոստային ծառայության միջոցով, որպես գործին մասնակից չդարձած անձ, Արամ Ռազմիկի Դանիելյանը, Դատարանի 07.04.2022 թվականի

վճռի դեմ ներկայացրել է վերաքննիչ բողոք (**հատոր 13, գ.թ. 179-189**):

3.24. 23.11.2023 թվականին Վերաքննիչ դատարանը որոշել է. «Թիվ ԿԴ/3359/02/21 հակակոռուպցիոն քաղաքացիական գործով Դատարանի 07.04.2022 թվականի վճռի դեմ գործին մասնակից չդարձած անձ Արամ Ռազմիկի Դանիելյանի վերաքննիչ բողոքի ընդունումը մերժել» (**հատոր 13, գ.թ. 190-197**):

3.25. Վերաքննիչ դատարանը կիրառելով Օրենսգրքի 372-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետը՝ Արամ Ռազմիկի Դանիելյանի վերաքննիչ բողոքի ընդունումը մերժել է՝ պատճառաբանելով, որ այն դեպքերում, երբ առաջին ատյանի դատարանի դատական ակտի դեմ բերվել է վերաքննիչ բողոք, իսկ վերաքննիչ բողոքի քննության արդյունքում Վերաքննիչ դատարանի դատական ակտի դեմ բերվել է վճռաբեկ բողոք և Վճռաբեկ դատարանը բողոքի քննության արդյունքում կայացրել է որոշում, ապա գործին մասնակից չդարձած անձի՝ բողոքարկման իրավունքը պետք է իրացվի վճռաբեկ բողոք բերելու միջոցով:

3.26. Սույն որոշման 3.21.-3.22. կետերում նշված փաստերից ակնհայտ է, որ Վերաքննիչ դատարանը, մերժելով վերաքննիչ բողոք բերած անձի վերաքննիչ բողոքը, Դատարանի 07.04.2022 թվականի վճիռը թողել է անփոփոխ, իսկ Վճռաբեկ դատարանի 03.08.2023 թվականի որոշմամբ վճռաբեկ բողոքը մերժվել է և ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 06.10.2022 թվականի որոշումը թողնվել է օրինական ուժի մեջ՝ նույն որոշման հիմնավորումներով:

3.27. Վճռաբեկ դատարանն ինչպես արդեն իսկ արձանագրել է սույն որոշմամբ՝ բոլոր դեպքերում գործին մասնակից չդարձած անձն իր իրավունքներին և պարտականություններին առնչվող դատական ակտը **կարող է բողոքարկել միայն վերաքննության կարգով**: Այս հիմնավորումներով Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ գործին մասնակից չդարձած անձը պետք է ներկայացնի վերաքննիչ բողոք, ինչը և արել է՝ ներկայացնելով վերաքննիչ բողոք՝ հաշվի առնելով նաև այն հանգամանքը, որ օրենսդիրը սահմանել է, որ բողոքարկման ենթակա եզրափակիչ դատական ակտն անձը չի կարող բողոքարկել ՀՀ վճռաբեկ դատարանում, եթե նա նույն հիմքերով չի բողոքարկել դատական ակտը ՀՀ վերաքննիչ դատարանում, իսկ գործին մասնակից չդարձած անձինք վճռաբեկ բողոք բերելու իրավունք ունեն միայն իրենց ներկայացրած վերաքննիչ բողոքի քննության արդյունքով կայացված որոշումների դեմ:

3.28. Ինչ վերաբերվում է Վերաքննիչ դատարանի այն դիրքորոշմանը, որ անձի բողոքարկման իրավունքը պետք է իրացվի վճռաբեկ դատարանում, հակառակ դեպքում վերաքննիչ դատարանը բողոքի քննության շրջանակներում քննարկման առարկա է դարձնում այն գործով դատական ակտի բեկանման հիմքը, որով առկա է վճռաբեկ դատարանի գործն ըստ էության լուծող դատական ակտ, ապա հարկ է նշել, որ Վերաքննիչ դատարանը միայն հաստատում է, թե արդյոք առկա է Օրենսգրքի 365-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված հիմքի առկայությունը, թե՛ ոչ, իսկ հաստատելու պարագայում, Վերաքննիչ դատարանը չի անդրադառնում բողոքի մյուս հիմքերին ու հիմնավորումներին:

3.29. Ասվածի լույսի ներքո Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանի վերաքննիչ բողոքի ընդունումը մերժելու մասին որոշման հիմքում դրված պատճառաբանությունները հերքվում են վերն ասվածով: Վերաքննիչ դատարանը պետք է պարզեր բողոքին կից ներկայացված ապացույցներով վիճարկվող դատական ակտը վերջինիս իրավունքներին և պարտականություններին առերևույթ վերաբերելության հիմնավորվածությունը, արդյո՞ք անձը սահմանված ժամկետում է ներկայացրել վերաքննիչ բողոքը՝ քննության առարկա դարձնելով այն հարցը, թե անձն իրապես ե՞րբ է իմացել կամ ե՞րբ

կարող էր իմանալ միջամտող դատական ակտի մասին: Այնուհետև, Վերաքննիչ դատարանում գործի քննության փուլում, ի թիվս այլնի, գնահատման առարկա դարձներ և պարզեր անձի իրավունքների և պարտականությունների, նրանց սուբյեկտիվ իրավունքների իրացման կամ պարտականության պատշաճ կատարման համար խոչընդոտների վերաբերյալ դատական ակտ կայացված լինել կամ չլինելու հարցը:

3.30. Նման պայմաններում բացակայում է Օրենսգրքի 372-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով նախատեսված վերաքննիչ բողոքի ընդունումը մերժելու հիմքը: Հետևաբար Վերաքննիչ դատարանը, ոչ իրավաչափորեն մերժելով Արամ Ռազմիկի Դանիելյանի վերաքննիչ բողոքի ընդունումը, սահմանափակել է Արամ Ռազմիկի Դանիելյանի բողոքարկման իրավունքի իրացման հնարավորությունը՝ արդյունքում զրկելով նրան վերադաս դատարանի մատչելիության իրավունքից, ինչը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար Վերաքննիչ դատարանի 23.11.2023 թվականի «Վերաքննիչ բողոքի ընդունումը մերժելու մասին» որոշումը վերացնելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 405-րդ, 406-րդ ու 408-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Վերացնել ՀՀ վերաքննիչ հակակոռուպցիոն դատարանի 23.11.2023 թվականին «Վերաքննիչ բողոքի ընդունումը մերժելու մասին» որոշումը:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

ԵԴ/17804/02/18

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ
ՈՐՈՇՈՒՄ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆԻՑ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎՃՌԱԲԵԿ
ԴԱՏԱՐԱՆԻ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱԼԱՏԸ
(ԱՅՍՈՒՀԵՏ՝ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ)

2024 թվականի ապրիլի 10-ին

գրավոր ընթացակարգով քննելով ըստ Պարզև Առաքելյանի հայցի ընդդեմ Հռիփսիմե Առաքելյանի՝ ըստ կտակի ժառանգությունը փաստացի տիրապետելու հիմքով ընդունած ժառանգ ճանաչելու, ժառանգության իրավունքի վկայագիրը և սեփականության իրավունքի պետական գրանցումն անվավեր ճանաչելու պահանջների մասին, ու ըստ Հռիփսիմե Առաքելյանի հակընդդեմ հայցի ընդդեմ Պարզև Առաքելյանի, երրորդ անձինք Երևան քաղաքի նոտարական տարածքի նոտար Հայկուհի Հարությունյանի և Կադաստրի կոմիտեի՝ ժառանգությունն ընդունած ժառանգ ճանաչելու ու ժառանգության վկայագիրն անվավեր ճանաչելու պահանջների մասին, քաղաքացիական գործով ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 09.04.2021 թվականի որոշման դեմ Պարզև Առաքելյանի բերած վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Ձ Ե Ց

1. Գործի դատավարական նախապատմությունը

Դիմելով դատարան՝ Պարզև Առաքելյանը պահանջել է ըստ կտակի ժառանգությունը փաստացի տիրապետելու հիմքով իրեն ճանաչել իր մոր՝ Լիան Մանուկյանի ժառանգությունն ընդունած ժառանգ և որպես հետևանք՝ անվավեր ճանաչել 11.04.2016 թվականին Հռիփսիմե Առաքելյանին տրված ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիրն ու դրա հիման վրա Հռիփսիմե Առաքելյանի անվամբ 20.04.2016 թվականին կատարված սեփականության իրավունքի պետական գրանցումը:

Հակընդդեմ հայցով դիմելով դատարան՝ Հռիփսիմե Առաքելյանը պահանջել է իրեն ճանաչել Երևանի Բաշինջաղյան փողոցի 163-րդ շենքի թիվ 14 բնակարանում Լիան Մանուկյանի 4/15 բաժնի 1/2 բաժնի, Կոտայքի մարզի Չարենցավան համայնքի Արզական գյուղում թիվ 07-015-0128-0022 կադաստրային ծածկագրով անշարժ գույքի և ՎԱԶ-210130 մակնիշի շարժական գույքի 4/6 բաժնի 1/2 բաժնի նկատմամբ ժառանգությունն ընդունած ժառանգ ու որպես հետևանք՝ անվավեր ճանաչել 11.04.2016 թվականին Հռիփսիմե Առաքելյանին տրված ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիրը:

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի (այսուհետ՝

Դատարան) 11.09.2020 թվականի վճռով հայցը մերժվել է, իսկ հակընդդեմ հայցի մասով քաղաքացիական գործի վարույթը կարճվել է՝ պահանջից հրաժարվելու հիմքով:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 09.04.2021 թվականի որոշմամբ Պարզև Առաքելյանի բերած վերաքննիչ բողոքը մերժվել է, և Դատարանի 11.09.2020 թվականի վճիռը թողնվել է անփոփոխ:

ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի 04.08.2021 թվականի որոշմամբ Պարզև Առաքելյանի բերած վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժվել է:

ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատի 30.10.2023 թվականի որոշմամբ դատական ակտը նոր հանգամանքի հիմքով վերանայելու վերաբերյալ Պարզև Առաքելյանի բողոքը բավարարվել է՝ նոր հանգամանքի հիմքով վերանայվել է ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի 04.08.2021 թվականի «Վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժելու մասին» որոշումն ու թիվ ԵԴ/17804/02/18 քաղաքացիական գործով Վերաքննիչ դատարանի 09.04.2021 թվականի որոշման դեմ Պարզև Առաքելյանի բերած վճռաբեկ բողոքն ընդունվել է Վճռաբեկ դատարանի վարույթ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Պարզև Առաքելյանը (ներկայացուցիչ Գագիկ Գրիգորյան):

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը խախտել է Սահմանադրության 60-րդ հոդվածի 2-րդ մասը, 61-րդ հոդվածի 1-ին մասը և 63-րդ հոդվածի 1-ին մասը, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 14-րդ հոդվածի 1-ին կետը, 1225-րդ հոդվածի 5-րդ կետը, 1226-րդ հոդվածի 3-րդ կետի 2-րդ ենթակետը ու 1227-րդ հոդվածի 1-ին կետը:

Բողոք բերած անձը նշված հիմքի առկայությունը պատճառաբանել է հետևյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ Հայաստանի Հանրապետության իրավական համակարգում թե՛ ըստ օրենքի, թե՛ ըստ կտակի ժառանգության ընդունման եղանակները սահմանված են ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1226-րդ հոդվածով: Հիշյալ հոդվածը թե՛ ըստ օրենքի, թե՛ ըստ կտակի ժառանգության ընդունման եղանակներ է նախատեսում ժառանգության բացման վայրի նոտարին դիմում հանձնելը կամ ժառանգական գույքը փաստացի տիրապետելը և կառավարելը: Ժառանգության ընդունման նշված եղանակները վերաբերում են թե՛ ըստ օրենքի, թե՛ ըստ կտակի ժառանգության ընդունմանը: Ժառանգության իրավունքին վերաբերող օրենսդրությամբ հիշյալ կարգավորումից որևէ բացառություն նախատեսված չէ:

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել, որ ըստ կտակի ժառանգության դեպքում նույնպես ժառանգի կողմից ժառանգության ընդունմանն ուղղված վերոհիշյալ վարքագծի դրսևորումը բնականորեն օրինաչափ է, ինչից հետևում է, որ այս եղանակի կիրառման սահմանափակումը կհանգեցնի ժառանգական հարաբերությունների հիմքում ընկած հասարակական առումով բնական օրինաչափությունների գործողության խաթարման, որն անընդունելի է և չի կարող նպաստել այս հարաբերությունների արդյունավետ կարգավորմանն ու ժառանգման հիմնական իրավունքի լիարժեք կենսագործմանը:

Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ ժառանգությունը բացվելուց հետո վեց ամսվա

ընթացքում ինքը կատարել է ժառանգական գույքի փաստացի տիրապետման և կառավարման այնպիսի գործողություններ, որոնք ապացուցում են, որ իր կամքն ուղղված է եղել ըստ կտակի ժառանգությունն ընդունելուն:

Վերագրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 09.04.2021 թվականի որոշումը և սկզբնական հայցի մասով գործն ուղարկել նոր քննության:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1) 08.07.2008 թվականին կտակ է կազմվել այն մասին, որ Լիան Մանուկյանը նաև Երևանի Աջափնյակ վարչական շրջանի Բաշինջաղյան փողոցի 163-րդ շենքի թիվ 14 բնակարանի՝ իրեն պատկանող մասը կտակում է Պարզև Առաքելյանին: Նշված կտակն ստորագրել է կտակարար Լիան Մանուկյանը, և վավերացրել է «Աջափնյակ» նոտարական տարածքի նոտար Ռ. Առաքելյանը (**հատոր 1-ին, գ.թ. 63**).

2) Լիան Մանուկյանը մահացել է 12.09.2015 թվականին, որի վերաբերյալ նույն օրը կատարվել է գրանցում (**հատոր 1-ին, գ.թ. 64**).

3) «Կենտրոն» նոտարական տարածքի նոտար Հ. Հարությունյանի կողմից 11.04.2016 թվականին Լիան Մանուկյանի ժառանգական գույքի նկատմամբ ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիր է տրվել Հռիփսիմե Առաքելյանին: Ժառանգական գույքը բաղկացած է Երևանի Աջափնյակ վարչական շրջանի Բաշինջաղյան փողոցի 163-րդ շենքի թիվ 14 հասցեում գտնվող բնակարանի 1/6-րդ բաժնեմասից (**հատոր 1-ին, գ.թ. 59**).

4) Պարզև Առաքելյանը հայց է ներկայացրել Դատարան ընդդեմ Հռիփսիմե Առաքելյանի՝ պահանջելով **ըստ կրակի ժառանգությունը փաստացի տիրապետելու հիմքով** իրեն ճանաչել իր մոր՝ Լիան Մանուկյանի ժառանգությունն ընդունած ժառանգ և որպես հետևանք՝ անվավեր ճանաչել 11.04.2016 թվականին Հռիփսիմե Առաքելյանին տրված ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիրն ու դրա հիման վրա Հռիփսիմե Առաքելյանի անվամբ 20.04.2016 թվականին կատարված սեփականության իրավունքի պետական գրանցումը (**հատոր 1-ին, գ.թ. 48-50, 192-196**).

5) Դատարանը նաև **ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1226-րդ հոդվածի 3-րդ կետի 2-րդ ենթակետը մեկնաբանելու արդյունքում** 11.09.2020 թվականին վճիռ է կայացրել սկզբնական հայցը մերժելու մասին՝ այն պատճառաբանությամբ, որ «**Լիան Մանուկյանի մահից հետո վեց ամսվա ընթացքում ըստ օրենքի և ըստ կրակի ժառանգ Պարզև Առաքելյանի կողմից իրականացված տիրապետման և կառավարման գործողությունները չեն կարող համարվել ըստ կրակի ժառանգությունն ընդունելու կամքի դրսևորում, հետևաբար՝ Պարզև Առաքելյանի հայցը՝ ըստ կրակի ժառանգությունը փաստացի տիրապետման հիմքով ընդունած ճանաչելու պահանջի մասով անհիմն է և ենթակա է մերժման**» (**հատոր 1-ին, գ.թ. 192-196**).

6) Վերաքննիչ դատարանի 09.04.2021 թվականի որոշմամբ Պարզև Առաքելյանի վերաքննիչ բողոքը մերժվել է, և Դատարանի 11.09.2020 թվականի վճիռը թողնվել է անփոփոխ՝ այն պատճառաբանությամբ, որ «Սույն գործով Դատարանը հաստատված է համարել այն չվիճարկված փաստերը, որ հայցվորը հանդիսացել է միաժամանակ ըստ օրենքի և ըստ կտակի ժառանգ ու ժառանգության ընդունման վեցամսյա ժամկետում ժառանգության բացման վայրի նոտարին չի ներկայացրել ըստ կտակի ժառանգության ընդունման մասին դիմում: Նույնանման փաստեր են առկա եղել նաև թիվ ԵԱԲԴ/1018/02/09 քաղաքացիական գործով հաստատված փաստերի կազմում, և այդ հիմքով Դատարանը միանգամայն իրավաչափ

կերպով հղում է կատարել թիվ ԵԱԲԴ/1018/02/09 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 01.07.2011թ. որոշմամբ այն իրավական նորմերի վերաբերյալ կատարված մեկնաբանություններին, որոնք կարգավորում են ժառանգության ընդունման հետ կապված հարաբերությունները և հանգում են նրան, որ **ըստ կտակի ժառանգություն կարող է ընդունվել բացառապես ժառանգության բացման վայրի նոտարին համապատասխան դիմում ներկայացնելու միջոցով**: Դատարանի կատարած հղումը վկայում է այն մասին, որ Դատարանը լիովին կիսել է ՀՀ վճռաբեկ դատարանի դիրքորոշումն ու վերջինիս մեկնաբանություններից շեղվելու համար բավարար և ծանրակշիռ հիմնավորումներ չի ունեցել: Նույնաբովանդակ է նաև խնդրո առարկա իրավական հարցի վերաբերյալ Վերաքննիչ դատարանի դիրքորոշումը, և այն կրկնելու անհրաժեշտությունը բացակայում է» (**հատոր 2-րդ, գ.թ. 74-77**).

7) ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի 04.08.2021 թվականի որոշմամբ Պարզև Առաքելյանի բերած վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժվել է նաև այն պատճառաբանությամբ, որ «Վճռաբեկ դատարանի գնահատմամբ սույն գործով բողոք բերած անձի ներկայացրած հիմնավորումները բավարար չեն բողոքարկվող դատական ակտում նյութական և դատավարական իրավունքի նորմի խախտման առկայությունն ու այդ խախտմամբ արդարադատության բուն էության խաթարումը հիմնավորված համարելու համար»: Ընդ որում, վճռաբեկ բողոք բերած անձ Պարզև Առաքելյանը վճռաբեկ բողոքում որպես դրա հիմք նշել էր նաև այն, որ «Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1226-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետը» (**հատոր 2-րդ, գ.թ. 132-139, 145-149**).

8) Սահմանադրական դատարանը Պարզև Առաքելյանի դիմումի հիման վրա՝ ՀՀ **քաղաքացիական օրենսգրքի 1226-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետի՝** Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ գործով 12.07.2022 թվականին կայացրած թիվ ՍԴՈ-1660 որոշման եզրափակիչ մասի 1-ին կետով արձանագրել է, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1226-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետը համապատասխանում է Սահմանադրությանն այն մեկնաբանությամբ, համաձայն որի՝ **փաստացի տիրապետման կամ կառավարման, այդ թվում՝ իր հաշվին գույքը պահպանելու ծախսեր կատարելու միջոցով, ժառանգության ընդունման եղանակը կիրառելի է ինչպես ըստ օրենքի, այնպես էլ ըստ կտակի ժառանգության դեպքում**: Բացի այդ, Սահմանադրական դատարանը նույն որոշման եզրափակիչ մասի 2-րդ կետում նշել է, որ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 69-րդ հոդվածի 10-րդ մասի համաձայն՝ դիմողի նկատմամբ կայացված վերջնական դատական ակտը նոր հանգամանքի ի հայտ գալու հիմքով ենթակա է վերանայման՝ օրենքով սահմանված կարգով, քանի որ **ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1226-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետը դիմողի նկատմամբ կիրառվել է նույն որոշմամբ տրված մեկնաբանությունից տարբերվող մեկնաբանությամբ**:

Նույն որոշմամբ Սահմանադրական դատարանը, վկայակոչելով Վճռաբեկ դատարանի կողմից նախկինում արտահայտված դիրքորոշումները, արձանագրել է, որ՝

- «Նման դիրքորոշումների պարագայում ըստ կտակի ժառանգների համար փաստացի գործողությունները փաստորեն վերաժվում են իրավաբանական գործողությունների, այն է՝ նոտարին դիմելու միջոցով ժառանգության ընդունմանը: Մինչդեռ փաստացի տիրապետման կամ կառավարման եղանակը ժառանգության ընդունման ինքնուրույն եղանակ է, որի իմաստն ու նշանակությունն այն է, որ նշված դեպքերում անհրաժեշտություն չկա ժառանգության ընդունման համար դիմել նոտարին»,

- «հաշվի առնելով Սահմանադրությունից բխող ըստ կտակի ժառանգման առաջնահերթությունը՝ փաստացի տիրապետման կամ կառավարման եղանակով ժառանգության

ընդունման պարագայում մնացած այլ պայմանների հավասարության դեպքում պետք է կիրառվի ժառանգությունն ըստ կտակի ընդունման կանխավարկածը»,

- «փաստացի տիրապետման կամ կառավարման միջոցով ժառանգությունն ընդունելու եղանակը կիրառելի է ինչպես ըստ օրենքի, այնպես էլ ըստ կտակի ժառանգության ընդունման դեպքերի համար: Ընդ որում՝ եթե ժառանգը միաժամանակ և՛ ըստ կտակի, և՛ ըստ օրենքի ժառանգ է, ապա փաստացի տիրապետման կամ կառավարման եղանակով, մասնավորապես՝ գույքի պահպանման ծախսերն իր հաշվին կատարելու միջոցով ժառանգության ընդունման դեպքում սահմանադրաիրավական պահանջներին համահունչ պետք է գործի այն կանխավարկածը, որ ժառանգությունն ընդունվել է ըստ կտակի»,

- «Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում նշել, որ ինչպես վիճարկվող, այնպես էլ Օրենսգրքի որևէ դրույթով չի սահմանափակվում ըստ կտակի ժառանգի իրավունքը՝ փաստացի տիրապետման կամ կառավարման եղանակով ընդունելու ժառանգությունը, Օրենսգրքի տրամաբանությանը համապատասխան ժառանգության ընդունման եղանակներն ընդհանուր են ինչպես ըստ կտակի, այնպես էլ ըստ օրենքի ժառանգության ընդունման համար, իրավակիրառ պրակտիկայում վիճարկվող դրույթին տրված մեկնաբանությունը, միջամտելով ըստ կտակի ժառանգների իրավունքներին, չի հետապնդել սեփականության իրավունքի սահմանափակման համար Սահմանադրությամբ նախատեսված որևէ նպատակ, սահմանափակելով փաստացի տիրապետման կամ կառավարման եղանակով ըստ կտակի ժառանգների իրավունքները՝ ըստ էության սահմանափակվում են նաև կտակային հանձնարարություններից բխող շահառուների իրավունքները, քանի որ, ըստ ձևավորված իրավակիրառ պրակտիկայի, սահմանված ժամկետում ըստ կտակի ժառանգի կողմից ժառանգությունն ընդունելու հարցով նոտարին չդիմելու պարագայում չի իրագործվի կտակով նախատեսված պահանջները, այդ թվում՝ կտակային հանձնարարությունները, փաստացի տիրապետման կամ կառավարման եղանակը միայն ըստ օրենքի ժառանգների համար նախատեսելու պարագայում կարող է անտեսվել ժառանգատուի կամահայտնությունը, քանի որ կարող են լինել դեպքեր, երբ, օրինակ, կտակով ժառանգությունից զրկված ըստ օրենքի ժառանգները, առավելություն ունենալով ըստ կտակի ժառանգների համեմատ, ժառանգատուի կամքին հակառակ դառնան վերջինիս գույքի սեփականատերեր» **(հատոր 3-րդ, գ.թ. 13-38)**.

9) ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատի 30.10.2023 թվականի որոշմամբ դատական ակտը վերը նշված նոր հանգամանքի հիմքով վերանայելու վերաբերյալ Պարզև Առաքելյանի բողոքը բավարարվել է՝ ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի 04.08.2021 թվականի «Վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժելու մասին» որոշումը նոր հանգամանքի հիմքով վերանայվել է, ու թիվ ԵԴ/17804/02/18 քաղաքացիական գործով Վերաքննիչ դատարանի 09.04.2021 թվականի որոշման դեմ Պարզև Առաքելյանի բերած վճռաբեկ բողոքն ընդունվել է Վճռաբեկ դատարանի վարույթ:

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 394-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված հիմքի առկայությամբ՝ նույն հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի իմաստով, այն է՝ առերևույթ առկա է մարդու իրավունքների և ազատությունների հիմնարար խախտում, քանի որ բողոքարկվող դատական ակտը կայացնելիս Վերաքննիչ դատարանը թույլ է տվել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1226-րդ հոդվածի խախտում, որը խաթարել է արդարադատության բուն էությունը:

Սույն վճռաբեկ բողոքի քննության շրջանակներում վճռաբեկ դատարանը հարկ է համարում անդրադառնալ հետևյալ իրավական հարցադրմանը՝ արդյո՞ք ըստ կտակի ժառանգությունը կարող է ընդունվել նաև ժառանգված գույքը ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1226-րդ հոդվածի 3-րդ կետի իմաստով փաստացի տիրապետելու կամ կառավարելու միջոցով:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1184-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ ժառանգության դեպքում մահացածի գույքը (ժառանգությունը) անփոփոխ վիճակում, որպես միասնական ամբողջություն, անցնում է այլ անձանց (համապարփակ իրավահաջորդություն), եթե այլ բան նախատեսված չէ նույն օրենսգրքի կանոններով:

Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ ժառանգությունը կարգավորվում է նույն օրենսգրքով, իսկ դրանով նախատեսված դեպքերում՝ նաև այլ օրենքներով:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1185-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ ժառանգությունը կատարվում է ըստ կտակի և ըստ օրենքի:

Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ ժառանգությունը կատարվում է ըստ օրենքի, եթե չկա կտակ, կամ դրանում սահմանված չէ ամբողջ ժառանգության ճակատագիրը, ինչպես նաև նույն օրենսգրքով սահմանված այլ դեպքերում:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1187-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ ժառանգությունը բացվում է քաղաքացու մահից հետո:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1188-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ ժառանգության բացման ժամանակը քաղաքացու մահվան օրն է (...):

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1190-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ ըստ կտակի և ըստ օրենքի ժառանգներ կարող են լինել ժառանգության բացման օրը կենդանի, ինչպես նաև ժառանգատուի կենդանության ժամանակ սաղմնավորված և ժառանգությունը բացվելուց հետո կենդանի ծնված քաղաքացիները:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1192-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ կտակ է համարվում քաղաքացու մահվան դեպքում նրան պատկանող գույքի տնօրինման վերաբերյալ նրա կամքի արտահայտությունը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1193-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ քաղաքացին իրավունք ունի իր հայեցողությամբ ցանկացած գույք կտակել ցանկացած անձի, ցանկացած ձևով որոշել ժառանգությունում ժառանգների բաժինները, զրկել ժառանգությունից ըստ օրենքի ժառանգներին, կտակում ներառել ժառանգության մասին նույն օրենսգրքի կանոններով նախատեսված այլ կարգադրություններ, վերացնել, փոփոխել կամ լրացնել կազմված կտակը:

Նույն հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ կտակի ազատությունը սահմանափակվում է միայն ժառանգության պարտադիր բաժնի կանոններով:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1215-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ ըստ օրենքի ժառանգները ժառանգման են հրավիրվում նույն օրենսգրքի 1216-1219 հոդվածներով սահմանված հերթականությամբ:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1216-րդ հոդվածի համաձայն՝ առաջին հերթի ժառանգներն են ժառանգատուի երեխաները, ամուսինը և ծնողները (...):

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1225-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ ժառանգությունը ձեռք բերելու համար ժառանգը պետք է այն ընդունի:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1226-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ ժառանգությունն ընդունվում է ժառանգությունն ընդունելու կամ ժառանգական իրավունքի վկայագիր ստանալու մասին ժառանգի դիմումը ժառանգության բացման վայրի նոտարին հանձնելով:

Նույն հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ եթե այլ բան ապացուցված չէ, ապա ժառանգությունը ժառանգի կողմից ընդունված է համարվում, երբ նա սկսում է փաստացի տիրապետել կամ կառավարել ժառանգված գույքը՝ ներառյալ, երբ ժառանգը՝

1) միջոցներ է ձեռնարկել գույքը պահպանելու և այն երրորդ անձանց ոտնձգություններից կամ հավակնություններից պաշտպանելու համար.

2) իր հաշվին կատարել է գույքը պահպանելու ծախսեր.

3) իր հաշվից վճարել է ժառանգատուի պարտքերը կամ երրորդ անձանցից ստացել է ժառանգատուին հասանելիք գումարները:

ՀՀ վճարեկ դատարանը նախկինում կայացրած որոշմամբ արձանագրել է, որ ժառանգի կարգավիճակ ձեռք բերելու նպատակով օրենսդիրը ժառանգի համար չի նախատեսել այդ կարգավիճակի ձեռք բերման որևէ գործընթաց: Անձը ժառանգ է դառնում անկախ որևէ գործողություն կատարելու հանգամանքից, օրենքի հիման վրա, ժառանգության բացման փաստի ուժով, երբ ժառանգատուն իր գույքը կամ դրա մի մասը, կտակի միակողմանի գործարքի ուժով, ժառանգում է վերջինիս, իսկ դրա բացակայության դեպքում, ժառանգի կարգավիճակ են ձեռք բերում ժառանգատուի ազգականները՝ ըստ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1216-1219 հոդվածներով սահմանված հերթականության: Փաստորեն, ըստ օրենքի ժառանգման դեպքում օրենսդիրը ժառանգատու-ժառանգ հարաբերության հիմքում դրել է նրանց միջև գոյություն ունեցող ազգակցական կապը: Դրան համապատասխան, ըստ օրենքի ժառանգման հրավիրված անձի համար, ժառանգության բացված լինելու փաստին տեղյակ լինելու դեպքում, օբյեկտիվ հնարավորություն է ստեղծվում իրազեկվել ժառանգի կարգավիճակ ձեռք բերած լինելու մասին և դրան համապատասխան իրացնելու ժառանգի համար օրենքով նախատեսված իր սուբյեկտիվ իրավունքներն ու պարտականությունները, այլ կերպ ասած՝ ներառվելու ժառանգության ընդունման կամ ժառանգությունից հրաժարվելու գործընթացներին:

ՀՀ վճարեկ դատարանն ընդգծել է, որ իրավիճակն այլ է ըստ կտակի ժառանգման դեպքում, երբ ժառանգի կարգավիճակի ձեռք բերման համար ազգակցական կապը որոշիչ նշանակություն չի ստանում: Նման պայմաններում, մինչև ժառանգության ընդունման գործընթացին ներգրավվելը, անձը պետք է իրազեկված լինի կտակի ուժով ժառանգության հրավիրված ժառանգի կարգավիճակ ձեռք բերած լինելու մասին: Տվյալ դեպքում իր կարգավիճակի մասին տեղյակ չլինելու պայմաններում անձն օբյեկտիվորեն դուրս է մնում ժառանգական իրավահարաբերության մեջ ներառվելու հնարավորությունից: Այդ խոչընդոտը կվերանա այն պահից, երբ նա կիրազեկվի իր վերաբերյալ ժառանգատուի կողմից թողած կտակի գոյության մասին: Այսինքն՝ ժառանգի կարգավիճակի ձեռք բերումը կտակի դեպքում ոչ միայն պայմանավորված է ժառանգության բացման և կտակի գոյության փաստով, այլև կտակի գոյության մասին իրազեկված լինելու հանգամանքով (*տես Մանուշ Մկրտչյանն ընդդեմ Տիգրան Խառապյանի և մյուսների թիվ ԼԴ/0462/02/15 քաղաքացիական գործով ՀՀ վճարեկ դատարանի 19.01.2022 թվականի որոշումը*):

Մեկ այլ որոշմամբ ՀՀ վճարեկ դատարանն արձանագրել է, որ օրենսդիրը նախատեսել է ժառանգության ընդունման երկու եղանակ՝ ժառանգությունն ընդունելու կամ ժառանգական իրավունքի վկայագիր ստանալու մասին դիմումը ժառանգության բացման վայրի նոտարին հանձնելը և ժառանգի կողմից ժառանգված գույքը փաստացի տիրապետելը կամ կառավարելը: Ժառանգությունը ժառանգի կողմից ընդունված է համարվում, երբ նա սկսում է փաստացի տիրապետել այդ գույքը, ինչը հանդիսանում է ժառանգական գույքի նկատմամբ ժառանգի սեփականության իրավունքի ծագման նախապայման (*տես Արմինե Հակոբյանը և*

Սամվել Հակոբյանն ընդդեմ Կենտրոն նոտարական փարաձքի նոտար Ալվարդ Մելքոնյանի և մյուսների թիվ 3-1621(ՎԴ) քաղաքացիական գործով ՀՀ վճարելի դատարանի 09.11.2007 թվականի որոշումը):

Սահմանադրական դատարանը սույն գործով հայցվոր Պարզև Առաքելյանի դիմումի հիման վրա՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1226-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ գործով 12.07.2022 թվականին կայացրած թիվ ՍԴՈ-1660 որոշման եզրափակիչ մասի 1-ին կետով արձանագրել է, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1226-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետը համապատասխանում է Սահմանադրությանն այն մեկնաբանությամբ, համաձայն որի՝ **փաստացի տիրապետման կամ կառավարման, այդ թվում՝ իր հաշվին գույքը պահպանելու ծախսեր կատարելու միջոցով, ժառանգության ընդունման եղանակը կիրառելի է ինչպես ըստ օրենքի, այնպես էլ ըստ կտակի ժառանգության դեպքում:** Բացի այդ, Սահմանադրական դատարանն արձանագրել է, որ՝

- «Նման դիրքորոշումների պարագայում ըստ կտակի ժառանգների համար փաստացի գործողությունները փաստորեն վերածվում են իրավաբանական գործողությունների, այն է՝ նոտարին դիմելու միջոցով ժառանգության ընդունմանը: Մինչդեռ փաստացի տիրապետման կամ կառավարման եղանակը ժառանգության ընդունման ինքնուրույն եղանակ է, որի իմաստն ու նշանակությունն այն է, որ նշված դեպքերում անհրաժեշտություն չկա ժառանգության ընդունման համար դիմել նոտարին»,

- «հաշվի առնելով Սահմանադրությունից բխող ըստ կտակի ժառանգման առաջնահերթությունը՝ փաստացի տիրապետման կամ կառավարման եղանակով ժառանգության ընդունման պարագայում մնացած այլ պայմանների հավասարության դեպքում պետք է կիրառվի ժառանգությունն ըստ կտակի ընդունման կանխավարկածը»,

- «փաստացի տիրապետման կամ կառավարման միջոցով ժառանգությունն ընդունելու եղանակը կիրառելի է ինչպես ըստ օրենքի, այնպես էլ ըստ կտակի ժառանգության ընդունման դեպքերի համար: Ընդ որում՝ եթե ժառանգը միաժամանակ և՛ ըստ կտակի, և՛ ըստ օրենքի ժառանգ է, ապա փաստացի տիրապետման կամ կառավարման եղանակով, մասնավորապես՝ գույքի պահպանման ծախսերն իր հաշվին կատարելու միջոցով ժառանգության ընդունման դեպքում սահմանադրաիրավական պահանջներին համահունչ պետք է գործի այն կանխավարկածը, որ ժառանգությունն ընդունվել է ըստ կտակի»,

- «Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում նշել, որ ինչպես վիճարկվող, այնպես էլ Օրենսգրքի որևէ դրույթով չի սահմանափակվում ըստ կտակի ժառանգի իրավունքը՝ փաստացի տիրապետման կամ կառավարման եղանակով ընդունելու ժառանգությունը, Օրենսգրքի տրամաբանությանը համապատասխան ժառանգության ընդունման եղանակներն ընդհանուր են ինչպես ըստ կտակի, այնպես էլ ըստ օրենքի ժառանգության ընդունման համար, իրավակիրառ պրակտիկայում վիճարկվող դրույթին տրված մեկնաբանությունը, միջամտելով ըստ կտակի ժառանգների իրավունքներին, չի հետապնդել սեփականության իրավունքի սահմանափակման համար Սահմանադրությամբ նախատեսված որևէ նպատակ, սահմանափակելով փաստացի տիրապետման կամ կառավարման եղանակով ըստ կտակի ժառանգների իրավունքները՝ ըստ էության սահմանափակվում են նաև կտակային հանձնարարություններից բխող շահառուների իրավունքները, քանի որ, ըստ ձևավորված իրավակիրառ պրակտիկայի, սահմանված ժամկետում ըստ կտակի ժառանգի կողմից ժառանգությունն ընդունելու հարցով նոտարին չդիմելու պարագայում չի իրագործվի կտակով նախատեսված պահանջները, այդ թվում՝ կտակային հանձնարարությունները, փաստացի

տիրապետման կամ կառավարման եղանակը միայն ըստ օրենքի ժառանգների համար նախատեսելու պարագայում կարող է անտեսվել ժառանգատուի կամահայտնությունը, քանի որ կարող են լինել դեպքեր, երբ, օրինակ, կտակով ժառանգությունից զրկված ըստ օրենքի ժառանգները, առավելություն ունենալով ըստ կտակի ժառանգների համեմատ, ժառանգատուի կամքին հակառակ դառնան վերջինիս գույքի սեփականատերեր»:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանը ցանկանում է արձանագրել հետևյալը.

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ օրենսդրական ակտերը կարող են ունենալ ընդհանուր և հատուկ մասեր: Տվյալ դեպքում օրենսդրական ակտի ընդհանուր մասը կազմող նորմերը նախորդում են հատուկ մասը կազմող նորմերին: Ընդհանուր և հատուկ մասերում ընդգրկվում են օրենսդրական ակտի բովանդակությամբ համասեռ գլուխները, բաժինները: (...):

Նույն հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ օրենսդրական ակտերում բովանդակությամբ համասեռ հոդվածները միավորվում են գլուխներում: (...):

Նույն հոդվածի 10-րդ մասի համաձայն՝ (...) Բաժիններն ու գլուխները ունենում են վերնագրեր, որոնք պետք է համապատասխանեն դրանց բովանդակությանը: (...):

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ նորմատիվ իրավական ակտի նորմը մեկնաբանվում է՝ հաշվի առնելով նորմատիվ իրավական ակտն ընդունելիս այն ընդունող մարմնի նպատակը՝ ելնելով դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունից, ամբողջ հոդվածի, գլխի, բաժնի կարգավորման համատեքստից, այն նորմատիվ իրավական ակտի դրույթներից, ի կատարումն որի ընդունվել է այդ ակտը, տվյալ նորմատիվ իրավական ակտով սահմանված սկզբունքներից, իսկ այդպիսի սկզբունքներ սահմանված չլինելու դեպքում՝ տվյալ իրավահարաբերությունը կարգավորող իրավունքի ճյուղի սկզբունքներից:

Տվյալ դեպքում օրենսդիրը, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 71-րդ գլուխը վերնագրելով «**ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆՆ ԸՍՏ ԿՏԱԿԻ**», առանձին կարգավորել է ըստ կտակի ժառանգությունից բխող իրավահարաբերությունները, 72-րդ գլուխը վերնագրելով «**ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆՆ ԸՍՏ ՕՐԵՆՔԻ**», առանձին կարգավորել է ըստ օրենքի ժառանգությունից բխող իրավահարաբերությունները: Ի տարբերություն նշված գլուխների վերնագրերում հատուկ նշման՝ նույն օրենսգրքի 73-րդ գլուխն իր վերնագրում հատուկ նշում չի պարունակում այն մասին, թե դրանով որ ժառանգությունն ընդունելու իրավահարաբերություններն են կարգավորվում՝ ըստ կտակի, թե՛ ըստ օրենքի: Տվյալ դեպքում գլուխը վերնագրվել է «**ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆՆ ԸՆԴՈՒՆԵԼԸ**»:

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 14-րդ և 41-րդ հոդվածների համատեքստում մեկնաբանելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1226-րդ հոդվածի բովանդակությունը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ նշված հոդվածում առկա իրավակարգավորումները, ներառված լինելով «**ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆՆ ԸՆԴՈՒՆԵԼԸ**» վերտառությամբ 73-րդ գլխում, հավասարապես վերաբերելի և կիրառելի են ինչպես ըստ օրենքի, այնպես էլ ըստ կտակի ժառանգություններից բխող իրավահարաբերությունների նկատմամբ:

Հիմք ընդունելով Սահմանադրական դատարանի 12.07.2022 թվականի թիվ ՍԴՈ-1660 որոշումը, ինչպես նաև վերը նշված իրավական նորմերը և դրանց վերաբերյալ արտահայտված իրավական դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ըստ կտակի ժառանգությունը կարող է ընդունվել ինչպես ըստ կտակի ժառանգի դիմումը ժառանգության բացման վայրի նոտարին հանձնելով, այնպես էլ կտակում նշված գույքը ՀՀ քաղաքացիական

օրենսգրքի 1226-րդ հոդվածի 3-րդ կետի իմաստով փաստացի տիրապետելու կամ կառավարելու միջոցով:

Վերը նշված իրավական դիրքորոշումների կիրառումը սույն գործի փաստերի նկատմամբ

Սույն գործի փաստերի համաձայն՝ 08.07.2008 թվականին կտակ է կազմվել այն մասին, որ Լիան Մանուկյանը նաև Երևանի Աջափնյակ վարչական շրջանի Բաշինջաղյան փողոցի 163-րդ շենքի թիվ 14 բնակարանի՝ իրեն պատկանող մասը կտակում է Պարզև Առաքելյանին: Նշված կտակն ստորագրել է կտակարար Լիան Մանուկյանը, և վավերացրել է «Աջափնյակ» նոտարական տարածքի նոտար Ռ. Առաքելյանը:

Լիան Մանուկյանը մահացել է 12.09.2015 թվականին, որի վերաբերյալ նույն օրը կատարվել է գրանցում:

«Կենտրոն» նոտարական տարածքի նոտար Հ. Հարությունյանի կողմից 11.04.2016 թվականին Լիան Մանուկյանի ժառանգական գույքի նկատմամբ ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիր է տրվել Հռիփսիմե Առաքելյանին: Ժառանգական գույքը բաղկացած է Երևանի Աջափնյակ վարչական շրջանի Բաշինջաղյան փողոցի 163-րդ շենքի թիվ 14 հասցեում գտնվող բնակարանի 1/6-րդ բաժնեմասից:

Պարզև Առաքելյանի հայցն ընդդեմ Հռիփսիմե Առաքելյանի՝ ըստ կտակի ժառանգությունը փաստացի տիրապետելու հիմքով իրեն իր մոր ժառանգությունն ընդունած ժառանգ ճանաչելու պահանջի մասին, Դատարանի 11.09.2020 թվականի վճռով, ըստ էության, մերժվել է նաև այն պատճառաբանությամբ, որ Պարզև Առաքելյանն ըստ կտակի ժառանգությունն ընդունելու համար օրենքով սահմանված ժամկետում ժառանգության բացման վայրի նոտարին դիմում չի հանձնել:

Վերաքննիչ դատարանը Պարզև Առաքելյանի վերաքննիչ բողոքը մերժել է, ըստ էության, այն պատճառաբանությամբ, որ համաձայնել է Դատարանի այն դիրքորոշմանը, որ ըստ կտակի ժառանգություն կարող է ընդունվել բացառապես ժառանգության բացման վայրի նոտարին համապատասխան դիմում ներկայացնելու միջոցով:

Սահմանադրական դատարանի 12.07.2022 թվականի թիվ ՍԴՈ-1660 որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումների, վերը նշված իրավական նորմերի և դրանց վերաբերյալ արտահայտված իրավական դիրքորոշումների համատեքստում անդրադառնալով Վերաքննիչ դատարանի պատճառաբանություններին, նկատի ունենալով, որ ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատի 30.10.2023 թվականի որոշմամբ ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի 04.08.2021 թվականի «Վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժելու մասին» որոշումը նոր հանգամանքի հիմքով արդեն իսկ վերանայվել է, ու թիվ ԵԴ/17804/02/18 քաղաքացիական գործով Վերաքննիչ դատարանի 09.04.2021 թվականի որոշման դեմ Պարզև Առաքելյանի բերած վճռաբեկ բողոքն ընդունվել է Վճռաբեկ դատարանի վարույթ՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանի պատճառաբանություններն անհիմն են և չեն բխում ինչպես Սահմանադրական դատարանի վերը նշված որոշմամբ, այնպես էլ սույն գործով արտահայտված իրավական դիրքորոշումների բովանդակությունից, քանի որ Լիան Մանուկյանը դեռևս 08.07.2008 թվականին, ի թիվս այլի, Երևանի Աջափնյակ վարչական շրջանի Բաշինջաղյան փողոցի 163-րդ շենքի թիվ 14 բնակարանի՝ իրեն պատկանող մասը կտակել է Պարզև Առաքելյանին, ով, հանդիսանալով ըստ կտակի ժառանգ, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1226-րդ հոդվածի իմաստով ուներ ժառանգությունն ընդունելու իրավական հնարավորություն ինչպես նոտարին

դիմում ներկայացնելու, այնպես էլ այն փաստացի ընդունելու միջոցով:

Ամփոփելով վերոգրյալ իրավական և փաստական վերլուծությունները՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը բավարար է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 390-րդ հոդվածի 2-րդ մասի ուժով վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով անհրաժեշտ է կիրառել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 405-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով սահմանված՝ ստորադաս դատարանի դատական ակտը բեկանելու և գործը՝ սկզբնական հայցի մասով, Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարան՝ վերը նշված իրավական դիրքորոշումները հիմք ընդունելով ըստ կտակի ժառանգությունը փաստացի տիրապետելու հիմքերի առկայությունը պարզելու նպատակով նոր քննության ուղարկելու Վճռաբեկ դատարանի լիազորությունը:

5. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները դատական ծախսերի բաշխման վերաբերյալ

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 101-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վերաքննիչ կամ Վճռաբեկ դատարան բողոք բերելու և բողոքի քննության հետ կապված դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են նույն գլխի [ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 10-րդ գլուխ] կանոններին համապատասխան:

Նկատի ունենալով, որ սույն գործն ուղարկվում է նոր քննության, որպիսի պարագայում դատական ծախսերի բաշխման հարցին հնարավոր չէ անդրադառնալ գործի քննության ներկա փուլում՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ այդ հարցը ենթակա է լուծման գործի նոր քննության ընթացքում:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 405-րդ, 406-րդ ու 408-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 09.04.2021 թվականի որոշումը և գործը՝ սկզբնական հայցի մասով, ուղարկել Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարան՝ սույն որոշմամբ սահմանված ծավալով նոր քննության:

2. Դատական ծախսերի հարցին անդրադառնալ գործի նոր քննության ընթացքում:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

ԲԱՐԵՄԱՂԹԱՆՔ

ՀՀ դատավորների միությունը շնորհավորում է

ՀՀ դատավորների միության նախագահ
Ալեքսանդր ԱԶԱՐՅԱՆԻ ծննդյան 55-ամյակը,

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի դատավոր
Սլավիկ ԹՈՐՈՍՅԱՆԻ ծննդյան 65-ամյակը,

ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի դատավոր
Էդվարդ ՆԱՀԱՊԵՏՅԱՆԻ ծննդյան 65-ամյակը,

ՀՀ վարչական դատարանի նախագահ
Արգիշտի ՂԱԶԱՐՅԱՆԻ ծննդյան 55-ամյակը,

ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի դատավոր
Հրաչ ԱՅՎԱԶՅԱՆԻ ծննդյան 50-ամյակը,

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի դատավոր
Սամվել ԳՐԻԳՈՐՅԱՆԻ ծննդյան 50-ամյակը,

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի դատավոր
Ժաննա ԱՍԱՏՐՅԱՆԻ ծննդյան 50-ամյակը,

ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի դատավոր
Ալեքսանդրա ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ ծննդյան 45-ամյակը,

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի դատավոր
Իվան ԲԱՂՄԱՆՅԱՆԻ ծննդյան 40-ամյակը,

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի դատավոր
Նորա ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻ ծննդյան 40-ամյակը,

ՀՀ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության
քրեական դատարանի դատավոր
Մարտին ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆԻ ծննդյան 35-ամյակը,

ՀՀ վարչական դատարանի դատավոր
Վարազդատ ՄԻՔԱԵԼՅԱՆԻ ծննդյան 35-ամյակը,

ՀՀ վարչական դատարանի դատավոր
Գրիգոր ԱՌԱՔԵԼՅԱՆԻ ծննդյան 35-ամյակը,

ՀՀ Արարատի և Վայոց ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր
իրավասության դատարանի դատավոր
Սարգիս ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ ծննդյան 35-ամյակը,

ՀՀ Լոռու մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության
դատարանի դատավոր
Արմեն ՊՈՂՈՍՅԱՆԻ ծննդյան 35-ամյակը,

ՀՀ Լոռու մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության
դատարանի դատավոր

Տարոն ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ ծննդյան 35-ամյակը,

ՀՀ հակակոռուպցիոն դատարանի դատավոր

Ռուդոլֆ ԱՎԱԳՅԱՆԻ ծննդյան 30-ամյակը,

*մաղթում նրանց առողջություն, անսպառ եռանդ
և մասնագիտական արդյունավետ գործունեություն:*

Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ

«Դատական իշխանություն» գիտամեթոդական պարբերականը լույս է տեսնում տարեկան առնվազն չորս անգամ:

Պարբերականի գիտական խմբագրական խորհուրդը քննարկում է միայն այն նյութերը, որոնք ներկայացվում են գրախոսականի առկայությամբ:

Տպագրվող նյութը պետք է ունենա որոշակի կառուցվածք՝ **ներածություն, հիմնական հետազոտություն** (որը կարող է ունենալ բաժիններ և ենթաբաժիններ), **եզրակացություն**:

«Դատական իշխանություն» պարբերականում տպագրության ներկայացվող նյութերի տեխնիկական պահանջները.

1. նյութի սկզբում դրվում է վերնագիրը (գլխատառերով),
2. հաջորդ տողում՝ հեղինակի անուն-ազգանունը (գլխատառերով), հեղինակի գիտական աստիճանն ու կոչումը, աշխատանքի վայրը, պաշտոնը, հեռախոսահամարը և էլեկտրոնային փոստի անվանումը,
3. տեքստի լուսանցքները. վերև՝ 25 մմ, ներքև՝ 25 մմ, աջ՝ 25 մմ, ձախ՝ 20 մմ,
4. հայերեն շարվածքի տառատեսակը՝ GHEA Grapalat, անգլերեն շարվածքի տառատեսակը՝ GHEA Grapalat, ռուսերեն շարվածքի տառատեսակը՝ GHEA Grapalat,
5. հիմնական տառաչափը՝ 12,
6. միջտողային հեռավորությունը՝ 1.5,
7. օգտագործված գրականության ցանկ՝ աճման կարգով, տառաչափը՝ 10, նշվում է աղբյուրի հեղինակը (թավ), վերնագիրը, հատորը, հրատարակության տեղը, տարեթիվը (մամուլի դեպքում՝ նաև համարը) և էջերի քանակը,
8. հղումները տրվում են տողատակում՝ աճման կարգով, տառաչափը՝ 10, նշվում է աղբյուրի հեղինակը (թավ), վերնագիրը, հատորը, հրատարակության տեղը, տարեթիվը (մամուլի դեպքում՝ նաև համարը) և էջը,
9. նյութը կարող է ներկայացվել հայերեն, անգլերեն կամ ռուսերեն, այն պետք է ունենա երեք լեզուներով ամփոփագրեր (ընդ որում՝ եթե այն անգլերեն կամ ռուսերեն չէ, ամփոփագիրը պետք է լինի 150-250 բառի սահմաններում), որոնք պետք է պարունակեն որոշակի, հստակ և ընդգրկուն տեղեկատվություն նյութի վերաբերյալ: Նյութը երեք լեզվով պետք է ունենա մինչև 10 բանալի բառեր,
10. նյութն անհրաժեշտ է ներկայացնել էլեկտրոնային եղանակով (էլեկտրոնային փոստ՝ kchalabyan@gmail.com):

Պարբերականում նյութերը տպագրվում են անվճար հիմունքներով: